



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅԿԱՆ ՍՈՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

Վ. Б. БАРХУДԱՐՅԱՆ

Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ИСТОРИЯ
НОВО-НАХИЧЕВАНСКОЙ
АРМЯНСКОЙ КОЛОНИИ
(1861-1917 гг.)

ՆՈՐ ԱԱԽԻՉԵՎԱՆԻ
ՀԱՅԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(1861-1917թթ.)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1985

ՀԱՅԿԱՆ ՍՈՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆ
1985

Տպագրվում է ՀՍԽՀ ԳԱ պատմուրյան ինստիտուտի գիտական խորհրդի որոշմասք

Պատասխանատու խմբագիր՝ Դ. Ա. Մուրադյան

Գիրքը երաժշտական են երաժխավորել գրախոսներ պատմական գիտուրյունների թեկնածուներ Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ և Վ. Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆԸ

Բարիխուզարյան Վ. Բ.

Բ 358 Նոր Նախիջևանի Հայկական գաղութի պատմություն (1861—1917) /Պատ. խմբ. Դ. Ա. Մուրադյան.—Եր.: ՀՍԽՀ ԳԱ հրատ., 1985, 391, էջ, 8 թ. նկ.:

Աշխատության մեջ լուսաբանվում է ետուֆորմյան շրջանի Նոր Նախիջևանի Հայկական գաղութի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը, ցույց է տրվում կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով կատարված խոշոր տեղաշարժերը։ Հեղինակն անդրադառնում է նաև Մայր Հայրենիքի և Հայ իրականության հետ Նոր Նախիջևանի և նոր Նախիջևանցիների կապերի խնդրին, ինչպես նաև նրանց ակտիվ մասնակցությանը Հարավային Ռուսաստանի հեղափոխական շարժումներին։

Հասցեագրվում է պատմաբաններին և ընթեցող լայն շրջաններին։

0505040000

թ—————26—85

703 (02)—85

Ա. Ռ Ա. Զ Ա Բ Ա Ն

Կովկասի նախադռներում հիմնված նոր Նախիջևանը Ռուսաստանի երկելի ու հարուստ պատմություն ունեցող հայկական գաղթավայրերից է եղել։

Գաղութի սկզբնավորման ուրույն հանգամանքների և Հայերի համար ստեղծված բարենպաստ պայմանների շնորհիվ նոր Նախիջևանը հենց հիմնադրման ժամանականից նշանավորվեց և, անգամ, հայկական ինքնավար կյանքը Դոնի ափերին վերականգնելու հույսերի ու պատրանքների աղբյուր դարձավ։

Ռուսական կառավարությունը երկրի հարավի գրեթե անմարդաբնակ տափաստանները բնակեցնելու, տնտեսապես յուրացնելու և Ղրիմի թաթարական խանությունը թուլացնելու նպատակով 1778 թ. կազմակերպեց թերակղզու հայ և հույն բնակչության արտագաղթ։

Ղրիմահայերը հաստատվեցին Դոն գետի աջ ափին, հիմնեցին նոր Նախիջևան քաղաքը և դրա շրջակայքում Զալթը, Թոփատի, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նեսվիտա գյուղերը, իսկ հույները հիմնեցին Մարիուպոլ քաղաքը իր շրջակա գյուղերով։

Եկատերինա II կայսրություն 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով Հայերին մեծ արտօնություններ տրվեցին։ Նրանք ստացան ընդարձակ հողատարածություններ, 10 տարով ազատվեցին Հարկերից, ինչպես նաև նրանց վերապահվեց ազատ առևտրի ու արդյունագործության իրավունք։

Տնտեսական առանձնաշնորհումներից բացի, Հայերը ստացան դավանագիր ազատություն և ազգային սովորությունների ու ավանդույթների հիման վրա, մայրենի լեզվով դատավարության ու գործավարության իրավունք, որն իրականացվում էր «Աստրախանի» կամ «Հայոց դատաստանագրքի» հիման վրա։ Հանձին Հայկական մագիստրատի, նորահաստատ գաղութն ունեցավ իր ինքնավար կառավարչությունը։

XVIII դարի վերջին քառորդում Հայ ազատագրական շարժումների վերելքի, պարսկական ու թուրքական ծանր լուծը թոթափելու և Ռուսաստանի հովանավորության ներքո Հայկական պետականությունը վերականգնելու ձգտումների ժամանակաշրջանում, այնպիսի Հայկական քա-

դաքի, ինչպիսին նոր նախիջևանն էր, և դրա հետ կապված հայկական պուլերի հիմնադրումը մեծ հույսեր էին ներշնչում ժամանակի հայ առաջադիմ գործիչներին: Դրանով էին պայմանավորված նոր նախիջևանի հիմնադրման հենց առաջին տարիներին, լուսավորական նպատակներով, հնդկահայերի կատարած մեծագումար նվիրաբերությունները, Գ. Խալդարյանի տպարանը Պետերբուրգից Դոնի ափերը տեղափոխելը և այլ ձեռնարկումներ:

Բոլոր նախադրյալները առկա էին, որպեսզի նոր նախիջևանը կարճ ժամանակում բուռն զարգացում ապրեր և զգալի հաջողությունների հասներ ինչպես տնտեսական, այնպես էլ հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում:

Տնտեսության մեջ հայերը զարկ տվեցին անասնապահությանը, այգեգործությանը, դաշտավարությանը: Նրանք աշքի ընկան հատկապիս հացահատիկային կուլտուրաների մշակման, խաղողագործության մեջ, Դոնի տափաստաններում եղան նաև մետաքսի բոժոժների առաջին տարածողները:

Նոր միջավայրում տարածում գտան ու ավելի առաջադիմեցին դեռևս զրիմյան շրջանում բավականաշափ մասնագիտացված արհեստները: Հայ վարպետների արհեստագործական արտադրանքը լայն սպառում էր գոտնում Կովկասի լեռնականների և այլ ժողովուրդների շրջանում: Նոր նախիջևանի արհեստավորությունն ունեցել է իր ներքին կազմակերպությունը՝ համբարությունները: Դրանք ուստական միջավայրի ազդեցությունը կրելով հանդերձ, հար և նման էին Անդրկովկասի հայ համբարություններին:

Արհեստներին զուգահեռ ու դրանց կողքին աստիճանաբար հիմնը-վում են արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք սկսում են ավելի ու ավելի առանձնանալ արհեստավորական գործատներից:

Հայկական գաղութում մեծ ծավալ է ընդունում և նկատելի վերելք ապրում ներքին ու արտաքին առևտուրը:

Նոր նախիջևանը մեծապես նպաստեց Դոնի ու Ազովի ավազանի տնտեսական կյանքի, ինչպես նաև կուլտուր-կրթական առաջադիմությանը: Դոնի հայկական գաղութը նշանակալից դեր էր կատարում հայուսական հարաբերություններ, որոնք ևս, փոփոխված, նոր իրավիճակում կոշված էին, որոշ առումով, փոխարինելու հայ համայնքի նախկին մարմիններին և համաստում էին Դոնի հայկական զանգվածի ինքնավար գոյությունը:

Մինչև 1860-ական թվականները, կամ նախառելքորմյան շրջանը նոր նախիջևանի ինքնավար գաղութն օգտվում էր կայսերական առանձնաշնորհներից: Հայկական գյուղերի հետ քաղաքը կազմում էր վարչատնտեսական մի ամբողջություն՝ հայկական կամ Շնոր նախիջևանի օկրութա անունով: Դոնի հայկական զանգվածը, ինչպես նշում են ռուսաբերլացի ուղեգիրներն ու գիտնականները, պահպանում էր հայկական

կան բարքերն ու սովորությունները, ազգային նկարագիրը և ապրում ինքնաբավ կյանքով¹:

Իրավիճակը փոխվում է 1861 թ. գյուղացիական ու ֆորմից հետո: Թեպետև ու ֆորմը սահմանափակ բնույթ ուներ, այնուամենայնիվ, այն նկատելի վերափոխումներ առաջացրեց Ծուսաստանի տնտեսական, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքում: Գյուղացիական ու ֆորմին հաջորդող ու նրանից բխող 1860—70-ական թվականների բարեկոխումները կարեոր նշանակություն ունեցան երկրում նոր արտադրահարաբերությունների հաստատման գործում: Այդ միջոցառումների իրականացումն իր հերթին բխում էր Ծուսաստանում կապիտալիզմի զարգացման պահանջներից:

Ամբողջ երկրում միասնական վարչաիրավական կարգի անցնելուն, ինչ-որ շափով, խոշընդուռում էին Ծուսաստանի տարածքում կղզիացած գաղութները: Բնականաբար այդ գաղութների առանձնաշնորհները վերացնելու և ինքնամփոփ կյանքով ապրող տարբեր ժողովուրդների զանգվածներին շրջակա բնակչության մեջ տարրալուծելու հարց էր գրվում:

1860-ական թթ. ընթացքում նկատելիորեն սահմանափակվեցին գաղութի առանձնաշնորհները, իսկ 1870 թ. վերացվեց հայկական մագիստրատը, հետևաբար և նոր նախիջևանի ինքնավարությունը: Սկսվեց գաղութի պատմության նոր փուլը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ շուրջ մեկ դար ինքնավար կառավարչություն ունեցող, ինքնամփոփ ձևով ապրող հայկական զանգվածը միանգամից չէր կարող հրաժարվել իր համայնքային կյանքից: Գաղութի ինքնավարությունը թեև պաշտոնապես վերացված էր, սակայն ավանդության ուժով դեռևս երկար ժամանակ իրեն զգացնել էր տալիս: Դրանից բացի, գործնական կյանքի թելադրանքով, շուտով հիմնեցին ազգային-բարեգործական այնպիսի հաստատություններ, որոնք ևս, փոփոխված, նոր իրավիճակում կոշված էին, որոշ առումով, փոխարինելու հայ համայնքի նախկին մարմիններին և համաստում էին Դոնի հայկական զանգվածի ինքնավար գոյությունը:

Ետուեփորմյան շրջանում կապիտալիստական հարաբերությունների զարգացումն իր դրոշմն է դնում ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ հարաբերային Ծուսաստանի, այդ թվում և հայկական գաղութի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի վրա:

¹ Սույն աշխատության առաջին գիրքը («Նոր նախիջևանի հայկական գաղութի պատմություն», 1779—1861 թթ., Երևան, 1967) նվիրված է եղել գաղութի հիմնադրման և նրա հենց այդ փուլի, մինչև 1860-ական թվականների պատմությանը:

Աշխատության ներկա, երկրորդ գիրքը ընդգրկում է 1860-ական թվականների սկզբից՝ գյուղացիական ու ֆորմից մինչև 1917 թվականը՝ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ժամանակաշրջանը:

Սկսում է զարգանալ գործարանային արդյունաբերությունը, որը գերազանցապես գյուղատնտեսական մթերքները վերամշակող արտադրության բնույթը ուներ: Զարգացող կապիտալիզմի մրցակցությանը շփմանալով, ետին պլան է մղվում ու քայլայվում արհեստագործությունը:

Առաջընթաց է ապրում գյուղատնտեսությունը, հատկապես դաշտավարությունը, որն ավելի ու ավելի ապրանքային բնույթ է ստանում: Նոր հասարակարգի պահանջներին համապատասխան ծավալվում ու մեծ չափեր է ընդունում առևտուրը:

Հայկական գաղութի տնտեսությունն ավելի է ներքաշվում երկրամասի տնտեսական կյանքի մեջ, հաճախ միաձուլվում նրա հետո:

Կապիտալիզմի առաջընթացի հետ մեկտեղ սրվում են սոցիալ-դասակարգային հարաբերությունները: Գաղութի երիտասարդության առաջդիմ ներկայացուցիչներն ընդունվում են 1870—1880-ական թվականների նարողնիկական շարժման մեջ: Ավելի ուշ, Դոնի հայերն ակտիվ մասնակցություն են ունենում ոռուսական առաջին հեղափոխությանը և առհասարակ ցարիզմի դեմ ծավալված պայքարին:

Այդ ժամանակաշրջանում նոր նախիջևանում հիմնվում են նոր ուսումնարաններ, տպարաններ, թատրոններ, հրատարակում են գրքեր, թերթեր, հանդեսներ, կազմակերպվում են ընկերություններ, միություններ: Հասարակական նոր հարաբերությունների ծնունդ հանդիսացող մշակույթը սկսում է արձագանքել և ընդուածել կյանքի առաջադրած պահանջներին:

Նոր պայմաններում Դոնի հայությունն առավել աշխուժորեն է մասնակցում ոռուսական հասարակական կյանքի կարևոր անցքերին, ուժեղանում է ոռուսական դեմոկրատական մշակույթի ազդեցությունը:

Ավելի են սերտանում նոր նախիջևանի կապերը Հայաստանի ու Հայաշատ վայրերի հետ: Հայկական նշանակալից կենտրոն դարձած, հասում ու առաջադիմ մտավորականություն ունեցող Դոնի հայկական գաղութն արձագանքում է Հայաստանում ու Հայ իրականության մեջ կատարվող իրադարձություններին: Նոր նախիջևանը կարևոր դեր է կատարում նաև Հայկական մշակույթը և նրա ավանդությունները պահպանելու և ոռուսական միջավայրին ծանոթացնելու գործում:

* * *

Նոր նախիջևանի պատմության մինչունքորմյան և ետունքորմյան ժամանակաշրջանների սկզբնաղբյուրները և գրականությունը միմյանցից զգալիորեն տարրերվում են:

Նախառեֆորմյան փուլ՝ գաղութի ինքնավար կառավարչության ժամանակաշրջանի արխիվային փաստաթղթերն ու այլ սկզբնաղբյուրները և առատ են, և անմիջականորեն վերաբերում են Հայ համայնքին:

Այդ փաստաթղթերի շարքում առանձնահատուկ նշանակություն ունի նոր նախիջևանի հայկական մագիստրատի արխիվը:

Այդ արխիվը, նոր նախիջևանի հայկական ձեռագրերի, եկատերինա II-ի կայսերական հրովարտակի հետ միասին եւ Շահազիզի, Աշ. Հովհաննիսյանի և Մ. Արյանի հոգացողությամբ ժամանակին փոխադրվել են Սովետական Հայաստան և հանձնվել պահպանության առավել հարմար ու ապահով պայմաններ ունեցող համապատասխան հաստատությունների: Հայկական մագիստրատի ամբողջ նյութերն ու վավերագրերը պահպանվում են Հայկական ՍՍՀ պետական պատմական արխիվում (ֆոնդ՝ 139):

Նոր նախիջևանի պատմության մասին եղած ուսումնասիրությունները, թեև սակավ, սակայն արժեքավոր են: Հրապարակի վրա են Դոնի հայության նշանավոր գործիւ, վաստակաշատ բանակր-պատմաբանները: Շահազիզի թեկուզ ազգագրական որոշակի դրոշմ կրող, բայց հավաստի և գնահատելի աշխատությունները:

Ի տարբերություն դրան, գաղութի պատմության XIX դարի երկրորդ կեսի և XX դարի առաջին տասնամյակների վերաբերյալ չկա որևէ ուսումնասիրություն: Այդ ժամանակաշրջանում գաղութի ինքնավարությունը և նոր նախիջևանը որպես ինքնամփոփ վարչական միավորի իրավունքները վերացնելու հետևանքով նրա մասին եղած փաստաթղթերն էլ գերազանցապես ընդհանուր բնույթ են կրում: Արխիվային վավերագրերում նոր նախիջևանը մեծ մասում շի առանձնացվում: Եղած տեղեկությունները պահպանվել են ամբողջ գավառի, նահանգի կամ Ռուսուկ քաղաքի տվյալների հետ միաձուլված: Դժվար, հաճախ էլ անհնարին է ընդհանուր բնույթի այդ վավերագրերից առանձնացնել հայ համայնքին վերաբերվող փաստերը:

Սկզբնաղբյուրների այդ պակասը լրացվում է ետունքորմյան փուլում հրապարակ եկած հայկական և ոռուսական պարբերական մամուլով, որը Դոնի հայ զանգվածի վերաբերյալ բավականաշափ հարուստ նյութ է պարունակում:

Գաղութի ետունքորմյան շրջանի պատմությունը համակողմանի ներկայացնելու նպատակով մենք զանացել ենք օգտագործել Հնարավոր բոլոր աղբյուրներն ու նյութերը:

Սույն գրքով փորձ է արվում ամբողջացնելու հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ուշագրավ մի դրվագ կազմող նոր նախիջևանի հայկական գաղութի նախառեֆորմյան ժամանակաշրջանի պատմությունը:

ԳՐՈՒԹ Ա. Բ. Ա. Զ. Ի. Ն

ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՏՌԵՑՈՐՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. ՆՈՐ ՆԱԽԵԶԵՎԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Նոր նախիջևանի հայկական գաղութը անցլալ դարի կեսերին տակավին ապրում էր տնտեսական և հասարակական լիաթոք ու ինքնաբավականացությունը: Կյանքի բոլոր բնագավառներում գաղութի ունեցած առաջադիմությունը մեծապես խարսխվում էր ժամանակին՝ 1779 թ. Եկատերինա II կայսրությունու տված առանձնաշնորհումների վրա:

Հայկական գաղութն ուներ իր առանձին մագիստրատը, որն իրականացնում էր քաղաքի և նրա մերձակա հայկական գյուղերի բովանդակ կառավարչությունը: Ներքին գործավարությունը և դատավարությունը կատարվում էր հայերեն՝ Աստրախանի հայկական դատաստանագրքի հիման վրա: Գաղութն օգտվում էր դավանանքի ազատությունից, կրոնական հարցերում ենթարկվում էջմիածնի Մայր աթոռի հոգևոր գերիշխանությանը: Կայսերական շնորհագրի ընձեռած տնտեսական հնարավորությունների և ճորտատիրական կաշկանդումներից զերծ մնալու շնորհիվ Դոնի հայ զանգվածը նկատելի հաջողությունների հասավ գյուղատնտեսության, արդյունաբերության, ներքին ու արտաքին առևտուրի ասպարեզում:

1861 թ. փետրվարի 19-ի գյուղայիական ոեֆորմի հետևանքով զգալի վերափոխումներ կատարվեցին Ռուսաստանի տնտեսական, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքում: Ոեֆորմով սկսված տեղաշարժերն ընդգրկեցին կյանքի գրեթե բոլոր բնագավառները: Գյուղացիական ոեֆորմին հաջորդեցին վարչական, դատական, քաղաքային և այլ վերափոխումներ: 1860—1870-ական թթ. իրականացված այդ ոեֆորմներով վերակառուցվում էր Ռուսական կայսրության վարչական համակարգը: Ամբողջ Երկրում մտցվում էին կառավարման ընդհանուր ձևեր:

Դրանք երկրի կապիտալիստական զարգացման պահանջներից ելնող ու դրան ընդառաջող միջոցառումներ էին: Հետևաբար ոչ միայն արգելա-

կիչ դեր շէին կատարում, այլև հասարակական ընդհանուր առաջադիմության շահերից բխող ձեռնարկումներ էին:

Ետոնեփորմյան այդ վերափոխումները շէին կարող իրենց ոլորտի մեջ շառնել կայսրության մեջ բնակվող ոչ ոուս ժողովուրդներին: Այդ շարժումը, բնականաբար, իր ալիքների մեջ է առնում նաև տարբեր ազգության զանգվածների կողմից այլևայլ ժամանակներում ու հանգամանքներում հիմնած գաղթավայրերը: Նման գաղթութներով հարուստ էր հատկապես հարավային Ռուսաստանը կամ նովոռոսիան:

Դեռևս XVIII դարի երկրորդ կեսին ոուսական կառավարությունը երկրի հարավային սահմաններն ընդարձակելու, ծով գուրս գալու և հարավի սակավաբնակ տափաստանները բնակեցնելու ու տնտեսապես յուրացնելու նպատակով, լայն առանձնաշնորհումներ տալով, այնտեղ էր հարավիրում այլազգի զանգվածների: Այդ եղանակով նովոռոսիայում հիմնվում են լեհական, շվեդական, հունական, հայկական և այլ ժողովուրդների ինքնամփոփի համայնքներ:

XIX դարի կեսերին այլազգի այդ զանգվածները արդեն կատարել էին իրենց գերը, բայց շարունակում էին օգտվել պետական առանձնաշնորհումներից և ապրել մեկուսի կյանքով:

Ահա ճորտատիրական իրավունքի վերացմանը հաջորդող մի շարք մասնակի ոհիքորմների իրականացման շրջանում էլ, ինչպես պետք էր սպասել, առաջանում է այդ համայնքների իրավասությունները վերացնելու հարցը:

Նովոռոսիայի գաղթավայրերի մեջ ուրույն տեղ ուներ բավականաշափական արտոնություններից օգտվող Դոնի հայկական գաղութը:

Նոր նախիջևանի արտոնությունները պահպանելու կամ վերացնելու հարցը երկարատև պատմություն ունի: Այն առաջացել է դեռևս նրա հիմնադրման առաջին տասնամյակներից¹: Եկատերինա կայսրություն մահը առիթ գարձակ նրա արտոնած առանձնաշնորհումները վերացնելու տրամադրությունների դրսնորման համար, որը սաղմնավորվում էր տեղական իշխանությունների ոլորտում և կառավարական որոշ շրջաններում: Այդուհանդեմ, մի շարք հանգամանքների բերումով, Պավել I-ի 1799 թ. հունվարի 4-ի հրամանով վերահաստատվում է Եկատերինա II-ի 1779 թ. նոյեմբերի 14-ի շնորհագիրը: Ընդառաջելով նոր նախիջևանի հայ հասարակության ինդրագրին Ալեքսանդր I կայսրը 1802 թ. դեկտեմբերի 21-ի

¹ Վ. Բ. Թարխովարյան, Նոր նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779—1861), Երևան, 1967, էջ 393—403.

Հրովարտակով նույնպես հաստատում է իր նախորդների շնորհած արտոնությունները²:

Առանձնաշնորհումների պահպանման խնդիրը առավել լուրջ բնույթը ընդունեց 1810—1820-ական թվականներին, հայ առևտրականներին վաճառականական կարգի՝ գիլդիաների մեջ ընդգրկելու և հաջորդ տասնամյակներին հարկային նոր օրենքը կիրառելու ժամանակ: Այնուամենայնիվ, այս և համանման պետական նոր միջոցառումները մասնակի բնույթը էին կրում և Եկատերինա II-ի կայսերական շնորհագրի ուժով մերժվում կամ մեղմացվում էր նրանց գործադրումը:

Իրավիճակը փոխվում է հետագայում, XIX դարի կեսերին, հատկապես 60-ական թվականներին, 1861 թ. գյուղացիական ոեֆորմի հետ կապված վարչական, ռազմական, դատական, քաղաքային ոեֆորմներ իրականացնելու ընթացքում: Եթե առաջ սոսկ պետական առանձին միջոցառումների ժամանակ էր բարձրացվում առանձնաշնորհումներից օգտվող գաղութների, այդ թվում և նոր նախիջևանի, այս կամ այն արտոնությունը պահպանելու խնդիրը, ապա այս շրջանում հարցադրման բնույթը փոխվում է: Տեղական ոռուսական շրջանների և պետական մարմինների կողմից բարձրացվում է, արտոնություններից օգտվող գաղութներին առաջին հերթին տնտեսական առանձնաշնորհումներից զրկելու, շրջակա ոռուսական բնակավայրերի հետ դրանք համահավասար վիճակում դնելու, պետական բոլոր օրենքներն այնտեղ լիովին կիրառելու և նրանց ինքնավարությունը առհասարակ վերացնելու խնդիրը:

Նման ցանկություններն ու պահանջներն այնքան էին հասունացել և ընդհանուր բնույթը ընդունել, որ անգամ գրավոր դիմումներ էին ներկայացվում, մամուլում հոդվածներ տպագրում և կառավարությանը հրապարակ կոչ անում վերջ տալու ոնչով շարդարացվող այդ առանձնաշնորհումներին³: Հաճախակի էին դարձել հատկապես Դոնի հայկական գաղութի հողային ընդարձակ տարածքը սահմանափակելու, ոստիկանական ծառայությունը մագիստրատից անջատելու, հայկական դատաստանագիրը ապօրինի համարելու և գործածությունից հանելու առաջարկները: Այդ պահանջներին ընդառաջելը սակայն, հավասարագոր կիներ հայկական մագիստրատը փակելուն և գաղութի ինքնավարությունը վերացնելուն:

² Центральный Государственный исторический архив (ЦГИА), СССР, ф. 1152, т. 1, д. 35, лл. 15—16.

³ «Համբարձուր Ռուսիո», 1863, № 46. ՀՍՍՀ կուտուրայի մինիստրության եղիշեարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետեւ գրականության և արվեստի թանգարան), Մ. Բերբերյանի փոնդ, բ. 3, գ. 49 և այլն:

Նոր նախիջևանը որպես հայաքաղաք և հայկական հասարակական ու մտավոր կարևոր կենտրոն պահպանելու հարցը հուզում էր ոչ միայն Դոնի հայությանը, այլև հայ իրականության լայն շրջաններին: Այդ նույն մտահոգությամբ ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս I-ը, հավանաբար, աշակցություն ակնկալելով, դիմել էր Կովկասի փոխարքային: Արխիվում պահպանվել է նոր նախիջևանում կատարվելիք փոփոխությունների մասին փոխարքայի 1860 թ. գրությունը՝ ուղղված կաթողիկոսին: Կովկասի փոխարքան հավաստում էր վերջինիս այն մասին, որ նախատեսվող փոփոխությունները վերաբերում են սոսկ նոր նախիջևանի ոստիկանական ծառայությունը դատական մասից անջատելուն: Նա հանգստացնելով կաթողիկոսին, ավելացնում էր, որ այդ փոփոխություններն, ըստ էության, ամենկին չեն շոշափում ժամանակին տրված արտոնությունների և մագիստրատի հարցերը⁴:

Նոր նախիջևանի առանձնաշնորհումները վերացնելու հարցն առանձնակի սրությամբ դրվեց 1864 թ. հունվարի 1-ի գեմստվոնների վերաբերյալ հայտնի օրենքը գործադրելու ժամանակ: Դոնի Ռուսությունի քաղաքագլուխ Ա. Բայկովի գլխավորությամբ տեղի գեմստվային ժողովը որոշում է ընդունում միջնորդել կառավարության առաջ՝ նոր նախիջևանի արտոնությունները վերացնելու համար: Եկատերինոսալավի նահանգային դեմստվային ժողովը, ոչ առանց Ռուսությունի քաղաքագլուխի ակտիվ միջամցության, լիովին համաձայնվում է այդ վճռի հետ:

Ա. Բայկովը 1866 թ. հենվելով նահանգային ժողովի որոշման վրա դիմում է ներքին գործերի մինիստր Պ. Վալուկին, ներկայացնելով նաև նահանգապետի կողմից հավանության արժանացած գեմստվային ժողովի վճիռը⁵: Նրանում վերապատմելով ժամանակին դրիմահայերին կայսերական հրովարտակով տրված հիմնական արտոնությունները, կովան է դարձնում այն հանգամանքը, որ Ալեքսանդր I կայսրը որոշ վերապատմով է հաստատել 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակը: Կայսրը նշել է, որ ինքը վերահաստատում է իր նախորդների տված հրամանագիրը, «քանի որ նրանք համանշուն են ընդհանուր պետական օրենսդրությանը»: Ապա նահանգային ժողովի կողմից ներկայացվող փաստաթիվում նշվում է, որ պետական օրենքները փոփոխվել, շատ շնորհագրեր վերացվել են, հետևաբար պետական նոր հրամանագրերն էլ հարկ է կիրառել նաև նախիջևանի նկատմամբ: Մանավանդ որ գեմստվոնների մասին օրենքում չի նախատեսվում որևէ բացառություն: Նախիջևանցիները ինչ-

⁴ Հայկական ՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ (ՀԿՊԱ), ֆ. 415, ց. 1, գ. 266, թ. 1—5:

⁵ ЦГИА СССР, ф. 1287, оп. 38, д. 739, лл. 1—2, 12—15.

պես ամեն մի համապետական նոր միջոցառման ժամանակ, այս անգամ էլ բացառություն անելու միտումով դիմել են ներքին գործերի մինիստրին, որը և մերժել է նրանց խնդրանքը: Ապա Ռուսությունի քաղաքագլուխը նշում էր, որ նահանգային զեմստվային ժողովը լիովին բաժանում է Ռուսությունի գավառային ժողովի կարծիքը, որում ասված է. «Առանձնաշնորհումը հարաբերական հասկացողություն է: Պահանջարկի աճի, պայմանների և հանգամանքների փոփոխության, պետական կյանքի զարգացման հետ հին առանձնաշնորհումները վերանում են: Ընդունել առանձնաշնորհումների անփոփոխելիությունը, նշանակում է անշարժության դատապարտել ժողովրդին և պետությանը... եվ միթե կարելի է խոսել շնորհագրի մասին այժմ, եթե ոռուսական ամբողջ երկրում մեկ ցանկություն կա, որպեսզի ոռուսական երկիրը լինի մաքուր ոռուսական, որպեսզի նա ի մի համախմբվի, որպեսզի նրա բոլոր բնակիչները օգտվեն նույն իրավունքներից, կրեն նույնպիսի ծանրություն, և որպեսզի վերջ տրվի պետության ներսում այդ առանձին պետությունների գոյությանը, որոնք այնքան վտանգավոր են ժողովրդների թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական կյանքի համար»⁶:

Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետ Կոչուրին իր հերթին, ներքին գործերի մինիստրին հայտնում է նախիչևանի և նրա օկրուգի ոստիկանական և դատական մասը կարգավորելու անհրաժեշտությունը: Այնուհետև նա տեղեկացնում է, որ ժամանակին կառավարությունը ուշադրություն է դարձրել այդ հանգամանքի վրա, և որ այդ ուղղությամբ համապատասխան աշխատանքներ են տարվում: Նահանգապետը միաժամանակ գտնում էր, որ Եկատերինասլավի զեմստվային ժողովը դուրս է եկել իրեն սոսկ տնտեսական հարցերում վերապահված իրավասությունների շրջանակներից և անդրադարձել կայսերական հրովարտակով տրված առանձնաշնորհումները վերացնելու խնդրին: Ապա ավելացնում է, որ այսուհետեւ, սեփական իրավունքներն ընդարձակելու նման անցանկալի երևույթները կանխելու նպատակով դիտողություն է արվել Եկատերինոսլավի զեմստվային ժողովին⁷:

Մեկ այլ գրությամբ, բարձրացված հարցի մասին գեներալ-նահանգապետն, ըստ էության, հայտնում է հետևյալը: Նա ուշադրության արժանի է գտնում Եկատերինոսլավի նահանգապետի վկայակոչած փաստարկները, որ Ռուսությունի ժամանակակից դիմումը միացել է շինություններով միացել է նախիչևանին և հատկապես Դոն գետի ափով ստացվել է շինությունների մեկ ընդհանուր դիմ:

⁶ ЦГИА СССР, ф. 1149, 1867, т. 7, д. 92, л. 28.

⁷ Նույն տեղում:

մասերում են մնացել ազատ տարածություններ: Նախիչևանի շատ հայ բնակիչներ Ռուսություն ունեն անշարժ սեփականություն՝ տներ, խանութներ և այնտեղ առևտուր են անում: Վերջապես, երկու քաղաքների միացումն, իրոք, կարող է նպաստել նախիչևանի հայերի մերձեցմանը՝ շրջապատի ոռուսական բնակչության հետ: Երկու քաղաքների տեղական պայմաններից ենելով ինքն էլ, ավելացնում էր գեներալ-նահանգապետ Կոչուրիը, չի կարող դեմ լինել միացմանը, սակայն գտնում է, որ նման միացումը չի բխում նախիչևանցիների ցանկությունից: Նա միաժամանակ հիշեցնում էր զորավոր այն հանգամանքը, որ հայերը հենվում են Եկատերինա II-ի հրովարտակի վրա, իսկ միացումն անհնար կլիներ իրականացնել՝ առանց խախտելու կայսերական հրամանագիրը⁸:

Ներքին գործերի մինիստրությունն այս անգամ ևս հավատարիմ է մնում գաղութների ինքնավարությունը վերացնելու իր ավանդական քաղաքականությանը⁹: Մինիստր, գեներալ-ադյուտանտ Ա. Տիմաշը, ի պատասխան գեներալ-նահանգապետի կարծիքի, նրան է հղում (1868 թ. մայիս) նոր նախիչևանի ինքնավարությունը վերացնելու և երկու քաղաքները միացնելու հարցում մինիստրության տեսակետն արտահայտող հատուկ գրություն: Նախարարը հայտնում է, թե Եկատերինա II-ի 1779 թ. Հրովարտակին մոտիկից ծանոթությունը պարզ է դարձնում, որ նախիչևանին արվել է ինքնավարություն դատական և ոստիկանական ինդիրներում: Հրովարտակում տնտեսական հարցերի մասին որոշակի ոչինչ չի ասված: 1868 թ. փետրվարի 27-ի Մարիուպոլի և Ռոստովի գավառների ու քաղաքների ոստիկանական վարչությունների վերաբերյալ բարձրագույն հրամանով մագիստրատներից վերցված է ոստիկանական մասը և հանձնված Եկատերինոսլավի նահանգապային վարչության տնօրի-

⁸ Государственный архив Одесской области (ГАОО), ф. 1, оп. 17, д. 80, л. 1—2, 5.

⁹ Մի քանի տարի առաջ, 1866 թ. գաղութի վարչական ենթակայությունից ոստիկանական մասը վերցնելու առիթով մինիստրության ժանդարմական կորպուսը ՏՅեղեկություններ նախիչևանի հայերի մասին» գաղտնի փաստաթուղթ էր ստեղծել (Центральныи государственный архив Октябрьской революции (ЦГАОР), ф. 109, 1866 г., д. 5 г. 47, л. 23—35): Այդ փաստաթուղթում ուրվագծվում է գաղութի մարող պատմությունը: Խոտացված գուներով և միտումնավոր է ներկայացվում գաղութի իրավաբանական ու տնտեսական վիճակը: Դրանում նշվում է, թե հայկական մագիստրատն իր ձեռքում է կենտրոնացրել բովանդակ իշխանությունը, որ ոստիկանական մասը բարձրող վիճակում է, հայկական զատաստանագիրը իրավական նորմերի պատահական մի հավաքածու է և սխալ է գործադրվում, քաղաքը անբարեկարգ դրության մեջ է այլն: Այդ ամենից արվում է այն հետևողությունը, թե անհրաժեշտ է ոչ միայն հայկական զաղութից ոստիկանական ծառայությունը վերցնել, այլև ամբողջությամբ փակել մագիստրատը:

Նությանը: Շուտով մագիստրատից վերցվելու է նաև դատական մասը: Այսպիսով, հետեւցնում է մինիստրը, նախիջևանի կայսերական շնորհագրերից մեկն արդին գոյություն չունի, մյուսները շուտով կկորցնեն իրենց նշանակությունը:

Տնտեսական հարցերում հայերի ինքնավարությունը չի կարող խանգարել քաղաքների միացմանը, քանի որ նրանք կունենան իրենց ներկայացուցիչները քաղաքային վարչությունում և որպես քաղաքի առանձին հասարակություն կարող են տնօրինել իրենց ընդհանուր սեփականությունը:

Ներքին գործերի նախարարն այդ ամենին ավելացնում է նաև այն, որ իրար սերտորեն առնչվող ու գրեթե միակցված քաղաքներին նույն վիճակում թողնելը կարող է ապագայում ավելի մեծ անախորժություններ առաջացնել, քան այժմ, դրանց միացման դեպքում: Հետևաբար գտնում է, որ միացումն անհրաժեշտ է իրականացնել մոտ ապագայում¹⁰:

Ներքին գործերի մինիստր Ա. Տիմաշևի ցուցումով և նովոռոսիայի ու Բեսարաբիայի գեներալ-նահանգապետ Կողուբեյի հանձնարարությամբ Եկատերինոսլավի նահանգապետը 1868 թ. հոկտեմբերի 7-ին ներկայացնում է երկու քաղաքները միացնելու մասին իր նկատառումները և տասը կետից բաղկացած, նախագծի բնույթ կրող առաջարկները:

Նա Ռուսովը և նախիջևանը մի բնակավայրի մեջ միավորելը հիմնավորում է երկու քաղաքների ներքին կապերով, առևտրական ընդհանուր շահերով, ինչպես նաև նրանով, որ հայերը չեն կարողանում հմտորեն վարել իրենց համայնքի գործերը: Երկու քաղաքների միացման համանահանգապետը հիմք է ընդունում հետեւյալ հանգամանքները:

Ռուսովը և նախիջևան քաղաքները շինություններով, հատկապես Դոնի գետափնյա կառուցներով փաստորեն միացել են: Նրանց վերջնական միավորմանը խանգարում են բարձրագույն իշխանությունների կողմից հաստատված երկու քաղաքների պլանները, որոնցով նրանց միջև թողնված է որոշ տարածություն:

Ռուսովով շատ հայեր են ապրում, իսկ նախիջևանի բնակչության գրեթե կեսը ուստի ուստի են:

Բարձրագույն հրամանով, ընթացիկ տարվա (1868) փետրվարից դրանց ոստիկանական ծառայությունները միացվել են մեկ ընդհանուր վարչության մեջ, զեմստվոների գծով երկու քաղաքի բնակիչներն էլ մասնակցում են Ռուսովի զեմստվոյի հավաքներին:

Օդեսայում դատական օկրուգ բացվելուց հետո նախիջևանը Ռուսովի հետ ենթարկվելու է Տագանրոգի օկրուգային դատարանին:

Այդպիսով, նահանգապետը գտնում է, որ երկու բնակավայրերի բաժանվածությունը մնում է միայն քաղաքային տնտեսությունների հարցում: Նախիջևանի տնտեսական զեկավարումը նա համարում է անբավարար, թեպետև քաղաքին հատկացված է վիթխարի քանակի՝ 20000 դես. Հողատարածություն և նա ազատված է ուեկրուտից (զինակոչությունից) և պոստոյից՝ օթևան տրամադրելու պարհակից:

Նախիջևան տվյալներից երկում է, որ ընթացիկ տարում նախիջևան քաղաքի եկամուտները լինելու են ընդամենը 36092 թ., իսկ Ռուսովինը՝ 105773 թ.:

Եռակի տարբերությունը առաջանում է նրանից, որ նախիջևանի տնտեսական կառուցվարումը չի կազմակերպվում այնպես, որպեսզի աճեն քաղաքի եկամուտները: Հաճախ էլ գաղութի կառավարչությունը խոշընդոտում է այլազգի առևտրաարդյունաբերական ձեռնարկատերերին, որոնք հարկադրված են լինում հաստատվել Ռուսովում: Քաղաքները միացնելով և ընդհանուր տնտեսական վարչություն ստեղծելով կվերանան համանման արգելները:

Այդ ամենը նկատի առնելով Եկատերինոսլավի նահանգապետը եզրակացնում է, որ միայն տնտեսական հարցերի համար նախիջևանի շնորհագիրը պահպանելը աննպատակահարմար է: Հետեւաբար նման մտայնությունն իր տեղն անհրաժեշտաբար պետք է զիշի երկու քաղաքները միացնելու հիմնավոր տեսակետին¹¹:

Նա առաջարկում է միացումը կատարել հետեւյալ սկզբունքներով.

ա) Երկու քաղաքները շինություններով միացնելու համար, նրանց իրարից անշատող լինային մասի ազատ հողերում կառուցումներ սկսել: Այդ նպատակով կազմել միացվող քաղաքների նոր հատակագիծ:

բ) Նախիջևան և Ռուսովի քաղաքների բնակիչներին միացնել քաղաքային մեկ ընդհանուր բնակավայրում¹²:

11) ԳԱՕՕ, Փ. 1, օպ. 17, ձ. 80, լ. 35—36.

12) Եկատերինոսլավի նահանգապետը նույն օրերին ներկայացնում է երկու քաղաքների միացման, ուսւն առաջարկներից փոքր ինչ շեղվող, նախագծի մեջ այլ տարբերակ: Այնտեղ նպատակահարմար է համարում Ռուսովի կատարել հրամանով, մինչև քաղաքային ոեփորմների ընդունումը: Նահանգապետը կնում է այն հանգամանքից, որ նահանգային վարչությունների ազգեցությունը քաղաքների վրա ավելի մեծ է, քան նախատեսվում է ոեփորմներով: Հետեւաբար երկու քաղաքների միացման ժամանակ անխուսափելիորեն ծագած թյուրիմացություններին նահանգային վարչությունը ներկայում կարող է ավելի ակտիվ միջամտել ու հարթել, քան ոեփորմներից հետո: Նա գտնում է, որ քաղաքներից ոչ մեկի անոնք չպետք է պահպանել, քանի որ երկու քաղաքների անունը կարող է ուրիշ բառացիք լինել: Դրանից բացի քաղաքներից որևէ մեկի անվան պահպանումը կարող է գտնունքել մյուսի կողմից և տեղիք տալ անախորժությունների: Նահանգապետը առաջարկում էր բարեյալ քաղաքը անվանել

գ) Հայկական գյուղերը առանձնացնել նախիջևանից և ընդհանուր հիմունքներով, ենթարկել գյուղական վարչությանը:

դ) Հայկական գյուղերի հողատարածությունները անշատել քաղաքապատկան հողերից: Սամբեկի տափաստաններից հողաբաժիններ տալ քաղաքում բնակվող 136 երկրագործներին: Կայսերական հրովարտակով նախիջևանին շնորհված 20.000 դեսյատին հողերից 3223 դես. արոտավայրերը միացնել Ռուսով քաղաքի արոտավայրերին: Մնացած վարչական հողերն ու խոտհարքները, բացառյալ 2111 դես. տնամերձ հողատարածության, տալ վարձակալությամբ, որից ստացված եկամուտը մտցնել միացյալ քաղաքի ընդհանուր գանձարանը:

Նահանգապետը չէր անդիտանում այն հանգամանքը, որ նախիջևանը Ռուսովից շատ հողատարածություններ ունի: Սակայն դրա փոխարեն նա նշում էր, որ Ռուսովից քաղաքային եկամուտներն էլ երեք անգամ ավել են, որից հավասարապես օգտվելու է նախիջևանը:

ե) Երկու քաղաքների միացումից հետո, ներքին գործերը վարելու համար նա առաջարկում էր քաղաքային ազգաբնակչությունը բաժանել ռուսական, հրեական և հայկական հատվածների: Առաջին երկուսը Ռուսովում անշատված ծեռվ արդեն գոյություն ունեին, իսկ հայերն էլ քանի որ ազատված էին զինակոչությունից, ուստի կարող էին առանձին հասարակություն կազմել:

գ) Հայտնի է, որ նախիջևանի հիմնադրման ժամանակվանից գոյություն ունեցող որբային դատարանի գործերը վարում է քաղաքագլուխը՝ հասարակության կողմից ընտրած երկու անդամների մասնակցությամբ: 1867 թ. իր իսկ՝ նահանգապետի կարգադրությամբ գործավարությունը տարվում է ռուսերին: Որբային դատարանը առաջնորդվել է կայսերական հրովարտակով նրան վերապահված հատուկ օրենքներով ու սովորութացին նորմերով: Որբային դատարանը հարկ է միացնել Ռուսովից համանական դատարանը, որը գործում է գումարյին առընթեր: Նախատեսվում է որբային դատարանի ղեկավարումը թողնել քաղաքագլխի ձեռքում, որն այն իրականացնելու է հայ հասարակության կողմից ընտրած երկու անդամների գործակցությամբ: Հայերն փաստաթղթերը թարգմանելու համար անհրաժեշտ է համարում պահել նաև թարգմանիչ:

է) Նախիջևան քաղաքների մասին նոր օրենսդրության անցնելը միավորված քաղաքում հասարակական վարչություն կազմակերպել, որպես գիտական բոլոր ընտրական օրգաններում ընտրությունները կատար-

«Դագմարին», թագաժառանգի տիկնող անունով, իսկ Ռուսովից գավառը՝ դագմարինյան: Նա առաջարկում էր համապատասխանարար փոփոխել նաև քաղաքի կնքք, գերբը, պլանը, հիմնարկները անվանումները (ԳАОՕ, ֆ. I, օպ. 17, դ. 80, լ. 23—29).

վեն ուսւ և հայ հասարակությունների կողմից առանձին-առանձին՝ քաղաքագլխի նախագահությամբ ու Հակողությամբ:

ը) Մինչև հասարակական հիմնարկների բացման մասին կառավարական հրամանագիրը միացյալ քաղաքի եկամուտների ու ծախսերի տնօրինումը թողնվելու էր քաղաքային դումային:

թ) Բարեգործական բոլոր հաստատություններն, ընկերությունները և բարեգործական նպատակներով կատարված կտակները՝ լինեն դրանք նախիջևանում թե այլուր, անգամ ուրիշ պետություններում, թողնվում են անձեռնմխելի: Դրանց տնօրինման համար հայ հասարակության իրավունք է վերապահվում ընտրել առանձին կոմիտե, որն առաջնորդվելու էր հատուկ կանոններով: Կոմիտեի անդամների ընտրությունը կատարվելու էր միացյալ քաղաքի խորհրդարանում՝ քաղաքագլխի նախագահությամբ, սակայն հայ հասարակության կողմից: Եկատերինոսուլավիթ նահանգապետը վերջում նշում էր, որ նախիջևան երկու քաղաքների միացումը, նախիջևանցիները զեմստվային ձայնավորների ընտրությանը մասնակցելու են Ռուսովից հողատարերի գավառային համագումարում: Այսուհետեւ նրանց իրավունք է վերապահվում մասնակցելու ընդհանուր քաղաքային ընտրական համագումարներին, միայն համապատասխանարար ավելացվելու է քաղաքի ձայնավորների թիվը¹³:

Ինչ խոսք, Դոնի հայ հասարակությունը տեղյակ էր գաղութի առանձնաշնորհումներն աստիճանաբար կրծատելու, նրա ինքնավարությունը վերացնելու և նախիջևանը Ռուսովից քաղաքին միացնելու ուղղությամբ տարվող ակտիվ քաղաքականությանը և ձեռնարկվող գործական քայլերին: Բնականաբար, այդ ամենը հուզում ու փոթորկում էր գաղութի հասարակական կյանքը: Հայերի մեջ առանձնաշնորհումները պահպանելու և նախիջևանը Ռուսովից միացնելու ձեռնարկումը խափանելու լայն շարժում է սկսվում: Նրանք գոյություն ունեցող իրավիճակն անփոփոխ պահպանելու ձգտումով գիտումներ են ուղղում կառավարական բարձրագույն մարմիններին, իրենց հերթին շանում հիմնավորել կայսերական հրովարտակով վերապահված արտոնություններն անփոփոխ պահպանելու անհրաժեշտությունը:

Պատահական չէ, որ գաղութի ինքնավարությունը վերացնելու աշխուցք գրագրությունների հետ յ նույն տարրում՝ 1868 թ. Եկատերինոսուլավիթ նահանգապետն արդեն վերազար մարմիններին հայտնում է Դոնի հայ հասարակության ընդդիմագիր քայլերի մասին: Նա գրում է, որ երկու քաղաքները միացնելու լուրը հուզում է առաջացրել նախիջևանի հայ հաս-

13 ԳАОՕ, ֆ. 1, օպ. 17, դ. 80, լ. 37—40. Հմտ. ЦГИА ССР, ֆ. 1287, օպ. 38, դ. 739, լ. 38—43.

բակության մեջ։ Հայերն իրենց ազգեցիկ գործիչների՝ Ա. Խալիբովի ու նրա համախոների միջոցով անում են ամեն ինչ՝ այդ ձեռնարկումը ձախողելու համար¹⁴։ Այդ նպատակով հայերը գաղտնի դրամ են հավաքել, ընտրել երկու պատգամավոր և, համապատասխան լիազորություններ տալով, ուղարկել են Օդեսա և Թետերուրդ։ Վերջում նահանգապետը հավաստում է, որ ինքը միջոցների է դիմել, որպեսզի սկսված շարժումը վնասակար ուղղություն չտանալաւ¹⁵։

Նախիջևանի հայ հասարակությունը միաժամանակ, քաղաքագլխի, քաղաքյին վարչության խնամակալների և զանազան ընկերությունների անոնից, բազմաթիվ ստորագրություններով զեկուցագիր է ներկայացնում Օդեսայի դատական օկրուզը ստուգող սենատոր Ա. Շախմատովին (1869 թ. հունվար) և ներքին գործերի մինիստրության հատուկ հանձնարարությունների պաշտոնյա Պ. Կլադնիցկուն (1869 թ. հուլիս)։

Միևնույն բովանդակությամբ այդ զեկուցագրերում նրանք հիշեցնում են, որ իրենց նախնիները գարեր ի վեր բնակվում էին Ղրիմում, Ընդառաջելով Եկատերինա II կայսրուհու հրավերին և խորապես հավատալով նրա կայսերական խոսքի անսասանությանը նրանք դեռևս թերակղին կայսրությանը միացնելուց առաջ կամավոր տեղափոխվել են Տեղասատան։ Եկատերինա II-ը զրիմահայ գաղթականներին և նրանց ժառանգներին հանդիսավորապես շնորհել է արտոնություններ։ Դրանք հետագայում հաստատվել են նրան հաջորդած թագավորների՝ Պավելի, Ալեքսանդր I-ի և Նիկոլայ I-ի կողմից։

Ղրիմահայերին տրված կայսերական շնորհագիրը եղել է միանգամայն արդարամիտ և հիմնավորված։ Դրանով նախ՝ փոխհատուցվել են հայերի կրած կորուստները։ Վերջիններս իրենց նախկին հայրենիքում՝ Ղրիմում թողել են Ընդարձակ հողատարածություններ, ծաղկում այգիներ, տնամերձ բանջարանոցներ և անշարժ այլ հարստություններ։ Դրանից բացի, հայերը լիովին արդարացրել են իրենց վրա կառավարության դրած հույսերը։ Նրանք հմտորեն և արդյունավետ կերպով զբաղվել են երկրագործությամբ, արդյունագործությամբ, առևտուրով և համեմատաբար կարծ ժամանակում հասելի հաջողությունների։ Հայերի ներդրումը խոչոր է գաղութի հիմնադրման ժամանակ գրեթե անմար-

¹⁴ Ժանգարմական վարչության կազմած գաղտնի փաստաթղթում հիշալ շարժումը գլխավորող հեղինակավոր գործիչներից հիշատակվում են Կ. Հայրապետյանի, աղջեցությունը մեծ է համարվում ինչպես հայ հասարակության, այնպես էլ մագիստրատի վրա, և վաճառական կլոտիկի անունները (ЦГАОР, ֆ. 109, 1866, գ. 52, լ. 30–31)։

¹⁵ ԳԱՕՕ, ֆ. 1, օպ. 17, գ. 80, լ. 33.

գաբնակ ու ամայի Դոնի տափաստաններում տնտեսական կյանքն աշխուժացնելու և զարգացնելու գործում։

Ապա զեկուցագիր—ինդրագրի հեղինակները հիշեցնում են, որ կայսերական հրովարտակի 5-րդ կետի համաձայն, նախիջևանում հիմնվել է մագիստրատ։ Վերջինս, ազգային սովորությունների և իրավական նորմերի հիման վրա, քաղաքում և իր օկրուզը կազմող հինգ հայկական գլուխերում վարում է դատական գործը։ Առանձին ղեպքերում ազօրինություն կատարողները, որ կարող է պատահել ամեն մի նույնիսկ ամենակազմակերպված բնակավայրում, հետապնդվել են օրենքի ուժում։

Այսուհետեւ, 1859 թ. Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետը դիմել է կայսրին նախիջևանն ընդհանուր ոստիկանական վարչությանը և ներկելու հարցով։ Այդ առաջարկը, քանի որ շոշափում է գաղութի ամենաէական ու գլխավոր իրավունքն՝ իրենք նույնպես դիմել են (1860) կայսրին։ Նրանք գեմ վիճնելով ոստիկանական մասը ուժեղացնելու կառավարության ցանկությանը, ինդրում են այն կատարել կայսերական շնորհագրի վերապահած իրավասությունների սահմաններում։ Ասել է թէ՝ ոստիկանական մասը անջատել մագիստրատից, բայց թույլատրել, որպեսզի նրա նշանակումը կատարվի հայ հասարակության կողմից՝ ընտրությամբ։

Անտեսենով այդ ամենը գեներալ-նահանգապետը, ճիշտ է որպես ժամանակավոր միջոցառում, սակայն 1865 թ. նախիջևանը ենթարկել է Ռուսուվի ոստիկանական վարչությանը։ Նման քայլ ոչ միայն վիրավորական է միանգամայն ինքնուրույն նախիջևանի նման մի քաղաքի համար, այլև հակասում է կայսերական շնորհագրին։

Վերջերս էլ, գրում էին նրանք, հայկական գյուղերը, որոնք նախիջևանի անբաժանելի մասն են կազմում, առանձնացվել են նրանից և ենթարկել Ռուսուվի զեմստվունիքին։ Նախիջևանցիները պատրաստ են պետական ոեֆորմների ընդհանուր ոգուն համապատասխան հիմնել և զեմստվու, և ոստիկանություն, սակայն Ռուսուվից առանձին և կայսերական հրովարտակի շրջանակներում։

Ապա զեկուցագրում անդրադառնում են նախիջևանը Ռուսուվին միացնելու առավել հուզի հարցին։ Իրենց հասած աեղեկությունների համաձայն, նշում են հայերը, ոստառվցիների գիմումների հետևանքով, պետական ատյանների միջև պաշտոնական գրագրություն է սկսվել՝ նախիջևանը որպես քաղաք վերացնելու և Ռուսուվին միացնելու մասին։ Անտեսվում է այն հանգամանքը, որ նախիջևանի հասարակությունն իր կառուցածքով, բնակիչների ծագումով, դավանանքով, իրավունքներով ոչ մի ընդհանրություն չունի Ռուսուվի հետ։ Ժամանակին իրենց հայե-

րը, եթե կարողանալին ապրել այլ հասարակության մեջ, կառավարությունից թույլտվություն չէին խնդրի Դոնի ափին առանձին քաղաք հիմնելու համար։ Նոր նախիջևանը Ռուսաստանում հիմնադրված առաջն հայկական քաղաքն է։

Ռուսաստանում քաղաք հիմնելու գաղափարն ու ցանկությունն իրենց նախիների մեջ առաջացել է, ամեն մի ժողովրդին հատուկ, սեփական հավատը, լեզուն և ազգությունը անաղարտ պահելու համար։ «Մենք լինելով Նրմից գաղթած հայերի դեռևս երկրորդ սերունդը, — գրում են նրանք, — լիովին բաժանում ենք մեր հայրերի զգացումք և երբեք չենք համաձայնվի, որպեսզի մեր հասարակությունը կամովին միացվի որևէ մեկ այլ հասարակության հետա»¹⁶։

Նախիջևանը ինչպես կարող է միանալ Ռուսովին, եթե նրա հետ չի կարող կիսել պիտական պարհակները, քանի որ շնորհագրով դրա մի մասից ազատված է։ Կայսերական շնորհագիրը իրենց տրված է ժառանգաբար։ Նրա պահպանումը իրենց սուրբ պարտքն է, որն անցնում է հաջորդաբար՝ հայրերից որդիներին։

Կառավարությունը նախիջևանի ոստիկանությունը վերակառուցելու իր միտումը կարող է իրականացնել ոչ թե այն Ռուսովի քաղաքային ոստիկանական վարչությանը ենթարկելով, այլ նախիջևանում ոստիկանական վարչություն ստեղծելով։ Վերջինիս տնօրինության տակ կդրվին հինգ հայկական գյուղերը, ինչպես արվում է Ռուսաստանի այլ քաղաքներում և նրա օկրուզներում։

Վերջում հայ հասարակությունը խնդրում է կառավարությանը նախիջևանին տալու լնդհանուր քաղաքային դումա, որպիսին գոյություն ունի կայսրության երկու մայրաքաղաքներում և Օդեսայում։ Այդպիսի դուման՝ համահնչուն կլիներ քաղաքի ղեկավարման նախկինում գոյություն ունեցող կարգին և ամենաին չէր հակասի բարձրագույն շնորհագրին¹⁷։

Սրբարադատության և ներքին գործերի մինիստրություններից նախիջևանի հայ հասարակության դիմում-խնդրագիրը հասցեագրվում է նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետին։ Վերջինս, իր հերթին, ուղարկում է Եկատերինուլավի նահանգապետին և խնդրում նրա եղրակացությունը¹⁸։

Նահանգապետը Դոնի հայ հասարակության դիմումի մեջ առանձնացնում է շորս հիմնական հարց և յուրաքանչյուրի մասին հայտնում

իր կարծիքը։ Հայ հասարակության միջնորդությունն ընտրական եղանակով նախիջևանում և նրա օկրուզում ինքնուրույն ոստիկանական վարչություն ստեղծելու մասին նա համարում է ոչ հիմնավոր։ Բարձրագույն հրամանով 1868 թ. հայկական գաղութը ենթարկվել է Ռուսութիւնը և կարողացած է այդ միջոցառումը կատարվել է հայ հասարակության կողմից ընտրվող նախիջևանի ոստիկանական մասի վատ վիճակի հետևանքով։ Հին կառուցվածքը թողնելու պարագայում նախիջևանի ոստիկանությունն առավել մեծ չափով կարող էր դրսնորել իր պարտականությունները կատարելու անկարողությունը։

Նահանգապետը գտնում է, որ նախիջևանահայերի մյուս խնդրանքը՝ միայն հայ հասարակության պատկանող անձնավորություններից նախիջևանում ընտրովի հաշտարար դատարան ունենալու մասին, նույնպես անհնար է կատարել։ Նախ, ամբողջ նահանգում կառավարական հրամանագրի (1864 թ. նոյեմբերի 20) հիման վրա վերակառուցվում են դատական հաստատությունները, հետևապես աննպատակահարմար է բացառություն անել այս կամ այն համայնքին։ Դրանից բացի, նախիջեվանի բնակիչների գրեթե կեսը հայ հասարակությանը չպատկանող այլազգիներ են, որոնք նման պարագաներում կղրկվեին ընտրություններին մասնակցելու իրավունքից, մանավանդ, որ օրենքը նախատեսում է հաշտարար դատարանների ընտրություններին տվյալ բնակավայրի բոլոր բնակիչների մասնակցությունը։

Նախիջևան քաղաքի միջնորդությունը իրավունք վերապահելու իրենց, որպես քաղաքաբնակների, մասնակցելու Ռուսությունների ժողովներին նպատակահարմար է գտնվել բավարարել։ Պետական խորհրդի 1869 թ. փետրվարի 10-ի որոշմամբ նրանց թույլատրվել է «ձայնավորների» ընտրությունը կատարել քաղաքային ընտրական համագումարում։

Վերջում, նահանգապետը գրում է, որ ինքը բազմիցս առիթ է ունեցել կարծիք հայտնելու երկու քաղաքների միացման մասին։ Այժմ էլ մնում է Ռուսություն և նախիջևանը քաղաքային մեկ բնակավայրում միավորելու և այնտեղ տնտեսական լնդհանուր գոյություն ստեղծելու նախկին տեսակետին։ Այդ կարծիքը՝ հօգուտ նախիջևանցիների խընդրագրի փոխելու համար ինքը բավարար հիմքեր չի գտնում¹⁹։

Կառավարական բարձրագույն ատյաններում նոր նախիջևանի հայ հասարակության դիմումը դրական ընթացք չի ստանում։ Պետական նոր ուժորմաները կիրառելու ժամանակ բացառություն չի արված Դոնի հայ-

16 ЦГИА СССР, ф. 1287, оп. 38, д. 739, л. 59.

17 Նույն տեղում, թ. 45—60.

18 ГАОО, ф. 1, оп. 17, д. 104, л. 1.

կական գաղութի նկատմամբ: Մագիստրատից արդեն առանձնացվել էր ուստիկանական ծառայությունը, 1869 թ. նրանից վերցվում է դատական մասը, իսկ հաջորդ տարում 1870 թ. առհասարակ դադարում է հայկական մագիստրատի գործունեությունը: Դրանով պաշտոնապես վերացվում է գաղութի ինքնավարությունը²⁰:

Ինչպես դժվար չէ նկատել նոր նախիջևանի արտոնությունների վերացման շուրջն ետունքորմյան շրջանում սկսված հակամարտը հաճախ սուր բնույթի էր ընդունում: Ռուսովի քաղաքագլուխ Ա. Բայկովը, տեղի ու նահանգային իշխանությունների ղեկավարներն, առևտրաարդյունաբերական խավերի գործիչները բուրժուական նոր հարաբերություններով արդասավորված ազգային զարթոնքի պայմաններում աղատ գործունեություն ծավալելու գգտում տարված ջանում էին վերացնել տալ Դոնի հայերի իրավաքաղաքական և տնտեսական առանձնաշնորհումները: Իրենց նպատակին հասնելու համար նրանք հաճախ չափազանցված ու խեղաթյուրված էին ներկայացնում հայկական զանգվածի գործունեությունը, նրա կյանքի առանձին ստվերու կողմերը: Նրանցից ոմանք այնքան հեռու էին գնում իրենց միտումների մեջ, որ կամա թե ակամա ընկնում էին մեծապետական շովինիզմի մեջ:

Մյուս կողմից, Դոնի հայերը հաշվի չէին ուզում նստել փոփոխված իրադրության հետ: Նրանք անգիտանում էին նոր, կապիտալիստական հարաբերությունների պայմաններում առևտրաարդյունաբերական կյանքի զարգացման պահանջները, տեղական սահմանափակումներն ու առանձնահատկությունները համահարթող նրա նշանակությունը: Ինչպես նաև տեղում ուսւ բնակչության ստվարացումը և շրջապատի ազգաբնակչության հետ հայերին համահավասար վիճակում զնելու անհրաժեշտությունը: Նրանք ամեն կերպ ձգտում էին պահպանել հարցուր տարի առաջ ստացած իրավաքաղաքական ու տնտեսական առանձնաշնորհումները, պահպանել իրենց մենաշնորհ վիճակը:

Նոր նախիջևանը Ռուսովին միացնելու խնդիրը, սակայն մնում է առկախ: Երկու քաղաքները միավորելու հարցում մշտապես ձեռնպահ և զգուշավոր նովոռոսիայի ու Բեսարաբիայի գեներալ նահանգապետը, որոշակի է դարձնում իր դիրքորոշումը: Նա 1869 թ. մարտին հատուկ գործիքամբ ներքին գործերի մինիստրին հայտնում է, որ քաղաքների միացմանը նախիջևանցիները դեմ են և դա հակասում է 1779 թ. կայսերական հրովարտակին: Միավորումը, եթե պետք է կատարվի նախիջևանի ինքնավարության հիմնական մասի պահպանումը, կարող էր

²⁰ ГАОО, ֆ. 1, оп. 44, д. 72, л. 7. ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 1, գ. 679, թ. 10, ֆ. 54, գ. 983, 164. Հմմտ. Ե. Շահագիզ, Պատմական պատկերներ, Թիֆլիս 1903, էջ 30—48: 24

ձեռական բնույթի կրել: Հետևաբար նպատակահարմար է գտնում երկու քաղաքներում էլ պետական ուժորմների նոր սկզբոնքներով հասարակական վարչություններ մտցնել և կառավարման միասնական եղանակի անցնել: Դա աստիճանաբար կմոտեցնի նրանց և պայմաններ կնախապատրաստի միացման համար: Ներկա պայմաններում միացումը կարող է թյուրիմացություններ ստեղծել և անգամ ընդհարում առաջացնել: Եյդ ամենից ելնելով, գեներալ-նահանգապետը առաջարկում է հետաձգել երկու քաղաքների միացումը, Հող նախապատրաստել դրա համար և դրանից հետո միայն կատարել այդ ակտը²¹:

Կառավարական բարձրագույն առյաններում, հավանաբար, ինելամիտ ու ընդունելի են համարում գեներալ-նահանգապետի փաստարկումները և այդ տեսակետը հաղթում է:

Զնայած դրան, հաշորդ տասնամյակներում միացման խնդիրը բազմից բարձրացվում է Ռուսովի և վերադաս ատյանների կողմից, և հարեւան երկու քաղաքների հակամարտը այդ խնդրում, շարունակվում է նաև հետագայում: Այսպես, օրինակ, 1874 թ. Ռուսովը նահանգային կենտրոն դարձնելու նախագծի առիթով, երկու քաղաքները միացնելու քաղաքականության ակտիվ ջատագով Եկատերինոսլավի նահանգապետը, հետագայում պետական հետադիմական գործիլ ի. Դուրնովուն նորից է բարձրացնում այդ հարցը: Իր կարծիքը հիմնավորելու համար նա կրկնում է բազմից արդեն վկայակոչած նախկին փաստարկումները²²:

1885 թ. ակնկալելով կառավարական շրջանների հետ շփումներ ունեցող կ. Եղյանի աջակցությունը, նոր նախիջևանից հայտնում են նրան այն մասին, որ Ռուսովը Ա. Բայկովի գլխավորությամբ կրկին բարձրացրել է երկու քաղաքները միացնելու հարցը: Ռուսովցիների ցանկությունը խափանելու նպատակով նախիջևանի դուման քաղաքագլուխ Գր. Սալթիքովին գործուղել է մայրաքաղաք: Վստահ վիճակով քաղաքագլուխ գործունեության արդյունավետության մեջ, իրենք երկու պատգամավոր են լնտրել և գործուղել Պետերբուրգ, սակայն տեղեկացել են, որ կառավարությունը համաձայն չէ միացմանը²³: Դրանով հարցի արծարծումը շի ավարտվում: Հետագայում ևս տարբեր առիթներով բարձրացվել է երկու քաղաքները միացնելու խնդիրը:

Պաշտոնական բարձրագույն ոլորտներում, սակայն, նպատակահարմար չէին գտնում այդ խնդիրը վարչական հրամանագրերի միջոցով վճռելը: Անախորժությունների տեղիք շտալու համար, հակված էին

²¹ ГАОО, ֆ. 1, оп. 17, д. 80, л. 41—42.

²² ЦГИА СССР, ֆ. 1287, оп. 38, д. 739, л. 71—73.

²³ ՀԿՊԱ, ֆ. 58, գ. 2, գ. 1329, թ. 70—71, 74:

խնդրին բնական ուղիով լուծում տալ: Մանավանդ, որ Ռուսովի և Նախիչևանի առևտրատնտեսական կյանքում շաղկապված լինելու հանգամանքը, զարգացման ընթացքում նրանց աստիճանական մերձեցումը տանում էր զեպի երկու քաղաքների միացումը: Կառավարության այդ միտումները լավագույն ձևով դրսորվել են թեկուզ նոր Նախիչևանը ուստահայ թեմի կենտրոն դարձնելու հարցում:

1850—60-ական թվականներին քանից առաջարկ է արվել Նախիչևանի և Բեսարաբիայի հոգեոր թեմի կենտրոնը Քիշինեվից տեղափոխել նոր Նախիչևան: Նոր Նախիչևանի հասարակության ղեկավարները քաղաքի ինքնուրույնությունը և ազգային դիմքը պահպանելու համար հաճախ դիմում էին պետական ատյաններ և հոգեոր իշխանության պետին, թեմի առաջնորդությունը Քիշինեվից տեղափոխելու նոր Նախիչևան: Նման քայլի դիմելու նպատակահարմարությունը թելադրվում էր թեմի հայ ազգաբնակչության հիմնական մասը Դոնի հայկական քաղաքում կենտրոնացված լինելու և աշխարհագրական հարմար դիրք ունենալու հանգամանքներով: Այդ առաջարկները, նույնպես դրական ընթացք շին ստանում:

Դարի վերջին նորնախիչևանցիները կրկին հարուցում են այս հարցը և կրկին հանդիպում տեղական իշխանությունների դիմադրությանը:

1895 թ. Դոնի գործերի պետը՝ ատամանը, հատուկ գրությամբ ներքին գործերի մինիստրին հայտնում է Նախիչևան-Բեսարաբիա թեմի կենտրոնը Քիշինեվից Նախիչևան տեղափոխելու վերաբերյալ Ամենայն հայոց կաթողիկոսի միջնորդության մասին: Իր հերթին, ատամանը խնդրում է շրավարել կաթողիկոսի ցանկությունը, նկատի առնելով հետեւյալը: Ռուսով և Նախիչևան քաղաքներն իրենց կառուցներով գրեթե միացել են և շատ շուտով վերջնականապես կմիաձուլվեն որպես մի քաղաք: Երկու քաղաքների բնակիչների առևտրաարդյունաբերական և հասարակական շահերը նույն են: Այնպես, որ, նրանց միացումը կարճ ժամանակվա հարց է: Դրան խոշնդոտում է հայերի առանձնացված լինելու գգտումը և այն վախը, որ քաղաքների միավորմամբ Նախիչևանի կորցնի զուտ հայկական քաղաքի իր դիմապատկերն ու նշանակությունը: Խեմի կենտրոնը նոր Նախիչևան տեղափոխելը կարող է միայն ուժեցնել հայերի անշատվողական այդ գգտումը²⁴: Նման նկատառումներից ելնելով քարձրագույն իշխանությունները մերժում են նոր Նախիչևանը թեմի կենտրոն դարձնելու հայկական տեղական շրջանների տեսակետից հիմնավորված առաջարկը:

²⁴ ЦГИА СССР, ф. 821, оп. 7, д. 6, л. 118—119.

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՂԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Նոր Նախիչևանի հայկական գաղութի առանձնաշնորհումները վերացնելու և նրան ինքնավարությունից զրկելու տարվող քաղաքականության ընթացքում հարկանցիրեն շոշափվում է նաև հայկական գյուղերի հարցը: Հետագայում հայկական գյուղերի և մասնավորապես նրանց հողատարածությունների խնդիրը ևս առանձին և երկարատև քննության առարկա դարձավ:

Հողային հարցի շուրջը սկսված բախումները նոր Նախիչևանի հայկական գաղութում, ինչպես հայտնի է, մեծ ու հարուստ պատմություն ունեն: Քաղաքի առևտրակալվածատիրական դասի և գաղութի հայ գյուղացիների միջև սկզբնավորված պայքարը հատկապես սուր բնույթ է ընդունել XIX դարի 30—40-ական թվականներին: Այն դարձավ կառավարության բարձրագույն իշխանությունների, անգամ պետական խորհրդի հատուկ քննության հարց: Այդ ժամանակաշրջանում հողային հարցի շուրջը ծավալված երկարատև ու համար պայքարը պայմանավորված էր հողը եկամտի լավագույն աղբյուր լինելու, գյուղատնտեսական մթերքներն առեն առևտրա-դրամական շրջանառության ոլորտ մտնելու և նրանից խոշոր շահույթ ստանալու հանգամանքով²⁵:

Այս շրջանում հողային հարցի նկատմամբ սկսված հետաքրքրությունն անմիջականորեն առնչվում էր 1861 թ. գյուղացիական ռեֆորմի և նրանից բնող ագրարային բնույթի ձեռնարկումների հետ:

Երկու քաղաքները միացնելու քարձրագույն իշխանություններին ներկայացվող նախագծերում նշվում է, որ կայսերական շնորհագրով Նախիչևանին հատկացված 20 հազար դեսյատին հողատարածությունը թողնվում է քաղաքի տնօրինության ներքո: Հայ հասարակությանը պատկանող հողատարածություններից 2355 դեսյատին հատկացվում է քաղաքում բնակվող 136 երկրագործներին (յուրաքանչյուր շնչին 17 դ., 316 սաժեն): Մնացած տարածությունները թողնվում էին հինգ հայկական գյուղերի տրամադրության տակ²⁶:

Ներքին գործերի մինիստրությունը հատուկ քննության է առնում եկատերինոսավի նահանգի Մարիուպոլի հունական և Նախիչևանի հայկական գյուղերի իրավիճակը կարգավորելու հարցը²⁷:

²⁵ Վ. Բարիխուղարյան, նոր Նախիչևանի հայկական գաղութի պատմություն, էջ 170—194:

²⁶ ЦГИА СССР, ф. 1287, оп. 38, д. 739, л. 40—41.

²⁷ Ինչպես հայտնի է, հուների և հայերի նկատմամբ գործադրվել է տնտեսական և իրավագաղաքական միևնույն քաղաքականությունը: Պետության կողմից հարավային

1870 թ. քաղաքային ոեֆորմների հիման վրա, որոնք կիրառվել են հիշյալ գաղութներում՝ 1872 թ., հունական և հայկական գյուղերը, փաստորեն դուրս են եկել քաղաքների տնօրինությունից և սկսել ինքնամփոփ կյանք վարել: Դրա հետևանքով նրանք զրկվել են տնտեսական և հասարակական պարզորդ վարչական կառուցվածք ունենալուց: Հայկական գյուղերում այդ ժամանակ բնակվում էին 3394 արական սեռի բնակիչներ, որոնց արամադրության տակ կար 63000 դես. տարածություն: Նրանք, ինչպես և հունական գյուղերը վճարել են պետական ու զեմստվային որոշ հարկեր: Օգտվելով ընդարձակ տարածություններից մեկ դեսյատին հողամասի դիմաց տարեկան մուծել են ընդամենը 5 կոպակ վարձ, ինչպես սահմանված էր կայսերական շնորհագրով: Կատարվող վերափոխումների հետևանքով նրանք այնքան են առանձնացել իրենց քաղաքներից, որ ներքին գործերի զեմստվային բաժինը նպատակահարմար էր գտնում այդ գյուղերում կիրառել կառավարման և հողային հարաբերությունների այն կարգը, որը հաստատված էր գերմանական և բուլղարա-հունական գաղութների համար²⁸:

Հունական և հայկական գյուղերի իրավատեսական դրությունը կարգավորելու նպատակով, ներքին գործերի մինիստրության ցուցումով, Եկատերինոսավի նահանգային վարչությունը և նովոռոսիայի ու Բևսարաբիայի նախկին գեներալ նահանգապետը անդրադառնում են այդ խնդրին և առաջարկում կատարել հետևյալ վերափոխումները:

1. Հույն և հայ երկրագործներին համարել սեփականատեր գյուղացիներ և նրանց դնել նահանգապետին ու գավառային ենթակայության տակ: Ժամանակավորապես թողնել կայսերական հրովարտակով ժամանակին նրանց վերապահված այն բոլոր արտոնությունները, որոնք փոփոխման չեն ենթակվել հետագայում հրապարակված օրենքներով:

2. 1861 թ. փետրվարի 19-ի ոեֆորմի գյուղացիներին վերաբերող ընդհանուր հրահանգի հիման վրա կազմակերպել գյուղական հասարակություն (համայնք) և վոլոստներ՝ գավառակներ:

3. Ընդհանուր հիմունքներով կատարել գյուղական և վոլոստային պաշտոնյաների ընտրություն:

Երկրամասում տարվող երթեմնի ընդհանուր քաղաքականության հետևանքով երկու ժողովուրդների գանգվածներն էլ ժամանակին գաղթեցվել են Դրիմից և բնակեցվել Ռուսաստանում: Նրանք պետության կողմից ստացել են համանման արտոնություններ, ուստի և կառավարվել են միհանույն եղանակով: Նրանց կյանքում կատարվող պետական միջամտություններն ու փոփոխություններն էլ, բնականարար, իրագործվում էին միամանակ:

²⁸ ЦГИА СССР, ф. 1291, оп. 66, д. 21, ч. II, л. 1—6.

4. գյուղական համայնքի ամբողջ գործակարությունը վարել ուսւերեն լեկվով:

5. а) գյուղացիների համար պահպանել գյուղահարկ վճարելու արտոնությունը մինչև հարկային համակարգի վերափոխումը: Պետական, զեմստվային դրամական և բնատուրքը վճարել ընդհանուր հիմունքներով:

բ) Գյուղացիներից հողահարկ գանձել գյուղյուն ունեցող հիմունքներով՝ մեկ դեսյատին հողի դիմաց 5 կոպեկ: Հետագայում հողահարկի շափր կարելի է փոփոխել:

ց) Համայնական հարկերի հավաքումը որոշել վոլոստային և գյուղական մողովներում: Գյուղացիների կողմից պետական, համայնական և զեմստվային հարկերի հիշտ ու ժամանակին վճարումը կատարել ընդհանուր հրահանգների հիման վրա:

6. Գյուղերի համայնական հացահատիկի պաշարների և կապիտալի տնօրինումը կատարել կայսրության մյուս գյուղերի օրինակով:

7. Հունական և հայկական գյուղական համայնքներում ընդգրկել այն գյուղացիներին, որոնք օգտվում են կայսերական շնորհագրից:

8. Հույն և հայ գյուղացիների հողատարածությունները թողնել անփոփոխ: 1867 թ. մարտի 31-ի օրենքի հիման վրա կատարել այդ հողերը նրանց պատկանելու գրանցումներ՝ տալ սեփականատիրական ակտեր (владениых записей):

9. Հողի սեփականատիրական գրանցումներ տալուց հետո գյուղացիներից հողահարկի փոխարեն պետության օգտին գանձել համանման որակի հողեր ունեցող ուրիշ վայրերի պետական գյուղացիներից գանձվող հարկերի շափով:

10. Սեփականատիրական գրանցումներ ունեցող հույն և հայ գյուղացիների հողատուրքի մեջ փոփոխություններ կատարել: Նրանց նկատմամբ լիովին կիրառել 1871 թ. հուլիսի 4-ի՝ նախկին գաղութների բնակչությանը վերաբերող օրենքը²⁹:

Ներքին գործերի մինիստրությունը համաձայնվում է նահանգային վարչությունների տեսակետին, գտնելով, որ հայկական գյուղերի իրավունքներն անհրաժեշտ է սահմանել 1861 թ. գյուղացիական ոեֆորմի և 1871 թ. հուլիսի 4-ի վերը նշված գաղթավայրերի բնակչությանը վերաբերող օրենքների հիման վրա: Հողային հարցում անհրաժեշտ է գտնվում առաջնորդվել պետական գյուղացիներին վերաբերող 1867 թ. մարտի 31-ի օրենքով:

²⁹ ЦГИА СССР, ф. 1291, оп. 66, д. 21, ч. II, л. 2—9.

Հույն և հայ գյուղացիների վրա նպատակահարմար է համարվում տարածել այն հարկային ու հողային միջոցառումները, որոնք կիրառվում են պետական գյուղացիների և գերմանական ու բուլղարահունական գաղութների նկատմամբ։ Հայկական գյուղերի հասարակական և տնտեսական կյանքը նոր ոկզբունքներով լիովին վերակառուցելն ընդունելի է համարվում, քանի որ նրանք օգտվում են կայսերական շնորհագրից։ Սակայն նկատի է առնվում, որ պետական նոր հրամանով (1874 թ. Հունվարի 1-ի) նրանք չեն ազատվում զինակուլությունից և օթևան հատկացնելուց։ Նրանց արտոնություններից փաստորեն մնում է միայն գըլխահարկից աղատ լինելը։ Դա էլ չէր համապատասխանում ետուեֆորմյան շրջանի պետական միջոցառումներին։ Դրանից բացի, ժամանակին պետական հարկերից նրանք ազատվել են միայն տաս տարով։ Անհրաժեշտ է գտնվում հողահարկը գանձել ոչ թե մեկ դեսյատինի դիմաց 5, այլ 15 կոպեկ, թեպետև նման գանձումը հակասում էր նրանց շնորհված կայսերական հրովարտակին։ Ներքին գործերի մինիստրությունն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ շուրջ հայրուր տարի առաջ տրված կայսերական շնորհագիրը հնացել է և չի համապատասխանում պետական կյանքի ժամանակակից ոգուն։ Այն անհավասար փիճակ է ստեղծում և դժվարին կացության մեջ դնում արտոնություններից չօգտրվող բնակչության մյուս խավերին³⁰։

Այդ ամենի հիման վրա ներքին գործերի մինիստրությունը հունական և հայկական գյուղերի հասարակական կառուցվածքի և տնտեսական կյանքի մասին հանգում է հետևյալ եզրակացությանը։ Գյուղացի հողասեփականատերերին հարկ է մտցնել գյուղական բնակիչների կարգը և ընդհանուր հիմունքներով ենթարկել նահանգային, գավառային և գյուղական հարցերի վերաբերյալ տեղական մարմիններին։ Նրանցում կազմակերպել գյուղական հասարակություն և գավառակներ, որոնց պաշտոնյաները նշանակել ընտրությամբ։ Ամբողջ գործակարությունը կատարել ուստերեն։ Նրանց շազատել զինակուլությունից և պարտավորեցնել վճարելու պետական, հողային ու զեմստվային հարկերը և կատարել համայնական պարտավորությունները։ Տվյալ համայնքին պատկանող հացահատիկի պաշարների և կապիտալի տնօրինումը թողնել նրա իրավասության տակ։

Ներքին գործերի մինիստրությունը սահմանում է վերոհիշյալ գյուղերի հողային իրավունքները, որոնք ընդհանրացված ձևով հանգում են հետևյալին։ Գյուղական համայնքները պահպանում են իրենց հողերն ու

անմշակելի տարածությունները։ Այդ հողատարածությունները տրվում են նրանց՝ հատուկ սեփականատիրական ակտերով։ Գյուղացիները հատուկ ակտերով իրենց հանձնված հողակտորների հետ կարող են վարչվել որպես լիիրավ սեփականատերեր, անգամ կարող են օտարել այն, բայց պահպանելով որոշ կարգ։ Այդ նշանակում է, նախ՝ հողի խնդրով հարկ է դիմել գավառային իշխանությանը, համայնքի կողմից հողահարկի բաշխումը հաստատելու համար։ Դրանից բացի, սեփականության իրավունքով համայնքից հողաբաժին ստացող գյուղացիները երեք տարի իրավունք չունեն այն օտարել՝ տվյալ համայնքին շպատկանող անձնավորությունների։ Երեք տարի անցնելուց հետո նրանք կարող են օտարել իրենց հողակտորները, սակայն պարտավոր են պահպանել հետևյալ պայմանը։ Գյուղական համայնքը կարող է վաճառել համայնական հողերը, միայն քվեարկության իրավունք ունեցող տվյալ հասարակության երկու երրորդի համաձայնությամբ։ Վաճառքը կատարվելու է հատուկ ակտով։ Հողաբաժինը օտարելու դեպքում հողահարկի վճարությունը և օտարելու ժամանակը պետական անհամար գյուղացիներին վերաբերող պետական խորհրդի 1870 թ. նոյեմբերի 23-ի որոշմամբ։ Գյուղացիներին թույլատրվում էր հողաբաժիններին ժառանգաբար տիրելու պարագայում առաջնորդվել իրենց սովորությներով։

Նման որոշ սահմանափակումներով հանդերձ հողակտորներ ունեցող գյուղացիներն օգտվելու են այն բոլոր իրավունքներից, ինչ վերապահված է հողասեփականատեր նախկին պետական գյուղացիներին³¹։

Կայսեր հրամանով կառավարիչ սենատը քննության է առնում և 1875 թ. մարտի 18-ին աննշան փոփոխություններով հաստատում է Եկատերինոսալավի նահանգի հունական և հայկական գյուղերի բնակչության վերաբերյալ ներքին գործերի մինիստրության, վերը շարադրված առաջարկները։ Այդ փոփոխություններից քիչ թե շատ նշանակալիցը վերաբերում էր հողահարկին։ Կառավարիչ սենատը որոշում է մշակելի յուրաքանչյուր գեսայատին հողի դիմաց տարեկան 5 կոպեկ վճարումը և քայլաց տարի թողնել անփոփոխ։ Հետագայում կարելի է այն փոփոխել սակայն միայն օրենսդրական կարգով։ Հանձնարարված է համապատասխան գերատեսչությունների՝ ի կատար ածել այդ որոշումը³²։

³¹ Նույն տնդում, էջ 13—25.

³² ЦГИА СССР, ф. 381, оп. 12, д. 7140, л. 30—33.

Այսպիսով, շուրջ հարյուր տարի կայսերական հրովարտակի հիման վրա, հողային ընդարձակ տարածություններից առանձնաշնորհումներով օգտվող Գոնի հայ գյուղացիությունը 1861 թ. ոեփորմից բխող պետական ձեռնարկումների ժամանակ փաստորեն կայսրության մյուս երկրագործ բնակչությանը, ավելի ճիշտ, պետական գյուղացիությանը համահավասար իրավիճակի մեջ զրվեց: Դրա հետ մեկտեղ հարկ է ավելացնել էական այն հանգամանքը, որ անփոփոխ թողնվեցին գյուղացիների հողաբաժնները, որոնց տիրելու էին լիիրավ սեփականատիրական իրավունքներով և այդ խնդրում առաջնորդվելու ազգային սովորույթներով:

Հատկանշական է մասնավորապես այն հանգամանքը, որ հայ գյուղացիությունը երկրամասի բնակչության հետ այդպես էլ մինչև վերջ գերծ մնաց ճորտությունից:

* * *

Հայկական գյուղերի կյանքում ետոեֆորմյան շրջանում կատարված տեղաշրջերի մասին մեր պատկերացումները լրիվ չեն լինի, եթե, թեկուզ համառոտակի շծանոթանացինք Կուրյաշի Կոստա ավանի, նրա հողատարածությունների հարցի հետ կապված անցքերին:

Հայկական գաղութին հատկացված տարածքում, Ազովի ծովի հյուսիսային առափնյա շրջանում, Սամբեկ գետի երկայնքով հիմնվում է Կուրյաշի Կոստա բնակավայրը: Այնտեղ ղեկաս ԽVIII դարի վերջերին առանձին ձկնորսներ են հեղել, սակայն դրա բնակեցումը փաստորեն սկսվել է 1820 թվականից, երբ տարրեր վայրերից ուսւ բնակիչներ են եկել և այնտեղ զբաղվել ձկնորսությամբ³³: Դրսեկ բնակիչների Սամբեկում հաստատվելը փաստորեն կատարվել է մագիստրատի և հայկական գյուղերի, որոնց պատկանում էին հիշյալ հողատարածությունները, թուլլությամբ: Քանի որ հայ հասարակությունը հատուկ ձկնորսությամբ չէր պարապում, չի արգելում Կուրյաշի Կոստայի բնակեցումը: 1860-ական թվականների սկզբներին ավանի բնակչության թիվը հասնում է 600 շնչի³⁴: Հայ համայնքն, ավելի ճիշտ հայկական գյուղերը ամեն տարի հարկ էին վերցնում նրանցից իրենց պատկանող հողերում բնակվելու և ձկնորսությամբ զբաղվելու համար:

1865 թ. Կուրյաշի Կոստայի բնակիչները պատճառ բռնելով, թե հայերը պահանջում են ավելացնել հարկերը, իսկ շվճարելու պարագայում սպառնում իրենց հեռացնել զբաղեցրած հողերից, հրաժարվում են հարկ վճարել: Նրանք միաժամանակ դիմում են իրավասու վերադաս մար-

միններին և խնդրում առհասարակ ազատել հայերի օգտին հարկ վճարելուց և հայկական գյուղերին պատկանող, սակայն իրենց կողմից օգտագործվող հողատարածությունները տալ Կուրյաշի Կոստայի բնակիչներին:

Անտարակույս նման քայլի դիմելու պատճառը ոչ այնքան հողահարկի բարձրացումն էր, որքան գյուղացիական ուժորմի հետևանքով երկրի ազրարային կյանքում սկսված տեղաշարժերի նպաստավոր պայմաններում իրենց զբաղեցրած հողերին սեփականատիրական իրավունքներով տիրանալու ձգուումը:

Սկզբանական շրջանում տեղական իշխանություններն անհետևանք են թողնում կուրյաշինցիների դիմումը: Մտկայն 1874 թ. Եկատերինուլավի նահանգապետ ի. Դուրնովոն այդ խնդիրը ներկայացնում է ներքին գործերի մինիստրություն: Վերջինս պետական գույքի մինիստրության համաձայնությամբ այդ գործը հանձնում է գյուղական բնակչության աեղաբաշխման գլխավոր կոմիտեին:

Հարցի ուսումնասիրությունից պարզվում է, որ 1870-ական թվականների վերջերին Կուրյաշի Կոստան ուներ հազարից ավելի բնակիչ: Նրանցից 668-ը քաղաքացիներ էին, 337-ը՝ պետական գյուղացիներ և կուլակներ, 20-ը՝ զինվորական, 2-ը ազնվական և 3-ը թուրքահպատակ: Ազանի զբաղեցրած մշակելի և անմշակ բոլոր հողատարածությունները կազմում էին 823 ղենյատին:

Գյուղական բնակչության տեղաբաշխման գլխավոր կոմիտեն առանձնացնում է հետևյալ հիմնական խնդիրը: Հնարավո՞ր է Կուրյաշի Կոստայի բնակիչներին դարձնել իրենց զբաղեցրած հողերի սեփականատեր՝ հայերին վճարելով ետքնման գումարը, և այդ բնակավայրը պաշտոնապես դարձնել առանձին գյուղ կամ վոլոստ³⁵:

Մինչեռ քննարկվում էր վեճեր հարուցող այդ խնդիրը, Եկատերինուլավի նահանգի նոստովի գավառը, որի մեջ էր մտնում Կուրյաշի Կոստան, վարչականորին մտցվում է Դոնի գորքերի մարզի կազմի մեջ: Վարչական նոր բաժանման հետևանքով գործի մեջ է ներքաշվում նաև ուազմական մինիստրությունը: Պետական տարբեր ատյաններում, մինիստրություններում ու գերատեսչություններում խնդրի լուծումը տասնամյակներ շարունակ ձգձգվում է: Այդ ընթացքում իրենց տեսակետը հիմնավորող բնարձակիր-դիմումներ են ներկայացնում մի կողմից հայկական գյուղերի, մյուս կողմից Կուրյաշի Կոստայի բնակիչները: Այդ դիմումներից առավել հստակ են դառնում գործի հանգամանքները և երկու կողմերի ձգտումները:

³³ ԱԳԱՕՐ, Փ. 109, 1866, Ճ. 5 թ, 47, լ. 30—32.

³⁴ ԱԳԻԱ ՀՀՀՊ, Փ. 381, օլ. 21, Ճ. 21996, լ. 71.

Հայկական գյուղերի բնակիչները հայտնում են, որ Կուրյաշի Կոստա բնակավայրի ամբողջ հողատարածությունները սեփականատիրական իրավունքով պատկանում են իրենց: Հետևաբար առանց գյուղական համայնքների համաձայնության հնարավոր չե այդ հողերը վերցնել եւ տալ Կուրյաշի Կոստայի բնակիչներին: Վերջիններս այդ հողերի սոսկ վարձակալողներն են: Իրենց հայտնի է դարձել, որ նախատեսվում է նոր նախիշնանում բնակվող երկրագործների վերչերս հիմնած գյուղի՝ Եկատերինայի հողերից կտրել 670 դես., իսկ հինգ հայկական գյուղերից՝ 173 դես. և հատկացնել Կուրյաշի Կոստային: Դա կլիներ միանգամայն ապօրինի քայլ:

Հայկական գյուղական հասարակության ներկայացուցիչները շեշտում են նաև պետական որոշ դեպարտամենտների այն հետեւթյունը, ըստ որի, իբր Կուրյաշի Կոստան հին բնակավայր է և հիմնվել է XVIII դարի վերջնին, հայկական գաղութի հետ գրեթե միաժամանակ, չի համապատասխանում իրականությանը: Նրա բնակիչների հիմնական մասը եկել է վերջին տասնամյակներում: Միայն շորս ընտանիք է հաստատվել 1820 թվականին, և ոչ մի տնտեսություն՝ այդ թվականից առաջ³⁶:

Միաժամանակ հայ երկրագործներն իրազեկ են պահում, որ Մերձազգովան շրջանի տարածությունը հայկական գաղութի ամենաբերի հողերն են: Դրանից զրկվելով իրենք ոչ միայն մհծ կորուստ են կրում, այլև զրկվում են ծով դորս գալու հնարավորությունից:

Ապա նրանք ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ ճանապարհների և այլ պետքերի համար հայ համայնքից հողեր են վերցվում և դրա հետեւանքով հետզհետե պակասում են նրա հողատարածությունները: Դիմումում բերվում է Զալթը գյուղի օրինակը, որի բնակչության յուրաքանչյուր շնչին սկզբնապես հատկացված 15 դեսյատինն աստիճանաբար պակասելով իշել է 8 դեսյատինի: Հայկական գյուղերի ներկայացուցիչները վերջում խնդրում են թուլյատրել դատական օրդանների միջոցով ետ ուղարկել իրենց հին բնակավայրերը Կուրյաշի Կոստա-

36 Արիվում պահպանվում է Կուրյաշի Կոստայի բնակիչների նախկին բնակավայրից նրանց վերաբնակվելու ժամանակի մասին ստուգ տեղեկություններ պարունակող ցուցակը: Այդ ցուցակից երեսում է, որ նրա բնակիչների 271 ընտանիքից 63-ը այնտեղ հաստատվել ետու ու տնամերձ են ունեցել 1820—50-ական թվականներից, իսկ մասց 208 ընտանիքները բնակություն են հաստատել 1860 թվականից հետո: Կուրյաշի Կոստայի բնակիչները, որոնց թիվը 1880-ական թվականներին հասնում էր 1677-ի, եկել էին գերազանցապես հազարոք քաղաքից ու նրա օկրուգից, իսկ շնչին մասը՝ թուլյագից, Պոլտավայից, Խարկովից և այլ նահանգներից (տե՛ս ЦГИА СССР, ֆ. 381, օլ. 21, ձ. 21996, լ. 108116).

ցի այն բնակիչներին, որոնք նոր են հաստատվել, իսկ մյուսներից գանձել դրամական հարկ՝ տնամերձ հողամասերի համար: Ինչպես նաև, տեղում Կուրյաշի Կոստայի հողատարածությունների հարցի քննարկմանը մասնակից դարձնել վեց հայկական գյուղերի լիազորված ներկայացուցիչներին³⁷:

Կուրյաշի Կոստայի բնակիչները ներկայացրած խնդրագրում իրենց բնակավայրի վաղեմությունը հիմնավորում են նրանով, որ հիշեցնում են, թե դեռևս XVIII դարի վերջերին կուրյաշինցիների գրադեցրած վայրում եղել են ձենորսներ և անգամ ձենարդյումաբերական մանր ձեռնարկություններ: Կառավարության կողմից իրենց հատկացվելիք 432 դես. մշակելի և 411 անմշակ, ընդամենը 843 դես. հողատարածությունը մտցված չէ 1880 թ. սեփականատիրական իրավունքով հայերին տրված հողերի գրանցման ակտերի մեջ: Նրանք միաժամանակ շեշտում էին հայերին հատկացված հողատարածությունները շատ ընդարձակ ու բերրի լինելու հանգամանքը: Հայ երկրագործների յուրաքանչյուր շնչին, նշում էին խնդրագրում, ընկնում է 40 դես. ավելի հողամաս: Ընդարձակ այդ տարածությունները հայերը սեփական ուժերով շեն կարողանում մշակել և տալիս են վարձակալության: Նոր կազմակերպված Եկատերինա գյուղին հատկացված է 6000 դ. տարածություն: Գյուղի բնակիչների քանակը հասնում է ընդամենը 136 շնչի, որոնցից միայն 15 ընտանիք է բնակվում տեղում: Նրա բնակչության մհծ մասը ապրում է տարբեր տեղերում և զբաղվում ոչ թե երկրագործությամբ, այլ առևտորով: Հետևաբար ձիշտ ու տրամաբանական կիմներ նորաստեղծ գյուղին պատկանող հողատարածություններից կտրել և հանձնել Կուրյաշի Կոստային:

Համանման փաստարկներից հետո կուրյաշինցիները խնդրում են արագացնել արդեն քսանհինգ տարուց ավելի գգգվող իրենց բնակավայրի ու նրա հողային հարցի լուծումը: Միաժամանակ նրանք ավելացնում են՝ բավարարել 843 դ. հողատարածություն հատկացներու իրենց խնդրանքը կամ մինչև խնդրի վերջնական լուծումը կալանք դնել այդ հողերի վրա: Այլապես հայկական գյուղերը նեղում են իրենց, նշված հողերի օգտագործման համար մեծաքանակ վարձ պահանջելով³⁸:

Ներքին գործերի, ֆինանսների, պետական գույքի, ռազմական մինիստրությունների և տարբեր գերատեսչությունների ոլորտում խնդրի արձարծումը աստիճանաբար հասունացնում է համընդհանուր այն տեսակետը, ըստ որի նպատական համար է համարվում Կուրյաշի Կոստային:

37 Նույն տեղում, թ. 84—86.

38 Նույն տեղում, թ. 86—88.

կազմակերպել գյուղական հասարակություն կամ վոլոստ³⁹, Դրա հետ մեկտեղ առաջ են գալիս նաև մի շարք հարակից հարցեր:

Ֆրնանսների մինիստրությունը, օրինակ, գտնում էր, որ հայկական գյուղերից հողամասեր կորելը կարող է բացասաբար անդրադառնալ նրանց հողօգտագործման վրա: Մի հանգամանք, որն ամենակի նկատի չի առնվազ: Հայերին, պետական գյուղացիների նման, անհրաժեշտ է վճարել միայն հողի ետքնման արժեքը և ոչ թե նրա ամբողջ գինը, որը կլիներ քանակ անգամ ավել: Վճարվելիք գումարի մեկ վեցերորդ մասը պետք է գանձվի պետության օգտին, իսկ մնացած գումարը՝ հայկական գյուղերի: Միաժամանակ մինիստրությունը նկատում է, որ Ազգի ծովում ձկան պաշարները պահպանելու նպատակով նրա հյուսիսային մասի ձկնառատ հրվանդաններում տակավին 1835 թ. արգելված է ձկնորսությունը: Կուրյաշի կոստայի բնակիչները խախտում են այդ օրենքը և ապօրինաբար ձկնորսությամբ զբաղվում արգելված վայրերում⁴⁰:

Դոնի գորքի մարզի հրամանատարությունը, ընդհակառակը, նշելով, որ կուրյաշինցիները ձկնորսությամբ են պարապում նաև անարգել վայրերում, այն տեսակիտն է պաշտպանում, որ այդ դրազմունքն անհրաժեշտ ու օգտակար է նաև երկրամասի համար, ուստի և անհրաժեշտ է գտնում խրախուսել նրանց և ոչ թե զրկել այդ իրավունքից⁴¹:

Ի վերջո, 1900 թ. ուսկանական խորհուրդը ներկայացնում է հետևյալ վերջնական առաջարկը:

ա) գյուղացիության մասին ընդհանուր հրահանգների հիման վրա Ռուսության գավառի կուրյաշի կոստա բնակավայրից կազմակերպել գյուղացիական վոլոստ:

բ) կազմակերպվող վոլոստում ներգրավել կուրյաշի կոստայի տարբեր շերտերի բնակիչներին, բացի ազնվականներից: Նրանցից պահանջել ներկայացնել համապատասխան տեղեկանքներ իրենց նախկին բնակավայրի հասարակությունից դուրս գալու և տեղում տուն ու տնամերձ ունենալու կամ տաս տարուց ավել բնտկվելու մասին:

գ) Կուրյաշի կոստային հատկացնել 843 դես. տարածություն, նրա մեջ մտցնելով նաև 170 դես. տնամերձ հողակտորները: Դրա դիմաց նրանք հայկական գյուղերին, որոնք ունեցել են այդ հողատարածություններից ցմահ օգտվելու իրավունք, վճարելու են ետքնման արժեքը: Արժեքի մեկ վեցերորդ մասը պետք է վճարել պետությանը, որպես հողի

սեփականատիրոջ: Քանի որ տնամերձ հողամասերի վրա հայերի իրավունքի հարցը պարզված չէ, նրա ետքնման վճարը մուծել պետական գանձարան:

դ) Հիշյալ հողատարածությունները տալ Կուրյաշի կոստայի այն բնակիչների հասարակական օգտագործմանը, որոնք կընդգրկվեն նոր կազմակերպվող գյուղական հասարակության մեջ: Այդ հողերը համարել գյուղական համայնքի սեփականությունը⁴²:

Պետական խորհուրդը, հավանաբար, առանց փոփոխության հաստատում է այդ որոշումը: Այսպիսով, 1861 թ. գյուղական ոեֆորմի հիման վրա վերջնականապես կարգավորվում է հայկական գյուղերի իրավիճակն ու նրանց պատկանող հողատարածությունների խնդիրը:

3. ԳԱՂՈՒԹԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

1860-ական թվականներին և նրանից հետո, ինչպես նկատեցինք վերը շարադրվածից, վերացվեցին Դոնի հայկական գաղութի առանձնաշնորհումները: Նոր նախիջևանը, փաստորեն, իրավապես հավասարեցվեց կայսրության մյուս քաղաքներին և սկսեց առաջնորդվել երկրում գործող համընդհանուր օրենքներով: Այդ ամենով հանդերձ, շուրջ մեկ դար հարատևեած Դոնի հայկական գաղութի ինքնավարությունն այնքան էր արմատավորվել կյանքում և ավանդական ուժ ձեռք բերել, որ չէր կարող միանգամից և ամբողջովին դադարեցնել իր գոյությունը: Ճիշտ է, վերացվեց մագիստրատի ոստիկանական և դատական իրավասությունը, սակայն վերափոխված ձևով պահպանվեց նրա տնտեսական մասը:

Քագաքների զարգացումը նույսաստանի կապիտալիստական առաջընթացի պահանջներին համապատասխան դարձնելու նպատակով, գյուղացիական ոեֆորմից անմիջապես հետո, 1862 թ. նախապատրաստվում էին ոեֆորմներ, որոնց մշակման ավարտը երկարածվեց և միայն 1870 թ. հունիսի 16-ին օրենքի ուժ ստացավ:

Քաղաքային նոր ոեֆորմով քաղաքների հասարակական կառավարման նախկին դասային կարգը փոխվում է գույքային (ցենզային) սկզբունքով: Քաղաքների, գերազանցաւապես տնտեսական կառավարման համար ստեղծվում է ինքնավար մարմին՝ դումա կամ խորհրդարան, որն ընտրում է 2—3 հոգուց բաղկացած գործադիր օրգան՝ քաղաքային վարչություն: Քաղաքային վարչությունը ղեկավարում է քաղաքագլուխը, որը միաժամանակ հանդիսանում էր և գումայի նախագահը:

42 Նույն տեղում, թ. 92, 106—107:

39 ЦГИА СССР, ф. 1181, оп. 1, д. 51, 1877, л. 1—5, ф. 381, оп. 21, д. 21996, л. 1—21.

40 ЦГИА СССР, ф. 381, оп. 21, д. 21991, л. 79—80.

41 Առաջ տեղում, թ. 80—81:

Դումայի անդամները ընտրվում են շորս տարի ժամանակով՝ քաղաքային գանձարանը մուծած հարկերի քանակի սկզբունքով բաժանված քաղաքի երեք հասարակաշերտերի կողմից։ Յուրաքանչյուր կարգի մեջ մտնող քաղաքի բնակիչները վճարում էին քաղաքի հարկերի մեկ երրորդը և ընտրում նույն քանակի դումայի անդամներ։ Քանի որ մուծվող հարկերի չափը կախված էր անշարժ գույքից, ուստի և ընտրական նոր կարգով քաղաքային դումայում ավելի շատ ձայներ էին ստանում և ղեկավար դիրք ձեռք բերում առաջին հերթին կարողություն ունեցող առևտրարդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչները։ Քաղաքի մի խումբ մեծահարուստներ դումայում այնքան ձայնավորներ էին ընտրում, որքան միշին կամ փոքր կարողություն ունեցող բնակչության ստվար խավ կազմող մյուս հասարակաշերտերը։

Քաղաքային ժողովներում ընտրվում էր խորհրդարանի կազմը, որը և ներկայացնում է քաղաքի ամբողջ հասարակությունը։ Խորհրդարանն էր նշանակում քաղաքի պաշտոնյաներին, սահմանում դրա համար գանձվող հարկերն ու տուրքերը, հետևում եկամուտներին ու ծախսերին և պաղվում քաղաքային տնտեսության հիտ կապված բազում այլ խընդիրներով։

Նոր նախիջևանի դումայի կազմը հասնում էր մինչև վաթսունի։ Քաղաքային խորհրդարանի անդամներն անվանվում էին նաև ձայնավորներ։ Հայկական գաղութում, ի տարբերություն կայսրության խոշոր քաղաքների, չկային կամ գրեթե չկային մեծագումար հարստության տեր արդյունաբերական-ֆինանսական խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներ։ Այստեղ քաղաքային խորհրդարանում ընտրվում էին գերազանցապես միշին ու մասամբ մանր բուրժուական դասը ներկայացնող ձայնավորներ։ 1913 թ. օրինակ, նոր նախիջևանի խորհրդարանում ընտրվում են 30 վաճառական, 6 արդյունաբերող, 6 դատավոր և 18 այլեալ զբաղմունքի տեր մարդիկ ու բուրժուական մտավորականության ներկայացուցիչներ⁴³։

⁴³ «Как выбирали раньше». (О выборах в Ростовскую и Нахичеванскую городские думы). Ростов н/Д, 1947, стр. 24. Նոր նախիջևանի դումայում սկզբնապես ընտրվում են միայն հայազգի ձայնավորներ։ Հետագայում, XIX դ. վերջերից ուստի ազգարնակության, այդ թվում և առևտրարդյունաբերական դասերին պատկանող բնակիչների ստվարանալուն զուգահեռ նրանք խորհրդարանում սկսում են ավելի ու ավելի շատ աեղեր զբաղեցնել։ Այսուհեներ գաղութի հայազգի ներկայացուցիչները խորհրդարանում միշտ էլ ունեն լայների որոշակի գերակռություն։

Ռուսովի քաղաքային դումայի նիստերի արձանագրություններից երևում է, որ այնտեղ էլ, թեպես ավելի փոքր թվով, ընտրվում էին հայազգի գործիքները։ 1893—1910 թթ. տարբեր տարիների նորհրդի անդամ են եղել Հ. Թուզնարյանը, Գ. Բախչիսարյացը, Մ. Թալարանյանը, Ի. Թելեն-Շահնեցը և ուրիշներ։

1870 թ. քաղաքային ոհֆորմներով կյանքի կոչված դուման գալիս է փոխարինելու տակավին 1785 թ. սկզբնավորված և Դոնի հայկական գաղութում ձևականութեան իր գոյությունը պահպանող 24 խնամակալների խորհրդարանին։ Խոկ քաղաքավայի կողմից գիսավորվող քաղաքային գաղությունը շարունակում, ավելի ճիշտ, փորձում է կատարել հայկական մագիստրատի և նրա նախագահի կամ քաղաքավայի իրավունքներով։ Ուրիշ խոսքով հայերը քաղաքային նոր ինքնավարությանը, դումային նայում էին կամ, համենայն գեպս, ջանում էին նրա մեջ տեսնել գաղութի ներքին ինքնավարությունը մարմնավորող նախակին հաստատությունը՝ հայկական մագիստրատին։ Հարկավ, նոր ունֆորմներով քաղաքային խորհրդարանի և նրա կողմից ընտրված գործադիր մարմնի՝ քաղաքային վարչության և քաղաքավայի իրավունքները սահմանափակվում էր քաղաքի շրջանակներում։ Այսուհեները, առաջին տասնամյակներում միմիայն տեղի հայերից, իսկ հետագայում էլ նրանց բացարձակ գերակռությամբ գործող խորհրդարանը և քաղաքագլուխը զբաղվում էր նաև գաղութի համար հասարակական, մշակութային ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրներով։ Դրանով իսկ նրանք ինչ որ շափով իրականացնում էին հայկական գաղութի ներքին ինքնավարությունը։

Դրանից բացի փոփոխված պայմանների թելադրանքով, շուտով նախիջևանում հիմնադրվում են նաև ազգային-բարեգործական այնպիսի հաստատություններ, որոնք կոչված էին վարելու Դոնի հայ զանգվածի գործերը։ և որոնք նոր իրավիճակում փաստորեն, նույնպես փոխարինում էին գաղութի ինքնավարությունն իրականացնող նախակին մարմիններին։

1860 թ. հիմնվում են նոր նախիջևանի Հայոց բարեգործական, իսկ 1868-ին՝ Մարդասիրական ընկերությունները։

Դոնի հայ համայնքը, ինչպես հայտնի է, ուներ մի շարք կտակավանդ գումարներ, որոնց մեջ կարևոր էր հատկապես հնդկահայ հարուստ Մասեհ Բաքաչանյանի կտակը։ Նախկինում կտակների գործը տնօրինում էր հայկական մագիստրատը, իսկ նրա վերացումից հետո չկար այդ խնդրով զբաղվող որևէ հաստատություն։ Դոնի հայության համար էական նշանակություն ունեցող ու հրատապ դարձած այդ հարցի բազմաթիվ արծարծումներից հետո, ի վերջո 1889 թ. հիմնվում է սնոր նախիջևանի Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձությունը։ Հոգաբարձությունը, ի թիվս այլ գործերի, իր ձեռքն է վերցնում նաև զուտ ազգային կտակների տնօրինությունը։ Ստեղծվում են նաև Դոնի հայ զանգվածի տարբեր խնդիրներով զբաղվող ազգային բնույթի տեղական այլ հաստատություններ։

1880-ական թվականներին Հարավային Ռուսաստանում կանարգում են նաև վարչական կարգի վերափոխություններ: 1887 թ. Եկատերինոսավի նահանգի Տագանրոդի քաղաքապետությունը, որի կազմում էր նաև Դոնի Հայկական գաղութը կամ Նոր Նախիջևանի օկրուգը և Ռուսության գավառը, միացվում են Դոնի գորքի մարզին (օբլաստ ՅՈՒՆԻԿՈԳ, այսուհետև՝ Դոնի մարզ): Վերջինիս կազմում Ռուսության և Նախիջևան քաղաքները մտնում են Ռուսաստեղծ օկրուգի մեջ: Այդ քաղաքների նախկին կարգն ու հասարակական կազմակերպությունները պահպանվում են անփոփոխ, միայն թե նրանք անցնում են ուղարկան մինիստրության իրավասության տակ, և ուժեղացվում է նրանց ոստիկանական մասը:

Վարչական այդ փոփոխությունը էական նշանակություն ունեցավ Դոնի Հայկական զանգվածի համար: Դրանով վերջնականապես լուծվեց 1860—1870-ական թվականներին ուժորմների իրականացման ժամանակ բազմից արծարծվող զեմստվոների խնդիրը:

1864 թ. սկսած ակտիվորեն քննարկվում էր Հայկական գաղութում տեղական ինքնավար նոր մարմիններ՝ զեմստվոներ ստեղծելու հարցը: Վերադաս իշխանություններում նկատի առնելով առևտրի ասպարեզում նոր նախիջևանի դերը, ինչպես նաև քաղաքի անշարժ գույքի արժեքը, բացառության կարգով թույլատրվում է առանց գավառի, ուղղակի մասնակցել զեմստվոների քաղաքային ընտրական համագումարներին: Բնակչության թվի և ունեցվածքի քանակի համապատասխան նախիջեվանի համար նախատեսվում է յոթ գավառային և մեկ նահանգային «ձայնավորների» ընտրություններ:

Ինչպես Հայտնի է, զեմստվոների ընտրական կարգի հիմքում ընկած էր գույքային սկզբունքը: Ընտրողները բաժանվում էին երեք կարգի՝ գավառային հողատերերի, քաղաքային ընտրողների և գյուղական համայնքների կողմից ընտրվածների:

Առաջին կարգում ընտրություններին մասնակցելու իրավունքից օգտվում էր 200 դես. ոչ պակաս տարածություն կամ 15 հազար ո. գումարից ավել այլ անշարժ գույք ունեցողները, ինչպես նաև այն անձնավորությունները, որոնց տարեկան եկամուտն անցնում էր 6 հազար ոություց: Քաղաքային երկրորդ կարգի մեջ մտնում էին վաճառականները, ձեռնարկատերերը, որոնց տարեկան եկամուտները հավասար էին առաջին կարգի ընտրողների ունեցվածքին, ինչպես նաև 500-ից 3 հազար ո. անշարժ կայք ունեցողները: Երրորդ կարգի ընտրություններն աստիճա-

նական էին: Գյուղական համայնքներն ընտրում էին վոլոստային ժողովների իրենց ներկայացուցիչներին, որոնք հավաքվում և իրենց հերթին ընտրում էին գավառային զեմստվային ժողովների ժայնավորներին⁴⁵:

Հայկական գաղութի բնակչությունն իր եկամուտների և ունեցվածքի աստիճանով և դասային կազմով զեմստվոների ընտրությունների երեք կարգին էլ կարող էր մասնակցել: Ե՛վ քաղաքի, և Հայկական գյուղերի բնակչությունները զեմստվոներ հիմնելու ցանկություն էին հայտնում: 1869 թ. Նոր Նախիջևանի քաղաքագլուխը դիմում է վերադաս ատյաններ, քաղաքի բնակչության անունից խնդրում, և ապա՝ հիմնավորում զեմստվոներ հիմնելու անհրաժեշտությունը⁴⁶: Գյուղական համայնքները, սակայն, ցանկանում էին մասնակցել ոչ թե նախիջևանի, այլ Ռուսության գավառի վլուստային ընտրություններին:

1866 թ. թեպետև Եկատերինոսավի նահանգում մտցեցին զեմստվոներ, սակայն դրանք շտարածվեցին Հայկական գաղութի վրա: Այս շրջանում առաջնահերթ ու էական էին համարվում և կառավարական ոլորտներում ակտիվորեն քննարկվում գաղութի ինքնավարությունը վերացնելու և նրա իրավիճակը, մասնավորապես Հայկական գյուղերի հոգատարածությունների խնդիրը կարգավորելու հարցերը:

Պետական մարմինները, նկատի առնելով կաղակներով բնակեցված Դոնի գորքերի մարզի հատուկ վիճակը, նպատակահարմար շեն գտնում և 1882 թ. արգելում են այնտեղ զեմստվոներ հիմնել⁴⁷:

Իր հերթին Հայկական գաղութը վարչականորեն մտնելով Դոնի գորքերի մարզի կազմի մեջ, չունեցավ իր զեմստվոն: Ցարիզմը այլազդի բնակչություն ունեցող վայրերում ընդհանրապես զգուշանում էր զեմստվային հիմնարկներ հիմնել: Ցարական կառավարությանը թվում էր, թե զեմստվոները կարող են սեպարատիստական հակումներ առաջացնել:

Զեմստվային ուժորմն ամբողջ երկրում կատարվող մյուս վերակառուցումների հետ կյանքի էր կոչված միապետական կարգերը երկրի կապիտալիստական զարգացման շահերին համապատասխան դարձնելու անհրաժեշտությամբ: Դոնի մարզի, այդ թվում և Հայկական գաղութի, զարգացումն ընթանում էր կապիտալիստական ուղղով և առանց զեմստվոների էլ համահնչուն էր երկրի կյանքում կատարվող ընդհանուր տեղաշարժերին ու առաջադիմությանը:

Հայտնի է, որ զեմստվոների գործունեությունը սահմանափակվում էր բացառապես տեղական, և այն էլ տնտեսական նշանակության խըն-

45. Н. М. Пирумова. Земское либеральное движение, социальные корни и эволюция до начала XX века, М., 1977, стр. 28—29.

46. ՀԿՊ(Ա), գ. 415, գ. 271, թ. 1:

47. Н. М. Пирумова. Земское либеральное движение, 1977, стр. 29.

գիրներով։ Ճանապարհները բարեկարգելու, դպրոցներ, հիվանդանոցներ կառուցելու և պահպանելու, տեղական արտադրությունն ու առևտուրը հովանավորելու համանման այլ հարցերով էին զբաղվում տեղական ինքնավարության այդ հաստատությունները։

Տնտեսական ներքին գործունեության շատ ասպարեզներում զեմստվոներ շմտցնելով հայկական գաղութը փաստորեն մնաց նախկին վիճակում։ Հայկական գյուղերում անգամ պահպանվեց տեղական կառավարման հին ձևը, որն իրականացնում էր գյուղի ավագը կամ գյուղապետը։ Հետևաբար շարունակվեց գյուտենել նաև գյուղերի նախիջևանի հետ կապված մնալու և նրա հետ էթինիկատնտեսական մի ամբողջական միավոր կազմելու ավանդական վիճակը։ Այս հանգամանքը մեծապես ուժ էր տալիս գաղութի հավաքական գոյությանը, դառնում նրա հետադարյաց տեսական նշանակալից գրավականը, թեպետև պաշտոնապես վերացվել էր հայ համայնքի ինքնավարությունը։

Այս ամենով հանդերձ ետոքֆորմյան վերակառուցումներին հաջորդող կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, առևտրատնտեսական և հասարակական-մշակութային կյանքի աշխուժացումն իրենց աղքեցությունն են ունենում նաև հայկական գաղութի վրա։ Երապատի նկատմամբ հայկական գաղութի մեկուսի կյանքի առանձնահատկությունները հետզհետե նվազում են, հայկական զանգվածն սկսում է առավել ակտիվ ներքաշվել համառուսական տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի ոլորտը։

Տնտեսական, հասարակական կյանքի համընդհանուր աշխատացման պայմաններում նոր նախիջևանի (ինչպես և հարևան քաղաքների) առևտրարդյունաբերական շերտերն ու մտավորականության ներկայացուցիչները լայն շափերով շփվում են զարգացում ապրող Պետերբուրգի, Մոսկվայի, Ռուսաստանի մյուս խոշոր քաղաքների ինչպես նաև, Եվրոպայի նշանավոր քաղաքների ու առևտրական կենտրոնների հետ։ Մրանք ականատես էին դառնում, քաղաքաշինության և ապրելակերպի առաջարկեմ ձևերին ու հաճախ ջանում ընդօրինակել, հնարավորության առհմաններում այդ ամենն արմատավորել հայրենի բնակավայրերում, քաղաքներում։

ա. Եկամուտներն ու ծախսերը—Քաղաքի և գյուղերի նոր ժամանակների պահանջներին համընթաց ընդարձակումն ու բարեկարգումը, դրա հետ կապված քաղաքային տնտեսության առաջադիմությունն ուղղակիութեն պայմանավորված էին որոշակի ծախսերի, հետևաբար և այդ ծախսերը ծածկող եկամուտների հետ։ Քաղաքի տնտեսական կյանքը բազմածյուղ ու բազմերանգ դառնալով, համապատասխանաբար վերափոխվում, աճում են եկամուտները, ինչպես նաև ավելանում ծախսերը։

Հասարակական միջոցները նախկինի նման գոյանում էին հիմնականում քաղաքի եկամուտներից, մասամբ նաև բնակչության վրա դրվող լրացուցիչ հարկերից։ Առաջվա նման նոր նախիջևանի եկամուտները ստացվում էին քաղաքապատկան ունեցվածքից՝ հողատարածություններից, շուկաներից, տրանսպորտից, մասնավոր ձեռնարկություններից, աճուրդային վաճառքից, ինչպես նաև օժանդակ ու պատահական գանգան այլ աղբյուրներից։

Քաղաքի գանձարանը նախկինի նման հարստանում էր առաջին հերթին նրան պատկանող հողատարածություններից։ Նոր նախիջևանին պատկանող 20 հազար դեսյատին հողերի մեծագույն մասը տրվում էր վարձով։ Օրավոր մեծանում էր վարձակալողների թիվը, ավելանում հողօգագործման եղանակները։ Քաղաքապատկան հողերը վարձակալվում էին հացահատիկ մշակելու, խոտհարքի, արոտավայրի, արդյունաբերական և այլ տիպի ձեռնարկություն հաստատելու, պահպ հանելու, հացահատիկի, անտառանյութի և այլ ապրանքների պահեստներ, հողմաղացներ, իշեանատներ, հյուրանոցներ հիմնելու համար։ Զգալի գումար էր գանձվում տեղի և դրսեկ վաճառականներից, կրպակներից, կշեռքներից, հյուրանոցներից, Դոնի լողացող կամուրջից օգտվելուց, ինչպես նաև քաղաքի եկամուտների մեջ անշան տոկոս կազմող տուգանքներից և պատահական այլ աղբյուրներից։

Քաղաքային տնտեսության այս ճյուղի մասին գաղափար կազմելու նպատակով բերենք մեկ տարվա, 1870 թվականի նոր նախիջևանի եկամուտների գոյացման հոդվածների ծավալուն ցուցակը⁴⁸։ Դա միաժամանակ հնարավորություն կընձեռնի պարզորդ պատկերացում կազմելու քաղաքի անշարժ ունեցվածքի, առևտրարդյունաբերական ձեռնարկությունների, արհեստավորական գործատների, հասարակական հաստատությունների մասին։

1. Քաղաքապատկան հողատարածություններից

Հացահատիկ մշակելու վարելահողերից
խոտհարքներից

արոտավայրերից

բրդալվաց ձեռնարկություններ հիմնելու համար

անտառանյութի և հարակից նյութերի պահեստավորման

համար

2059 ռուբլի,

2259 ռ.

1668 ռ.

1696 ռ.

6840 ռ.

48 ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 1039, թ. 3-11.

Հացահատիկի 14 պահեստների համար տրված տարածու-	
թյունից	597 ռ.
բարձանքից	444 ռ.
ավազահնքից	152 ռ.
տորֆ, ձյութ վաճառելու համար հատկացված հողաբաժնից	682 ռ.
աղյուսի և կղմինդրի գործարանների գրաղեցրած տարա-	
ծովիցունից	109 ռ.
Դոնի աջափնյա նավակայանի տարածքի համար	154 ռ.
շուկայում տարատեսակ կրպակների գրաղեցրած տեղի	
համար	1272 ռ.
առարքեր ապրանքների պահեստավորման համար տրված	
հողամասից	146 ռ.

2. Քաղաքի այլ անշարժ ունեցվածքից,
առետրաարտադրական կետերից

Զենորսությունից	323 ռուբլի
Դոնի լողացող կամուրջից օգտվելու համար	2417 ռ.
29 կրպակներից	1587 ռ.
15 դարբնոցներից	50 ռ.
քաղաքի հասարակական շենքերում եղած 5 պահեստներից	415 ռ.
Հյուրանոցներից	735 ռ.
ծխախոտի և մսի կրպակներից	381 ռ.
գինու վաճառքից	301 ռ.
շուկայի կշեռքներից	518 ռ.
տեղի 1-ին և 2-րդ կարգի վաճառականներից	3192 ռ.
Նախիչևանում առևտուր անող դրսի վաճառականներից	135 ռ.
Տարպահալ գործարաններից	676 ռ.
տարքեր պայմանագրերից գանձվող անողակի հարկերից	2609 ռ.
Նախիչևանի 2-րդ կարգի իգական ուսումնարանից	485 ռ.

Նշված եկամուտներից զատ քաղաքային գանձարկը 1870 թ. որոշ գումար է մուծվում նաև չնախատեսված աղբյուրներից: Պատահաբար միս, Հաց, պատրաստի ուտելիթ, զանազան մանր ապրանքներ վաճառելու համար հատկացված տարածքից և այլն: Քաղաքի տարեկան ընդհանուր եկամուտը կազմում էր 34047 ռուբլի⁴⁹:

49 Նույն տեղում, թ. 11—12:

Քաղաքի եկամուտներն աճելու, նրա աղբյուրները բազմանալու, գանձարկը հարստանալու մշտապես նկատվող աճը ակնառու կդառնա, եթե համեմատենք, ասենք, երեք տասնամյակ առաջվա ցուցանիշների հետ: 1840 թ. նոր Նախիչևանի եկամուտները գոյացել են քաղաքին պատկանող խոտհարքներից, մի քանի խանութներից ու կրպակներից, կշեռքներից, գետափնյա բրդալվաց ձեռնարկություններից, Դոնի կամուրջից օգտվելու համար գանձվող հարկերից: Տարվա ամբողջ եկամուտը կազմել է ընդամենը 4228 ռուբլի⁵⁰: Ինչպես դժվար չէ նկատել երեսուն տարվա ընթացքում եկամուտներն աճում են ավելի քան ութ անգամ:

Քաղաքի հասարակական պետքերի համար կատարվող գանձումների հետևողական աճը բացատրվում է մի կողմից տնտեսական կյանքի զարգացման հետևանքով եկամտի աղբյուրներն անընդմեջ ավելանալով, մյուս կողմից հարկվող գումարի աճով: Այսպես, օրինակ, եթե 1840 թ. քաղաքապատկան հողերը վարձով տրվում էին միայն խոտհարքների, բրդալվաց ձեռնարկությունների համար, ապա վերը բերված ցուցակից երևում է, թե երեսուն տարի անց որքանով էր աճել մերձքաղաքային ու գետափնյա հողերից օգտվողների քանակը, և թե որքան բազմապիսի նապատակներով էին վարձակալվում այդ տարածությունները: Մյուս կողմից, եթե նախկինում Դոնի շարժական կամրջից օգտվելու վարձը կազմում էր ընդամենը 831 ռուբլի, ապա 1870 թ. նրանից օգտվողների քանակը աճելու, թերևս նաև վարձը բարձրանալու հետևանքով այդ գումարը հասնում է 2417 ռուբլու:

Հետագա տասնամյակներում տնտեսական կյանքի զարգացման, նրա խորացման, ու մասնագիտացման և եկամտի նորանոր աղբյուրներ երեսն գալու հետևանքով մշտապես շարունակվում է քաղաքի եկամուտների հետևողական աճը: Բավական է նշել, որ 1880 թ. միայն արտասահման առաքվող ապրանքների յուրաքանչյուր փթից կես կոպեկ մաքս գանձելու շնորհիվ քաղաքը ստանում է 82002 ռ. եկամուտ: Հաջորդ տարին այդ գումարը հասնում է 86862 ռուբլու⁵¹: 1893 թ. ձեկնորսության իրավունք ստանալու համար միայն «նորեկ եղբայրներ» ընկերությունը վճարում է 1150 ռուբլի: Զգալի եկամուտ է ստացվում քաղաքի առետրաարդյունաբերական ինչպես և կուլտուր-լուսավորական, հասարակական հաստատություններից, այդ թվում գրադարանից, ակումբից և այլն⁵²:

50 Նույն տեղում, գ. 334, թ. 45—47:

51 ЦГИА СССР, գ. 95, օպ. 8ա, ձ. 10, լ. 40:

52 ԳԱРО, գ. 91, օպ. 1, ձ. 705, լլ. 1—38.

1906 թ. արդին, նախորդ տասնամյակներում գոյություն շռնեցող կամ եկամուտ չբերող միայն քաղաքի ջրատարից ստացվում է 31,750 ռուբլի գումար, իսկ Դոնի կամուրջից ստացվող վարձը հասնում է 6700 ռուբլու⁵³: Այս ամենի շնորհիվ քաղաքի եկամուտները, եթե, ինչպես նկատեցինք, 1870 թ. կլորացրած թվերով կազմում էին 34 հազար, ապա 1880 թ. հասնում էին 92 հազարի, 1893 թվականին՝ 261, իսկ 1910 թվականին՝ 597 հազար ռուբլու⁵⁴: Այսինքն՝ քառասուն տարվա ընթացքում քաղաքի եկամուտներն ավելացել են ավելի քան 17 անգամ:

Քաղաքի եկամուտների ընդհանուր ու հետևողական աճի պայմաններում, առանձին դեպքերում, նախորդ տարիների համեմատությամբ տեղի էր ունենում եկամուտների նվազում: Դա կատարվում է առևտրատնտեսական զանազան պատճառներով, այս կամ այն հոդվածով նախատեսված գումարը չգոյանալու հետևանքով: Քաղաքի տնտեսական կյանքի կարենոր այս բնագավառում երեքմտն տեղի ունեցող տատանումները նկատվում են ինչպես XIX դարի առաջին կեսում, այնպես էլ հետագա տասնամյակներում: Այսպես, օրինակ, 1812 թ. նոր նախիջևանի եկամուտները կազմել են 8424 ռուբլի⁵⁵, իսկ քառորդ դար անց՝ 1838 թ. զրանք ոչ միայն շեն աճել, այլև իշխել են 7880 ռուբլու⁵⁶: 1893 թվին քաղաքի եկամուտները հասել են 261.889 ռուբլու⁵⁷, իսկ երեք տարի անց՝ 1896 թ. իշխել են 243.833 ռուբլու⁵⁸:

Նոր նախիջևանը ինչպես անցյալ դարի 50—60-ական թվականներին, այնպես էլ հետագայում, իր եկամուտների շափով, Ռոստովից և եկատերինոսլավից հետո, շարունակում էր մնալ նահանգի երրորդ խոշոր քաղաքը:

1884 թ., օրինակ, այն ժամանակ, երբ Ռոստով քաղաքի եկամուտները, կլորացրած թվերով, հասնում էին 675 հազարի, Եկատերինոսլավինը՝ 209 հազարի, իսկ Նախիջևանինը՝ 131 հազարի, ապա մյուս քաղաքներից Մարիուպոլի եկամուտները կազմում էին ընդամենը՝ 89, Պավլովսկինը՝ 47, Ալեքսանդրովսկինը՝ 38, Թալիմուտինը՝ 36 և Լուգանսկինը՝ 18 հազար ռուբլի⁵⁹: Բերված թվերից պարզորոշ երեսում է, որ նախիջևանը հասատում կերպով պահպանում էր նահանգի երրորդ քաղաքի

⁵³ «Приазовский край», 1906, № 17.

⁵⁴ Համապատասխանաբար, ЦГИА СССР, ф. 1284, оп. 70, գ. 1881, ձ. 229, լ. 62. ГАРО, ֆ. 91, օպ. 1, ձ. 705, լ. 37—38. ЦГИА СССР, ф. 1284, оп. 194, ձ. 31, լ. 20.

⁵⁵ ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 712, թ. 1—3.

⁵⁶ Նույն տեղում, գ. 767, թ. 14—16.

⁵⁷ ГАРО, ֆ. 91, օպ. 1, ձ. 706, լ. 38.

⁵⁸ Նույն տեղում, թ. 339.

⁵⁹ ЦГИА СССР, ф. 1284, оп. 223, գ. 1885, ձ. 174, լ. 36.

իր դիրքերը: Ռոստով քաղաքը, սակայն, XIX դ. երկրորդ կեսին արագ ու բռնու զարգացմամբ շատ էր առաջադիմել երկրամասի մյուս քաղաքների համեմատությամբ և Օդեսայից հետո դարձել էր հարավային Ռուսաստանի ամենախոշոր քաղաքը:

Հասկանալի է, որ ամենուրեք քաղաքների եկամուտներն ու ծախսերը, ընդհանուր առմամբ, համապատասխանում, ծածկում էին իրար: Յուանձին տարիներին նկատվող ծախսերի ավելացումը մարվում էր հաջորդ տարվա եկամուտների հաշվին: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, եկամուտների և ծախսերի փոխհարաբերությանը հետևելու պարագայում, ի հայտ է գալիս մի յուրահատկություն: Նոր նախիջևանի բյուջեյում, որպես կանոն, եկամուտները մշտապես գերազանցում էին ծախսերին: Նահանգի մյուս քաղաքներից նախիջևանն առանձնանուած էր եկամուտներից տնտեսելու և հաջորդ տարվա բյուջեին որոշ գումար փոխանցելու յուրահատկությամբ: Ռոստով քաղաքի եկամուտները, կլորացրած թվերով, եթե 1862 թ. կազմում էին 45 հազար, իսկ ծախսերը 57 հազար ռուբլի, ապա նախիջևանում այդ հարաբերությունը փոխվում էր հօգուտ եկամուտների, և կազմում, համապատասխանաբար 34 և 30 հազար ռուբլի⁶⁰: Տաս տարի անց՝ 1872 թ. Ռոստովում եկամուտները և ծախսերը հասնում էին 241 և 253 հազար ռուբլու, իսկ նախիջևանուած համապատասխանաբար 34 և 18 հազար ռուբլու⁶¹:

1884 թ., սակայն, Ռոստովը 675 հազար եկամուտների դիմաց ուներ 523 հազար ռուբլու ծախսեր, իսկ նախիջևանում այս անգամ եկամուտները հասնում էին ընդամենը 130, իսկ ծախսերը՝ 134 հազար ռուբլու⁶²: Եկամուտների համեմատ ծախսերի շատ հազվադեպ հանդիպող գերակշռությունը մարվում էր նախորդ տարիների եկամուտներից կուտակված գումարների հաշվին:

1895 թ. նոր նախիջևանում ինչպես եկամուտները, այնպես էլ ծախսերը հասնում էին 249 հազար ռուբլու⁶³: 1910 թ. քաղաքի եկամուտները հասնում էին 597 հազարի, իսկ միայն ծախսերը 568 հազար ռուբլու⁶⁴:

Եկամուտները ծախսերից մշտապես բարձր լինելու և քաղաքային բյուջեում խնայված գումար ունենալու հայկական զաղութիւնը բնորոշ առանձնահատկությունն ուներ իր հիմքերը: Նոր նախիջևանուած կուտակվությունների համարական ու հասարակական բնույթի գուտ գաղութի ներքին կյան-

⁶⁰ ЦГИА СССР, ф. 1281, сп. 6, գ. 1863, ձ. 63, լ. 68.

⁶¹ Նույն տեղում, գ. 69, թ. 1873, գ. 186, թ. 50:

⁶² Նույն տեղում, գ. 223, թ. 1885, գ. 174, թ. 36:

⁶³ ГАРО, ֆ. 91, օպ. 1, ձ. 705, լ. 250, 298.

⁶⁴ ЦГИА СССР, ф. 1284, օպ. 194, ձ. 31, լ. 3.

քին վերաբերող այնպիսի միջոցառումներ էին կատարվում, որոնք լրացրի գումար էին պահանջում: Քաղաքային բյուջեի նման ձևով տնօրինումը հնարավորություն էր տալիս ծախսերի մեջ նախապես շնախատեսված նման ձևուարկումներն իրականացնել: Այսպես, օրինակ, 1870 թ. անհրաժեշտություն է առաջանում 822 ոուբլի ծախսելու քաղաքային շատրվանը, և 702 ո. գավառային ուսումնարանը վերանորոգելու համար, ծախսեր, որոնք չեն նախատեսված քաղաքի նախահաշիվների մեջ⁶⁵: Նույն ձևով, 1896 թ. 609 ոուբլի թոշակ է նշանակվում Ռաֆայել Պատկանյանի այրում⁶⁶:

1903 թ. նախիչեանի ծկատերինյան իրական գիմնազիայի ուսուցչուհի Վերա Լեռնովան դիմում է քաղաքային վարչություն և հայտնելով իր հիվանդության, հարկովում բուժվելու անհրաժեշտության և միջոցներ շունենալու մասին, խնդրում է օգնել: Քաղաքային խորհրդարանը, նկատի առնելով նրա բարեխիղճ աշխատանքը, վճարում է 200 ո. գումար⁶⁷ և այլն:

Առաջվա նման քաղաքի եկամուտները ծախսվում էին լուսավորության նպատակով, քաղաքային վարչության, ոստիկանության, փոստակայանի, բանտի ու բանտարկյալների, հրշեց մասի պահպանության, ձանապարհների ու կամուրջների, գաղութի հասարակական կառույցների վերանորոգման և քաղաքի հասարակական բնույթի այլ պետքերի համար: Սակայն քաղաքը մեծանալու, նրա տնտեսությունը բազմացյուղ դառնալու հետ մեկտեղ, մի հրեւոյթ, որը նկատելի է հատկապես XIX դարին տասնամյակներում և XX դարի սկզբներին, բնականաբար ավելանում և մեծանում են նաև ծախսերը: Եթենք նույն 1870 թ. օրինակը՝ քաղաքային բյուջեի ծախսումների հոդվածների մասին գաղափար կազմելու համար⁶⁸:

ա) Քաղաքագլխի գրասենյակի համար ծախսվել է	2755 ոուբլի
բ) Քաղաքի ճարտարապետի համար	2440 ո.
գ) Երկրորդ կարգի իրական ուսումնարանի համար	3090 ո.
դ) Գավառային ուսումնարանի պահպանման համար	2410 ո.
ե) Քաղաքի լուսավորության ծախսերը կազմել են	3015 ո.
զ) Ճանապարհների վերանորոգման ծախսերը	1017 ո.
է) Տագանրոդի առևտրական դատարանի համար	928 ո.

65 ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 1039, թ. 19:

66 «Приазовский край», 1896, № 37.

67 ГАРО, ф. 46, оп. 1, д. 3375, л. 7—8.

68 ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 1039, թ. 15—19:

թ) Գիշերվա վարձու հսկչներին վճարվել է	1200 ո.
թ) Փոստային կայանների ծախսերը կազմել են	338 ո.
ժ) Հայկական որբացին դատարանի համար	464 ո.
ի) Դռնի ծախսվնյա նավակայանի և քաղաքի շատրվանի պահակին	264 ո.
լ) Քաղաքի բժշկին, նրա օգնականին և մանկաբարձներին	738 ո.
մ) Քաղաքի անշարժ կայքի պետական հարկը	163 ոուբլի

Նախապես պլանավորված այս ծախսումներից զատ տարվա ընթացքում 600 ո. է վճարվել Եկատերինոսլավի նահանգային վարչությունը բազմիցս ուղարկված հեծյալ սուբհանդակին, 218 ոուբլի՝ Հրավիրված հողաշափին, 200 ոուբլի է վճարվել տեղաբաշխող հանձնաժողովին, 90 ո. տրվել է Հրշեց ծառայության համար ձիեր գնելու նպատակով և կատարվել են բազմաթիվ այլ մանր ծախսումներ, որոնց գումարն անցնում էր 3 հազար ոուբլուց⁶⁹: Տարվա ընդհանուր ծախսերը հասել էին 32691 ոուբլու:

Քաղաքի ծախսումների վերաբերյալ պահպանված վակերագրերը համադրելու պարագայում պարզվում է, որ ժամանակի ընթացքում, վերոհիշյալ հողվածներով կատարվող ծախսումների գումարն աստիճանաբար աճում է: Այսպես, օրինակ, ոստիկանական մասի պահպանման համար, եթե 1870 թ. ծախսվում էր 6 հազար ոուբլի, ապա 1893 թվականին այդ գումարը հասնում է 16 հազարի, հրշեց ծառայության պահպանման համար հատկացված 2440 ո. գումարը բարձրանում է 6 հազար ոուբլու և այլն⁷⁰:

Նախսումների հետևողական աճը, սակայն, հիմնականում առաջանում էր քաղաքային տնտեսության նախկինում գոյություն շունչեցած տարբեր հողվածների գծով կատարվող հատկացվումների հետևանքով: Մեր ասածը համոզիլ դարձնելու նպատակով հիշատակենք որոշ փաստեր: 1881 թ. 10 հազար ոուբլի գումար է տրվել ինժեներ Գրենբերգին՝ նոր Նախիչեանի կոյուղու և փողոցների սալահատակման նախագծերի համար: Հաջորդ տարում 85 հազար ոուբլի գումար է ծախսվել քաղաքի համար հատկացված առևտրական նավամատույցը բարեկարգելու և գործարանային ու ալրապների գումարը ձեռնարկություններին սահմանամերձ փողոցները մաքրելու վրա⁷¹:

69 Նույն տեղամ, թ. 19—22:

70 ГАРО, ф. 91, оп. 1, д. 705, л. 41.

71 ЦГИА СССР, ф. 95, оп. 8а, д. 10, л. 40.

1894 р. 13356 п. գումար է ծախսվել քաղաքի Մարինակի Հիվանդանոցի պահպանման համար⁷²; 1896 թ. քաղաքային թատրոնի կառուցվելիք շենքի նախագծի համար տրամադրվել է 87630 ռ. գումար⁷³:

1906 թ. միայն քաղաքային այգու և պարտեզի պահպանման համար ծախսվել է 5500 ռ., քաղաքի ջրատարի պահպանումը կլանել է 18579 ռ., իսկ բժշկասանիտարական ծառայությունը՝ 63,923 ռ. գումար: Այդ նույն տարում միայն ծխական դպրոցների ծախսերը հոգալու համար տրամադրվել է 10 600 ռուբլի, իգական դպրոցին՝ 37 320 ռուբլի, հոգեոր սեմինարիային՝ 6875 ռուբլի, քաղաքի հաշվին պահպող մյուս դպրոցներին՝ 49205 ռուբլի գումար և այլն⁷⁴:

Հասկանալի է, որ քաղաքի անընդհատ աճող մեծագումար ծախսերը հոգալու համար ավելացվում էին գանձվող հարկերը և ի հայտ բերվում եկամուտների նորանոր աղբյուրներ:

բ) Քաղաքի և գյուղերի բարեկարգումը.—Նախիշեանի շինարարության ու բարեկարգման, նրա կառուցապատման մասին խոսելիս նկատի պետք է առնել էական մի հանգամանք: Նախիշեանը տարբերվում էր մերձակա ու հեռավոր շատ քաղաքներից, նրանով, որ այդ քաղաքները սկզբնավորվելով որպես փոքր բնակավայրեր, ժամանակի ընթացքում աճելով ու ընդարձակվելով աստիճանաբար վերափոխվել են քաղաքի: Նախապես, առանց որևէ պահնի հիմնադրված լինելու հանգամանքը հետագայում նման քաղաքների վերափոխման բարեկարգման համար նկատելի խոշնդուտներ է հարուցել: Նոր նախիշեանը հենց սկզբնավորման ժամանակ, ինչպես հայտնի է, հատուկ նախագծված պլանով հիմնադրվեց որպես քաղաք: Տեղանքի պայմանները՝ գետափնյա հարթավայր տարածքը նկատի առնող, ընդարձակ հրապարակով և իրար խաչաձև ուղղաձիգ փողոցներով, Գետերբուրդում նախագծված քաղաքի այդ հատակագիծը ու միայն չէր կաշկանդում, այլև լայն հնարավորություն էր ընձեռում քաղաքի հետագա ընդարձակման ու բարեկարգման համար: Թերևս հատուկ նախագծով հիմնադրված լինելն էր հիմնական պատճառը, որ նոր նախիշեանը մինչև XIX դարի կեսերը, ինչպես նաև հետագա մի քանի տասնամյակներում իր կառուցումներով, բարեկարգ դրությամբ համարվում էր նովոռոսիայի նշանավոր քաղաքներից մեկը: Նման բնութագրումը հավաստվում է տարբեր երկրներ շրջած, քաղաքի ժողովուրդների և քաղաքների կյանքին լավատեղյակ նշանավոր գործիչների ու ճանապարհորդների թողած ուղեգրական նկարագրություն-

72 Նույն տեղում, ֆ. 1152, ց. 12, 1898 թ. գ. 88, թ. 8:

73 «Պրազովսկի քայլ», 1896, № 37.

74 «Պրազովսկի քայլ», 1906, № 29.

ներով⁷⁵: Այդ բանը հաստատվում է նաև նովոռոսիայի երկրամասի քաղաքների առևտրաարդյունագործական ու շինարարական կյանքին վերաբերող վիճակագրական փաստաթղթերով և եկատերինուսլավի նախագագետի ցարական արքունիք ներկայացվող ամենամյա պաշտոնական հաշվետվություններով⁷⁶:

Ետոնեփորմյան շրջանում, կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով, զգալի տեղաշարժեր կատարվեցին ինչպես կայսրության տարբեր երկրամասների, այնպես էլ քաղաքների կյանքում: Հարավային Ռուսաստանում զարգացման իր բարձր տեմպերով, Օդեսայի հետ մեկտեղ, աշքի ընկավ մասնավորապես Ռուսական մյուս նշանավոր քաղաքները, այդ թվում և նախիշեանը, նույնպես առավել կամ նվազ շափերով աշխատված ապրեցին և նկատելի աճ ունեցան, սակայն ոչ ամեննեին՝ Դոնի Ռուսական նման արագընթաց տեմպերով:

Ետոնեփորմյան շրջանում ևս հայկական գաղութի տարածքի, հասարակական օգտագործման հնթակա կամուրջների, ճանապարհների, փոստային ուղղու և առհասարակ քաղաքային տնտեսության հսկողությունն ու բարեկարգ վիճակում պահպանները հիմնականում դրված էր Դոնի հայ համայնքի վրա: Հայկական գաղութի տարածքում կային երկու գլխավոր փայտյա կամուրջները նրանցից մեկը թեմերնիկ գետի վրայով անցնող փոստային, ուղղմական և առհասարակ տրանսպորտային հիմնական փոստային, ուղղմական և առհասարակ տրանսպորտային փոստային, ուղղմական գաղութի ուղղության վրա էր, որը Ռուսաստանի կենտրոնական նահանգները միացնուղու էր Կուրանի մարզի և Անդրկովկասի երկրամասի հետ: Մյուս կանում էր Կուրանի մարզի գտնվում էր Ռուսական եկող փոստային ուղղություն վրա, որը Կիպինտերիկից անցնուղու էր նովոչերկասկ և Դոնի գորքերի մարզի սահմանները: Առաջին կամուրջը բարեկարգ վիճակում պահպանվում էր նախիշեան քաղաքի համարված գեմստվային վարչության կողմից, իսկ մյուսը՝ Ռուսական քաղաքի հաշվին: Այդ կամուրջները գարնան շրերը հորդանալու և կամ անձրևներից գոյացող գետակների քայքայիչ ազդեցության հետեանքով հաճախ վնասվում էին և նրանցից օգտվելը խիստ դժվարանում էր: Նրանք մշտական հսկողության ու վերանորոգման կարիք էին գտում, որը և կատարվում է պարբերաբար:

Թերևս ավելի մեծ միջոցներ էր կյանում և ուշադրություն պահպան շտամ, հաճախ կապալով տրվող, Դոն գետի նոր նախիշեանի շարժական կամ լողացող կամուրջների պահպանությունը: 1901 թ. ուժեղ մրրիկի

75 Արխիվ Ռայևսկի թ. 1. ԾՊ. 1908, ս. 519—520. Ա. Սկալյովսկի, Օպыտ չունակացման տարրական քայլ, Օդեսա, չ. 1, 1850 թ., ս. 287.

76 Խայրական, Հարավարական քայլ, Երկեր, Երկան, 1979, էջ 92—93:

77 ЦГИА ССР, ֆ. 1281, օպ. 5, ձ. 60, լ. 70—71.

Հետևանքով շարժական կամուրջը պոկվում է: Հաջողվում է նրա մասերը գտնել Ալեքսանդրովսկի և Աքսայի ու Ստարչերկասկի կայարանների մերձակայքում: Քաղաքի խորհրդարանի ներկայացուցչի և մասնագետի կողմից կատարված հաշվարկումներից պարզվում է, որ կամուրջը վերականգնելու, ինչպես նաև նրանով բեռների տեղափոխությունը դյուրացնելու համար տնհամեշտ է 5956 ռ. գումար⁷⁷:

Հատկանշական է, որ չնայած շարժական կամուրջից օգտվելու վարձի հետևողական բարձրացմանը, նրա նշանակությունն այնքան կարևոր էր, որ բնակիչները դրանից առավել մեծ շափերով օգտվելու պահանջ են դնում: 1906 թ. նոր նախիշները տարբեր խավերի պատկանող բնակիչները դիմում են քաղաքային խորհրդարան և խնդրում Գոնի շարժական կամուրջներն օգտագործման համար թողնել նաև ձմռանը: Դրանով իրենք հնարավորություն կստանային մշտապես կապվելու գետի մյուս ափում գտնվող բնակավայրերի հետ: Քաղաքային խորհրդարանի առանձնաշրած հանձնաժողովն ուսումնասիրելով հարցը, գալիս է այն հետևության, որ շարժական կամուրջների ինչպես տեղադրումը, այնպես էլ հավաքումը հեշտացնելու նպատակով անհրաժեշտ է վերակառուցել, Ռոստովի կամուրջների նման դարձնել մեկ հնակետով: Միաժամանակ առաջարկվում է մեծացնել կամուրջների թոփշը, որպեսզի սառուցների հոսքի ժամանակ նրանք շվնասվեն⁷⁸:

Հայկական գաղութում հաղային տարածությունների առատություն կար ոչ միայն ուրիշ երկրամասերի, այլև անգամ հողերով հարուստ Դոնի մարզի Հարենան գավառների համեմատությամբ։ Այսպես, 1873 թ. հայկական գյուղերի բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում էր ավելի քան 8 դես. Հող, այն դեպքում, երբ Ռուսաստանի կենտրոնական նահանգներում բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում էր միջին հաշվով 2 դես., սեծովյան առավինյա նահանգներում՝ 3—4, իսկ Դոնում՝ 7 դեսյատին՝¹⁷։

1890-ական թվականներին հողային ընդհանուր տարածությունը գրեթե չէր փոխվել, սակայն բնակչության ավելանալու հետևանքով մեկ շնչին ընկնող հողաբաժինը պակասել էր շուրջ 3,5 դեսյատինով և իշել 4,5 դեսյատինի։ Իսկ նույնպես փոքր հողատարածություն չէր, եթե համեմատելու լինենք մյուս նահանգների գյուղացիների հողաբաժինների հետ։ Այդ նույն ժամանակ եկատերինուսավի նահանգում մեկ շնչին ընկնում էր 3,8 դես., Խերսոնում՝ 3,1, Տամբովում՝ 2,2, Օլովում՝ 2, Խյաղանում՝ 1,9, Կուրսկի և Տավրիկյան նահանգներում՝ 1,3 դեսյատին՝¹⁸։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1913—1914 թթ., հայկական բնակչության ավելանալու հետևանքով, յուրաքանչյուր շնչին ընդհանուր առմամբ ընկնում էր 3 դեսյատին հողամաս։ Հայկական առանձին գյուղերին պատկանող հողային տարածքն անփոփոխ պահպանելու, բայց բնակչության անհավասարաշափ աճի պայմաններում խախտվել էր տարրեր գյուղերի բնակիչների հողաբաժինների շափը։ Զալիք գյուղի 7117 բնակիչներն ունեին 15483 դես., Թոփտիի 6439 բնակիչները՝ 16600, Մեծ Սալայի 4191 երկրագործները՝ 8212 դես., Փոքր Սալայի 1493 բնակիչները՝ 6507 դես., և Նեսվիտայի 1482 գյուղացիները՝ 5787 դեսյատին հողատարածություններ։ Այդ պատճառով էլ, եթե Փոքր Սալայի յուրաքանչյուր բնակչին ընկնում էր 4,35, Նեսվիտայի բնակչին շուրջ 4 դես., ապա Թոփտիի գյուղացիներին 2,5, իսկ շալդիրցիներին

¹⁷ «Օչերки экономического развития Дона», Ростов-на-Дону, 1960, с. 9.

¹⁸ И. Хлыстов, Дон в эпоху капитализма, с. 15.

Հ դեսյատինից ընդամենը մի փոքր ավելի: Դրա կողքին քաղաքում բնակվող հայ երկրագործների հիմնած Եկատերինովկա գյուղի 549 բնակիչներն ունեին 4891 դես. տարածություն, ուստի և նրա յուրաքանչյուր շնչին ընկնում էր շուրջ 9 դեսյատին հողատարածություն^{19:}

Հայկական գյուղերն առանձին համայնքներ էին կազմում և հողից Հայկական գյուղերն առանձին համայնքներ էին կազմում և հողից էլ օգտվում համայնական կարգով: Ամեն մի գյուղական համայնք սահմանում էր հողատարածությունների ժամանակավոր բաշխման ու մշակման կանոններ: Սովորաբար երեք կամ հինգ տարին մեկ անգամ գյուղի հասարակության կողմից կատարվում էր հողերի վերաբաշխում: Գէին բաժանվում միայն արոտավայրերը, որոնցից օգտվում էին հավասարապես, ինչպես և եղենութը, որի շամբը օգտագործում էին վառելիքի համար: Դա օրենքի ուժ էր ստանում վերադաս իշխանությունների կողմից հաստատվելուց հետո միայն: Հողը պատկանում էր համայնքին և ոչ իրավունք չուներ այն օտարելու: Դրսեկ բնակիչները համայնքի անդամ չէին համարվում և չէին օգտվում հողօգտագործման իրավունքներից:

Հայկական գյուղական համայնքներում, ի տարբերություն ռուսական համայնքների, հողաբաժինը տրվում էր ոչ թե ըստ շնչի, այլ ըստ ծխի՝ ընտանիքի: Հայերի մոտ ընդունված էր ընտանիքի հասուն անդամի ամուսնության և առանձին ընտանիք կազմելու դեպքում նրան Հողաբաժին տրամադրելու սկզբունքը: Այս վերջին սովորությը մասամբ վերացնում էր հողագործկ ընտանիքներ առաջանալու հնարավորությունը²⁰:

Գյուղերը կառավարվում էին տվյալ հասարակության կողմից պարբերաբար ընտրվող ավագի կամ գյուղապետի կողմից: Սկզբնական շրջանում գյուղի ավագին զուգահեռ ու նրան կից գործում էր նաև շորս ծերերի խորհուրդը: Վերջինս գյուղապետին օգնելու, խորհրդատուի գերէր կատարում և աշխատում վիճելի հաբեցերը համոզելու եղանակով լուէր կատարում է աշխատում վիճելի հաբեցերը համոզելու եղանակով լուէր ծերու: Աստիճանաբար թուլանում է ծերերի խորհրդի ազգեցությունը և վերանում այդ մարմինը: Համայնքի կառավարումը մնում է միայն գյուղապետին: Վավերագրերում, XIX դարի կեսերից այլևս չենք հանդիպում հիշատակություններ գյուղական ծերերի մասին: Գյուղի ավագը հետեւ վում էր վերադաս մարմինների հանձնարարությունների կատարմանը: Հարկերի հավաքմանը, հողօգտագործման կանոնների, ճանապարհների, կամուրջների պահպանմանը, ինչպես նաև տեղի դպրոցի և լուսավորական այլ հաստատությունների գործումնեությանը:

¹⁹ «Сборник статистических сведений по Екатеринославской губернии», Екатеринослав, 1884, с. 103—104.

²⁰ «Алфавитный список населенных мест области войска донского», с. 59, 175, 281, 363, 561, 633.

Համայնքը, ինչպես հայտնի է, ոչ միայն գյուղական հողատիրության ձև է, այլև ինչ-որ շափով նաև ինքնաբավ միավորում, որը ուղղություն է տալիս հարևանությամբ ապրող և մի գյուղի մեջ ընդգրկված գյուղական տնտեսություններին։ Դա գյուղացիների տեղական այնպիսի միավորում է, որը հօգում է գյուղի կարիքները, բավարարում իր անդամների պահանջները։ Համայնքը նկատելիորեն հենվում և միաժամանակ պահպանում է գյուղացիների հարեանական-ընկերական միությունը։ Հետևաբար այն հանդես է գալիս որպես տեղական ինչ որ շափով դեմոկրատական մի կազմակերպություն^{21:}

Հայկական գյուղական համայնքները, որպես տեղական ինքնավար կազմակերպություններ, կայուն և կենսունակ էին։ Հայ համայնքների ամրությանը մեծապես նպաստում էր դեռևս գաղութի հիմնադրման ժամանակ նրանց վերապահված ազգային լեզվով ու սովորություններով առաջնորդվելու, սեփական կրոնին դաշտանելու իրավունքը։ Էական նշանակության այդ գործոնների առկայությունն ավելի բան ինքնատիպ ու ներփակ է դարձնում շրջապատից առանձնացող հայկական գյուղերի կյանքը։ Դրան նպաստում էր նաև Դոնի հայկական գաղութի ինքնավարությունը։ Նախառեֆորմյան շրջանում գյուղերը վարչականորեն ենթարկվում էին հայկական մագիստրատին։ Գյուղական ամեն մի համայնք իր պատկամավորների միջոցով մասնակցում էր Դոնի հայության կյանքին, գաղութի համընդհանուր շահերը շոշափող բազմազան հարցերի առիթով նախիշնանում գումարվող հավաքներին։ Հայկական գյուղերն իրենց ներկայացուցիչներն ունեին բաղաքային դումայում և մյուս հաստատություններում։

Մագիստրատը փակվելուց և հայկական գաղութի ինքնավարությունը վերացվելուց հետո իրավիճակը նկատելիորեն փոխվեց: Հայ համայնք-ները թեկուզ և ժամանակավորապես սկսեցին ենթարկվել գյուղական հարցերը տնօրինող վոլոստային ու գյավառային ատյաններին, իսկ պաշտոնական լեզուն դարձավ ոռւսերենը: Հայկական և հունական գյուղերի դրության կարգավորմանը նվիրված Պետական սենատի 1875 թ. մայիսի 18-ի որոշման համաձայն, ինչպես նշեցինք նախորդ գլխում, սեփականատիրական իրավունքով համայնքից հողաբաժին ստացող հայ գյուղացիներին թույլատրվում էր երեք տարի անցնելուց և տվյալ համայնքի $\frac{2}{3}$ -ի համաձայնությունը ստանալուց հետո օտարել հողաբաժինները: Դա կարեղոր ազդակ էր համայնքների քայլայման համար: Այդ բանը

²¹ «Проблемы социально-экономической истории России. Сборник статей», М., 1971, с. 355—358.

սակայն, տեղի չունեցավ նախ այն պատճառով, որ հայկական գյուղերն ավանդույթի ուժով տնտեսական, լուսավորական, ազգային-կրոնական ծիսակատարություններով և հազար ու մի այլ թելերով կապված մնացին Նոր Նախիշեանին։ Ազգային սովորույթով պարուրված նրանց համայնքական կյանքն արգասավորվում էր այդ շփումներով ու կապերով։ Այդ հանգամանքից զատ ներհամայնական կապերն այնքան ուժեղ ու կենսունակ գտնվեցին, որ անգամ կառավարիչ սենատի վերոհիշյալ վճռից հետո այնտեղ համայնքական հողերը առուժախի առարկա շդարձան։ Ավելին, 1906 թ. ստոլիպինյան ագրարային քաղաքականությունը, որը հիմք հանդիսացավ ամբողջ երկրում համայնքների քայլեցման համար, համանման ազդեցություն շունեցավ հայ համայնքների վրա։ Անշուշտ, հայկական գյուղերում ուժեղացավ շերտավորումը, հողերի օտարումը, սակայն համայնքները պահպանեցին իրենց գոյությունը։ Բազմաթիվ փաստեր գալիս են հավաստելու, որ անգամ համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1913—1914 թթ. հայկական գյուղերն ապրում էին միիրավ համայնքական կյանքով։

Հիշատակենք համայնքների գոյությունը հավաստող սոսկ երկու փաստ։ Թոփտի գյուղը 1913 թ. կատարում է համայնքական հողերի վերաբաշխում։ Ուսուցիչ Սերովի Միքայելյանի դրդումով մի խումբ գյուղացիներ պահանջում են հողերի նոր վերաբաժնում կատարել։ Գյուղի համայնքական ժողովը գյուղապետի նախագահությամբ միահամուռ որոշում է անհետևանք թողնել բողոքները, վավերացնել կատարված վերաբաշխումը և նրա գործունեության ժամկետը սահմանել երեք տարի²²։

Զալթը գյուղի հասարակությունը վճռել էր գյուղից երկար ժամանակ բացակայած երկրագործներին մինչև նրանց վերադարձը գրկել հողաբաժններից։ Ուսուցիչներից մեկը պահանջում է բացակա գյուղացիներին հողաբաժնին հատկացնել։ Գյուղապետը նախ պահանջում է այդ գործով զբաղվելու իր լիազորվածության մասին հավատարմաթուղթ և ապա հայտնում, որ հարցը կարող է լուծվել միայն գյուղի հասարակության վճռում²³։

Գյուղատնտեսության մեջ առաջատար տեղ ուներ և լայն զարգացում էր ապրում դաշտավարությունը, հացահատիկային կուլտուրաների՝ ցորենի, մասամբ նաև գարու, վարսակի, կորեկի մշակումը։ Հացահատիկի մշակումը կատարվում էր աշնանացան և գարնանացան եղանակով։ Աշնանը ցանում էին կարմրահատ ցորեն՝ «օզիմկա» և հաճար՝ «արիշ», իսկ

գարնանը՝ սպիտակահատ «գարնովկա», գարի, վարսակի։ Հայ գյուղացիների մոտ տարածված էր հատկապես գարնովկա ցորենի մշակումն, որը լավ համարում ուներ և արտասահմանում լայն սպառում էր գտնում։ Վար ու ցանքը կատարվում էր երկդաշտյան եղանակով, այսինքն վարելանողերի մի մասին հանգիստ էր տրվում, մեկ տարի չէր մշակվում։ Սակայն կային, նաև այնպիսի հողեր, ուր ամեն տարի ցանքս էր կատարվում։ Դրանք գյուղերին մոտիկ ընկած դաշտերն էին²⁴։

Բերքատվությունը բավական բարձր էր։ Դոնի մարզում սովորաբար, մեկ գեսյատին տարածությունից ստացվում էր 2,5—3,5, սակազ գեպերում՝ 4 շետվերտ հացահատիկ²⁵։ Հայ երկրագործների մոտ, սակայն, մեկ գեսյատին վարելահողից հացահատիկի բերքատվությունը համառ էր 4—6 շետվերտի։ Այսպես, օրինակ, 1870 թ. հայկական գյուղերը 530 շետ. աշնանացան և 10880 շետ. գարնանացան ցորենից ստացել են համապատասխանաբար 2175 և 44165 շետ. բերք²⁶։ 1914 թ. հայ երկրագործները 3913 դես. տարածությունից ստացել են 123250 փութ գարնովկա ցորեն, իսկ 1447 դես. գարու ցանքսից՝ 57880 փութ²⁷։ Այլ խոսքով գարու բերքատվությունը գեսյատինից եղել է 4,5 շետ., իսկ ցորենի բերքատվությունը հասել է 5,5 շետվերտի։

Միայն ցորենի գարնովկա տեսակից ստացված վիթխարի քանակի՝ 123 հազար փութ բերքը թեկուզ մոտավոր պատկերացում է տալիս, որ Դոնի մարզող մարզի նման հայկական գաղութում ևս հացահատիկի արտադրությունն այնպիսի ծավալ էր ընդունել, որ նրա փոքր մասը բավարարում էր բնակչության սպառողական պահանջմունքը, իսկ մեծագույն մասը շուկա էր հանգում։ Տակավին XIX դարի 30—40-ական թվականներից հացահատիկի արտադրությունն արդեն շուկայական բնույթ էր ստանում, իսկ դարի երկրորդ կեսին այն ավելի խորացավ և մեծ ծավալ ընդունեց։

Դոնի մարզի տեսակարար կշիռն ապրանքային հացահատիկի արտադրության մեջ ավելի մեծ էր, քան որևէ այլ նահանգի։ Բավական է թեկուզ նշել, որ Ռուսաստանի մարզող ապրանքային հացահատիկի 18,2%-ն ընկնում էր Դոնի մարզին²⁸։ Հայկական գաղութը հացահատիկի արտադրության ծավալով Դոնի մարզի երկրագործների առաջին շարքերում էր գտնվում։

24 Ե. Նահազիք, Նոր Նախիշեանը և նորնախիշեանը, Թիֆլիս, 1903, էջ 174։

25 Ա. Պ. Խլիստօս, Դօն և էպոխ կապիտալիզմա, ս. 77. Ռուսական շետվերտ Հավասար է եղել 9 դրէ կամ 144 կիլոգրամ։

26 ЦГИА СССР, ф. 1284, оп. 67, г. 1871, д. 169, л. 58.

27 ГАРО, ф. 91, оп. 1, д. 1731, л. 126.

28 Ա. Խլիստօս, Դօն և էպոխ կապիտալիզմա, ս. 76.

22 «Գաղութ», 1914, № 18։

23 Խույն տեղում, № 30։

Հացահատիկն աղալու, ալյուր ստանալու համար նախկին քամազացների հետ միասին բավական լայն տարածում էին գտել նաև շոգեաղացները: XX դարի սկզբնիրին Զալթը զյուղն ուներ 2 շոգե և 16 քամազաց, Թոփտին՝ մեկ շոգե և 8 քամազաց, Մեծ Սալան 2 շոգեաղաց, Նեսվիտան մեկական ալրազացները²⁹:

Նոր նախիչևանի հայերի գյուղատնտեսական դրազմունքների մեջ ուրույն տեղ ունեին այգեգործությունը և բանշարաբուծությունը: Հայերը ավանդաբար շարունակում էին զբաղվել գեռես Ղրիմի թերակղզուց իրենց քաշածանոթ և Դոնի ավազանում հնուց տարածված խաղողագործությամբ, գինեգործությամբ, ինչպես նաև պտղատու այգիների մշակմամբ: Խաղողագործությունը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում նախկին ծավալը շուները խաղողագործության ծաղկուն ժամանակաշրջանն ինչպես հայերի մոտ, այնպիս էլ Դոնի ամբողջ մարզում XIX դ. 20—30-ական թվականներն էին³⁰:

Հայերի շրջանում տարածում շտավ նաև շերամապահությունը և մեղվարությունը: Իզուր չէ, որ Մ. Նալբանդյանը հանդիմանում էր հայրենակիցներին գյուղատնտեսական կարեսոր ու շահավետ այդ ճյուղերն անտեսելու համար: «Երկրագործություն ասացյալը,—գրում էր նա, — ամեննեին եվրոպական կերպով, որ ավելի ճիշտ խոսելով, պիտո է ոսկու հանք անվանել, անտես է արած բոլորովին այդ քաղաքի մեջ: Երկրագործության զանազան ճյուղերը, որպիսին են մեղվաղարմանուրյուն (պշելօնություն) և շերամապարմանուրյուն (աղություն) նույնպես բարձիթող են արած: Ինչ գեղեցիկ և պտղաբեր դաշտեր կան նախիչևանի շրջակայքում, ուր կարելի էր միլիոնավոր փեթակներ պահել, որքան պարապ և ամայի թողած դաշտեր, որոնց վերա շատ փոքր արծաթով կարելի էր թութի անտառներ գոյացնել շերամապարմանուրյան համար, բայց ոչով սիրտ շունի մոտենալ բնության և փորելով նրա արգանդը հանել և ստանալ նորա անսպասելի գանձատնից ոսկին և արծաթը»³¹:

Բանշարաբուտանային կուլտուրաներից մշակվում էին ձմերուկ, վարունգ, սեխ, կաղամբ, բաղրիջան, բամիա, սիսեռ, լոբի, զանազան կանաչներ: Կարտոֆիլի մշակումը ևս սահմանափակ բնույթ ուներ: Այգեգործության ու բանշարաբուծության արդյունքները, որպես կանոն,

²⁹ «Алфавитный список населенных мест области войска донского», с. 59, 281, 363, 633.

³⁰ «Ежегодник департамента землемерия (год восьмой)», 1914, СПб., 1915, с. 653.

³¹ Մ. Նալբանդյան, Հրապարակախոսական երկեր, էջ 104:

շուկա չէին հանվում: Դրանք մշակվում էին հիմնականում սեփական կարիքները հոգալու համար:

Ինչպես նախկինում, այնպես էլ ետությունը շրջանում քաղաքի՝ նոր նախիչևանի բնակչությունը նմանապես զբաղվում էր գյուղատնտեսության բոլոր ճյուղերով: Քաղաքի մեծահարուստների ճնշող մասը սեփական ագարակներում կամ խուտորներում և այլ վայրերում հացահատիկի ընդարձակ դաշտեր ունեին: Նախիչևանի բնակիչները տնամերձ հողակտորներում զբաղվում էին այգեգործությամբ և անամնապահությամբ:

Քաղաքին պատկանող հողատարածությունների օգտագործման եղանակից լավագույն ձևով երևում է նորնախիչևանցիների գյուղատնտեսությամբ զբաղվելու աստիճանը: Քաղաքապատկան 20 հազար տարածությունից 187 դես. զբաղեցնում էին տնամերձ հողակտորները, 620 դես. այգիներն ու բանշարանցները, 9000 դես. վարելահողերը, 1615 դես. խոտհարքները, 525 դես. արոտավայրերը: Շուրջ 3000 դես. խողան հողեր էին, 3797 դես. ծածկված ճահճներով ու եղեգնով, 900 դես. գետափնյա անօգտագործելի կավանող ու քարքարոտ տարածություններ էին³²: Այսպիսով, անգամ XX դարի սկզբներին, երկաթուղային ու խճուղային ճանապարհները, եկեղեցիներն ու գերեզմանատները, փողոցներն ու հրապարակները նշանակալից տարածք էին զբաղեցնում և ավելի ու ավելի ընդարձակվելով նոր հողամասեր կլանում, քաղաքի օգտագործելի հողատարածությունների հիմնական մասը՝ 73%-ը հատկացվում էր գյուղատնտեսությանը:

Հայերը տեխնիկական կուլտուրաների՝ ծխախոտի, շաքարի ճակնեղի, կանեփի արտադրությամբ գրեթե չէին զբաղվում:

Գյուղատնտեսական աշխատանքները տարվում էին նախկին ձևով, ձեռքի աշխատանքով ու պապենական գործիքներով, իսկ որպես քաշող ուժ հավասարապես օգտագործում էին եղն ու ձին: Գյուղատնտեսական աշխատանքներում աստիճանաբար ավելի ու ավելի էր մեծանում ձիու դերը որպես տրանսպորտի միջոց և քաշող ուժ:

Հայկական գաղութում բավականին լայն տարածում էր գտել նաև գյուղատնտեսության մյուս ճյուղը՝ անամնապահությունը: Դոնի ընդարձակածավալը ու խոտառատ տափաստանները նպաստավոր պայմաններ էին ստեղծում անամնապահության զարգացման համար: Երկրագործության նման, անամնապահությունը ևս միայն հայկական գյուղերի մեջ աշնանորհը չէր: Թերեւս, երկրագործությունից ավելի մեծ շափերով նոր նախիչևանի բնակիչները զբաղվում էին անամնապահությամբ:

³² ГАРО, ф. 91, д. 1731, л. 24. «Приазовский край», 1906, № 116.

Հայերն ավանդաբար զբաղվում էին խոշոր և զգալի ավագութեամբ, ծիսաբուժությամբ, ոչխարաբուծությամբ: Մինչև XIX դարի կեսերը խողաբուժությամբ նրանք չէին զբաղվում: Հետադայում, ուսւական միջավայրի ազդեցությամբ, սկսեցին զբաղվել նաև անառաջապահության այդ ճյուղով, որը, սակայն, լայն տարածում չստացավ:

Հայկական գյուղերը 1865 թ. ունեին 1411 ձի, 9255 խոշոր եղջյուրավոր անասուն, որից՝ 702 գոմեշ³³: Անասնապահության լայն հնարավորություններից են եռով և գյուղերի բնակչության քանակը նկատի առնելով պետք է ասել, որ դա բարձր թիվ չէր: Նախորդ շրջանում, ասենք, քառասուն տարի առաջ՝ 1824 թ. հայկական գյուղերը, բացառությամբ նեսվիտայի, ունեին 2825 ձի, 12518 խոշոր եղջյուրավոր անասուն³⁴: Գյուղերից ստացված տվյալների վրա մոտավոր հաշիվներով եթե ավելացնենք նեսվիտա գյուղի անասունների քանակը, ապա լավագույն դեպքում կարող է միայն հավասարվել 1824 թ. մակարդակին: Խշանակում է քառասուն տարվա ընթացքում անասնապահությունն աճ չի ունեցել, թեև այդ նույն տասնամյակներում բնակչությունն ավելացել, գրեթե կրկնապատկել էր:

Գյուղատնտեսության երկու ճյուղերի՝ հողագործության և անաս-
նապահության անհավասարաշափ զարգացումը բացատրվում է նրանց
ապրանքային բնույթով։ Հացահատիկի մեծ շափերով առևտությունը ոլորտ
մտնելը, նրա բերքատվությունն ավելանալու, հետևաբար և ցանքատա-
րաժություններն ընդարձակելու պահանջն անհրաժեշտ էր դարձնում
արոտավայրերի մի մասը վարելահողերի վերածել։ Դրան հակառակ,
անասնապահությունը, գիրազանցապես բնակչության սպառողական
պահանջներն էր բավարարում ու որպես քաշող ուժ նրա կարիքները հո-
գում ավելի նվազ շափով էր միայն առուծախի ապրանք դառնում։

33 «Памятка книжка Екатеринославской губернии на 1867 год», Екатеринослав, 1866, с. 244—247. *Лицъякъанъ* *գյուղերի* *ավագների* *կազմած* *և* *գյուղակъанъ* *հրակъзънերի* *վավերացъраծ* 1863 *թ.* *տարեկъанъ* *հաշվետվության* *մեջ* *անասունների* *գլխաքանակը* *հատկալ* *ձևով* *է* *ներկայացъռում*. *Զալթրն* *ուներ* *690* *ձի*, *4800* *խոյոր* *եղջյուրավոր* *անասուն*, *Թոփտին* *համապատասխանաբար՝* *620* *և* *4010*, *Մեծ* *Սալան՝* *483* *և* *1840*, *Առշաբան* *Սալան* *50* *ձի* *և* *1100* *անասուն* (*ՀԿՊԱ*, *Ֆ.* 139, *գ.* 156, *թ.* 84—104). *Գյուղապետների* *հաղորդած* *տվյալներով* *շորս* *գյուղերի* (*առանց* *նեսպիտալի*), *անասունների* *գլխաքանակը* *1865* *թ.* *համեմատությամբ* *ավելի* *մեծ* *է* *ստացվում՝* *1843* *ձի* *և* *11750* *խոյոր* *եղջյուրավոր* *անասուն*. *Անհավանակъанъ* *չէ*, *որ* *երկու* *տարբան* *ընթացքում* *տարբեր* *պատճառներով* *պակասած* *լիներ* *անասունների* *գլխաքանակը*:

34 ЦГИА СССР, ф. 1281, оп. 11, д. 136, л. 26.

XIX դարի վերջի և XX դարի սկզբի անասնապահության մասին փաստական տվյալներ չեն պահպանվել, բայց ապրանքային հողագործության ծավալումը թույլ է տալիս ենթադրել, որ գյուղատնտեսության այդ ճյուղը հետագայում ևս մեծ զարգացում չի ապրել: Անասնապահությունը մնում էր որպես երկրագործությանն սպասարկող ու նրան կենսականորեն անհրաժեշտ, բնակչության սպառողական պահանջները բավարարող, պակաս չափով նաև առևտուրական ոլորտ մտնող, գյուղատնտեսական արտադրության խիստ կարևոր ճյուղերից մեկը:

Նոր Նախիջևան քաղաքը երկրագործությունից բացի շարունակում էր պահպանել նաև հնից եկող անասնապահական իր թերումը: 1865 թ. քաղաքն ուներ 1550 ձի, 1280 խոշոր եղյուրավոր անասուն³⁵:

Չորս տասնամյակ անց՝ 1905 թ. քաղաքի անասունների գլխաքանակը կրկնապատկվելով, հասնում է շուրջ 6 հազարի: Դրանից 2807 գլուխ ձի, խոշոր եղջյուրավոր անասուն՝ 1309, ոչխար՝ 1000, այծ՝ 20 և 655 խոռ³⁶,

Հատկանշական է, որ քաղաքում ձիաբուծովիյունն արագորեն առաջադիմում էր: Նախորդ քսան տարվա համեմատովիյամբ 1905 թ. ձիերի գլխաքանակը գրեթե կրկնապատկվել էր: Այդ նույնը չի կարելի ասել մյուս հիմնական քաշող ուժի՝ եզան մասին: Քաղաքը 2800 ձիու դիմաց պահում էր ընդամենը 196 եղ: Նշանակում է նոր նախիշեանում ձին, որպես տրանսպորտի միջոց և քաշող ուժ ավելի շատ էր օգտագործվում քան գլուղերում: Թեթև գութանի և արորի գործածումը հնարավորություն էր ընձեռում հողագործության մեջ առավել լայն շափերով օգտագործել ձիու ուժը:

Նախիշեանի բնակիչներն անասուններ պահելու համար սովորաբար վարձում էին քաղաքապատկան արոտավայրերը։ Այսպես, օրինակ, 1906 թ. քաղաքի բնակիչները դիմում են քաղաքային վարչություն և իրազեկ դարձնելով վարձած արոտավայրերի անորակ լինելու մասին, խնդրում իրենց մուծած վարձի դիմաց հատկացնել բարձրորակ, վարելահողային արոտավայրեր⁸⁷։

Ոչխարաբուծության համար Դոնի ավազանի և Կուրանի բնական պայմանները խիստ նպաստավոր էին: Անասնապահության այս ճյուղը խոշոր ծախսեր չէր պահանջում, որովհետև ամբողջ տարին պահպան էր արոտավայրերում, խոտով կերակրելու անհրաժեշտությունը չէր առա-

35 «Памятка книжка Екатеринославской губернии», с. 244.

36 ЦГИА СССР, ф. 1284, оп. 194, г. 1909, д. 29, л. 28.

37 «Приазовский край», 1906, № 198.

շանում: Սկզբնապես ոչխարաբուծությունը լայն տարածում ուներ: Գաղութի հիմնադրման առաջին տասնամյակներում հայերը տասնյակ հազար գլուխ ոչխար էին պահում: Տասնիներորդ դարի վերջերին արտավայրերի կրծատման, վարելահողերի ընդարձակման հետևանքով անասնապահության այս ճյուղը այլևս լայն տարածում չի գտնում³⁸: 1860-ական թվականներին հայկական գյուղերում մանր եղյուրավոր անասնապահության այս ճյուղը այլևս լայն տարածում չի գտնում³⁹: 1860-ական թվականներին հայկական գյուղերում մանր եղյուրավոր անասնապահության այս ճյուղը այլևս լայն տարածում չի գտնում⁴⁰:

Նախկինում՝ XIX դարի առաջին կեսին, քաղաքի բնակիչները հաշողությամբ զբաղվում էին ոչխարաբուծությամբ, այդ թվում և նրանք առաքելմ ցեղատեսակների բուժմամբ: 1824 թ. քաղաքն ուներ 27 հազարից ավելի մանր եղյուրավոր անասուն, իսկ 1850 թ. միայն քարձորակ ցեղատեսակի ոչխարի գլխարանակը հասնում է 13500-ի⁴¹:

1866 թ. Հոկտեմբերին գաղութի տարբեր խավերին պատկանող քաղաքցիները ճարպահական գործարաններին են հանձնել հետևյալ քանակի ոչխար⁴²:

1.	Առաջին գիլդիայի վաճառական Մերգեյ Զորշոփովը	8000 գլուխ	
2.	—»— Իլյա Շագինովը	10000 —»—	
3.	—»— Կարապետ Կողբեթիկը	6000 —»—	
4.	—»— Մինաս Տրապեզոնցեր	15000 —»—	
5.	—»— Հակոբ Օբերովը	7000 —»—	
6.	Երկրորդ գիլդիայի վաճառական Մինաս Չապրոնկովը	4000 —»—	
7.	—»— Հովհաննես Բրամանշլիկովը	5040 —»—	
8.	Նախիջևանի քաղաքացի	Հակոբ Կուրլյաբովը	2400 —»—
9.	—»— Մինաս Պոպովը	3040 —»—	
10.	—»— Մարգար Չերանովը	6000 —»—	
11.	—»— Կարապետ Տուսուղովը	1000 —»—	
12.	—»— Մարկոս Աղաբաշկը	940 —»—	
13.	Մեծ Սալա գյուղից	Ղաղար Բաղրանտովը	4000 —»—
14.	—»— Լուսպարոն Շագինովը	900 —»—	
15.	—»— Գրիգոր Ունանովը	2600 —»—	
16.	—»— Ազատ Նազիկովը	8000 —»—	
17.	Սուլթան Սալա գյուղից	Խաչերես Ակսենտովը	300 —»—

³⁸ «Сборник областного войска Донского статистического комитета», вып. II, Новочеркаск, 1901, с. 23—24.

³⁹ ЦГИА СССР, ф. 1281, д. 60, 65, 136.

⁴⁰ ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 1211, թ. 15:

Անշուշտ, ոչխարի հոտերի մի մասը, մանավանդ հայ վաճառականներին պատկանող հոտերը գնված էին ուրիշներից: Սակայն հաշվի առնելով, որ մեջբերված ցուցակում չեն արտացոլվել հայկական երեք գյուղերի տվյալները և այն հանգամանքը, որ ոչխարաբուծությամբ զբաղվող հայերը ունեցած ոչխարը ամբողջությամբ չեն հանձնում գործառններին, կարելի է հետևեցնել, որ 1860-ական թվականներին անասնապահության այս ճյուղի գլխարանակը հայկական գաղութում հասնում էր շուրջ 100 հազարի:

Հետագայում քաղաքի բնակչությունը դադարեց անասնապահության այս ճյուղով զբաղվել: Բուծվում էր աննշան քանակությամբ ոչխար և այն էլ ագարակատեր աղաների կողմից:

Լայն սպառում էին գտնում անասնապահական մթերքները, հատկապես միսր: Բավական է հիշատակել, որ նոր նախիջևանի սպանդանոցում ամսվա ընթացքում մորթվում էր մի քանի հազար անասուն, որի մի մասը դրսից էր բերվում: 1896 թ. հունիս ամսին օրինակ, երբ ամենից շատ էր մորթ կատարվում, մորթվել է 375 խոշոր եղյուրավոր անասուն և 4135 ոչխար⁴¹: Հաջորդ տարվա նույն ամսում մորթվել է 415 անասուն և 5004 ոչխար: 1897 թ., տարվա ընթացքում մորթվել է 3014 խոշոր և 31271 մանր եղյուրավոր անասուն⁴²:

Քաղաքային խորհրդարանի և Դոնի գորքի մարզային համապատասխան վարչության կողմից սահմանվում են նոր նախիջևանի սպանդանոցում անասուններ մորթելու կայուն գներ: Մեկ գլուխ խոշոր եղյուրավոր անասուն մորթելուց քաղաքի օգտին գանձվում էր մինչև 1 ո. 50 կոպեկ, մանր եղյուրավորից՝ 15 կ., խոզից՝ 50-ական կոպեկ⁴³:

Գյուղատնտեսության ապրանքային բնույթը կամա թե ակամա խթանում է ցանքատարածություններն ընդարձակելու և առհասարակ բնակչության կողմից բերքատավությունը բարձրացնելու ուղիներ որոնելու: Գյուղատնտեսությունն առավել շահավետ դարձնելու ուղիներից էր լավագույն փորձի տարածումը, առաջադեմ մեթոդների կիրառումը: Ավելորդ չէ նշել, որ բարձրագույն իշխանությունների գիտությամբ ու հավանությամբ հիմնվել և գործում էին բազմաթիվ «ընկերություններ», որոնք խնդիր ունեին բարձրացնել գյուղատնտեսական արտադրությունը, պրոպագանդել ու արմատավորել նրա նոր ձևերն ու մեթոդները: Դեռևս 1828 թ. Օդեսայում հիմնվել էր «Մուսաստանի հարավային երկրամասի գյուղատնտեսական ընկերություն»: «Ընկերությունն» ուներ իր գրա-

⁴¹ ГАРО, ф. 91, оп. 1, д. 811, л. 14.

⁴² Նույն տեղում, գ. 872, թ. 2—25:

⁴³ Նույն տեղում, գ. 41, оп. 1, д. 560, св. 15.

գարանը, պարբերաբար հրատարակվող ամսագիրը, հրավիրում էր համագումարներ և նկատելի աշխատանք տանում դաշտավարովթյան, այգեգործության, անասնապահության առաջադիմության ուղղությամբ: Նրան զբաղեցնում էին մասնավորապես գյուղատնտեսական մեքենաները փորձարկելու, հացահատիկի նոր տեսակներ մշակելու, հողը փշանալուց պահպանելու, մոլախոտերի դեմ պայքարելու հարցերը: Գյուղատնտեսության համար կաղրեր պատրաստելու նպատակով ունիեր մտահոգվում էր գյուղատնտեսական ուսումնարաններ բացելու մասին:

«Դոն-Կուբան-Խերեք գյուղատնտեսական կայսերական ընկերությունը» Մեծ Սալա գյուղում ուներ «գյուղատնտես» անոնավ իր մասնաճյուղը: Համաշխարհային պատերազմից առաջ մասնաճյուղը բառամենային գիտակցելով բերքատվության բարձրացման հարցում սերմացուի նշանակությունը «կայսերական ընկերությունից» ստացել էր սերմակատիչ արտասահմանյան մեքենաներ («Ֆախիթել», «Թրիեր») և փորձում էր Մեծ Սալայի երկրագործներին սովորեցնել և աշնանից գործի գնելու այդ մեքենաները: Անասունների ցեղատեսակն ազնվացնելու նպատակով «ընկերության» մասնաճյուղը ստացել էր հատուկ ցուլ և ձի: «Գյուղատնտես» անոնավ կրող այդ մասնաճյուղը նախագահ Ս. Լուսբիքյանի գիտակությամբ իր 50 անդամների միջոցով աշխատում էր գյուղատնտեսական գիտելիքները ժողովրդականացնելու: «Գյուղատնտեսի» նախագահը «Կայսերական ընկերության» խորհրդի նիստում պաշտպանում էր Զալբր գյուղում ևս նման մասնաճյուղ բացելու խնդիրը⁴⁵.

Անհիմն չէր լինի ենթադրել, որ այդ «ընկերությունների» գործունեության ազդեցության շնորհիվ է, հավանաբար, նորնախիջևանցի խոշոր ձեռնարկատեր-հողատեր ն. Սարինյանը նախաձեռնել բացելու երկրագործական դպրոց: 1886 թ. նա տրամադրում է Ստավրոպոլի նահանգի 900 դես. իր կալվածքը և տարեկան 1500 ռ. գումար՝ քաղաքի և հայկական գյուղերի մանուկներին գյուղատնտեսական գիտելիքներ ուսուցանելու նպատակով Ս. Խաչ վանքում երկրագործական դպրոց բացելու համար⁴⁶:

44 ГАРО, ф. 22, д. 413, 415, 581.

45 «Գաղութ», 1914, № 12:

Բերքատվությունը ապահովելու նպատակով հոգ է տարվում վարչական օրենսդրությունը՝ պահպանելու ուղղությամբ։ Նոր Նախարարությունը պահպանելու առաջնահատիքը կազմակերպությունը է (1870) Հաստատել քաղաքի վարելահողերից հանգապետին խնդրում է (1870) Հաստատել քաղաքի վարելահողերից 802 դես։ Երեք տարով վարձով տալու համաձայնագիրը։ Նահանգապետը տաշխս է իր համաձայնությունը միայն այն դեպքում, եթե վարձակալուն պարտավորվեն այնտեղ շցանել վուշ, կանեփ և այլ յուղատու բույները պարտավորվեն այնտեղ շցանել վուշ, կանեփ և այլ յուղատու բույները պարտավորվեն այնտեղ շցանել վուշ, կանեփ և այլ յուղատու բույները պարտավորվեն այդ գործարքին՝ միմիայն հողօգտագործման նըշ-պած կարգը պահպանելու պայմանով⁴⁷։

Նախիջևանին պատկանող վարելահողերի ու այդինքի մշակման ազգունիքի ական կանոնները պահպանելու համար 1907 թվականից քաղաքային վարչությունը հատուկ գյուղատնտես էր պահում⁴⁸: Մի քանի տարի անց, քաղաքն արդին ուներ տնկարան, բավականին մեծ տարածութամբ փորձադաշտ և այլն⁴⁹:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ գյուղատնտեսության արտադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ կատարվող միջնառումների արդյունքները շոշափելի չեն:

Առևտրատնտեսական կյանքում կատարվող տեղաշարժերն այսքան գորեղ չէին, որ վերափոխիչ ազդեցություն ունենային գյուղի հասարակական, տնտեսական կյանքի վրա: Գյուղերը և գյուղական առանձին ընտանիքներ ապրում էին դեռ հնում ձևավորված և ավանդաբար շարունակվող տնտեսական-կենցաղային կյանքով:

Ընտանեկան կյանքն ու սովորույթները, բարերը, մեծերի նկատմամբ հարգանքն անփոփոխ պահպանվում էր: Գրեթե չէին փոխվել նաև հագուստի ձևերը⁵⁰:

Դր. Մալթիքյանը ողջունում է Ն. Սարինյանի քայլը և խոստանաւմ քաղաքի միջացներից գրու գովար տրամադրել գպրոցին։ Սակայն ինչ-ինչ պատճառներով դպրոցն այդպիս էլ չի բացվում։

47 ГАОО, ф. 1, оп. 44, д. 95, л. 3—6.

ГАРО, ф. 91, оп. 1, д. 1340, л. 22

⁴⁹ Նույն տեղում, գ. 1731, թ. 126:

50 Գյուղերում աղամարդկանց առօրյա զգեստն էր կապան, մորիք գդակը, շատ գոտին, պաճուղձած գոլպաները և հայկական տրեխները: Կանայք հագնում էին գույնը, զգանքը և գույնը կամ բաշկինակ: Աղջկան զգեստներ, զիսներին կապում կամ «փոշի» կոչվող զիսաշորը կամ թաշկինակ: Աղջկերի շրջագագեստները նույն էին, միայն զիսներին կրում էին զարդարված ֆենքների՝ ուղարկեած նույն էր և ոսկյա այլևալլ շարոցներ:

Φωτισμένη ράνταρκη τοποθετήθηκε στην πλατεία της Αγίας Τριάδας, μεταξύ της εκκλησίας της Αγίας Τριάδας και της εκκλησίας της Αγίας Ειρήνης.

Բոլոր գյուղերն ունեին համագյուղական իրենց ընդհանուր հաստատություն՝ ի դեմս եկեղեցու և դպրոցի: Սովորաբար գյուղի կենտրոնում էր գտնվում գյուղապետի շենքը, փոքրիկ ու խղճուկ խանութք և գյուղական շուկան: Գեղջավագի գրասենյակի բակը կամ հրապարակը գյուղի կենտրոնն էր և եկեղեցու հետ միասին ընդհանուր հավաքատեղին: Տեղի իրական տնօրեններն իին գյուղապետն ու ոստիկանը:

Հետագայում գյուղում ավելացավ փոստ, բուժակ կամ բժիշկ, իսկ նրան շրջապատող թևավոր հսկաների՝ քամաղացների կամ հողմաղացների կողքին վերցին տարիներին սկսեցին երևալ շոգեաղաղները:

Դյուլական յուրաքանչյուր ընտանիք համապարփակ տնտեսություն էր վարում։ Քարից, աղյուսից կամ փայտից կառուցված, կղմինդրով կամ թիթեղով ծածկված նրանց տները շրջապատված էին տնտեսությանը անհրաժեշտ օժանդակ շինություններով։ Տնից ոչ հեռու գտնվում էր ձիերի ախոռն ու անասունների գոմը։ Գոմի կողքին դիզվում էր անասունների աղբը, որն օգտագործվում էր որպես վառելիք, հետագայում նաև պարարտանյութ՝ տնամերձ բանջարանոցների համար։ Հիմնական վառելիքը, սակայն, քարածուխն էր, որը սայլերով սկզբում բերվում էր հանքերից, իսկ հետագայում տեղափոխվում էր երկաթուղու կայարանից։ Տան բակի մեջտեղում կախ էր, որը եղներով կամ ձիերով ցորեն ու գարի էին կալսում։ Բակի ծայրին բարձրանում էին խոտի ու հարդի գեղերը, անասունների ձմեռվա կերը։

Գյուղերը հայկական մագիստրատի վերացումից հետո էլ շարունակում էին ազգագրսկան-արյունակցական ու տնտեսական բազմաթիվ հանգույցներով կապված մնալ Նոր Նախիջևանին⁵¹:

կենցաղին քաշատեղյակ Ե. Ծահազիզը,—քաղաքում ներկայումս մնացել է միայն ռփօշին», որ մի մնացածէ, հաստ նկարին կտոր է, որին մի տեսակ զլիարկի ձև տալով, վարպետորին ասեղներով ամրացնելով ու մազերը նորա տակ հավաքելով, զնամ կապում են զլիներին Նախիջևանի պառավները (Ե. Ծահազիզ, նոր Նախիջևանը և նորնախիջևանցիք, էջ, 177):

51 Պատկերացում կազմելու համար բազում ձևերով և ուղիներով կատարվող պայմանագրից հիշատակենք մեկ փաստ: Միջին ունեցվածքի տեր Ղազարոսը նոր նախիչառ-Նի 24-րդ գծի վրա, ցորենի շտեմարանների ու խոտի շուկայի մոտ, զիսավորապես գյուղի հաճախորդների համար բացում է իշեանատան նման մի հաստատություն, որի անվանվում էր «Ղազարոս աղայի դվոր»: Այնտեղ էին գալիս գյուղի բնակիչները, ցորենի փոխադրող հարյուրավոր սալլեր: Իշեանատունը սալլահատակ ընդարձակ բակ ուներ, որի ծայրում տեղափորված էին ախոռը և խոտի դեղերը: Մեծ շենքում տեղափորված էին նաշարանը և հաճախորդների գիշերելու երկու ընդարձակ սենյակ: Պատվավոր հայութերի համար տեղ էր հատկացվում երկրորդ շենքում, ուր ապրում էր Ղազարոսի ընդարձակ սենյակը:

• Քաղաքից և գյուղերից բացի, որպես ինքնուրույն միավոր հայկական գաղութի մի մասն էր կազմում Ս. Խաչ վանքը. Հարկավ այնտեղ որոշ քանակ կազմող ազգաբնակչություն չկար և այն նախիջևանցիների համար հոգևոր կենտրոն, ուխտատեղի և յուրատեսակ հանգստավայր էր: Վանքը՝ ոսկայն, ուներ դպրոց, իր առանձին հողատարածություններն ու տննեսությունը: Ս. Խաչի մոտ առաջացել էր համանուն փոքր մի ավան, որի հետ վանքը քիչ էր կապված:

Վանքի 400 դեսյատինից ավելի արգավանդ հողերում վար ու ցածր
էր արվում։ Ուներ այդի, բանջարանոց և ութ դեսյատին զբաղեցնող ոչ
մրգատու ծառերի մի պարտեզ՝ զբոսանքի համար։ Վանքապատկան հո-
ղերում ամառանոցի համար կային շորս փայտյա տներ։ Վանքի պար-
տեզում էր գտնվում 13 սենյակից և օժանդակ այլ հարմարություններից։
բաղկացած դպրոցի շենքը։ Վանքն ուներ այլ հարակից տներ ու հար-
մարություններ⁵²։ Ս. Խաչ վանքը սերտորեն կապված էր նոր Նախի-
ջևանի։ Հետո, ավելի պակաս շափով՝ հայկական գյուղերի։

* * *

Մեր պատկերացումը գյուղատնտեսության մասին ամբողջական չէր լինի, Եթէ շանդրադառնայինք հողային հարաբերություններին։ Մանավանդ, ինչպես հայտնի է, անցյալ դարի առաջին կեսին՝ 1830—40-ական թվականներին հողային հարցը ողջ գողթօջախն ալեկոծող, բուռն ու տեղական հակամարտությունների աեղիք տվող մի այնպիսի խնդիր էր, որն անգամ հատուկ քննության նյութ դարձավ պետական սենատում։ Անհրաժեշտ է հասու լինել, թե հողատարածությունների համար մղվող պայքարն ինչպիսի զարգացում ապրեց ետու փորձյան, ապրանքային հողառորդության դրանում։

Ինչպես հայտնի է, Հայկական գաղութի հիմնադրման ժամանակ պետության կողմից նրան հատկացվեց 87 հազար դես. տարածություն։ Դրանից քաղաքին տրվեց 12 հազար, Հայկական գյուղերին 67, իսկ շուրջ 8 հազար դեսյատին էլ դրվեց Ս. Խաչ վանքի տնօրինության տակ։

Φωηαρφι աղայական դասի՝ գյուղերի հողատարածությունները ամար-
բեր ուղինեռով սեփականացնելու համառ փորձերը վերջացան անհաջո-
ղությամբ։ Դրա փոխարեն կառավարական մի ձեռնարկում հնարավո-
ղություն տվեց ընդարձակելու քաղաքի հողատարածությունները։ Մե-
տաքս ստանալու, շերամապահությունը տարածելու, հետեաբար և թթե-

սպասումը օգնությամբ հետևում էր խոհանոցին ու ճաշարանին: Գյուղացիները մնում էին մեկ կամ երկու օր, կարգավորում իրենց գործերը և վերադառնում (Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, հ. 2, Թեյրութ, 1960, էջ 9):

52 ՀԿՊԱ, ֆ. 54, գ. 2158, թ. 6:

нոր այգիներ գցելու և ոչխարի նրբագեղմ նոր ցեղատեսակ բուժելու համար պետությունը խրախուսում և հողամասեր է հատկացնում գյուղատնտեսության այդ ճյուղերով զբաղվող բնակիչներին։ Այդ նպատակով ՀԻ դարի առաջին տասնամյակներին քաղաքի ունկոր խավի ներկայացուցիչներին գյուղերին պատկանող հողերից 5 հազար դես. տարածություն էր հատկացվել։ Այնտեղ վերջիններս իրենց ագարակներն էին հիմնել։ Պետական խորհրդի որոշմամբ (1851) այդ հողատարածությունը արվում է նրանց ցմահ օգտագործման։ Ագարակատերերը պարտավոր էին յուրաքանչյուր դեսյատինի դիմաց վճարել 5 կոպեկ, սկզբում գյուղերին, իսկ 1880 թ.՝ պետական գանձարան։

Ժամանակի ընթացքում ագարակների թիվը հասնում է տասնյոթի։ Ագարակատեր աղաներն ինքնակամ ընդարձակում են իրենց հողաբժինները։ 1880-ական թթ. սկզբին նախակին 5 հազարի փոխարեն նրանք տիրում էին 6300 դես. տարածության⁵³, նրանցից գնդապետ 2. Արրամովը տակավին 1807 թ. Վորոնեժի նահանգից, թախմուտի գավառից բերում է 17 ընտանիք և բնակեցնում սեփական խուտորում։ Այդպես հիմնվում է իր անունը Կրող Արրամովկա ավանը։ Նրա որդի մայոր Նիկիտա Արրամովն ավանի տարածությունն ընդարձակում, հասցնում է 500 դեսյատինի։ Վերջինիս ժառանգ, Կոլեգիական քարտուղար Բվան Արրամովը 1872 թ. դիմում է նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ նահանգապետին, իրազեկ դարձնելով, որ կատարել է նոր ցեղատեսակի ոչխար բուժելու պետական պահանջը, խնդրում է խուտորի հողամասերը հանձնել իրեն ժառանգաբար։ Նահանգապետը գտնելով, որ պետական պարտավորությունը նրա կողմից չի կատարվել դիմումը թողնում է անհետանը⁵⁴։

Ագարակատեր հայ կալվածատերերը հետագայում դադարում են պետականորեն սահմանված պահանջը կատարել, սակայն դառնում են արդեն շուրջ 8 հազար դեսյատինի հասնող հողերի սեփականատերը։ Դրանով քաղաքին պատկանող հողատարածությունը դառնում է 20 հազար և 1840-ական թվականներից պաշտոնական փաստաթղթերում այդպես էլ հիշատակվում է։

Քաղաքի մեծամեծները հողի համար հայկական գյուղերի դեմ տարվող պայքարի ընթացքում հաճախ օգտագործում էին քաղաքում բնակվող երկրագործների հարցը։ Դեռևս Դոնի ափերին բնակություն հաստատե-

53 «Сборник статистических сведений по Екатеринославской губернии», т. 1, Екатеринослав, 1884, с. 59.

54 ГАОО, ф. 1, оп. 17, д. 60, л. 1, 10.

յու ժամանակ ինքնուրուց տնտեսություն վարելու կարողությունից զուրկ շուրջ 130 երկրագործներ հաստատվում են նոր նախիշեանում։ Նրանք քաղաքում ունեին «Սաբանչի» անունով մի փոքր համայնք, այդ պատճառով էլ հաճախ անվանվում էին սաբանչիներ։ Սաբանչիները օգտվում էին քաղաքապատկան հողերից։ Քաղաքի մեծամեծները հասնում են այն բանին, որ 1886 թ. գյուղերին պատկանող Սամբեկի գետափնյա արգավանդ տարածքից կտրում են 5 հազար հեկտար հողամաս, հիմնում կատարինե կամ եկատերինովկա անունով գյուղ և այնտեղ ընկեցնում քաղաքաբնակ երկրագործներին⁵⁵։ Հինգ հայկական գյուղերին պատկանող Սամբեկի տափաստաններից կուրյաշի կոստա ավանին 840 դ. հատկացնելու փաստը նկատի առնելու պարագայում հասկանալի է դառնում, որ գյուղերի հողատարածությունները գգալի շափով պահանջել էին։

Դրա հետ մեկտեղ կատարվել էր նաև հակառակ պրոցեսը։ Հայկական գյուղերը տարրեր հանգամանքների բերումով հարկադրված լինելով հողատարածություններ գիշել, միաժամանակ այլևայլ ուղիներով, մասնավորապես հարևան կազակներից գնելու միջոցով լրացրել են հողի պակասը։ Դրա շնորհիվ ՀՀ դ. սկզբներին հայկական գյուղերի հողատարածություններին պահանջը բնորդները մնում էին անհետանք։ Քաղաքի մեծահարուստների այդ վարչությունը մեծ ալիք էր առաջացնում։

Գաղութի աղայական դասը ոտնձգություններ է կատարում նաև անձեռնմխելի համարվող վանքապատկան հողերի նկատմամբ։ Ս. Խաչառի հողային տարածքի կես մասը, ավելի քան 4 հազար դես. տարրեր եղանակներով միացվել էր քաղաքի հողատարածություններին։ Վանքի բողոքները մնում էին անհետանք։ Քաղաքի մեծահարուստների այդ վարչությունը դգսության մեծ ալիք էր առաջացնում։

ՀԻ դարի 80-ական թվականներից տեղի և Անդրկովկասի կենտրոնական հայկական մամուլն աշխուժարեն արձագանքում է այդ խնդրին, բազմաթիվ հողվածներ հրապարակում, խրապանում նախիշեանցիների դատապարտելի վարքագիծը։ 1884—1885 թթ. «Մեղու Հայաստանի թերթը» հոդվածներ է տպագրում նոր նախիշեանի հողային հարցի վերաբերյալ։ Հոդվածագիրն ընթերցողների ուշադրությունը հրավիրում էր այն հանգամանքի վրա, որ դեռևս 1840—1850-ական թվականներին, օգտվելով վարչական իրավունքներից, քաղաքը վանքից խլել և իր սեփականությունն է դարձրել նրա հողերի պատկառելի մասը։ Վանքը

55 Ե. Շանագիզ, Նոր նախիշեանը և նորնախիշեանցիք, էջ 170, Հմմտ. «Գաղութ», 1914, № 4։

զրկվելով այդ հողերից և դրանցից գոյացող եկամուտներից մեծապէս տուժում է: Անմխիթար վիճակում է գտնվում նաև վանքի դպրոցը: Հողվածագիրը կոչ է անում՝ ուղղել ժամանակին կատարված անքաղաքությունը և վանքին վերադարձնել նրա հողերը⁵⁶:

1893 թ. «Նոր դար» շաբաթաթերթում թղթակիցը հիշատակելով թերթի նախորդ տարվա 13-ում վանքի վարելահողերի վերաբերյալ տպագրված հոդվածը, հանգամանորեն ծանրանում է այդ խնդրի վրա: Նախուելով Դոնի հայ զանգվածի հողօգտագործման մասին, համոզմանք է հայտնում, որ քաղաքի հողերի ավելացումը կատարվել է գերազանցապես վանքի հողերը յուրացնելու հաշվին: Հողվածում ինչևամիտ չի համարվում ու դատապարտվում է քաղաքի պետքերի համար այդ հողերի օգտագործումը առավել նպատակահարմար գտնողների տեսակետը: Ապա հողվածագիրը կոչ է անում դպրոցի կարիքները հոգալու, վանքի եկամուտներն ապահովելու նպատակով ետ վերադարձնել ժամանակին վանքից խլված հողերը⁵⁷:

«Նոր դարը» նույն ձեռվ խարազանում է նախիջևանի քաղաքային վարչության կողմից նաև ս. Լուսավորիչ եկեղեցու բակի ընդարձակ տարածությունը յուրացնելու փաստը⁵⁸: Տեղի «Հույս» թերթը բազմից հանդես է գալիս վանքապատկան հողերը քաղաքի հողատարածություններին միացնելու փաստի դեմ⁵⁹: Զնայած հասարակական կարծիքին, անընդմեջ կատարվող ահազանգումներին Ս. Խաչ վանքին այդպես էլ չի հաջողվում ետ ստանալ իր հողերը:

Այսպիսով, գողովիթի աղայական դասը շարաշահելով հայ համայնքի կառավարչության մեջ իր զեկավար դերը, զարտուի ճանապարհներով կարողանում է յուրացնել հասարակական հողերը և կրկնապատկել իր հողատարածությունները:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում դժվար ու գրեթե անհնարի գարձել հողամասերի հիշյալ ձեռնով ընդարձակումը: Եվ քանի որ Հողը դարձել էր եկամաի հիմնական աղբյուրներից մեկը, բարձրացել նրա արժեքը, հետեաբար և բազմացել էին հողօգտագործման ձեռն ու եղանակները:

Առավել տարածված, ընդունված այդ ձեռից էր հողերը վարձով կամ կապալով տալը: Հողատարածությունների վարձով հանձնելը նոր երկույթ չէր, գոյություն ուներ նաև գաղութի պատմության առաջին փու-

լում, սակայն, սահմանափակ շափերով: Այն ժամանակ բնակչության փոքր թիվը և հողերի առատությունը դեռևս անհրաժեշտ չէր դարձնում վարելահողերը վարձով հանձնելը: Դրա փոխարևն ծավալուն անասնապահությունը պահանջ էր զնում և վարձով տրվում էին միայն խոտհարքներն ու արոտավայրերը: Հայկական մագիստրատը հատուկ կանոններ էր մշակում և հետեւում, որպեսզի գաղթօջախի սահմաններում անխափան կատարվի արոտավայրերի ու խոտհարքների վարձակալության սահմանված կարգը:

Ծտոեֆորմյան շրջանում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, բնակչության աճը, հատկապես կենտրոնական նահանգներից հողալուրկ գյուղացիների հոսքը մեծապես խթանեցին հողի վարձակալման եղանակը: Մասնավորապես վարելահողերը վարձով տալը զարձավ հողօգտագործման նշանակալից ձեռից և եկամտի անհրաժեշտ աղբյուրներից մեկը:

Հայկական գաղութում արդյունաբերության աճը, առևտորի ծավալումն ու խորացումը, առհասարակ, քաղաքային տնտեսության զարգացումը նորանոր հողատարածությունների օգտագործման պահանջ էր զնում: Նոր նախիջևանին պատկանող հողատարածությունները տրվում էին վարձով, ոչ միայն գյուղատնտեսական կարիքների, այլև արդյունաբերական ձեռնարկությունների, պահեստների, առևտորական կրպակների ու խանութների համար և այլ նպատակներով:

Պատկերացում կազմելու համար հիշատակենք լոկ մի քանի փաստ: 1874 թ. քաղաքային վարչությունը 2649 դես. հացահատիկի համար նախատեսված վարելահողը կիսրարային սկզբունքով տալիս է վարձով, յորպաքանչյուր դեսյատինից 1,16 կոպեկ գումար ստանալու պայմանով⁶⁰:

Դրանից մի քանի տարի առաջ քաղաքի 3900 դես. խոտհարքներն ու արոտավայրերը հատուկ պայմանով երեք տարի ժամանակով տրվել էին 2-րդ գիլդիայի վաճառական Մկրտիչ Խազիզովին⁶¹:

60 ՂԱՐՕ. Փ. 91, օպ. 1, լ. 100, լ. 2.

61 ՀԿՊԱ. Գ. 139, գ. 669, թ. 28—29. Քաղաքագույն Մատթեոս Պլոտինիկովը ներքին գործերին մինհստրության և նաւահագային վարչության թուլլավությամբ կնքել էր 13 կետից բաղկացած պայմանագիր: Դոնի ձախ ամբ 3000 դես. խոտհարք և 900 դես. արոտայալը երեք տարի ժամանակով տրվում էին վարձակալությամբ՝ տարեկան 5005 դ. վարձով. Գետերը հորդանալու և հողերի մի մասը ավաղով ծածկվելու պարագայում վարձակալին թուլլատրվում էր վաճառել ավաղը՝ բեռը 5 կոպեկով Վարձակալ Ս. Խազիզովը պարտավոր էր պահանջի դեպքում նախիջևանի քաղաքայիններին խոտհարք հատկացնել սալլից 40 կոպեկ, իսկ 50 սալլից ավելի դեպքում մինչև 70 կ. գանձելով. Մեզ որ արոտավայրերից օգտվող հոտերի տերերից, վարձակալը կարող էր խոչը եղջրաբեր անասունների համար 2,5 կոպ., իսկ ձիու՝ 2 կոպեկ գանձել: Դոնի վտակ ներկի

56 «Մեզու Հայաստանի», 1884, № 85, 1885, № 91.

57 «Նոր դար», 1893, № 45.

58 «Նոր դար», 1891, № 36.

59 «Հույս», 1914, № 4, 17.

Դոսի գետափնյա հողերից 12 հազար սաժեն, սաժենը 10 կ. արժեքով՝ 3 տարով տրվում է (1903) վաճառական՝Պ. Մարտինին՝ բրդալված ձևոնարկությունների համար։ Հարավ-արեւլան երկաթուղու մերձակա հողամասերից տրվում է վաճառականներ Ս. Սալտիկովին և Մ. Պապովին անտրացիտի պահեստներ տեղադրելու համար՝ յուրաքանչյուրից 300 ռ. գանձելով⁶²։

Քաղաքի հողերը կապալով տալն այնպիսի շափեր էր ընդունել, որ դրան անդրադառնում էին անգամ Անդրկովկասի հայկական պարբերականները։

«Նոր դար» թերթում գետեղված հոդվածում հեղինակը խորհուրդ էր տալիս հրաժարվել Դոն գետի ձախափնյա հողերը երկարաժամկետ կապալով Ռոստովի վաճառական Մաքսիմովին հանձնելուց, քանի որ: այդ հողերի «ամեն մի թզաշավը խիստ արժեքավոր է»⁶³։

Հայկական գյուղերը, ճիշտ է, սակավ դեպքերում, սակայն նույնպիս դիմում էին հողօգտագործման այդ ձևին, վարձով տալիս հեռու և անհարմար վայրերում ընկած տարածությունները։ Նրանք այդպես էին վարդում Սամբեկի և Եղեգնուտ վայրի ընդարձակ տարածությունների հետ։ Դրանք չէին բաշխում, այլ ամբողջապես տալիս էին կապարով, առաջինը հեռու լինելու, իսկ երրորդը՝ նրա հետ կապվելու անհարմարության պատճառով։

Հայկական գյուղերը սակայն, ավելի շատ իրենք էին սահմանակից կամ սահմանամերձ քաղաքի տարածություններից վարձակալում։ Մասնավորապես խոշոր ու համեմատաբար սակավահող Զալիթ ու Թոփտի գյուղերը համախ էին դիմում այդ քայլին։ Այսպես, 1906 թ. գյուղերը պատճամավորներ հն առաքում նախիջան և խնդրում 6000 դես. հողերը վարձով տալու համար աճուրդի շանել, այլ դեսյատինը 9 ռ. արժեքով

փարբեկ կամուրջը վարձակալը պարտավոր էր բարվոք վիճակում պահել։ Նրա վրայից անսատնի հոսեր անցնելու համար նա վարձ չպետք է վերցներ, եթե արտավայրերից օգտվելու համար արդեն գանձել էր։

Վաճառքի բարձությունը վարձակալողը կարող էր մեկ օրվա համար ոչխարից գանձել 0,5, իսկ անսատների և ծիռու գլխից՝ 1 կոպ. և ոչ ավելի։ Մ. Խաղիսավը տարեկան վարձի մեկ երրորդը պարտավոր էր օրպես կանխավճար նախապես վճարել։

Նշված պայմանները խախտելու դեպքում նա քաղաքի օգտին պետք է տուղանք վճարեր՝ առաջին անգամ 25 ռ., երկրորդ և երրորդ անգամ կրկնվելու դեպքում՝ 50 և 100 ռուբլի։ Ավելի խախտում կատարելու դեպքում հողը նրանից ետ էր վերցված, և նա գրկում էր իր կանխավճարից։

62 ՀԱՐՕ, Փ. 46, օպ. 1, ձ. 3375, ս. 4.

63 «Նոր դար», 1889, թ. 24։

տրամադրել իրենց⁶⁴։ Ավելի ուշ քաղաքը 700 դես. խոտհարքներ աճուրդի եղանակով, դեսյատինը 13 ռ. գումարով տալիս է հայ երկրագործներին⁶⁵։

Գալթրի և Թոփտի գյուղացիների մի մասը, որոնք համաշխարհային պատերազմից առաջ կապալով քաղաքից վարելահողեր էին վերցրել, խնդրում են իշեցնել վարձը, քանի որ պատերազմի պատճառով պակասել էր աշխատող ձեռքը և դժվարացէլ մշակումը⁶⁶։

Դժվար չէ նկատել, որ հողի նկատմամբ պահանջը մեծանալուն զուգընթաց բարձրանում էին հողերի վարձակալման գները։ 1874 թ. եթե մեկ դեսյատին հողամասը տրվում էր 1,16 կոպ. արժեքով, ապա երեսում տարվա՝ ընթացքում նրա գինը բարձրանում էր շուրջ 7,5 անգամ, հասնում 9 ռուբլու։ XX դ. սկզբին մեկ դեսյատին հողի վարձը հասնում էր մինչև 20—25 ռուբլու։ Մի քանի տարի անց վարելահողի համեմատույթամբ անհամեմատ էժան գնահատվող խոտհարքի վարձակալման մեկ դեսյատինի գինը ևս բարձրանում հասնում է մինչև 13 ռուբլու։

Հողատարածությունների, մասնավորապես վարելահողերի պահանջարկն՝ ավելանալու հետ մեկտեղ նոր նախիջանի քաղաքային վարչությունը աստիճանաբար գները բարձրացնում և այնքան շուրջ է հողերը վարձակալությամբ հանձնում, որ քաղաքի տարեկան եկամուտների հիմնական մասը փաստորեն գոյանում էր այդ աղբյուրից։

Մ. Խաչ վանքն իր հերթին կապարով էր տալիս ոչ միայն վանքապատկան հողերը, այլև արտերի դաշտը, պտղատու այգին, անգամ վանքին տրվող նվերների հանգանակումը։ Վանքը 1881 թ. 300 դես. վարելահող 1205 ռ. գումարով վեց տարի ժամանակով կապարով հանձնում է իրեք գյուղացիների⁶⁷, Մ. Խաչ վանքի վանահայր Կյուրեղ Սրապյանը վանքի կալվածքի արտք մեկ տարով հանձնում է Գրիգոր Խաղիզյանցին, նրանից 50 ֆութ ցորեն ստանալու պայմանով⁶⁸։

Վանքի վանահայրը, այդ նույն տարում, այգու բերքը և վարդավառի օրը առնուուր անողներից վանքին հասանելիք նվերները երեք տարի ժամանակով կապարով տալիս է Մարգար Բալայանցին։ Վերջինս իրավասու էր հսկել պարտեզի բերքին, վերցնել և մատյանում գրանցել նվերները։ Դրա դիմաց պարտավոր էր վճարել 200 ռ. գումար⁶⁹։

64 «Պրիզովսկի կрай», 1906, № 221.

65 «Դաղութ», 1914, № 19։

66 «Դաղութ», 1915, № 38։

67 ՀԿՊԱ, թ. 54, գ. 1767, թ. 2։

68 Նույն տեղում, թ. 20։

69 ՀԿՊԱ, թ. 54, գ. 1768, թ. 3։

XX դարի սկզբներից, մասնավորապես ստոլիպինյան ագրարային քաղաքականության հետևանքով սկսվեց նաև հողամասերի վաճառքը: Այսպես, նոր Նախիջևանի քաղաքագլուխ Խաթրանովը 1900 թ. դիմում է Դոնի մարզի ատամանին և խնդրում հաստատել քաղաքային խորհրդարանի վճիռը՝ Մ. Պոպովին 4800 ք. սաժեն հողամաս վաճառելու մասին: Քաղաքագլուխը հողի վաճառքի շահավետությունը հիմնավորում էր նրանով, որ հացահատիկ ցանելու դեպքում չնշին եկամուտ էր ստացվում, իսկ այն վաճառվել է 1536 ռ. գումարով⁷⁰:

Բրդալված ձեռնարկություններն ընդարձակելու համար, «Մելքոնով-Եղովով» ընկերությունը քաղաքի գետափնյա տարածություններից գնումներ է կատարում: Մելքոնով-Եղովովներն ավելի քան տաս տարի, դեսլատինը 60 ռ. գումարով վարձակալել էին այդ հողամասը: Նրանք խիստ բարձր գնով, դեսլատինը 2000 ռ. գումարով ցանկանում էին սեփականացնել այդ հողերը: Քաղաքային վարչությունը համաձայնում է կատարում է վաճառքը⁷¹:

Ներքին գործերի մինիստրությունը շի վավերացնում այդ գործարքը, պատճառաբանելով, որ երկու ձեռնարկատիրոջ շատ մեծ տարածություն է տրվում: Դրանից բացի, այդ տարածություններն ապագայում անհրաժեշտ են լինելու քաղաքին, ձեռնարկատերերն էլ կարող են վարձելու միջոցով օգտվել դրանցից⁷²:

Նույն տարում՝ 1906 թ. Զալթը, Թոփտի և Մեծ Սալա գյուղերը դիմում են քաղաքային վարչություն և խնդրում վաճառել իրենց գյուղերին սահմանակից քաղաքին պատկանող հողերը: Զալթը գյուղը ցանկանում էր գնել 4000, Մեծ Սալան՝ 3000 դեսլատին: Առաջինը յուրաքանչյուր դեսլատինին վճարում էր 200 ռ., իսկ Մեծ Սալան՝ 220 ռ. գումարը⁷³:

Ի դեպ, ուշագրավ է, որ քաղաքի մոտ, գետափնյա հարմարավետ վայրի հողի դեսլատինը, քաղաքից հեռու ընկած, գյուղերի սահմանում դանվող հողի դեսլատինից տաս անգամ թանկ էր գնահատվում:

Տեղական թերթերում դրվատվում է Թոփտիի գյուղապետ Գայեկյանի եռանդուն գործունեությունը, որն իրականացնում է գյուղական համայնքի վճիռը՝ դատարանի միջոցով գյուղացիներից ետ է վերցնում հասարակությունից սեփականացրած հողերը⁷⁴:

⁷⁰ ГАРО, ф. 41, оп. 1, д. 568, св. 15, л. 1.

⁷¹ «Приазовский край», 1906, № 41.

⁷² Նույն տեղում, № 104:

⁷³ Նույն տեղում, № 65, 70:

⁷⁴ «Таганрог», 1914, № 23:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ հողերի առուծախը Դոնի հայերի շրջանում, մասնավորապես գյուղերում, ուր, ինչպես նկատեցինք ամուր էր համայնքը, լայն տարածում չստացավ:

Այսպիսով, հայ զանգվածի գյուղական առօրյային, նրա տնտեսական գործունեությանը մոտիկից ծանոթանալը հասկանալի է դարձնում նրա մասին ժամանակի պաշտոնական վավերագրերի արձանագրված հետեւթյունը:

Եկատերինոսլավի նահանգի գյուղատնտեսությանը նվիրված վիճակագրական վարչության տեղեկագրերում շեշտվում է հայերի շրջանում հողերի առատության, այն մեծ շափով վարձակալությամբ տալու, հողատարածության համեմատ ուսւական բնակավայրերից կրկնակի պահանակությունը պահպանում էր հանգամանքը⁷⁵:

Հարկ է նշել, որ ազատ ֆերմերային տնտեսությունն այն հիմքն էր, որի վրա խարսխվում էր նորնախիջևանցիների բարվոք վիճակը: Այդ հանգամանքն իր հերթին պայմանավորում էր գաղութի վերնախավերի ակտիվ նախաձեռնությունը թե՛ գյուղատնտեսության, թե՛ արդյունաբերության և թե՛ առևտրի ասպարեզում:

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ճորտատիրության վերացումը և երկաթուղիների կառուցումն ամբողջ երկրում խթանեցին արդյունաբերության զարգացումը: Խոշոր տեղաշարժեր կատարվեցին ուսւական կայսրության հարավային երկրամասում, մասնավորապես Դոնի ավազանում: Այստեղ բնական հարմար պայմաններից բացի արդյունաբերության աճին նպաստում էր ազատ վարձու աշխատանքի օգտագործումը, թեպետև ուզմակազմակացին ավանդական կարգը ինչ-որ շափով արգելակող դեր էր կատարում:

Դոնի ավազանում զարգացավ հատկապես լեռնահանքային, մետաղածուլական, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքները մշակող արդյունաբերությունը: Մեծ թափ ստացավ Դոնբասի ածխարդյունաբերությունը: Դոնեցկի ավազանը 1880 թ. արդեն տալիս էր երկրում արտադրվող քարածիխ 70%-ը: Ամբողջ երկրում հայտնի դարձան Պաստուխովի շուգունածուլական գործարանը, Քուշնարյանի և Ասմոլովի ծխախոտի ֆաբրիկաները, Պարոմոնովի ալրադացը և այլ խոշոր ձեռնարկություններ:

⁷⁵ «Сборник статистических сведений по Екатеринославской губернии», т. 1, с. 113—117, 145.

Ոեփորմից հետո օտարերկրյա կապիտալի ներհոսքը դեպի Ռուսաստան ուժեղացավ, իսկ դարի վերջին ավելի մեծ շափեր ընդունեց: Դոնի ավազանում իրեն զգացնել էր տալիս ֆրանսիական և բելգիական կապիտալը, որը հիմնականում ներդրվում էր ածխահանքային և մետաղաձուլական ձեռնարկություններում, տրանսպորտի միջոցների շինարարության մեջ:

Խոշոր ֆաբրիկակործարանային արդյունաբերությունը որքան էլ առաջընթաց ապրեց, այնուամենայնիվ չկարողացավ տիրապետող դառնալ: Հարավում և Դոնի ավազանում իր ամբողջության մեջ գերազիւր պատկանում էր գյուղատնտեսական մթերքները վերամշակող մանր արդյունաբերությանը:

Դոնի մարզում արդյունաբերությունը զարգանում էր հատկապես հինգ հիմնական քաղաքներում՝ Ռոստովում, Նովոչերկասկում, Նախիչեվանում, Տագանրոգում և Ալեքսանդրովսկ-գրուշևսկում⁷⁶: Նրանցից յուրաքանչյուրը արդյունաբերության զարգացման իր յուրահատկություններն ուներ, իսկ Ռոստովը, որպես խոշոր արդյունաբերության կենտրոն, ավելի ու ավելի էր առանձնանում:

Նոր Նախիչեանում շարունակում էին առաջադիմել դեռևս XIX դ. առաջին կեսին արմատավորված արտադրության ճյուղերը: Դրանցից էին նախապես արհեստագործական հիմքի վրա ստեղծված, Դոնի հայության համար ավանդական դարձած ճարպի մշակման, բրդի լվացման, կաշվի, ծխախոտի, կղմինդրի, ալյուրի արտադրությունը:

(ա) Ճարպահալ գործարաններ. Հայկական գաղութի արդյունաբերության ինքնատիպ և եկամտաբեր ճյուղերից է եղել ոչխարի ճարպի ստացման և իրացման գործը:

Ճարպահալ գործարանները կամ սալղանները քաղաքի հյուսիսային մասում տեղավորված ընդարձակ բակերով փայտյա պարզունակ շինություններ էին: Այդ, այսպես կոչված, գործարաններում ոչխարը մորթում էին, ճարպը հալում ու տակառները լցնում, մորթին շորացնում, ճարպագորկ միսը նախնական մշակման ենթարկում և ապա հանձնում տիրողը: Գործարանատերը մորթած ամեն մի ոչխարի համար ստանում էր 20—30 կ. վարձ: Մեկ ոչխարից սովորաբար ստացվում էր 3 ռ. ճարպ⁷⁷, Գործարանների թիվը մեծ չէր, հասնում էր տասի, որոշ տարիների՝ մինչև տասներեքի: Գործարաններում բանվորների քանակը փոքր էր: 1860-ական թվականներին ամեն մի գործարան ուներ 20—25, իսկ XX դարի սկզբներին՝ մինչև 50 աշխատող:

76 «История Донского края», Ростов-на-Дону, 1971, с. 94—95.

77 «Նոր դար», 1888, № 126.

Գործարանների կարողությունը, ճարպի արտադրությունը հետևողականորեն մեծանում էր: Այսպես, Նոր Նախիչեանի սալղաններում 1863 թ. արտադրվել է 347,830 ռուբլու, 1872 թ. 403,256 ռ., 1884 թ. 590,400 ռ., իսկ 1903 թ.՝ 715000 ռուբլու ճարպ⁷⁸: Այլ խոսքով, քսան տարվա ընթացքում արտադրանքը կրկնակի ավելացել էր, սակայն գործարանների թիվը մնացել էր նույնը: Իշանակում է ճարպի արտադրության ավելացումը կատարվում էր ոչ թե գործարանների թիվի ավելացման, այլ արտադրության ընդարձակման շնորհիվ: 1876 թ. տաս ճարպահալ գործարաններում աշխատում էր 198, իսկ 1903 թ. ինը գործարաններում՝ 570 բանվոր: Աշխարի մորթին ու ճարպի ստացումը սալղաններում կատարվում էր ձեռքի աշխատանքով, ուստի և արտադրության ընդլայնումը կատարվում էր բանվորների թիվի մեծացման հաշվին: Դրանք ավելի շուտ մանուֆակտուրային ձեռնարկություններ էին: Արդյունաբերության այս ճյուղը որշակի զարգացում ապրեց հատկապես Դոնի հայերի շրջանում: Նոր Նախիչեանը դարձել էր ճարպի արտադրության ճանաչված կենտրոն: Բավական է սաել, որ անասնապահական թեքում ունեցող եկամտերինույալի մարդոջ նահանգում արտադրվող ճարպի մեկ երրորդը տալիս էր Նախիչեանը: 1870 թ. նահանգի 54 ճարպահալ գործարանները, ուր աշխատում էր 800 բանվոր, արտադրել էին 753,805 ռ. ճարպ: Դրանից 245610 ռ. արտադրանքը կամ մեկ երրորդը բաժին էր ընկնում Նախիչեանի 271 բանվոր ունեցող տասներկու սալղաններին⁷⁹:

Ճարպահալ գործարաններում մորթվում էր հայկական գաղութի մանր եղջյուրավոր անասնապահությամբ զբաղվող տնտեսատերերի ոչխարը, սակայն ճարպի հումքի մեծ մասը ստացվում էր դրսից: Դոնի տափաստաններում, մասնավորապես անասուններով առավել հարուստ Հյուսիսային Կովկասում ճարպատու ոչխարի ամբողջ հոտեր էին պահում: Նրանք աշնանը տասնյակ հազարների հասնող մանր եղջյուրավոր անասուններ քշում էին Նոր Նախիչեանի սալղանները: Յափոք, ստուգգ տվյալներ շեն պահպանվել Նախիչեանի գործարաններում մորթվող ոչխարի գլխաքանակի վերաբերյալ: Հայկական գաղութի ճանաչված գործիչներից Հ. Պապասինյանը և ուրիշներ նշում են, որ Նախիչեանի սալղաններում տարեկան մորթվում էր շուրջ 500—600 հազար գումի ոչխար⁸⁰: Գործարաններում արտադրված ճարպի դրամական ար-

78 ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 156, թ. 154, ЦГИА СССР, ф. 1284, оп. 69, գ. 1873, д. 186, л. 31, оп. 223, г. 1885, д. 174, л. 27. ГАРО, ф. 91, оп. 4, д. 78, л. 1.

79 ЦГИА СССР, ф. 1284, оп. 67, д. 169, г. 1871, л. 51, 63.

80 «Նոր դար», 1888, № 126.

ժեքը հնարավորություն է տալիս թեկուզ մոտավոր ձևով գաղափար կազմելու այնտեղ մորթվող ոչխարի քանակի վերաբերյալ:

XIX դ. վերջին և XX դ. սկզբներին մեկ ոչխարից ստացված ճարպի դրամական արժեքը կազմում էր 2, լավագույն դեպքում 2 ռ. 50 կոպ.՝ 1903 թ. նոր նախիշեանի գործարանները արտադրել են 715 000 ռ. ճարպ: Նշանակում է մորթվել է վիթխարի քանակի, 300 հազարից ոչ պակաս մասը եղջուրավոր անասուն:

Ճարպի հումքի հիման վրա հիմնվում են մոմ, ավելի ուշ նաև օճառ արտադրող ձեռնարկություններ: Մոմի արտադրությունը կատարվում էր երկու-երեք, լավագույն դեպքում հինգ արհեստավորական բնույթի գործաներում, ուր աշխատում էին մեկ կամ երկու բանվոր: Մոմի ամենից ավելի մեծաքանակ արտադրանքը եղել է 1879 թ., երբ ճարպամոմի 12 բանվորներով աշխատող հինգ ձեռնարկությունները տվել են 21.350 ռուբլու արտադրանք⁸¹: Մյուս տարիների արտադրանքը, սուլորաբար չէր անցնում ութ հազար ռուբլուց:

Հետագայում ճարպամոմին գուգահեռ, թեկուզ և չնչին քանակով սկսվում է նաև մեղրամոմի արտադրությունը: 1903 թ. գործում էր մեղրամոմի մի փոքր ձեռնարկություն, որը տալիս էր երկու հազար ռուբլու արտադրանք⁸²: XX դարի սկզբներից էլեկտրական լրսավորության անցնելը կասեցրեց մոմի արտադրության ընդլայնումը, նրա հեռանկարային գարգացումը:

Օճառի գործարանային արտադրությունը հիմնվել է համեմատաբար ուշ, 19-րդ դ. 70-ական թվականներին, սակայն արագործն աճել, ընդարձակվել է: 1879 թ. օճառի երկու ձեռնարկությունները տվել են 20 400 ռ., իսկ 1886 թ. 50 000 ռուբլու արտադրանք⁸³: 1903 թ. օճառի սրբեն յոթ գործարանները թողարկում էին 260 000 ռ. արտադրանք⁸⁴:

(բ) Բրդապահ ձեռնարկությունները, որոնց թիվը թեև մեծ չէր և հասնում էր հինգ-վեցի, տնտեսական կարևոր նշանակություն ունեին: Դոնի գնացափին հիմնած այդ գործարաններում բուրդը նախնական մշակման էր ենթարկվում, լվացվում, մաքրվում և տեսակավորվում: Լվացման ընթացքում բրդի քաշը խիստ պակասում էր, սակայն դրա փոխարեն լավանում էր որակը, կրկնակի շափով բարձրանում գինը: Բրդի լվացումը ծանր ու աշխատատար գործ էր: Այն կատարվում էր ձեռքով, դրա համար ու աշխատատար գործ էր: Այն կատարվում էր ձեռքով, դրա հա-

81 ЦГИА СССР, ф. 1284, оп. 69, д. 221, л. 35.

82 ГАРО, ф. 91, оп. 4, д. 78, л. 1.

83 ЦГИА СССР, ф. 1284, оп. 69, д. 221, л. 35, оп. 223, д. 175, л. 47.

84 ГАРО, ф. 91, оп. 4, д. 78, л. 1.

մար էլ աշխատողների քանակը մեծ էր: Ցուրաքանչյուր գործարանում բանվորների թիվը հասնում էր 150—200-ի: Հիմնականում աշխատում էին կանայք:

Բրդալվաց ձեռնարկություններից միայն Մելքոնով-Եղոկով արտադրական-առևտրական հայտնի ֆիրման անցել էր բրդի շոգեմեքենացական մաքրման: Բրդի մշակման արտադրությունը շահավետ գործ էր: Բավական էնշել, որ 1903 թ. նոր նախիշեանի 84 գործարանների ու ֆաբրիկաների մեջ ամենից ավելի բարձր արտադրանքը (900 000 ռուբլու) տվել են հինգ բրդալվաց ձեռնարկությունները:

Պաշտոնական տվյալների համաձայն, նոր նախիշեանի բրդալվաց ձեռնարկություններում մաքրվում և տեսակավորվում էր տարեկան շուրջ 300 հազար փութ բուրդ: Ռուսաստանի բրդի արտադրության հիմնական կենտրոնը, ուր արտադրանքը հասնում էր վիթխարի շափերի, համարվում էր Ռուստովը⁸⁵: XIX դարի վերջերից Ռուսավորության արտադրական—տնտեսական մի ամբողջություն էին կազմում: Այդ պատճառով էլ հաճախ «Ռուստով քաղաք» հասկացողության մեջ մտնում էր նաև նոր նախիշեանը: Այստեղ բրդի արտադրությունն ավելի էր զարգացած, քան Ռուստովում: Հետեւաբար ամբողջ երկու բրդի արտադրության մեջ նշանակալից էր նաև նախիշեանի դերը:

Նախիշեանում կազմակերպվում է նաև բրդի շոգեներկման արտադրությունը⁸⁶:

գ) Կաշեգործությունը հայերի հնից եկող պահանդական զբաղմունքներից է եղել: Տակավին Ղրիմի թերակղզում բնակվելու ժամանակ, Ղոնի ափերին հաստատվելու առաջին տասնամյակներին, ինչպես նաև հետագայում հայ զանգվածը լայնորեն զբաղվում էր կաշեգործական արհեստներով: Այդ հիմքի վրա էլ առաջացավ կաշվի գործարանային արտադրությունը: Ճարպահալ գործարաններում և սպանդանոցներում մորթվող անասունների կաշին առատ հումք էր արտադրության այս ճյուղի առաջարկմության համար:

Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ կաշեգործությունը ետուեփորմյան շրջանում նկատելի զարգացում շապրեց: Գործարանների թիվը երկու-միշտ շավելացավ, իսկ ամենաբարձր արտադրանքը շանցավ 50 հազար ռուբլուց (1886)⁸⁷: 1903 թ. կաշվի երկու գործարանները տալիս էին ընդամենը 20 հազար ռ. արտադրանք⁸⁸, կամ 1862 թ. մակարդակից (21000

85 «Ежегодник департамента земледелия», СПб., 1910, с. 469.

86 «Сборник области Войска Донского статистического комитета», вып. III. Новочеркаск, 1902, с. 100.

87 ЦГИА СССР, ф. 1284, оп. 223, г. 1887, д. 175, л. 47.

88 ГАРО, ф. 91, оп. 4, д. 78, л. 1.

ռուբլու) ցածր⁸⁹, իսկ 1815 թ. արտադրությունից (17 500 ռուբլու)⁹⁰ միայն մի փոքր ավել արտադրանք:

Դա բացատրվում է նրանով, որ կաշեգործությունը հայկական գաղութում խարսխված մնաց արհեստագործական-տնայնագործական հիմքի վրա։ Այդ տարիներին Պետերբուրգում և Մոսկվայում գործում էին ժամանակի առաջավոր տեխնոլոգիաներ։ Վերջիններս կլանում էին կաշեգործական խոչոր ձեռնարկություններ։ Վերջիններս կլանում էին կաշեգործական հումքը, բարձրորակ կաշի արտադրում և շուկայից դուրս մղում մանր ձեռնարկությունների ցածրորակ արտադրանքը։

դ) Աղյուսի, կրթիկների արտադրությունը կապված լինելով շինարարության պահանջների հետ, բնականաբար, հիմնվել է գաղութի սկզբնավորման առաջին տասնամյակներում։ Հետագայում շինարարության ծագալման հետ մեկտեղ ստահճանաբար բնդրածակվել է արտադրությունը։ Կավաճողից ստացվող շինանյութերի այս նյուղի արտադրությունը լայն առումով շուկայական նպատակներ չի հետապնդել։ Այն արտադրվել է տեղի բնակչության կարիքները բավարարելու համար, կամ էլ սպառվել է արտադրության մոտակա բնակավայրերում։ Այդ պատճառով էլ աղյուսի և կղմինդրի արտադրությունը տեսական ու կազմուն բնույթ է կրել։

Հատկանշական է, որ հայկական գյուղերը, բացառությամբ փոքր Սալայի, ունեցել են աղյուսի սեփական գործարաններ⁹¹ և ազատ են եղել այն ձեռք բերելու համար նոր նախիչևան մեկնելու անհրաժեշտությունից:

Աղյուսի արտադրությունը հետևողականորեն ընդարձակվել է: Սակայն կղմինդրի արտադրությունը մեղ հետաքրքրող ժամանակաշրջանում աստիճանաբար նվազել է՝ շենքերի տանիքների կղմինդրը հաճախ թիթեղով փոխարինելու հետևանքով: 1863 թ. աղյուսի 9 գործարանները թողարկել են 57.560 ռուբլու, իսկ 1884 թ. արդեն տասնմեկ գործարանները 98.500 ռ. արտադրանք: Կղմինդրի արտադրությունը 1863 թ. հասել է 4,500 ռ., իսկ քսան տարի անց ոչ թե բարձրացել, այլ իջել է 610 ռուբլու⁹²:

Զուգահեռաբար զործել, սակայն ավելի սահմանափակ քանակի արտադրանք են տվել կրի և հախճասաւլի ոչ մեծ թվով ձեռնաբակությունները: 1863 թ. կրի արտադրանքը եղել է 12.540 ոութլու, իսկ հախճասաւլի-

⁸⁹ ЦГИА СССР, ф. 1281, оп. 6, г. 1863, д. 63, л. 94.

90 Նույն տեղում, ց. 11, գ. 134, թ. 408:

⁹¹ «Алфавитный список населенных мест области Войска Донского», с. 59, 281, 561, 633.

92 24494, ф. 139, ч. 156, р. 154, ЦГИА СССР, ф. 1284, оп. 223, г. 1885, л. 174, л. 27.

100

Նը՝ 1286 ռուբլու։ Քսան տարի հետո՝ 1884 թ. կրի արտադրանքն իշել է 2 000 ու., իսկ համասալինը՝ բարձրացել, հասել է 32500 ռուբլու⁹³։ Թեև աղյուսի, կղմինդրի, կրի արտադրանքի գրամական գումարը բարձր չէր, սակայն արտադրանքի քանակը մեծ էր, ուղղակի զները բավականին ցածր էին։

ե) Սխախոտի արտադրությամբ Դոնի Հայերը սկսել են զբաղվել միայն անցյալ դարի կեսերից: Չորս-հինգ հայ վաճառական արդյունաբերուներ հիմնել էին իրենց ֆաբրիկաները: Այնտեղ ստացվում էր գիրազանցապես թուրքական մինչև հինգ տեսակի ծխախոտ: Արտադրանքը, ևնելով դրամական արժեքից, փոփոքը չէր: Նոր Նախիջևանի ծխախոտի ֆաբրիկաներում 1863 թ. արտադրվել է 20,909 ոռություն, 1873 թ. 107, 629 ռ., իսկ 1886 թ. 275 հազար ոռություն ծխախոտ⁹⁴: Հումքը ստացվում էր Հյուսիսային Կովկասից, մասամբ՝ արտասահմանից:

XX դարի սկզբներից նոր Նախիջևանի ֆարբիկագործարանային արդյունաբերությանը վերաբերող փաստաթղթերում չենք հանդիպում հիշատակությունների ծխախոտի արտադրության մասին։ Արտադրության այդ ճյուղը, Հավանաբար, վերանում է, չդիմանալով նոստովի խոչըն ֆարբիկաների մրցակցությանը։ Խոստովում ծխախոտի արտադրությունն անհամեմատ ավելի զարգացած էր, այնտեղ կային լայն ճանաչում ունեցող ծխախոտի մի քանի խոշոր ֆարբիկաներ։

Հայ խոշոր արդյունաբերողները ևս իրենց ձեռնարկությունները հիմնում էին Ծոստովում։ Դրանցից էր 1853 թ. Հիմնված Հ. Ս. Քուշնարյանի՝ Ծոստաստանում և արտասահմանում ճանաչում գտած ծխախոտի փարբեկան։ Ծխախոտի պահանջարկի շնորհիվ Հյուսիսային Կովկասում ծխախոտագործությունը ծավալվում և դառնում է տեխնիկական այդ կուլտուրայի արտադրության հիմնական օջախ։

1899 թ. ստեղծվում է «Հ. Ս. Քուշնարյան ընկերությունը», որի կապիտալը հասնում էր 1,500 000 ռուբլու: Ֆարբիկան արդեն տեղավորված էր չորս հարկանի տեխնիկապես հագեցված շենքում: Ֆարբիկայում աշխատողների թիվը հասնում էր 1500 բանվորի: Ծխախոտի հումքը ստացվում էր Խովքիայից, Ղրիմից, Բեսարբեհայից, Կովկասից: Արտադրանքը լայն սպառում էր գտնում ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտասահմանում՝ Ճապոնիայում, Մանջուլիայում, Չինաստանում և այլ երկրներում: Ֆարբիկան տալիս էր մեծ պարզեների ու մրցանակների արժանացած բարձրորակ արտադրանք: «Քուշնարյան» ֆարբիկայի ծխախոտը 1880 թ. արժանացել էր Մոսկվայի համառուսական գուցա-

93 Նույն տեղում:

⁹⁴ ЦГИА СССР, ф. 1284, оп. 69, д. 186, л. 31, оп. 223, д. 175, л. 47.

Հանդեսի ոսկե մեղալի, Եվրոպայի գիտական ընկերության Փարիզի 1883 թ. առաջին կարգի ոսկե մեղալի: Բարձրագույն պարգևների էր արժանացել Գիկագոյի (1893) և Անտվերպենի (1894) համաշխարհային ցուցահանդեսներում^{95:}

Հ. Քուշնարյանը երեխի դեմք էր ուսական առևտրաարդյունաբերական աշխարհում, հասարակական, բարեգործական բազմաթիվ միջոցառումների մասնակից, այդ թվում նաև հայկական գաղութում:

Ը) Օղու և զինու արտադրության ծաղկուն շրջանը եղել է XIX դարի առաջին երկու տասնամյակները, երբ արտադրանքը հասնում էր մինչև 30 հազար դուզլի: Հետագայում արտադրության այս ճյուղը հետին պլան մղվեց և գրեթե գուրս եկավ շրջանառությունից: XX դարի սկզբներից նրան փոխարինելու եկավ տեխնիկական նպատակներով թողարկվող սպիրտի արտադրությունը: 1882 թ. եկատերինոսավիի նահանգապետի տարեկան հաշվետվություններում նախիշնանի արդյունաբերական ձեռնարկությունների թվում հիշատակվում է զինու մեկ գործարան, որը տալիս էր ընդամենը 5500 ռ. արտադրանք^{96:}

1903 թ. քաղաքն ուներ օղու, գերազանցապես սպիրտի թորման քսան բանվորով աշխատող մեկ ձեռնարկություն, որը տալիս էր 200 հազար ոուրլու արտադրանք^{97:}

Է) Զկնության համար կային բոլոր նպաստավոր պայմանները: Տակավին կայսերական շնորհագրով հայերին Դոն գետում և Ազովի ծովում ձկնորսությամբ գրաղվելու լայն հնարավորություն էր տրվել: Մինչև XIX դարի 40-ական թվականները ձկնորսությունը լայն ծավալ էր ընդունել և դարձել եկամուտի կարևոր աղբյուր: Հետագայում ձկնորսությունը զարգացավ Ռուսական կայսությունում, իսկ նախիշնանում գրեթե դադարեցին զբաղվել արտադրության այդ ճյուղով: 1863 թ. նոր նախիշնանի շորս ձեռնարկությունները տալիս էին 5340 ռ. ձուկ, 1870 թ. 4270 ոուրլու, իսկ 1880 թ. 3335 ոուրլու արտադրանք: Հետագայում վերանում է արդյունաբերական ձկնորսությունը: XX դ. սկզբներին գործում էր միայն մեկ ձեռնարկություն, այն էլ արտադրում էր խիստ սահմանափակ քանակի, ընդամենը 2—3 հազար ոուրլու չորացրած ձուկ՝ ձկնապուխտ^{98:}

95 «Записки Ростовского на Дону общества истории, древностей и природы», т. II, Ростов н/Д, 1914, с. 261—264.

96 ЦГИА СССР, ф. 1284, оп. 223, г. 1883, д. 91, л. 39—40.

97 ГАРО, ф. 91, оп. 4, д. 78, л. 1.

98 ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 156, թ. 154; ЦГИА СССР, ф. 1284, оп. 67, д. 169, л. 51; оп. 70, д. 229, л. 43.

Ը) Մակարոնի արտադրությունն, ինչպես նաև հացահատիկից ալյուր ստանալու համար շոգեաղացներին անցնելը կատարվում է XIX դերկորդ կեսին: Նախիջևանում կար մակարոնի մեկ գործարան, ոուր 1862 թ. տվել է 24 750 ոուրլու, 1882 թ. 4000 ոուրլու արտադրանքը: 1903 թ. գործարանների թիվը մեկով ավելացել է և արտադրանքն էլ հասել է 100 հազար ոուրլու^{99:}

Խ դարի սկզբներից բավական ծավալուն շափերով սկսվում է նաև հրուշակեղենի արտադրությունը: 1880-ական թվականներին երևան են գալիս շոգեաղացները: Նախիջևանն ուներ երկու շոգեաղաց, որոնք թողարկում էին մինչև 200 հազար ոուրլու ալյուր: Հետագայում հայկական գյուղերում ևս հիմնվեցին շոգեաղացներ, որոնց կողքին, սակայն, պահպանվում էին հնից եկող և ավելի մեծաքանակ քամաղացները:

Ծ) Բամբակեղենի արտադրությունը 1863 թ. հասնում էր 35 500 ոուրլու, 1880-ական թվականներին կրնակի շափով իջնում է արտադրանքը, սակայն հետագայում նորից բարձրանում և հասնում մինչև 123 հազար ոուրլու^{100:}

Բամբակեղենի արտադրությանը կից հիմնվում են նաև ներկատներ, ուր տարեկան 15—20 հազար ոուրլու կատրեղեն էր ներկվում:

1830-ական թվականներից նոր նախիջևանում էր գտնվում նավերի վերանորոգման գործարանը, ուր աշխատում էր հինգ հարյուրից ավելի բանվոր:

Արդյունաբերության վերոհիշյալ ճյուղերից զատ կային նաև սննդի և կենցաղային իրերի արտադրության փոքր կարողության բազմաթիվ ձեռնարկություններ:

Արդյունաբերության առանձին ճյուղերին ծանոթանալու հետ մեկտեղ անհրաժեշտ է բերել ընդհանուրացնող տվյալներ տնտեսության այս կարևոր բնագավառի մասին ամբողջական պատկերացում կազմելու, նրա զարգացման օրինաշափություններին հետևելու համար:

Աղյուսակից երևում է, որ նոր նախիջևանում արդյունաբերությունը նշանակալից ծավալ ուներ: Նկատի պետք է առնել, որ աղյուսակում շի արտացոլվել արդյունաբերության մի շարք ճյուղերի արտադրանքը: 1903 թ. տակ նշված են արտադրության հիմնական ավանդական ճյուղերը, իսկ երշիկեղենի, հրուշակեղենի, թղթի, քիմիական և այլ գործարանների ու ֆաբրիկաների արտադրանքը շի արտացոլվել: Այդ ժամա-

99 ЦГИА СССР, ф. 1281, оп. 6, д. 63, л. 94—95; ф. 1284, оп. 223, д. 91, л. 39—40; ГАРО, ф. 91, оп. 4, д. 78, л. 1.

100 ЦГИА СССР, ф. 1281, оп. 6, д. 63, л. 94—95. ГАРО, ф. 91, оп. 4, д. 78.

Արդյունաբերական ճյուղեր	1863 թ.			1884 թ.			1903 թ.		
	Գործարանների թիվը	Արտադրանքի համար գործարանների թիվը	Բանկությունների թիվը	Գործարանների թիվը	Արտադրանքի համար գործարանների թիվը	Բանկությունների թիվը	Գործարանների թիվը	Արտադրանքի համար գործարանների թիվը	Բանկությունների թիվը
Ճարպահալ	9	347,830	—	13	590,400	566	9	715000	570
Թրդալվաց	—	—	—	—	—	—	5	900000	995
Կաշեգործության	1	24,570	—	1	15000	4	2	20'00	32
Աղյուսի	9	57,500	—	11	98500	293	11	120000	567
Կղմինդրի	1	4,500	—	2	610	5	—	—	—
Հախճասալի	1	1,280	—	2	32500	5	—	—	—
Միախոտի	3	20,909	—	2	247732	158	—	—	—
Զկնորսության	4	5,340	—	2	1908	22	1	2000	16
Մակարոնի	1	18,350	—	1	40000	33	2	100000	126
Բամբակեղենի	7	57,240	—	5	22800	17	4	123000	63
Շոգեաղացներ և շրաղացներ	—	—	—	2	62000	30	—	—	—
Օճառի	—	—	—	2	31000	7	7	260000	187
Մոմի	5	8580	—	1	800	1	1	2000	5
Նամերի վերանորոգման	—	—	—	1	400000	519	5	385000	542
Կրի	3	12,540	—	1	2000	7	4	13000	39
Օղու և գինու	—	—	—	1	1305	25	1	200000	26
	44	558639		47	1,545655	1692	52	2940000	3168

Նակ Նախիջևանում կար 3 600 բանվոր ոմեցող 84 գործարան, որոնք տալիս էին 3,129200 ոռուլու արտադրանք¹⁰²:

Ետուեֆորմյան քսան տարվա ընթացքում արդյունաբերական արտադրանքն ավելացել է 2,7, իսկ քառասուն տարում ավելի քան 5,5 անգամ: Երկրորդ քսանամյակում՝ 1884—1903 թթ. կրկնապատկվել են արդյունաբերական արտադրանքը, բանվորների թիվը և կարելի է ասել, գործարանների քանակը: Դա զարգացման բավական բարձր ցուցանիշ է:

¹⁰¹ Սույն աղյուսակը, ըստ Հաշորդական տարիների կազմվել է Հետեւալ աղյոյուրների հիման վրա. ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 156, թ. 154. ЦГИА СССР, ֆ. 1284, օլ. 223, դ. 174, լ. 27. ГАРО, ֆ. 91, օլ. 4, դ. 78, լ. 1.

¹⁰² ГАРО, ֆ. 91, օլ. 4, դ. 78, լ. 1.



Մ. Նախիջևանյան



Ամենափոքր ուսուցածու Վերաբերյալ ար

Նոր Նախիջևանն արդյունաբերության հետևողական աճից ու մասնագիտացումից զատ, արդյունաբերության ընդհանուր ծավալով, համախառն արտադրանքի քանակով երկրամասի կարևոր կենտրոններից մեկն էր Հանգիսանում: 1880-ական թվականներին Ռուստով քաղաքի արդյունաբերության արտադրանքը, կլորացրած թվերով, հասնում էր 13,5 մլն ռ., Եկատերինոսալավինը՝ 1,700 հազարի, իսկ Նախիջևանինը՝ 1,5 մլն ռուբլու: Նահանգի մյուս քաղաքների ֆաբրիկագործարանային արտադրանքը չէր մոտենում անգամ մեկ միլիոն ռուբլու: Ռուստով քաղաքի արդյունաբերական արտադրանքի առյուծի բաժինը՝ շուրջ 12 մլն ռուբլին գոյանում էր ծխախոտի ֆաբրիկաներից, որոնցում, ինչպես նկատեցինք, ծանրակշիռ էր հայ արդյունաբերողների դերը:

Այսպիսով, ոչ միայն 1860—70-ական, այլ անգամ 80-ական թվականների վերջերին նոր Նախիջևանն իր արտադրանքով, Ռուստովից ու Եկատերինոսալավից հետո հաջանգի երրորդ խոշոր քաղաքն էր:

Ամենակի պատահական չէ, այլ ընդհակառակը հատկանշական չէ, որ Վ. Ի. Լենինը «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» իր նշանավոր աշխատության մեջ եվրոպական Ռուսաստանի ֆաբրիկագործարանային արդյունաբերության կարևորագույն կենտրոնների շարքում նշում է նաև Դոնի Նախիջևան, նովոչերկասկ և Ռուստով քաղաքների անունները¹⁰³:

Հարավային Ռուսաստանի, մասնավորապես Դոնի ավագանի արդյունաբերության զարգացման առանձնահատկությունները ակնառու կերպով դրսուրվում են նոր Նախիջևանում: Ինչպես արդեն նկատեցինք արտադրության առանձին ճյուղերին անդրադառնալիս, այնտեղ զարգանում էր գյուղատնտեսական արտադրանքը վերամշակող արդյունաբերությունը: Դրա, մասնավորապես որոշ ճյուղերի (ճարպի, բրդի և այլն), արտադրության մեջ Դոնի հայերի մասնագիտացումը լայն ճանաշում էր գտնել:

Ռուստովն աստիճանաբար դառնում էր ծխախոտի, ալրազաց, մեռատաղածովական, քիմիական և զարգացման առավել մեծ հեռանկարներունեցող արտադրության ուրիշ ճյուղերի կենտրոն: Այնտեղ զարգանում էր խոշոր, իսկ հայկական գաղութում տարածում էր գտել մանր ու միաշին արդյունաբերությունը: Երկու հարեւան քաղաքների մասնագիտաժաման առանձնահատկությունները պարզորոշ երևում են թեկուզ այդ քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունների, նրանցում աշխատող բանվորական ուժի և արտադրանքի համեմատության գեպքում: 1870 թ.

103 Վ. Ի. Լենին, օլժ, հ. 3, էջ 771:

Նախիչևնում կար 35 փոքրածավալ ձեռնարկություն, որոնցում աշխատում էր 460 բանվոր: Այդ գործարանները տարեկան թողարկում էին 412 հազար ոուրլու արտադրանք: Ռոստովի 48 գործարանները, որտեղ գրադարձ էր 922 բանվոր, տալիս էին ավելի քան 1,851 հազար ոուրլու արտադրանք¹⁰⁴: Այսպիսով, թեև Ռոստովում գործարանների քանակը նախիչևնի ձեռնարկություններից ավել էր՝ ընդամենը մեկ քառորդով, բանվորների թիվը կրկնակի, սակայն արտադրանք տալիս էր 4,5 անգամ ավել:

Մեկ տասնամյակ անց՝ 1880 թ. նոր նախիչևնում գործարանների թիվը թեև մեկով ավել էր, սակայն Ռոստովի արդյունաբերական ձեռնարկությունները տալիս էին 8 անգամ ավել արտադրանք¹⁰⁵: Նման համամասնությունը պահպանվեց և ավելի ու ավելի որոշակի դարձավ հետագա տասնամյակներում:

Դոնի հայկական գաղթօջախն իր ներփակ կյանքով ու համեստ հնարավորություններով ի վիճակի չէր խթանելու խոշոր արդյունաբերության զարգացումը: Այդ պատճառով էլ ոչ միայն օտարազգի, այլև գաղութի հայ խոշոր առևտրարդյունաբերողներն իրենց կապիտալները ներդնում և ձեռնարկություններն ու գրասենյակները հիմնում էին տնտեսական-արդյունաբերական անհամեմատ ավելի լայն պայմաններ ընձեռող վայրերում, մասնավորապես Ռոստովում, մասամբ նաև խոշոր այլ քաղաքներում:

Ռոստովի վերելքը, նրա՝ որպես հարավային Ռուսաստանի արդյունաբերական և առևտրական խոշոր կենտրոնի, երկրամասի մյուս քաղաքներից աստիճանաբար տարանշատվելն ու առաջընթացը նկատելի են դառնում տակավին XIX դ. կեսերից: Այս շրջանից էլ, ի թիվս այլոց, սկսվում է հայկական գաղթօջախի խոշոր ձեռնարկատերների հոսքը գեպի հարեւան Ռոստովի քաղաքը: Այդ տեսակետից բնորոշ է մեզ արդեն ժամանակ շ. Քուշնարյանի օրինակը: Նա, ինչպես ասվեց, 1853 թ. ծխախոտի իր ֆաբրիկան հիմնադրեց ոչ թե նախիչևնում, այլ Ռոստովում: Տեղի առևտրատնտեսական կյանքի ընդհանուր ոլորտում, ֆաբրիկան այնքան ընդարձակվեց, որ արդեն XX դ. սկզբներին ավելի շատ արտադրանք էր տալիս, քան նոր նախիչևնի ամբողջ արդյունաբերությունը միասին վերցրած:

Հետևաբար, իրավացի շեն այն մասնագետները, որոնք երկու քաղաքների անհավասարաշափ զարգացումը բացարձում են սոսկ երկա-

թուղարժիթը Ռոստովի միջով անցկացնելու հանգամանքով: Նախ Ռոստովի վերելքն սկսվել էր երկաթուղագիծը կառուցելուց մի քանի տասնամյակ առաջ: Դրանից բացի երկաթուղին քաղաքի արդեն սկսված առաջընթացին նոր թափ հաղորդեց միայն:

Դոնի հայերը, եթե համաձայնություն տային և երկաթուղու գիծը անցկացվեր նոր նախիչևնի միջով, միևնույն է Ռոստովը չէր կարող մնալ առանց երկաթուղու Քաղաքի առևտրարդյունաբերական շերտերի պահանջով Ռոստովը օժանդակ գծով կմիացվեր կենտրոնական երկաթուղուն: Նման պայմաններում նոր նախիչևնի զարգացումն ավելի դյուրին և թերեւս ավելի ծավալուն ընթացք կունենար, սակայն երկաթուղին չէր կարող փոփոխել երկրամասի, մասնավորապես երկու քաղաքների արդեն ուղենչված զարգացման ընթացքը:

Ի վերջո, եթե մի պահ ընդունելու լինենք, որ Ռոստովի փոխարեն նման արագ զարգացում ապրեր նույն պայմաններում գտնվող նոր նախիչևնը, ապա պիտի է հաշտվել այն մտքի հետ, որ հայ համայնքը կդադարեթ գոյություն ունենալ: Երկաթուղու առկայությունը, խոշոր արդյունաբերության և առևտրի զարգացումը բնակչության այնպիսի երթևեկ ու ներհասք կստեղծեր, որ գաղութը կարճ ժամանակում կկորցներ իր ազգային նկարագիրը և կուլ կգնար շրջապատին: Դա այնքան հասկանալի մի իրողություն էր, որ դժվար է ենթադրել, թե այդ հանգամանքը չէին ըմբռնում տեղի հայ գործիչները: Հետևաբար նոր նախիչևնը երկաթուղուց հեռու պահելու մեջ նախանձախնդիր գաղութի աշքի ընկնող դեմքերը առաջնորդվում էին ոչ թե և ոչ այնքան տնտեսական շահավետության, որքան Դոնի հայ հասարակական-տնտեսական զարգացման նկարագիրը պահպանելու գաղումով:

Այլ խնդիր է, թե որքանով կին նրանք կարողանում ճիշտ ըմբռնել նոր շրջանի հասարակական-տնտեսական զարգացման ընդհանուր միտամները:

* * *

Արտադրության մյուս ճյուղերի մասին մեր պատկերացումները լրիվ ու ամբողջական չեն լինի, եթե թեկուզ համառոտակի շանդրադանանք արհեստագործությանը: Դա անհրաժեշտ է մանավանդ այն պատճառով, որ գաղութի պատմության առաջին, նախառեֆորմյան փուլ արհեստները երեւան են եկել բավականաշափ զարգացած ձեռվէ իսկ արհեստագործական արտադրանքն էլ էական նշանակություն է ունեցել ժողովրդական տնտեսության մեջ:

Անշուշտ, ապրանքադրամական հարաբերությունների ծավալումը, արդյունաբերության և առհասարակ կապիտալիստական հարաբերու-

104 ЦГИА СССР, ф. 1284, оп. 67, г. 1871, д. 169, л. 62.

105 ЦГИА СССР, ф. 1284, оп. 70, г. 1881, д. 229, л. 43.

թյունների զարգացումը քայքայիչ նշանակություն են ունենում արհեստագործության համար: Նոր նախիջևանի արհեստների, մասնավորապես արհեստավորական կազմակերպությունների՝ համբարությունների մասին պահպանված վկայությունները ցույց են տալիս, որ *XIX* դ. կեսերից արհեստագործությունն անկում էր ապրում:

1870-ական թվականներին մանր արտադրողների քայքայումն այնքան ակնբախ էր դարձել, որ Դոնի հայկական գաղութի հիմնադրման 100-ամյակի առիթով գրած աշխատության մեջ Ռ. Պատկանյանը ցավով ու ափսոսանքով է խոսում այդ մասին: «Հայը ոչ միայն երեխի վաճառական է, — գրում էր նա, — այլև երեխի արհեստավոր է. ափսոս. որ մենք արհամարհել ենք այս մեր ազգային արդյունաբեր ընդունակությունը, և նորա բոլոր շահը թողել ենք անգիտացուն, գերմանացուն և հրեաններուն»¹⁰⁶: Արհեստավորական դպրոց բացելու նրա նախաձեռնությունն ու շանքերը բխում էին հայ արհեստագործական աշխույժ կյանքը վերականգնելու և պահպանելու նույն ձգտումից:

Ինչ խոսք, արհեստագործությունը, որպես արտադրության մի բնագավառ հատուկ է եղել միջնադարին՝ ֆեոդալական հասարակարգին: Նոր կապիտալիստական հարաբերությունների ժամանակ նրան փոխարինելու է գալիս արդյունաբերությունը: Այդ հաջորդսկան փոխարինումը, սակայն, բացարձակ ձևով չասկանալ: Կապիտալիզմի դարաշրջանում ևս արհեստները պահպանում են իրենց դերն ու նշանակությունը, անգամ զարգացում են ապրում՝ կախված կոնկրետ միջավայրից ու հնարավորություններից, արդյունաբերության զարգացման յուրահատկություններից և այլ պայմաններից:

Նոր նախիջևանում երկու հանգամանք հատկանշում և ինչ որ շափով նաև կանխորոշում են արհեստագործության վիճակն ու նրա հետագա զարգացումը: Նախ՝ հայտնի է, որ հայերի մոտ արհեստագործությունը եղել է հնից եկող, ավանդական զբաղմունք: Դոնի հայկական գաղութում արհեստները զարգացել, կատարելագործվել ու մասնագիտացել են այն աստիճան, որ մինչև *XIX* դ. կեսերը ծողովրդատնտեսական կյանքի կարևոր ճյուղերից մեկն են համարվել:

Արհեստագործությունը հայերի շրջանում այնքան մեծ ծավալ էր ընդունել և արմատացել կյանքում, որ չէր կարող հեշտությամբ տեղիք տալ և դադարեցնել իր գոյությունը:

Ի տարրերություն ուրիշ շատ քաղաքների, ուր խոշոր արդյունաբերության զարգացումը քայքայիչ ազդեցություն էր գործում արհեստա-

գործության վրա, նոր նախիջևանում զարգացավ մանր արդյունաբերությունը: Հայկական գաղութում արդյունաբերությունն առաջացավ արհեստագործական հիմքի վրա: Արհեստագործական շատ արհեստանոցներ, ժամանակի պահանջներին համապատասխան, աստիճանաբար ընդարձակվելով և որոշ շափով կիրառելով մեքենայական աշխատանքը, վեր էին ածվում ֆաբրիկագործարանային մանր ձեռնարկությունների: Արդյունաբերության վիճակը ներկայացնող հիշյալ աղյուսակում ոչ քիչ թվով գործարաններ, մինչև անգամ տասի շամանող, բանվորների փոքր թվով, արտադրության կազմակերպման տնայնագործական եղանակով, գրեթե չին տարբերվում կամ շատ քիչ էին տարբերվում արհեստագործական գործատներից: Մեզ չպետք է շփոթեցնի այն հանգամանքը, որ դրանք նահանգապետերի տարեկան հաշվետվություններում և վիճակագրական տեղեկագրերում, հիշատակվում են ֆաբրիկագործարանային արդյունաբերության խորագրի տակ: Ավելին, որոշ ապարնքների, ասենք կաշվի, աղյուսի արտադրությունը կատարվում էր և արդյունաբերական, և արհեստագործական եղանակով: Ինչ խոսք, արդյունաբերության ծավալումը, նրա մասնագիտացումը, մանր արհեստային արտադրությունը քայքայելու հետ մեկտեղ նշանակալի ազդեցություն էր գործում վերշնիս վրա: Արհեստի մինչ այդ կարևոր համարվող տեսակներ ետին պլան էին մզվում կամ առհասարակ վերանում: Դրա փոխարեն ժամանակի պահանջին համապատասխան առաջանում էին արհեստի նոր տեսակներ և կամ առաջադիմում երկրորդական համարվող արհեստները:

Արտադրության այս ճյուղում կատարված փոփոխություններին համապղմանիրեն հասու լինելու համար աղյուսակի ձևով բերենք արհեստագործության վիճակը ներկայացնող տարբեր տարիների տվյալները¹⁰⁷:

Աղյուսակից երևում է, որ արհեստավորների, ավելի ճիշտ արհեստագործության ասպարեզում աշխատողների (վարպետներ, բանվորներ, աշակերտներ) քանակն աճում էր: Քառասում տարվա ընթացքում արտադրության այդ ճյուղում աշխատողների թիվը ավելացել էր 7—8 անգամ: 1863 թ. 686-ից 1903 թ. հասնում է 5300, իսկ 1905 թվականին՝ 5775 մարդու¹⁰⁸: Անգամ երկու տարվա ընթացքում նկատելի է այդ աճը:

107 Աղյուսակը կազմվել է հետևյալ աղյուսների հիման վրա. ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 156, թ. 112. ԳԱՐՕ, ֆ. 91, օպ. 4, ձ. 81, լ. 1, ձ. 87, լ. 1.

108 1903, 1905 թթ. տակ աղյուսակից դուրս ենք թողել արհեստ համարվող, սակայն գրեթե մասնագիտական վարպետություն զարգանազ մի շարք արհեստի տեսակներ (սղոցող, տանիքագործ, հորատող, այգեգործ և այլն), այդ պատճառով արհեստագորների քանակը իրականից փոքր է արտացոլվել:

Աղյուսակի 3

Արհեստի անվանումը	1863			1903			1905		
	Վաղ պիտ բան վոր	Մայ պիտ բան վոր	Նշան կից	Վաղ պիտ բան վոր	Մայ պիտ բան վոր	Նշան կից	Վաղ պիտ բան վոր	Մայ պիտ բան վոր	Նշան կից
Սննդամբերք պատրաստող արհեստավորներ									
Հացագործ	3	3	—	35	65	25	40	65	25
Բուլկեղենի մասնագետ	6	15	6	16	55	10	15	60	10
Հրուշակագործ	—	—	—	10	25	10	10	25	10
Կարկանդակագործ	—	—	—	1	3	1	2	4	2
Խաչարար	—	—	—	50	—	5	15	—	5
Մսագործ	7	21	1	25	5	—	25	50	—
Հագուստ պատրաստող									
Դերձակ	9	22	6	35	110	30	35	110	30
Կոշկակար	37	117	23	50	100	50	50	100	50
Մողելագործ դերձակ	—	—	—	30	60	30	30	60	40
Գլխարկագործ	—	—	—	4	8	4	9	15	5
Մաշկագործ	32	58	34	2	30	—	4	30	—
Մորթեգործ	—	—	—	4	8	4	4	8	5
Տեային տնտեսության իրեր պատրաստողներ									
Վառարանագործ	16	41	3	20	100	20	15	80	20
Ատաղձագործ	5	10	5	40	80	125	50	180	120
Պղնձագործ	6	6	2	10	15	10	10	15	10
Բիթեղագործ	—	—	—	10	25	10	10	25	10
Փականագործ	—	—	—	50	100	50	50	100	50
Քարտաշ	—	—	—	10	350	—	10	350	—
Դարբին	7	7	5	50	100	50	50	100	50
Կառագործ	2	19	—	5	30	10	8	50	10
Անվագործ	—	—	—	5	15	5	15	—	—
Թամրագործ	4	12	8	2	2	—	2	2	2
Տակառագործ	—	—	—	10	50	10	10	50	15
Ազյուսագործ	—	—	—	12	555	—	12	600	—
Պաստառող	—	—	—	5	10	—	5	10	—
Ապակեգործ	—	—	—	15	30	15	15	25	15
Մեփագործ	—	—	—	8	100	15	20	100	20
Այլ արենասներ									
Պայտագործ	1	—	—	2	—	—	2	—	—
Կառապան	32	32	—	115	—	—	117	—	—
Ժամագործ	1	—	1	3	—	—	3	—	—
Ներկարար	—	—	—	10	80	20	10	120	20
Արծաթագործ, սոկերիչ	7	7	7	15	30	15	15	25	15
	178	402	116	663	2201	529	673	2379	544
		686			3393			3596	

Արհեստավորների ստվարացումը տեղի էր ունենում ինչպես նույն արհեստով զբաղվողների քանակն ավելանալու, այնպես էլ արհեստի նոր ճյուղեր երևան գալու հետևանքով: Այսպես, եթե 1863 թ. պղնձագործությամբ զբաղվում էր 14, դարբնությամբ՝ 19, հյուսնությամբ՝ 26, ապա քառասուն տարի անց նրանց թիվն աճում, հասնում է համապատասխանաբար 35, 200 և 245 արհեստավորի:

Որքան բազմազան էր դառնում կյանքն ու բնակչության կենցաղը, այնքան ավելանում էին արհեստները, առաջանում արհեստի նոր տեսակներ։ Արխիվային վավերագրերում հանդիպում ենք օրինակ թիթեղագործ, փականագործ, ժամագործ, վարսավիր, ծեփագործ, պատառագործ և ուրիշ արհեստավորների հիշատակման, որոնք նախկինում գոյություն չունեին։ Նոր արհեստների երևան գալու հետ մեկտեղ հաճախ միևնույն արհեստը բաժանվում էր առանձին ճյուղերի։ Նախկինում գոյություն ունեցող հացթուխի մասնագիտությունից 1860-ական թվականներին, որպես ինքնուրույն արհեստ առանձնանում է բոլցկեղեն պատրաստելու մասնագիտությունը։ Հետագայում ինքնուրույն արհեստ են դառնում հրուշակեղեն, ոլորուն քաղցրահաց (կրենդելելցիկ), քաղցրաբլիթ (պրյանիչն) պատրաստելը։ Նույն եղանակով կոշկակարի արհեստից առանձնանում են մաշտակարի, մորթեգործի մասնագիտությունները։

Արհեստների բազմանալու և մասսայական դառնալու հետ մեկտեղ նկատվում է նաև արհեստին տիրապետելու մասնագիտական հմտության նվազում: Առանձին դեպքերում անգամ զբաղմունքը շփոթվում է արհեստի հետ: Այսպես, հողափորի, այգեգործի, բանջարաբույծի, ավագ կամ կավաճող տեղափոխողի աշխատանքն ավելի շատ զբաղմունք է քան արհեստ: Նման աշխատանք կատարելու համար հատկապես մասնագիտանալու, արհեստին տիրապետելու անհրաժեշտություն չէր զգացվում: Այդ պատճառով էլ այդ զբաղմունքների գծով աշակերտներ, որոնք պետք է հմտանային մասնագիտությանը տիրապետելու մեջ և վարպետ դառնային, չէին պահվում: Արհեստ և զբաղմունք հասկացությունները շփոթելու հետևանքով արհեստավորների քանակը արհեստականորեն մեծ է ցուց արվում: 1905 թ. նոր նախիջևանի ամբողջ բնակչությունը հասնում էր 30,339 մարդու, որից 5775 հոգին արհեստավորներ էին: Ստացվում է, որ բնակչության մեկ հինգերորդ մասը զբաղվում էր արհեստագործությամբ, որն, ինչ խոսք, անհավանական է: Դոնի հայկական գաղութում իր ապրած ժամանակաշրջանի արհեստների մասին խոսելով, Ն. Շահագիզը գրում է. «Հին արհեստները՝ պայտառությունը, դարբնությունը, զինագործությունը, թաղիքագործությունը, գդակագործությունը, ատաղձագործությունը, դերձակությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը, կղմինդրագործությունը, հացագործությունը, կլայեկագործությունը, կղմինդրագործությունը, հացագործությունը»:

թյունը, համեստագործությունը և մյուսները համարյա թե վերացել կամ վերանալու վրա են, այնպիս որ կարելի է համարձակապես ասել, թե նախիշնացցոց մեջ ներկայումս ոչ արհեստներ և ոչ արհեստավորներ կան»¹⁰⁹:

Վերևում արհեստագործության մասին մեջբերված փաստերից պարզորոշ երեսում է, որ ճիշտ շեն վաստակաշատ գիտնականի հետևությունները: Նախ՝ իր կարծիքով վերացող արհեստների մի մասը (հացագործություն, դերձակություն և այլն) ոչ միայն շեն անհետանում, այլև ավելի լայն տարածում էին ստացել (տե՛ս ազյուսակ № 3): Դրանից զատ նա անտեսում է կյանքի պահանջներից բխող արհեստի նոր տեսակների երևան գալը, նրանց առկայությունը:

Իրավացի է Ա. Հովհաննիսյանը, թեպետք հին արհեստների վերացման հարցում ինքն էլ որոշ շափով շափաղանցության մեջ է ընկնում, երբ Ե. Շահազիդի սույն տեսակետի մասին գրում է. «իհարկե, շափականցություն է ասել, թե XX դարի սկզբներին հայերի արհեստներն ու արհեստագործությունն արդեն իսկ վերացած էին քաղաքում: Դարբինները, փականագործները, ատաղձագործները, կողկակարները, ուկերիչները, արծաթպանները և գդակագործներն այդ պահին մեծ մասով տակավին հայերն էին: Խնդիրն այն է, սակայն, որ անհետանում էր ինն, ասիական արհեստագործությունը, որի տեղը բռնում էին արտադրական նոր եղանակներ ու ձևեր պահանջող արհեստները»¹¹⁰:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Դոնի հայկական գաղութին այնքան բնորոշ արհեստավորական կազմակերպությունների՝ համբարությունների մասին աղբյուրներում վկայությունների շենք հանդիպում: Հավանական է, որ նրանք թուլացել և այն աստիճան կորցրել էին իրենց վաղեմի նշանակությունը, որ որևէ գրավոր հետք շեն թողել:

Համբարությունների փոխարեն արհեստավորական կյանքը կազմակերպելու որևէ օրգան ստեղծելու պահանջ էր առաջանում: 1877 թ. նոր Նախիշնանի մի խումբ արհեստավորներ գրավոր դիմում են քաղաքավիճակի: Նրանք վերջինիս իրազեկ էին պահում, որ արհեստավորների թիվն ավելացել, հասել է 300 հոգու, և խնդրում էին իրենց աշխատանքը լավ կազմակերպելու համար ստեղծել արհեստավորական վարչություններ, որպիս կան մյուս քաղաքներում: Քաղաքավիճի միջնորդությամբ Եկատերինոսալավի նահանգային վարչությունը հանգամանալից տեղեկություններ ստանալով արհեստների տեսակների, վարպետների ու աշակերտների մասին տալիս է իր նախնական համաձայնությունը: Ներ-

109 Ե. Շահազիդ, Նոր Նախիշնանը և նոր Նախիշնանցիք, էջ 173—174.

110 Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, Երևան, 1956, էջ. 159.

քին գործերի մինիստրությունը, սակայն, նկատի առնելով, որ ուրիշ քաղաքներում էլ նման պահանջներն ընթացք չեն ստանում, բացասական վճիռ է կայացնում¹¹¹:

Նոր Նախիշնանի արհեստավորները, իրենց իրավունքներն ու շահերը պաշտպանող առանձին վարչություն ունենալու անհրաժեշտությունը մշտապես զգում ու պարբերաբար բարձրացնում էին այդ հարցը: Դերձակ արհեստավորները, որոնք գյուղական և գրական շուկաների համար արտադրում էին հսկայական քանակի ապրանք, նեղվում էին վաճառականների կողմից: Ժամանակին նրանք դիմել են վերադաս իշխանության՝ իրենց համբարությունը նեստովի արհեստագործական վարչության կազմի մեջ մտցնելու համար: Հարցը դրական ընթացք է ստանում:

1907 թ. արհեստագործական վարչությունը առաջարկում է Նախիշնանի տակավին իր գոյությունը պահող դերձակների համբարության ավագին՝ բոլոր դերձակներին ընդգրկել համբարության մեջ, կատարել վարպետների, ենթավարպետների և աշակերտների լրիվ հաշվառում: Այն դերձակները, որոնք շունեն վարպետի կողում, սակայն պահում են արհեստանոց, մասնագիտական-գործնական խիստ քննության ենթարկել և տալ համապատասխան վկայականներ: Հաշվառումը կատարվում է, սակայն, դերձակների մեծ մասը չի ցանկանում ենթարկվել արհեստագործական վարչությանը և մուծել սահմանված ամենամյա երկու ուղղի անդամավճարը: Նրանք սեփական այդ քայլն արդարացնում էին նրանով, որ վարչությունը գեռս ոշինչ չէր արել դերձակների դրությունը բարեկամությունը ուղղությամբ, որպեսզի իրենք էլ համապատասխան պարտավորություն կատարեն:

Դերձակների համբարության ավագ Ե. Եփինենկոյի գլխավորությամբ հրավիրվում է արհեստավորների բազմամարդ ժողով: Հիսուն դերձակներ ցանկություն են հայտնում՝ նեստով քաղաքի արհեստավորական վարչության մեջ մտնել և նրա բոլոր հրահանգներին ենթարկվել: Նրանք պատրաստակամություն են հայտնում հանձնել վարպետության համար սահմանված քննությունը: Դրանով, սակայն, խնդիրը վերջնական լուծում չի ստանում, քանի որ մյուս արհեստավորներից բացի, անգամ դերձակ արհեստավորների մի մասը դուրս էր մնում վարչության ենթակայությունից¹¹²:

1911 թ. Նախիշնանի քաղաքային խորհրդարանի մի քանի ձայնավորներ գրավոր հայտնում են, որ քաղաքում արհեստավորների և զա-

111 ԳԱՐՕ, ֆ. 91, օպ. 1, ձ. 161, լ. 1—9.

112 «Приазовский край», 1907, № 198.

հազան արտելների թիվն աճելով հասել է 550—600-ի: Ապա հիշեցնում են, որ նրանց գործունեությունը ճիշտ ու օրինական հունի մեջ դեկտու համար, թեպետև 1877 թ. և դրանից հետո, բազմաթիվ միջնորդություններ են կատարվել, սակայն գործը տեղից չի շարժվել: Նրանք առաջարկում են կայսրության մյուս քաղաքների նման ստեղծել արհեստավորական վարչություններ: Մեկ տարի հետո վերադաս ատյանները տալիս են իրենց համաձայնությունը, և ստեղծվում է նոր նախիշեանի արհեստավորական վարչությունը, որը, սակայն, գործելու էր ոչ թե ինքնուրույն, այլ պետք է ենթարկվեր Ռուսովի համանուն կազմակերպությանը¹¹³:

Այսպիսով, ետևի փորմյան շրջանում արհեստաները, կրելով ժամանակի պահանջներին համապատասխան փոխություններ, հարկավ, ոչ նախին չափով, պահպանում էին իրենց նշանակությունը: Արհեստագործությունն, արդյունաբերության կողքին ու զգալի չափով նրան լրացնելով, բնակչության հատկապես առօրյա պահանջները բավարրող տնտեսական նշանակալի դեր էր կատարում:

Նոր նախիշեանի արդյունաբերության զարգացման յուրահատկություններին հետամուտ լինելու և նոստով քաղաքի արտադրության այդ ձևողի հետ համարելու պարագայում նկատելի է դառնում բնորոշ մի առանձնահատկություն: Նախիշեանում զարգանում էր գերազանցապես գյուղատնտեսական արտադրանքը մշակող մանր արդյունաբերությունը, իսկ նոստովում՝ մետաղածուլական, քիմիական, ծխախոտի և այլ ճյուղերի խոշոր արդյունաբերությունը: Նոր նախիշեանի մանր արդյունաբերությունը (այդ թվում և արհեստավորական) գալիս էր համարելու նոստովի խոշոր արդյունաբերության արտադրանքը: Արդյունաբերության և ողջ տնտեսական կյանքի աճն ու առաջընթացն ըստինքյան նման համընդհանուր կարգավորման էր հանգեցնում: Այսպես, նոր նախիշեանի և նոստովի արդյունաբերության մեջ նշանակալից դեր ունեին ծխախոտագործական ֆաբրիկաները: Ժամանակի ընթացքում հայկական գաղութի անհամեմատ փոքր ձեռնարկությունները շդիմանալով նոստովի ծխախոտի խոշոր ֆաբրիկաների մրցակցությանը դադարեցրին իրենց գոյությունը, և ծխախոտի արտադրությունը կենտրոնացավ միայն նոստովում: XIX դարի վերջերից նոստովը նոր նախիշեանի հետ տնտեսական-արտադրական մի ամբողջական շրջան էին կազմում:

Երկու քաղաքների արդյունաբերության և առևտնաբակ տնտեսական կյանքի կոռպերացման ու միավորման գործում նշանակալից էր զանազան բանկերի ու մոնոպոլիաների դերը:

¹¹³ Նույն աեղում, գ. 1608, թ. 3—8:

Արդյունաբերության զարգացումը, որը մեծ թափ ստացավ հատկապես XIX դարի վերջին և XX դարի սկզբներին, պահանջում էր կարգավորված ու կայուն ֆինանսավորում: Շուտով հիմնվում են տարատեսակ բանկերի և ֆինանսական զանազան կազմակերպությունների մասնացուղեր ու գրասենյակներ:

1870-ական թվականների սկզբներին նախիշեանում հիմնվում է փոխադարձ վարկի ընկերություն: «Ընկերությունը» երկարատև ու արդյունավետ գործունեություն է ունենում: Այն հետագայում տեղափոխվում է Խոստով և սպասարկում երկու քաղաքներին: Հետագայում Խոստով նախիշեան փոխադարձ վարկի ընկերությունը բոլորելով իր գործունեության քառասամցակը և նկատի առնելով նախիշեանի թեմական դպրոցի նյութական սուղ վիճակը, բարեգործական նպատակներով քառասուն հազար ոուրիշի գումար է նվիրում դպրոցին¹¹⁴:

1880 թ. քաղաքային խորհրդարանի ձայնավոր Մ. Մագդեսիեվը հարց է բարձրացնում նախիշեանում հասարակական բանկ բացելու մասին: Խորհրդարանի առանձնացրած հանձնաժողովը և քաղաքավորին Գ. Սալթիկովը ելնելով քաղաքներում հասարակական բանկեր կազմակերպելու 1862 թ. փետրվարի 6-ի բարձրագույն հրամանից, անհրաժեշտ են համարում նման բանկի հիմնադրումը¹¹⁵: Քաղաքային հասարակական բանկի նպատակն էր նպաստել քաղաքի բարեկարգմանը, օգնել հիվանդանոցներին, դպրոցներին, աղքատախնամ ու բարեգործական մյուս հաստատություններին: Քաղաքի եկամուտներից ավելացած և հաջորդ տարվան փոխանցվող գումարը ևս պահպելու էր բանկում: Այդ միջոցներից էլ որոշ ծախսումներ էին կատարվելու բանկի պահպանման համար:

Բանկի կազմակերպման համար պահանջվում էր նվազագույնը 10 հազար ոուրիշի գումար: Քաղաքավուն առաջարկում է քաղաքապատկան հողերից շտեմարանների համար վարձով տրվող տարածքից գոյացող 12158 ո. գումարին քաղաքի եկամուտներից ավելացնել 7,842 ո. և բանկում դնել պահանջվող գումարի կրկնակին՝ 20 հազար ոուրիշի: Քաղաքի խորհրդարանը համաձայնում և որոշում է վերադաս իրավասու մարմինների միջոցով այդ հարցն արագորեն լուծել¹¹⁶:

Տեղական բանկերից զատ նոստովում կար Փետական և Պետերբուրգի՝ ֆինանսական խոշոր ընկերությունների ավելի քան տաս մասնացուղ:

¹¹⁴ ՀԿՊԱ, գ. 10, թ. 55, թ. 10:

¹¹⁵ ГАРО, գ. 91, օպ. 1, ձ. 249, լ. 1—5:

¹¹⁶ Նույն աեղում, թ. 6:

XX դարի սկզբներից փոխվել էին երկու քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունների միավորման պայմանները: Ծոստովի և Նոր Նախիջևանի մեխանիկական գործարանների տերերը նախաձեռնում են «Հնկերություն» կազմել՝ երկաթուղային վագոններ արտադրելու նպատակով: Վագոնի առանձին մասեր պատրաստվելու էին երկու քաղաքների առանձին գործարաններում, իսկ վերջնական պատրաստումը պետք է հատարվեր երկաթգծի «Նախիջևան» կայարանի մոտ համատեղ ջանքերով: Հիմնադրվելիք հատուկ գործարանում: Զայնավոր Սերգեև քաղաքավորին խնդրում էր հարցը մտցնել քաղաքային խորհրդարան և հայտնել, թե գործարանի համար հարմար այդ հողամասը ի՞նչ պայմաններով կարող են տրամադրել իրենց¹¹⁷:

Ծոստովի և Նախիջևանի աղյուսի 16 գործարանները միավորվել էին արյուսի վաճառքի մեծ գրասենյակի մեջ: Երեք մետաղածուլական գործարանները հարկադրված միավորվում են մեկ խոշոր մետաղածուլական սինդիկատի մեջ¹¹⁸: Արտադրության մյուս ճյուղերը ևս սկսում են հաճակենտրոնանալ տարբեր միավորումների մեջ:

3. ԱՌԵՎՏՈՒԻՐ

Հայտնի է, որ Դոնի ավագանն իր աշխարհագրական դիրքով և բնական պայմաններով առևտրի ծավալման վիթխարի հնարավորություններունք: Դոնի շրջանում էին խաշաճևվում առևտրական այն հիմնական ճանապարհները, որոնք Ծոսաստանի ներքին նահանգները, մերձվոլգյան շրջանները, Կովկասը, ինչպես նաև Ռուսական կապում էին Դոն-Ազով ավագանի հետ: Մյուս կողմից, երկրամասի շրային հիմնական երակ հանդիսացող Դոն գետը, Ազովի ու Սև ծովերի միջոցով հիշյալ երկրամասերը կապում էր արտասահմանյան երկրների հետ: Այլ խոսքով, ցամաքային և ջրային ուղիների հանգուցակետում գտնվող Դոնի ավաղանը ներքին և արտաքին առևտուրը զարգացնելու լայն պայմաններ էր ընձեռում:

Բնական այդ գործոնների առկայությունը միշտ էլ բարերար ազդեցություն է ունեցել առևտրի, ինչպես նաև արտադրության տարբեր ճյուղերի վրա: Սակայն այդ գործոնների արդասավորող ուժը, նրանց նշանակությունը պատմական տարբեր փուլերում տարբեր են եղել՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով և առաջին հերթին առև-

¹¹⁷ «Գաղութ», 1915, № 14:

¹¹⁸ «История донского края», с. 108.

տրի, որպես անակեսության կարևոր մի բնագավառի, բնույթով: Ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերը՝ գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը, եթե դրսնորում են սոսկ իրենց բնագավառի արտադրության վիճակը և միայն հարեանցիորեն, աննշան շափով արտացոլում տնտեսության հարակից մյուս ճյուղերը, ապա առևտուրն արտահայտում է ամբողջ ժողովրդական տնտեսության, այդ թվում և գյուղատնտեսության ու արդյունաբերության զարգացման մակարդակը: Այդ պատճառով էլ առևտրի ծավալման համար աշխարհագրական դիրքից ու պայմաններից զատ էական են տնտեսական կյանքի տարբեր ճյուղերի առաջադիմության աստիճանը, նրանց զարգացման առանձնահատկությունները:

Ենք հետաքրքրող ժամանակաշրջանում՝ կապիտալիստական հարաբերությունների խորացման փուլում տեղի էր ունենում բնակչության նկատելի աճ, որն ուղեկցվում էր նրա տեղաշարժերով: Այդ նշանավորվեց գյուղատնտեսության և արդյունաբերության տարբեր ճյուղերի աննախազեպ զարգացմամբ: Արտադրության հիմնական երկու այդ բնագավառների: աճն ու ծավալումը կատարվում էր առևտրի հետ զուգընթաց, մեծ շափերով պայմանավորված էր դրա հետ և խթանվում էր հենց շուկայական հարաբերություններուն էլ կարևոր է եղել կապի, իսկ առավել, նույնիսկ առանցքային նշանակություն է ունեցել փոխադրական միջոցների կամ տրանսպորտի հարցը:

Տնտեսական կյանքի համակողմանի առաջընթացի պայմաններում նկատելի շափով կառուցվեցին կամ բարեկարգվեցին ցամաքային ու ջրային ճանապարհները, ուժեղացավ փոստային, հեռագրական կապը: Այսուհանդերձ ամբողջ տնտեսության և մասնավորապես առևտրի ծավալման համար էական նշանակություն ունեցավ երկաթուղու կառուցումը: Այն հեշտացրեց ու մեծապես արագացրեց հաղորդակցությունը, առևտրի ոլորտ մտնող ապրանքների փոխադրումը: Երկաթուղին, կարելի է ասել, հեղաշրջող դեր կատարեց առևտրի զարգացման գործում:

Առևտրի ծավալման համար ամենաին էլ երկրորդական նշանակություն չունի տնտեսության սույն ճյուղի նկատմամբ պետության վարածքականությունը: Պետության ձեռնարկած միջոցառումները կարող են արգելակել կամ ընդհակառակը՝ իրանել առևտրի զարգացմանը: Ծուգական կառավարությունը 1850—1860-ական թվականներին առևտրի նկատմամբ հովանավորող, պրոտեկտիվնիստական քաղաքականությունը չէր վարում, ապային 1870-ական թվականներին փոխեց իր այդ քաղաքականությունը և ներմուծվող ապրանքների վրա զգալի շափով մաքս

նշանակելու ճանապարհով խթանում էր երկրի ներսում կատարվող առևտուրը: Այս ամենից հետեւմ է, որ անցյալ դարի երկրորդ կեսը՝ և ՀՀ դարի սկիզբը նպաստավոր էին առևտորի զարգացման համար:

Նոր նախիջևանի հայության առևտրական գործունեության լուսաբանումը որոշակի դժվարություններ է հարուցում, քանի որ նա գեռնս XIX դարի 20—30-ական թվականներից մասնակցել է առևտորի գրեթե բոլոր ձերին՝ ցրված նովոռոսիայի և Հյուսիսային Կովկասի տարրեր բնակավայրերում: Ետու ֆորմյան շրջանում հայրենի քաղաքը թողնելու և մերձակա և հեռավոր առևտրական հանգույցներում հաստատվելու նորնախիջևանցիների ձգտումն ավելի ուժեղացավ: Հետեւքարար, բուն նոր նախիջևանում կատարվող առևտուրը Դոնի հայերի առևտորի միայն մի մասն էր կազմում և նրա վերաբերյալ ամբողջական պատկերացում չէր կարող տալ, քանի որ գաղութի բնակչությունը մի զգալի շափով ժամանակավորապես կամ մշտապես թողել էր իր ծննդավայրը և առևտուր էր անում դրսում:

Դրան զուգահեռ, հայկական մագիստրատի գոյության պայմաններում, Դոնի հայ հատվածի կյանքի ու գործունեության վերաբերյալ նյութերը կենտրոնանում էին հայկական մագիստրատի արխիվում, իսկ նրա վերացումից հետո այդ վավերագրերն էլ ցրվում, տարրալուծվում են երկրամասին վերաբերող ընդհանուր նյութերի մեջ: Դրանցից հայ գանգվածի գործունեությանն առնչվող փաստաթղթերի առանձնացումը գառնում է խիստ դժվար, իսկ հաճախ էլ՝ ուղղակի անհնարին: Այսուհանդեռ, պահպանված կոնկրետ տվյալներ պարունակող վավերագրերի և անուղղակի փաստաթղթերի ու նյութերի հիման վրա հնարավոր է ներկայացնել Դոնի հայկական գաղութի առևտորի ընդհանուր պատկերը:

ա) Ներքին առևտուր: Առևտորի այս ձեռում ետու ֆորմյան շրջանում նկատելի փոփոխություններ են տեղի ունենում:

Ինչպես հայտնի է մինչև անցյալ դարի կեսերը Ռուսաստանում ներքին առևտուրը հիմնականում կենտրոնացված էր տոնավաճառներում: Սովորաբար տարվա մեջ երկու անգամ՝ գարնանը և աշնանը կազմակերպվող տոնավաճառներին երկրի մոտակա և հեռավոր վայրերի առևտրականների հետ մասնակցում էին նաև օտարերկրյա վաճառականները: Տոնավաճառներում շուկա էր հանվում բազմատեսակ ու մեծաքանակ ապրանք և տեղի էր ունենում ծավալուն առևտուր: Ներքին առևտորի այս ձեռ XIX դարի առաջին կեսին նշանակալից աճ է ունենում:

Նոր նախիջևանը շուներ տոնավաճառ, սակայն հայ վաճառականներն աշխուժորեն մասնակցում էին Տագանրոգի, Նովոչերկասկի և Հայտկապես Ռուսական սուստովի և ուրիշ քաղաքների տոնավաճառներին:

Տոնավաճառային առևտուրը, որչափ էլ տարածում ստանար, այնուամենայնիվ առևտորի առավել պարզունակ ձև էր և հատուկ էր միջնադարին, ֆեոդալական հասարակարգին: Մինչու ֆորմյան Ռուսաստանի առևտրափոխանակային տեղաշարժերին հետևելով Մ. Կ. Խոժկովանցուց է տվել, որ տոնավաճառային առևտուրը անկում է ապրել հատկապես այն երկրամասերում, ուր առավել շեշտված ձեռվ է կատարվել նատուրալ տնտեսության քայլայումը և կապիտալիստական հարաբերությունների առաջացումը¹¹⁹:

Ետու ֆորմյան շրջանում տնտեսական կյանքում կատարվող տեղաշարժերն անխուսափելիորեն անհրաժեշտ էին դարձնում և զարկ տալիս մշտական առևտորին: Տոնավաճառները կորցնելով իրենց երրեմնի նշանակությունը, աստիճանաբար վերանում էին: Որոշ տեղերում, եթե անգամ պահպանվում էր առևտորի այդ ձեռ, ապա այն էական դեր չէր կատարում:

Պատահական չէ, որ հայկական գաղութում տոնավաճառների և տոնավաճառային առևտորի վերաբերյալ հիշատակությունների հանդիպում ենք միայն 1860-ական թվականներին: Այսպես, 1862 թ. տարբեր խավերի պատկանող նոր նախիջևանի յոթանասում բնակիչները դիմում են քաղաքագլուխ Կ. Հայրապետյանին՝ հայտնելով, որ ժամանակին նախիջևանում տոնավաճառ չի բացվել, քանի որ Ռուսութիւնի տոնավաճառնում էր երկու քաղաքներին: Վեճեր առաջանալու հետևանքով, հիշեցնում էին նրանք, նոր նախիջևանը փաստորեն գրկվել է տոնավաճառությունը: Նկատի առնելով հայկական գաղութում առևտորի զարգացման բարձր մակարդակը խնդրում էին միջնորդել նոր նախիջևանում տոնավաճառը բացելու մասին:

Վերադաս որոշ ատյաններում համաձայնության են գալիս հարցը դրականորեն լուծելու օգտին: Նախատեսվում էր օգոստոս ամսի վերջերին նոր նախիջևանում հնգօրյա տոնավաճառ կազմակերպելու թույլտրվություն տալ: Եկատերինոսուլավի նահանգային վարչությունը սակայն, զգուշանալով, որ այն կարող է խանգարել Ռուսութիւնի սեպտեմբերին բացվող տոնավաճառին, մերժում է այդ առաջարկը¹²⁰:

Նոր նախիջևանում սովորությ էր դարձել, վաճառականներից զատ, ամեն տարի մեկ կամ երկու հոգեռաբական մեկնում էին Մակարելյան, Խարկովի կամ Պոլտավայի տոնավաճառները: 1860-ական թվականներին

119 «Очерки экономической истории России первой половины XIX в. (Сборник статей)», М., 1959, с. 246—251.


120 ՀԿՊԱ, թ. 139, գ. 1, գ. 1893, թ. 4, 15, 16, 18.

հայ հոգմորականները (Ե. Շապոշնիկյան և ուրիշներ) մշտափես օպտրվում էին այդ հնարավորությունից¹²¹:

Նոր նախիշևանը իր ներքին ծավալու առևտրով տարրերվում, առանձնանում էր շրջակա քաղաքներից և այլ խոշոր բնակավայրերից: Անգամ XIX դարի առաջին կեսին, տոնավաճառային առևտրի ծավալման շրջանում, ներքին մանրածախ առևտրում Դոնի հայերի դերն այնքան ակնբախ էր, որ մշտափես իր արտահայտությունն էր գտնում վերադաս ատյանների հաշվետվություններում: Վիճակագրական տեղեկագրերում և այլ աղբյուրներում: Այսպես, անգամ 1857 թ., Ներքին առևտրի զարգացման շափանիշ հանդիսացող կրպակների քանակով Եկատերինոսլավի նահանգում նոր նախիշևանը գերազանցում էր բոլոր քաղաքներին: Նահանգի մասը ու միջին քաղաքներն ունեին ընդամենը տասից մինչև քսան առևտրական կրպակ: Խոշոր քաղաքներում գրանց քանակը շատ էր, Բախմուտում հասնում էր 148-ի, Ռոստովում՝ 211-ի, Եկատերինոսլավում՝ 216-ի, Տագանրոդում՝ 279-ի, սակայն նոր նախիշևանում՝ 368 կրպակի¹²²: Դրա հետ մեկտեղ, եթե նկատի ունենամք, որ նախիշևանի հայերն առևտրական կետեր ունեին Դոնի ավագանի և Հյուսիսային Կովկասի տարբեր քաղաքներում ու առևտրական հանգույցներում, ապա պարզ կդառնա առևտրի այդ ձևում հայկական գաղութի ակնառու առաջադիմությունը:

Հայկական գաղութի առևտրի այդ առանձնահատկությունն այնքան բնութագրական էր, որ նշում էին հենց իրենք՝ նախիշևանի հայերը: Վերադաս ատյաններ ներկայացվող նոր նախիշևանի հայկական մագիստրատի 1861 թ. տարեկան հաշվետվության մեջ շեշտվում է, որ հայ համայնքը զբաղվում է գերազանցապես մանրածախ առևտրով: Հաշվետվության մեջ նշվում է նաև Դոն գետի ընձեռած լայն հնարավորությունները, որի միջոցով իրենք կապվում են կայսրության Հյուսիսային և միջին գոտու երկրամասերի հետ և աշխույժ առևտուր կատարում¹²³:


Հարկավ, քաղաքի առևտրական կրպակների քանակով, կարճ ժամանակում, ընդամենը մեկ տասնամյակ հետո՝ 1867 թ. նոր նախիշևանն առաջնությունը զիջում է Ռոստովին և Եկատերինոսլավին: Դա բացառը վորվում է ոչ այնքան այդ քաղաքների, մանավանդ առաջինի արագ զարգացմամբ, որքան նոր նախիշևանից վաճառականական շեուսի ար-



121 Նույն տեղում, ֆ. 54, ց. 1, գ. 360, 1878:

122 «Материалы для географии и статистики России, Екатеринославская губерния», Составил В. Павлович, СПб., 1862, с. 216.

123 ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 144, թ. 130:



Այս շենքը համարվում է Ստեփանոսի տաճարը:

տահոսքով: Նախիջևանում տաս տարվա ընթացքում առևտրական կրպակների թիվը ոչ միայն չէր ավելացել, այլև նկատելիորեն պակասել էր: Դրա կողքին, Ռուսով քաղաքի կրպակների թիվը, ընդամենը մեկ տասնամյակում, աճել էր գրեթե երկուսուկես (2,43) անգամ¹²⁴:

Առտարակույս, Ռուսով քաղաքի առևտրական կետերի խիստ կարձ ժամանակում նման խոշոր աճը կատարվել է նաև նոր Նախիջևանի հայ վաճառականների հայրենի քաղաքը թողնելու և Ռուսովովում հաստատվելու հետևանքով: Դրանում համոզվելու համար բավական է նշել, որ 1865 թ., օրինակ, Նախիջևանի երկրորդ գիլդիայի 98 վաճառականներից 38 հոգի արդեն հայրենի քաղաքում որևէ խանութ կամ կրպակ չունեին և առևտուր էին անում գաղութի սահմաններից դուրս՝ Ռուսովում, ինչպես նաև առևտրի համար նպաստավոր այլ բնակավայրերում¹²⁵: Կապիտալիստական հարաբերությունների խորացմանը զուգընթաց ավելի ու ավելի մեծ չափեր էր ընդունում հայկական գաղութը թողնելու և հյուսիսային Կովկասի ու Ազովի ավազանի առևտրարդյունաբերական հանգույցներում, առաջին հերթին հարևան Ռուսովում հաստատվելու իրողությունը: Մասնավորապես Ռուսովում հաստատվելու հայ առևտրական շերտերի հոսքը այնպիսի չափեր է ընդունել, որ այդ հանգամանքը մատնացույց էին անում ու դրանով մտահոգվում էին նաև ժամանակակիցները: Հայկական գաղութի նշանավոր դեմքերից Հ. Պապասինյանը 1893 թ. տեղի հոգեոր առաջնորդ Կ. Սրապյանին հայտնում էր Ռուսովում առևտուրը մեծ չափերով ծավալվելու, հողամասերի, տների, մանավանդ առաջին հարկը խանութներով զբաղեցված շենքերի գները թանկանալու մասին և ավելացնում, որ նախիջևանից «հայերը գնում են հետզհետե»¹²⁶:

Այսուհանդերձ հայկական գաղութը պահանում էր իր առևտրական կյանքի բնորոշ առանձնահատկությունը և բնակչության քանակի համեմատությամբ ներքին առևտրի յուր գերազանցությունը: Այդ բանում համոզվելու համար բավական է թեկուզ նշել, որ 1870 թ. նոր Նախիջևանում միայն կաթնամթերքի և ծխախոտի մանրածախ առևտրով զբաղված էին հարյուրից ավելի վաճառականներ¹²⁷:

Ներքին մանրածախ առևտրի միջոցով հիմնականում վաճառվում էին արդուզարդի իրեր, արծաթյա, ոսկյա զարդեր, մանուֆակտուրային ար-

¹²⁴ ЦГИА СССР, ф. 1281, оп. 7, г. 1867, д. 52, л. 68.

¹²⁵ ՀԿՊՊ, ֆ. 139, գ. 543, թ. 12—14:

¹²⁶ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կուրեղ Սրապյանի ֆոնդ, թ. 82, գ. 712:

¹²⁷ ՀԿՊՊ, ֆ. 139, գ. 633, թ. 18:

տադրանք, նպարեղեն, կաշի, մորթի, անասուն, հատկապես մանր եղջյուրավոր անասուն, երկաթ և այլ ապրանքներ:

Առևտրի իր ծավալով և շրջանառության դրամական գումարի քանակով հատկապես կարենոր էր հացահատիկի և յուղի վաճառքը: Դրանք արտահանման, արտաքին առևտրի կարենոր ապրանքներից էին, սակայն մինչև արտասահման առաքելը անցնում էին ներքին առևտրի բավական միջնորդված ոլորտով և դառնում առևտրի այս ձևի: Հիմնական առարկա:

Մեծ ծավալ ու տարածում ուներ և հայկական գաղութի առևտրի գլխավոր ճյուղերից էր ցորենի վաճառքը: Նոր նախիջևանի հյութային մասի ընդարձակ տարածքի վրա կառուցված էին 20—30-ի, իսկ երբեմն էլ 40-ի հասնող ներփակ բակեր՝ հացահատիկի ընդարձակ շտեմարաններով, հարակից շինություններով, գրասենյակներով: Դրանք պատկանում էին հայ վաճառականներին: 1880-ական թվականների վերջերին այդ շտեմարաններից մեկը պատկանում էր ոռու, մյուսը՝ հրեա վաճառականի, իսկ մնացածը հայ առևտրականների տնօրինության տակ էր¹²⁸:

Այդ շտեմարանների տերերը գեռնս ձմռանը պապավա բերքի համար կանխավճարի ձեռվ, սակայն բավական բարձր տոկոսներով դրամ էին տալիս գյուղացիներին: Վաճառականներն ունեին իրենց հետ կապված և մշտապես գործարի կատարող երկրագործներ: Նրանք մայիս ամսից հայ և ոռու երկրագործներից սկսում էին ցորեն և գյուղատնտեսական այլ մթերքներ գնել և ամբարել: Ապա առևտուրը գաղարում էր և կրին վերակենդանանում էր աշնանը, երբ նոր բերքը հավաքվում էր: Շտեմարանի տեր վաճառականները, չնչին բացառությամբ, ունեին իրենց ճարպիկ գործակալները: Վերջիններս լավ վարձատրվում էին, տարեկան՝ 2000—3000 ռ. և գյուղացիներից ցորեն գնելու և այլ գործարքների ժամանակ, որպես կանոն, նրանց զանազան ձեերով խարեւուց բացի ցածր արժեքով գնում էին հացահատիկը և դրանով իսկ շահագործում երկրագործ գյուղացիներին¹²⁹:

Հացահատիկի առևտուրն այնքան լայն տարածում էր գտնվ, որ նոր նախիջևանի քաղաքային վարչությունը հատուկ լիազոր (կոմիսար) էր նշանակել դրա վաճառքին հետեւու համար: Ցորենի վաճառքի համար առանձնացված հրապարակի շտեմարանատերերը 1907 թ. դիմում են քաղաքային վարչություն և հայտնում, որ հացահատիկի վաճառքը սահմանված կանոններով կատարելու համար նշանակված լիազորը պարտավոր է հետեւու ոչ միայն վաճառքի հրապարակին, այլև այնտեղ մտնող ճանապարհներին: Դրանից զատ, շտեմարանների տերերը

զանազան հարցերով, մանավանդ սահմանված կանոններից շեղվելու դեպքեր նկատելիս ցանկանում են դիմել նրան: Քաղաքային վարչության հսկիչ-լիազորը հրապարակում շունի որևէ որոշակի տեղ, ուստի և դրժվարանում է կատարել իր պարտականությունները: Այդ թերությունը վերացնելու համար նրանք խնդրում էին քաղաքային վարչությանը՝ լիազոր-կոմիսարի համար կառուցել գրասենյակ, ուր կարող են դիմել բոլոր շահագրգոված անձններ: Գրասենյակ կառուցելու համար քաղաքային վարչությունը համապատասխան միջոցներ շգտնելու պարագայում շտեմարանատերերը խոստանում էին այդ ծախսերը վերցնել իրենց վրա¹³⁰:

Հացահատիկի ամբարների տերերի նման շահագրգովածությունը վկայում է ցորենի մեծածավալ առևտրի և կատարվող այն աստիճան բազմապիսի գործարքների մասին, որ անհրաժեշտություն էր զգացվում քաղաքային վարչության ներկայացուցի մշտական միջամտության:

Անցյալ դարի կեսերից, հատկապես Ղրիմի պատերազմից հետո նոր նախիջևանում հացահատիկի վաճառքն աճում, մեծ ծավալ է ընդունում: Վաճառքի հանվող ցորենի քանակի մասին պատկերացում կազմելու համար բավական է նշել, որ XIX դարի վերջերին արդեն, բերքառատ տարում հայկական գաղութն արտահանում էր 600—700 հազար շետվերտ հացահատիկ¹³¹:

Անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ երկրի ներսում կատարվող ցորենի առևտուրը հայերի դրսեւրած հմտությունն ու ակտիվությունն ընթանուր բնույթ չեր կրում և չեր տարածվում նաև արտաքին առևտուրում, հացահատիկի արտասահման առաքելու գործում: Շտեմարաններում կուտակված հացահատիկը հայ առևտրականներն արտասահման արտահանելու փոխարեն հանձնում էին եվրոպական երկրների հետ առևտուր անող, Ռուստովի, հիմնականում հույն և հրեա վաճառականների ձեռքում գտնվող գրասենյակներին: Վերջիններս օգտվելով նրանից, որ հայ ցորենավաճառները կտրված ու անտեղյակ էին եվրոպայի հացահատիկի վաճառքի գլխավոր շուկաներից, խիստ ցածր գներ էին սահմանում և իրենց համար ձեռնտու եղանակով տեր էին դառնում ամբարված հացահատիկին:

Հարկավ, նոր նախիջևանի շտեմարաններում կուտակված հարըստությունը հոսում էր դեպի Ռուստովի ցորենի վաճառքով պարապող գրասենյակները: Դրա պատճառու այն էր, որ հայ վաճառականները միայն միջնորդի դեր էին կատարում: Նրանք ուղղակի չերն կապվում հացահատիկի վաճառքի եվրոպական խոշոր կենտրոնների՝ Մարսելի, Փարի-

128 «Նոր գար», 1888, № 110.

129 Խոյն անդամ:

130 «Приазовский край», 1907, № 208.

131 «Նոր գար», 1888, № 110.

զի, կոնդոնի հետ: Նրանք գերազանցապես պարփակվում էին Դոնի ավազանի ներքին առևտորի մեջ: Չունեին միջազգային առևտորի եղանակներին ու ձեռին տիրապետելու համապատասխան փորձ և իմացությունն ևյդ պատճառով: Էլ փաստորեն իրենք լինելով շահագործողներ, ինչ որ չափով շահագործվում էին արտաքին առևտորով դբաղվող, արտասահմանյան երկրների հետ կապված, Ռուսովում և մերձակա այլ քաղաքներում առևտրական գրասենյակներ հիմնած խոշոր վաճառականների կամ ընկերությունների կողմից:

Առևտորի ասպարեզում կատարվող տեղաշարժերին ժամանակին հաշում լինելու նախիջևանի հայ վաճառականությանը բնորոշ հատկանիշը հավաստվում է նաև հետեւյալ փաստով: 1880-ական թվականներին նովոսովյակ-Ռուսովով երկաթուղու կառուցումով Կուրանի և նրա մերձակա շրջանների հացահատիկը, Ռուսովի և նախիջևանի փոխարեն, ուղղակի տարվելու էր դեպի նովոսովյակ: Վերջինս աստիճանաբար դառնում էր Սև ծովով արտասահման հացահատիկի արտահանման կարեռը կենտրոն: Մտեղծված նոր իրավիճակը նկատի առնելով, Ռուսովի վաճառականներն արդեն նովոսովյակում սկսել էին բացել գրասենյակներ, իսկ հայերից և ոչ մեկը նման գործ չէր ձեռնարկել¹³²:

Դոնի հայ զանգվածի առևտորի այդ միակողմանի բնույթը մատնացուց է արվել և ժամանակի պահանջներին համապատասխան, բարձր մակարդակով առևտուր անելու ուղիներ են նշել նշանալոր գործիչներն ու հայկական կենտրոնական մամուլը:

«Պիտո է ասել, որ նախիջևանը,— զրում էր Մ. Նալբանդյանը 1850-ական թվականների վերջերին,— յուր աշխարհագրական դրությամբ, արևմտյան Եվրոպայի և հացարեր Ռուսիայի մեջ, կենտրոնական տեղերից մինն է, և այդ քաղաքի ամբարներից կշտանում են շատ Եվրոպական նավեր: Եթե այդքան մեծագումար հացեղենքը անմիջապես ուղարկվեին Եվրոպա, եթե մեր սիրելի ազգակիցքը նախիջևանի մեջ, հաշվատուն կամ գործակալ մարդ պահեին գոնե միմիայն Ֆրանսիայի Մարսել քաղաքի մեջ, այն ժամանակ նոցա շահաստացությունը կրկնապատկելու էր անշուշտ: Եվ միմիայն հայր չէր, որ գնում էր Եվրոպա, այլև երկաթ, յուղ և կաշի, որոնց առուտուրքին ծանոթ են նախիջևանցիք»¹³³:

Նոր նախիջևանում հայկական գիմնազիա բացելու առիթով գումարված հանդիսավոր հավաքում Մտեփանոս Նազարյանցը տեղի հայկական կյանքին վերաբերող մի շարք էական հարցերի թվում շոշափում է

նաև առևտորի հարցը: Անդրադառնալով այն հարցին, որ Դոնի հայերի անտեսական գործունեության մեջ առևտուրն էական դեր է կատարում, նազարյանը կոչ է անում այն գիտական հիմունքներով ու պատշաճ մակարդակով վարել: Նա նշում է, որ կրթյալ, լեզուներ, միջազգային առևտորի գործն իմացող անձնավորություններ չունենալու պատճառով նախիջևանցիները չեն կարողանում կապվել Եվրոպայի հետ, այնտեղ ունենալ իրենց գործակալությունը, գրասենյակները: Օտարազգիներն են այդ խնդրով դբաղվում, հայերից հացահատիկը ձեռնտու գներով գնում, Եվրոպա առաջարկում է առևտուր անել ուսուցանելու համար¹³⁴:

Յովի առևտրական գործառնությունը կատարվում էր հացահատիկի եղանակով, թեև դրա վաճառքը չուներ վերջինիս ծավալուն բնույթը, սակայն յուղի առևտուրը ևս ընդունում է բավականին մեծ շափեր: Այդ գործով դբաղվող խոշոր վաճառականները նույնպես ունեին իրենց գործականները, որոնց տրամադրում էին դրամ և գեռևս ձմռանը ուղարկում անասնապահությամբ դբաղվող և կաթնամթերքով հարուստ Ռուսաստանի նշանավոր նահանգները: Գործականներից բացի հայ վաճառականները գյուղերում ունեին նաև իրենց մշտապես յուղ մատակարարողները: Գարնանը յուղը բերվում կենտրոնացվում էր Եկատերինբուրգում: Այդտեղից ջրային ուղիներով հասցվում էր նախիջևան և Տագանրոգ՝ արտասահման առաքելու համար:

Նոր նախիջևանի խոշոր վաճառականները տարեկան մինչև կես միլիոն ուղելի գումար էին հատկացնում՝ յուղ գնելու համար: Հացահատիկի նման կովի յուղը նույնպես հայ վաճառականներն անմիջապես չէին արտահանում, այլ հանձնում էին այդ գործում մասնագիտացած առևտրական գրասենյակներին¹³⁵:

Ոչ սակագ թվով վաճառականներ գբաղվում էին ոչխար գնելու և ճարպահական գործարաններին հանձնելու կամ գնված, հաճախ հազարների համանող ոչխարից ճարպ ստանալու և պատրաստի ճարպը վաճառքի հանելու գործով:

Ինչպես վերևում նկատեցինք, նոր նախիջևանի կենտրոնական սպանդանոցում տարեկան մորթվում էր մի քանի հազար խոշոր ու

¹³² «Նոր դար», 1888, № 110.

¹³³ Մ. Նալբանդյան, Հրապարակախոսական երկեր, էջ 103:

¹³⁴ «Տարագ», 1900, № 47, էջ 712—713, ինչպես նաև՝ «Մեղու Հայաստանի», 1878, № 32, «Նոր դար» 1888, № 110:

¹³⁵ ԱԳԱՕՐ, ֆ. 109, 1866 թ., գ. 5, հ. 47, լ. 34—35.

տասնյակ հազարների հասնող մանր եղջուրավոր անասում։ Դրան եթե գումարելու լինենք ճարպահալ գործարաններում ստացվող ոչխարի և այժի մորթին և այլ եղանակներով կատարվող մորթը, ապա պարզ կդառնա, թե տեղում կաշվի և մորթու ինչպիսի առատություն էր ստեղծվում։ Այդ գործով պարապող վաճառականները տեղական հումքից զատ կաշի և մորթի էին գնում Դոնի մարզի, Մերձազովյան շրջանների և Հյուսիսային Կովկասի համապատասխան վայրերից։

Ներքին մշտական առետրում էական էր ծխախոտի, մանուֆակտուրային իրերի, արդուզարդի, նպարեղենի, գինու, արծաթեղենի, մահուդի, ինչպես նաև անտառանյութի, երկաթի և այլ ապրանքների վաճառքը։

(բ) Արտաքին առևտուր։ Ներքին առետրում նոր նախիչեանի հայ զանգվածի նկատելի ակտիվությունից ճիշտ չէր լինի հետեւցնել, թե արտաքին առետրով նա չէր զբաղվում, և կամ ամենենին առաջընթաց չկար առետրի այս ձևում։ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ներքին առետրափոխանակային հարաբերություններից թերեւ ավելի մեծ չափերով առաջընթաց ապրեց արտաքին առետրուրը։ Թվային կոնկրետ տվյալներ չկան նոր նախիչեանի նավակայանից միայն հայերի կողմից արտահանվող ապրանքների քանակի մասին։ Դա հետեւանք է նաև այն բանի, որ Ռուսութիւն և նախիչեանի գետափնյա նավակայանները դիտվել են որպես Ռուսուվ-նախիչեանյան միակցված մեկ նավամատուց և այդ ձևով էլ արտահայտվել են փաստաթղթերում։

Այդուհանդերձ, ուղղակի և անուղղակի մի շարք տվյալներ գալիս են հավաստելու, որ կապիտալիստական հարաբերությունների խորացման հետ մեկտեղ Դոնի հայկական գաղութի տնտեսական գործունեության մեջ էական դեր ուներ և զարգացում էր ապրում նաև արտաքին առետրուրը։

Ինչպես հայտնի է, ռուսական կայսրության համար արտասահմանի հետ կատարվող առետրի հիմնական ուղին՝ հարավայինն էր։ Սկ ծովի տարբեր նավահանգիստների միջոցով տեղի ունեցող արտաքին առետրում նշանակալից էր Ռուսուվ-նախիչեանյան նավահանգիստը։ Այդ նավամատուցը կարգավորելու և ընդարձակելու վերաբերյալ հայկական գաղութի ղեկավար մարմինների և վերագուստայանների տեսական մտահոգությունը և ձեռնարկած գործնական քայլերն արտաքին առետրուրը ժամանակավար մարմինների մասին առաջարկությունը նույնական է։

Գահպանվել են նաև Դոնի հայերի գերազանցապես արտաքին մեծածավալ առետրուրը բնութագրող պաշտոնական ուղղակի վկայությունների նոր նախիչեանի նավամատուցը վերակառուցելու նպատակով Ֆկատերինուալավի նահանգապետը 1882 թ դիմում է ֆինանսների մի-

նիստրին։ Նա թույլտվություն է խնդրում արտասահման առաջվող ապրանքների փթից գանձել կես կոպեկ, որպեսզի այդ եղանակով հարավուր դառնա լուծել նավամատուցի բարեկարգման համար անհրաժեշտ դրամի ինդիքը։ «Հացահատիկի առևտրում, — գրում է նահանգապետը, — նախիչեանը հանդիսանում է հարավային Ռուսաստանի խոշոր շուկաներից, որի տարեկան շրջանառությունը հասնում է մեկ միլիոն շետվերտի։ Նախիչեանի 15 ճարպահալ գործարաններում տարեկան ստացվում է մինչև 200 հազար փութ հարպ, իսկ ութ բրդավաց ձեռնարկություններում մաքրվում և տեսակավորվում է 300 հազար փութ սուսական բուրդ»¹³⁶։ Ապա նահանգապետը նշում է, որ այդ ապրանքներն առաքվում են արտասահման, սակայն ինչպես արտահանվող, այնպես էլ ներմուծվող ապրանքների ընդունման համար խիստ դժվարություններ են առաջանում ծովափնյա անհրաժեշտ հարմարությունների բացակայության պատճառով։ Նույն խնդրին վերաբերող մեկ այլ պաշտոնական վավերադրում հավաստվում է նահանգապետի գրության մեջ նշված, նոր նախիչեանից մեծաքանակ հացահատիկ, ճարպ և բուրդ արտահանելու մասին¹³⁷։

Նոր նախիչեանի առետրականների կողմից տարեկան մեկ միլիոն շետվերտ կամ ինը միլիոն փութ հացահատիկ շրջանառության մեջ դնելը խոսում է առետրի այդ ճյուղի վիթխարի ծավալի և նրանում հայերի կարևոր գերի մասին։ Այդ բանն առավել ակնառու է դառնում, եթե նկատի ենք առնում, որ մի քանի տասնամյակ անց, ասենք 1906 թ. Ռուսաստանից արտահանված ամբողջ հացահատիկի քանակը չէր անցնում 76 միլ., իսկ 1910 թվականին՝ 77 միլիոն փթից¹³⁸։

Եկատերինոսուլավի նահանգապետի միջնորդությունը, որը Ռուսուվ-նախիչեանից զատ վերաբերում էր նաև նահանգի մյուս կարևոր նավահանգիստ ունեցող քաղաքաներին՝ Տագանրոգին, Ազովին, Կերչին, Մարիուպոլին ինչ-ինչ պատճառներով գործնական հետեւանքներ չի ունենում։

Տարիներ անց՝ 1895 թ. այդ խնդրը կոկին բարձրացվում է, այս անգամ նոր նախիչեանի քաղաքագլխի միջոցով։ Դոնի մարզի ատամանին ուղած դիմումում քաղաքագլուխը քաղաքային դումայի անունից հայտնում էր հարեւան երկու քաղաքների մեծ առետրի և ջրային ուղիների անբարար դրության մասին։ Ապա հիշեցնում էր, որ Ռուսուվ-նախիչեանյան Դոնի նավամատուցն իր անբարեկարգ վիճակով ու սահմանափակ հարմարություններով ժամանող և մեկնող նավերի նորմալ գործու-

¹³⁶ ЦГИА СССР, ф. 1152, оп. 10, д. 20, л. 2.

¹³⁷ Նույն տեղում, ֆ. 95, ց. 8 ա., գ. 10, թ. 11.

¹³⁸ «Ежегодник департамента замледелия (год пятый)», СПб., 1912, с. 460. с. 460.

նեության հնարավորություն չի ընձեռում։ Մանավանդ, որ շրային ուղիներով արտասահմանյան երկրների հետ վիթխարի շափերի առևտուր էր կատարվում։ Դոն գետի միջոցով Ռուսաստանի կենտրոնական նահանգներից բերվում էր մեծաքանակ ապրանք, որը և Ազրի ու Սև ծովերով առաքվում էր արտասահման։

1895 թ. գետային ուղիով ստացվել էր 44 795 000 ֆութ բեռ, այդ թվում՝ 20 545 000 ֆութ ցորեն, 16 505 000 ֆ. փայտանյութ, 1 194 000 ֆ. նավթ և առաքվել էր 3 681 932 ֆութ ապրանք։ Մովային ուղիով բերվել էր 5891 524 ֆութ և առաքվել 65 267 000 ֆութ ապրանք։ Տարվա ընթացքում Ռուսականախիչևանյան նավամատույց էր ժամանել 8778 նավ¹³⁹։ Նավամատույցը փոքր, անբարեկարգ վիճակում լինելու, ձմռանը նավերը կանգնեցնելու հարմարություններ և վերանորոգման արհեստանոց չունենալու հետեանքով լուրջ դժվարություններ էին ստեղծվում։

Նախիչևանի քաղաքագլուխը, քաղաքային դումայի վճռի համաձայն, Դոնի մարզի տնօրինությունից թույլտվություն էր խնդրում արտահանվող ապրանքների յուրաքանչյուր փթից գանձելու կես կոպեկ՝ Դոնի ձախ ափի նավամատույցը վերակառուցելու և ընդարձակելու համար։ Մանավանդ, որ փթից կես կոպեկ գանձելով կարող էր պատկառելի գումար գոյանալ։ 1893 թ. այդ գումարը կազմել է 31 277, 1894 թվականին՝ 44 528 ռուբլի, իսկ 1895 թ.՝ 59 005 ռուբլի¹⁴⁰։ Վերջին այս փաստից պարզորոշ երևում է նաև, թի տարեց-տարի ինչպիսի շափերով էր ժավալվում առևտուրը, հետևողականորեն մեծանում արտահանվող ապրանքների քանակը։

Առևտուրի մեծ ծավալն անհրաժեշտ ու անհետաձգելի էր դարձնում այդ խնդրի լուծումը։ Շուտով, 1895—1897 թթ. ավարտվում են Ռուստովի առավել մեծ նավակայանի և գետափի վերակառուցման աշխատանքները¹⁴¹։

Դոն գետի նավարկությունը և նրանից օգտվելն այնքան մեծ նշանակություն ուներ երկրամասի համար, որ շահագրգոռություններ ունեցող քաղաքների ու հասարակությունների կողմից ստեղծվում է հատուկ կոմիտե՝ գետի նավարկության իրավունքներից օգտվելու կարգին հետեւելու համար։ Նոր նախիչևանը, բնականաբար, գետի նավարկությունից ակտիվ օգտվող և անմիջական շահագրգոռություններ ունեցող բնակավայրերից էր և մշտապես իր ներկայացուցիչն ուներ կոմիտեում։ Այս-

պես, 1899 թ. Դոնի մարզի ատամանը գրում էր նոր նախիչևանի քաղաքագլուխ Պավել Խաթրանյանին, որ նա հայ հասարակության կողմից երեք տարի ժամանակով հաստատվում է Դոնի գետային կոմիտեի անդամ¹⁴², Համանման ձևով գետային նավագնացության կոմիտեի անդամ ու թեկնածու է ընտրվում նաև հաջորդ ժամանակաշրջանի և ապա հետագա տարիների համար¹⁴³։

Ռուսաստանից արտաքին երկրներ հացահատիկ առաքող նավահանգստների մեջ Ռուստով-նախիչևանյան հանգույցն առաջնակարգ կարելի գորություն ուներ, Բավական է նշել, որ 1909 թ. արտասահման ցորեն առաքող ըոլոր նավահանգստների մեջ Ռուստովն առաջնությունը զիջում էր միայն նիկոլաևին։ Ռուստովի նավակայանից կրկնակի անգամ ավել ցորեն է արտահանվել, քան Օդեսայի, Պետերբուրգի, Խերսոնի կամ Տավանրոգի նավահանգստներից¹⁴⁴։

Ինչ խոսք մեծածավալ այդ առևտուր նշանակալից էր նոր նախիչևանի վաճառականների դերը։ Անշուշտ, իրավացի է Մ. Սարյանը, երբ իրեն քաշածանոթ Դոնի հայերի XIX դարի վերջերի առևտրատնտեսական գործունեության մասին գրում է. «Զալթրյան և զրիմյան հայերը հայտնի էին որպես լավ հողագործներ։ Նրանց ցորենը (գարնովկա) իր որակով հայտնի էր նույնիսկ փարիզյան հացավաճաններին։ Սրանք իրենց արենգներն ու շոգենավերն էին ուղարկում Տագանրոգ՝ հայկական ցորեն գնելու համար»¹⁴⁵։

Հացահատիկը՝ ցորենը, պակաս չափով նաև գարին, վարսակը արտահանվում էր Ֆրանսիա, Անգլիա, Հունաստան, Խոտալիա, Գերմանիա, Բելգիա և Եվրոպական այլ երկրներ։

Երկրագործության արտադրանքից զատ արտահանման գլխավոր ապրանք էին նաև անասնապահության, մասնավորապես ոչխարաբության մթերքները և առաջին հերթին բուրդը։ Ռուստով-նախիչևանյան առևտրական հանգույցը, եթե հացահատիկի արտահանման գործում տատանումներ էր տալիս և միշտ չէ, որ գտնվում էր առաջին տեղում, ապա բրդի առևտուր կայուն կերպով պահպանում էր իր գերազանցությունը։

Հացահատիկի անխափան և մեծաքանակ արտահանման դժվարությունները մեծ մասամբ կապվում էին երկաթուղու ցածր թողունակության, էլեվատորային բարեկարգ տնտեսության բացակայության և միջ-

139 ЦГИАЛ СССР, ф. 95, оп. 8а, д. 287, л. 1—2.

140 Նույն տեղում, թ. 4։

141 «Ростово-Нахичеванский и азовский порты». Составил А. П. Соколов, Ростов н/Д, 1911, с. 4.

142 ГАРО, ф. 91, оп. 1, св. 37, д. 943, л. 3.

143 Նույն տեղում, թ. 1, գ. 144։

144 «Ростово-Нахичеванский и азовский порты», с. 4.

145 Մ. Սարյան, Գրառաւմներ իմ կյանքից, գիրք առաջին, էջ 27։

ազգային շուկայում ամերիկյան էժան հացահատիկի մրցակցության հետ: Բրդի միջազգային առևտրում նկատվում էր ավտորալիական և հյուսիս-աֆրիկյան հումքի մրցակցությունը, ոռուսական բուրդը միջազգային շուկայից արտամղելու և սեփական բրդի արտահանմանը նպաստող Ամերիկայի վարած մաքսային քաղաքականությունը: Սակայն դրանք վճռական նշանակություն չէին ունենում: Ռուսովով-Նախիջևանը մնում էր Ռուսաստանի բրդի արտահանման առենակարելոր շուկան: Այստեղ XIX դարի վերջում իսպանական նրբագեղմ բրդի շրջանառությունը կազմում էր 1,2 մլն, իսկ ռուսականը՝ 200 հազար փութ: Բրդի տարեկան քնդհանուր շրջանառությունը հասնում էր 11 մլն ռուբլու¹⁴⁶:

Ռշխարի խուզից հետո, որը կատարվում էր մայիս ամսին, բուրդը շուկա էր հասնում հունիսին: Հունիս ամսին այդտեղ էին գալիս ձեռնարկատերերը, առևտրականները և ոչխարատերերը: Այդ ժամանակ էլ կատարվում էր բրդի առուժախը: Գնորդները կամ իրենք էին Ռուսովում ու Նախիջևանում պահեստներ վարձում, կամ նրանց գործակալները: Բրդի վաճառքը, որպես կանոն, կատարվում էր միջնորդ վաճառականների միջոցով: Միայն Մելքոնով-Եղոկով նշանավոր ֆիրման էր ուղղակի կապվում բուրդ արտադրող ոչխարատերերի հետ և առաջին ձեռքից գնում հումքը:

Վաճառքի էր հանվում երկու տեսակի բուրդ: Իսպանական ցեղատեսակի ոչխարի նուրբ ու երկարամազ բուրդը և տեղական՝ ռուսականը: Իսպանական կամ նրբամազ ոչխարաբությունը զարգանում էր Հյուսիսային Կովկասում, Դոնի և Սևծովյան առափնյա շրջաններում: Հայկական գաղութում, ինչպես նկատեցինք, թեպետև պետությունը մասնավորապես անցյալ դարի առաջին հսկին, որոշակի հովանավորող քաղաքականություն էր վարում, սակայն նրբագեղմ ոչխարաբությունը տարածում չդրավ: Նրբամազ բրդի փութն արժեեր 7—10 ռուբլի, իսկ տեղականը՝ 3,50—4,50 ռուբլի: 1893 թ. իսպանական բուրդն արժեեր 8,10 կ., տեղականը՝ 4,50 կոպեկ: 1896 թ. համապատասխանաբար 7,30 և 4,35 կոպ., իսկ 1900 թ. 9,45 և 3,85 կոպեկ¹⁴⁷:

Բրդի առևտուրը բարդ ու դժվարին գործ էր, որովհետև խոնավանալու կամ շորանալու դեպքում զգալիորեն փոփոխվում էր քաշը: Լվանալու ընթացքում բուրդը կրկնակի, եռակի կորցնում էր իր քաշը, սակայն դրա փոխարեն մի քանի անգամ բարձրանում էր գինը: Իսպանական մաքր-

ված բրդի փութը գնահատվում էր 28—32, իսկ ռուսականը՝ 7—9 ռուբլի¹⁴⁸:

Բրդի առևտրով զբաղվող հաստատությունները գտնվում էին Ռուսովում, իսկ բրդալզաց ձեռնարկությունները՝ Նախիջևանում: Ռուսովում էին գտնվում Ամերիկայի հետ բրդի առևտրով զբաղվող մի քանի գլխավոր ֆիրմաներ: Դրանցից հատկապես բարձր էր գնահատվում տակալին XIX դարի 40-ական թվականներին հիմնված Մելքոնով-Եղոկով հնագույն ձեռնարկության արտադրանքը: Վերջինիս առևտրաարդյունաբերական ձեռնարկության մշտապես կայուն բարձրորակ արտադրանքն այնքան հայտնի էր Ամերիկայում, որ այստեղ պատվերներ էին տալիս քսա համարանիշերի, առանց ընդունված կարգով բրդի նմուշները պահանջելու¹⁴⁹:

Բրդի վերամշտակման և առևտրի նման խոշոր կենտրոններ լինելով Ռուսովը և Նախիջևանը, արտասահմանին միայն հումք էին տալիս: Տեղում չէր հիմնվում մահուդի կամ գորգագործական որևէ ձեռնարկություն, այլ արտահանելով բուրդը գնում էին նրանից պատրաստված ներմուծվող արտադրանքը: Մի էական հանգամանք, որը, բնականաբար, չէր պիտի առաջանակակիցների տեսադաշտից և գրավոր ու բանավոր ահազանգներ էին ստացվում այդ ուղղությամբ:

Արտահանման կարևոր ապրանքներից էր ոչխարի ճարպը, որի արտադրությունը, ինչպես նշեցինք, հիմնականում կենտրոնացված էր հայկական գաղութում: Նոր Նախիջևանի ճարպահալ գործարաններում արտադրվող մեծաքանակ, 150—200 հազար փութ ճարպը գրեթե ամբողջությամբ առաքվում էր արտասահման: Առևտրի այս ճյուղում ևս հայերը օգտվում էին գերազանցապես միջնորդ վաճառականների ծառայություններից: Շատ անշան էր այս հայ առևտրականների թիվը, որոնք ոչխարի ճարպն իրենք էին արտահանում արտասահման:

Արտաքին առևտրի կարևոր ապրանքներից էր կովի յուղը: Տեղում ստացվող և շուկա հանվող մթերքից զատ երկրի անասնապահական շրջաններից և Սիբիրից՝ գնելու եղանակով մթերքում էր զգալի քանակությամբ յուղ և առաքվում ելքուպական երկրներ: XIX դարի առաջին կեսի համեմատությամբ յուղի առևտրի ծավալը սահմանափակվել, փոքրացել էր:

Նշված ապրանքներից բացի արտահանվում էր նաև ձկնկիթ, անտառանյութ, երկաթ և այլ տեսակի հումք:

¹⁴⁶ «Сборник областного Войска Донского Статистического комитета», вып. II, Новочеркаск, 1901, с. 24.

¹⁴⁷ նույն տեղում, էջ 28.

¹⁴⁸ նույն տեղում, էջ 29.

¹⁴⁹ նույն տեղում, էջ 27.

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՊԻԺԵՂԱՑՈՒՄԸ

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին առևտուրն այն աստիճան էր ծավալվում ու զարգանում, որ անհրաժեշտություն է առաջանում առուծախը կարգավորելու, դրա կարգ ու կանոնը պահպանելու կազմակերպական ձեռնարկումները կատարելու Այդ մասին են վկայում առետրականների կողմից իրենց համբարությունը ստեղծելու և հատուկ պատրակացությունը: Դեռևս 1868 թ. խանութ ունեցող վաճառականները թորոս Կիրակոսյանին ընտրում են պատրակացությունը բախարարացիի և պարտավորվում ենթարկվել նրան ու առետրի համար սահմանված ընդհանուր կանոններին¹⁵⁰:

Այդ սովորույթը ոչ միայն շարունակում է պահպանվել հետագայում, այլև առևտրի ծավալման հետ ավելի է խորանում և անհրաժեշտ գարձնում արդեն առանձին մասնաճյուղերի համար ունենալ գիրդիաներ կամ համբարություններ: 1893 թ. նոր նախիջևանի վաճառականների ընդհանուր հավաքը՝ քաղաքագլուխ Ա. Խատամովի նախագահությամբ, որոշում է ստեղծել ոչ միայն ընդհանուր առևտրի, այլև նրա առանձին ապրանքների՝ հացահատիկի, բրդի, կաշվի, գինու, նպարեղենի և վաճառահանման այլ ճյուղերի համար երեք հոգուց բաղկացած ավագների մի յուրատեսակ խորհուրդ¹⁵¹: Վերջինս իրավասու էր հետեւելու վաճառքի կանոններին և առհասարակ տվյալ մասնաճյուղի առևտրին:

Ուշադրավ է, որ նախիջևանից դուրս եկած վաճառականները շարունակում էին մնալ առևտրական նախկին համբարությունների կազմում: 1914 թ. պատրակով հավաքով հավաքավում են նախիջևանի, ինչպես նաև Ռուսովի հայ վաճառականները, քանի որ նախկին ավագի և Սագիրովի լիազորությունների շորս տարվա ժամկետը լրացել էր: Վաճառականների ավագը միաժամանակ ստանձնում էր Դոնի մարզի նախիջևան-Ազով-Եյսկ նավամատուցների լիազորի պարտականությունները¹⁵²:

Ռուսովովում, ինչպես նաև մերձակա այլ քաղաքներում ու բնակավայրերում հաստատված նախիջևանի հայ վաճառականները երկար ժամանակ կապված էին լինում իրենց ծննդավայրի հետ և մնում նրա առևտրական կազմակերպությունների մեջ:

150 ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 1447, թ. 2-3:

151 ԳԱՐՕ, ֆ. 91, օպ. 4, ձ. 40, լ. 3.

152 ԳԱՐՕ, ֆ. 91, օպ. 1, ձ. 1800, լ. 15.

Ետուեփորմյան շրջանում, ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ հարավային Ռուսաստանի, այդ թվում և հայկական գաղութի, տնտեսական կյանքի առաջընթացը և կատարվող փոփոխություններն անխուսափելիորեն տեղաշարժեր առաջացրին սոցիալական հարաբերություններում: Եվ որքան ակնառու էր տնտեսության տարբեր բնագավառներում կատարվող առաջընթացը, այնքան որոշակի էին սոցիալական կյանքի փոփոխությունները: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Գյուղատնտեսության, արդյունաբերության, առևտրի զարգացումը կատարվում էր անմիջական արտադրող և արտադրության տեր կամ էլ համապատասխան կապիտալ ունեցող դասակարգերի միջոցով: Այդ դասակարգերի սոցիալ-տնտեսական դրությունն ուղղակի հարաբերակցվում էր առևտրատնտեսական կյանքում կատարվող փոփոխությունների, նրա զարգացման հետ:

Ինչպես երես շարադրվածից, ետուեփորմյան շրջանում հայկական գաղութի տնտեսուկան կյանքում կատարվող փոփոխությունները նշանակալից էին: Տնտեսական կյանքի առաջընթացն իր շատ կողմերով պայմանավորված էր ապրանքադրամական հարաբերությունների ծավալմամբ:

Դրանից դատ, Դոնի հայկական գաղութի ինքնավարության վերացումը սխալ կլիներ դիտել սոսկ որպես իրավաքաղաքական նշանակության ձեռնարկում: Այն սերտորեն, թերևս առավել մեծ չափերով, առընչվում էր սոցիալ-տնտեսական երկույթների հետ: Նոր նախիջևանի ինքնավարության վերացումը, միաժամանակ, հայ զանգվածին տնտեսական առանձնաշնորհումներից, որոնցից նա օգտվում էր շուրջ մեկ դար գրկելու միջոցառում էր:

Իր տեղում, երբ իոսոք էր գնում գաղութի ինքնավարության վերացման մասին, նկատեցինք, որ 1861 թ. ուժորմին հաջորդող մի շարք օրենքներով ու հրամանագրերով պայմանավորվեց Դոնի հայության սոցիալ-տնտեսական իրավիճակը: Հայ զանգվածն այլևս չէր ազատվում զինակոչությունից¹⁵³ և օթևան հատկացնելուց: Նրա վրա տարածվում էր կայսրության մյուս բնակչությանը համահավասար պետական, նա-

153 Դոնի հայերը չէին կարողանում հաշտվել առանձնապես զինակոչությունից ազատ լինելու իրավունքը, կորցնելու հետ: Նրանք շանացել են պահպանել զինվորական ծառայության հարցում ընեցած նախկին արտօնությունը: Անգամ հատուկ պատգամագրություն են ուղարկել Պետերբուրգ, սակայն որուր փորձերն ապարդյուն են անցել, քանի որ օրենքն ընդհանուր էր և ատամակում էր բոլորի վրա: Նրանք հատուկ երգեր էին հորինել զինվորակության մասին (Յ. Շահնազի, Նոր նախիջևանը և նորնախիջևանը, էջ 190—191):

Հանգային և տեղական բոլոր հարկերն ու պարտավորությունները, այդ թվում և գլխահարկը: Դրանից բացի, հայկական գաղութի տարածքի ճանապարհների, կամուրջների, փոստակայանների, քաղաքային տընտեսության և գեմստվոների իրավասության տակ գտնվող տեղական այլ ձեռնարկումները կատարվում էին հայ հասարակության միջոցներով:

Առաջին հայացքից աննշան թվացող վերջին այս պարտավորությունը բավականին մեծ չափերով ծանրանում էր բնակչության վրա: Նոր Նախիջևանի եկամուտներին և ծախսերի խնդրին անդրադառնալիս ակընհայտ դարձավ, որ քաղաքային տնտեսության զարգացման և ընդարձակման հետևանքով արագորեն աճում էին ծախսերը: Մեծագումար ծախսերը ծածկելու համար անհրաժեշտ էր ոմանալ համապատասխան եկամուտներ: Գոյություն ուներ եկամուտներն ավելացնելու, ծախսերին համապատասխան դարձնելու երկու ուղի:

Նախ ավելացվում էր քաղաքին եկամուտ բերող անշարժ ու շարժական գույքի և եկամտաբեր այլ աղբյուրների վարձը: Այսպես, Դռն գետի շարժական կամուրջից օգտվելու վարձը, եթե 1840 թ կազմում էր 831 ռուբլի¹⁵⁴, ապա 1906 թ. հասնում է 6700 ռուբլու¹⁵⁵: Այսինքն՝ վեց-յոթ տասնամյակի ընթացքում կամուրջի վարձն աճել էր ավելի քան ութ անգամ: Համանման ձևով հետևողականորեն բարձրանում էր նաև քաղաքապատկան հողատարածություններից, արտադրական ձեռնարկություններից, պահեստներից, շուկաներից, խանութներից գանձվող վարձը:

Քաղաքի գանձարկղի հարստացման մյուս ուղին այդ եկամուտներ բերող աղբյուրների ընդարձակումն էր: Աստիճանաբար սկսում են հարկ դնել և գանձումներ կատարել առաջներում վարձից ազատ վաճառականներից, կրապակներից, արհեստանոցներից, հյուրանոցներից, կշեռքներից և առևտրատնեսական այլ կետերից: Սակայ հանդիպող քաղաքի ծախսերն եկամուտներին գերազանցելու պարագայում եկամտի նորանոր աղբյուրներ էին գտնվում, ասել է թի, որ հարկադրումներ էին կատարվում: 1884 թ Նախիջևանի քաղաքային խորհրդարանը դիմում է ներքին գործերի մինիստրությանը՝ քաղաքում ձիակառով կամ տրանսպորտի այլ ձևերով տեղափոխություն կատարողների վրա հարկ դնելու թույլտվություն ստանալու: Համար: Նման քայլի դիմելը հիմնավորում է նրանով, որ Նախորդ՝ 1883 թ. տնտեսական տարում քաղաքի ծախսերը 2000 ռուբլի գումարով գերազանցել են եկամուտները¹⁵⁶:

154 ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 334, թ. 45:

155 «Приазовский край», 1906, № 17.

156 ЦГИА СССР, ф. 1152, т. X. д. 398, л. 2, 14.

Այդ ամենի շնորհիվ քաղաքի եկամուտները մեծ չափերով աճում են: Բավական է նշել, որ 1859 թ. 20,784 ռուբլուց¹⁵⁷ քաղաքի եկամուտները 1910 թ. հասել էին վիթխարի գումարի, 597 հազար ռուբլու¹⁵⁸: Այսինքն՝ հիսուն տարվա ընթացքում աճել էին ավելի քան քսանութ անգամ:

Հարկավ, այդ գումարը գանձվում էր հայ հասարակության բոլոր շերտերից, առավել մեծ չափերով տարատեսակ ձեռնարկություններ ունեցող առևտրաարդյունաբերական վերնաշերտերից: Այսուհանդերձ տարեց-տարի ավելացող հարկերի վճարումը ծանր էր հատկապես սուդ միջոցների աեր աշխատավորական նիրքնախավերի համար:

Պետական, նահանգային, գավառային և տեղական հարկերն այնքան բազմաքանակ ու ծանր էին, որ աստիճանաբար ավելի ու ավելի էր դժվարանում դրանց գանձումը: Նման պայմաններում, բնականաբար հարկահանության գործի կազմակերպումը բարելավելու պահանջ էր առաջանում: Կարելի է շտարակուսել, որ միայն այդ նկատառումներով էին առաջնորդվում հայ համայնքի գործերը տնօրինողները, երբ 1888 թ. քաղաքացիներից ավագ էին ընտրում: Ապա հայտնելով, թե ավագի հիմնական պարտականությունը հարկերի հավաքումն է լինելու, խնդրում էին Դռնի գորքերի մարգային վարչությանը վավերացնելու այդ ընտրությունը, որը և կատարվում է¹⁵⁹:

Աշխարհիկ բնույթի հարկերով ու պարտավորություններով ամենակին չին սպառվում բնակչությունից կատարվող գանձումները: Ժողովրդի ուսին ծանր բեռ էին եկեղեցու օգտին մուծվող հարկերն ու տուրքերը:

Դռնի հայկական գաղութում նախկինի նման եկեղեցական հարկերն ու հասույթները ծոլովվում էին տարբեր նպատակներով՝ էջմիածնի Մայր աթոռի, ուսահայ թեմի և տեղի հոգևորականության համար: Պատկերացում կազմելու համար նշենք, որ 1862 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր՝ շրու ամիսների ընթացքում միայն էջմիածնի օգտին գանձվել է 1224 ռուբլի¹⁶⁰:

Հոգևոր իշխանության հասույթները գոյանում էին ավանդական հարկերից, հատկապես տասանորդից, նշանի, պսակի, ծննդյան, թաղման և կրոնական բազմապիսի տոնների ու ծիսակատարությունների ժամանակ կատարվող նվիրաբերություններից: Բնակչության ընդհանուր թվի համեմատ հայկական գաղութի հոգևոր դասը միշտ էլ մեծաքանակ է եղել,

157 ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 132, թ. 67:

158 ЦГИА СССР, ф. 1284, оп. 194, д. 31, л. 20.

159 ՀԱՐՕ, ֆ. 579, օպ. 1, դ. 362, լ. 55—56.

160 Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ, նոր նախկինի մագիստրատի նյութեր, թղթ. 104, թ. 73—84:

Հետևաբար զգալի էին նաև նրա օգտին ու նրա պահպանման համար կատարվող մուծումները: 1900 թվականին միայն նոր Նախիջևան քաղաքում կար 218 հոգեորական, այն դեպքում, երբ շուրջ շորս անգամ ավել բնակչություն ունեցող հարեւան Ռուսով քաղաքում եկեղեցականների թիվը չէր հասնում անգամ հարյուրի¹⁶¹:

Ավելորդ չէ նշել, որ Ս. Խաչ վանքն իր ընդարձակ հողատարածությունները մշակելու և հատկապես վարձակալությամբ տալու շնորհիվ զգալի եկամուտներ էր ստանում: Վանքի տնտեսության, մասնավորապես մարդասիրական ընկերության գումարներով պահպում էր ժառանգավորաց գիշերօթիկ դպրոցը: Թեպետև դպրոցն ապահովված էր համապատասխան միջոցներով, սակայն հոգեորականները այդ անվան տակ գյուղերից մշտապես լրացուցիչ մթերք էին ստանում: Զալթր գյուղում պատահած նման մի դեպքի մասին պատմում է տեղի «Հքավոր» ստորագրությամբ թղթակիցը: Ս. Խաչի վանահայրը օգոստոս-սեպտեմբեր ամիսներին սովորականի նման, ասվում է թղթակցությունում, գյուղերից հացահատիկ էր հավաքում, որի դիմաց վանքի դպրոցում ձրիավարժ սաներ էր պահում: Զալթրից նա ընտրում է երեք պատանի, սակայն միայն հարուստների զավակների: Վերջին այդ հանգամանքը վրդովմունք է առաջացնում գյուղի հասարակության մեջ: «Որովհետև հենց մինչև օրս էլ,— գրում է թղթակիցը,— գյուղի ստորին դասակարգը լավ աշքով չի նայում մեր վանահոր վարմունքի վրա: Որեմն գյուղի ժողովրդական տուրքով փոխանակ աղքատի որդոց, հարուստների որդիք են ձրի ուսում ստանալու 5—6 տարի՝ վերոհիշյալ վանքի գիշերօթիկ դպրոցում»¹⁶²:

Ս. Խաչ վանքից բացի, որն ութ հազար դեսյատին ընդարձակ տարածություն էր ստացել գաղութի հիմնադրման ժամանակ, հողամասեր ունեին և պատեհ առիթով դրանք ընդարձակում էին նաև քաղաքում գործող եկեղեցիները: Այսպես, ո. Գեորգ եկեղեցում ծխական դպրոց բացելու ժամանակ, նրա այցելուները, անշուշտ, ու առանց հոգեորականների հորդորանքի, քաղաքային խորհրդարան են դիմում եկեղեցու պարզապից դուրս՝ արևմտյան կողմում ընկած հողամասը եկեղեցուն հանձնելու մասին»¹⁶³:

Նոր Նախիջևանի արդյունաբերական ձեռնարկությունները, ինչպես նկատեցինք, գերազանցապես մի քանի տասնյակ բանվորներով աշխատող փոքր ու միջին մեծության գործարաններ էին: Նրանցում գերակշռում

¹⁶¹ ЦГИА СССР, ф. 1282, оп. 3, д. 458, л. 6.

¹⁶² «Նոր գար», 1894, № 168.

¹⁶³ «Приазовский край», 1907, № 227.

էր ձեռքի աշխատանքը կամ ֆիզիկական ուժով աշխատող մեխանիկական շարժիչները: Աշխատանքը, հատկապես ճարպահալ, կաշվի, ծխախոտի, բրդալվաց ձեռնարկություններում շատ ծանր էր: Աշխատանքային օրն անցնում էր 10 ժամից, չկային աշխատանքային քիչ թե շատ տարրական ապահով պայմաններ, ցածր էր վարձատրությունը: Բըրդալվաց ձեռնարկություններում բուրդ տեսակավորողի օրվա վարձը հազիվ հասնում էր 50—60 կոպեկի, լվացողի աշխատավարձը՝ 40—60 կոպ., իսկ փոքրահասակներինը՝ 30—35 կոպեկի¹⁶⁴: Տղամարդկանց հետ գրեթե համահավասար աշխատում էին նաև կանայք և պատանիները:

Բարվոք չէր նաև աղաների մոտ աշխատող գործակատարների գրությունը: Վերջիններիս ցանկացած ժամանակ, մանավանդ ձմռանը, երբ գործավարությունը պակասում էր ազատում էին աշխատանքից՝ ամենաին հաշվի շառնելով նախկին պայմանավորվածությունը: Նրանք շունեին որևէ հասարակական զբաղմունքի, հավաքի տեղ: Տիրապետող դասի ինքնակամ վերաբերմունքը դատապարտող գաղութի ու անհայտ գործիչ Հ. Պապասինյանը կոչ էր անում օրինակ վերցնել Եվրոպայից, ուր գործակատարները հարգված, իրենց պաշտոնում հաստատուն հասարակաշերտ են ներկայացնում¹⁶⁵:

Միիթարական չէին նաև քաղաքի ներքին խավերի կենցաղային պայմանները: Ճիշտ է, նոր Նախիջևանը կառուցվում ու բարեկարգվում էր, սակայն գերազանցապես բարելավվում էր քաղաքի կենտրոնական մասը: Բազմիցս ահազանգվում էր այն մասին, որ, չնայած քաղաքի արտաքին փայլին ու շեղությանը, նրա ժայրամասային թաղամասերը, ուր ապրում են աշխատավորական խավերը, չեն լուսավորվում, չկա չըմուղ, խմելու ջուր, փողոցներն անբարեկարգ վիճակում են, և ուր «աղքատներն անտեր շրջում են փողոցներում»¹⁶⁶:

* * *

Նոր Նախիջևանն այն հայկական գաղութներից էր, ուր ցայտուն դրսերվել են սոցիալ-դասակարգային հակամարտությունները: Այդ հակամարտը վաղոց ի վեր առկա էր հայ համայնքի ընդհանուր միջոցները հասարակական շահերին ծառայեցնելու և հարակից այլ խնդիրներում: Սակայն Դոնի հայ կյանքն ալեկոծող առավել ուժգին, տևական ու համառ պայքարը տեղի էր ունենում հայ երկրագործների և քաղաքի առնարակալվածատիրական դասի միջև: Վերջիններս փորձում էին իրենց

¹⁶⁴ «Сборник областного Войска Донского статистического комитета», вып. II, с. 30.

¹⁶⁵ «Նոր գար», 1891, № 32:

¹⁶⁶ «Նոր գար», 1898, № 62, «Գաղութ», 1914, № 26 և այլն:

ազարակներում աշխատեցնել ու հողին ամրացնել ճորտությունից ազատ հայ գյուղացիներին, և որ գիշավորն է, ձգուում էին զարտուղի ճանապարհներով տեր դառնալ հայկական գյուղերին պատկանող տարածություններին:

Հողային հարցը հայկական գաղութի սոցիալական հակասությունների առանցքն է եղել: 1830-ական թվականների սկզբներից ծավալված և տասնեամյակներ տեսած այդ համառ պայքարի ընթացքում գաղութի կալվածատիրական շերտերը գյուղացիների դիմադրությունը կոտրելու նպատակով դիմեցին անգամ ոստիկանության և նույնիսկ զինվորական ուժի օգնությանը, սակայն ապարդյուն: Հայ գյուղացիների և աղայական դասի միջև ավելի ու ավելի ծավալվող պայքարն այնպիսի շափեր է բնութանել, որ քննության նյութ է դարձել բարձր պաշտոնական ատյաններում: Ի վերջո կառավարիչ սենատը համոզվելով գյուղացիների իրավացիության մեջ, ստիպված գործը վճռել է նրանց օգտին: Այսուհանդերձ աղայական դասին հաջողվում է, թենկուզե, մասնակիորեն հասնել իր նպատակին: Ազարակներ հիմնելու և պետության կողմից խրախուսվող այգեգործության ու անասնապահության հատուկ ճյուղերով զբաղվելու պատրվակով նրանք սեփականացնում են գյուղերին պատկանող հողերից մի զգալի տարածություն¹⁶⁷:

Ազրարային հարաբերություններում դրսնորված այդ հակամարտն, ըստ ամենայնի, վկայում է հողը եկամտի լավագույն աղբյուր դառնալու, գյուղատնտեսական մթերքներն առևտրադրամական շրջանառության ոլորտ մտնելու, ապահանքային բնույթ ընդունելու և նրանից շահույթ ստանալու մասին:

Հետագա շրջանում, XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին, կապիտալիստական հարաբերությունների զարգացման փուլում դասակարգային ներհակություններ ծնող, դրա համար պարարտ հող ստեղծող սոցիալ-տնտեսական այդ երևույթները ոչ միայն շվերացան, այլև ավելի խորացան: Առևտրադրամական հարաբերություններն առավել խթանեցին արտադրության ապահանքային բնույթը և իրենց ոլորտի մեջ առան ոչ միայն գյուղատնտեսությունը, այլև տնտեսության մյուս գրեթե բոլոր ճյուղերը: Ճիշտ է, այս շրջանում գյուղացիության սոցիալական պայքարը սրովոված եղանակով է դրսնորվում և այնպիսի բացահայտ ձևեր չի քննումում, ինչպես նախկինում, սակայն այդ ամեններն չի վկայում նրա

167 XIX դարի առաջին կեսում հայ գյուղացիության սոցիալական պայքարի մասին անհաջողական նոր նախկինության հայկական գաղութի պատմություն, էջ 170—175, 341—349, նույնի՝ «Միքայել Նալբանդյանի հայացքների ձևագրման սոցիալական միջավայրի հարցը շուրջը» («Բանքեր Երևանի համալսարան», 1981, № 1):

թուղացման ժաման: Ընդհակառակը, գյուղատնտեսության և գերազանց ցավես գյուղատնտեսական մթերքները նախնական մշակման ենթարկող արդյունաբերության զարգացումը, դրանց շեշտված ապրանքային բնույթը, ընականաբար, ավելի որոշակի էին դարձնում և սրում սոցիալական հակասությունները:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում գյուղերին պատկանող հողային տարածությունները, առավել ևս ամեն մի շնչին ընկնող հողաբաժնը, գաղութի հիմնադրման ժամանակավա համեմատ մեծ շափերով պակասել էր: Նախ՝ ավելի քան տաս անգամ աճել էր երկրագործ բնակչության քանակը: Նշանակում է այդ նույն քանակով նվազել էր ամեն մի շնչին ընկնող հողաբաժնը: Քաղաքի մեծահարուստների կողմից գյուղերին պատկանող հողերում ագարակներ հիմնելու, Կուրյաշի Կոստարնակավայրում գյուղ կազմակերպելու ու նրան առանձին տարածք հատկացնելու և այլ պատճառներով նկատելի շափով պակասել էր հայկական գյուղերի ընդհանուր հողատարածությունը:

Վարելահողերի հետագետե ավելի ու ավելի գգացվող պակասը լրացնելու համար գյուղացիները հարկադրված էին զանգվածաբար դիմել քաղաքապատկան հողերը վարձակալելուն: Հողի վարձակալման գինը նրա պահանջարկի ավելացման հետ մեծ շափերով բարձրանում էր:

Երկրամասի կենտրոնական «Պրիագովսկի կրայ» թերթում պատմվում է քաղաքին պատկանող վարելահողերի վարձակալման բնորոշ դեպքերից մեկի մասին: Վարձով տրվում էր վեց հազար դեսյատին վարելահող: Երջակա հայկական գյուղերից ժամանում են բազում վարձակալողներ, որոնք թեպետե նախապես համաձայնության էին եկել բարձր գին շտալու հարցում, սակայն մրցակցության մոլուցքի մեջ ընկնելով, մոռանում են նախնական պայմանավորվածությունը: Քաղաքի աղաներն օգտվելով դրանից, անընդհատ բարձրացնում են գները և վարելահողները, նախորդ տարիների համեմատությամբ, հանձնում կրկնակի բարձր գնով¹⁶⁸:

Հայ գյուղացիներն աստիճանաբար համախմբվում և սկսում են միանաբար դիմադրել, քաղաքի մեծամեծների՝ իրենց հաշվին մեծ շահույթ ստանալու վորձերին: 1906 թ. քաղաքապատկան հողերը երկրագործներին վարձով տալը, վերջիններիս կողմից բոյկոտի ենթարկելու հետևանքով լուրջ դժվարությունների է հանդիպում: Սեպտեմբեր ամսին նոր նախիջևանի տնօրենները գյուղացիների հետ գործարք կատարելու նոր փորձ են անում, սակայն, ինչպես հաղորդում է թերթի թղթակիցը, երկրագործները «Կանխավ միմյանց հետ պայմանավորվել էին շրար-

168 «Приазовский край», 1907, № 227.

րացնել գները և իսկապես նրանք հասան իրենց նպատակին: Այն հողերը, որ անցյալ տարիները ծախվել էին 25—30 ոռուլով, այս տարի, նոր պայմաններում, ծախվեցին 12—13 ոռուլով: Սա գյուղացիների մեջ զարթնած ինքնագիտակցության նշան էր»¹⁶⁹:

Հողի վարձակալումը երբեմն այնպես էր ծանրանում գյուղական տնտեսությունների վրա, որ նրանք դժվարանում էին վարձը վճարել: Դա անախորժության, անգամ ընդհարման տեղիք էր տալիս: Այսպես, օրինակ, 1907 թ. քաղաքի վարելահողերը վարձած Ս. Խաչ ավանի բնակիչները չեն կարողանում լրիվ վճարել վարձագինը: Քաղաքի վարչությունն արգելում է դաշտից հացահատիկի տեղափոխումը, որով, փաստորեն, բռնագրավլում է բիրքը: Ավանի բնակիչները նախ խնդրում են թույլատրել տեղափոխել հացահատիկը, ապա սկսում են սպառնալ, անգամ ուժի դիմելու փորձեր են անում: Համոզվելով, որ այդ ամենը ներգործություն չի ունենում՝ դատարկ սայլերով վերադառնում են տուն: Վարձակալողների մի մասը վճռում է անտեսելով արգելքները, տեղափոխել հացահատիկը: Գյուղացիների մեծ մասը, սակայն, հակվում են հարցը խաղաղ ճանապարհով լուծելուն: Նրանք դիմում են քաղաքային վարչություն և խնդրում հողավարձի գանձումը հետաձգել մինչև հացահատիկի հալսումը, որպեսզի հնարավորություն ունենան վարձը վճարել¹⁷⁰:

Գյուղացիական ուժիորմից հետո, հայ երկրագործներին պետական գյուղացիների իրավունքներում, նրանց հետ համահավասար դրության մեջ դնելուց, հատկապես ունիական հողակտորների հետ ազատ վարվելու լայն հնարավորություն ընձեռող 1906 թ. ստոլիկինյան ագրարային ձեռնարկումներից հետո, տարածում գտավ հողաբաժնները վաճառելը, նվիրելը, գրավ դնելը, ուրիշ խոսքով՝ օտարելը:

Զալթը գյուղի ավագը և ծերերը գեռուս 1860-ական թվականներին վերադաս մարմիններին առաջարկում էին գյուղացիների հողաբաժնները վերաշափել սահմանները ճշտորեն որոշել:

Նրանք իրենց նկատառումները հիմնավորում էին գյուղական բնակչության հողատարածությունների համամասնությունը խախտվելու հանգամանքով: Բնակչության մի մասի հողատարածությունը, հավաստում էին նրանք, այնքան է ընդարձակվել, որ սկսել են վարձով տալ, իսկ նրանց կողքին կան սնանկ, ամեններն հողաբաժն շոմեցող մարդիկ¹⁷¹:

169 «Նոր կյանք», 1906, № 15.

170 «Приазовский край», 1907, № 191.

171 ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 1675, թ. 2:

Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող ընդամենը երկու-երեք տարվա ընթացքում Մեծ Սալա գյուղի հողերից վաճառվել էր 560 դես., նեսվիտայից՝ 500 դեսյատին¹⁷²: Մյուս մեծ գյուղերում հողերի վաճառքն ավելի մեծ ծավալ էր ընդունել: Դրա հետևանքով մի կողմից ստվարանում էր հողագուրկ, շրավոր գյուղացիների թիվը, մյուս կողմից ուժանում էր նոր հողաբաժնների տեր դարձող քաղաքի, ինչպես նաև գյուղերի աղայական դասը:

Սեփական հողամասերը մեծացնող և այլ ուղիներով հարստացող գյուղերի պետերն, ինչպես և պետք էր սպասել, աստիճանաբար ընդարձակում էին նաև իրենց իրավասությունները, դառնում ինքնիշխան ու օդինազանց: Զալթը գյուղի ավագ Գ. Աթոյանն առանց որևէ հիմքի ոգուազայիմքը երկու օրով ձերբակալում է թեմականավարտ, Փարիզի պայությամբ և գյուղի ավագ Գ. Զալաշյանին: «Զալթը սա առաջին դեպքը չէ,—գրում է տեղի թղթակիցը, —ուսուցչությունը և գյուղի ինտելիգենցիան միացյալ ուժիրով պետք է աշխատեն վերջ դնել գյուղի ռազմական գարմունքին»¹⁷³:

Ագրարային հարաբերություններում առաջացած սոցիալական հակասություններով է, անտարակույս, բացատրվում այն հանգամանքը, որ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին հայկական կենտրոնական ու տեղական մամուլում վերաբացվում է, նախկին՝ 1830—1840-ական թվականների, կարծես արգեն պատմության գիրկն անցած, պայքարը Մամուլի էշերում քաղաքի մեծամեծներին դատապարտում են հայկական գյուղերին և Ա. Խաչ վանքին պատկանող հողերը յուրացնելու համար: Ապա խորհուրդ է տրվում ուղղել ժամանակին թույլ տրված անիրավությունը, ետ վերադարձնել այդ հողերը¹⁷⁴:

Տակավին 1850—1860-ական թվականներին, հայկական գաղութում եկեղեցական գումարների շուրջ ծայր առած հասարակական հակամարտերի հետնախորքում, անգամ իշխող խավերի ներկայացուցիչները, սոցիալական պայքար էին տեսնում: «Տրամարանական գիտության հետեւողներուն հայտնի է,—գրում էր Գ. Այվազովսկին,—որ մարդիկ իրենց դատողութեանց մեջ շատ անգամ ասով կսխալին, որ պատճառ շեղածքանը պատճառի տեղ դնեն: Այսպես նաև նախիշեանի երկպառակտությունը իսկական պատճառ՝ ու թե եկեղեցական դրամներուն ազգային ուսումնարանի վրա գործածելն էր ինչ որ կասվեր, հապա այն հին ատե-

172 «Գաղութ», 1914, № 4:

173 Նույն տեղում, 1915, № 35:

174 «Մեղադական հայաստանի», 1884, № 85, «Նոր գարե», 1898, № 45, «Էպւու», 1910, № 6, 1914, № 17:

լությունը և անողոքելի հակառակությունը՝ զոր իրարու դեմ ունեին մեկ քանի խոսքի տեր ու հարուստ անձինք, և նոցա հետ նախիշեանի ու գյուղական բնակչաց մեկ մասը, գուցե նաև մեծ մասը, իսկ եկեղեցական փողերուն խնդիրը լոկ պատճառանք և առիթ էր՝ այն հակասությունն ավելի գրգռելու, և իրեք թե օրինավոր ձև տալու նորան»¹⁷⁵:

Ինչ խոսք, տվյալ դեպքում, նոր նախիշեանի և թեսարարիայի թեմի հոգեոր առաջնորդը, ակամա, ճիշտ մեկնություն է տալիս Դոնի հայության ներսում արմատավորված սոցիալական հակասություններին:

Անհամեմատ ավելի մեծ մտահոգություն էր առաջացնում քաղաքի և հայկական գյուղերի հարաբերության հարցը: Գաղութի նշանավոր գործիչները խուլ տագնապով անդրադառնում են այդ խնդիրն և հայ հասարակության միասնությունը պահպանելու ձգտումով ջանում բացահայտելու իրողությունը: Նրանք միաժամանակ վիճակը շտկելու զանազան դեղամիջոցներ էին առաջարկում:

Կր. Զալիխուշյանը «ինչ է նայում, ինչ է մտածում նորնախիշեանցին» Հոդվածում պատմում է վեց հայկական գյուղերի բնակիչների աշխատանքի դժվարին պայմանների, նրանց հետամնացության, հիվանդությունների տարածվածության, բժշկի, դեղորայքի բացակայության մասին: Ալպա խարազանում է նախիշեանի երեկի վաճառականությանն ու մտավորականությանը, որոնք հարյուր քսան տարվա ընթացքում ամենակի շեն մտածել ու հոգացել գյուղացիների կարիքները, այլ անտարբեր նայել ու արհամարհական վերաբերմունք են ունեցել նրանց նկատմամբ¹⁷⁶:

Խ. Փորքշեյանը քանից անդրադառնում է գյուղերի տնտեսական կյանքին, նկարագրում նրանց առօրյան, հողատիրությունը, քաղաքաբնակ երկրագործներին՝ «սապանճիներին» գյուղերում բնակեցնելու անհրաժեշտությունը և այլ հարցեր¹⁷⁷: Նա բննադատում է նոր նախիշեանի կառավարիչներին և մտավորականությանը, գյուղին օգնություն ցուց չտալու, գյուղացիների առաջադիմությանը շնպաստելու համար¹⁷⁸:

Քաղաքի և գյուղերի հակասություններին Մ. Չուբարյանը հետևյալ մեկնությունն է տալիս: Հայկական մագիստրատի գոյության ժամանակ, մանավանդ նրա գործունեության առաջին շրջանում, նախիշեանը գյուղերի հետ մի շրջան, մի հասարակություն էր կազմում: Գյուղերը քաղա-

175 Գ. Այլազյան, Պատմություն եալիպյան ուսումնարանին ազգին հայոց (1858—1871), Տիբիս, 1880, էջ 132:

176 «Մշակ», 1901, № 31:

177 «Հայոց» 1910, № 6. «Գաղութ», 1914, № 26:

178 Նույն տեղում:

քի հետ հավասարապես մասնակցում էին գաղութի կառավարչության գործերին: Ժամանակի ընթացքում քաղաքացիները սահմանափակում են գյուղացիների իրավունքները, ժողովների շեն հրավիրում, հաշվի չեն նստում նրանց հետ: Այդ պատճառով էլ սառնություն է ընկնում նրանց մեջ: Հետո հետեւ սառնությունը փոխվում է անգամ ատելության: Գյուղացիների մեջ արմատավորվում է այն համոզմունքը, որ քաղաքացիք թշնամի են իրենց և նրանցից լավ բան չի կարելի սպասել: Նրանք ամեն բանում սկսում են հակառակ քաղաքի գործել և առիթ են փնտրում իրենց վարչական կապերը խզելու նախիշեանից: Գործը հասնում է նրան, որ 1864 թ., երբ հրատարակվում է զեմստվոների մասին օրենքը, նրանք որպարզում են նախիշեանից և միանում Ռուսովի շրջանի զեմստվոյին¹⁷⁹:

Որոշ թղթակիցներ քաղաքի և գյուղերի բնակիչների անհամերաշխությունը դիտում են որպես Ղրիմյան շրջանից ժառանգած հատկանիշ: Ազովի ավազանում բնակվելու ընթացքում այդ հակասությունները խորանում և այն աստիճանի հն հասնում, որ ի վնաս գաղութի ազգային շահերի, գյուղացիները ցանկանում են վարչական բոլոր կապերը խզել նախիշեանից: Շեշտվում է, մասնավորապես այն կարևոր հանգամանքը, որ նախիշեանը, նրա մտավորականությունն անտարբեր ու պասսիվ դիրք է բռնել, չի կարողացել կամ չի մտահոգվել ներազելու գյուղերի մտավոր, կուլտուրական զարգացման վրա¹⁸⁰:

Դոնի հայկական գաղութի գոյությանը սպասնացող վտանգը, որն առաջացել էր հայկական գյուղերի՝ նախիշեանից անջատվելու ձգտումով, բնական է, որ ալեկոնում էր տեղի հայ հասարակական կյանքը: Հայկական գաղութի երեկելի դեմքերի ահազանգերը հասկանալի են, սակայն դժվար է համաձայնել այդ երևութին՝ նրանց տված մեկնության հետ: Հազիվ թե ծշմարիտ կարելի է համարել քաղաքի և գյուղերի հակասությունները, վերջիններին՝ առաջադիմությանը շնպաստելու, քաղաքի անհոգ ու անտարբեր վերաբերմունքով բացատրելը: Նախ գյուղացիները այնպիսի մակարդակ չունեին, որ գիտակցեին այդ: Դրանից դատ, քաղաքի կողմից գյուղի կուլտուրական զարգացմանը շնպաստելը այն հարցը չէր, որի պատճառով գյուղացիները ցանկանային կապերը խզել կյանքի ու կենցաղի բազմաթիվ թելերով կապված իրենց ազգակիցներից և միանալ Ռուսովին:

Նոր նախիշեանի և հայկական գյուղերի հակասությունները, անտարբակույս, սոցիալական հողի վրա առաջացած հակամարտություններ

179 «Հայոց», 1911, № 13:

180 «Հայոց», 1911, № 7, «Գաղութ», 1915, № 23:

էին: *Փաստորեն 19-րդ դ. առաջին տասնամյակներին սկսված քաղաքի վերնախավերի հայկական գյուղերի հողատարածությունների նկատմամբ ոտնձգությունների, հետագայում ավելի սուր հակամարտությունների բնույթ ընդունած պայքարի ընթացքում գյուղացիները մեծ դաշտանական գաղաքի մեծամեծները կանգչառներով միջոցների առաջ, օգտագործելով բոլոր հնարավորությունները, այդ թվում և բարձրաստիճան անձնավորությունների հետ իրենց անձնական կապերը, ամեն գնով ձգտում էին սեփականացնել գյուղապատկան հողերը; Նրանք համանման վերաբերմունք ունեին նաև քաղաքի աշխատավորական ներքնախավերի նկատմամբ:*

Անդրադառնալով քաղաքի և գյուղերի հակասություններին, Ե. Շահզադը գրում է. «Դորան նպաստել է և նախիշեանի ներքին կառավարության ձեզ, որ ընդհանրապես աղայական լինելով, չի ճանաչել ոչ թե միայն գյուղացկոց իրավունքները, այլև հաճախ արհամարել է մինչև անգամ և քաղաքի ստորին դասակարգի՝ աղքատների իրավունքները»¹⁸¹,

Ետուեֆորմյան շրջանում, կապիտալիստական հարաբերությունների գարգացմանը համընթաց, քաղաքի վերնախավերն ավելի էին ընդլայնում գյուղական բնակչության հաշվին հարստանալու իրենց գործունեությունը; Նրանք խիստ բարձր գներ էին նշանակում գյուղացիներին վարձով տրվող հողերի վրա; Զեռնտու գներով տեր էին դառնում վաճառքի հանվող նրանց հողաբաժիններին; Օգտվելով գյուղացիների անտեղյակությունից, չնչին գումարով գնում, ապա վերավաճառում էին նրանց մթերքները և զանազան այլ ձեռնով շահագործում նրանց;

Քաղաքի տնօրինությունն ամեննեին չէր մտահոգվում, չնայած գանձվող համապատասխան հարկերին ու տուրքերին, գյուղի կարիքները հոգալու ուղղությամբ: Տասնամյակներ շարունակ տարվող և աստիճանաբար ավելի ու ավելի խորացող այդ քաղաքականության հետևանքով էր, որ գյուղացիներն ատելությամբ ու անգամ թշնամանքով էին նայում «քաղաքին» և չէին ցանկանում որևէ գործ ունենալ նրա հետ:

Ի վերջո այդ ամենը կապիտալիստական հարաբերությունների խորացման հետևանքով սոցիալական շերտավորման ուժեղացման, քաղաքում բնակվող աղայական դասի կողմից գյուղական բնակչության շահագործման արդյունք էր, դրա ուղղակի արտահայտությունը:

Հայկական գաղութի ազգաբնակչությունը բաժանվում էր երեք հիմնական դասի: Առևտրաարդյունաբերական մեծահարուստների դասը, որի մեջ մտնում էին խոշոր ձեռնարկատերերը, մեծ կապիտալներ ունե-

ցող առևտրականները կամ տնտեսության այդ երկու ճյուղերով միաժամանակ զբաղվող տիրող դասակարգի ներկայացուցիչները: Նրանք իշխող դիրք ունեին քաղաքային խորհրդարանում ու վարչությունում և առևտրական տական հայ համայնքի կյանքին: Ավելորդ չէ, սակայն, նշել, որ Դոնի հայկական գաղութի մեծահարուստների կարողությունները համեմատաբար համեստ, սահմանափակ էին: Միլիոնների հասնող խոշոր կարողությունների տեր արդյունաբերողների, ինչպես ասենք Հ. Քոչնարյանի և ուրիշների համար գաղութի ընձեռած հարավորությունները անբավարար էին լայն գործունեություն ծավալելու համար: Այդ պատճառով էլ նրանք տեղափոխվում և իրենց գործարաններն ու ֆաբրիկանները հիմնում էին Ռուսություն և առևտրաարդյունաբերական այլ խոշոր կենտրոններում:

Երկրորդ դասը, դա միշտ կարողության տեր առևտրականների, արհեստավորադյունաբերողների և հողատերերի, այդ թվում և գյուղական հարուստների շերտն էր: Միջին այդ խավը բավականին ստվար էր: XIX դարի վերջին տասնամյակներից խոշոր արդյունաբերության և առևտրական կազմակերպությունների մրցակցության հետևանքով նկատվում է, թեպետև ոչ արագ թափով, այս դասի քայլայման, մասամբ էլ խոշոր բուրժուազիայի շարքերն անցնելու նշաններ:

Երրորդ, հիմնական շերտը շահագործվող՝ քաղաքի և գյուղերի անմիջական արտադրող կամ էլ տարբեր զբաղմունք ունեցող ներքնախավերն էին: Ունեղրկումն ու քայլայման այս դասի՝ քաղաքի արհեստավորության և գյուղական երկրագործ բնակչության շրջանում նկատելի էր և աստիճանաբար ավելի ու ավելի մեծ ծավալ էր ընդունում:

Այդ պատճառով էլ ամեննեին չպետք է զարմանալ, որ հայկական գաղութի տնտեսական ընդհանուր բարվոր վիճակի պայմաններում հանդիպում ենք նաև ժողովրդական զանգվածների ոչ միխթարական նյութական վիճակի, ընշաղուրկ ու աղքատ մարդկանց առկայությունը հավաստող փաստաթղթերի:

Այսպիս, 1867 թ. քաղաքի դիմացի քարվանսարայի դեր կատարող տարածությունը մեկ տարի ժամանակով տրվում է վարձով՝ ստացված գումարը աղքատներին բաժանելու նպատակով¹⁸²: 1906 թ. Նոր Նախիջեվանի քաղաքային խորհրդարանն իր նիստերից մեկում, որտեղ նախագհում էր Մ. Բալաբանովը, հատուկ քննարկման հարց է դարձնում և ապա միշտցներ հատկացնում անգործ ու աղքատ մարդկանց համար¹⁸³:

181 Ե. Շահզադ, Նոր Նախիջեանը և նորնախիջեանցիք, էլ 191—19^o

182 ՀԿՊԱ, ք. 189, գ. 1736.

183 «Приазовский край», 1906, № 1.

Նախորդ տարիների օրինակով վ. Տեր-Կեորկովը նվիրաբերության կարգով հոգաբարձության տրամադրության տակ է զնում 106 զույգ կոշիկ աղքատներին բաժանելու համար¹⁸⁴: Մյուս կողմից ավելի ու ավելի էին ուռանում և ընչափաղ դառնում գաղութի մեծահարուստները: Ռ. Պատ. կանյանը դիմելով նրանց 1890 թ. գումար էր. «Ձեր անունը վագր է, միշտ ժարավ անմեղ արյունի, ձեր կյանքը ազգին միշտ թանկ կնստի: Դուք ազգի արյունով ապրող էք, դուք միշտ հալածող ու սպանող էք նորա հավատարիմ հովիվներուն, ձեր գազանային անձն և ձեր կորյուններուն ապրեցնելու համար պետք է ամբողջ քաղաքի և գավառի բնակիչներու արյուն և քրտինք: Ով որ ձեր գործի, ձեր ստրուկը չէ՝ նա ձեր արյունալի գոհն է, ով չի սիրում ձեզ, նորա ճակատի վրա գրած է աքսոր, հալածանք՝ և մահ»¹⁸⁵:

Այսպիսով, ինչպես երեաց վերը շարադրվածից, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ապրանքադրամական հարաբերությունները խոր ակոսել էին հայկական գաղութի տնտեսական կյանքը: Նոր նախիշեանի արտադրության հիմնական բնագավառների՝ գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացմանը խթանում էին առաջին հերթին առետափոխանակային հարաբերությունները: Արտադրության տարրեր ճյուղերի առաջընթացը և առանձնապես առևտրա-դրամական հարաբերությունների ծավալումն ուժեղացրին սոցիալական շերտավորումն ու դասակարգային ներհակությունները: Կապիտալիստական հարաբերությունների խորացումը և նրա հետեանքները ծանր ու քայլայիշ նշանակություն ունեցան, առաջին հերթին, անմիջական արտադրող դասակարգի համար:

¹⁸⁴ Նույն տեղում, № 83:

¹⁸⁵ Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. V, էջ 401:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով ամբողջ երկրի և, հատկապես, հարավային Ռուսաստանի տնտեսական կյանքում առաջացած հեղաբեկումներն առավել դանդաղ ու աննկատ էին կատարվում, քան հասարակական մարզում: Այդ երկույթը՝ տնտեսական և, մյուս կողմից, հասարակական հարաբերություններում կատարվող տեղաշարժերի, և դրանց ընդհանուր առաջընթացի միջև նըշմարվող տարրերությունն ակնբախ էր դրսերվում մասնավորապես նոր նախիշեանի Հայկական գաղութում: Դա ուներ իր պատճառները:

Ավատական արտադրաեղանակի աստիճանական անկման և նոր հարաբերությունների զարգացմամբ պայմանավորված հասարակական կյանքի զարթոնքը, ինչպես ասվեց, իր հորձանուտի մեջ է առնում Դոնի Հայ հասարակությանը: Ապրանքափոխանակային հարաբերությունների ծավալումը, հաղորդակցության ճանապարհների և հատկապես երկաթուղու կառուցում աշխուժացնում էին կապերը Ռուսաստանի կենտրոնների, Մայր Հայրենիքի և Հայաշատ բնակավայրերի հետ:

Ուժեղանում է երիտասարդության հոսքը դեպի Ռուսաստանի ու արտասահմանի կրթական օջախները, հաճախակի են դառնում նշանավոր գործիչների փոխայցելությունները: Նոր պահանջներին համապատասխան հիմնվում են հասարակական կյանքի առաջընթացը խթանող տպարաններ, դպրոցներ, թատրոններ և մշակութային այլ օջախներ: Զարգանում է ազգային գրականությունը, լեզուն և մշակութը: Երիտասարդությունը համակվում է դեմոկրատական, ազգային-լուսավորական գաղափարներով, առաջանում է եվրոպական բարքերն ու քաղաքակրթությունը ընդորինակելու ձգտում: Ռուսաստանի կենտրոններում, Կովկասում հրատարակված գրքերն ու պարբերականները տարածվում են Հայկական գաղութներում այդ թվում և նոր նախիշեանում:

Աստիճանաբար սկսում է վերանալ հայկական գաղութների ներփակությունը, վերջիններս սկսում են հաղորդակցվել համառուսաստանյան հասարակական ընդհանուր կյանքի խնդիրներին:

Անտարակույս նոր Նախիչևանում առաջադիմական միտումներ ունեցող որոշ վաճառականների, ինչպես և Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում կրթություն ստացած մտավորականության առկայությունը ինչ-որ շափով ազատամտական, գենոկրատական իր կնիքն էր դրեւ գաղութի հասարակական կյանքին վրա, տակավին նախորդ շրջանում՝ XIX դ. առաջին կեսին:

Դեռևս 1830—50-ական թվականներին հողային հարցի, հանրային միջոցների շուրջ մինչուրտը շիկացած էր Դոնի հայ հասարակության ներհակ ուժերի միջև։ Այդ հանգամանքն ինքնին նպաստում էր գաղութի համայնական, ընդհանուր հարցերի նկատմամբ հետաքրքրության աճին, առհասարակ հասարակական կյանքի աշխուժացմանը։

Մեծ էր այստեղ նաև մամուլի դերը։ Կյանքի պահանջները թելադրում էին ստեղծել ժամանակի ոգում համապատասխան նոր օրգաններ, թերթեր, ամսագրեր։

Հայ իրականության մեջ XIX դարի 50—60-ական թվականներին դեմոկրատական ուղղության ամսագիրը, որ հանուն նոր գրականության, եզրի և առհասարակ հանուն ազգային առաջադիմության, անհաշտ պայքար սկսեց կղերաֆեոդալական մտայնության դեմ՝ «Հյուսիսափայլն» էր։ Նշանավոր այդ պարբերականն իր ազգարարած սկզբունքներով, հարկավ, տարբեր ընդունելություն էր գտնում հայկական շրջաններում։ Այս կամ այն հայկական քաղաքում «Հյուսիսափայլի» տարածում գտնելը լուրօրինակ շափանիշ էր հայկական տվյալ կենտրոնի հասարակական կյանքի հասունության, ամսագրի քարոզած լուսավորական գաղափարների համար։

Այդ առումով խիստ հատկանշական է հետեւյալ փաստը։ 1858 թ. «Հյուսիսափայլ» ամսագրի տպաքանակի իրացումը հասնում էր 262-ի, որից թիֆլիսում՝ 48, Աստրախանում՝ 33, Մոսկվայում՝ 31, Ղզլարում՝ 20, Շամախիում՝ 12, Գետերբուրգում՝ 10, իսկ նոր Նախիչևանում՝ 56 օրինակ։ Այսպիսով, ամսագրի ամբողջ տպաքանակի մեկ հինգերորդ մասը սպառվում էր նոր Նախիչևանում։ Ուշագրավ է, որ Դոնի հայկական գաղութը «Հյուսիսափայլի» ավելի շատ ընթերցողներ ուներ քան, անգամ, այնպիսի խոշոր հայաշատ կենտրոն, ինչպիսին Թիֆլիսն էր։

1 թ. Անտեսն, Ռուսակայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում, Համ. I, Թագու, 1916, էջ 319—320։

Անշուշտ իրավացի է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, երբ անդադարական պատմության հարցերին հետաքանակ հայացքի պատմության հարցերին հետևանում է. «Պետերբուրգն ու Մոսկվան, նոր Նախիչևանն ու Աստրախանը, Ղզլարն ու Մողղովը շատ ավելի անմիջականորեն էին կապված ինչու 50—60-ական թվականների արևելահայ ազգային-լիբերալներու լուսավորական գործունեության հետ, քան Երևանն ու Ալեքսանդրապոլը, Մեծ Ղարաբիլիսան ու նոր Բայազետը, որոնց վրա դեռ աննշան պոլը, Մեծ Ղարաբիլիսան ու նոր Բայազետը, որոնց վրա դեռ աննշան պոլը, էին տարածվում ուսուական կապիտալիզմի ազգեցության շուշփուները»²։

Փոքր գաղութները, որպես կանոն, ապրում էին սոսկ տեղական նշանակության հարցերով՝ ներհամայնքային կյանքով։ Միանգամայն այլ էր իրավիճակը Դոնի հայկական գաղութում։ Հայկական ամենախոր գաղթավայրը լինելով նա հասարակական կյանքի գործունեության լայն, համախառնական ինդիրներ ընդգրկող շառավիղ էր դրսևորում։ Ճիշտ չէր լինի սակայն, աշխույժ ու արգասավոր հասարակական կյանքի առկայությունը բացատրել միայն գաղութի մեծությամբ։ Այստեղ էական զեր էին կատարում նաև ուրիշ գործուներ։

Ի տարբերություն ուսուահայ մյուս գաղութների (բացառությամբ Գրիգորիովովի), որոնք սկզբնավորվում էին արդեն գոյություն ունեցող քաղաքներում կամ այլ բնակավայրերում և տիրապետող այլազգի բնակչության մեջ ստեղծում սեփական համայնք, նոր Նախիչևանը հիմնադրվեց անմարդաբնակ տարածությունում և հենց սկզբից որպես զուտ հայկական քաղաք իգուր չէ, որ երկար տարիներ նոր Նախիչևանը հայկական հինգ գյուղերի հետ պետական-պաշտոնական գործուներում անվանվում էր նոր Նախիչևանի կամ հաճախ ուղղակի հայկական օկրուգ։ Բավականաշափ լայն ինքնավարություն ունեցող, միայն հայերով բնակեցված քաղաքում և դրա հետ մի ամբողջություն կազմող հայկական գյուղերում մյուս գաղթավայրերի համեմատ առավել դյուրին ու անկաշկանդ էր զարգանում ազգային կյանքը։

Դեռևս XVIII դ. վերջում նոր Նախիչևանի Ս. Խաչ վանքում հիմնված Խալդարյան տպարանի միջոցով ուսուահայերի հոգեւոր առաջնորդ Հ. Արդությանի և նրա համախոհների տպագրական-հրատարակչական ժաղացուն աշխատանքները և ապա Պատկանյանների, Հ. Ալամդարյանի կրթական-լուսավորական բեղում գործունեությունը, տեղի ուսույալ հայ երիտասարդության, նոր Նախիչևան ժամանող նշանավոր գործիչների,

2 Ա. Գ. Հավեաննիսյան, 19-րդ դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հասանքները (ՊԲՀ, 1968, թ. 1, էջ 33)։

«Հյուսիսափայլի» և այլ պարբերականների պրոպագանդան կովտուր-լուսավորական և մշակութային աշխույժ էին հաղորդում հայկական գաղոթին:

Այդ ամենից զատ կար նաև մեկ այլ գորեղ գործոն: Դա մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայ գրականության և հասարակական-քաղաքական ասպարեզի խոչըն գործիչներ Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի՝ Դոնի հայությունից սերված և իրենց գործունեությամբ գաղութի հետ կապված լինելու հանգամանքն էր: Նրանք մեծ ազդեցություն ունեցել նոր նախիշևանի ինչպիս մտավոր-լուսավորական, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Հայունի է, որ Մ. Նալբանդյանն իր ծննդավայրում, տակավին պատանեկության տարիներից, ներքաշվեց հայկական շրջաններում նկատելի ազմով հանած նիրգաղութային հակամարտ ուժերի պայքարի մեջ: Էջմիածնի կաթողիկոսի հովանավորությունը վայելող գաղութի հետադիմական, ուներ շերտերի հալածանքներից ու հետապնդումներից նա կարողացավ խույս տալ միայն նոր նախիշևանից հեռանալու գնով:

Թողնելով հայրենի քաղաքը, նալեանդյանը շկտրվեց ու լիորթացավ նրանից: Ընդհակառակը, նա մշտապես կապված ու լավատեղյակ մնաց Դոնի հայության առօրյային, այնտեղ կատարվող իրադարձություններին: Պատահական չէր, որ հայրենի քաղաքում բարեկարգ դպրոց բացելու մտահոգությամբ նա մամուլի էջերում բարձրացրեց նոր նախիշևանի վաղեմի կտակների հարցը: Ապա հանձն առավ այդ դժվարին դործ և այն ստանալու նպատակով մեկնեց Հնդկաստան ու հաջողությամբ լուծեց այդ խնդիրը:

Անգամ Պետրոպավլովյան բանտում եղած տարիներին, Նալբանդյանը հետևում էր իրեն առավել հոգեհարազատ գաղութի անցքերին, նոր նախիշևանում եկամտաբեր նոր կովտուրաներ աճեցնելու խորհուրդներ էր տալիս, նյութեր պահանջում գաղութի պատմության որոշ հարցերի մասին հոդված գրելու համար³:

Մյուս կողմից, նոր նախիշևանում առանձնահատուկ հետաքրքրությամբ էին հետևում Մ. Նալբանդյանի հոդվածներին, որոնց մի մասը վերաբերում էր Դոնի հայ զանգվածի կյանքի հուզող խնդիրներին, ինչպես հայունի է, Մ. Նալբանդյանի մահը մեծ վիշտ առաջացրեց, իսկ թաղումը հասարակական լայն բնույթ ստացավ: Այդ վկայում է նոր նախիշևանի հայության վրա նրա ունեցած մեծ ազդեցության մասին: Հետագայում ևս թողած գրական ժառանգության և սերունդների հիշողության

մեջ պահպանված նրա անձնուրաց գործունեության շնորհիվ զգալի էր մ, նալբանդյանի ազդեցությունը բովանդակ հայ իրականության մեջ, և արևելահայ, և՝ արևմտահայ շրջաններում:

Մեծ էր նաև Ռ. Պատկանյանի ազդեցությունը: 1860—1880-ական թվականներին ակտիվ գործունեության շրջանում, իր մարտական բանաստեղծություններով նա անդրադառնում էր համազգային պրոլեմատիկան ինդիրներին: Դրա հետ մեկտեղ, ապրելով ու գործելով նոր նախիշևանում, նա քաղաքացիական պողովայով, հրապարակախոսական հոգվածներով, պատմվածքներով, լուսաբանում էր Դոնի հայ զանգվածի կյանքի այլևայլ կողմերը: Հատուկ անմիջականությամբ, սուր ու դիպուկ գրչով անդրադարձեն նախիշևանությամբ, սուր ու դիպուկ գրչով անդրադարձեն նախիշևանի հարցերին, նրա մշակույթին ու հասարակական կյանքի հարցերին:

Ռ. Պատկանյանի ազգատության կողող, հայրենաշունչ ստեղծագործությունները ոգեշնչման աղբյուր էին համայն հայության և հատկապես նախիշևանի երիտասարդության համար: Այդ ամենն, անտարակազմությունը, նպաստավոր պայմաններ էին ստեղծում ազգային-հասարակական կյանքի արդասավորման համար:

1. ՆՈՐ ՆԱԽԻՇԵՎԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ԲԱԼԻՑԻՇՈՒԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Գյուղացիական ռեֆորմից հետո, 1860—70-ական թվականներին սկսված լուսավորական շարժման, դեմոկրատական ուժերի ակտիվացման, առհասարակ հասարակական կյանքի աշխուժացման շրջանում, նախիշևանի վերացվեցին նոր նախիշևանի ինքնավար մարմինները և նա հավաերը կայսրության մյուս քաղաքներին, թվում էր, թե Դոնի հայ կական զանգվածը շուտով կարող է կորցնել իր ազգային նկարագիրը: Սակայն կապիտալիստական հարաբերությունները բերում էին նաև ազգային զարթոնք, ազգային արժանապատվության զգացում, համազգային խնդիրների արձարձում, լիբերալ և դեմոկրատական բարեկուսնությունների ծրագրեր: Հետեւաբար ստեղծվեցին ժամանակի ոգուն համաշնչուն և նրան արձագանքով այնպիսի նոր հաստատություններ, որոնք նոր պայմաններում գալիս էին ինչ-որ շափով փոխարինելու Դոնի հայության ինքնավար գոյությունը փաստող նախկին մարմիններին:

Արևելահայ լիբերալ-բուրժուական նշանավոր գործիչ Ստեփանոս Նազարյանը զարգացող կապիտալիստական հասարակարգում ուսուահա-

³ Ե. Շահագիզ, Դիլան Միքայել Նալբանդյանի, Երևան, 1932, էջ 322—327.

յությանը կրթելու, լուսավորելու հատուկ տեսակետ էր մշակել: Նա իր խմբագրած «Հյուսիսափայլ» ամսագրում, դեռևս 1862 թ. հանդես եկավ «Առաջարկություն» ծրագրային հոդվածով:

Ուշադրություն հրավիրելով այն հանգամանքի վրա, որ Հայերք զրկված են լուսավորությանը զորավիգ լինող քաղաքական իշխանությունից, բնակվում են ցրված, աշքի են ընկնում անձնապաշտական գործունեությամբ, բնակչության մի մասն ապրում է անձուկ պայմաններում, նշում էր, որ իրիտասարդությունը հաճախ հարավորություն շիռնենում ուսում ստանալու Առանձին հարուստների միջոցներով սովորողների թիվը նախ շատ փոքր է և ապա վերջին հաշվով վիրավորական՝ սովորողների համար: Ազգի ապագան միայն նրա քաղաքակրթվելու և լուսավորվելու մեջ տիսնող գործիչն այդ ամենից հետեւցում էր, որ ժողովուրդն ինքը համագործակցական ընկերություններ պետք է կազմակերպի և ինքնօգնության մեջ փնտրի իր գրկությունը:

Այդ խնդիրն իրականացնելու համար նազարյանն առաջարկում էր միջոցներ հավաքել և Ռուսաստանում հայկական մի ընդհանուր ընկերություն ստեղծել: Ընկերությունը կոչված էր լինելու գրադպել հայերի նյութական և բարոյական կյանքը բարվութելով: Նոր հաստատությունը խնդիր էր ունենալու տնօրինելու մասնավորապես կարիքավոր պատահներին ուսման տալու, շնորհալի երիտասարդներին արտասահման կրթության գործուղելու, հայկական հրատարակություններ հիմնելու և համանման այլ գործերով⁴:

Դժվար է ասել, թե հայ իրականության մեջ ինչպիսի արձագանք գտավ ճանաչված գործի հրապարակ հանած կոչը: Պետք է ենթադրել, սակայն, որ Ստ. Նազարյանի առաջարկությունն ընդուածում էր մտավորականության տրամադրություններին և որոշ շափով խթանիլ դեռ կատարեց հասարակական կազմակերպություններ ստեղծելու արդեն հասունացած խնդրում: Պատահական չէ, որ նրա ելույթներից շատ շանցած, 1860-ական թվականների կենսեցին թաքվի հայոց մարդասիրական և նոր նախիչևանի բարեգործական ընկերությունները:

Ստ. Նազարյանը նախիչևանի քաղաքագլխի խնդրանոք գրում է (1865) նոր նախիչևանի բարեգործական ընկերության կանոնագրությունը, որը շուտով հաստատվում է կառավարության կողմից: Ընկերության սկզբնավորումը հաշվում է նրա կանոնագրության պաշտոնական հաստատման ժամանակվանից՝ 1866 թվականից⁵:

⁴ «Հյուսիսափայլ» 1862, № 7, էջ 43—53.

⁵ Նորինախիչևանցիները այդ թվում և Ռ. Պատկանյանը գտնում են, որ ընկերությունը տարերայնորին ձևավորվել է փաստորին ավելի շուտ: 1860 թ. ձմռան խիստ ցրտերի

Տասնութիւն կետից բաղկացած կանոնադրությունը նախ սահմանում էր ընկերության հիմնական նպատակը: Այն է՝ օգնել նախիջեանի աղքատ ընտանիքներին իրենց զավակներին կրթության տալու գործում: Նպաստել հայերի բարեկավմանը և գաղութում լուսավորության տարածմանը: Ընկերության անդամ, ըստ ցանկության, կարող էին լինել (առանց սահմանափակման) Ռուսաստանում բնակվող այն բոլոր հայերը, որոնք տարեկան կվճարեին 5 ռ. անդամավճար, կամ միանվագ 100 ռ. և ցման աղատվում էին անդամավճար մուծելուց: Ընկերության անձնումնելի, հիմնական գումարը կազմում էր 4000 ռուբլի, իսկ մնացած միջոցների մի մասը շրջանառության մեջ էր դրվում:

Ընկերության գործերը վարելու համար երկու տարի ժամկետով ընդհանուր ծողովն ընտրում էր 22 հոգաբարձու, որոնք կազմում էին ընկերության խորհուրդը: Վերջինս ընթացիկ գործավարության համար կազմում էր վեց հոգուց բաղկացած վարչություն: Ընկերության խորհուրդը հետեւում էր ֆինանսներին, տարեկան մեկ անգամ հրավիրում ընդհանուր ժողով, ուր հաշվետու էր լինում տարեկան գործունեության մասին:

Ընկերությունն ուներ իր կնիքը, որի կենտրոնում պատկերված էր նոր նախիջեանի գերբը և գաղութի հիմնադրման տարեթիվը⁶:

Նոր նախիջեանի բարեգործական ընկերությունը կարծ ժամանակում դարձավ Գոնի հայության կենսունակ ու ճանաշված հաստատություններից մեկը և ունեցավ բավականաշատ արդյունավետ գործունեություն: Աստիճանաբար ընդարձակվում են ընկերության գործունեության շրջանակները, դրան գուգահեռ աճում են նրա անդամների թիվը, տարեկան եկամուտներն ու հիմնական կապիտալը:

1880 թ. բարեգործական ընկերությունն ուներ 345 անդամ, տարեկան եկամուտը կազմում էր 4575, իսկ ընդհանուր դրամագումիք՝ 29,168 ռուբլի⁷: Ութ տարի հետո (1888) տարեկան եկամուտը հասնում էր 6,846,

ժամանակի շատ լրավորներ ընկնում էին ծանր վիճակի մեջ և կարիք ունեին օգնության, որի կազմակերպումն իրենց վրա են առնում մի խումբ պատանիներ: Հաջորդ տարվանից այդ նախաձեռնությունը կրկնում և դրան տալիս են տեսական բնույթ, տարեկան զանազան 3 ռ. անդամության վճար: Առաջին կազմակերպված օգնությունը ստանում է երեք սրբերի այրի Սույնելապյանը:

Երիտասարդների այդ նախաձեռնությանը հավանություն է տալիս և հովանավորում Պողոս քահանա Խոնջյանը: Ընկերությունն անվանվում էր «Աղքատաց խնամակալություն» կամ «Գանձարան հավատու»: Շուտով ընկերության անդամների թիվը հասնում է 95 հոգու (ՀԿՊԱ, թ. 54, գ. 1, գ. 1024, թ. 2—16, «Փորձ» 1879, № 12, էջ 154—155):

⁶ ՀԿՊԱ, թ. 139, գ. 1780, թ. 3—6:

⁷ «Մշակ», 1880, № 113:

իսկ դրամագլուխը՝ 52,115 ռուբլու Ընկերությունն իր միջոցներով պահում էր 54 սան: Նրանցից հոգեոր սեմինարիայում սովորում էին՝ 29, Հոփիսիմյան իգական դպրոցում՝ 11, իգական պրոգիմնազիայում՝ 9, արհեստավորական դպրոցում՝ 1, լազարյան ճեմարանում՝ 2, Պետերբուրգի արվեստագիտական դպրոցում և Մոսկվայի համալսարանում մեկական հոգի: Այդ սաների մեկ տարվա ծախսը կազմում էր 2434 ռուբլի⁸:

Կարիքավոր իրիխաներին կրթության տալուց զատ, որը կլանում էր հիմնական միջոցները, ընկերությունը մասնակցում էր նաև բարեգործական այլ ձեռնարկումների: Այսպիս, Նոր նախիջևանի թեմական դպրոցի հրկրորդ հարկը կառուցելու համար (1901) ընկերությունը՝ նվիրել էր 10 հազար ռուբլի գումար⁹: 1906 թ. 1451 ո. գումար հատկացրել էր աղքատ ընտանիքների կարիքները հոգալու համար և այլն¹⁰: Բարեգործական ընկերության կենսունակ գործունեության մասին է վկայում այն փաստը, որ իր գոյության երեսում տարվա ընթացքում ծախսն՝ էր ավելի քան 100 հազար ռուբլի գումար¹¹: Ընկերության գործերը տևականորեն վարել է նրա երկարամյա նախագահ, նշանավոր հասարակական գործիչ, իրավաբան Գրիգոր Զալիխովյանը:

Ավելի համեստ գեր ուներ «Մարդասիրական ընկերությունը»: Այն հիմնվել է Եպիփան Պոպովի շանքերով, 1867 թվականին¹², թեպետև նման ընկերություն ստեղծելու գաղափարն առաջացել էր, և նրա շուրջ մարդիկ սկսել էին համախմբվել գեռևս երկու տասնամյակ առաջ¹³:

Այս ընկերության միջոցները փոքր էին: Հիմնադրման հաջորդ տարում ուներ 5167 ռուբլի, իսկ շուրջ տաս տարի անց՝ 1876 թ. այդ գումարը դանդաղ աճելով հասել էր ընդամենը 11220 ռուբլու¹⁴: «Մարդասիրական ընկերության» եկամուտները գոյանում էին իր անդամների, որոնց թիվը տատանվում էր 150—200 միջև, անդամավճարներից, նվերներից, բանկերում ունեցած գումարների տոկոսներից, նաև աշակերտների մուծած ուսման վարձից: Ընկերությունն իր միջոցները (տարեկան 3—4 հազար ռուբլի) ծախսում էր Ս. Խաչ վանքի ժառանգավորաց դրաբանը պահպանելու վրա, քանի որ վանքի միջոցներն անբավարար էին դպրոցի կարիքները հոգալու համար:

8 «Նորդ-գար», 1888, № 99.

9 ՀԿՊՊ, ֆ. 10, գ. 74, թ. 1—5:

10 «Պրիազովսկի քայլ», 1906, № 19.

11 Խուն տեղում, 1896, № 94:

12 «Փորձ», 1879, № 12, էջ 154—155:

13 «Արարատ» ամսագիր, 1869, № 3, էջ 63—65:

14 Խուն տեղում, 1877, էջ 398—399:

«Հայուհյաց խնամատար ընկերությունը» ստեղծվել է մի խումբ առաջազնություն կանանց և օրիորդների նախաձեռնությամբ, 1882 թվականին¹⁵:

Նոր նախիջևանի կանայք նկատելի շափով հասարակական հակումներ են ունեցել և հաճախ մասնակցել ազգային-բարեգործական նպատակներով կազմակերպվող միջոցառումներին: Սակայն, այդ տեղի էր ունենում տարերայնորեն և կատարվում դեպքից դեպք, որը, բնականաբար, չէր կարող գործացնել կանանց հասարակական, հանրօգուտ գործունեություն ծավալելու մղումները: Ուստի, եթե թերթերի հրապարակումներից հայտնի է դառնում Կոստանդնուպոլիսի, Թիֆլիսի և այլ քաղաքների կանանց ինքնուրույն կերպով ազգային գործունեության ասպարեզ իշնելը, նոր նախիջևանի կանանց մեջ միտք է հղանում ստեղծել բարեգործական մի հաստատություն, որը զբաղվեր քաղաքի և հայկական գյուղերի շքավոր աղջիկների կրթության ու դաստիարակության գործով:

Նկատի էր առնվում մանավանդ այն հանգամանքը, որ կային արական սեփի բազում ուսումնարաններ, իսկ իգական սեփի համար գործում էր միայն Կոկոյան ուսումնարանը և մեկ պրոգիմնազիա, ուր կարող էին սովորել միայն կարողություն ունեցող կամ երեելի ընտանիքների զավակները: Այդ ամենը նկատի առնելով, քաղաքի 45 տիկիններ և օրիորդներ 1882 թ. մայիսին դիմում են նոր նախիջևանի և թեսարարիայի թեմի հոգեր առաջնորդին և խնդրում բարձրագույն ատյաններում հաստատել առաջարկության իրենց կողմից արդին մշակված կանոնադրությունը: Շուտով Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Դ-ն հատուկ կոնդակով հաստատում է այդ կանոնադրությունը:

Թեմական դպրոցում հրավիրված կանանց ընդհանուր ժողովը դադարեց գոյացնելու գործունեությամբ, չորս տարի ժամկետով ընտրում է ընկերության վարչության խորհուրդ¹⁶:

15 ՌՄԵՊու Հայաստանի, 1882, № 111:

16 Մ. Մաշտոցի անվան Մատենագրարան, Ա. Զամբինյանի անհատական ֆոնդ, թղթ. 232, գ. 131. ընկերության ընդհանուր ժողովը հրավիրվում էր ամեն տարվա փետրվարին, տարեկան հաշվետվությունը քննարկելու, խորհրդի անդամներ ընտրելու, նոր անդամներ հաստատելու և տարբեր հարցեր քննարկելու համար: Զնախատեսված ժողովներ հրավիրվում էին խորհրդի որոշմամբ կամ ընկերության 20 անդամի գրավոր առաջարկությամբ: Ընդհանուր ժողովը օրինական էր համարվում, եթե նրան մասնակցում էր նախիջևանում քնակով ընկերության անդամների քառորդը: Ժողովից բացակա անդամը կարող էր իր ձայնը տալ ներկա եղաներից ում կամենար, սակայն գրավոր հանձնարարությամբ, ուր շարադրվում էր նաև քննարկվող հարցի մասին իր կարծիքը: Միաժամանակ վերապահություն էր արվում, որ ժողովին ներկա ընկերության մեկ աղածը կարող էր միայն բացակա երկու հայն ներկայացնել և ոչ ավելի:

«Հայուհյաց ընկերության» նպատակն էր աշակցել գաղութի իգական սեփի լուսավորության գործին: «Ընկերությունը» իր միջոցներով նպաստելու էր օրիորդաց վարժարաններում սովորող շքավոր աղջիկներին, օգնելու այն անձանց, ովքեր կցանկանային ծխական դպրոցներում ուսուցչի պաշտոն վարել:

«Հայուհյաց ընկերությունը» կազմվում էր հիմնադիր, մշտնշենավոր, պատվավոր և տարեկան անդամներից, որոնց թիվը չէր սահմանափակվում:

Հիմնադիր էին համարվում այն անձնավորությունները, որոնք ընկերությանը տալիս էին մեծ գումար, ոչ պակաս քան 1000 ռուբլի: Նրանց անվամբ կարող էր դպրոց պահպել: Մշտնշենավոր անդամները միանվագ մուծում էին 100 ռ. գումար և կարող էին ձրիվարժ մեկ սան առաջարկել խորհրդին: Պատվավոր անդամ էին համարվում տարեկան 10 ռուբլի, իսկ տարեկան անդամ՝ 5 ռ մուտքաները¹⁷:

Ընկերության միջոցները գոյանում էին անդամների միանվագ և ամենամյա վճարումներից, տարատեսակ նվիրաբերություններից, կազմակերպվող թատերական ներկայացումներից, պարահանդեսներից, գրական երեկոներից և հրապարակային այլ միջոցառումներից ստացվող եկամուտներից:

Մյուս բարեգործական կազմակերպությունների օրինակով «Հայուհյաց ընկերությունը» ևս ուներ նոր նախիշեանի գերբը, հիմնադրման տարեթիվը և իր անվանումը կրող առանձին կնիքը¹⁸:

Ընկերությունն իր վրա է վերցնում նյութական միջոցների մեծ կարոտություն ունեցող ս. Հոփիսիմյանց օրիորդաց դպրոցի խնամատարությունը: Ընկերության եկամուտները գոյանում էին նրա հարյուրի հասնող մշտական, ավելի քան երկու հարյուր տարեկան և սովորաբար երեք-չորս տասնյակից շանցնող պատվավոր անդամներից գանձվող անդամակինական բարեկանությանը: Որոշ գումար էր ստացվում նաև ընկերության կազմակերպած պարահանդեսներից և այլ միջոցառումներից: Հիմնադրումից երկու տարի հետո ընկերության դրամագլուխը կազմում էր 6582 ռուբ-

Ընկերության վարչության խորհուրդն ընտրվում էր յոթ հոգուց: 1882 թ. հիմնադիր ժաղովում խորհրդի նախագահ կոմ ատենապետ է ընտրվել հ. Շահրաշյանը, փոխառենապետ Բ. Քերքերյանը, գանձապահ՝ լ. Տրավիգոնյանը, ատենադպիր՝ Կ. Ալաշալյանը, Թամաշյանը, Կ. Ֆիվելեզյանը, Դ. Նազրյանը պատան անդամներ էին և հարկ եղած գեղագույն պարտավոր էին փոխարինել իրուրդի հիմնադիր կազմակերպության գործությունների վեհական գործառնությունը:

¹⁷ Կանոնադրություն նոր նախիշեանի հայուհյաց ինամատար ընկերության, նոր նախիշեան, 1882, էջ 11—13:

¹⁸ Նույն տեղում, էջ 18:

թի¹⁹, իսկ իր հիմնադրման տասնամյա հորելլանին, ինչպես երեսում է ընկերության խորհրդի նախագահ Կ. Պոպովյանի զեկուցումից, այդ գումարը հասել էր 21,886 ռուբլու²⁰: Ընկերությունը տարեկան լրացուցիչը 5000 ռուբլի է տրամադրում Հոփիսիմյան դպրոցում ձեռագործության դասընթաց բացելու համար, ինչպես նաև ավելացնում է դպրոցին տրվող նպաստը, 1200 ռուբլուց բարձրացնելով 1600 ռուբլու²¹:

«Հայուհյաց ընկերությունը» աստիճանաբար հեղինակություն էր ձեռք բերում և ճանաչում գտնում որպես Դոնի հայկական գաղութի օգտագետ հաստատություններից մեկը:

Գաղութի ազգային-հայկական հաստատությունների մեջ առավել նշանակալից էր եկեղեցական հոգաբարձության դերը: Այդ հաստատության հիմնադրման պատճառը եղել է նոր նախիշեանին կտակած գումարները նպատակահարմար ձեռվ տնօրինելու անհրաժեշտությունը: Դեռևս գաղութի սկզբնավորման տարիներից նրա օգտին կատարվեցին բազում նվիրատվություններ, որոնց մեջ կարևոր էր հատկապես հնդկահայ հարուստ Մասեհ Բաբաջանյանի՝ նախիշեանում Սահակ-Մեսրոպյան դպրոց, որբանոց և անկելանոց հիմնելու համար արված մեծագումար կտակը: Թանի դեռ հայ համայնքն օգտվում էր ինքնավարությունից, նրա բոլոր գործերը վարում էր հայկական մագիստրատը, կտակների գործն էլ տնօրինում էր մագիստրատի նախագահը, որը միաժամանակ բաղադրագույն էր: Գաղութի ինքնավար մարմինները վերացնելուց և 1874 թ. քաղաքային ոեֆորմը կիրառելուց հետո նոր նախիշեանը դրվեց կայսրության մյուս քաղաքներին համահավասար իրավիճակում: Իր տեղում ցույց տվեցինք, որ կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետ ուժեղանում էր ազգաբնակչության երթևեկը, ավելանում էր հարավի, այդ թվում և նոր նախիշեանի այլազգի բնակչությունը: Նման պայմաններում կտակների տնօրինումը թողնել քաղաքագլուխ իրավասության տակ կնշանակեր այդ եկամուտները գործադրել քաղաքի ամբողջ բնակչության օգտին: Դա նախ՝ կհակասեր կտակների գործադրման նպատակներին և բացի այդ, կտակում էին քաղաքի մեծերը, ձեռնտու չէր լինի հայ համայնքին: Ահա, կտակավանդ գումարները և այլ միջոցները միմիայն նոր նախիշեանի հայուհյան հասարակական պետքերին ծառայեցնելու ձգտումը ծնունդ տվեց կտակների ինդրով զբաղվող հատուկ հաստատություն հիմնելու մտայնությանը:

¹⁹ «Նոր դար», 1884, № 49:

²⁰ «Արձագանք», 1893, № 34:

²¹ Նույն տեղում:

1889 թ. հիմնվեց «Նոր Նախիջևանի Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձությունը», որի ձեռքում կենտրոնացվեց կտակների ամբողջ գործը, միաժամանակ և կառավարության կողմից հաստատվելու նրա կանոնադրությունը²²:

Բարեգործական այլ հաստատությունների նման հոգաբարձությունը ևս իր նպատակն էր համարում հոգալ նոր Նախիջևանի աղքատների կարիքները: Այդ ինդիրն իրականացնելու համար նա պարտավոր էր ու միայն աղքատներին նյութական օգնություն հասցնել, այլև միջոցներ հայթայթել և առաջին հերթին եկեղեցիներին կից դպրոցներ, անկելանոցներ ու համանման այլ հաստատություններ բացել:

Հոգաբարձության նյութական միջոցների գլխավոր աղբյուրներն էին լինելու նոր Նախիջևանի աղքատների օգտին կատարված և կատարվելիք կտակներն ու այլ նվիրատվությունները:

Հոգաբարձությունը կազմված էր լինելու 14 անդամից, որոնցից երկու հոգի տալու էր վիճակավոր առաջնորդը, 6 հոգի քաղաքի վեց եկեղեցիների երեսփոխաններն էին լինելու և 6 անդամ էլ ընտրվելու էր եկեղեցիների ծխականների կողմից: Նրանք ընտրվում էին 3 տարի ժամանակով և հաստատվում վիճակավոր առաջնորդի կողմից:

Հոգաբարձությունն իր անդամներից ընտրում էր նախագահ, վճիռներ կայացնում ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայները կիսվելու դեպքում առավելություն էր տրվում այն կողմին, որին քվեարկում էր նախագահը:

Տարվա վերջին հոգաբարձությունն իր գործունեության մասին հաշվետու էր լինում ծխականների ընդհանուր ժողովին: Վերջինս ամեն տարի իր առանձնացրած 6 անդամների միջոցով ստուգում էր հաշվետվությունը և հաստատելով ներկայացնում վիճակավոր առաջնորդին:

Ծխականների մեկ տասներորդը ներկա լինելու դեպքում ընդհանուր ժողովը օրինական էր համարվում: Հոգաբարձության և ծխականների ժողովի իրավասությունից վեր եղած կամ տարակուսանքի տեղիք տվող հարցերում դիմում էին վիճակավոր առաջնորդին, կամ նրա միջնորդությամբ ուր հարկն է:

22 1889 թ. հոկ. 27-ին ներքին գործերի մինիստր ի. Դուռնովոն հաստատեց Հոգաբարձության՝ 12 հոդվածից բաղկացած կանոնադրությունը: 1897 թ. և ապա 1901 թ. Հոգաբարձության կանոնադրությունը մասնակի փոփոխության է ենթարկվում: Քաղաքի վեց եկեղեցիների ծխականները մեկի փոխարեն տալիս են 10-ական երեցփոխան: Յուրաքանչյուր տարվա վերջում Հոգաբարձության հաշվետվությունը վերստուգությունը 6 հոգու բաղկացած հանձնաժողովը դառնում է մշտական դորժող:

Հոգաբարձությունը վայելելու էր հոգելոր և քաղաքացիական իշխանության հովանավորությունը: Իր իրավասության տակ եղած շարժական և անշարժ կայքը պարտավոր էր տնօրինել եկեղեցական կալվածքների համար պետության կողմից սահմանված օրենքներով²³:

Եկեղեցական հոգաբարձությունը գաղութի ամենահարուստ և արդյունաշատ հասարակական հաստատությունն էր: Նրա տարեկան եկամուտներն անցնում էին 50 հազարից: Այսպես, 1905 թ. Հոգաբարձության եկամուտը եղել է 58,720, իսկ ծախսերը՝ 54,911 ռուբլի²⁴, 1910 թ. մուտքը հասնում է 61,058-ի, իսկ ելքը կազմում է 59,575 ռուբլի²⁵, 1914 թ. եղել է համապատասխանաբար՝ 107,623 և 89,612 ռուբլի²⁶: Այնքան, որքան Հոգաբարձությունը տարեկան եկամուտները միշտ էլ ավելի էին քան ծախսումները, մշտական գումարը հետևողականորեն աճում և պատկառելի շափերի էր հասնում: 1905 թ. անշարժ կայքի հետ միասին Հոգաբարձությունն ուներ 749130 ռ., իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախորյակին այդ գումարը հասնում էր շուրջ մեկ միլիոնի²⁷: Հոգաբարձության միայն անշարժ կայքը, որն այդ ժամանակ գնահատվում էր 746,593 ռ., գոնվում էր ոչ միայն նոր Նախիջևանում, այլև Առուտովում, Եկատերինոդարում, Տագանրոգում, Կամենսկայա ավանում և հեռավոր Կալկաթայում:

Հոգաբարձության եկամուտները գոյանում էին գերազանցապես անշարժ կալվածքների ու կայքի վարձից: Որոշ գումար ստացվում էր մըշտական և ժամանակավոր բանկային հաշիվներից, ճերմակելենի դպրոցարհեստանոցից, զանազան նվիրատվություններից և այլ հասույթներից: Գոյացած այդ միջոցները ծախսվում էին կրթական նպատակներով, շրավորներին օգնելու, որբանոցի, անկելանոցի պահպանության համար:

Բարեգործական այս հաստատության գործունեության մասին հրատակագիր կազմելու համար բերենք մեկ տարվա մուտքի և ելքի կոնկրետ տվյալները²⁸:

1913 թ. Հոգաբարձության եկամուտներն եղել են 108,709 ռ., որոնք ստացվել են հետևյալ աղբյուրներից:
անշարժ կալվածքներից
տոկոսաբեր արժեթղթերից

91,007 ռ.

5,695 ռ.

23 ՀԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1337:

24 «Նոր կյանք», 1906, № 4:

25 «Արարատ», 1911, էջ 800—801:

26 «Գաղութ», 1915, № 29:

27 «Արարատ», 1913, էջ 1166:

28 «Մշակ», 1914, № 221:

մշտական ավանդներից
 Ժամանակավոր ավանդներից
 ընթացիկ հաշիվներից
 Խոստովում գտնվող տան վարձից
 Ճերմակեղենի արհեստանոցից
 Նվիրատվություններից
 զանազան հասույթներից
 Ստացված գումարից տարվա ընթացքում ծախսվել է 95,673 ռ. Հետևյալ նպատակներով.

Թոշակավոր կրթական սաների ծախս
 Նպաստներ ուսման համար
 Հանրերձեղեն շքավոր աշակերտներին
 Նպաստ ծիսական դպրոցներին
 Նպաստ էջմիածնի դպրոցական ֆոնդին
 Նպաստ մանկապարտեզին
 Կարուձեկ արհեստանոցի կրթական
 Նպատակների համար
 Ուսման և գրենական պիտույքների համար

190 ռ.	
536 ռ.	
114 ռ.	
622 ռ.	
1180 ռ.	
2337 ռ.	
7076 ռ.	

Բարեգործական, վարչական ծախսեր

Նպաստ շքավորներին ու հիվանդներին
 Հոգեկան հիվանդների պահպանությանը
 անկելանոցի և հիվանդանոցի պահպանությանը
 որբանոցի պահպանության
 ճերմակեղենի արհեստանոցի ծախսը
 Կտակների համաձայն վճարումներ
 Կալվածային և վարչական ծախսեր
 Ընկերության վարչական ծախսեր

4765 ռ.	
458 ռ.	
10635 ռ.	
5862 ռ.	
2549 ռ.	
1338 ռ.	
35427 ռ.	
13036 ռ.	

Ինչպես երևում է մեջբերված թվերից, Հոգաբարձությունը զգալի միջոցներ էր ծախսում ուսման նպատակով: Նյութապես աշակցում էր թեմական դպրոցին, սաներ էր պահում տեղական գրեթե բոլոր ուսումնարաններում, Ռուսաստանի բուհերում, Գևորգյան ճեմարանում²⁹:

²⁹ Ուսումնական գործը միշտ էլ այս հաստատությունն ուշադրության կենտրոնում է պահել և այդ նպատակին զգալի միջոցներ տրամադրել: 1905 թ. օրինակ, Հոգաբարձությունը տեղի դպրոցներում Ռուսաստանի և արտասահմանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների համար հատկացրել է 24,509 ռ. գումար,

Հոգաբարձությունն ուշադրի էր շքավորներին օգնություն կազմակերպելու և հատկապես նման ընտանիքների զավակներին կրթության տալու հարցում: Տեղի կանանցից և օրիորդներից կազմում էր հանձնախումբ, որը ստույգ տեղեկություններ էր հավաքում կարույալների քանակի ու նրանց վիճակի մասին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի հոգացողությանն էին հանձնվում որոշ շքավոր ընտանիքների: Նա հետեւ վում էր, որ տվյալ ընտանիքի զավակները ուսում ստանան, խորհրդումներ էր տալիս նրանց և տեղավորում դպրոցներում:

Հոգաբարձությունը շքավոր ընտանիքներին օգնում էր ապրուստի միջոցներով (ալյուր, ոլխար, ճարպ, թեյ, շաքար), վճարում տան, բուժման վարձը և այլն³⁰:

Հոգաբարձության հաստատություններն էին՝ որբանոցը, անկելանոցը և ճերմակեղենի դպրոց-արհեստանոցը:

Դոնի հայ համայնքում որբանոցի, անկելանոցի ստեղծումը և նրանց արդյունավետ գործունեությունը վկայում է հասարակական կյանքի առաջադիմության, դրա հասունության մասին:

Տակավին 1812 թ., հայկական գաղութի բոլոր հասարակաշերտերի շուրջ 200 ներկայացուցիչներ միահամում վճռում են որք և հոգեկան հիվանդ երեխաներին խնամելու համար հիմնել «որբաց իրավարան»: Դրա հաջող գործունեությանը պարտավոր էին նպաստել հայ հասարակության տարբեր դիրք ու կարողություն ունեցող բոլոր անդամները: Միաժամանակ հաստատվում է որբաց իրավարանի 15 կետից բաղկացած կանոնադրությունների (Բարուկ և Մարկոս Հովհաննիսյաններ) նշանակում են իրավարանի զատավորներ և հաստատում գրագիր: Դրագիրը պարտավոր էր մանրամասնորեն նկարագրել մահացածի կայքը, պարտքերը, ժառանգների, ազգականների և ունեցվածքի հետ կապված բոլոր հարցերը: Դրանից հետո մահացածի ունեցվածքն ըստ պատկանելության տնօրինելու համար գործի էին անցնում իրավարանի դատավորները:

Առանց կայքի մահացածի զավակներին իրավարանը պարտավոր էր անել, արհեստի կամ կրթության տալ: Անժառանգ մահացածների ունեցվածքը, թաղման ծախսերը հոգալուց հետո, բաժանվում էր երեք մասի՝ էջմիածնի Մայր տիթոսի, Սուրբ Խաչ վանքի և քաղաքի ընշագուրկների ու

այն գեղքում, երբ տարվա մյուս բոլոր ծախսումները կազմել են ընդամենը 30,400 ռուբը («Նոր կյանք», 1906, № 14).

³⁰ Տե՛ս «Արարատ», 1913, էջ 1164—1165.

³¹ ՀԿՊ(Ա), ֆ. 54, ց. 1, գ. 467, հմտ. ԱԳԱ ՀՀ, ֆ. 1405, շ. 42, ձ. 6812, լ. 63—69.

աղքատների միջև։ Տարեկան մեկ անգամ «որբաց իրավարանի» վարչությունը հաշվետվություն էր տալիս իր գործունեության մասին³²:

Ի տարբերություն Ռուսաստանի մյուս քաղաքների, ուր որբաց իրավարանները քաղաքային մագիստրատներին համազոր իրավունքներ ունեին, նոր Նախիջևանում այն ենթակա էր քաղաքագլխին ու մագիստրատին։ Վերջիններս, օգտվելով գաղութի ինքնավարության ընձեռած հարավորություններից, փաստորեն իրենց ծեռքն էին վերցրել քաղաքի հասարակական կազմակերպություններից մեկի որբաց դատարանի անօրինությունը։

Որբանոցը պահպանում էր իր գոյությունը գերազանցապես նվիրատվությունների հաշվին։ Նախիջևանի հայկական գերեզմանատանը ազգային ճարտարապետության ոճով՝ 1882 թ. եկեղեցի (ս. Կարապետ) կառուցելուց հետո որբանոցը փաստորեն մնում է նույն տեղում, որն աննպատակահարմար և անհանդուրժելի վիճակ էր ստեղծում։ Եվ ահա, հայ հասարակության ակտիվ գործիչներից Հովհաննես Խաթրանյանը 25000 ռ. գումարով գնում է մեծահարուստ Խալիբյանի շքեղ առանձնատունը և նվիրում որբանոցին։ Միաժամանակ նա հավաստում է, որ իր ժառանգներն էլ նույնպես ուշադիր կղինեն որբանոցի նկատմամբ³³։

Եկեղեցական հոգաբարձություն հիմնելուց հետո որբանոցն անցնում է նրա իրավասության տակ, որով վերջինիս համար նյութական և վարչական առավել կայուն դրություն է ստեղծվում։ Հոգաբարձությունը հոգում էր որբանոցի ծախսերը և հետեւում նրա գործունեությանը։ 1912 թ. օրինակ որբանոցն ուներ օժանդակ հարմարություններով մի շենք, ուր մնում էին 30 երկսեռ որբեր։ Նրանց տարեկան ծախսը կազմում էր 5350 ռուբլի³⁴։

Քաղաքում անկելանոց կամ աղքատանոց ունենալու և այնտեղ անաշխատունակ դարձած անժառանգ ծերերին, հաշմանդամներին ու աղքատներին պատսպարելու ու խնամելու անհրաժեշտությունը վաղուց էր գործում, սակայն դրա հիմնումը տարբեր պատճառներով ձգձգվում էր։

Որբանոցին հարակից ու նրա հետ գրեթե միաժամանակ կյանքի էր կոչվել և գոյություն ուներ տնայնագործական հիմունքներով կազմակերպված աղքատախնամ գանձարկղ կամ «աղքատաց գանձանակր»։ Դրան գործերը հասարակական կարգով վարում էր պատվավոր քաղաքացիներից որևէ մեկը՝ քաղաքագլխի և քաղաքային խորհրդարանի կամ, ինչպես հաճախ անվանվում էր, հոգաբարձության ընդհանուր վերահս-

32 ЦГИА СССР, ф. 1405, св. 42, լ. 6812, л. 68.

33 Գր. Զալիսաշան, Ստքեր, Խոհեր, Գեղեր, Թիֆլիս, 1914, էջ 260.

34 «Արարատ», 1913, էջ 1166.

կողությամբ։ Այդ ժամանակաշրջանում աղքատները քաղաքի վարչության ու բարերարների կողմից ստանում էին նպաստ և օթևան վարձով վերցված շորս մասնավոր տներում։

1887 թ. քաղաքային դումայի ձայնավորներ Ս. Աճեմովը, Ս. Խլտճինիկը, Վ. Սարմաքեշովը և Ս. Հարությունովը դիմում են քաղաքային դումա և ինդրում եղած որոշ կտակների գումարների հաշվին հիմնել անկելանոց³⁵։ Դումայի հանձնարարությամբ քաղաքային վարչությունը քըննարկում և հանձնաժողով է առանձնացնում անկելանոցի շենքի կառուցման, նրա պահպանման ծախսերը հաշվարկելու համար։

Ի վերջո 1891 թ. այդ ուղղությամբ տարվող աշխատանքներն ավարտվում են և անկելանոցը բացվում է։ Այն գործում էր դեռևս 1879 թ. մշակված կանոնադրության հիման վրա³⁶, Կանոնադրության մեջ ստույգ ու պարզորշ պատասխան էր տրվում այն հարցին, թե ովքեր կարող են օգտվել այդ հաստատությունից։ Հասարակական անկելանոցից օգտվելու իրավունք ունեին հաշմանդամները կամ հաշմանդամ դարձած անձինք, ծերացած և ուժասպառ եղած այն անձնավորությունները, որոնք ի վիճակի լին սեփական գոյությունը պահպանելու համար հաց վաստակել և չունեին հարազատներ, որոնց խնամքի տակ ապրեին։ Անկելանոցն ապաստան էր տալիս նաև ապրուստի միջոցներից զուրկ շատ որբեր ունեցող այրիներին։ Կանոնադրությամբ եկեղեցական հոգաբարձությանը հանձնարարվում էր ճշգրիտ տեղեկություններ ժողովել անկելանոց ընդունվել ցանկացող մարդկանց իրավիճակի մասին։ Հայ համայնքից դուրս գտնվող քաղաքացիները իրավունք չունեին օգտվելու անկելանոցից³⁷։

35 ՀԿՊԱ, ֆ. 55, գ. 1, թ. 188, թ. 12—13. Նրանք մատնանշում էին ժամանակին արված հևուկալ կտակներից ստացվող եկամուտը։ 1—2. Պապովը նման նպատակով կտակել է 36000 ռ., որը պահպան էր բանկում և տարեկան տալիս 1620 ռ. տոկոս։ 2—2. Պապովից, Կ. Խարմաշիկից, Կ. Պապովից և ուրիշների տարբեր տարիներին կատարմած նվիրատվությունները կազմում էին 7100 ռ., որից ստացվում էր 313 ռ. տոկոս։ 3—Հնդկահայ հարուստ Մ. Բաբաշանյանի և Կալկաթայի մյուս բարերաների նույն նպատակով թողած կապիտալի քառորդ մասը տարեկան բերում էր 1700 ռուբլի։ 4—Հանգույցայլ Հ. Պապովը նախիշեանի աղքատների օգտին կտակել էր Տագանրոգի իր 3 կրթակները, որոնցից ստացվում էր 1075 ռ. հկամուտ։ 5—Կենտրոնական շուկայի հրապարակի աղքատ հայերին տրված կրպակն իր ներքնահարկով տարեկան բերում էր 1900 ռ. հկամուտ։ 6—Քաղաքի տարբեր մասերում աղքատների ունեցած 4 կրպակներից ստացվում է 585 ռ. եկամուտ։

36 Նույն տեղում, թ. 6։

37 Անկելանոցի պահպանված արխիվից երկում է, որ նրա տնօրինությունը՝ եկեղեցական հոգաբարձությունը իրավ ընտրությամբ էր կարիքավորներին աղքատներուց շնորհում և հաճախ մերժում էր պատճառականված թվացող շատ գիտունների։ Այսպիս,

Անկելանոցը որբանոցի համեմատությամբ ավելի բաղմամարդ էր և ավելի շատ ծախսեր էր պահանջում: 1904 թ. անկելանոցում խնամքում էին 40 արական և 40 իգական սեռի մարդիկ, 1906 թվականին համապատասխանաբար 25 և 43, իսկ 1908 թվին՝ 32 և 49 հոգի³⁸:

Անկելանոցն ուներ տղամարդկանց և կանանց առանձին բաժիններ: Հաստատության տրամադրության տակ կար նաև մի երկրորդ շենք, ուր մնում էին անդամալույծները, անբուժելի հիվանդները, անընդունակ դարձած մտավորականները:

1912 թ. ս. Կարապետի եկեղեցու բակում գտնվող անկելանոցում ապրել է 76 հոգի: Նրա տարեկան ծախսը կազմել է 8094 ռուբլի³⁹: Անկելանոցն ուներ իր բժիշկը, խնամողները, վերակացուն և ավելի քան տաս ծառայող:

Եկեղեցական հոգաբարձության տնօրինության տակ էր նաև «Ճերմակեղենի դպրոց-արհեստանոցը»՝ երեք տարվա ուսուցումով: Այնտեղ աշակերտների թիվը հասնում էր 25 հոգու, որոնք սնվում էին տեղում: Ուսուցման արհեստանոցն ուներ մեկ դլխավոր վարպետ, շորս վարպետներ: Այս հաստատության տարեկան ծախսը կազմում էր ընդամենը 3—4 հազար ռուբլի: Եկամուտներն ստացվում էին նվերներից և արհեստանոցում կարգած հագուստի վաճառքից: Դպրոց-արհեստանոցն ուներ իր կառավարչությունը, որին հասարակական կարգով օժանդակում էին մի խումբ կանայք⁴⁰:

1909 թ. ընտանիք և զավակներ շունեցող 63-ամյա սափրիչ Կ. Հալաշյանը խնդրում է իրեն ընդունել անկելանոց և տրամադրում է տարիների ընթացքում իր խնայած 300 ռ. գումարը: Դիմումը մերժվում է, հավանաբար, այս նկատառումով, որ նրան կարող են խնամել իր եղբորորդիները, որոնց մոտ էլ ընակվում էր դիմուղը: Նույն տարում 70-ամյա Հովստիան Խանջյանը խնդրում է իրեն ընդունել անկելանոց, քանի որ ծեր է ու չիվանդ և խնամող չունի: Հոգաբարձության ծողովը որոշում է նրա դիմումը որոշ ժամանակ թողնել անհետնանք՝ անկելանոցում ազատ տեղ զինելու պատճառով:

Դրա հետ մեկտեղ հարգվում է Զալթիրից Գ. Թանգյանի դիմումը (1908), որը խնդրում էր իր ծեր գրքանշին ընդունել անկելանոց և պարտավորվում ամսական վճարել 5 ռուբլի: Ընթացքը է արգում նաև 76-ամյա Կատարինին Աթաքյանի անկելանոց ընդունելու խնդրանքին, քանի որ նա զուրկ էր որևէ եկամուտից, ուներ 60 տարեկան մեկ զավակ, որը ծանր կաթվածով պատկած էր հիվանդանոցում և այլ խնամող շուներ (ՀԿՊԱ, գ. 55 գ. 1, թ. 200, թ. 53, 60, 62, 65):

38: ՀԿՊԱ, գ. 55, գ. 1, թ. 188, թ. 43, 50, 57:

39: «Արարատ», 1913, էջ 1167:

40 Նույն տեղում: Գործերը հաջող վարելու համար հոգաբարձությունը նշված հաստատությունների կառավարումը հանձնում էր գործութիւնների անձնափորություններին: Անկելանոցի վերահսկողությունը 1912 թ. հանձնված էր Գ. Քելեշշահնյանին և Կ. Խոջյանին, որքանոցը՝ Գ. Բեդելյանին, Կ. Խոջյանին և բժիշկ Գ. Ռեփայանին, ճերմակեղենի արհեստանոցը՝ Ա. Չուվայանին և այլն:

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ նոր նախիջևանի ինքնավարությունը վերացնելուց հետո, ի հակադրության դրան, XIX դ. երկրորդ կեսին հիմնվում կամ ընդլայնվում ու վերակառուցվում և օրինական հիմքերի վրա է դրվում հասարակական մի շարք հաստատությունների (բարեգործական ընկերություններ, որբանոց, անկելանոց և այլն) գործունեությունը, որոնք զեկավարվում էին պետության կողմից հաստատված հատուկ կանոններով:

Եկեղեցական հոգաբարձությունը, ի տարբերություն մյուս բարեգործական հաստատությունների, գտնվում էր ներքին գործերի մինիստրության իրավասության տակ: Այդ նույն մինիստրության տնօրինության տակ էր նաև նոր նախիջևանի հոգեոր կառավարությունը: Վերջինս, հարկավ ոչ թե բարեգործական, այլ տեղի հոգեորականության կազմակերպությունն էր և անմիջականորեն ենթարկվում էր նոր նախիջևանի ու Բեսարաբիայի թեմին և նրա միջոցով էջմիածնի Ամենայն հայոց կառողիկոսությանը:

Տեղի հոգեոր կառավարության խնդիրը դավանանքի, հայ համայնքի կրոնական սպասարկումն էր: Սակայն իր գործունեությամբ այն հաճախ էր առնչվում վերոհիշյալ հասարակական կազմակերպություններին, իսկ տնտեսական բնագավառում պատկառելի միջոցներ էր կուտակում նվիրատվությունների և այլ եղանակներով: Նոր նախիջևանի վեց եկեղեցիները, Սուրբ Խաչ վանքը և Հայկական գյուղերի եկեղեցիները բավականաշափ գումար էին ստանում ծնոնդի, պատկի, թաղման և այլ ծիսակատարություններից և առանձնապես նվիրատվությունից: Հոգեոր կառավարության ստացած եկամուտների մասին մոտավոր պատկերացում կազմելու համար հիշատակենք մի քանի փաստ: 1897 թ. Մ. Դեմիրճյանը նախիջևանի վեց եկեղեցիներին է նվիրում 500-ական ոսւրբից⁴¹: Միայն «Հայուհյաց ընկերությունը» 1902 թ. ուսումնական նպատակով Ս. Լուսավորիչ կենտրոնական եկեղեցուն է հատկացրել 27, 311 ռուբլի գումար⁴²: Մ. Խոմանյանը հայտնում էր հոգեոր կառավարությանը, որ ավելի քան տաս անձնավորությունների քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցուն են նվիրաբերել 200 մինչև 2000 ռուբլի, և որ այդ գումարը պահպանվում է բանկում ու նրանից ստացվում է բավականաշափ բարձր եկամուտ⁴³:

Այսպիսով տնտեսական բարվոք վիճակում գտնվող նոր նախիջևանի մամնավորապես իշխող գասի ներկայացուցիչները, անշուշտ, շմոռա-

41 ՀԿՊԱ, գ. 54, գ. 1, թ. 1513, թ. 1:

42 Նույն տեղում, գ. 2206, թ. 35:

43 Նույն տեղում, թ. 10:

նալով սեփական շահերը, կապիտալ կուտակելու հետ միաժամանակ, զգաղցում էին բարեգործությամբ: Նրանք իրենց կուտակած հարստությունից որոշ գումար էին տրամադրում ազգային-մշակութային նպատակների համար:

Վերը հիշատակված ազգային-բարեգործական հաստատություններից զատ գաղութում կային նաև այլ ընկերություններ, ինչպես ասենք փոքրահասակ երեխանների դաստիարակության, թատերասիրաց և ուրիշներ, որոնց մասին խոսք կլինի մշակութի բաժնում:

Ինչպես դժվար չէ նկատել, Դոնի հայ համայնքի հասարակական պետքերը հոգածու համար կատարված բարեգործական տարբեր ձեռնարկումների նյութական միջոցների հիմնական աղբյուրը բազում տեղերից տրվող կտակ-նվիրաբերություններն էին: Գաղութի օգտին նվիրատվություններ էին կատարում ոչ միայն տեղացիները կամ այլ վայրերում բնակվող նախիջևանցիները, այլև, անգամ երկրից դուրս ապրող հայերը: Նման դեպքերից նշանավոր են հնդկահայ շրջաններում կատարվող նվիրատվությունները և նրանց մեջ հատկապես Մասեհ Բաբաջանյանի կտակը:

Դոնի ափերին զուտ հայկական քաղաք հիմնելու, հետեւապես այնտեղ հայ ազգային կյանքը վերականգնելու հեռանկարն այնքան սրբագրագույն ու ոգեսրիլ էր մեծահարուստ Մ. Բաբաջանյանի համար, որ գաղութի հիմնադրման հենց առաջին տարիներին նվիրաբերումներ կատարեց այնտեղ դպրոց, տպարան և անկելանոց բացելու համար: Դոնի հայ հասարակությունը նախանձախնդիր էր կտակավանդ այդ գումարները ստանալու և իր նպատակին ծառայեցնելու հարցում:

Ինչպես հայտնի է, 1861—1862 թթ. Մ. Նալբանդյանը որպես նոր նախիջևանի հայության պատվիրակ մեկնեց Հնդկաստան և կարողացավ ստանալ Մ. Բաբաջանյանի մեծագումար կտակով նախատեսված գումարի կեսը: Հետագայում կտակված այդ գումարները լիովին ստանալու և հայ համայնքի օգտին գործադրելու հարցը, բնականաբար, հուզում էր Դոնի հայ զանգվածին և տարբեր առիթներով պարբերաբար բարձրացվում էր այդ ինդիրը:

1903 թ. եկեղեցական հոգաբարձության ընդհանուր ժողովում Մ. Խլտճանը առաջարկում է պատվիրակ ուղարկել Հնդկաստան՝ մնացած գումարների հարցը լիովին պարզելու և կտակված գումարները ստացող հաստատության անունը վերաճտելու նպատակով⁴⁵: Ժողովը հավանություն է տալիս, սակայն դրանից առաջ կատարված առաջարկների նման դա էլ որևէ գործնական հետևանք չի ունենում:

Նախիջևանի եկեղեցական հոգաբարձության ժողովը 1910 թ. կրկին անդրադառնալով այդ հարցին որոշում է օգտագործել անձնական ժառանգության հարցերով Հնդկաստան մեկնող թիֆլիսաբնակ իշխանի: Արդությանին: Վճռվում է վերջինիս հրավիրել նախիջևան, տալ համապատասխան լիազորություններ, վճարել ճանապարհածախս, օրապահիկ, և խնդրել, որպեսզի Կալկաթայում զբաղվի Մ. Բաբաջանյանի կտակի հարցով⁴⁶: Հոգաբարձության այս վճիռը ևս գործնական արդյունք չի ունենում:

Ի վերջո, 1912 թ. հոգաբարձությունը լիազորում է կենսաբանության դոկտոր Հ. Պ. Բեղելյանին Հնդկաստանում եղած ժամանակ զբաղվելու վերոհիշյալ կտակի խնդրով⁴⁷: Վերջին այս փորձը գործնական հետեւականք է ունենում: Հ. Բեղելյանը մեկնելով Հնդկաստան, ճանապարհին՝ շոգենավից հեռագրով հոգաբարձությանը խնդրում է նոր նախիջևանի անկելանոցի մասին տրված գրություններում ամենուրեք նշել, որ այն կոշվում է Մ. Բաբաջանյանի անունով, որպեսզի դյուրին լինի դատարանում պաշտպանել կտակված գումարների նկատմամբ նախիջևանցիների իրավունքները⁴⁸:

Հ. Բեղելյանի առաքելության մասին հաղորդումներ են տպագրվում «Մշակ», «Պրիազովսկի կրայ» թերթերում: Մամուլը հասարակությանը տեղյակ էր պահում Բեղելյանի՝ Հնդկաստանում գտնվելու, նրա գործունեության հաջող ընթացքի, Մ. Բաբաջանյանի գերեզմանին շիրմաքար դնելու և վերջին այդ ձեռնարկմանը նորնախիջևանցիների ունեցած մասնակցության մասին⁴⁹:

Հնդկաստանից վերադառնալով, Հ. Բեղելյանը 1913 թ. մարտին հոգաբարձության և հասարակության առաջ հրապարակորեն զեկուցում է իր գործունեության արդյունքների մասին: Նա հաղորդում է, որ Հնդկան դատարանը նոր նախիջևանի եկեղեցական հոգաբարձության ընդմիջության մասնաշել է որպես Մ. Բաբաջանյանի կտակի տեր: Հինգ տարվա ընթացքում կուտակված 10000 ռուբլի գումարը ստացվել, փոխադրվել է Ռուսությունի ոռուս-ասիական բանկ: Այդուհետև ամեն տարի այդ բանկի միջոցով նախիջևան էր փոխանցվելու հասանելիք գումարը⁵⁰:

45 Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Յ. Նոր նախիջևանի հոգաբարձություն, թ. 233, գ. 193:

46 Առևյ տեղում, գ. 214, թ. 23:

47 Առևյ տեղում, գ. 215:

48 «Պրիազովսկի քարտ», 1913, № 7.

49 Առևյ տեղում, գ. 242. մինչ այդ էլ այդ գումարը, թեև ոչ կանոնավոր, պատված էր նախիջևանի քաղաքապետի անունով (ինչպես նշված էր կտակամ), որը և համեմ

Այսպիսով, տասնամյակներ շարունակ արծարծվող Մ. Բաբաջանյանի կտակի հետ կապված հարցերը ի վերջո դրական լուծում են ստանում:

Նոր նախիջևանի օգտին կատարված մեծագումար նվիրատվություններից էր նաև Ն. Ս. Տիմյանի կտակը, որի գործադրումը մի շարք հանգամանքների պատճառով ձգձգվում էր:

Նիկողայոս Աճեմյանը 1888 թ. իր շարժական և անշարժ ամբողջ կայքը՝ մոտ 300 հազար ռուբլու արժողությամբ, բարեգործական նպատակներով կտակում է նոր նախիջևանին: Նա մասնավորապես ցանկություն էր հայտնել այդ գումարով նախիջևանում հիմնել տեխնիկական գործոց, որը հայոց լեզվի և կրոնի ուսուցումը պարտադիր առարկաներ պետք է լինեին⁵⁰:

Անցնում է ավելի քան երկու տասնամյակ, սակայն Ն. Աճեմյանի կտակի գործը ձգձգվում է: Շուտով սկսվում է համաշխարհային պատրազմը և այդպես էլ կտակողի ցանկությունը չի իրականանում:

Գաղութի օգտին կատարվող մյուս կտակներն ու նվիրաբերությունները ևս օգտագործվում էին բարեգործական, լուսավորական նպատակներով:

* * *

Նոր նախիջևանի հասարակական կյանքի աշխուժացումը դրսևորվում էր տարբեր եղանակներով ու ձեռքով: Սակայն գերազանցապես այն արտահայտվում էր հայ համայնքի համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող երեսվթների նշումով: Դրանով նախ՝ լայն տարածում էր գտնում ու հասարակական արժեք ստանում տվյալ իրադարձությունը և միաժամանակ ձեռք բերում հայկական զանգվածի կենսունակության, նրա ինքնահասստատման ու գյուտեման նշանակություն: Այսպիսի իրադարձություններ էին մեծ հոբելյանները:


1870-ական թվականների վերջին լրանում էր Դոնի ափերին դրիմահայերի հանգրվան գտնելու, նոր նախիջևանի հիմնադրման հարյուրամյակը: Հայ համայնքը նախապատրաստվում էր նշելու իր համար

նում էր հոգարածությանը: 1909 թ. օրինակ քաղաքավոլիս Մ. Բալարանովը 5785 ռ. հանձնում է հոգարածությանը (նույն տեղում, թ. 233, վ. 183):

Հ. Բեղելյանը միաժամանակ ուղագրավ տեղեկություններ է հաղորդում Հնդկաստանում Մ. Նալբանդյանի գործունեության վերաբերյալ, տեղի հայկական գաղութի երկպառակտված գոյավիճակի, հայ բնակության քանակի (որն ըստ Հ. Բեղելյանի ամբողջ Հնդկաստանում հասնում էր 6 հազարի) և այլ հարցերի մասին:

Հ. Բեղելյանը ներկայացնում է նաև իր ծախսերի մանրամասն հաշիվը 5359. ռուբլի: Հոգարածության ժողովն ընդունում է հաշվիտվությունը և կատարած աշխատանքի համար Հ. Բեղելյանին շնորհակալություն հայտնում:

⁵⁰ «Արարատ», 1913, էջ 1167—1170, հմմտ «Նոր դար», 1888, № 152:





Բ. Պատկանյան

նշանակալից այդ տարելիցը՝ Հանձնարարվում՝ տեղի նշանավոր մտավորական, քանասեր-պատմաբան Գաբրիել Պատկանյանին գրելու գաղտնի մեկդարյան պատմությունը⁵¹:

Տոնակատարությունը նշանակվել էր 1879 թ., Եկատերինա II-ի կողմից, Նոր Նախիջևանի շնորհագրի հաստատման օրը՝ նոյեմբերի 14-ին։ Հանդիսավոր արարողությանը հրավիրված էին Հարևան Ռուսով քաղաքի քաղաքագլուխը, զեմստվոյի նախագահը, բանկի կառավարիչը, զինվորական մասի պետը և ուրիշներ։ Հանդեսին մասնակցում էին նաև այլ հյուրեր, անգամ օտարերկրացիներ, ինչպես նաև Նոր Նախիջևանի առաջին քաղաքագլուխի որդին՝ 90-ամյա Հովհաննես Կողբեթլյանը⁵²։

Նշանակված օրը, առավոտյան, ս. Լուսավորիչ Մայր Եկեղեցու զանգերի զողանչների տակ մեծ բազմություն է այցելում Եկեղեցի, որտեղ պատարագին ու մաղթանքին մասնակցելուց հետո ուղևորվում են գեպի տոնականորեն զարդարված տեղական ակումբը։ Հանդիսավոր ճաշամետանի շուրջ Նոր Նախիջևանի հարյուրամյա պատմության երևելի կողմերը դրվատող, նրա հետագա զարգացման ուղիների մասին խորհրդածություններով լի բազմաթիվ ելույթներ են լինում։ Մուսազգի հյուրերից մեկն առաջարկում է Հասարակական կյանքում աստիճանաբար ակտիվացող հայ կանանց կենացը։ Հեռագրեր են ուղարկում գավառապետին և հայազգի խոշոր պետական գործիչ կորիս Մելիքովին։

51. Պատկանյանը երեք հատորում «Հարյուրամյակ Նոր Նախիջևան Հայարնակ քաղաքի» խորագրով շարադրում է գաղութի պատմությունը (ս. Պետերբուրգ, 1879 թ.)։ Այժմ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, ն. ն. 8815, 8816, 8817 համարների տակ պահպան է ստվարածավալ այդ ուսումնասիրության ձեռագիրը։ Ցափը աշխատությունը ծանրաբեռնված է նաև երկրորդական մանրամասների, հաճախ Նոր Նախիջևանի պատմության հետ բիշ առնչություն ունեցող նկարագրություններով։ Դրանից բացի պատմական անցքերը նկարագրելիս աշքի են զարնում հեղինակի միտումն ու շափականցությունների մեջ ընկնելը։ Այսուհետեւ «Հարյուրամյակը» գրված է գաղութի պատմությանը քաշատեղյակ անձնագրության, իր նկարագրած դեպքերի մասնակցի կողմից, որի շնորհիվ աշխատությունը հաճախ սկզբնաշրջուրի բնույթ է ստանում։ Այդ ուսումնասիրության մեջ շատ հետաքրքիր նյութ կա Դոնի հայ գաղութի քաղաքական պատմության, մշակութի, սոցիալ-տնտեսական կյանքի մասին։

Ուսումնասիրության որոշ բաժիններ խիստ համառոտված ձևով հայագետ Ա. Զամինյանի խմբագրությամբ, անոր Նախիջևանի պատմությունը վերթառությամբ հրատարակվել են 1917 թվին, սակայն իր ամբողջության մեջ այն դեռևս մնում է ձեռագիր վիճակում։

Դոնի հայկական գաղութի հարյուրամյա տարելիցի առիթով փոքրիկ աշխատություն գրեց նաև Ռ. Պատկանյանը (Սյուլլուկ, Նոր Նախիջևանի հիմնարկության պատմությունը, Թիֆլիս, 1879 թ. այն նույնությամբ տպագրվել է նաև Ռ. Պատկանյանի երկերի ժողովածուի հիմքերորդ հատորում, (էջ 253—272)։

52 «Մշակ», 1879, № 214։

Ի նշանավորումն այդ տարելիցի, որոշվում է քաղաքում բացել արհեստավորական դպրոց, կանգնեցնել հուշարձան՝ ի պատիվ գաղութի հիմնադրման նշանավոր գործիչների՝ Եկատերինա II-ի և ժամանակի պատահայերի հոգիոր առաջնորդ Հ. Արզությանի: Ինչպես նման դեպքերում սովորաբար արվում էր, հանդեսն ավարտվում է բարեգործական միջոցառումով: Նվիրատվություն է կազմակերպվում էրգորումում հիմնադրվելիք «Հողագործական դպրոցի» օգտին և ժողովում է բավական պատկառելի գումար: Ինչպես տեսնում ենք, Արևմտյան Հայաստանում հիմնադրվելիք դպրոցն էլ չէր վրիպում նորնախիջևանցիների ուշադրությունից: Երեկոյան տոնականորեն լուսավորված բաղաքում բննգալյան կրակներ են բոցավառվում: Հաջորդ օրը նախիջևանի կանայք և օֆիորդները հատուկ պարահանդես են կազմակերպում⁵³:

1910 թ. նույնական հանդիսավոր պայմաններում նշվում է գաղութի կարելոր հաստատություններից մեկի՝ նոր նախիջևանի հայոց բարեգործական ընկերության հիմնամյակը: Այդ առիթով հրատարակվում է ընկերության 25-ամյակի պատմությունը, որը գեռն 1885 թ. գրել էր Պ. Պատկանյանը, և գտնվում էր տակավին ձեռագիր վիճակում:

Ընկերության օգտավետ գործունեությունը հատկանշվում է այն փաստով, որ իր գոյության ընթացքում բարեգործական նպատակներով ծախսել էր վիթխարի գումար, ավելի քան 200 հազար ռուբլի⁵⁴:

Եկեղեցական հոգաբարձություն ստեղծելուց հետո ընկերությունն առատվելով որբերին ու աղքատներին խնամելու հոգսերից, ավելի էր ընդդարձակել կուլտուր-լուսավորական իր գործունեությունը: Ընկերությունը իր միջոցներով բացել էր «Սանդիմույան դպրոցը», որը, ցավոք, երկար կյանք չունեցավ: Միայն մեկ տարում, 1910 թ. բարեգործականի միջոցներով ուսանում էին 114 սաներ: Տեղի, Ռուսաստանի կենտրոնական քաղաքների և արտասահմանի տարբեր ուսումնական հաստատություններում ընկերությունը կրթության էր տվել 619 սաների⁵⁵:

Հորելյանի ժամանակ շեշտվում է նաև այն էական հանգամանքը, որ բարեգործական ընկերության գործունեությունը ընդգրկում է եղել: Այն իր միջոցները ծառայեցրել է ոչ միայն տեղացիների, այլև բոլոր հայ կարույաների օգտին և այդ ձևով շատ ցավեր է դարձանել, բազում վերքեր բռնիւթյունը արձագանքել է հայ իրականության կառեր իրադարձություններին, հայկական արժանահիշատակ տոներին,

նշանավոր գրողների և այլ գործիչների հորելյաններին: Տակամին 1870-ական թվականներին բարեգործականը գնել և տարածել է Ղ. Աղայանի երկերը, Մ. Խորենացու «Հայոց պատմությունը»:

1903—1907 թթ. ծողովել, ի մի է բերել և երեք հատորով հրատարակել Մ. Պատկանյանի, երկու հատորով Մ. Նալբանդյանի երկերը, դրանց վրա ծախսելով 4000 ռուբլի⁵⁶, Ընկերությունը կառուցել է տեղի թեմական դպրոցի շենքի վերին հարկը, այդ նպատակի համար միանվագ ծախսելով 10 հազար ռուբլի⁵⁷:

Հատկանշական է, որ ընկերության անդամներ էին ոչ միայն տեղացիները, այլև Սոսկվայի, Աստրախանի, Եկատերինոդարի և Հայաշատայլ վայրերի ներկայացուցիչները⁵⁸:

Հասարակական կյանքի հասունության արտահայտություն էր Դոնի հայության շրջանում, հետևապես ինչ-որ շափով նաև հայ իրականության մեջ համագային գործունեություն ծավալած նշանավոր դեմքերի հուբելյանների նշումը, կամ որևէ այլ եղանակով նրանց հասարակական վաստակի հրապարակային գնահատումը: Դրանով արժեքավորվում, հետևաբար, ընդհանուր ճանաչում էր գտնում հասարակական գործունեությունը: Այդ ձևով փաստորեն խրախուսվում էին ընդհանուր հարգանքի արժանի մարդկանց հասարակական ծառայությունները: Այս ասպարեզում երախտիքի գնահատումն ուներ նաև հասարակական բարբերը բարեկալու՝ դաստիարակչական նշանակություն:

Նոր նախիջևանի հայակենտրոն գաղութը զարմանալի արգասամոր գործունեություն էր ծավալել և կարծես փորձում էր արտահայտել ու մարմնավորել պետականությունը կորցրած ծողովորդի համահայկական, համապետական ձգումները: Այստեղ, անշուշտ, էական դեր էր կատարում Դոնի հայության տնտեսական ընդհանուր բարվոք վիճակը, ընակշության կրթական համեմատաբար բարձր մակարդակը, ուսական հասարակական մտքի ու մշակույթի ազդեցությունը, զաղութում շնորհալի ու գործունյա բազմաթիվ անձնավորությունների առկայությունը:

Հայտնի է, որ նոր նախիջևանի հայությունը հայ ծողովորդին տվել է հասարակական-քաղաքական և մշակույթի նշանավոր գործիչների մի ամբողջ համաստեղություն: Նրանցից շատերը ոչ միայն ճանաշված դեմքեր են եղել հայ իրականության մեջ, այլև ունեցել են համառուսաստանյան գործունեության շառավիղ ու ճանաշում: Այդ ականավոր

53 «Փորձ», 1879, № 12:

54 ՀԿՊ, ֆ. 54, ց. 1, գ. 210, թ. 2:

55 Նույն տեղում, թ. 33:

56 Նույն տեղում, թ. 24:

57 «Տարագ», 1911, № 7—8, էջ 87:

58 ՀԿՊ, ֆ. 54, ց. 1, գ. 210, թ. 41—44:

գեմքերի հետ միասին ու նրանց կողքին կային նաև ոչ սակավաթիվ այնպիսի գործիշներ, որոնք երեալով համահայկական երկնակամարում կամ նույնիսկ ամենայն նման ընդգրկում շունենալով իրենց ամբողջ տաղանդն ու եռանդը ծառալիցնում էին Դոնի հայ զանգիլածին։ Այստեղ նրանք, իրավամբ, ճանաչված վաստակաշատ գործիշներ էին համարվում։ Նման գեմքերից էր շնորհալի իրավաբան, անդի բարեգործական ընկերության երկարամյա նախագահ՝ Գրիգոր Զալխուցյանը։ 1910 թ. նշվում է Զալխուցյանի իրավաբանական և հասարակական գործունեության 25-ամյակը։ Նա 1888 թ. անընդմեջ եղել է քաղաքային դումայի անդամ, բարեգործական ընկերության, մի շարք հանձնաժողովների նախագահ։

Մամուլում, մասնավորապես «Մշակ», «Բարու», «Լույս» թիրթերում հրապարակված բազմաթիվ հոդվածներում և հոբելյանական հանդեսի մասնակիցների կողմից շեշտվում է Զալխուցյանի հասարակական-մշակութային ազգօգուտ գործունեությունը, այդ ասպարեզում նրա ցուցաբերած հետեղականությունն ու մեծ հետանդը։ Նա սիրահար ու պաշտպան էր հայ տաղանդի։ Նրա շանքերի շնորհիվ կարգավորվում և հուշարձաններ են դրվում Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի գերեզմաններին։ Ռուս հասարակական կարծիքի առաջ պաշտպանել է հայկական դատը, բազմից նյութական օգնություն կազմակերպել արևմտահայերին։ Զալխուցյանը հասարակական-քաղաքական հայացքներով հարել է Գր. Արծունու ուղղությանը և միշտ հավատարիմ մնացել իր համոզմունքներին, դարձել «Մշակ» թիրթի մշտական թղթակիցը⁵⁹։

Զալխուցյանը նույնիսկ իր հոբելյանի օրը 1000 թ. գումար է նվիրում բարեգործական-մշակութային տարբեր հաստատությունների։

59 Գր. Զալխուցյանը իրավաբանի գործնական աշխատանքին զուգահեռ գեռաւ 1880-ական թվականներից զրագել է նաև պատմաիրավական, գրական գործունեությամբ։ Նրա գրին են պատկանում «Опыт теории любви» (1883), «Армянский вопрос в лице Рафаела Патканяна» (1888), «Идеалы французской адвокатуры» (1891), «Армянский вопрос и армянские погромы в России—панисламизм» (1905), «Մտքեր, խոհեր, գեմքեր» (Թիֆ., 1914) և այլ աշխատառթյուններ։

Զալխուցյանը մասնակցել է Ռուսության քաղաքի պատմությունը ստեղծելու համար ժամանակին հայտարարված մրցությին։ Նրա «История Ростова и Д» մենագրությունը ներկայացված աշխատությունների մեջ ճանաչվել է լավագույնը և արժանացել հատուկ մրցանակի։ Ցավոք, արժեքավոր այդ ուսումնասիրության ձեռագիրը կորել է, միայն առաջին մասն է պահպանվել շնորհիվ այն բանի, որ պարբերաբ, տպագրվել է «Юг» թիրթի 1893—1894 թվականների համարներում։

Նոր նախիջևանի քաղաքային դուման 3000 ո. գումար է հատկացնում և հոգևոր սեմինարիայում (թեմականում) նրա անունով հատուկ թղթական է սահմանում⁶⁰։

Զալխուցյանը դարձել էր բարեգործության մունիսիկ և նրա պրոպագանդայի շառավիղը շեր սահմանափակվում նոր նախիջևանով։ այն ուներ համահայկական ընդգրկում։

Ինչ խոսք, Գ. Զալխուցյանի հասարակական գործունեությունը դըրված վատվում ու բարձր է գնահատվում միայն որոշակի պատմական ժամանակաշրջանում։

Ընդհանրապես, այն ժամանակ, բարեգործական ձեռնարկումները յուրահատուկ ազգային սոցիալ-ռեֆորմիստական երանգ ունեին և ինչ որ տեղ փորձում էին սքողել սոցիալական ներհակությունները, դասակարգային հակասությունները, կամուրջ նետել մեծահարուստ ունեորների և սակավազոր հասարակաշերտերի միջև։

Մի տարի անց, 1911 թ. համանման ձեռվ նշվում է թեպետև ավելի համեստ սահմաններում, 1886 թվականից քաղաքային բժիշկ աշխատած Ֆ. Քէլեկյանի 25-ամյա գործունեությանը հոբելյանը⁶¹։

1912 թ. քաղաքային խորհրդարանի դահլիճում, հանգիսավոր պայմաններում նշվում է ս. Լուսավորչի ավագ քահանա Խաչատուր Զարիֆյանի հոգևոր և հասարակական գործունեության 50-ամյակը։ Զնայած հոգևոր կոչմանը, Զարիֆյանն իր հայացքներով մոտ էր դեմոկրատական մտավորականությանը և ամբողջովին նվիրված գաղութի հասարակական կյանքին։ Հոբելյանական հավաքին մասնակցում են նախիջևանի և Ռուսության գրութե բոլոր հասարակական հաստատությունների, ոուս հոգեվորականության, քաղաքի բնակչության բոլոր խավերի ներկայացուցիչները։ Այս դեպքում ևս դրվագում և ըստ արժանվույն գնահատվում է հոբելյանի երկարամյա ու դժվարին հասարակական գործունեությունը⁶²։ Նման շատ փաստեր կարելի է բերել, սակայն բավարարվենք այսքանով։

Գաղութի հասարակական կյանքին ակտիվորեն մասնակցում և դրա վրա ներազդում էին նաև մշակույթի ու հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ այլ գործիշներ, որոնց մասին խոսք կլինի իր տեղում։

Ճիշտ չեր լինի պատկերացնել այնպես, որ նոր նախիջևանի հասարակական կյանքն ընթանում էր հանգիստ ու խաղաղ, առանց ներքին հակասությունների ու ալեկոծումների։ Գաղութում հասարակական այլեւայլ հաստատություններ, կուպուր-լուսավորական հիմնարկներ հիմնե-

60 ԳԱՐՕ, ֆ. 91, օպ. 1, դ. 1543, լ. 7.

61 ԳԱՐՕ, ֆ. 91, օպ. 1, դ. 1621, լ. 2.

62 «Հովիվ», 1912, № 5, էջ 78, «Մշակ», 1912, № 20։

լու, հայ հասարակության բարքերը բարելավելու, նրա գոյատևման ու Հետանկարների ընդհանուր հետաքրքրությունն ներկայացնող բազում ուրիշ խնդիրների շուրջ հաճախ սուր բանավեճեր և հակամարտություններ էին տեղի ունենում հասարակական տարբեր ուժերի ու խմբավորումների միջև։

Ռուսական կայսրության մեջ ապրող ժողովուրդների մասին տեղեկատու բնույթ կրող, ընդհանրացնող աշխատություններում հայերի մասին ասվում էր, որ ազգային սպացումը նրանց մեջ պահպանվում է շատ ուժեղ և պաշտպանվում եկեղեցու կողմից, և որ նրանք ունեն նահապետական սովորություններ, բայց չեն խուսափում եվրոպական կրթությունից։ Ազելորդ չէ նշել, որ դա ոռուահայ գաղթավայրերի հայ զանգվածների XIX դ պատմության, ինչ որ շափով ճիշտ բնութագրում է։

Նոր նախիշեանի հայկական համայնքում գերազանցապես ազգային սովորություններն ու բարքերը պահպանելու և միաժամանակ ժամանակի քաղաքակրթությունից ետ շմալու առանցքային խնդրի շուրջ տևականորեն բախումներ էին լինում։ Իվ հաճախ հասարակական կյանքում անպակաս, գավառային փոքր քաղաքներին հատուկ զանազան ասեկունդով ուղեկցվող ներգաղութային այդ պայքարն ու բանավեճերը իրենց արտացոլումն էին գտնում մամուլի էջերում։

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1870-ական թվականներին նշում էր նոր նախիշեանի հայկական գաղութի զարգացման համար նպաստավոր պայմանների առկայությունը, բայց դրա հետ մեկտեղ ընդգծում էր այնտեղ մշակութային, լուսավորական կյանքի հետ մնալու հանգամանքը։ Եեշտվում էր այն պարագան, որ ոռուահայ գաղթավայրերի շարքում նոր նախիշեանը շրջակա հայկական գյուղերի հետ աշքի է ընկնում հայկական հոծ զանգվածով, ունի հարմար դիրք ու նպաստավոր պայմաններ և, բնականաբար, նշանակալից զարգացում է ապրում։ Դոսի հայ հասարակությունը, սակայն, նշում էր թերթը, ետ է մնում ազգային-մշակութային գործեր զարթիցնելու և առաջ մղելու խնդրում։ Մինչ այժմ նախիշեանցիները շոմեն իրենց թեմական ուսումնարանը, չեն ձեռնարկում մշակութային-լուսավորական նկատելի գործերը⁶³։

Գր. Զալիսուշյանը խարազանում էր երիտասարդության մեջ տիրապետող բարքերը։ Երիտասարդները, թողած հանրօգուտ գործունեությունը, հարուստ օժիտով հարսնացուներ էին փնտրում, իսկ օրիորդները

⁶³ «Ալֆավիտնի սպառաւածության և առաջանաւության մասին առաջարկ» 1895, համար 7.

⁶⁴ «Մեղու Հայաստանի», 1879, թ 3, 5, 1879, թ 101.

հայոք հասակից դաստիարակվում էին միայն հարսնացու լինելու համար։ Նա երիտասարդությանն ակտիվանալու, հասարակական գեմք ունենալու, ազգային գործունեություն ծավալելու կոչ էր անում⁶⁵։

Հարկ է նշել, որ նկատելի ուժ ներկայացնող տեղի հոգեորականության զգալի մասի գործունեությունը ևս, որպես կանոն, չէր նպաստում հասարակական բարքերի բարելավմանը։ Թերթերում տպագրվող հոգածներում հաճախ էր դատապարտվում հոգեորականության անգույն ու ապաշնորհ գործունեությունը, նրանց հայ հասարակության համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների փոխարեն հաճախ միայն անձնական ապահովածության և բանսարկությամբ զրադվելու վարչագիծը⁶⁶։

Դոնի հայ հասարակությունը հաճախ էր ալեկոծվում հասարակական տարբեր երեւույթների շուրջն առաջացող ներհամայնքային պայքարով։ Տարբեր խմբավորումների մեջ հայդ հակամարտերը սրվում էին հատկապես հայ հասարակության կյանքում տոն տվող դիրք ունենալու, առաջին հերթին քաղաքագլխի պաշտոնին տիրելու համար։

Այդ պայքարը հաճախ այնպիսի շափեր էր ընդունում, որ դուրս էր գալիս հայ հասարակության ողորտում տեղի ունեցող բանավոր վեճերի սահմաններից և տեղափոխվում տեղի, և անգամ կենտրոնական մամուլի էջերը։

Անցյալ դարի վեջերին մեծ շափեր ընդունեց մասնավորապես քաղաքագլուխ Հ. Բալաբանյանի և նրա հակառակորդների միջև մղվող հակամարտը, որը հայտնի է Բալաբանյան (Պալապանյան) և հակառալաբանյան պալքար անումով։ Ժամանակին Հ. Բալաբանյանին հաջողվում է տապալել Գ. Սալթիքյանին՝ նրա փոխարեն ընտրվել և ավելի քան տաս տարի վարել քաղաքագլխի պաշտոնը։ Հերթական նոր ընտրությունների ժամանակ հակառակորդ կողմը ձգտում է տապալել Բալաբանյանի թեկնածությունը։ Մատնանշվում էր մասնավորապես, որ նա ծեր է, ի վիճակի չէ ակտիվ գործունեություն ծավալելու և բացի այդ իրեն լավ չի դրսեռել այդ պաշտոնում, Ռուսություն շենք կառուցելու փոխարեն վատնել է եկեղեցական հոգաբարձության այդ նպատակով նախատեսված գումարը։ Ունենալով իրենց թեկնածում, նրանք «Պրիազովսկի կրայ» թերթի խմբագիր Ս. Հարությունյանի գլխավորությամբ քաղաքագլխի գործունեությունն ու նրան վարկաբեկող հոգվածներ են տպագրում։

⁶⁵ «Մշակության և առաջարկ» 1900, թ 239.

⁶⁶ «Մշակության և առաջարկ» 1900, թ 193, «Գրիւ» 1912, թ 1.

Դրան հակառակ, Գր. Զալխուշյանը և քաղաքագլխի մյուս կուսակիցները դրվատում են Բալաբանյանի արդյունաշատ աշխատանքները (քաղաքի բարեկարգումը, թատրոնի, հիվանդանոցի, գիմնազիայի հիմնումը և այլն) և պաշտպանում նրա թեկնածությունը⁶⁷:

Ի վերջո, քաղաքային խորհուրդը, հոգնած ու անբավական ծայրահեղությունների համող անպուղ այդ պայքարից, մերժում է երկու կողմերի թեկնածուներին և քաղաքագլուխ ընտրում մի նոր անձնավորության, կազմական նմարանի նախկին սան, երիտասարդ ու գործոնյա Մելքոնյան-Եղեկյանին⁶⁸:

Հետագայում գաղութի հասարակական կյանքում մթնոլորտ ստեղծող, դրան ուղղություն տվող ուժերի հարաբերությունը փոխվում է: Տեղի հայ հասարակության կյանքում մշտապես ակտիվ դեր կատարող Դր. Զալխուշյանն աստիճանաբար երկրորդ պլան է մղվում: Նրան փոխարինելու է գալիս նոր սիրունդը՝ Դր. Զուբարյանը, Գր. Լատոչնիկյանը, Խ. Փորբշեյանը, Ա. Զոհրաբյանը և ուրիշներ: Վերջիններս գաղութի հանրային կյանքում հաճախակի երեացող ուժ էին դարձել և Գր. Զալխուշյանի փոխարեն գերադասում էին Ռ. Բերբերյանին⁶⁹:

Գաղութի հանրային կյանքի նկատմամբ հետաքրքրության աճի հետ մեկտեղ, որը նկատելի է հատկապես XIX դարի կեսերից սկսած, առաջանում էր մարդկանց հաճախակի շփումների, ընդհանուր հավաքների, հետեւապես նաև նման հասարակական օջախներ ունենալու անհրաժեշտություն: Այդ առումով թատրոնի, գրադարանի ու նման այլ հաստատությունների կողքին, և նրանց հետ միասին, խիստ կարեոր էր քաղաքային ակումբ ունենալը:

1863 թ. հիմնվում է նոր նախիջևանի քաղաքային ակումբը: Այն գործում էր հատուկ մշակված կանոններով և կարճ ժամանակում դառնում է քաղաքի բնակչության հասարակական պահանջները բավարարող կարեոր հաստատություններից մեկը: Ակումբի անդամների թիվը հետեւ վողականորեն աճում, հասնում էր մինչև 200 հոգու⁷⁰: Ակումբը կարեոր նշանակություն ուներ նախիջևանցիների բարոյական դաստիարակության, նրանց հասարակական բարեկարգման գործում: Քաղաքի հանրային կարեոր ձեռնարկումները (այդի հիմնել, փողոցներ սալահատակել, ծիաքարչ երկաթուղի, էլեկտրական լուսավորություն անց-

կացնել և այլն) նախապես քննարկվել են ակումբում և փաստորեն եղել այտեղ կազմակերպված բանավեճերի գործնական հետևանքը:

Ռ. Պատկանյանը հայ համայնքի հասարակական կյանքում, իրավամբ, խիստ բարձր է գնահատում քաղաքային ակումբի դերը, որի մըշտական այցելուներից է եղել ինքը: Դոնի հայ զանգվածին վերաբերող խնդիրներում նախանձախնդիր և մշտապես նրանով ապրող ու իր վերաբերմունքը դրանորող անվանի գրողը ակումբի հիմնադրման 16-ամյակի առիթով հանդես է եկել «Նոր նախիջևանի քլուքը» հոդվածով:

«Մեր քլուքը,— գրում է նա 1879 թ.,— մոտեցուց շատ անմոտենալի մարդոց, իրար հետ ծանոթեցուց նոցա գաղաքարները, հաշտեցուց շատ վրդովված սրտեր, իրար շփելով ողորկեց շատ անհարթություններ: Եթե միմյանց հետ հաճախ հաղորդակցություն ունենալն, ամեն տեղ և ամեն ժամանակ, համարվել է մարդկային ազգը դաստիարակող և կրթող, ուրեմն նախիջևանի քլուքը լիովին կատարել է յուր կոշումը: Մեր քաղաքային, ինչպես որ ասացի, մտավոր զարգացման կողմանե, ոչինչ բանի այնքան երախտապարտ չէ, որքան մեր քլուքին, ուր նա, ըստ կարելուն, անցնում է յուր ժամանակը ուրախ և օգտավետ կերպով: Եվ ապա սբավականին հանգիստ և հարմար ընթերցասենյակ, բազմաթիվ և բազմատեսակ օրագիրներ և լրագիրներ, ազնիվ խոսակիցներ, վիճել պետք է, որ այսպիսի դյուրությունքը շուտ ծնեցնեին ամեն երիտասարդի զգայում սրտի մեջ ընթերցանության սերը: Ամեն օր կարդալ օգտավետ գրեր, կարդացածի վրա խոսել, դատել, վիճել՝ ահա քեզ ժողովրդական համալսարան:

Զկարծեմ, որ մեր քլուքի այցելուները երբեկցն մոռանան այն բարեկործ ազդեցությունը, այն օգտավետ զրուցներն, որն ունեցել են ընթերցասենյակումներ⁷¹:

Ժամանակի հասունացած հասարակական պահանջներին ընդառաջելու, քաղաքային ակումբի՝ իր նպատակին ծառայելու հանգամանքով պետք է բացատրել այն երեսով, որ հետագայում նման նոր հաստատություններ հիմնելու պահանջ է առաջանում:

1906 թ. նոր նախիջևանի և Ռուսությի հայկական խանութների աշխատողները նշելով, որ շունեն ընդհանուր հավաքատեղի, առանձին ակումբ ստեղծելու հարց են բարձրացնում և այդ նպատակի համար մշակում հատուկ կանոնադրություն: Նախատեսվում էր ակումբում բացի զանազան խաղերից, կազմակերպել երեկոներ, դաստիարակություններ, ունենալ գրադարան և այլն⁷²:

67 «Մշակ» 1898, № 122, 147, 179:

68 Նույն տեղում, № 188:

69 Ա. Վրացյան, Կյանքի ուղիներով, Հատ. Գ, Բեյրութ, 1963, էջ 114:

70 Ռ. Պատկանյան, Երկեր, հ. 5, էջ 280:

71 Նոյն տեղում, էջ 281—282, 283:

72 «Նոր կյանք» 1906, № 17, «Մեր ձայնը», 1908, № 58:

Նոր ակումբ հիմնելու համար 1907 թ. տեղի է ունենում Նոր Նախիշևանի տարբեր հաստատով թյունների ծառայողների հավաք: Ակումբի կանոնագրությունը մշակելու համար ժողովն ընտրում է հանձնաժողով (Օհանջանյան, Խլեբնիկով, Տեր-Մանիլով, Սարիկ, Մխիթարյանց և ուրիշներ): Վճռվում է ակումբի անդամ ընդունվելու հարցում դաշտանանքի խարություն շղնել, տարեկան անդամավճար սահմանել 15 ռուբլի և արգելել մոլի խաղերը⁷³:

Ռուսական առաջին հեղափոխության տարիներից Նախիշևանում սկսում են հրատարակվել տարբեր ուղղության թերթեր: Տեղական այդ մամուլը հիմնականում անդրադառնում էր Դոնի Հայ զանգվածի, մասնավորապես Հանրային կյանքին վերաբերող խնդիրներին: Դա որոշակի աշխույժ էր հաղորդում Հայ Համայնքի կյանքին, նպաստում դրա առաջադիմությանը:

2. ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՈՂՈՐԾՈՒՄ

Կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի ընդհանուր առաջադիմության պայմաններում, բնականաբար մեծանում էր ինչպես ռուսական միջավայրի, այնպես էլ Մայր Հայրենիքի հետ ռուսահայ գաղթավայրերի, այդ թվում և նոր Նախիշևանի կապերի ու շփումների հարավորությունները: Հատկապես արդյունաբերական կապիտալիզմի զարգացման հետևանքով հումքի հիմնական բազա հանդիսացող ռուսական կայսրության ծայրամասերը սերտորեն կապվեցին կենտրոնական շըրջանների հետ: Ինչպես ասվեց, երկաթուղային ցանցի շնորհիվ ավելի դյուրին դարձան և ընդլայնվեցին Մայր Հայրենիքի հետ եղած կապերը, արգասավորվեցին Ռուսաստանի կենտրոնական քաղաքների հետ նոր Նախիշևանի ունեցած շփումները:

Երկողմանի այդ շփումներն առավել սերտ դարձան մեզ զբաղեցնող ժամանակաշրջանում հոգեոր կապերի՝ գրքերի, թերթերի, մշակութային այլ ձեռնարկումների աննախադեպ ծավալումով: Անցյալ դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին Անդրկովկասում հրատարակվող Հայկական մամուլը, հարավային Ռուսաստանի կյանքն արտացըլող Ռուսաստան թերթերը և նոր Նախիշևանի տեղական մամուլի օրգանները մեծապես նպաստում էին նշված կապերի իրականացմանը: Դրան-

ցամ արծարծվում էին կենտրոնական ու հարավային Ռուսաստանի, Անդրկովկասի ու Հայաստանի և Դոնի Հայ զանգվածի կյանքի տարբեր կողմերի հետ առնչվող բազմապիսի խնդիրներ:

Նման պայմաններում, բնականաբար, մեծանալու էր հասարակական-տնտեսական լիաթոք կյանքով ապրող Նոր Նախիշևանի հայկական գաղութի դերը:

Պատմության առաջ մեղանչում կլիներ ռուսական միջավայրի հետ Դոնի Հայության կապերը դիտել միայն Հայ-ռուսական հարաբերությունների տեսանկյունից, քանի որ Նոր Նախիշևանը միշտ էլ եղել է ռուսական կայսրության մեջ և նրա անբաժանելի մասնիկն էր կազմում: Այստեղ Համառոտակի հիշատակելու ենք միայն այն փաստերը, որոնցում դրսեռություն էր ոչ թե հարավային Ռուսաստանում գտնվող մի փոքր քաղաքի, այլև Դոնի Հայության, որպես առանձին, ինքնամփոփ համայնքի վերաբերմունքը երկրում կատարվող կարևոր անցքերի նկատմամբ:

Նոր Նախիշևանի հայկական համայնքը միշտ էլ արձագանքել և իր համեստ հնարավորությունների սահմաններում մասնակցել է ռուսական հասարակական-քաղաքական կյանքի գլխավոր իրադարձություններին:

Հայրենի երկրի շահերին ծառայելու նախիշևանցիների ձգտումը դրսեռություն էր առաջին հերթին երկրին սպառնացող արտաքին վտանգների՝ պատերազմների ժամանակ:

Ինչպես հայտնի է, գեռևս 1812 թ. Հայրենական պատերազմի ժամանակ Դոնի Հայերը դրամական և նյութական նվիրաբերություններ արեցին և կազմակերպեցին աշխարհազորային կամավոր ջոկատներ⁷⁴:

Հիսուն տարի անց, գաղութի սահմաններից ոչ այնքան հեռու, մերձավոր շրջաններում ծավալված Ղրիմի պատերազմի տարիներին Հայերի Հայրենասիրական ներդրումն ավելի շոշափելի էր: Նրանք ակտիվ մասնակցություն ունեցան թշնամու առաջնազացումը կանխելու նպատակով Դոնի մատուցներն ամրապնդելու աշխատանքներին, տրանսպորտի սեփական միջոցներով նպաստեցին զորքի և ռազմական հանդերձանքի աեղափոխմանը, մեծաքանակ պարենամթերք ու դրամական միջոցներ նվիրաբերեցին ուսական բանակին: 1853—1856 թթ. Ղրիմի պատերազմին Դոնի Հայության մասնակցությունն այնքան ակնառու է եղել,

74 Մ. Գ. Ներսիսյան, Օтечественная война 1812 года и народы Кавказа, Ереван, 1965, с. 196—197.

որ կայսրը շնորհակալություն է հայտնել և նոր նախիջևան քաղաք պարգևատրել «Զանասիրության համար» ոսկե մեդալով և Վլադիմիրյան ժապավենով⁷⁵:

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբում նոր նախիջևանի հայկական համայնքը, հավատարիմ իր դարավոր ավանդներին, անվերապահ արձագանքում է և շանում իր աշակեցությունը բերել հայրենիքին՝ պատերազմի հետևանքով ստեղծված դժվարին պայմաններում:

1914 թ. օգոստոսի սկզբներին հրավիրվում է նախիջևանի և Ռուսովի հայ հասարակության համատեղ ժողով, ուր միահամուռ որոշվում է վիրավոր զինվորների համար, ինչ ազգի էլ որ նրանք պատկանեն, սեփական միջոցներով հիմնել հիվանդանոց: Այդ նախաձեռնությունն իրագործելու նպատակով ընտրվում է 24 հոգուց կազմված հանձնաժողով⁷⁶: Շուտով քաղաքային դպրոցի շենքում բացվում է 400 մահճակալ ունեցող արքունական հիվանդանոց⁷⁷:

Նոր նախիջևանի քաղաքային ինքնավարությունը որոշում է իր միջոցներով մինչև պատերազմի ավարտը պահել 150 մահճակալով հիվանդանոց: Անմիջապես բացվում է ևս երկու հիվանդանոց, մեկը՝ հայկական անկելանոցում, մյուսը՝ հիմնում են Մելքոնյան-Եղեկյան եղբայրուները⁷⁸:

Հայկական գաղութի բոլոր հասարակական կազմակերպություններն ու հաստատությունները պատրաստակամություն են հայտնում մասնակցելու վիրավորների խնամելուն: «...Փափկասուն հայ օրիորդները և կանայք, կարդում հնք պատերազմական այդ օրերին տեղի «Գաղութ» թերթի էջերում, — առաջարկում են իրենց անձնական ծառայությունը հիվանդներին հսկելու և խնամելու գործում»⁷⁹: Բազմաթիվ անհատներ իրենց տներում, սեփական միջոցներով, վիրավոր կամ հիվանդ զինվորներ պահելու ցանկություն էին հայտնում:

Նախիջևանի քաղաքային խորհրդարանը պատերազմական կարիքների, մասնավորապես զենքի կոշված զինվորականների ընտանիքներին ապահովելու համար Կովկասի փոխարքայի տրամադրության տակ է դնում 50 հազար ռուբլի գումար⁸⁰:

75 Վ. Թարխանյան, Նոր նախիջևանի գաղութը 1853—1856 թթ. Ղրիմի պատերազմի տարիներին («Հրաբեր» համ. գիտ. 1967, № 9, էջ 61):

76 «Գաղութ», 1914, № 25:

77 Նույն տեղում, № 26:

78 Նույն տեղում, № 28:

79 Նույն տեղում, № 25:

80 «Մշակ», 1914, № 243:

Ինչպես նախկինում, այս անգամ ևս քաղաքացիներից ետ չեն մնում և հայրենասիրական չերմ վերաբերմունք են ցուցաբերում նաև բոլոր հայկական գյուղերի բնակիչները: Այսպես, Մեծ Սալա գյուղի ընդհանուր վճռով վճռում է իր միջոցներով վիրավոր զինվորների համար պահել 10 մահճակալ: Թոփտի գյուղը վիրավոր զինվորների համար պահել 10 մահճակալ: Թոփտի գյուղը վիրավոր զինվորների համար տրամադրում է գյուղի ամենից հարմար տունը՝ «Ղրիմ» սպառողական լիներության շենքի վերին հարկի հինգ սենյակները:

Շուտով բերում են վիրավորների և նրանց խնամելու համար գյուղացիները սիրահոժար նվիրաբերում են ով ինչ կարող էր: «Պետք է տեսնել, թե ինչպես 9—10 տարեկան երեխաները, — գրում է թերթը, — փողոցեն-փողոց ընկած, փոքր հերոսների տրամադրությամբ բարձեր և որիշ անհրաժեշտ իրեր էին հավաքում վիրավորների համար: Ընդհանրապես գյուղացիք շեն փախչում ծախսերից, չնայած որ ահագին պարտքերի տակ են ընկած»⁸¹:

Նույն Թոփտի գյուղի հասարակությունը ուսուական գորքի համար իր միջոցներից երկու վագոն պաքսիմատ է պատրաստում և ուղարկում պատերազմի դաշտ⁸²:

Քաղաքի և գյուղերի հայ հասարակություններից և հաստատություններից բացի հայրենասիրական մղումներով առաջնորդվելով նվիրաբերություններ էին կատարում նաև շատ անհատներ: Ռուսովի և նախիջևանի հայ փաստաբանները միանվագ 1500 ու. և ամսական 5—25 ռուբլի են հավաքում՝ զինվորականների կարիքավոր ընտանիքների և վիրավոր զինվորների խնամքի համար⁸³: Դենշ-Օղլույանի և Շապոշնիկյանի խանությունների աշխատողներն այդ նույն նպատակով հատկացնում են իրենց աշխատավարձի 1—5 % -ը⁸⁴, վաճառական է. Պայանը մեկ վագոն պաքսիմատ է նվիրում «տաճիկների դեմ կովող ուսուական գորքին»⁸⁵:

Դոնի հայ հասարակությունը արձագանքում և սրտամոտ վերաբերմունք էր ունենում նաև երկրի մշակութային կյանքում կատարվող խորհրդագործություններին: Այդպես է եղել նաև XIX դարում: Դումայի ձախավոր Մ. Խլտշիկը քաղաքային խորհրդարանի նիստում հիշեցնելով, որ ընթացիկ՝ 1899 թ. բովանդակ գումարում նշվում է Ա. Ս. Պուշկինի ծննդյան 100-ամյակը, գտնում է, որ հայկական գաղութը

81 «Գաղութ», 1914, № 28:

82 Նույն տեղում, № 31:

83 Նույն տեղում, № 26:

84 Նույն տեղում, № 29:

85 Նույն տեղում, № 33:

շպետք է անտարբեր ու հեռու մնա երկրի մշակութային կյանքում կատարվող կարեր այդ միջոցառումից: Նա առաջարկում է հատուկ հաճախողով առանձնացնել այդ հարցով զբաղվելու համար⁸⁶: Առաջարկն ընդունվում է և ստեղծված հանձնաժողովն ու քաղաքային վարչությունը նախապատրաստական աշխատանքներ են կատարում նոր նախիչևանում նշելու մեծ պոետի հոբելյանը:

Կազմակերպված հանդիսավոր ցերեկութին մասնակցում են նաև քաղաքի 12 ուսումնարանների աշակերտները, որոնք նվեր են ստանում բանաստեղծի ստեղծագործությունների հոբելյանական հրատարակության մեկ հատորյակը: Պուշկինի հիշատակը Հավերժացնելու նպատակով քաղաքային գրադարանը կոչվում է նրա անունով: Քաղաքային Ալեքսանդրյան այգում կազմակերպվում է զբոսանք⁸⁷: Խնչես նշում են թերթերը, հոբելյանական հանդեսի օրը քաղաքը զարդարված էր տոնականորմն, իսկ դրամատիկական արվեստ սիրողների ընկերությունը կազմակերպել էր հետաքրքիր արտասանություններ և բեմադրել Պուշկինի ստեղծագործություններից մեկ ներկայացում⁸⁸:

1902 թ. հայ համայնքն արձագանքում և պատրաստվում է նշելու ուս գրողներ Ն. Վ. Գոգոլի և Վ. Ա. Ժուկովսկու մահվան 50-ամյակները: Նոր նախիչևանի խորհրդարանը որոշում է քաղաքում բացել նրանց անվան դպրոցներ⁸⁹:

1903—1904 ուսումնական տարում Ս. Խաչ ավանում բացվում է Ն. Գոգոլի անվան քաղաքային երկսեռ տարրական ժողովրդական ուսումնարան: Հարմարավետ շենք վիճակում պատճառով նախատակահարմար է համարվում նոր շենք կառուցել: Նախատեսվում է հաջորդ ուսումնական տարում բացել Վ. Ժուկովսկու անվան դպրոց⁹⁰:

Դոնի հայ հասարակությունը մեծ նշանակություն էր տալիս և հատուկ նախապատրաստվում կատարելու Լ. Ն. Տոլստոյի ծննդյան 80-ամյակը: Հոբելյանից մեկ տարի առաջ 1908 թ. դումայի ձայնավոր Ա. Սալթիկովն առաջարկում է նոր նախիչևանում ևս համաժողովրդական ձեռվ նշել մեծ գրողի հոբելյանը և այն նշանավորել որեւէ հանրօգուտ ձեռնարկումով: Այդ առաջարկն ընդունվում է միահամուռ և անմիջապես հեռագիր է ուղարկվում մեծ գրողի ծննդավայրը՝ Յասնայա Պոլյանա:

⁸⁶ ГАРО, ф. 91, оп. 1, д. 940, л. 1.

⁸⁷ Նույն տեղում, թ. 6, 16:

⁸⁸ «Նոր դար», 1899, № 103:

⁸⁹ ГАРО, ф. 91, оп. 1, д. 1063, л. 7.

⁹⁰ Նույն տեղում, թ. 70, 186:

Խորհրդարանի ժողովը լսելով քաղաքագլխի զեկուցումը, գտնում է, որ հաջորդ ուսումնական տարում նախիչևանում կարելի է բացել է. Տոլստոյի անվան տարրական երկսեռ ուսումնարան: Նախատեսվում է նաև բացվելիք ուսումնարանի աշակերտներին նվիրել Տոլստոյի պատմվածքների ժողովածուն: Խորհրդարանի անդամ Դ. Չուբարյանը, առիթից օպովելով, առաջարկում է մեծ գրողի պատվին քաղաքի ռուսական հրապարակը վերանվանել լ. Ն. Տոլստոյի անունով, որը նույնպես հավանության է արժանանում⁹¹:

Նոր նախիչևանի քաղաքային վարչությունը, Դումայի 1908 թ. սեպտեմբերի 15-ի որոշման հիման վրա դիմում է Ռուստովի ուսումնական խորհրդին՝ թույլատրել հաջորդ տարվանից նախիչևանում յոթնամյա ուսումնարան բացել և այն կոչել լ. Տոլստոյի անունով⁹²: Ռուստովի օկրուգին ուսումնական խորհրդը համաձայնվում է ուսումնարանը բացելու առաջարկին, սակայն նպատակահարմար չի տեսնում այն ժամանակակից առաջարկահարմար կատարել: Տոլստոյի անունով կոչելու, և, մանավանդ, դրա համար կառավարության առաջ միջնորդություն կատարել:

Հատկանշական է, որ գաղութի հայ հասարակությունն այնքան հետևողական է գտնվում ուս մեծ գրողի անունը հավերժացնելու իր ձգուման մեջ, որ չի հաշտվում ուսումնական խորհրդի վճռի հետ: Նախիչևանի քաղաքային դուման լսելով Ռուստովի օկրուգային խորհրդի որոշման մասին հաղորդումը, հանձնարարում է քաղաքային վարչությանը՝ բացվելիք ուսումնարանը լ. Տոլստոյի անունը կրելու համար դիմել անհրաժեշտ բոլոր վերադաս ատյաններին: Այդ որոշման հիման վրա քաղաքագլխի դիմում է Խարկովի ուսումնական օկրուգի հոգաբարձուին: Նա փնդում էր, որ հարգվեր նախիչևանի Դումայի որոշումը և թույլատրվեր նոր բացվելիք ուսումնարանը կոչել լ. Տոլստոյի անունով⁹³:

Նոր նախիչևանի կանանց ակումբում հարվիրվում է ուս նշանավոր դիմուկրատ բանաստեղծ; Հասարակական գործիչ Ն. Ա. Նեկրասովի հիշատակին նվիրված երեկույթ: Զեկուցում է լսվում գրողի կյանքի ու ստեղծագործությունների մասին, կարդացվում նրա գործերից և երեկոյի վերջում տրվում է համերգ⁹⁴:

1914 թ. Մ. Յու. Լեմոնտովի ծննդյան 100-ամյակի առթիվ նոր նախիչևանի քաղաքային վարչությունը 4000 ռ. գումար է հատկացնում

⁹¹ ГАРО, ф. 91, оп. 3, д. 405, л. 10.

⁹² Նույն տեղում, թ. 11:

⁹³ Նույն տեղում, թ. 9:

⁹⁴ «Մեր ձայնը», 1908, № 26:


գրողի նկարները ձեռք բերելու և ժողովրդի մեջ տարածելու համար Տեղական թերթերը Մ. Լերմոնտովի ստեղծագործություններից և նրա մասին բազմաթիվ հոդվածներ են տպագրում⁹⁵:

Նույն տարում քաղաքագլուխ Մ. Պոպովն արտահայտելով նորնախիչեանցիների ցանկությունը, հեռագրում է Տագանրոդ և ցավ հայտնելով, որ զրկված է անձամբ ներկա լինելու բավականությունից, շերմորեն շնորհավորում է այնտեղ Ա. Պ. Չեխովի անվան գրադարան և թանգարան բացելու ուրախալի առիթով⁹⁶:

Խուսաստանի կարևոր իրադարձություններին Դոնի հայության ինքնարուխ, սիրահօֆար վերաբերմունքը դրսեորվել է նաև այլ ասպարեզներում: Այսպես, 1868 թ. հայկական գաղութն անմիջապես արձագանքում է կայսրության հյուսիսային երկրամասերում սովից նեղված բնակչությանը օգնելու համար նվիրատվություն ուսելու կառավարության կողմին: Քաղաքի և գյուղերի բնակիչները ակտիվ մասնակցում և այդ նպատակով նշանակալից գումար են հավաքում⁹⁷:

Հատկանշական է, որ հայ համայնքը համանման վերաբերմունք էր դրսեորում առևտրատնտեսական բազում թելերով կապված հարևան Ռուսովի նկատմամբ: Հիշատակենք մեկ փաստ: Նոր Նախիչևանի քաղաքային վարչությունը 1907 թ. քննարկելով պոլիտեխնիկական ինստիտուտը Վարշավայից Ռուսով տեղափոխելու գործում հարևան քաղաքի միջնորդությանը նպաստելու հարցը, դրան վերաբերվում է ամենայն համակրանքով: Հայ համայնքի ղեկավարությունը հավաստում է, որ կարող են Ռուսովին նյութական նկատելի օգնություն ցույց տալ: Դա արտահայտվում է առաջին հերթին նրանով, որ առանց որեէ վճարի ու պայմանի ձրիաբար Ռուսով քաղաքին է տրամադրվում նոր Նախիչևանին պատկանող սահմանամերձ հողամասը՝ պոլիտեխնիկումի համար⁹⁸:

Մեջբերված փաստերը, կարծում ենք, բավարար են, երկրի կյանքում տեղի ունեցող նշանակալից իրադարձություններին նոր Նախիչևանի հայության հայրենասիրական ու սրտացավ վերաբերմունքը հավաստելու համար: Միաժամանակ հարկ է նշել, որ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբի տասնամյակներում Դոնի հայության կյանքն ըն-



95 «Գաղութ», 1914, № 29, 30.

96 «Приазовский край», 1914, № 16.

97 ՀԿՊՊԱ գ. 54, ց. 1, գ. 2153; ուս ժողովրդի նկատմամբ բարեկամական վերաբերմունքն արտահայտվում էր նաև այլ եղանակներով, այդ թվում նաև զետի առևտրունքն ունեցած տրամադրություններով: Այս հարցում ևս Նախիչևանի հայ համայնքն ընթանում էր ոռուահայ զանգվածների առաջին շարքերում:

98 «Приазовский край», 1907, № 323.



Հայաստանի շոկոլադ գործարանի շենքը

թանում էր ոռոսական իրականությանն անընդհատ մերձենալու, սերտաճելու ուղղությամբ։ Նորնախիջևանցիները, սակայն, աշխատում էին պահպանել ազգային ինքնությունն ու դիմապատկերը։

Մայր Հայրենիքի՝ Հայաստանի ու Հայ իրականության հետ նոր նախիջևանի կապերն իրականանում էին բազում ձևերով։ Այդ տեսանելի ու աննկատ կենարար կապերն ու շփումներն էին, ըստ էության, ինչպես ամեն մի գաղութի, այնպես էլ նոր նախիջևանի կենսահաստատ գոյատևան հիմնական գրավականը։ Բազմերանգ բնույթի կենդանի ու հոգեվոր մշակութային այդ կապերն այնպես էին միաձուված գաղութի բովանդակ պատմությանը, որ հնարավոր չէ և անիմաստ կլիներ փորձել արդ ամենն անշատել բուն նյութից և առանձին ներկայացնել։ Այստեղ մեր ինդիրն է ընդհանուր ձևով լուսաբանել Դոնի Հայ զանգվածի՝ Մայր Հայրենիքի հետ ունեցած հասարակական կապերը։

Հայաստանի հետ հասարակական-մշակութային կապերն ու շփումները գաղութի պատմության նախորդ շրջանի համեմատությամբ XIX դարի II կեսին և XX դարի սկզբին ավելի աշխույժ և սերտ դարձան։

Նախ շարունակում էր պահպանվել և թերևս առավել արգասավոր էին դարձել Հայ ժողովրդի տարբեր հատվածները միավորող, Համագոյային գործունեության շառավիղ ունեցող Հայ հոգեսր իշխանության՝ եկեղեցու միջցով իրականացող շփումները։ Նոր նախիջևանի և ոռոսահայ մյուս համայնքների կապերը Հայ եկեղեցու հետ արտահայտվում էին ոչ միայն Հայկական գաղթավայրերում կրոնական ծիսակատարություններին վերահսկելու, կաթողիկոսի կոնդակներին ու շրջաբերականներին արձագանքելու, եկեղեցական հասույթները հավաքելու, ուսումնական գործին հետևելու, այլ նաև էջմիածնում՝ մեռոնօրհների հանդեսներին, կաթողիկոսի ընտրություններին մասնակցելու միջոցով և այլ եղանակներով։

Ոռոսահայերի շրջանում և հատկապես նոր նախիջևանում տարածված էր նաև կրոնական սովորությով պայմանավորված Երուսաղեմ և Մշո ս. Կարապետ ուխտագնացության ժաման։ Ուխտագնացությունը տեսվում էր մի քանի ամիս, որի ընթացքում հեռավոր ճամփորդություն կատարողները հնարավորություն էին ստանում ժանոթանալու Հայաստանի, Անդրկովկասի և Արևմտյան Հայության կյանքին։

Հարկավ, այս ուխտագնացությունները չեին բացատրվում նորնախիջևանցիների կրոնական մոլեւանդությամբ։ Դա թելադրվում էր մի կողմից էջմիածնի, որպես համայնքական միակ հաստատության շուրջ համախմբվելու, Հայրենասիրական զգացմունքներ առաջացնելու, կենտրոնաձիգ մտայնություն ունենալու, մյուս կողմից՝ Մայր Հայրենիքց

արգասավորվելու և հայկական գաղութում ազգային նկարագիր պահանջելու մտահոգությամբ:

Հիշատակենք դեպի Մայր Հայրենիք ուխտագնացության ժամանակի մամուլում պահպանված երկու փաստ: 1870 թ. ամռանը նոր Նախիջևանից 50 ուխտավորներ այցելում են Էջմիածին և ապա ուղևորվում Արևմբույան Հայաստան, Մշո Ս. Կարապետի վանքը⁹⁹:

1906 թ. կրոնական հանդեսների ժամանակ հաղորդում է «Արևելք» թերթի թղթակիցը, Երուսաղեմում պատրիարքը ինքն է անձամբ հանդես գալիս այցելուների առաջ և դրանով իսկ գոհունակություն պատճառում այնտեղ ժամանած ուխտավորներին, որոնց մեջ կային տեղի վանդին բավականաշափ նպաստ տված շուրջ 30 նորութիշնեանցիները¹⁰⁰:

Իրավացի է Հայրենի նոր Նախիջևանի պատմությանը բաշատեղյակ մտավորական Խ. Փորքշյանը, երբ գրում է: «Ամեն տարի ամառվա թնթացքում Հայ երիտասարդությունը խոշոր խմբերով, ծիերի վրա նստած, ուխտ է գնացել Մշո սուրբ Կարապետի վանքը, ճանապարհին այցելել է Հայաստանի տեսարժան վայրերը և անպատճառ իրենց մայրենի Անիի ավերակները... Կովկասյան և Անդրկովկասյան երկաթուղիները կառուցելուց հետո սկսեցին գնալ շոգեկառքով մինչև Թիֆլիս, իսկ այնտեղից ֆուրգոններով և կամ գնում էին նովորոսիյակ, նավով հասնում Տրավիզոն, իսկ այնտեղից դարձյալ ֆուրգոններով ճանապարհվում ուխտածողները¹⁰¹:

Երկաթուղիների և առասարակ հաղորդակցության միջոցների զարգացումը մեծապես նպաստեց ուսանող երիտասարդության, մշակույթի և այլ ասպարեզների մտավոր գործիչների փոխայցելություններին:

XIX դարի վերջերից սովորություն էր դարձել նոր Նախիջևանի ուսումնարանների, հատկապես թեմական դպրոցի բարձր դասարանների աշակերտների՝ ամռան արձակուրդներին այցելությունները Հայաստան ու Անդրկովկասի հայաշատ վայրերը: Գաղութի ուսումնական գործի տնօրեններն ու նշանավոր դեմքերն, ըստ ամենայնի, գիտակցում էին այդ այցելությունների նշանակությունը: Նոր Նախիջևանի թեմական դպրոցի տեսուշ Խ. Շահազիզը հատուկ գրությամբ եկեղեցական հոգաբարձությունից միշոցներ է խնդրում աշակերտների ուղևորությունը դեպի Հայաստան կազմակերպելու համար: Նա հիմնավորում է նման էքքսկուրսիա կազմակերպելու անհրաժեշտությունը: «Նկատված է,— գրում է

նա, — որ դպրանոցիս աշակերտները հայրենիքից հեռու, օտարության մեջ ծնված և սնված լինելով, վերացական մի բան են համարում իրենց սովորածները և լավ չեն կարողանում տպավորել իրանց սրտերում Մայր Հայրենիքին վերաբերող ամենաէական և իրական տեղեկությունները:

Ամեն բան իրենց աշքով տեսնելու հնարավորություն տալու, ամեն բան նրանց համար շոշափելի դարձնելու նպատակով շատ ժամանակ դեռ առաջ միտք էր հղացել պարբերաբար կազմելու աշակերտական ճամբորություններ դեպի հայրենիք, դեպի նրա նվիրական տեղերը, բայց նյութական միջոցների սղության պատճառով դժբախտաբար չէր իրագործվել այդ լավ ու օգտավետ միտքը»¹⁰²: Ե. Շահազիզի հոգացողության արդյունքը լինում է այն, որ նույն տարում 1909 թ. թեմական դպրոցի մի խումբ աշակերտներ այցելում են Արևելյան Հայաստան¹⁰³:

1911 թ. թեմականի 22 աշակերտներ ուսուցիչներ Մելիք-Օհանջանյանի և Զաթաւեայանի ղեկավարությամբ մեկնում են Անդրկովկաս: Նրանք անցնում են Թիֆլիս-Սանահին-Հաղպատ-Անի ուղեգծով: Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքում հանդիպում են ունենում պեղուններ կատարող հնագետների հետ, լսում Ն. Մառի բացատրությունները և Ալեքսանդրապոլ-Արագած-Էջմիածին-Երևան-Սևան-Թիֆլիս ուղերթով վերադառնում նոր Նախիջևան¹⁰⁴:

Դեպի Անդրկովկասի պատմական վայրերն ու հայաշատ կենտրոնները համանման ուղեկորություն են ձեռնարկում նաև նոր Նախիջևանի իգական գիմնազիայի սանուհիները և այլ դպրոցների աշակերտները¹⁰⁵:

Մայր Հայրենիքի հետ ուսահայ գաղթավայրերի փոխադարձ կապերը լայն շափերով իրականանում էին, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, նաև պարբերական մամուլի միջոցով:

Գրական-հասարակական, մշակութային և այլ ուղղությունների հայկական պարբերականները հաճախ անդրադառնում էին հայկական զաղթավայրերի պատմության հարցերին: Հատկապես «Մշակ», «Նոր գար», «Մելու Հայաստանի», «Արձագանք», «Փորձ» և հայկական այլ թերթերու ամսագրեր լուսարանում էին Դոնի Հայ զանգվածի հասարակական ու մշակութային կյանքի առօրյա հարցերը: Մյուս կողմից, նոր Նախիջևանում հրատարակվող տեղական թերթերը մշտապես արձագանքում էին Հայաստանում և հայ իրականության մեջ տեղի ունեցող իրադարձություններին:

102 ՀԿՊԱ, ֆ. 55, ց. 1, թ. 1, գ. 73:

103 ԱՄԲ, մ. 1909, էլ. 588:

104 ԱՄՀԿ, մ. 1911, էլ. 129:

105 «Փաղութ», մ. 1914, էլ. 19, «Մեր Ճայնը», 1908, մ. 30:

99 «Արարատ», 1870, Խ 1, էլ. 36—37:

100 «Արևելք», 1906, Խ 6149:

101 Խ. Փարչյան, նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահուսությանը, Երևան, 1965, էլ. 66:

Մայր հայրենիքի հետ աշխույժ կապերի ու շփումների հետ մեկտեղ խիստ կարևոր էր այն հանգամանքը, որ նոր նախիջևանը ևս իր հերթին հասարակական կյանքի հասունացման շնորհիվ ներազդող ուժ էր ծեռք բերել և յուր հնարավորությունների սահմաններում ձգտում էր նպաստել իր ժողովրդի առաջ ծառացած ինդիրները լուծելուն։ Գաղութի այդ օժանդակությունը կատարվում է հոգեոր ու նյութական կյանքի տարբեր բնագավառներում և դրսերվում բազում ձերով ու եղանակներով։

Մայր հայրենիքի հետ գաղութի կենդանի կապերը բազմազան էին և չին սահմանափակվում միայն ուխտագնացության, եկեղեցական տոնահանդեսներին ու կաթողիկոսական ընտրություններին գաղութաշայերի մասնակցությամբ կամ դեպի հայրենիք աշակերտների ուղևորություններով։

Նոր նախիջևանի նշանավոր դեմքերը տարբեր առիթներով այցելում էին Հայաստան ու Անդրկովկասի հայկական կենտրոնները, հանդիպումներ ունենում մտավորականության, տեղի ճանաշված գործիչների հետ։ Դա ևս հասարակական լայն արձագանք էր գտնում և ամրապնդում ազգակիցների հետ ունեցած կապերը։

1880 թ. դեպի հայրենիք ուղևորություն է կատարում Ռ. Պատկանյանը։ Նա կանգ է առնում Թիֆլիսում, լինում Երևանում, էջմիածնում, այցելում թերթերի խմբագրություններ, դպրոցներ, հանդիպում ունենում Գր. Արծրունու, Աբ. Հովհաննիսյանի և հասարակական այլ գործիչների, բարձրաստիճան հոգեորականների հետ։ Վերադարձից հետո Հայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի խնդիրներին անմիջապես արձագանքող ու նախանձախնդիր գրողը հրատարակում է իր ճանապարհորդական տպագրությունները։ Համանման այցելություններ հաճախ էին կատարվում։

Հայ ժողովրդի հասարակական-մշակութային նշանավոր իրադարձություններին, մասնավորապես Հոբելյանական կարևոր հանդեսներին նախիջևանցիները մշտապես արձագանքում, իրենց պատվիրակությունն էին ուղարկում։ Այսպես, օրինակ, 1912 թ., երբ Թիֆլիսում կատարվում էր «Մշակ» թերթի հիմնադրման 40-ամյա հոբելյանը, նոր նախիջևանի հասարակության անունից մասնակցում և թերթի ազգօգուտ, երկարամյա գործունեությունը դրվատում ու ողջույնի խոսք է ասում Գր. Զալիսուշյանը։ «Նոր նախիջևանի անունից, — իր ելույթում նշում էր նա, — ողջումում եմ քեզ սիրելի Թիֆլիս քաղաք, որ այսքան սերտ կապերով առ միշտ կապված ես Գր. Արծրունու անվան հետ, որին այնքան սիրում էր

դամառ Քաթիպան, որտեղ գործել է Բաֆֆին... Բոլորիդ սըրտանց ջերմ ողջույններ»¹⁰⁶։

Տեղի էր ունենում նաև Հակառակ երկույթը։ Հայաստանի կամ Անդրկովկասի և Մուսասատանի հայաշատ կենտրոններից հայ գործիչներ հաճախ այցելում էին նոր նախիջևան։ Մուսասատանը Կովկասի հետ կապող հիմնական ուղիների հանգուցակետում գտնվող հայկական գաղութի հարմար դիրքը և լիաթոք ազգային ոգով ապրող Դոնի հայության հասարակական հասուն կյանքը պարարտ հող էին ստեղծում և անհրաժշտ դարձնում նման փոխայցելությունները։

Նման այցելությունները էական նշանակություն էին ունենում հայ իրականության հետ շփումները պահպանելու, գաղութի հասարակական մինուրուն ազգային ոգով արգասավորելու տեսակետից։

1866 թ. ամունը Ա. Նազարյանը այցելում է Նոր նախիջևան և այնտեղ մնում մի քանի շաբաթ։ Դոնի հայության հետ ունեցած հանդիպումներից մեկի մասին իր բարեկամ Մ. Փանյանին ուղղած նամակում նագրում է. «Մի նմանուպիսի հոգեշարժ բանախոսություն առանց պատրաստության պատահեցավ այն տեղի Սուլր Խաչ վանքում, ուր ժողոված էր մեծ բազմություն և մի առանձին բարեգործական ընկերության շնորհակալական պատարագ և ժամերգություն կատարելու, այլև տոնախմբելու մինիստրի հաստատությունն ընկերության կարգերի»։

Մեղանի վերա, երբ որ սկսել էին բաժակներ ըմակել... և քաղցրածայն տիրացուքը օրքեստրի հետ միասին թնդեցնում էին օդը, ուղիղ ասեմ քեզ, մի այնպիսի անսովոր ազդեցություն դղրդեց սիրտս, որ ես կարող չէի լուս մնալ. ունեցավ կուրծքս և սիրտս կամեր դուրս թուշել ևս տվեցի խոսքիս ազատ ընթացք և թևեր, որոտեցուցի արձակ օդը, ծառների տակ դրած սեղանի վերա, և այստեղ թափեցան արտասուք թե ատենարանի և թե բազմության ալքից։ Պիտո է հուսալ, որ այսպիսի տեսարանն չեն մնալու առանց տեղողական խորին տպագրության սըրտերի վրա և առանց պտղաբեր հետևանքի գալուց օրերում»¹⁰⁷։

Այս տողերը ցույց են տալիս, որ նշանավոր հրապարակախոսը լավ էր գիտակցում փոխադարձ այցելությունների հասարակական և հայրենասիրական նշանակությունը։

Ամենայն հայոց կաթողիկոսները ուսւահայ թեմերն այցելելու միջնին, մասնավանդ ուսւաց կայսրի կողմից ընդունվելուց հետո, մայրաքաղաքից վերադառնալու ճանապարհին, որպես կանոն, կանգ էին առ

106 Գր. Զալիսուշյան, Մտքեր, Խոհեր, գեմքեր, էջ 113։

107 «Արարատ», 1913, Խ 8—9, էջ 732։

Նույն Նոր Նախիջևանում: Հայ հոգեոր պետերի ժամանումը, իրավամբ, դիտվում էր որպես Հայ ժողովրդի երկու հաստածների՝ Արևելյան և Արևմտյան Հայաստանը ներկայացնող համազգային գործի այցելություն և, բնականաբար, լայն արձագանք էր գտնում: 1867 թ. Աստրախանից Նախիջևան է գալիս կաթողիկոս Գևորգ IV-ը և արժանանում բարձր ընդունելության¹⁰⁸:

1895 թ. Նոր Նախիջևան է այցելում Հայ հասարակական-քաղաքական նշանավոր գործի, Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը (Մկրտիչ Խրիմյանը): Ռուսովի երկաթուղային կայարանում նրան դիմավորում են նահանգապետի տեղակալը, Ռուսովի քաղաքագլուխ է: Խմենիցկին, Նախիջևանի քաղաքագլուխը, երկու քաղաքների հասարակական հաստատությունների ներկայացուցիչները և տարբեր ազգերի պատկանող շուրջ 30 Հազար բնակչությունը¹⁰⁹: Կաթողիկոսը ողջունում է բոլոր ազգությունների ներկայացուցիչներին, օրհնում ու բարեմաղթություններ կատարում: Առաջ տաս օր մնում է Նոր Նախիջևանում, այցելում Հայկական հեկեղեցիները, ծանոթանում հասարակական կազմակերպությունների, դպրոցների և այլ հաստատությունների գործունեությանը¹¹⁰:

1909 թ. Նոր Նախիջևան է ժամանում կաթողիկոս Մատթեոս II իշխանը: Նա այցելում է քաղաքի վեց հեկեղեցիները, թեմական, արհեստադրական դպրոցները, անկելանոց, որբանոց, հրվանդանոց և ապա Ս. Խաչ վանք: Այդտեղ տեղի ունեցած հավաքում ելույթ է ունենուած նշանավոր հասարակական գործի, գրող Միհնաս Չերազը և նշում, որ Նոր Նախիջևանի Հայկական գաղութը նշանավոր և սիրելի է ամեն մի Հայի համար ոչ թե իր հարստության պատճառով, այլ շնորհիվ իր ճանաշված ազգային գործիների և, առաջին հերթին, վանքի բակում հանգչող Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի¹¹¹:

Պետերովդից էշմիածին վերադառնալու ճանապարհին Գևորգ V կաթողիկոսը կանգ է առնում Նոր Նախիջևանում: Նրան դիմավորում են Ռուսով և Նախիջևան քաղաքների ղեկավարները և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Կաթողիկոսը հանգամանորեն ժամանում է Հայկական գաղութի կյանքին: Քաղաքի առևտրական ակումբում իր պատվին տրված ճաշկերույթում գոհումակություն է Հայությունի Հայության բարվոք վիճակի, նրա ուսումնական, բարեգործա-

կան հաստատությունների գործունեության, ազգային ոգին ու նկարագիրը պահպանելու համար: Նա կոչ է անում միշտ կապված մնալ Մայր Հայրենիքին, ինչպես հրեաները մեկնում են Երուսաղեմ, այնպես էլ նորանիշիկանցիները հաճախ պետք է այցելեն Հայաստան ու էշմիածին¹¹²:

Նոր Նախիջևանի գաղութում հայկական հոծ զանգվածի առկայությունը, հասարակական-մշակութային, ազգային կյանքի հասուն վիճակն իր վրա էր գամում Հայ գրականության: ու մշակույթի, առհասարակ, Հայ հասարակական նշանավոր գործիների հայացքը: Դա ևս Մայր Հայրենիքի հետ կապվելու կարևոր լծակներից էր:

Նշանավոր նկարիչ Գ. Բաշինջաղյանը 1887 թ. Նախիջևանի հոգեուկառագրության տնօրին Կ. Սրապյանին գրում էր այն մասին, որ սեպտեմբերի 15—16-ին այցելելու է Նոր Նախիջևան և տաս-տասներկու օր ժամանակով բացելու է իր ստեղծագործությունների պատկերահանդես¹¹³:

XIX դարի վերջում Ռուսաստանում սկսված այլազգիների հալածանքների ու բռնությունների ժամանակ Թիֆլիսում բանտարկված մի խումբ Հայ մտավորականների 1897 թ. մեկ-երկու տարով արտաքսում են Կովկասի սահմաններից դուրս: Նրանց մեծ մասը՝ գրող Ղ. Աղայանը, նշանավոր Հնշակյան Ռ. Խանազարը, Ռ. Բերբերյանը և ուրիշներ ժամանակավոր «Բնակավայր» են ընտրում «Փոքրիկ Հայաստանը»՝ Նոր Նախիջևանը: Ժամանելով Դոնի Նախիջևան, նրանք ժանոթանում են գաղութի ու քաղաքի կյանքին: Առաջին հերթին այցելում են Ս. Խաչ վանքում հանգչող Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի շիրիմներին: Ղ. Աղայանը և Շահազդիզի ուղեկցությամբ այցելում է ս. Լուսավորիչ հեկեղեցի, ուր պահում էր ավելի քան 250 Հայկական ձեռագիր, դիտում ու ապահովանում է դրանց բովանդակությանը:

Նրանք Նախիջևանի և Ռուսությունի Հայ մտավորականության մասնակցությամբ գրական հավաքներ են կազմակերպում: Այդ հավաքներին մասնակցում էին իրավաբան Գ. Չուփարյանը, բանաստեղծներ Զ. Բ. Բալուղյանը, Ռ. Անոփիյանը, ինչպես և Գր. Չալխուշյանը, Ե. Շահազդիզի և Ռերբերյանը և ուրիշներ¹¹⁴:

Հայոց պատմության ու արվեստի քաջահմուտ, գիտակ Գարեգին Հովսեփյանը 1912 թ. Նոր Նախիջևանի քաղաքային թատրոնի շենքում երեք ժամանակակիցների հուշություն է կարդում Հայ միջնադարյան

¹⁰⁸ ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 1732.

¹⁰⁹ Նույն տեղում, ֆ. 54, գ. 1, 2293.

¹¹⁰ «Մշակ», 1895, Խ. 32.

¹¹¹ Նույն տեղում, 1909, Խ. 129.

¹¹² Նույն աեղում, 1912, Խ. 134.

¹¹³ Մ. Մայտոցի անվան մատենագրան, Կ. Սրապյանի ֆոնդ, գ. 266, թ. 82.

¹¹⁴ Ղ. Աղայանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1907, էջ 431—433, 436—447.

արվեստի մասին: Խշպես ունկնդիրներն են նկատել, գիտնականը խոսում էր ոգևորված, ցուցադրում մանրանկարներ, իսկ զահլիճը այդ ամենն ընդունում էր լավ, անգամ հափշտակված¹¹⁵: Մի քանի տարի անց Գ. Հովսեփյանը նորնախիչեանցիների առաջ հանդես է գալիս հայ գիր և գոշության արվեստի ղարդացմանը նվիրված հետաքրքիր զեկուցումով, այն զուգացելով՝ ձեռագրերի, զարդանկարների ցուցադրությամբ¹¹⁶:

Արևմտահայ նշանավոր գրող Զապել Եսայանը 1916 թ. նոր նախիչեանում զեկուցում է կարդում «Արևմտահայ գրականությունը» թեմայով: Նա կանգ է առնում մասնավորապես XX դարի սկզբի գրական նշանավոր դեմքերի և գրական ուղղությունների վերլուծության վրա: Լարանը լավ է ընդունում դասախոսությունը, իսկ Գր. Զալիսուշյանը տեղի հայ հասարակության անունից երախտագիտության խոսք է ուղղում դասախոսին¹¹⁷:

Մշակութային լուսավորական ուղիով Մայր հայրենիքի հետ կենդանի կապեր պահպանելու գործում նշանակալից էր հատկապես թատրոնի դերը: Հայրենի երկրից, մասնավորապես արևելահայ և արևմտահայ նշանավոր կենտրոններ թիֆլիսից և Կոստանդնուպոլիսից թատերական շատ խմբեր էին հյուրախաղերի գալիս հյուսիսային Կովկասի հայշատ բնակավայրերը և նոր նախիչեան: Նրանք տեղի սիրողական ուժեղի հետ հաջողությամբ ներկայացումներ էին կազմակերպում: Ժամանակի նշանավոր կամ ոչ այնքան հայտնի թատերական շրջիկ այդ խըմբերը լավագույն կապող օղակ էին տարբեր երկրամասերի հայկական շրջանների միջև: Դոնի ափերին լավատեղյակ լին և ուշիուղով հետևում էին Մայր հայրենիքում ու հայ իրականության մեջ կատարվող իրադարձություններին և, ըստ արժանվույն, արձագանքում դրանց: Հիշատակենք մեր ասածը հավաստող միայն մի քանի փաստ:

Նշանավոր վիպասան Մուլրացանի մահվան առիթով նոր նախիչեանի հայ համայնքը վշտակցում է, և հանգուցյալի հիշատակը հավերժացնելու նպատակով բարեգործական ընկերությունը որոշում է թեմական դպրոցում վիպասանի անունով թոշակ սահմանել¹¹⁸:

Նշանավոր երգահան Ն. Տիգրանյանի երաժշտական գործունեության 25-ամյակի առթիվ նախիչեանից շնորհավորական հեռագիր է ուղարկում Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Գ. Կամսարականի անունով՝

¹¹⁵ «Մշակ», 1912, № 56.

¹¹⁶ «Գաղութ», 1914, № 7.

¹¹⁷ Նույն տեղում, 1916, № 15.

¹¹⁸ «Արարատ», 1908, № 949.

¹¹⁹ «Գաղութ», 1919, № 19:

Բանաստեղծ Հ. Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյակի առթիվ նոր նախիչեանից հոբելյանական հանձնաժողովի նախագահ Կարա-Մուլրացի անունով ուղարկվում է հետեւյալ հեռագիրը. «Ի սրտե շնորհավորում ենք հոբելյարին՝ երկար տարիների ժողովրդական երգին և արժանավոր մանկավարժին»¹²⁰:

Հոփիսիմյան օրիորդաց դպրոցը կազմակերպում է աշակերտական գրական-երաժշտական պարերեկույթ: Հրավիրված էին դպրոցի, Կոկոյան ուսումնարանի սաները, այլ դպրոցների ուսուցչական խմբեր, հասարակության ներկայացուցիչներ: Երեկոն նվիրված էր հրիմյան Հայրիկի, Պ. Պողյանի և Ս. Շահազիզի հիշատակին: Կատարվել են նշանավոր հայ գործիչների ստեղծագործություններից, հրապարակվել նրանց նվիրված բանաստեղծություններ¹²¹:

Պատկերացում կազմելու համար, թե Դոնի հայությունը որչափ տեղյակ ու նախանձախինքիր էր մայր հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին, գրական-հասարակական կյանքում կատարվող քիչ թի շատ նշանակալից անցքերին, բերենք ևս մեկ փաստ:

Ինչպես հայտնի է, 1911 թ. մայիսին հանդիսավոր պայմաններում նշվեց Ալ. Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյակը, որին մասնակցելու համար հնգամյա բացակայությունից հետո Փարիզից վերադարձել էր հոբելյարը: Հանդիսավոր երեկույթին բազմաթիվ շնորհավորական հեռագրեր են ստացվում նաև Ռուսաստանի գաղթավայրերից՝ նոր նախիչեանից, Եկատերինողարից, Արմավիրից, Ակերմանից, Ստավրոպոլից: Նոր նախիչեանից վիպասանին շերմ բարեմաղթություններ են հղում «Լույս» շաբաթաթերթի խմբգրությունը, դրամատիկական ընկերությունը, վիպասանի տաղանդը՝ հարգող բազմաթիվ քաղաքացիներ¹²²: Դրանցից նախիչեանի բարեգործական ընկերությունը հեռագրում էր «...Համակված հարգանքով ու սիրով դեպի Շիրվանզադեն կազմակերպվում է Շիրվանզադեի համար նրա անունով հաստատում է թոշակ՝ տեղի հոգեւոր դպրոցում»¹²³:

Նույն տարվա նոյեմբերին մի քանի օրով նոր նախիչեան է այցելում Ալ. Շիրվանզադեն, որին հասարակությունն ընդունում է շերմորեն: Նրա պատվին կազմակերպվում է գրական-երաժշտական երեկույթ, հանդիսավոր ճաշկերույթ: Շիրվանզադեի գալստյան առթիվ մի խումբ

¹²⁰ ՀԿՊԱ, ֆ. 55, ց. 1, գ. 291, թ. 97:

¹²¹ «Մեր ձայնը», 1908, № 29:

¹²² «Լույս», 1911, № 19:

¹²³ «Մշակ», 1911, № 107:

մտավորականներ իրենց շրջանում հանգանակություն են կատարում և ստացված գումարով ցանկանում հիմնել վիպասանի անվան գրական ֆոնդ¹²⁴: Շուտով հավաքվում է 200 ո. գումար, որը ի պահ է տրվում եկեղեցական հոգաբարձությանը: Սակայն մեկ տարի անց վերջինս գտնելով, որ նման գումարի պահպանումը կարող է անհամապատասխան դիտվել հոգաբարձության նպատակներին, այդ գումարը նվիրատունների գիտությամբ ուղարկում է Եփրվանզագեին՝ «յուր հայեցողությամբ օգտագործելու համար»¹²⁵: Վիպասանը Դիլիջանից նամակով տեղեկացնում է դրամը ստանալու մասին և շնորհակալություն հայտնում թե՝ հոգաբարձությանը և թե՝ նվիրատուններին¹²⁶:

Հայկական գաղթավայրերը, մանավանդ ոռուահայ օջախները մըշտապես արձագանքում և առավել մեծ ակտիվությամբ մասնակցում էին համազգային բնույթ ունեցող իրադարձություններին: Հայ հոգևոր մշակութային կանքում նման կարևոր իրադարձություն էր հայ գրերի գյուտի 1500 և տպագիր առաջին գրքի 400-ամյա միասնական հորելյանը, որը նշվում էր 1913 թվականին: Տոնակատարության նշանակությամբ ու ներքին իմաստով պայմանավորված, բովանդակ հայությանը համակած ընդհանուր աշխուզն ու ոգևորությունն իր ալիքների մեջ է առնում նաև Դոնի հայ զանգվածը: Նշանավոր հորելյանին անմիջապես արձագանքում է մամուլը, հոդվածներ են հրապարակվում ոչ միայն հայկական այլև ոռուական թերթերում: «Պրիազովսկի կրայ» թերթը «Հայ ժողովրդի մեծ տոնը» ծավալում հոդվածաշարք է տպագրում¹²⁷: Դրանցում լուսաբանվում են հայկական այրութենի ստեղծման հանգամանքներն ու նրա նշանակությունը: Խոսվում է այն մասին, որ հայ ժողովրդը ձևավորվել, պատմական ասպարեզում հանդես է եկել տակավին մ.թ. ա. VIII—VII դարերում և բավական երկար ժամանակ՝ ավելի քան մեկ հազարամյակ շի ունեցել սեփական այրութեն, գիր ու գրականություն: Եվ եթե այդպես շարունակվեր, նա կծովվեր հարեւան որևէ խոշոր, Հայաստանի հետ մշտապես շփող ժողովրդի մեջ և կանհետանար պատմության թատերաբեմից, ինչպես կատարվել է շատ ժողովուրդների հետ: Ապա բացահայտվում է V դ. սկզբին Մ. Մաշտոցի ու Ս. Պարթիկ կողմից գրերի գյուտի նշանակությունը որպես ոչ այնքան լուսավորության, որքան ազգային ինքնագիտակցության, ինքնահաստատման ու

124 ՀԿՊԱ, ֆ. 55, գ. 90:

125 Նույն տեղում, ց. 1, գ. 112, թ. 2:

126 Նույն տեղում, թ. 4:

127 «Приазовский край», 1913, № 114, 267.

ազգապահպանման կարևոր միջոցի: Հոդվածագիրն անդրադառնում է նաև Հայաստանից դուրս, իտալիայի Վենետիկ քաղաքում 400 տարի առաջ հայ առաջին տպագիր գրքի երեսն գալու հարցին:

Համազգային բնույթ ստացած հայ գրերի գյուտի առթիվ նոր նախշեանում կազմակերպված տոնահանդեսին մասնակցում են հասարակության ներկայացուցիչները և քաղաքի ու գյուղերի 21 դպրոցների աշակերտները¹²⁸: Դոնի հայ հասարակության անունից Գր. Զալիսուշյանը Հայաստան հղած հեռագրում նշում է հայոց այրութենի ու տպագրական գործի նշանակությունը հայերին տպիտությունից ու կործանումից փրկելու գործում: Եվ ապա ավելացնում էր, որ իրենք՝ նորնախշեանցիները գլուխ են խոնարհում «մեր սրբի աճյունի առաջ, սրբի, որը մեզ տվեց այրութեն...»¹²⁹:

Հայկական այրութենի և տպագրության հորելյանի առիթով քաղաքի և հայկական գյուղերի բնակչությունը մի պատկառելի գումար՝ 50 հազար ուրբաթ դրամագլուխ է հավաքում և ամբողջությամբ նվիրաբերում մանուկների ուսուցմանը՝ դպրոցական գործին: Գևորգ V կաթողիկոսը նվիրատվության հանձնաժողովի նախագահ Ա. Սալթիկյանի անուվ ուղարկած հատուկ կոնդակով իր գոհումակությունն ու շնորհակալությունն էր հայտնում մանուկների կրթության հարցում Դոնի հայության ցուցաբերած բարձր հոգաբարության համար¹³⁰:

Երբեմն նաև նոր նախշեանում տեղի ունեցող հասարակական-մշակութային երևույթները դուրս էին գալիս գաղութի նեղ շրջանակներից և ձեռք բերում համազգային նշանակություն: Նման իրադարձությունների նշումը նույնպես կարենոր լժակ էր Մայր հայրենիքի ու առհասարակ հայ իրականության հետ ունեցած կապեր պահպանելու հարցում:

Գաղութի հասարակական կյանքում տեղի ունեցած այդպիսի հիշարժան անցերից էր Ռ. Պատկանյանի մահարձանի բացումը:

Դոնի հայությունը վճռում է Հուշարձաններ կանգնեցնել Ս. Խաչ վանքի բակում թաղված իրենց մեծ հայրենակիցներ Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի շիրիմներին: Նորնախշեանցիների նվիրատվության միջոցներով պատվիրվում է քանդակագործ Ա. Տեր-Մարտուրյանին, պատրաստել նրանց կիսանդրիները: 1901 թ. սեպտեմբերին նշվում է Ռ. Պատկանյանի, իսկ հաշորդ տարի նախատեսվում էր կատարել Մ. Նալբանդյանի հուշարձանի բացումը:

128 ՀԿՊԱ, ֆ. 54, գ. 2471, թ. 6—9:

129 Գր. Զալիսուշյան, Մաքեր, իոհեր, գեմքեր, էջ 145:

130 ՀԿՊԱ, ֆ. 55, ց. 1, գ. 141, թ. 1:

Ռ. Պատկանյանի հուշարձանի բացման հանդեսին մասնակցող Հոծ բազմության առաջ հանդես գալով, հանձնաժողովի նախագահ Գր. Զալիսուշյանը հայտարարում է, որ հնարավոր շեղավ բանաստեղծի վերջին ցանկությունը կատարել՝ նրան թաղել էջմիածնում, սակայն միիթարական է այն, որ Ս. Խաչ վանքն էլ փաստորեն էջմիածնի մի մասնիկն է:

Մոսկվայի համայնքի պատգամավոր Ալ. Շատուրյանը հրապարակում է մայրաքաղաքի հայ ուսանողության սրտառու ու գեղեղիկ ուղերձը, ապա ընթերցում այդ առիթով գրած իր «Ուր ես հայ բլուզ» բանաստեղծությունը: Հանդես են գալիս նաև բազմաթիվ այլ գործիչներ, որոնք դրվատում և արժեքավորում են Ռ. Պատկանյանի երախտիքը հայ գրականության ու մշակույթի մարզում, հայ հասարակական կյանքում:

Հրապարակվում են հեռագրեր «Մշակ», «Լումա», «Մուրճ» թերթերի խմբագրություններից, ուսւահայ համայնքներից, Բաքվից, Ղարաբաղից, Կարսից, Ազստաֆայից, էջմիածնի հոգնոր ճեմարանի, Ներսիսյան դպրոցի, Շուշու, Թետերուրգի և այլ վայրերի ուսուցչական կողեկտիվներից և աշակերտություններից: Ռ. Պատկանյանի վաստակը դրվատող չերմ հեռագրեր էին ստացվել նաև նշանավոր գրողներ Գ. Սունդուկյանից, Պ. Պողյանից, Ս. Շահազիզից, և Գ. Հովսեփյանից, Գ. Դոդոյյանից, Գ. Բարիտյանից և ուրիշներից¹³¹:

131 Գր. Զալիսուշյան, Մտքեր, խոհեր, գեմքեր, էջ 66—71. Գ. Սունդուկյանի հեռագրում ասված էր. «Թանգագին Ծափայել քեզ հարդողների ձեռքով բարձրացված է ձեռագործ հուշարձան, սակայն հավերժ է քո ստեղծագործությամբ ստեղծած քո հուշարձանը՝ մեր և ամբողջ հետագա սերունդների սրտերում»: Պ. Պողյանը գրում էր. «Թողարքը մահարձանը ապագա սերնդի սրորդ խորքում հավերժացնի անմահ անունը մեծ բանաստեղծի»: «Մուրճին խմբագրությունը ողջունում էր «հայ ազգի վշտերի և տառապանքների աշուղի» Ռ. Պատկանյանի մահարձանի բացման առթիվ»: (Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, ֆ. 137, վ. 1378, 1377, 1375):

Հ. Թումանյանը նամակով հայտնում է Գր. Զալիսուշյանին, որ նոր նախիչևնից իրեն հասցեագրված նամակը «Տարազի» խմբագրությունում երկար ժամանակ ընկած է եղել և այդ պատճառով ինքն ուշացումով է իմացել Ռ. Պատկանյանի մահարձանը բացելու մասին: Մեծ գրողը օգտագործելով Պատկանյանի հոռեւսական մի քայլակը, իր կարծիքն է հայտնել նրա ստեղծագործությունների մասին:

Ռ. Պատկանյանը գրել է.

«Բայց այս, իր որ անցնի ամիս ու տարի,
Կմամուտի գերեզմանը իմ քարի...
Հետքը անգամ չի մնալու իմ խաչին,
Իմ անոնցը, իմ հիշատակ կիորչին:

Հ. Թումանյանը վերափոխում է այսպիս:

«Կըգան կանցնեն շատ շատ ամիս ու տարի,

Ռ. Պատկանյանի հուշարձանի բացումը փաստորեն ընդունում է հայկական մշակույթի համազգային յուրօրինակ հանդեսի բնույթի: Նոր նախիչևնի հայ հասարակությունը տարբեր թելերով կապված էր նաև հայկական գաղթավայրերի հետ:

Անշուշտ, այդ կապերը ժամանակի ընթացքում փոփոխվում, նոր երանգ էին սահանում, սակայն էականն այն է, որ միշտ էլ պահպանվում էին փոխադարձ շփումները: Դոնի հայկական գաղութը հնդկահայ օջախների հետ չուներ նախկին այն աշխույժ փոխարաբերությունները, որպիսիք գոյություն ունեին XVIII դ. վերջերին և իրականանում էին Հ. Արդությանի ու Շահամիրյանների միջոցով: Թուլացել էին Կոստանդնուպոլիսի հայության հետ ունեցած կապերը, դրանց փոխարեն, սակայն, ավելի քան սերտ ու արգասավոր էին դարձել շփումները ուսւահայ համայնքների հետ: Այս դեպքում նոր նախիչևնը հաճախ էր գալիս առաջատարի դերում:

1866 թ. Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունների համար նոր նախիչևնում պատգամավոր է ընտրվում զաղութի նշանավոր գործիւ, վաճառական Կ. Հայրապետյանը: Տեղեկանալով այդ մասին, նախիչևնի քաղաքագլխին գրավոր դիմում են հղում և Կ. Հայրապետյանին իրենց պատգամավոր են ճանաշում նաև Թետերուրգի, Սիմֆերոպոլի, Հրիմիմի, Ղարասուբարաբարի, Եվպատոպի հայկական համայնքները¹³²: Շուտով նրանց են միանում Քիշինեվի, Հնչեշտի, Օդեսայի հայ հասարակությունները¹³³: Նոր նախիչևնի պատգամավորը, նշելով կաթողիկոսի ընտրության կարևորությունը, դիմում է Պետերբուրգի և մյուս քաղաքների հայ հասարակություններին և խնդրում հայտնել իրենց միտումները կաթողիկոս ընտրելու համար առաջադրված թեկնածուների հարցում¹³⁴:

Աշխույժ երթևեկ գոյություն ուներ ուսւահայ գաղթավայրերի միջև, իսկ նոր նախիչևնում հրատարակվող պարբերական մամուլի էջերում մշտապես արտացոլվում էր նրանց հատկապես հասարակական ու մշակութային կյանքը:

Ձի մամուլի գերեզմանը այդ քարի,
Եվ տանջալի նորա խաչը սրբազն
նորա անոն՝ միշտ կմնան անսասան»

(Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1945, էջ 193—194):

132 ՀԿՊԴԱ, ֆ. 139, գ. 1702, թ. 50:

133 Նույն տեղում, գ. 1711, թ. 4:

134 Նույն տեղում, գ. 1702, թ. 52:

1890 թ. նշվում էր Հաղարյան ճեմարանի հիմնադրման 75-ամյակը, նոր նախիջևանը զերմորեն արձագանքում է այդ հոբելյանին: Քաղաքացին խորհրդարանը հատուկ անդրադառնում է այդ հարցին, նշում, որ ճեմարանը նշանակալից դեռ է կատարել նոր նախիջևանի կյանքում, որ ճեմարանավարտ երիտասարդները օգտակար գործունենություն են ծավալել գաղութում: Լաղարյան ճեմարանի նախիջևանը սաներ, դումայի ձայնավորներ Գ. Զարիխովին և Գր. Զալխուշյանին քաղաքային խորհրդարանը գործուղում է Մոսկվա՝ մասնակցելու հոբելյանական հանդեսին: Ճեմարանի տասնութ նախիջևանը սաներ ողջույնի ուղերձ են ուղարկում¹³⁵:

Դունի հայկական գաղութի կապերը Մայր Հայրենիքի և հայկական օջախների հետ չեն պարփակվում սոսկ հոգեոր, լուսավորական շփումների շրջանակներում, այլ շատ հաճախ գործնական օգնության բնույթ էին ընդունում: Մեր ասածն առարկայական դարձնելու նպատակով բարձրիկ փաստերից հիշատակենք միայն մեկը:

Նոր նախիջևանում, իմանալով, որ միջոցների պակասի հետեւաքավով է էջմիածնի ճեմարանի կառուցումը, քաղաքագումը Գ. Խոչայականի նախագահությամբ քաղաքային խորհրդարանի ժողովը է հրավիրվում, ուր որոշվում է 1500 ռ. նվիրել ճեմարանի կառուցմանը¹³⁶:

Ճեմարանի վերաշինությունը ավարտելու և նրա հաջող գործունեությունը ապահովելու համար նոր նախիջևանն այս անգամ նվիրաբերում է 1200 ռ., Զալիք գյուղը՝ 150, Մեծ Սալան՝ 100, Փոքր Սալան՝ 25 ոուրի: Այդ գումարով ճեմարանի սաների համար գնվում են մահճակալներ, անկողին և այլն¹³⁷:

Առանձին քաղաքացիներից Խ. Բախչիսարայցերը ճեմարանին նվիրում է 1500 ռ., Ս. Քուշնարյանը՝ 200 ոուրի, իսկ Մայր աթոռի տպարանի կարիքների համար ևս 200 ոուրի գումար¹³⁸: Այդ նույն նպատակով, համանման ձևով նվիրաբերություններ են կատարում Աստրախանից, Ղվարից, Մոզդոկից, Պյատիգորսկից, Ստավրոպոլից, Գեորգիևսկից, Քիշինեվում և ոուսահայ այլ համայնքներից¹³⁹:

Ավելի ակնառու է եղել Հայրենակիցների օգտին ոուսահայ համայնքների կազմակերպած նյութական աջակցությունը: Անհրաժեշտ դեպքերում Մայր Հայրենիքից հաճախ էին դիմում տնտեսական կայում հիմ-

135 Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Լաղարյանների արխիվ, թղթ. 120, գ. 117, է. 187, 188:

136 «Արարատ», 1873, է. 109:

137 նույն տեղում, է. 346:

138 նույն տեղում, 1876, է. 114, 1873, է. 109:

139 նույն տեղում, է. 273—275:

քեր ունեցող, նյութական ապահով վիճակում գտնվող Ռուսաստանի հայկական գաղութների աջակցությանը, որը վերջիններիս մոտ լայն արձագանք էր գտնում և սրտացավ վերաբերմունքի արժանանում:

Նոր նախիջևանի հայ հասարակությունը մեծ շափերով ու պարբերաբար նյութական աջակցություն է կազմակերպել սովոր, պատերազմների, հրդեհի, երկրաշարժի կամ բնական այլ աղետների հետևանքով անմիջաբար զրության մեջ ընկած, անտուն ու անօթևան մնացած աղքակիցներին: Հնարավոր չէ և ոչ էլ անհրաժեշտ հաջորդաբար մեջ բերել Դոնի հայության հայրենասիրական պատրաստակամ վերաբերմունքը հատկանշող բոլոր փաստերը: Պատկերացում կազմելու համար հիշատակենք դրանցից միայն մի քանիսը:

1872 թ. Պարսկաստանում սկսված սովի և Շամախիում երկրաշարժի հետևանքով տուժած հայերին դրամական օգնություն են կազմակերպում նոր նախիջևանը և հայկական բոլոր գյուղերը¹⁴⁰:

1877 թ. ոուս-թուրքական պատերազմի ժամանակ Բագրեանդ գավառից և Բայազետ քաղաքած գաղթած, իսկ 1888 թ. Զեյթունի հրդեհից տուժած և դժվար կացության մեջ ընկած հայ բնակչությանը Դոնի հայկական գաղութը օգնում է դրամով և հացահատիկով¹⁴¹:

Ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին հայ-թաթարական կոտորածների և սովի հետևանքով ծանր վիճակի մեջ են ընկնում Անդրկովկասի հայության զգալի զանգվածներ: Նրանց օգնություն կազմակերպելու նպատակով Ռուսաստանի հայկական գաղութներն է մեկնում հատուկ հանձնաժողով:

Վերջինս նոր նախիջևանի բազմամարդ ժողովին բացատրում է զրության լրջության և ձեռնարկվող միջոցառումների մասին: Նախիջևանի քաղաքագլխի ղեկավարությամբ ստեղծվում է տեղական հանձնաժողով, որի մեջ մտնում են նաև Ռուսություն բնակվող հայերի ներկայացուցիչները¹⁴²: Շուտով ժողովվում է 4375 ռ. գումար, մեծաքանակ հագուստեղեն և առաքվում Թիֆլիս՝ կենտրոնական հանձնաժողովին: Միայն Մեծ Սալա գյուղը նվիրաբերում է 1323 ռ. և 739 կտոր հագուստ¹⁴³:

140 ՀԿՊԱ, գ. 54, թ. 1260, 1272:

141 Նույն տեղում, գ. 1462, 1887: Այդ նույն ժամանակ մեծաքանակ նվիրաբերություններ են կատարում նաև առանձին քաղաքացիներ: Աննա Ալաշլյանն, օրինակ, 3600-ական ոուրի է նվիրում քարեգործական և մարդասիրական ընկերություններին, 1200 ռ. հոգեոր տարբեր հաստատությունների, այդ թվում և նրուսաղեմի Ս. Հակոբ և Ս. Կարապետ վանքերին («Արարատ» 1877, է. 432—433):

142 «Պրիզօվսկի կող», 1907, № 41.

143 ՀԿՊԱ, գ. 54, թ. 1829, թ. 72, 91:

Ռուսահայ գաղութներում, այդ թվում և Նախիջևանում ամեն մի գյուղ ուներ յուր հասարակական շտեմարանը, որտեղից սովի և աղետների ժամանակ օգտվում էին բնակիչները։ Հայաստանի գյուղերում չկային նման շտեմարաններ, և սովի ժամանակ ծանր իրավիճակ էր ստեղծվում։ Գաղութի ճանաշված գործիչներից և. Փորքշեյանը համաշխարհային պատերազմի նախօրյակին քաղաքի և գյուղերի բնակիչներին կոչ էր անում ամեն կերպ օգնել Երևանի նահանգում սովի մատնված գյուղացիներին։ Նա միաժամանակ առաջարկում էր որոշակի գումար ժողովել և ուղարկել Հայաստան՝ գյուղերում հասարակական շտեմարաններ հիմնելու համար¹⁴⁴։

Ինչպես կտեսնենք հետագյում, մեծ եղենի հետևանքով Կովկաս գաղթած ու այնտեղ հանգրվանած արևմտահայությանն աջակցելու հարցում նախիջևանցիների հայրենասիրական ծգտումներն անհամեմատ ավելի մեծ շափեր ընդունեցին։ Պատահական չէր, որ տակավին պատերազմի նախօրյակին Թուրքիայի տիրապետության տակ ապրող հայերին օգնելու նպատակով նոր Նախիջևանում առաջ էր քաշվում «Հայկական աղքային բանկ» ստեղծելու գաղափարը¹⁴⁵։ Նոր Նախիջևանի գաղութը բարեգործական հաստատություններով և այդ նպատակով կատարվող ձեռնարկումների մեջ այն աստիճան աշքի էր ընկնում, որ այդ մասին գրվում էր անգամ կենտրոնական թերթերում։ Նշանավոր մտավորական և թատերական գործիշ Ա. Աբելյանը նորնախիջևանցիների բարեգործական, աղքանվեր գործունեությունը բարձր էր դասում հայկական մյուս կենտրոններից, անգամ Բաքվից և Թիֆլիսից։ «Ի պատիվ Նախիջևանցի գյուղացիների և քաղաքացիների, — գրում էր նա «Մշակի» էջերում, — Հարկ եմ համարում հրապարակով արձանագրել, որ ես նրանց կողմից միշտ հանդիպել եմ զարմանալի շերս և սրտակից վերաբերունքի։ Մեր ոչ մի քաղաք չի կարող պարծենալ նոր Նախիջևանի առաջ իր այնքան շատ աստվածահամ հիմնարկություններով, որոնցով այնքան առատ է նոր Նախիջևանը և սրանց պահպանությունն ընկած է նորնախիջևանցիների ուսերի վրա, որը կատարում է անտրունչ, ամեն տարի հոժարակամ հարկ ու տուրք վճարելով»¹⁴⁶։

144 «Գաղութ», 1914, № 16.

145 «Պրազովսկի քույ», 1914, № 42.

146 «Մշակ» 1915, № 187.

3. ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳԱՂՈՒԹԸ ԵՎ ԱՐԵՎՄԱՆ ԱՅԱՍՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Դռնի Հայկական գաղութը հատկապես XIX դարի կեսերից սկսած կուլտուր-լուսավորական իր հաստատություններով, հայկական պարբերականներով ու այլ հրատարակություններով, ապրում էր հասարակական-քաղաքական և մշակութային հասուն կյանքով։ Հայ համայնքն ուներ կրթված ու առաջադեմ մտավորականություն, որը մեծ ազդեցություն ուներ և ուղղություն էր տալիս ոչ միայն տեղի հայ զանգվածի գործունեությանը, այլև հասու էր բարձրացնելու ավելի լայն ու մեծ խնդիրներ։ Նոր Նախիջևանը դարձել էր ազգային կյանքով ապրող հայկական կարևոր մի կենտրոն։ Այնտեղ, բնականաբար, նախանձախնդիր էին և իրենց վերաբերմունքն էին դրսերում մանավանդ հայ ժողովրդի համար առանցքային նշանակություն ունեցող հարցերում։ Կենսական նշանակություն ունեցող նման պրոբլեմներից էր, առաջին հերթին, հայ ժողովրդի արևմտահայ հատվածը թուրքական դժնդակ տիրապետությունից ազատագրելու խնդիրը։ Արևմտահայության պատմական ճակատագրում կոնի հայկական զանգվածի դրսերած նկատելի ակտիվությունն ուներ իր օբյեկտիվ հիմքերը։

Այդ հանգամանքն ավելի քան հասկանալի է դառնում, եթե թուոցիկ հայացք ենք գցում նախընթաց դարերի հայ ժողովրդի պատմական անցքերի վրա։ Ինչպես հայտնի է XVI—XVIII դդ. թուրք-պարսկական երկարատև պատերազմների ու ապա Արևմտյան Հայաստանը օսմանյան թուրքիայի, իսկ Արևելյան Հայաստանը սեֆյան Պարսկաստանի տիրապետության տակ անցնելու հետևանքով հայ ժողովուրդն ընկալ ծանր ու անտառելի գրության մեջ։ Ազգային, կոռոնական հալածանքները, սոցիալական ճնշումները, միջնադարյան մոլեռանդությամբ կատարվող ֆեոդալական ներքին խժդություններն ու թալանը, որոնք հատուկ էին արևմայան երկու այդ բնաստիրություններին, հայ ժողովրդին կանգնեցրել էին ձուլման ու ֆիզիկական ոչնչացման վտանգի առաջ։

Հայ առաջադեմ գործիշները, հայ հասարակական, պահատագրական միտքը համառորեն ելք էին որոնում ստեղծված իրավիճակից դուրս գալու համար։ Բնականաբար, առաջին հերթին դիմում են դեռևս խաչակրած արշավանքներից Հայերին ծանոթ եվրոպական պետություններին։ Բազում փորձեր կատարելուց ու երկարատև դեգերումներից հուսախար լինելով և համոզվելով, որ անհնարին է եվրոպայից ունալ օգնություն ստանալ, հայ աղատագրական միտքն իր հայացքն ուղղում է դեպի հյուսակային հզորացող հարևանի՝ Ռուսաստանի կողմը։ Պատմական մի

շարք պայմանների բերումով Ռուսաստանն էր միակ այն ուժը, որը կարող էր ռեալ օգնություն ցույց տալ Հայ ժողովրդին:

Ահա Հայո-ուստական Հարաբերությունների աշխուժացման ու արագնդման կամ ուրիշ խոսքով ասած, ուստական կողմնորոշման ձևավորման շրջանում, օգտվելով պետության հովանավորող քաղաքականությունից Խուսաստանում ապաստան գտան և իրենց համայնքներուտեղծեցին Հայկական զանգվածները։ Այդ եղանակով XVI—XVIII դարերում Հիմնադրվեցին Աստրախանի, Մոսկվայի, Պետերբուրգի, Ղղլարի, Մոգոկի, Գրիգորիոպոլի, նոր Նախիչևանի գաղութները։ Նրանք ստացաւում էին զավանանքի ազատություն, ազգային սովորություններով պարագան և սորմերով առաջնորդվելու արտօնություն, այլև տնտեսական նշանակալից առանձնաշնորհումներ։ Պետության ընձեռած բարենպատճենական պայմանների շնորհիվ Հայկական գաղութներն ամրապնդվեցին, սկսեցին առաջադիմել ու ապրել բարգոր կյանքով։

XVIII դարի վերջին քառորդում Դոնի ափերին հոծ զանգվածով Նոսի ախտիշևան քաղաքի և շրջակա Հայկական գյուղերի հիմնադրումը ժամանակիցների վրա մեծ տպավորություն գործեց: Նոր Նախիշևանու հայկական ինքնուրույն կանքը վերականգնելու, Դոնի հայկական գաղութը հայկական կարենոր կենտրոն դարձնելու պատրանք ու մտայնություն ստեղծվեց: Դա էր պատճառը, որ Հայ հասարակական մտքի և հասարակական-քաղաքական շարժման ավանդարդում ընթացող հնդկանաշրջանները կապեր հաստատեցին ու այդ նպատակով նորահաստատ գաղութին մեծագումար նվիրատվություններ կատարեցին:

Ծուսաստանի հայկական գաղթօջախները և, առաջին հերթին, Նոնախիցնանի հայությունը սեփական փորձով համոզվում էր, թե թուրք պարսկական դաժան տիրապետության համեմատությամբ ազգային տնտեսական որշափ բարվոր վիճակում են ոռուսահայերը: Եվ, միանգամայն, բնական ու հասկանալի է, որ նրանք իրենց հայրենակիցների փղոկության ելքը տեսնում էին ոռուսական հովանավորության տակ անցնելու մեջ: Ամենակին պատահածական չէր, որ Արևելյան Հայաստանը Ռուսականին միանալու պատմական ակտը հայկական մյուս կենտրոնների հետ միասին շերմորեն ընդունել էին նաև նորնախիչեանցիները: Նրանք սրտե շնորհավորեցին հայրենակիցներին և «...Լեռանցն Արարատագորս փրկեցեալ ի ներքուստ ձեռաց բարբարոսաց»^{147:}

147 *Մաշտոցի անվան մատենադարան, Կաթողիկոսական գիվան, թ. 55, գ. 78:*

Խնչես հայտնի է, Արևելյան Հայաստանն ազատագրվելու ժամանակ արևմտահայությունը չկարողացավ թոթափել թուրքական լուծը՝ եվրոպական պետությունների միջամտության հետևանքով¹⁴⁸:

XIX դարի կեսերից սկսած հայ ժողովրդի արևմտյան հատվածի գծվարին կացությունն իր վրա էր գամում հայ հասարակական ու ազատագրական միտքը:

Նոր Նախիչևնում հետեւում էին Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում կատարվող կարեւոր իրադարձություններին և ամեն կերպ շահում նպաստել հարազատ ժողովրդի ազատագրման գործին։ Դոնի հայության նախանձախնդիր վերաբերմունքը, վերը նշած հանգամանքներից զատ, բացատրվում էր նաև հասարակական այն մթնոլորտով, որն սկզբնավորվել էր Մ. Նալբանդյանի ժամանակ և մեծ թափ ու տարածում էր ստացել հետագայում Ռ. Պատկանյանի ու նրա հետեւորդների շնորհիվ։ 1870—1880-ական թվականներին արևմտահայության ազատագրման մեջ շատագով Ռ. Պատկանյանը ուշի-ուշով հետեւում էր այնտեղ կատարվող անցքերին, մասնավորապես հույսով սպասում ուսւա-թուրքական պատերազմի հետևանքով ստեղծված իրադարձություններին, դրա մեջ անսնելով հայրենակիցների ազատագրման ռեալ ուղին։ Ազատագրության համար պայքարի կոչող հայրենասիրական շնչով գրված նրա գործերը լայն արձագանք էին գտնում հայկական շրջաններում, հատկապես երիտասարդության մեջ։

Թ. Պատկանյանի ազատագրական գաղափարների, նրա ստեղծագործությունների ազդեցությունը մեծ էր առաջին հերթին իր հայրենակիցների՝ Դոնի հայության վրա։ Նոր նախիչևանի հասարակական կյանքի մտավոր-քաղաքական մակարդակը պարարտ հող էր ստեղծում է։ Պատկանյանի գաղափարների տարածման համար Այդ ամենի շնորհիվ Դոնի հայկական գաղութը հետեւղականորեն և ակտիվ կերպով իր վերաբերմունքն է ղրանորել արևմտահայության պատմական ճակատագրում։

Բալկաններում 1875—1876 թթ. թուրքական տիրապետության դեմ սլավոնական ժողովուրդների ապստամբությունը ոգևորության աղբյուր է դառնում և ազատագրական մեծ հույսեր է արթնացնում Ռ. Պատկանյանի մեջ։ Նա գտնում էր, որ Հարմար ժամանակն է Հայաստանի ու Հայ ժողովրդի մասին, նրա կորցրած անկախության և իր իրավունքները վերականգնելու վերաբերյալ գրել, հասարակական բնդհանուր կարծիք

148 А. Р. Иоаннисян. Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия. Ереван, 1958.

ստեղծել, Ռուսաստանի և Եվրոպական պետությունների ուշադրությունը հրավիրել այդ խնդրի վրա:

Իմանալով, որ Պետերբուրգում Կ. Եղյանը, Ք. Պատկանյանը, Փ. Վարդանյանը ձեռնարկել են «Լուսա» ամսագիր հրատարակելու գործը, գրության պատմվածքներ ու բանաստեղծություններ՝ այնտեղ տպագրելու համար։ Սակայն տեսնելով, որ ձգձգվում է ամսագրի հրատարակության թույլտվությունը, Ը. Պատկանյանը պատերազմի ժամանակ և դրանից հետո «Փորձ» ամսագրում և ապա «Ազատ երգեր» ժողովածուում հրատարակում է «Վանեցու աղոթքը», «Վանեցի մոր երգը», «Վանեցի կտրիճը», «Հայի արյունը», «Թալանված գեղը», «Հազարեն մեկը» և այլ մարտաշունչ բանաստեղծություններ¹⁴⁹:

Նա այդ տարիների իր շափածու գործերում ու պատմվածքներում հորդորում էր լուել, խսուել հայի իրավունքների ու պահանջների մասին: Նա հայ փողատերերից ու գործիչներից պահանջում էր բոլոր միջոցներն ու ուժերը ներդնել հայրենիքի փրկության գործին, իսկ արևմտահայերին կոչ էր անում զենքի միջոցով ձեռք բերել բաղձակի ազատությունը: «Վանեցի գեղջուկի տաղը», բանաստեղծության մեջ սովորական դարավոր լուժը թոթափելու համար զենքի դիմելու ուղղակի կոչ էր անում:

¹⁵⁰ «Եղբայրք Հայեր, առե՞ք խոփը, տվե՞ք դարբնին Կոկու Կռե-կռիկել սուս ու սուսէց Հայաստանը մեռել»:

Հայ ժողովրդի տառապանքի ու վշտերի, նրա բողոքի ու ցաման, նրա մարտական ոգին կոփելու, նրան համաժողովրդական ապստամբության կոչող Ռ. Պատկանյանի ուազմաշումը բանաստեղծություններն ու պատմվածքները ձեռքից ձեռք էին անցնում, արևմտահայության ազատագրության ընդհանուր միջնորդու ու ակնկալություններ ստեղծում:

Ոուսահայ համայնքները Արևելյան Հայաստանի օրինակով ոուսական գենքի հաղթանակի մեջ էին տեսնում արևմտահայության ազատագրության երաշխիքը։ Նրանք շանում էին իրենց բաժինն ունենալ հայ ծողովրդի համար կենսական նշանակություն ունեցող ոուս-թուրքական պատերազմի հաղթանակի մեջ։

1877—1878 թթ. ուսու-թուղթական պատերազմի հենց սկզբում Նոր և ախիշևանում նախկին պատերազմների ժամանակվա փորձով, ստեղծվում է հատուկ հանձնաժողով վիրավորներին խնամելու, նրանց օգտին կատարվող նվիրատվությունների գործը գլխավորելու համար: Միաժամանակ, գյուղերի ու քաղաքի բնակչությունը և համապատասխան ռառե-

գրծական հաստատությունները սկսում են նվիրատվություններ կատարուել¹⁵¹։

Ըուսաստանի հայկական զանգվածների մտորումներն ու ձգտումները լավագույնս արտահայտվել են կաթողիկոս Գևորգ IV-ին ուղած Փլատիփորսկի հայ Հասարակության դիմում-խնդրագրում։ Յոթանասունհինգ մարդու ստորագրությամբ կազմված այդ վավերագրում նրանք նշում էին, որ այլև չեն կարող համբերել ու լռելյայն տանել ստեղծված վիճակը։ Իրենք խաղաղ ու ապահով պայմաններում են, իսկ իրենց ազգակից Նորայրները թուրքական տիրապետության տակ թշվառ ու իրավագուրք վիճակում։ Ապա խնդրում էին կաթողիկոսին գործադրել բոլոր միջոցները արևմտահայերի հարցը սլավոնների օրինակով լուծելու համար¹⁵²։

Ինչպես պատմում են ժամանակակիցները, պատերազմի տարիներին մեծ ապրումներ ու սպասումներ ունեցող Ռ. Պատկանյանը թերթելով մամուլը տխուր նկատում էր, որ հայերի ապստամբության մասին

151 2499U, §. 54, g. 1, q. 1439, p. 3

¹⁵² *U. U. աշտոցի անվան մատենագրան կաթ. դիվան թ. 230, կ. 331, թ. 172—173.*

«Ֆերգ վեհափառություն, — գրում էին նրանք, —ով ունի ուղղակի իրավունք և պարտավորություն խնամակալ լինելու թուրքահպատակ Հայերին և Հոգալու նոցա ապագա բարօրության մասին եթե ոչ Հայոց Ազգի մի մասը և Նորա Մայր Աթոռը, որոնք գտնը-ջում են Խուսաց Հզոր Հովանավորության ներքո և միջոցներ և ազատություն ունեն իրենց պարտքը կատարելու Այնինչ մենք խաղաղության, արդարության և իրավանց ապահովության պատուիները այստեղ վայելում ենք՝ մեր Համարյուն հարազատ եղբայրները տաճկական բռնակալության ամոթալի և սարսափելի լծի տակ հեծում են, նույ-նիսկ այս բռնիքս, երբ ազատարար սորդը արդեն գործում է ու վճռում բազմադարյան կնճռոտ խնդիրը, մեր թշվան եղբայրների դրությունը, ինչպես տեղեկանում ենք լրա-գիրներից, մասնավոր նամակներից ու լուրերից առավել վատթարացել է: Դարձյալ ան-մեղ զո՞ներ, դարձյալ անգութ սրախողող կոտորածներ, դարձյալ ավարառությունք... Հայոց դրությունը առաջանից վատթար է այժմ և պիտի առավել ևս վատթարանա, եթե ներկա պատերազմից հետո նորա միկնույն պայմանների մեջ մնան Թուրքիայում, որը կարող է նոցա համար և մահ և կեանք ծնանել:

Արդ, մեր սիրտը պլուս կարող չէ համբերել, մեր եղայրների դառն հառաջանքը, անմեղ արյունահեղությանց գոշումները և անպաշտան զրկեալների բողոքը լսում է մեր նոգին, լսում է անդադար և տանջվում: Մենք ուսահայերս այլևս չենք կարող մեր եղայրներին թուրքի հպատակության մեջ թողնել միենույն պայմաններով: Ուստի և մենք ներքո ստորագրեալներս մեր հասարակության ամենայն սեփ և հասակի կողմից գիմելով Զեզ ամենախեռնարհաբար խնդրում և աղաշում ենք փութով հոգալ և Ռուսահայոց և Սայր Աթոռի կողմից ամենայն կարիքի եղած խնդրվածներով թափանձել Նորին Սեծությանը և նորա միջնորդությամբ ելքոպական պետություններին, որպեսզի ներկա պատերազմներից հետո թուրքահպատակ հայոց վիճակը ևս անպատճառ ի նկատի առնվի և նոյս ևս իրավունք և ազգատություն շնորհվեն ինչպես Սլավներին»:

14 օգոստոսի 1877 ամի

149 U. Սարգսին. Համայնքական Պատկանելութեան հետաք. 1980 թ. 372-384

150 Ռ. Պատկենյան. Եղիսաբետավոր Տ. 1. Խելակ. 1963. էջ 113.

սշինչ շկա, որ նրանք զենք չունեն¹⁵³: Իմանալով թեղինի վեհաժողովի, եվրոպական զորեղ պետովիյունների դիվանագիտական խաղերի ու խարեւովյան, հայերի օրինական պահանջները անտեսելու մասին Պատկանյանը գրում է «Եւ-րդ Հոդված», «Վեհաժողով» բանաստեղծությունները նա զայրովիթով դատապարտում է մեծ տերությունների վարքագիծը.

«Մեր Հոգու վիշտը, մեր բոթն ու սուզը
Աղեխարշ աշաց մեր արտասուզը
Ոչ ոք շտեսավ, ոչ ոք լրզգաց
Լուսավոր Եվրոպա կույր ու խուլ մնաց¹⁵⁴:

Հայրենասեր բանաստեղծը միաժամանակ ցասումով մեղադրում էր հայազգի հարուստներին, որոնք ստեղծված բարեհաջող պայմաններում շմիավորեցին իրենց ուժերն ու միջոցներն՝ ազգային խնդիրներ լուծելու համար:

Ուսահայ գաղութներն, այդ թվում և նոր նախիջևանը թեղինի կոնգրեսին հաջորդող ընդհանուր հիասթափության պայմաններում և հետագա տասնամյակներում ևս կապված մնացին արևմտահայության, նրա պատմական ճակատագիրը բարենպաստ եղանակով տնօրինելու գաղափարին:

Արևմտահայությունը թուրքական լծից ազատագրելու ուսահայ շրջանները համակած ընդհանուր շարժման մեջ XIX դ. վերջերին ակտիվ էր հատկապես մայրաքաղաքների ուսանող երիտասարդությունը:

1880-ական թվականներին Մոսկվայի հայ ուսանողներն արևմտահայության օգնելու նպատակով առանձին կազմակերպություն հիմնեցին:

1887 թ. Պետերբուրգի հայ ուսանողները հրատարակական գործունեություն ծավալեցին: Նրանք հայերեն լեզվով 3000-ական տպաքանակով հրատարակում են «Ժաննա դը Արկ» աշխատությունը և մի քանի այլ գրքեր, որոնք բոլորն էլ նվիրված էին թուրքական դաժան տիրապետության դեմ բոլղար և ուրիշ ժողովուրդների ազատագրական պայքարին¹⁵⁵:

Արևելահայ շրջաններում հետագա տարիներին ևս շարունակում էին փայփախել ուսական զենքի օգնությամբ Արևմտյան Հայաստանն ազատագրելու և արևելահայերի օրինակով նրա ճակատագիրը տնօրինե-

153 Թ. Թերերյան, Գամառ Քաթիպա («Հայրենիք», 1932, № 7, էջ 128—133):

154 Թ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 154:

155 ЦГИА СССР, ф. 777, ст. 4, գ. 1887, դ. 45.

լու հուշը: Հատկանշական է, որ այդ գաղափարը համակել էր նաև Դնի հայկական գյուղերի բնակչությանը: «Նոր դար» թերթի 1889 թ. համարներից մեկում զետեղված հոդվածում թղթակիցը անդրադառնալով թոփի գյուղի բնակչության զբաղմունքներին, դպրոցի վիճակին և հիմնականում նկատի առնելով Արևմտյան Հայաստանը, թղթակցությունն ավարտում է հետևյալ խոսքերով. «Գյուղացիները սիրով լսում են լրագրի հաղորդած տեղեկությունները և հեռավոր հայրենիքից լուրերը շատ հետաքրքրում են նրանց»¹⁵⁶:

Թղթագրիայում 1895—1896 թթ. սկսված հայկական ջարդերի հետեւ վանքով արևմտահայերի համար ծանր իրավիճակ է ստեղծվում: Կոստանդնուպոլիսի պատրիարք Մ. Օրմանյանը որբերին օգնություն կազմակերպելու նպատակով դիմում է հայկական կարենոր կենտրոնների բնակչությանը: Խուսահայ համայնքներից օգնություն ստանալու ակնկալությամբ նա նամակներով դիմում է Ս. Շահազիդին: Մոսկվայի, Պետերբուրգի, նոր նախիջևանի և ուսահայ մյուս համայնքները շերմորեն արձագանքում են այդ կոչին:

Ինչպես երեսում է Մ. Օրմանյանի նամակներից, ուսահայ գաղթավայրերից ստացված միջոցներով որբանոցներ, դպրոցներ են բացվում¹⁵⁷: Դոնի հայությունը մեծագումար՝ 45000 ո. նվիրատվություն է կատարում¹⁵⁸, իսկ գաղութի նշանավոր մտավորական, հասարակական գործիշ Մ. Բերբերյանն իր միջոցներով բացում է որբանոց:

Արևմտյան Հայաստանի ճակատագրի հանդեպ սրտացավ, ուշագիր վերաբերունքի արտահայտություն են նաև հայ ազատագրական շարժման գործիչների հետ Դոնի հայկական գաղութի ոմեցած կապերի այլ փաստերը: Արևմտահայության ազատագրությանն իրեն նվիրած հայտնի գործիշ Ս. Կուկոնյանը (1866—1914), դեռևս ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին դիմում էր նոր նախիջևանի հոգեոր կառավարությանը, ուսումը շարունակելու համար իրեն դրամական օգնություն ցույց տալու խնդրանքով¹⁵⁹:

Ինչպես հայտնի է, նա 1890 թ. իր կազմակերպած ջոկատով փորձեց անցնել Թուրքիա՝ արևմտահայության ազատագրության գործին մասնակցելու նպատակով: Սահմանն անցնելու ժամանակ գինված ընդհարում է տեղի ունենում, Ս. Կուկոնյանը և իր ընկերները ձերբակալվում

156 «Նոր դար», 1889, № 33:

157 Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, ֆ. 123, բաժին 2, գ. 107—159:

158 «Մեր ձախնը», 1908, № 73:

159 Մ. Ծաշտոցի անվան մտահագրան, Կ. Մրապյանի ֆոնդ, թ. 82, գ. 104, 108:

Են: Ցարական դատարանը կուկունյանին դատապարտում է քսան տարվեանտարկության:

1905 թ. հոկտեմբերյան մանիֆեստից հետո նա տասնհինգ տարվա ըանտարկությունից ազատվում է և Սախալինից վերադառնալու ու նոր կովկաս մեկնելու ճանապարհին, 1906 թ. ամռանը նորոնախիշեանցիների մոտ հյուրնեկալվում է շուրջ երկու ամիս: Նա Դոնի հայ հասարակության առաջ հանդես է գալիս զեկուցումով: Ի պատիվ կուկունյանի, հավաքներ են կազմակերպվում, ուր նշվում է նրա դերը հայ աղատագրական շարժման մեջ¹⁶⁰:

XX դարի սկզբներին նախիչեանում հրատարակվող «Նոր կյանք», «Մեր ձայնը» և հայկական մյուս թերթերը պարբերաբար անդրադառնուում էին արևմտահայության ծանր վիճակին և շեշտում այնտեղ բարենորոգումներ կատարելու անհրաժեշտությունը:

«Մեր ձայնը» թերթը 1908 թ. բազմից անդրադառնում է երիտթուրքերի հեղաշրջմանը և արևմտահայությանը նրանց խոստացած բարենորոգումների խնդրին: «Երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցական լոգոնիք», «Հեղափոխությունը թուրքիայում» և հատկապես «Թուրքական սահմանադրությունը հայկական կյանքում» շարունակվող հոդվածաշարքում թուրքերի վարած քաղաքականության և ժողովրդի կյանքից վերցված փաստերի վերլուծության հիման վրա թերթը ցույց է տալիս, որ սպասելիքներ շպետք է ունենալ թուրքիայում կատարվող հեղաշրջումից: Միաժամանակ «Մեր ձայնը» քննադատում է «Դաշնակցություն» կուսակցությանը, որը հավատում ու գործակցում է երիտթուրքերի հետ¹⁶¹:

Բայկանյան առաջին պատերազմը կրկին Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու ակնկալություններ առաջացրեց: Պատահական չէ, որ «Գրիշ» թերթի առաջին համարը (1912, № 1) բացվում է զինված կամավորի մհծադիր նկարով «դեպի բալկանները» բազմանշանակալից մակարությամբ:

Առաջին համաշխարհային պատերազմը և հատկապես 1914 թ. հոկտեմբերին թուրքիայի՝ Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ մտնելը հայկական շրջաններում, այդ թվում և հայկական գաղթօջախներում գրեթե ամենուրեք Արևմտյան Հայաստանը ազատագրելու հույսերի մեջ ալիք բարձրացրեց: Արևմտահայության բախտը օրինականության սահմաններում տնօրինելուն հետամուտ Դոնի հայությունն անմիջապես

160. «Հայրենիք», 1937, № 2, էջ 72—93, 1955, № 4, էջ 83—87:

161. «Մեր Զայնը», 1908, № 94—98, 100, 105, 106, 108, 114, 118, 124, 127:

արձագանքում է պատերազմին, ոռուսական զենքի հաղթանակի մեջ տեսնելով ազգակիցների փրկության երաշխիքը:

Նախիջևանի ս. կուսակորիչ կենտրոնական եկեղեցու ընդարձակ հրապարակում ոռուս-թուրքական պատերազմ սկսվելու առիթով հասարակության տարրեր իւավերի մասնակցությամբ տեղի է ունենում միտինգ: Քահանա Ո. Բեկուլյանը խոսելով սլավոնական ժողովուրդներին պատապքելու հարցում Ռուսաստանի դերի մասին, բացատրում է պատերազմից հայերի հարավոր սպասելիքները և կոչ անում բոլոր միջոցներով օգնել ներկա ազատագրական պատերազմին: Գ. Չուբարյանը, Գր. Զախուցյանը նմանապես շեշտում են հայերի համար պատերազմի ազատագրական բնույթի և հորդորում օգնել Ռուսաստանին՝ հաղթանակ ձեռք բերելու: Ազա ցուցարարների հոծ բազմությունը «Կեցցե Զեյթուն», «Մեր հայրենիք» երգելով, «Կորչի քրիստոնյաների դարավոր թշնամի թուրքիան», «Կեցցե Հայաստանը Ռուսաստանի հովանավորության տակ», «Կեցցե Հայաստանը Ռուսաստանի հովանավորության տակ», «Կեցցե Հայ կամավորների խումբը» լոգունգներով շարժվում է Ռուսուով: Այստեղ ցուցեր են տեղի ունենում ֆրանսիական, անգլիական ներկայացուցությունների, քաղաքապետարանի առջև¹⁶²:

Ռւսանող երիտասարդությունը հոկտեմբերի 28-ին հավաքվում է Սուրբ Խաչ վանքի հրապարակում: Երջապատելով Մ. Նալբանդյանի և Ո. Պատկանյանի շիրիմները նրանք երգվում են կատարել մեծ հայրենակիցների պատգամները, նվիրվել Մայր Հայրենիքում ոտնատակ եղած հայերի ազատագրության գործին: «Զիր անմեռ ավանդը սուրբ պահելով, — վանկարկում էին նրանք, — զնում ենք դեպի կրակից ու սրից հայածված մարդկանց երկիրը՝ միը մատաղ կյանքը զոհաբերելու հալածված ու ոտնատակ եղած հայության ազատությանը»¹⁶³:

Տեղեկանալով, որ կառավարության թույլտվությամբ հայկական կոմիտեներ են ստեղծվում Ռուսաստանի հայկական զաղութներում, նման կոմիտե է ստեղծվում նաև նոր նախիջևանում, հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս, Գ. Չորեքչյանի նախագահությամբ: Կոմիտեի կազմում էին Գր. Զախուցյանը, Գր. Բախչիսարայցեր, Գ. Չուբարյանը, Օ. Շահաղիզը, Ո. Բերեբերյանը, Խ. Փորքշյանը և գաղութի այլ նշանավոր գործիչներ:

Կոմիտեն կազմակերպում է երեկույթ, ուր Գ. Չորեքչյանը տեղի հայ հասարակությանը հորդորում է նպաստել հայ ազգի ակնկալությունների իրագործմանը: Հայտնի պատմաբան և արվեստագետ Ա. Զիվելեգյանը լրաբանում է հայկական քաղաքական կյանքում բացվող հեռանկարնե-

162. «Մշակ», 1914, № 243, հմտ. «Գաղութ», 1914, № 32:

163. «Գաղութ», 1914, № 33:

րի, Ռուսաստանի հովանու տակ անցնելու միջոցով Արևմտյան Հայաստանը ազատագրելու հարցը: Թեմական դպրոցի ուսուցիչ, նշանակյալ լեզվաբան Հ. Աճառյանը հետաքրիր գեպքեր է պատմում Զեյթոնի ապստամբության, իսկ իրավաբան Խ. Փորբշեյանը՝ արևմտահայ սահմանադրության մասին: Վերջում Գր. Զալմուշյանը, խոսելով արևմտահայերի համար պատերազմի բախտորոշ նշանակության մասին քննադատում է տեղի մի քանի աղաների, որոնք անտարբեր են վերաբերվում հարազատ ժողովրդի ճակատագրի հանդեպ և հիշեցնում է Գամառ Քաթիպայի հայտնի խոսքերը. «Թե որ փողիցդ շահ շոնի Հայաստան, թքել եմ քո ալ փողիտ ալ վրան»¹⁶⁴:

Դետական դումայի անդամ, Նոր Նախիջևանի հասարակական գործի Մ. Աճեմյանը Թիֆլիսից վերադառնալով զեկուցում է կարդում այս պատերազմում հայերի համար բացվող հեռանկարների, Անդրկովկասում՝ տիրող իրավիճակի, կամավորական խմբեր կազմակերպելու մասին¹⁶⁵:

Նոր Նախիջևանի հոգեոր կառավարությունը վճռում է հայ ազատագրական շարժման ճանաշված գործի Անդրանիկի դիմանկարը 5 հազար օրինակ բազմացնել և տարածել տեղական բնակչության մեջ¹⁶⁶:

Ռուսական զենքի հաղթանակին նպաստելու մտայնությամբ հայկական գաղթավայրերում կամավորական խմբեր կազմելու լայն շարժում է սկսվում: Հայրենասիրական ընդհանուր ոգեստություն էր տիրում՝ Արևմտյան Հայաստանը ազատագրված տեսնելու հեռանկարով¹⁶⁷: Հայկական շարժմանը, արևմտահայության ազատագրության գործին իրենց համակությունն են հայտնում նաև ոռու առաջավոր մտավորականները: Խարկովի համալսարանի պրոֆեսոր Պոգողինը նոր Նախիջևանի քաղաքային թատրոնի շենքում տեղի մի խումբ երիտասարդների նախաձեռնությամբ դասախոսում է «Ռուս-գերմանական հարաբերությունները և հայկական հարցը» թեմայով: Ապա ընդառաջելով հայերի ցանկությանը, սիրահոժար պատրաստակամություն է հայտնում մամուկի միջոցով ոռու հասարակայնությանը ծանոթացնել հայկական հարցին¹⁶⁸:

Գետերուրգից Բ. Գորդոնը կարդալով «Պրիազովսկի կրայ» թերթը աստիճան համակրությամբ է լցում գեպի հայկական հարցը, որ

¹⁶⁴ Նույն տեղում, № 32, 36.

¹⁶⁵ Նույն տեղում:

¹⁶⁶ Նույն տեղում, № 33:

¹⁶⁷ Գ. Ղարիբջանյան, Լենինը և Անդրկովկասը, գիրք II, Երևան 1973, էջ 287—288:

¹⁶⁸ Նույն տեղում, № 12:

ուղարկում է 200 ոռուի՝ արևմտահայության ազատագրության գործին ծառայեցնելու նպատակով և ողջունում «Հայ կամավոր հերոսներին»¹⁶⁹:

Նոր Նախիջևանի և Ռուսովի հայկական կոմիտեները կամավորական խմբեր են կազմակերպում և ճանապարհում դեպի Կովկաս: Նոյեմբերի 19-ին ս. Լուսավորչի եկեղեցում հոծ բազմության ներկայությամբ տեղի է ունենում պատերազմի դաշտ մեկնող Նախիջևանի և Ռուսովի հայ կամավորների մարտական դրոշի օծումը¹⁷⁰:

Նախիջևանում կազմակերպվում է կամավորական խմբերի հանդերձավորումը, վարժեցնումը և ապա նրանց ճանապարհումը զեպի Թիֆլիս, իսկ այստեղից էլ՝ ուղամաճակատ: Ընդհանուր ոգեստությունն ու շարժումը ընդգրկել էին նաև գյուղական բնակչությանը: Զալթր գյուղում, օրինակ, կազմակերպվում է հայկական գյուղերի նորակոչ զինվորների ընդունելություն: Սի խումբ շալթրցիների հայ կամավոր զինվորների համար հավաքել էին 45 պարկ պաքսիմատ¹⁷¹:

Նոր Նախիջևանում կանայք ստեղծել էին հատուկ կոմիտե՝ տիկին ե. Բերբերյանի գլխավորությամբ: Այս հանձնախումբը զբաղվում էր կամավորների համար սպիտակեղեն, տաք հագուստ պատրաստելու, ինչպես նաև նրանց սնունդը հոգալու խնդրով¹⁷²:

Դունի հայկական գաղութի դերը արևմտահայության ազատագրությանը նպաստելու հարցում միայն վերոբերյալ փաստերով ու միջոցառումներով չեր սահմանափակվում: Գտնվելով Կովկասը Ռուսաստանի հետ կապող հիմնական ուղղությամբ, նոր Նախիջևանը դարձել էր հայկական տարրեր կենտրոններից կամավորների ընդունման կարևոր մի հանդրվան: Ռուսաստանի հայկական գաղթավայրերից և արտասահմանյան տարրեր երկրներից պարբերաբար կամավորական խմբեր էին ժամանում Նախիջևան: Նրանք այնտեղ լավ ընդունելության էին արժանանում, անհրաժեշտության դեպքում հանդերձավորվում, զինվում և ապա ուղերդվում գեպի Անդրկովկաս:

Ռուսահայ շրջաններից կամավորական խմբեր էին ժամանում Նախիջևան, Աստրախանից, Մարիուպոլից¹⁷³, Ղրիմի տարրեր քաղաքներից, Ռուսաստանի շրջաններից և այլ պատճեններից:

¹⁶⁹ Նույն տեղում, 1915, № 16. Կազակուհի Ե. Ժիրովայից նոր Նախիջևանում ստացվում է նամակ և եկեղեցական մի սրբապատկեր: Նա խնդրում էր նկարը կախել Ս. Լուսավորչի եկեղեցում, իսկ երբ տաճկական լուծը տապալվի, ապա այն տեղափոխել ազատ Հայաստանի եկեղեցիներից մեկը: Նամակի տակ ստորագրված էր՝ Դունի շրջանի գաղամյալ կազակուհի Եկ. Ժա («Գաղութ», 1914, № 37):

¹⁷⁰ Նույն տեղում, 1914, № 35:

¹⁷¹ Նույն տեղում, 1915, № 8:

¹⁷² Նույն տեղում, 1914, № 39:

¹⁷³ Նույն տեղում, № 33, 39:

Խարկովից¹⁷⁴: Դոնի հայկական գաղութը լավ ընդունելության է արժանացնում Պետերբուրգի և Մոսկվայի հայ ուսանող կամավորների առաջին խմբերին¹⁷⁵: Առաջին համաշխարհային պատերազմին Թուրքիայի մասնակցելու հենց առաջին ամիսներին կամավորներ են սկսում ժամանել Նախիջևան և ապա Կովկասյան ռազմաճակատ մեկնել արտասահմանյան մի շարք երկրներից: 1914 թ. նոյեմբերի վերջերին թուրք-բալկանյան պատերազմին մասնակցած 120 հայ կամավորներ են ժամանում Բուլղարիայից, դեկտեմբերի 1-ին՝ զեյթունցի 190 հայ զինվորներ՝ իրենց դրոշներով, Ռումինիայից՝ տաճկահպատակ 42 հայ կամավորներ: Նրանք բոլորն էլ մի քանի օր մնալուց հետո մեկնում են ռազմաճակատ¹⁷⁶: 1915 թ. Արխանքելսկի նավահանգստով 300 և ապա 200 հոգուց բաղկացած կամավորական խմբեր են ժամանում Ամերիկայից և անմիշապես ճանապարհվում դեպի Թիֆլիս¹⁷⁷:

Դոնի հայկական գաղութը, ինչպես և ուսահայ մյուս համայնքները ամեն կերպ ջանում էին հայ կամավորներին ապահովել կամ գոնե օգնել պարենով ու հանդերձանքով: Հիշատակենք մի քանի փաստեր: 1914 թ. վերջերին Մոսկվայի հայ համայնքը Կովկաս է առաքում մեկ վագոն տաք հագուստեղեն, իսկ Նախիջևանի թեմական դպրոցի սաները՝ ապուխտ, երշիկ, ծխախոտ, թեյ, շաքար¹⁷⁸:

Ռուսով քաղաքի հայ կանայք՝ Ե. Ռնանյանի գլխավորությամբ կազմել էին կամավորների համար սպիտակեղեն և տաք հագուստ պատրաստելու հատուկ կոմիտե: Նրանք իրենց ձեռքի աշխատանքը պարբերաբար առաքում էին ռազմաճակատ: Հայ վաճառական Վ. Պոպովը նվիրաբերում է 1000 ռ. գումար և 500 ռուբլու հագուստ: Զալթը գյուղի սպառողական ընկերությունը նվիրում է 185 կտոր տաք հագուստ և 120 գդակ, իսկ Թոփտի գյուղը՝ 121 տաք վերնաշապիկ¹⁷⁹:

Մոսկվայի հայկական կոմիտեն նոր Նախիջևան էր փոխանցել 10 000 ռ. գումար՝ կամավորների համար պարեն գնելու նպատակով¹⁸⁰:

Պատերազմի կովկասյան ճակատում ռազմական գործողությունների սահմանագծում ընկած շատ բնակավայրերի հայ ազգաբնակչությունը լուսական զորամասերի տեղաշարժերի ժամանակ թուրքական վտանգից

174 Նույն տեղում, 1915, № 19, 21:

175 Նույն տեղում, 1916, № 1:

176 Նույն տեղում, 1914, № 36, 37:

177 Նույն տեղում, 1915, № 31, 32:

178 Նույն տեղում, 1914, № 39:

179 Նույն տեղում, № 37:

180 Նույն տեղում, 1915, № 8—9:

խոսափելու նպատակով, գաղթում էր Անդրկովկաս: Հետագայում, հատկապես 1915 թ. սկզբներից, Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայշատ բնակավայրերում սկսված ընդհանուր կոտորածների հետեանքվ, ինչպես հայտնի է, գաղթագնացությունը մեծ շափեր է ընդունում: Մերձավոր արևելքի, Եվրոպայի ու Ամերիկայի տարբեր երկրներ գաղթեցին շատ արևմտահայեր:

Պատերազմի հենց սկզբից գաղթականության մեծ հոսք սկսվեց ղեպի Ռուսաստանի սահմանները, Կովկասի ու Հարավային Ռուսաստանի հայաբնակ վայրերը: Ապրուսափ միջոցներից զրկված, անտուն ու անօթեան մնացած, համաճարակ հիվանդությունների ու սովոր ճիրանների մեջ ընկած գաղթականությանը օգնելու համար հայկական շրջաններում լայն շարժում սկսվեց: Կենսական ու հրատապ այդ շարժումը շուտով լայն արձագանք է գտնում և համագոյացին բնույթ ստանում: Անմիտիար վիճակում գտնվող հայրենակիցներին ծանր վիճակից հանելու գործում ծանրությունն իր վրա վերցրած Անդրկովկասի հայության հետ իրենց ներդրումը կատարեցին նաև ուսահայ գաղթօջախները:

Ժամանակի թերթերում հրապարակված նյութերից պարզ է դառնում, որ նոր Նախիջևանի մտավորականությունը և առհասարակ ողջ բնակչությունը մեծ հարգանքով էր վերաբերվում ու գործնական քայլեր կատարում գաղթականությանը օգնելու համար: Հայրենակիցներին օգնելու, իր ունեցածը նրա հետ կիսելու մտայնությունը, որով հատկանըշվում էր հայկական շրջանների հասարակական մթնոլորտը, համակել էր նաև գյուղական բնակչությանը: Տակավին գաղթականության առաջին քարավանները երեալու ժամանակ, 1914 թ. նոյեմբերին նոր Նախիջևանի «Գաղութ» թերթը գրում էր. «Եթե գյուղացոց այդ բարձր տրամադրությունը ի նկատի ունենալով տեղումս միանձնյա ժողով կազմվի փախստական հայերին օգնելու նպատակով, մեր գյուղացիք լայն շափերով կգան օգնության թե՛ շորերով, թե՛ ուտելեղենով և թե՛ անգամ պատապարելով»¹⁸¹:

Հայ գաղթականության, ինչպես և կամավորների օգտին, կատարվող հանգանակությանը կազմակերպված ընթացք տալու և հեշտացնելու նպատակով հայկական կոմիտեն քաղաքը բաժանել էր 26 թաղամասերի և յորագանցուր տեղամասում նշանակել պատասխանատու անձ: Առաջին Սոբորնայա փողոցում, օրինակ, պատասխանատու էր Հր. Աճառյանը, առաջին Սոֆիեվսկայա փողոցում՝ Խ. Փորքշեյանը և այլն¹⁸²:

181 «Գաղութ», 1914, № 36:

182 Նույն տեղում, 1915, № 34:

Շուտով կազմակերպվում է առաջին օգնությունը: 1915 թ. հունվարին արդեն Սարիղամիշից, Օլիֆից, Արդահանից, Արդիլինից և այլ բնակավայրերից շուրջ 500 գաղթականներ էին հանգրվանել Նոր Նախիչևանում¹⁸³, նրանց օգնություն կազմակերպելու գործն իրենց վրա էին վերցրել տեղի հայկական կոմիտեն, եկեղեցական հոգաբարձությունը և բարեգործական մյուս հաստատությունները: Այդ նույն ժամանակ Անդրկովկասում պատսպարված գաղթականնության համար Նոր Նախիչևանը կաթողիկոսի անունով 20 000 ռ. գումար և մեծ քանակությամբ հագուստ է ուղարկում: Տագանրոգի քաղաքային թատրոնում տեղի հայկական մտավորականության նախաձեռնությամբ հայ փախստականների օգտին կազմակերպվում է երեկոյթ, որից 1000 ռ. արդյունք է ստացվում¹⁸⁴:

Հոգաբարձության նախագահ բժիշկ Ա. Սալթիկյանը, գտնվելով էջմիածնում և ականատես լինելով գաղթականնության վիճակին, այնտեղից հաղորդում է, որ անխնամ ու սոսկալի դրության մեջ են 2700 որբեր: Նա միաժամանակ խնդրում է պարզել և իրեն տեղեկացնել, թե նախիչևանի, Ռոստովի, Տագանրոգի և Նովչերկասկի հայկական համայնքները որքան որբեր կարող են խնամել¹⁸⁵:

1915 թ. օգոստոսի 30-ին կայանում է Նոր Նախիչևանի հայ հասարակության ներկայացուցիչների ժողով: Փողով նկատի առնելով ստեղծված ծանր դրությունը որոշում է բացել որբանոց և 250 որբերի վերցնել իր խնամքի տակ: Որբանոցի կազմակերպման և նրա գործերը տնօրինելու համար առանձնացվում է հատուկ հանձնաժողով (Գ. Բախչիսարացե, Ե. Շահաղիզ և ուրիշներ) և այդ մասին հեռագրով հայտնվում էջմիածին¹⁸⁶:

Փողովորդների համերաշխության բարձր գիտակցությամբ է հատկանշվում այն հանգամանքը, որ արևմտահայ գաղթականության դրությունը թեթևացնելու համար, հայերի հետ միասին նրանց օգնության ձեռք էին մեկնում նաև ոռուսները, այդ թվում պաշտոնական հաստատությունների ներկայացուցիչները:

1915 թ. հունվարին Մոսկվայի քաղաքային դուման վճռում է 100 000 ռ. գումար հատկացնել հայ գաղթականության օգտին: Այդ լուրը երախտագիտությամբ է ընդունվում հայկական շրջաններում¹⁸⁷:

183 Նույն տեղում, № 12.

184 Նույն տեղում, № 1, 3, 5:

185 ՀԿՊԱ, ֆ. 55, գ. 237, թ. 2—3:

186 Նույն տեղում, գ. 237, թ. 15:

187 «Գաղութ», 1915, № 4:

Սեաստոպոլի հայկական կոմիտեի ըանքերով կազմակերպվում է «հայ փախստականի օր»: Հայ, ոուս, ինչպես նաև կարայիմ, հրեա օրիորդները, աշակերտներն աշխուժորեն մասնակցում են այդ միջոցառմանը և ստացված 1773 ռ. գումարը տրամադրում հայ գաղթականությանը:

Հայ գաղթականների օգտին Օդեսայում կազմակերպվում է «Հայկական օր» և Հավաքվում է 11 000 ռուբլի: Այդ նույն օրը վաճառվում է «Օդեսա—բեյնում արման» հայ գաղթականության հարցերին նմիրված միօրյա լրագիրը¹⁸⁸:

Գաղղականների ու որբերի առանձին խմբեր ընդունելուց ու խնամելուց զատ նորնախիչևանցիները դրամով և պարենով օգնում էին Արեւիլիան Հայաստանում ապաստանած փախստականներին: Դոնի հայ համայնքը վագոններով պարբերաբար հացահատիկ և ալյուր էր ուղարկում փախստականներին¹⁸⁹:

Մեծ Սալյա գյուղում հիմնված հայկական կոմիտեն հանգանակում է 1820 ռուբլի, իսկ մյուս գյուղերից՝ 3 517 ռ. գումար և հոգաբարձության միջոցով առաքում է ջջմիածին¹⁹⁰: Առհասարակ հայ գյուղացին շատ սրտացավ վերաբերմունք ուներ թուրքական յաթաղանից փրկված հայրենակիցների նկատմամբ: Նրանք գաղթականներին սովոր փրկելու գործին նպաստելուց զատ օգնում էին նրանց կազմակերպելու իրենց սեփական տնտեսությունը: Այսպիս, 1915 թ. գարնանը Զալթը գյուղը 600 պարկ ալյուրի հետ 571 երկրագործական և գյուղացու տնտեսությանը անհրաժեշտ այլ գործիքներ է ուղարկում գաղթականներին¹⁹¹: Նույն ձեվով էին վարվում Թոփիտի, Սովորան Սալա և մյուս գյուղերը:

Տնից ու տեղից քշված արևմտահայ զանգվածներին օգնելու, նրանց դրությունը տանելի դարձնելու ձգտումն այն աստիճան էր համակել ռուսահայ գաղութների բնակչությանը, որ հայրենասիրական այդ նախաձեռնությանը մասնակցում էին անգամ դպրոցի աշակերտները: Այսպիս, թեմական դպրոցի աշակերտները քանիցս մասնակցում են գաղթականներին օգնելուն: Դպրոցի տեսուչ Ե. Շահաղիզը հոգաբարձության նախագահին ուղղած 1915 թ. հոկտեմբերի 3-ի գրությամբ հայտնում էր: «Սորանով պատիվ ունիմ ուղարկելու Զեղ 13 ռ. 54 կ., որ հավաքել են իրենց մեջ դպրանոցիս աշակերտները՝ հօգուած մեր թշվառ փախստա-

188 Նույն տեղում, № 16:

189 «Գաղութ», 1915, № 129, և ալյուր:

190 Նույն տեղում, թ. 20:

191 Նույն տեղում, № 18:

կանների»¹⁹²: Ավելին, աշակերտների հավաքած 20 ոռութին, որ նախատեսված էր դպրոցի բաղմամյա բժիշկ Քեշեկյանին՝ թաղման պսակնելու համար, ուղարկվում է գաղթականների վիճակը թեթևացնելու նպատակով¹⁹³:

Այսպիսով, թուրքական կառավարության կողմից արևմտահայ բնակչության նկատմամբ կատարած բարբարոսությունների հետևանքով Ռուսաստանում ապաստան գոտած գաղթական հայությանը օգնելու հարցում մյուս գաղութների և առհասարակ հայկական շրջանների հետ հայրենասիրական վերաբերմունք դրսեռեց և իր նպաստը բերեց Դոնի հայամայքը:

192 ՀԿՊՊԱ, ֆ. 55, ց. 1, գ. 202, թ. 55.

193 Նույն տեղում, թ. 92:

ԳԼՈՒԽ ԶՈՐՅՈՒԹ

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ

Ինչպես նկատեցինք XIX դ. առաջին կեսին նոր նախիջևանում հոգային հարցի, եկեղեցական գումարների և հասարակական այլ խնդիրների շուրջ համառ պայքար էր գնում: Դրանք խոր արմատներ ունեին գաղութի սոցիալ-տնտեսական հարաբերություններում: Սակայն, կառավարական ու հոգևոր իշխանության բարձր ատյաններում քանիցս քննության նյութ դարձած այդ խնդիրները շոշափում էին սոսկ հայկական գաղութին վերաբերող հարցերը, Դոնի հայության ներհամայնքային կյանքը: Այդ իսկ պատճառով դրանք լայն տարածում չունեին և անմիջականորեն չէին առնչվում շրջակա միջավայրի, նովոռոսիայի կամ կենտրոնական Ռուսաստանի համընդհանուր սոցիալ-քաղաքական շարժումներին:

Հետագա տասնամյակներում, հատկապես 1861 թ. գյուղացիական ռեֆորմից հետո կապիտալիստական հարաբերությունների գարգացման շնորհիվ աստիճանաբար Դոնի հայկական գաղութն ավելի ու ավելի է ներքաշվում երկրի սոցիալ-տնտեսական ընդհանուր ոլորտի մեջ: Դրա հետ մեկտեղ Դոնի հայ զանգվածն ընդգրկվում է ու մերվում սոցիալ-քաղաքական այն միջավայրին, որը բնորոշ էր ոռուսական կյանքին:

Այդ պարագան և այն, որ նախիջևանը մի շարք հանգամանքների բերումով և առաջին հերթին հասուն ու առաջազեմ մտավորականություն ունենալու շնորհիվ կապված էր ոռուսական կենտրոնների գեմոկրատական շրջանների հետ, Դոնի հայկական գաղութում առավել կամ նվազ շափով արտահայտվում էին ամբողջ երկրում ծավալված հասարակական-քաղաքական իրադարձությունները:

Մ. Նալբանդյանը հայ իրականության մեջ այն գործիչն էր, որը հասավ ժամանակի հասարակական մտքի և սոցիալական պայքարի ամենաբարձր աստիճանին՝ հեղափոխական-դեմոկրատական աշխարհայեցողության, դառնալով միաժամանակ ոռուսաստանյան մասշտաբի գործիչ: Դրա հետ մեկտեղ նա յուրովի շաղկապում էր իր ծննդավայրի՝ XIX դ. 40—50-ական թվականներին ներգաղութային և մյուս կողմից,

XIX դարի երկրորդ կեսի արդեն ամբողջ Երկրի շարժումների մեջ ներգրավված ու նոր բովանդակություն ստացած նոր Նախիջևանի սոցիալ-քաղաքական պայքարը:

Տիրող կարգերի դեմ Մ. Նալբանդյանի հակամաբտն, ինչպես նշել ցինք, սկզբնավորվել է հայկական գուղութի միջավայրում: Նոր Նախիջևանում ստեղծված, երկար ու համառ պայքարով հատկանշվող սոցիալ-քաղաքական մինուրտում են նախապես սնունդ ստացել Նալբանդյանի ըմբոստ ոգին, նրա անհանգիստ ու որոնող միտքը: Այդ ամենը հիմք է դառնում հեղափոխական-դեմոկրատական նրա հետագա աշխարհայցքի համար, որը ձևավորվում է ուստական դեմոկրատական միջավայրում, ուսւ առաջավոր մտածողների գաղափարական ազդեցությամբ¹: Այդ առումով միանգամայն իրավացի էր Ալ. Մյասնիկյանը, երբ հեղափոխական դեմոկրատին նվիրված աշխատության մեջ, տակավին 1919 թ., եղրակացնում էր. «Եվրոպական իրականությունը և եվրոպական միտքը մեր հրապարակախոսի վրա ունեցել են իրանց ազդեցությունը. նրա հասարակական միտքը պարզվել է ուստական կյանքի և ուսւ մտածողների շնորհիվ, իսկ հայ իրականությունը ուղղություն է տվել նրան, նախորդչել նրա իդեոլոգիան: Նալբանդյանը ամենից առաջ հայ կյանքի ծնունդ է»²:

Ահա հեղափոխական-դեմոկրատական աշխարհայցքողության հաւած և այդ մակարդակով սոցիալ-քաղաքական խնդիրներ առաջ քաշող հայ մեծ մտածողի ու գործի քարոզած գաղափարները պայքարի ուղի էին հարթում հետագա սերունդների համար; Մանավանդ որ ուստական կայսրության ժողովուրդների ազատագրումը ցարիզմի տապալման մեջ տեսնող գործի հայացքները քաղաքական պայքարի հիմնական դրոշ դարձան երկար ժամանակ, ընդուած մինչև XX դ. առաջին տասնամյակները: Այդ է պատճառը, որ Նալբանդյանի բուռն կյանքն ու անձնազոհությունը ցարական ինքնակալության դեմ պայքարի ելած նոր սերունդների, առաջին հերթին իր հայրենակիցների համար միշտ էլ մնաց ուսանելի օրինակ, ոգեշնչման աղբյուր:

Պատահական չէր, որ Նալբանդյանի թաղման ժամանակ ելույթ ունեցող Հռետորները՝ Հովակիմյանը և Թիրքերյանը նշում էին նոր Նախիջևանի հասարակության վրա նրա ունեցած ազդեցությունը: Հետագայում հասարակական-քաղաքական ակտիվ գործունեություն ծավալած երիտասարդությունը մշտապես դիմում էր Նալբանդյանին, աղաւության կոչող նրա մարտական ստեղծագործություններին:

1 Վ. Բարխուսարյան, Միքայել Նալբանդյանի հայացքների ձևավորման սոցիալ-քաղափարի հարցի շարքը («Բանքեր Երևանի Համարանք» 1981, № 1):

2 Ալ. Մարտունի, Միքայել Նալբանդյան, Մոսկվա, 1919, էջ 25–26:

1. ՆՈՐ ՆԱԼԻ ՁԻՎԱՆԸ ԵՎ ՆԱՐՈԴՆԻԿԱԿԱՆ ՇԱԲԺՈՒՄԲԻ

XIX դարի 60—70-ական թվականներին արևելահայ հասարակական միտքն աստիճանաբար անցում էր կատարում պահպանողական, լիբերալ մտախությունից դեպի գեղության գաղափարախոսությունը: Հարկավ այդ տասնամյակներում արևելահայ իրականության մեջ և ընդհանուրպես հայ կյանքում դեռևս գործում էին ազգային պահպանողականներն ու լիբերալները՝ մամուկի իրենց օրգաններով: Մուսա առաջավոր մտքի աղղեցությամբ ուսանող երիտասարդության մեջ խմբվում ու արմատավորվում էր ժողովրդին լուսավորելու, նրա սոցիալական աղաւագրմանը ծառայելու գուղափարը: Արևելահայ կյանքում սկսվող այդ շարժման առաջամարտիկներն էին Դորպատի, Պետերբուրգի, Մոսկվայի և Մուսաստանի այլ համալսարաններում, ինչպես նաև արտասահմանում ուսանող երիտասարդությունը: Որքան ավելի էին սրվում սոցիալական հակասություններն ինքնակալության ներսում այնքան ավելի էր ակներև գառնում հայ երիտասարդության մեջ զեմոկրատական տրամադրությունների ու գաղափարների ներթափանցումը³:

1870—80-ական թվականներին արևելահայ իրականության դեմոկրատական խմբավորումների մեջ առաջավոր մտավորականությունը նարողնիկությունն էր, որի մեծագույն մասը կազմում էր սովորող երիտասարդությունը:

Նարողնիկությունը հեղափոխական զեմոկրատիային հաջորդող, ինքնակալության դեմ պայքարող քաղաքական ամենազորեղ հոսանքն էր: Իզուր չէ, որ Վ. Ի. Լենինը նարողնիկների նախահայր էր համարում հեղափոխական դեմոկրատներ Գերցենին և Զերնիշեսկուն: Հեղափոխական դեմոկրատների և նարողնիկների, մասնավորապես հեղափոխական նարողնիկների միջև շատ ընդհանրություններ կային: Հիմնական այն է, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը ցարիզմի նկատմամբ ունեին հեղափոխական դիրքորոշում: Դրանից զատ ինքնակալության դեմ պայքարի ընթացքում զեմոկրատական այդ երկու հոսանքներն էլ ենում էին գյուղական համայնքի տեսությունից:

Նարողնիկության հիմնական խնդիրն էր, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, «...ոտքի հանել գյուղացիությանը սոցիալական հեղափոխու-

3 Տե՛ս Ա. Գ. Հովհաննիսյան, Արևելահայերի մասնակցությունը Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին (ԳԲԸ, 1968, 1, էջ 15): Մ. Հ. Մսիբարյան, ԽՍՀ դ. երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուկի պատմությունից: Երեքական, 1967:

թյուն անելու համար ընդդեմ ժամանակակից հասարակության հիմքերի»⁴:

Ավելորդ չէ նշել, որ նարողնիկական շարժումը մեծապես նպաստեց հասարակական զարգացման ընթացքին: Այդ շարժումն իր մխալներով ու տատանումներով հանդերձ որոշակի դեր կատարեց ինքնակալության դեմ ուղղված Ռուսաստանի հեղափոխական շարժումների պատմության մեջ:

Հայ իրականության մեջ Մ. Նալբանդյանը ուղի հարթեց նարողնիկական շարժման համար և դարձավ այդ շարժման նախահայրը: Հողային հարցի մասին նալբանդյանի մտորումներն ու գատողությունները հիմք դարձան 1870-ական թվականին հեղափոխական նարողնիկության համար: Միանգամայն իրավացի է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, երբ, անդրադառնալով 1860—80-ական թթ. Ռուսաստանի հեղափոխական շարժումներին արեելահայերի մասնակցության խնդրին, գրում է. «Իր բոլոր առանձնահատկությունների հետ մեկտեղ 70-ական թթ. հայ հեղափոխական նարողնիկների հասարակական-քաղաքական միտքն իր վրա կրում էր ազգակից նախորդի՝ Մ. Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական հայացքների ու գործունեության պարզ հետքերը: Այլ կերպ պատկերացնել հարցը, նշանակում է ոչ միայն ծուռ հայելու մեջ ներկայացնել հայ հասարակական մտքի զարգացման ընթացքն, այլև գիտակցաբար կամ անգիտորեն աշք գոցել այն խոր ակոսի վրա, որ բացել էր XIX դարի հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ հեղափոխական դեմոկրատ նալբանդյանը»⁵:

1860—1880-ական թթ. Ռուսաստանում տեղի ունեցող դեմոկրատական, հեղափոխական խմբումներին ու շարժումներին արձագանքում էր առաջին հերթին երկրի համալսարաններում և մյուս ուսումնական հաստատություններում սովորող երիտասարդությունը: Նարողնիկական գեմելվոլեցիների և նարողովոլեցիների շարժման բարձրացող ալիքը իր ոլորտի մեջ է առնում նաև արևելահայ երիտասարդության հասուն շերտին:

Նոր նախիջևանը ինչպես նշեցինք, բազում թելերով կապված էր Ռուսաստանի կենտրոնական քաղաքների, Անդրկովկասի և Հայաստանի հետ: Հաճախ նախիջևան էին այցելում ոչ միայն հայ մշակույթի այլ նաև հասարակական-քաղաքական մարզում գործող դեմքեր: Նրանք այստեղ

4 Վ. Ի. Լենին, Ելժ, հ. 1, էջ 327.

5 Ա. Գ. Հովհաննիսյան, Արևելահայերի մասնակցությունը Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին, էջ 22:

համապատասխան պայմաններ ու բարենպաստ մինուրուտ էին գտնում իրենց գաղափարների տարածման համար:

1860-ական թվականների վերջերին և 70-ական թվականների սկզբներին Կովկասից, Ռուսաստանի այլ վայրերից և անզամ արտասահմանից Դոնի հայկական գաղութ են գալիս հակակառավարական տրամադրություններ ունեցող անձնավորություններ: Այսպես, 1871 թ. գարնանը նախիջևանում բանտարկվում է Կերչից ժամանած Հակոբ Սոմյանը, որը մեղադրվում էր հակակառավարական գործունեության մեջ:

1872 թ. մարտին Ռուստովի քաղաքային ոստիկանական վարչությունը գործ է սկսում 1868 թ. Կոստանդնուպոլսից դուրս եկած և 1870 թ. նախիջևանում հաստատված Մկրտիչ Դոնիկովի դեմ և նրա վրա հսկություն է սահմանում:

1870-ական թվականների վերջերին մի խումբ երիտասարդներ, գերազանցապես Ռուստովի ռեալական ուսումնարանի սովորողներ, կապեր են հաստատում կենտրոնական նարողնիկական խմբակների ներկայացուցիչների հետ, որոնք ժամանակակից աշխատավոր կերպում էին նարողովոլյան խմբակները: Նույնական կերպում էին նարողովոլյան խմբակները: Նրանք նարողնիկական գաղափարները պրոպագանդում էին Ռուստովի և նախիջևանի բանվորության շրջանում: Հայտնի է, որ նարողնիկները ինքնակրթության խմբակներ էին ստեղծում և ձգտում բանվորների, առհասարակ աշխատավորների մակարդակը բարձրացնել, ինքնազարգացման միջոցով հասուգարձնել հասարակական երեւլյաներին, նախապատրաստել նրանց սոցիալական ու քաղաքական ազատագրման համար: Նարողնիկական տեղական, այդ թվում նաև Հարավային Ռուսաստանի կազմակերպություններն ու խմբակները գաղափարական սնունդ էին ստանում Ռուսաստանի և արտասահմանի դեկավար կենտրոններից: Ռուստովի և նախիջևանի նարողնիկական խմբակները կապված էին և նրանց վրա ուժեղ էր հատկապես Պետերբուրգի ազգեցությունը:

Ռուստով-նախիջևանյան նարողնիկական խմբակների նշանավոր դեմքերից էին Շերպ Փեշերովը և Հակոբ Շապովալովը, որոնք նարող-

6 А. Г. Терещенко, Новонахичеванцы в революционном народническом движении (ՊԲՀ, 1875, № 4, էջ 56):

Նիկական խմբակների մեջ էին մտել 1870-ական թվականներին։ Նրանք, գեռես Ռուսովի ուսումնարանում սովորելիս, դպրոցում իշխող կարգուկանոնի վերաբերյալ դրսերել են բացասական վերաբերմունք։ 1879 թ. որիշ աշակերտների հետ մասնակցում են Ռուսովի ուսումնական հաստատություններում իշխող կամայականությունները մերկացնող լրսավորության մինիստր Դ. Տոլստոյին ուղղած բողոքագրի կազմմանը։

Այդ նույն ժամանակ Ս. Փեշեքերովը և Հ. Շապովալովը Ռ. Զերնիշևի, Մ. Կայալովի, Պ. Փեշեքերովի, Մ. Պոպովի և Ռուսովի ուսումնական հաստատություններում սովորող նախիչեանցի այլ երիտասարդների հետ փորձում են ինքնառուցման խմբեր կազմակերպել։ Սովորող այդ երիտասարդության վրա մեծ տպավորություն են գործում և բանվոր դասակարգի մեջ իրենց գործունեությունն ակտիվացնելու համար էական նշանակություն ունենում ոստիկանության և տեղական իշխանությունների դեմ 1879 թ. Ռուսովի բանվորական ելույթները, որոնք տարածվել էին նաև նախիչեանի բանվորության շրջանում։ Այդ դեպքերի ականատես Պ. Փեշեքերովը հետագայում նշում էր, որ բանվորները, հեղափոխականորեն տրամադրված կազմակերպությունների ցուցումներով, գրոհում էին ոստիկանական տեղամասերի վրա։

Երիտասարդ նարոդովոլցիներ Պ. Փեշեքերովը, Մ. Պոպովը և ուրիշներ ձգտում էին տարերային այդ ելույթների փորձը օգտագործել նարոդիկական նպատակներով⁷։

Ս. Փեշեքերովը պատասխանատվության է կանչվում և քննության ննթարկվում Ռուսովի ուսումնարանում, Ալեքսանդր II-ի ծաղրանկարը տարածելու համար։ 1880 թ. Ս. Փեշեքերովը բնակարանը դառնում է նարոդիկական խմբակների հավաքառեղի։ Այնտեղ կազմակերպվում էր արգելված գրքերի կողեկտիվ ընթերցանություն, որին մասնակցում էին նաև երիտասարդ բանվորները։ 1880 թ. աշնանը Ս. Փեշեքերովը տեխնոլոգիական ինստիտուտում ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Պետերբուրգ։ Մայրաքաղաքի նարոդիկական գաղափարներով համակված ուսանողության շրջանում նա ավելի է ներգրավվում հեղափոխական շարժումների մեջ, ակտիվորեն հանդես գալիս նարոդովոլյան գրույթների պրոպագանդայով, նարոդիկական գրականության հրատարակմամբ։ Ամառային արձակուրդներին վերադառնալով հայրենիք, շարունակում էր գործունեությունը Ռուսովում և նախիչեանում⁸։

⁷ Նույն տեղում, էջ 87։

⁸ Նույն տեղում, էջ 88։

1880—1881 թթ. Ռուսովի ուեալական ուսումնարանի աշակերտության շրջանում արդին կային տասը մշտապես գործող ինքնազարդացման խմբակներ։ Այդ խմբակներում ուսումնասիրում էին Պ. Լավրովի, Ն. Զերնիշևսկու, Ֆ. Լասսալի, Կ. Մարքսի աշխատությունները⁹։

Կառավարության կողմից գործադրվող հարկադրական միջոցների մասին պահպանված վկայությունները ցուց են տալիս, որ նարոդնիկական շարժումը բավականաշափ տարածում էր գտել։ Այսպես, 1880 թ. ապրիլին Եկատերինուլավի նահանգապետի կարգադրությամբ փակվում է Գր. Բաբակի Ռուսովում գտնվող լիտոգրաֆիան։ Մեկ տարի անց պատասխանատվության է ենթարկվում Մշրտիչ Հայրապետովը, թագավորին հրապարակավ հայոցելու համար¹⁰։

Նարոդնիկական գրականություն, կոչեր ու թուուիկներ պահելու և տարածելու համար ձերբակալվում է երիտասարդ դատապաշտպան և Նարֆայիլովը։ Նարոդնիկական գրականություն պահելու համար նա օգտագործում էր իր և իր երկու եղբայրների բնակարանները։ Խուզարկության ժամանակ նրա բնակարանում հայտնաբերվում են նարոդնիկական հրատարակություններ («Նարոդնայա վոլյա», «Մարտայա գաղետա» և այլն), ձեռագրեր և այլ նյութեր։ Նա նարոդովոլյան կոչեր էր տարածում բաղաքի շրջակայքում, Ելինկա գյուղում, Մտեանոյ Կայարանում, Բաբիչև խուսորում։ Շուտով և Նարֆայիլովի և նրան համակիր իր երեք եղբայրների գործունեությունը ոստիկանության կողմից բացահայտվելով։ 1882 թ. նա աքսորվում է արևմտյան Սիբիր¹¹։ Նույն թվականին բանտարկվում է նաև նորնախիչեանցի Գ. Խոզակը։ Բանտից ազատվելուց հետո նա հաստատվում է նախիչեանում և գտնվում ոստիկանության հսկողության տակ։

1882 թ. Ռուսովում ակտում է կազմակերպվել նարոդովոլյան խոշոր բանվորական խմբակ, կրկին Ս. Փեշեքերովի գլխավորությամբ։ Պետերբուրգի նարոդնիկական միջավայրում ակտիվ աշխատանք կատարելով նա, հավանաբար, ցանկանում էր մայրաքաղաքի նարոդովոլյական բանվորական խմբերի փորձը տարածել հարավային Ռուսաստանում, մասնավորապես Ռուսովով-Նախիչեանում։ Ս. Փեշեքերովին այդ աշխատանքներում ներգրավվում է Պետերբուրգից իր երաշխավորությամբ ժամանած Ալ. Լիտվինովին և Ան. Նեշվորովին։

⁹ Նույն տեղում։

¹⁰ ГАРО, ֆ. 5, օլ. 1.д. 134, լ. 4, 11. դ. 301, լ. 5.

¹¹ Նույն տեղում, գ. 368, թ. 21, 22։

1882 թ. ապրիլին գալով Ռուստով նա Պետրոս և Պլատոն Փեշեբերովների միջոցով կապ է հաստատում երկաթուղու արհեստանոցի բանվորների հետ և ակտիվ մասնակցություն բերում նարոդովոլուական գաղափարների տարածմանը: Ս. Փեշեբերովի, Ա. Նեշվոլովովի և Ա. Լիտվինովի Ռուստով գալով աշխուժանում է նարոդնիկական խմբակների գործունեությունը, ընդամենը նրանց շարքերը: Վիթխարի աշխատանք է կատարվում բանվորական շրջանում և ուսանողության մեջ նարոդնիկական գաղափարների տարածման ուղղությամբ:

Խուզարկության ժամանակ բռնագրավվում է այդ խմբակների գույքը, իսկ այդ ժամանակ Թետերբուրգում գտնվող Ս. Փեշեբերովի մոտ հայտնաբերվում է գաղտնագրված գրագրություն՝ նարոդնիկական խմբակների վերաբերյալ: Մերոր և Պետրոս Փեշեբերովները հրաժարվում են որևէ ցուցմունք տալուց: Փեշեբերովների մայրը՝ Մարիանը, նրանց եղբայր Ավետիք և Յ. Կայալովը պնդում էին, որ իրենց տանը ոչ մի բանվոր չի եղել, որ հավաքվել են միայն ուսումնարանի աշակերտները և մասնակցել գրական ընթերցումներին:

Համապատասխան մարմինների գողմից կատարված քննություններից պարզվում է, որ Ռուստովում գոյություն են ունեցել խմբակներ և որ Փեշեբերով եղբայրները և նրանց համախուները փորձել են բանվորների շրջանում ստեղծել հեղափոխական նպատակներ հետապնդող գաղտնի ընկերություն: 1883 թ. հոկտեմբերին Ալեքսանդր ԻІ-ի հրամանով Ս. Փեշեբերովը աքսորվում է Սիբիր, իսկ նրա եղբայրները ենթարկվում են տարբեր պատիճների¹²:

Ս. Փեշեբերովի գլխավորած խմբակների գործունեությունը կարելու նշանակություն ունեցավ Ռուստովի և Նախիջևանի բանվորական շրջաններում նարոդնիկական գաղափարների տարածման համար: Պատահական չէ, որ Հարավային Ռուսաստանում գործող նշանավոր նարոդնիկ Ա. Բախը Ռուստովի նարոդովոլցիներին «Փեշեբերովի խմբակ» էր անվանում: Նա, միաժամանակ, նշում էր, որ այդ խմբակը լայն կապեր ուներ ոչ միայն կենտրոնական Ռուսաստանի շրջանների, այլ նաև Տավանրոպի, Եյսկի, եկատերինոդարի, Ստավրոպոլի հետ¹³:

Ս. Փեշեբերովի ձերբակալությունից հետո նարոդնիկական խմբակների գործունեությունն իսպառ չի գաղարում: 1884—1885 թթ. նարոդովոլցիների ականավոր դեմքերից, Կ. Մարքսի բարեկամ Գ. Լոպատինը, Վ. Սուխոմլինը, ինչպես նաև Ս. Իվանովը, Ա. Բախը, Պ. Յակուբովիչը և

արիշներ ցանկանալով վերականգնել կազմալուծված նարոդնիկական կազմակերպությունները, մեկնում են Հարավ: Նրանք մեծ հույսեր էին կապում Ռուստով-Նախիջևանի հետ, ուր և սկսում են գործնական քայլերի գիմել: Այս տարիներին նարոդնիկական շարժումներին ակտիվ մասնակցող հայ մտավորականության երիտասարդ ներկայացուցիչներից էին Ռ. Զերնիշնը, Պ. Փեշեբերովը, Մ. Պոպովը, Ս. Կայալյանը, Ս. Շապովալովը, Գ. Խոջաներ և ուրիշներ:

Գ. Լոպատինի ձերբակալության ժամանակ ոստիկանության ձեռքն է ընկնում նաև տեղի նարոդնիկական կենտրոնական խմբի անդամների երեք հոգուց բաղկացած ցուցակը, որոնց մեջ էին Ռաֆայել Զերնիշնը և Պետրոս Փեշեբերովը:

1884 թ. նովոչերկասկում բանտարկվում է Հակոբ Շապովալովը: Նա տեղական նարոդնիկական կազմակերպությունների ակտիվ գործիչներից էր և զբաղվում էր նաև զենքի պատրաստման և գաղտնի տպարանի տրնօրինման հարցերով: Նրա գործունեությանը բարձր գնահատական էին տախու Ա. Բախը, Վ. Սուխոմլինը և ուրիշներ¹⁴:

Ռուստով-Նախիջևանյան նարոդովոլական խմբակների ակտիվ մասնակիցներից էր Մելքոն Կայալյանը: Պետերբուրգի լեռնային ինստիտուտն ընդունվելուց հետո նա ծանոթանում է նշանավոր նարոդովոլական «Մոլոդայա նարոդնայա վոլյա» խմբի կազմակերպիչ Պ. Յակուբովիչի հետ: Վերջինիս ազգեցությամբ Կայալյանը գործունեություն է ծավալում նաև իր ծննդավայր նոր Նախիջևանյան: Նարոդովոլական գաղափարներով համակված նրան համախոն հայ երիտասարդների մեջ, հիշվում հն Տավանրոպի գիմնազիան ավարտած բժիշկ Ունանյանի, Ս. Պոպովի, Ս. Փեշեբերովի, Ա. Քեշեկյանի, Մ. Ոսկերչյանի անունները: 1889 թ. Սուլը հաշ վանքում արտասանելով «Մայր Հայրենիք», «Ազատն աստված» քանաստեղծությունները, Կայալյանն իր ընկերների հետ նշում է Մ. Նալբանդյանի ծննդյան 50-ամյակը: Նա ուսանել էր կազարյան ճեմարանում, ուստի և քաշածանոթ էր հայոց լեզվին ու գրականությանը:

Կայալյանը ձերբակալվում է, դատապարտվում 25 տարով և աքսորվում Սիբիր: 1905 թ. քաղաքական այլ աքսորյալների հետ նա վերադառնում է Ռուստով, ուր և 1913 թ. վախճանվում է¹⁵:

Չորսի նարոդովոլական խմբակներին մեծ շափով օժանդակում էր Զերնիշների մտավորական ընտանիքը: Ռ. Զերնիշնը տեղի նարոդնիկական ղեկավար գործիչներից էր: Զերնիշների Սուլը հաշ վանքի մո-

¹² Նույն տեղում, գ. 674, թ. 55.

¹³ Ա. Բախ, Վօսպոմնայն նարօվոլցա, «Եյլօէ», 1907, թ. 2, ս. 105.

¹⁴ Ա. Տերեշենկո, նշված հոգվածը, էջ 94.

¹⁵ Ա. Հայնանիսյան, նշված հոգվածը, էջ 26—27.

տակայքում գտնվող ամառանոցը օգտագործվում էր որպես տեղի նարոդովորչիների խմբի հանդիպման վայր: Այստեղ կազմակերպվող հավաքներին մասնակցում էին նշանավոր նարոդնիկներ Ա. Բախը, Ս. Իվանովը, Գ. Լոպատինը և ուրիշներ: Հատկապես 1884 թ. ամռանը՝ Գ. Լոպատինի մասնակցությամբ այնտեղ հաճախ էին նարոդովոլական ժողովներ հրավիրվում: Գ. Լոպատինի մոտ ոստիկանության հայտնաբերած ցուցակի հիման վրա, ի թիվս այլրց, բանտարկվում է նաև Ռ. Զերնիշը: Ինչպես հայտնի է, հայկական գաղղթավայրերից, և ոչ միայն այստեղից, զանազան խնդրանքներով հաճախ դիմում էին մայրաքաղաքում բնակվող և հայկական շրջանակներում մեծ հեղինակություն վայելով, կառավարական ոլորտներում ճանաշում ունեցող Կարապետ Եղյանին: 1885 թ. նոր նախիչեանից Մինաս Խալիբյանը որևէ օժանդակություն կամ գունե հ. Զերնիշի մասին հավաստի տեղեկություն ստանալու համար դիմում է Կ. Եղյանին: Նա գրում էր. «Չեռնիշովի գործն էլ չիմացանք ինչ արին: Նրա հետ կապ ունի Բեշեքերովի գործը, որի (Չեռնիշի—Վ. Բ.) մայրը Պետերբուրգումն է, աշխատում է յուր որդուն արձակել: Որդին էլ այդտեղ է, և պետք է կարծի, որ նա ոչ մի վատ գործ չի արել, միայն բարեկամություն է ունեցել Բեշեքերովի հետ, որովհետև նոստովում մի բակում են ապրել Ս. Ալաջալյանի տանը»¹⁶:

Ռ. Զերնիշովը հիվանդության պատճառով նույն՝ 1885 թ. հուլիսին ազատվում է բանտից, սակայն շուտով մահանում է:

Մ. Խալիբյանի նամակում ակնարկված նոր նախիչեանի մյուս ներկայացուցիչը Պետրոս Փեշեքերովն էր, որը 80-ական թվականների առաջին կեսի նոստով-նախիչեանյան նարոդովոլական կազմակերպության ակտիվ անդամներից էր: Նա կապված էր բանվորական շրջանների հետ, կազմակերպում էր խմբակներ, բանվորներին բացատրում գոյություն ունեցող կարգերի անարդարությունը: 1884 թ. բանտարկվում է նաև Պ. Փեշեքերովը, որը մեծ հարված էր տեղի նարոդնիկական խմբակներին¹⁷:

1884 թ., Գ. Լոպատինի բանտարկությունից հետո փաստորեն ձերբակալվում են նոստով-նախիչեանյան նարոդովոլական խմբի բոլոր անդամները: Զերբակալությունից կարողանում է խուսափել միայն նախիչեանի կարի մեքենաների պահեստի աշխատող Մակար Պոպովը: Վերջինս կարևոր դեր էր կատարում կապ ստեղծելու, գաղտնի գրականություն ստանալու և տարածելու գործում: Նրան հաջողվում է տպագրել «Նարոդնայա վոլյա» թերթի № 10-ը և տարածել: 1885 թ. ձերբակալվում

է նաև Մ. Պոպովը: Նա Պետերբուրգում դատվում է Լոպատինի խմբի հետ «21-ի պրոցեսում» և դատապարտվում մահվան: Սակայն մահապատճեմ փոխարինվում է երկարատև աքսորով՝ Միքիր¹⁸:

Հայ ուսանողների հեղափոխական նարոդնիկական շարժումների մեջ աշքի էր ընկնում Հովհաննիս Մանուչարյանը: 1882 թ. մտնելով Պետերբուրգի համալսարան, հաջորդ տարին վտարվում է մայրաքաղաքից որպես ուսանողական շարժման նարոդնիկ առաջնորդներից մեկը: Նա աքսորվում է հարկով, ուր աշխատում է նարոդնիկական «Զորնի պերեգել» խմբակցության գաղտնի տպարանում:

Հ. Մանուչարյանը Դոնի գորքի մարզի մայրաքաղաք Նովոչերկասկում նարիչտոնով եղբայրների հետ կազմակերպում է ընդհատակյա տպարան: Նարոդնիկական կազմակերպություններին ֆինանսվորելու նպատակով նա մասնակցում է Արմավիրում Օսլայի գործարանի հիմնագրմանը: Նա նախիչեանցի չէր, սակայն կապված էր Ռուստով-Նախիչեան նարոդովոլականների հետ: Հ. Մանուչարյանը մի քանի անգամ փաթիել է նարկովի և Ռուսովի բանտերից: Կալանքի ժամանակ իշխանության օրգաններին դիմադրություն ցույց տալու համար 1885 թ. դատապարտվել է մահվան, որը փոխարինվել է 10 տարվա տաժանակրության: Եղիսելիրուրգում նա կալանքի մեջ է եղել շուրջ 20 տարի, որից հետո մինչև 1905 թ. եղել է Սախալինի աքսորավայրում¹⁹:

Պետերբուրգում 1884 թ. նարոդնիկական շարժման մեջ մեղադրվող 142 ուսանողների մեջ էր Ռուսական Ասատուրովան: Նրա հայրը՝ նոր նախիչեանի վաճառական Ասատուրանը Ռուստով-Նախիչեանցի նիկիտա և սկանոնը Տագանրովում կազմակերպում է նարոդնիկական խմբակ: 1880-ական թվականների կեսերին նարոդնիկական կոչեր են տարածում կուսպարոն Փեշեքերովը, Եմելյան Կայալյանը և ուրիշ նախիչեանցիներ²⁰:

Իրավացի է հարավային Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի նախորդնիկական շարժման անցքերը հետազոտող պատմաբան Ա. Գ. Տերեշենկոն, երբ գրում է. «Ռուստով-Նախիչեանյան նարոդովոլական խորմակների գործունեությունը հայտնի շափով հաջող կարող էր լինել,

¹⁸ Նույն տեղում, էջ 98:

¹⁹ Ա. Հավիաննիսյան, նշված հոդվածը, էջ 26:

²⁰ ԳԱРО, Փ. 829, օպ. 1, գ. 533, լլ. 88, 127.

նրանցում նորնախիջևանցիների մասնակցության շնորհիվ, բանի որ նրանք ունեին կոնսպիրատիվ լավ կապեր, միջոցներ, բնակարաններ և այլն:

Ռուսով-Նախիջևանյան նարոդովոլական խմբակների մի շարք առավել կարևոր աշխատանքներում գործուն մասնակցություն էին ունենում շատ նորնախիջևանցիներ, որոնք դրսեորիլ էին իրենց որպես կարող պրոպագանդիստների, փորձված կոնսպիրատորների, վճռական զործողությունների պատրաստ անձնավորությունների»²¹:

Ռուսով-Նախիջևանյան նարոդովոլական խմբակը փաստորեն հարավի կենտրոնական կազմակերպությունն էր, որը կապեր ուներ Պովոլժիեի, Ուկրաինայի, Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Տագանրոգի, նովչերկասկի, Խարկովի խմբակների հետ:

Նոր նախիջևանի նորողնիկների գործունեությունը նշանակալից հետք է թողել երկրի հարավի հեղափոխական շարժումների պատմության մեջ: Այդ խմբակները ինտերնացիոնալ կազմ ունեին և այդ առումով նման էին Ռուսաստանի կենտրոնական քաղաքաներում ու նահանգներում գործող նարոդնիկական կազմակերպություններին:

Ռուսաստանի նարոդնիկական շարժման մեջ 1880-ական թվականների սկզբներից, մանավանդ 1881 թ. մարտիմեկյան ահաբեկումից հետո տեղատվություն սկսվեց. շարժուն սկսեց ընթանալ լիբերալիզմի ուղիղով: Հետագայում նարոդնիկական կազմակերպությունների ամենահասուն տարրերը հարեցին գիտական սոցիալիզմին:

Նարոդնիկների մյուս մասը տեսնելով, որ սոցիալիզմի իրենց պրոպագանդան տեղ չի հասնում, ցանկալի արդյունք չի տալիս, իսկ լիբերալների ծրագրերում անտեսվում են Ռուսաստանում բնակվող այլ ժողովրդների ազգային ազատագրության հարցերը, սկսեցին աստիճանաբար հրաժարվել համառուսաստանյան խնդիրներ արծարծելուց: Այդ բանը կատարվեց առավելապես Ռուսաստանի ծայրամասերի, այդ թվում և Անդրկովկասի նարոդնիկների շրջանում: Այստեղ գործող, ազգային կազմ ունեցող խմբակները շրջվեցին դեպի արևմտահայության աղատագրության խնդիրը²²: Նարոդնիկական այդ կազմակերպությունները հետագա տարիներին մեծ մասամբ միախառնվելով ազգային-ազատագրական խմբակներին դարձան ձևավորվող հայկական քաղաքական կուսակցությունների հիմնական տարրերից մեկը:

21 Ա. Տերշչենկո, նշված հոդվածը, էջ 98—99.

22 Մ. Ներսիսյան, նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան, 1940, էջ 74—79.

Համանման երեսով տեղի ունեցավ նաև Մոսկվայի և Պետերբուրգի ուսանողության շրջանում: Նարոդնիկական տրամադրություններով համակված հայ երիտասարդությունը սկսեց զբաղվել Հայկական հարցով: 1882 թ. գարնանը նրանք Մոսկվայում հիմնադրեցին «Հայրենասերների միություն» կազմակերպությունը, որն իր հիմնական խնդիրն էր համարում Արևմտյան Հայաստանի ազատագրումը: Նորաստեղծ կազմակերպության անդամներն իրենց բացարձակ մեծամասնությամբ Անդրկովկասի տարբեր հայաբնակ վայրերի ուսանողներ էին: Նարոդնիկական ազդեցությունը որոշակիորեն կրող այդ կազմակերպությունը հրատարակեց «Ազատության ավետարեր» իր օրգանը: «Հայրենասերների միությունը» Թիֆլիսում ունեցավ իր մասնաճյուղը, որի մեջ ընդգրկվեցին առաջավոր շատ երիտասարդներ: Նրանց մեծ մասը համակված էր նարոդնիկական տրամադրություններով²³: «Ազատության ավետարեր» թերթը լայն տարածում էր գտնում և հասնում մինչև Վան: Թերթի համարներից մեկում տպագրվում է Ռ. Պատկանյանի «Ազգային երդում» և «Օրհաս» («Երկունք Հայաստանի») բանաստեղծությունները: Առհասարակ Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը և Բաֆֆին մեծ ազդեցություն ունեին նարոդնիկական երիտասարդության վրա: Հատկանշական է, որ 1884 թ. Թիֆլիսի ազգային նարոդնիկական խմբակներից մեկը Ալ. Շիրվանզադեի մասնակցությամբ խմորատիպ վերահրատարակում է Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկը, որը տարածվել է Թիֆլիսում և գավառներում²⁴:

Այսպիսով, արեւելահայ նարոդնիկական խմբակներն ու նարոդնիկական գաղափարներով տարված առաջադեմ երիտասարդությունը սոցիալական խնդիրներին զուգընթաց գրեթե ամենուրեք դնում էին նաև ազգային ազատագրության հարցեր: Ինչպես տեսանք նոր նախիջևանում դրությունը փոքր ինչ այլ էր: Թեպետև այնտեղ նարոդնիկական շարժումը զուգադիպում էր թեղինի կոնգրեսին ու Հայկական հարցի առաջացմանը հաջորդող արևմտահայության պատմական բախտի նկատմամբ ակտիվ հետագրքության տարիներին, թեպետև նախիջևանում ուժեղ էր Ռ. Պատկանյանի ազդեցությունը, այնուամենայնիվ այստեղ նարոդնիկական կազմակերպությունները ազգային խնդիրներ չէին շոշափում և մնացին միայն սոցիալական պայքարի ոլորտում:

23 Ա. Հովհաննեսյան, 1880-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարոդնիկական խմբակները («Բանիքը Հայաստանի արխիվների»), 1968, 1, էջ 130—133.

24 Նույն տեղում, էջ 134.

Այդ երևույթը բացատրվում է նրանով, որ Դոնի երիտասարդության վրա շատ ուժեղ էր համառուսաստանյան նարողնիկական շարժման ղեկավարների գաղափարական և քաղաքական ազդեցությունը, եվ հետպատք է նկատի ունենալ նաև այն, որ նոր նախիչեանի գաղութը որքան էլ լիներ հայտկենտրոն, այնուամենայնիվ ավելի հեռու էր Թուրքիայից և ողջակիզվող արևմտահայերի ձայնն Անդրկովկաս ավելի շուտ էր հասնում քան Դոնի ափերը:

Նոր նախիչեանի նարողնիկական շարժման ղեկավարները թույլ տվեցին, այսպես ասած, նաև տակտիկական սխալներ։ Նրանք փորձեր շարեցին իրենց գործունեության ոլորտի մեջ ընդգրկելու քաղաքի հետ բազում թելերով կապված, կոնսպիրատիվ աշխատանքի լավագույն համարավորություններ ընձեռող, հայկական գյուղերի բնակչությանը։ Համենայն ղեպս հայտնի չէ գյուղական բնակչության հետ կապվելու որին փաստ։

Դոնի նարողնիկական շարժումը էական նշանակություն ունեցավ հայկական գաղութի առաջադեմ մտավորականությանը, առաջին հերթին երիտասարդությանը սոցիալական պայքարի մեջ ընդգրկելու, նրա քաղաքական հասունացման գործում։

Հ. ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1860—70-ական թվականներին բուրժուական ուժորմներից հետո հարավային Ռուսաստանում կապիտալիզմի առաջընթացը թեպետև կատարվում էր ավելի արագ, սակայն բուրժուազիան դեռևս որպես դասակարգ, այն աստիճան չէր առնականացել, որպեսզի դառնար քաղաքականուժ։ Նոր ձեռավորող բանվոր դասակարգը հասուն չէր քաղաքականապես և չուներ իր ղեկավար կորիգը՝ կուսակցությունը։

1880-ական թվականներից արդյունաբերության զարգացումը, կադրային բանվորության աճը, նարողնիկական ագիտացիան օբյեկտիվ պայմաններ էին ստեղծել մարքսիզմի տարածման համար։ Բանվորական գործադրության պայքարը հասունացնում էր Դոնում սեփական կազմակերպություն ունենալու գաղափարը։ Առաջին կազմակերպությունը, որի մեջ մտան Դոնի առաջավոր բանվորները, շուրջ մեկ տարի գոյություն ունեցած 1875 թ. Օդեսայում կազմակերպված «Հարավային Ռուսաստանի բանվորների միություն» էր։ Նարողնիկական ազգեցությունը կրող այդ «Միությունը» ձեռավորվել էր Օդեսայում և Ռուսությում միաժամանակ

կազմակերպված ընկերությունների հիման վրա։ Վերջիններս էլ ունեին իրենց առանձին խմբակները²⁵։

Այդպիսի խմբակներ էին կազմակերպվում Ռուսություն, Տագանրոպում, Վլադիկավլիկի երկաթուղու որոշ կայարաններում և այլ տեղերում։ Այդ խմբակների մեջ առաջատար դեր էր կատարում Վլադիկավլիկավի երկաթուղու գլխավոր արհեստանոցում 1882 թ. կազմակերպված «Կենտրոնական բանվորական խմբակը»։ Կենտրոնական խմբակը ստեղծել էր լավ գրադարան և ուսումնասիրում էր Մարքսի, Էնգելսի, Զերնիշևսկու, Լասսալի, Լիբկնեխտի աշխատությունները։ 1883 թ. «Կենտրոնական»-ը հեկտոգրաֆով անլեգալ հրատարակում է «Բանվոր» ամսագիրը²⁶։ 1880-ական թվականներին բանվորական այդ խմբակները, որոնք գործում էին նարողնիկական խմբակներին զուգահեռ և նկատելի շափով կրում ըրանց ազգեցությունը, իրենց ծրագրերում դնում էին նաև նարողնիկական շրջանակներից դուրս եկող խնդիրներ։

Հարկ է նշել, որ XIX դարի վերջերից տնտեսական կյանքի զարգացման, մասնավորապես արդյունաբերական ձեռնարկություններն առանձին ընկերությունների մեջ միավորվելու հետևանքով նոր նախիչեանը Ռուսություն քաղաքի հետ մի ամբողջություն էր կազմում։ Մանավանդ սոցիալ-քաղաքական երևույթները երկու քաղաքների համար էլ ընդհանուր էին։ Այդ առումով նոր նախիչեանը Ռուսություններին մի մասն էր կազմում և առավել կամ նվազ շափերով մասնակցում այնտեղ խմորվող ու հասունացող քաղաքական իրադարձություններին։ Այդ հանգամանքն ավելի քան հասկանալի կտառնա, եթե նկատի առնենք, որ հարավային Ռուսաստանի առետրաարդյունաբերական, առհասարակ տնտեսական հիմնական կենտրոն Ռուսություն քաղաքը Դոնի ավազանում և Հյուսիսային Կովկասում ուղղություն տվող դեր էր կատարում հասարակական մտքի զարգացման, սոցիալ-քաղաքական կյանքի մեջ։

Դոնում առաջին մարքսիստական խմբակն առաջացել է 1888 թվականին։ Դրա կազմակերպիչն էր Ն. Մուրավիլովը։ Նա չէր ընդունում նարողնիկական հայացքները, մասնավորապես տեղորի քաղաքականությունը։ Նա իր կազմակերպած խմբակներում խորապես ուսումնասիրում էր մարքսիստական գրականությունը, ուսուական իրականության տնտեսական կամ քաղաքական երևույթները համեմատում Եվրոպայում կատարվող իրողությունների հետ և համապատասխան մեկնաբանումներ ու հե-

²⁵ «Рабочее движение в России в XIX веке», т. II, ч. 2, М., 1951, с. 104—106.

²⁶ «Очерки истории партийных организаций Дона», ч. 1, 1898—1920, Ростов н/Д, 1973, с. 27—28.


անություններ անում: Նրա կազմակերպած խմբակներին մասնակցում էին՝ բանվորներ, ծառայողներ և սովորող երիտասարդներ: Ն. Մուրավիլովը և նրա ընկերները նշանակալից աղջեցություն ունեցան Դոնի և Հյուսիսային Կովկասի շատ քաղաքներում մարքսիզմ տարածելու և սոցիալ-դեմոկրատական խմբակներ հիմնելու գործում²⁷:

Սոցիալական ընդհանուր հակասությունների սրման հետ մեկտեղ գործադուզային շարժումներն ամբողջ երկրում, այդ թվում և Դոնի ավազանում, դանդաղ, սակայն հետեւողականորեն ծավալվում էին: Դրանց մեջ կարենը էր հատկապիս Վլադիկավագի երկաթուղու գիխավոր արհեստանոցի 1894 թ. գործադուզը: Ռուստովի այդ գործադուզը էական նշանակություն ունեցավ Դոնի մարզի և դրա սահմաններից դուրս բանվորական և սոցիալ-դեմոկրատական շարժումների խթանման համար: Պատահական չէ, որ հետագայում լենինյան «Խսկրան» այդ գործադուզը համարեց սոցիալ-դեմոկրատիայի կողմից ղեկավարվող 1890-ական թվականների բանվորական շարժումների խոշոր երևույթներից մեկը²⁸:

1895 թ. Ռուստովում ձեւավորվում է առաջին սոցիալ-դեմոկրատական, «Կենտրոնը», որը միավորում էր մարքսիստական շուրջ 10 տեղական խմբեր: Ռուստովից բացի մարքսիստական խմբակներ կային նովոչերկասկում, Տագանրոգում, Նախիչևանում և Դոնի այլ քաղաքներում²⁹:

1898 թ. ՌՍԴԲԿ Մինսկի առաջին համագումարից և պաշտոնապես Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն հիմնելուց հետո Մոսկվայի, Եվանովովովսկի, Կիևի, Օդեսայի և այլ քաղաքների սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն սկսեցին ձեւավորվել որպես դրա կոմիտեներ: Նույն տարում Ռուստովում ևս ստեղծվում է ՌՍԴԲԿ Դոնի կոմիտե³⁰: Դրա ձեւավորումը պայմանավորված էր Ռուստովի սոցիալ-դեմոկրատների նախընթաց աշխատանքով: Դոնի կոմիտեի ստեղծումը հսկայական նշանակություն է ունենում Դոնի մարդում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասում սոցիալ-դեմոկրատական շարժման հետագա ծավալման համար:

Դոնի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությանը մեծապես նպաստում էր 1900 թ. հիմնադրված լենինյան «Խսկրան»: «Խսկրան» իր շշերում հաճախ էր անդրադառնում և նյութեր տափարում Դոնում կատարվող իրադարձությունների մասին: 1902 թ., օրինակ, «Խսկրան» գրում էր, որ Դոնի կոմիտեի պրոկլումացիաները Ռուս-




27 Նույն տեղում, էջ 30—33:

28 «Искра», № 30, 1902 г.

29 «Очерки истории партийных организаций Дона», с. 45.

30 Նույն տեղում, էջ 51:



Այս գիտման վեց թուրքական գրադարանից պահպան է:

տովից ու Նախիջեանից բացի տարածվել են Տագանրոգում, Նովչերկասկում, Ալեքսանդրովսկ-Գրոշեսկում, Նովոռոսիյսկում, Արմավիրում և ամենուրեք լավ ընդունելություն գտել³¹:

Աշխայն Դոնի այլև ամբողջ Ռուսաստանի հեղափոխական շարժումների մեջ խոշոր երեսույթ էր Ռոստովի 1902 թ. նոյեմբերյան գործադուլը: Գործադուլը սկսում են Վլադիկավկազի երկաթուղու գլխավոր արհեստանոցների բանվորները: Նոյեմբերի 3-ին Դոնկոմի հրավիրած սոցիալ-դեմոկրատների և առաջավոր բանվորների խորհրդակցությունը վճռում է պաշտպանել բանվորների պահանջները և ընդհանուր գործադուլ հայտարարել: Դոնկոմի կոչով գործադուլավորներին միանում են քաղաքի մյուս գործարանների հազարավոր բանվորներ: Գործադուլավորներին են միանում նաև Նախիջեանի մի քանի ծեռնարկությունների աշխատողները: Դոնի զորքի պետ ատաման Սվյատոպոլկ Միհակին գործադուլավորների գեմ հանած զորքի և ոստիկանության համատեղ գործողությունների մասին ուղարկան մինիստրին տված զեկուցագրում նշում էր: «Վլադիկավկազի երկաթուղու արհեստանոցի բանվորների գործադուլի վիճակար ազդեցությունը արգեն զգացվում է տեղի ֆարբիկաների ու գործարանների բանվորների տրամադրությունների վրա: Դրանցից Նախիջեանում գտնվող երեք գործարանների բանվորներ դադարեցրել են աշխատանքները»³²:

Ռոստովի գեպքերի ազդեցությամբ գործադուլ են անում Նովոռոսիյսկ քաղաքի և Տիփորեցկ կայարանի բանվորները:

Քսաներեք օր տևող գործադուլային այդ աննախադեպ պայքարը հսկայական նշանակություն ունեցավ և ցուց տվեց, որ բանվորական շարժումը բարձրացել է նոր, ավելի բարձր աստիճանի:

Վ. Ի. Լենինը «Նոր իրադարձությունները և Հին Հարցերը», «Առաջին դասերը», «Խնդնակալությունը և պրոլետարիատը» և այլ հոդվածներում Ռոստովի 1902 թ. գործադուլը բարձր է գնահատում և համարում համառուսաստանյան երեսույթը³³:

Հաջորդ տարում պրոլետարիատի պայքարն ամբողջ երկրում ավելի մասսայական բնույթ է ստանում: 1903 թ. մարտին Ռոստովում տեղի է ունենում 30 հազար աշխատավորության հզոր ցույց: Ցուցարարները

³¹ «Искра», № 22. 1902.

³² «Наш край», документы по истории Донской области (XVIII—начало XX века), Ростов н/Д, 1963, с. 334.

³³ Վ. Ի. Լենին, Ելժ, հ. 7, էջ 73—81, 4. 9, էջ 150—163, 303—308.

հանդես էին գալիս ինքնակալության դեմ ուղղված քաղաքական լոգունդներով³⁴:

Այդ նույն ժամանակ, սոցիալ-քաղաքական ընդհանուր բնույթ կրող պայքարից բացի, նոր նախիշեանում տեղի էին ունենում նաև զուտ ազգային հողի վրա կատարվող հայկակառավարական հուղումներ: Դրանք ցարիզմի կողմից տակավին XIX դ. վերջերից հայ ժողովրդի դեմ սկսված հալածանքների հետևանք էին:

1903 թ. հունիսի 12-ին ցարական կառավարությունը որոշում ընդունեց հայկական եկեղեցու գույքը պետականացնելու վերաբերյալ: Հարական նոր օրենքն ուղղված էր առաջին հերթին հայկական դպրոցների դեմ, քանի որ դրանք պահպան էին գերազանցապես եկեղեցական միջոցներով:

Այդ նոր օրենքը և առիթ, և պատճառ դարձավ ժողովրդի խուլ դրժությունը վերածելու բացահայտ անհնաղանդության: Հատկապես մեծ ցուցեր, ելույթներ, դինված ընդհարումներ տեղի ունեցան Անդրկովկասում: Եղան բազմաթիվ մարդկային զոհեր: Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան կոչեր, թուոցիկներ հրատարակեց՝ ընդդեմ ցարիզմի ազգահական քաղաքականության և ողջունեց ժողովրդի արթնացումը³⁵:

Հայ մտավորականության և հասարակական տարբեր խավերի մեջ լայն շաբթում սկսվեց՝ ընդդեմ կառավարության այդ քաղաքականության: Լենինյան «Խորան» անդրադապավ այդ խնդրին, տպագրեց ինքնակալության քաղաքականությունը մերկացնող Բ. Կոնյանցի «Նոր ավազակություն» հոդվածը³⁶: Ոչ միայն ուսւահայ գաղթօջախների բնակչությանն էր համակել համաժողովրդական այդ հուղումը, այլև արևմտահայությունը արձագանքեց ցարական կառավարության դեմ ուղղված այդ շարժմանը:

Նոր նախիշեանի Սուլր Խաչ վանքի վանահայր Վահան վարդապետ Տեր-Գրիգորյանի՝ Հայոց կաթողիկոսին ուղղած հայտարարությունից պարզ են դառնում նոր նախիշեանում հայկական եկեղեցու ունեցվածքը պետականացնելու օրենքի կենսագործման մանրամասները:

Ենթամբեր ամսին իրավասու բոլոր հոգևոր գործիչները նոր նախիշեանի քաղաքային խորհրդարանի դահլիճում հրավիրվում են ժողովի: Նրանց ծանոթացնում են 1903 թ. հունիսի 12-ի բարձրագույն հրամանին և ներքին գործոց նախարարի հրահանգին: Հրահանգը հորդորում

էր հոժարակամ հանձնելու եկեղեցիների ու վանքերի շարժական ու անշարժ ունեցվածքը:

Մի քանի օր անց Առլր Խաչ վանք է գալիս նոր նախիշեանի ոստիկանության լիազորը և պահանջում վանքի ելումուտի մատյանը, վարձակալների հետ կնքված պայմանագրերը և այլ վավերագրեր: Դրական արդյունքի շասնելով նա վիրադառնում է:

Հոկտեմբերի 6-ին վանք են գալիս բարձրագույն հրամանը իրագործելու նպատակով ստեղծված հանձնաժողովի երեք անդամները՝ Դռնի զորքերի ատամանի տեղակալ Դոբրինը, Ռոստովի ոստիկանապետը և նախիշեանի լիազոր ոստիկանը: Թեպետե իրենց մոտ ամեն ինչ գրանցված էր, այնուամենայնիվ, զննում են վանքը, օժանդակ շինությունները, պարտեզը, բանջարանոցը, ամառանոցը, ծանոթանում եկամուտների մատյանին³⁷: Նրանք վանքին են թողնում սոսկ մեկ դեսատին տարածություն զբաղեցնող բակը և երկու հարակից տնակի: Պետականացնում են վանքի 450 դես. վարելահողերը, 10 դես. Հողամաս զբաղեցնող բանջարանոցը, 8 դես. տարածք ունեցող պարտեզը և քարհանքերը: Ապա Խոստով են հրավիրում վանքի վարելահողերի և այլ ունեցվածքի վարձակալներին, ստուգում նրանց պայմանագրերը և խստորեն պատվիրում վարձակալական վճարը վանքին տալու փոխարեն այսուհետև մուծել պետական գանձարանը³⁸:

Սուլր Խաչ վանքում կառավարական այդ հրամանի իրագործումն այնպիսի դիմադրության է հանդիպում, որ տեղական իշխանությունները հայկական գաղղութից արտաքսում են ժառանգավորաց դպրոցի ուսուցիչներ, մտավորականներ վանահայր Վահան Տեր-Գրիգորյանին և նաև հապետ վարդապետի նահապետյանին³⁹:

Յավոք, շեն պահպանվել նոր նախիշեանի վեց եկեղեցիների գույքի բռնագրավման վերաբերյալ եղած վավերագրերը: Անուղղակի տվյալներից, սակայն, պարզ է դառնում, որ այստեղ ևս գործը սուր բնույթ է կրել և խաղաղ ձևով լի ավարտվել: Այսպես, հետագա տարիներին վերաբերող ուստիկանական վավերագրերը պատմում են 1903—1904 թթ. տեղի ունեցած անցքերին մասնակից անձնավորությունների մասին:

Ուստաստանի առաջին հեղափոխությանը հաջորդող ուեակցիայի տարիներին, հայկական շարժման հետ առնչություն ունենալու մեջ մեջ

37 ՀԿՊԱ, ֆ. 54, գ. 2174, թ. 1:

38 Նույն տեղում, թ. 2:

39 Օգտվում ենք ժառանգավորաց և ապա թեմական դպրոցների առն, նշանավոր իրավաբան և դասախոս Գրիգոր Զուրարյանի գրավոր հուշերից: Այն մեզ տրամադրեց պրոֆ. Ա. Ն. Մնացականյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում:

34 «Очерки истории партийных организаций Дона», с. 88—91.

35 Խ. Հ. Թարգելյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, Երևան, 1967, էջ 406—422:

36 «Հօքր», № 49, 1903:

զաղրվում էր Մուշե Դանագյուղաճը: Այդ կասկածները ճշտելու նպատակով Դոնի գորքերի մարդացին վարչությունը 1909 թ. հունիսին տեղեկություններ է պահանջում Ռուսովենախիշևանյան ոստիկանությունից: Վերջինիս Հաղորդած տեղեկությունների հիման վրա Ռուսությի քաղաքական Դոնի գորքի առամանին հայտնում է Հետեյալը. «Դոնի Նախիշևանի Հոգեոր վարչության և Հոգեոր սեմինարիայի Հոգարածության պետ Մուշե Դանագյուղաճը 1904 թ. փետրվարին Նախիշևանում տեղի ունեցած խառնակությունների ժամանակ, որ առաջացել էին Հայկական Եկեղեցական գույքը պետականացնելու պատճառով, աքսորվել է քաղաքական սահմաններից՝ ուղարկան դրության ամբողջ ընթացքում»:

Հիշյալ վաճառայրը բնակվել է Մոսկվայում շուրջ մեկ ու կես տարի: Ագմինիստրացիայի կարգադրությամբ 1905 թ. ապրիլի 8-ին վերադարձել է Նախիշևան, ուր և այժմ բնակվում է»⁴⁰:

Մարգարին և տեղական ոստիկանական վարչությունների փոխանակած գաղտնի այս գրությունից պարզ է դառնում, որ Նախիշևանում եկեղեցական գույքը պետականացնելու վերաբերյալ ցարական օրենքը կիրառվելու հայ հասարակայնության կողմից այնպիսի գիմադրություն և «խառնակություն է» տեղի ունեցել, որ վերադաս իշխանություններն անհրաժեշտ են դառնել քաղաքից արարել անզամ տեղի հոգեոր պետին:

Նոր Նախիշևանի բնակչության տարերի համընդհանուր ընույթ կրող այդ հուզուաններին միանում է նաև թեմական դպրոցի աշակերտությունը: «Մեր տեսուչ կարգադրությամբ, —վերհշում է 1903 թ. դեպքերը Գ. Զուբարյանը, —դպրանոցի դռները գոցել էին և պահակներ կանգնեցրել, սակայն մեզ հաջողվեց երկրորդ Հարկի պատուհանից պարաններով իջնել և դիմել գիտի բազմահազար դիմադրող ժողովուրդը և քարերով կովել գններալ Աբրամովի Կազմակային գումարտակի գեմ»⁴¹:

Դոնի հայ հասարակությունն անհանգստացած էր և միջոցների էր դիմում, որպեսզի կանխի Նախիշևանի թեմական դպրոցին պատականող Ղրիմի Թեոդոսիա քաղաքի Խալիբյան Նախիշևանի երկարականի շենքի պետականացումը, որն իրականացվում էր այդ նույն օրենքով⁴²:

* * *

Ռուսաստանյան 1905—1907 թթ. առաջին բուրժուական Հեղափոխությունը բավականաշափ ուժեղ արտահայտվեց նաև Դոնում:

⁴⁰ ЦГИА СССР, ф. 821, оп. 7, д. 345, л. 105, 106.

⁴¹ Ցիոռում ենք Գ. Զուբարյանի հուշերից:

⁴² ՀԿՊ(Ա), ֆ. 10, գ. 81:

Հասումացող Հեղափոխությունից ցարիզմը, ինչպես հայտնի է, ելք էր որոնում Հաղթական պատերազմի մեջ: Ռուս-ճապոնական պատերազմի հենց սկզբում Դոնում իշխանության պաշտոնական ներկայացուցիչները ցանկանալով ժողովրդի մեջ արթնացնել առ կայսրը նվիրվածության ոգացմունքներ, սկսեցին կազմակերպել «Հայրենական» ցուցեր: Մակայն երկաթուղարիների նման հավաքներից մեկում ցարական գիներալի ելույթի ժամանակ ամրութի միջից հնչում է «Կորչի ինքնակալությունը» կոչը: Անմիջապես տարածվում է Դոնկոսի հրատարակած «Ռուսական իշխանությունների հրատարական պրոկլամացիան» Տեղական իշխանությունների ծեռնարկած այդ միջոցառումը ցանկալի արդյունքների շի հանգեցնում:

Պետերբուրգի 1905 թ հունվարի 9-ի արյունոտ կիրակիի գեպքերը լայն արձագանք չգտան Դոնում, քանի որ մասսայական բանտարկությունների միջոցով կանխվեց նախապատրաստվող գործադուլային շարժումը: Մակայն առհասարակ կանխել հասումացող Հեղափոխական շարժումները, անհնարին էր: Եվ ահա փետրվար ամսից սկսվում են Ռուսությունը, նոր Նախիշևանի, նովոչերկասկի, Տագանրոդի բանվորների գործադուլները: Ընդամենը 20 օրվա ընթացքում, փետրվարի 14-ից մինչև մարտի 5-ը գործադուլ են անում Ռուսություն և Նախիշևանի 24 գործարանների ու ձեռնարկությունների բանվորներ, որոնց մասնակցում է շուրջ 3,5 հազար մարդ⁴³:

1905 թ. ամռանը տեղի ունեցած առավել նշանակալից իրադարձությունը դա Կուրանի, Թերեքի և Դոնի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների համատեղ ուժերով կազմակերպված գործադուլն էր: Այն ընդգրկեց Վլադիկավկազի ամրող երկաթուղու բանվորներին: Գործադուլն ընդունեց աննախազեպ ծավալ, գնացքների շարժումն ամբողջովին դադարեց: Շուտով, երկաթուղարինների հետ համերաշխելով, գործադուլ հայտարարեցին «Աքսայ» գործարանի, տպարանի և Քուշնարյանի ծխախոտի Փաբրիկայի բանվորները⁴⁴:

Գործադուլի ընթացքում ի հայտ եկավ Դոնկոսի մենշևիկյան ղեկավարության համաձայնողական քաղաքականությունը: Հեղափոխության ամբողջ ընթացքում Դոնի բոլշևիկները միշտ էլ համառ պայքար են մղել սոցիալ-դեմոկրատակայում գերակշռություն ունեցող մենշևիկյան թիվ գեմ: Այդ տարիներին Ռուսությունի իր շրջակայքի հետ բաժանվում էր երեք

⁴³ ГАРО, ф. 829, оп. 1, д. 15, л. 18.

⁴⁴ «Наш край», с. 356.

⁴⁵ «Очерки истории партийных организаций Дона», с. 138—139.

շրջանի՝ թեմերնիկի, Քաղաքային և նախիչևանի: Դրանցից միայն թեմերնիկի շրջանային կոմիտեի ղեկավարությունն էր գտնվում բոլցեկների ձևութիւն:

Համերաշխելով Խոստովի կառապանների ելույթին, հույսին մեկ շաբաթով գործադում են անում նաև նախիչևանի կառապանները՝ «անորությալ կյանքի, ցածր աշխատավարձի և քաղաքային վարչությունից դժգո՞ւ լինելու համար»⁴⁶:

Հոկտեմբեր ամսին ամբողջ Երկրում ծավալված գործադուլային շարժումն ընդգրկում է նաև Դոնը: Տեղի պահնորդական բաժնի պետ սոտմիստր Զավարդինը ոստիկանության ղետարտամենտին հասցեագրված գաղտնի ղեկուցագրում հայտնում էր. «Հոկտեմբերի 9-ից Խոստով և նախիչևան քաղաքներում բանվորության, գործակատարների, արհեստավորների, ինչպես նաև միջնակարգ ուսումնական հաստատությունների սովորողների շրջանում նկատվում է հատուկ բարձր տրամադրություն... Կաղմակերպվում է գործադուլային բյուրո... Նկատի առնելով, որ բյուրոյի հրավիրած հավաքներին սկսում են մասնակցել քաղաքային և նախիչևանյան շրջանների ծացրահեղ հեղափոխական ուղղություն ունեցող տարրերը, բանվորների մեջ մեծ հեղինակություն վայելող հռետորապահնորդներ, ինչպես ի. Ստավուկին, Զ. Միխայիլովիչը և ուրիշներ, նրանց ձերքակալել եմ այլ ընկերների հետ միասին»⁴⁷:

Հոկտեմբերյան ղեկուրից հետո Պետերբուրգի և Մոսկվայի օրինակվ բանվորների ղեպուտատների սովետներ են ստեղծվում նաև Խոստովում և նախիչևանում⁴⁸: Այդ սովետները դառնան ամիսներին Խոստովում սկսել էին կաղմակերպվել սոցիալ-դեմոկրատական մարտական դրութիւնաներ: Դրանք նախատեսվում էին զինված ապստամբության համար: Այդ դրութիւնաների ամրապնդման և զինված ապստամբության նախապատրաստման համար կարևոր ղեր կատարեցին շրջանային կոմիտեների և սովետների սոցիալ-դեմոկրատ ազգեցիկ անդամները: Սեպտեմբեր ամսին Խոստով ժամանած նշանավոր հեղափոխական Յու. Բուտյագինը կապ էր հաստատել նրանցից Ա. Սաբինոյի, Բ. Նալբանդյանի, Ս. Վայտենկոյի, ի. Բաբկինի, Գ. Կրամարովի և ուրիշների հետ: Դրութիւնաները

⁴⁶ «Донская речь», № 169, 1905.

⁴⁷ ГАРО, ф. 826, оп. 1, д. 42, лл. 40—44.

⁴⁸ «Донская речь», 263, 1905.

բաժանված էին շոկատների՝ տասնյակների: Նրանք փոքր խմբերով վարժվում, մարտական պատրաստություն էին ստանում: Դրութիւննիկների ընդհանուր թիվը հասնում էր 350—400 հոգու: Մարտական դրութիւնների տասնյակների պետք մեջ էին Կ. Բոգդանովը, ի. Նալբանդյանը, Ա. Վողուազովին, ի. Զենցովը և ուրիշներ⁴⁹:

Դուռ 1905 թ. ամռանը նոր նախիչևանում ևս կազմակերպվել էին զինված զոկատների Դրանք, սակայն, զուտ ազգայի խնդիրներ էին հետապնդում և չին մասնակցում Հեղափոխական հուզումներին: Հեղափոխության հենց առաջին ամիսներին ցարիզմի սադրանքով սկսված Հայ-ադրբեջանական ընդհարումները, Խոստովում հրեաների կոտորածները հայկական զաղություն խախտել էին անդորրը և անհանգիստ վիճակ ստեղծել: Դրությունը տագնապալից էր գարձել մանավանդ այն հանգամանքի հետևանքով, որ շատերը կարծում էին, թե սեհարյուրակայինները կհարձակվին նաև հայելի վրա: Ստեղծված լարված իրավիճակն օգտագործում են տեղի դաշնակցականները: Նրանք հեղինակություն ձեռք բերելու և հայկական զանգվածը հնարավոր հարձակումներից պաշտպահելու համար տեղի հարուստների միջոցով վենք են ձեռք բերում: Այդ զենքով կազմակերպում են դաշնակցական սպառազինված խմբեր և դիրքեր բռնում նախիչևանի տարբեր մասերում⁵⁰:

Հեկտեմբերի 8-ին Խոստովի և նախիչևանի բանվորների ղեպուտատների սովետը և Դոնկոմը հապուկ կոչով դիմում են աշխատավորությանը և կոչ անում միանալ Պետերբուրգի և Մոսկվայի սովետների հայտարարած համառուսական գործադուլներին: «Դոնի Խոստովի և նախիչևանի բանվորների ղեպուտատների սովետը,— ասվում է այդ պրոկրամացիայում—միանում է Պետերբուրգյան բանվորների և բանվորուհիների որոշմանը՝ հինգշաբթի, դեկտեմբերի 9-ին առավոտյան դադարեցնել աշխատանքները բոլոր ֆաբրիկաներում և գործարաններում, բոլոր արհեստագործական ձեռնարկություններում...»

Ընկերներ, համարձակ մարտի հանուն ժողովրդի ազատության ու երշանկության:

Կեցցե՛ համընդհանուր քաղաքական գործադուլը.

Կեցցե՛ համաժողովրդական Սահմանադիր ժողովը⁵¹:

Դոնի պահնորդական բաժնի պետ Զավարդինը Խոստովի քաղաքակալիսին զեկուցում էր Թեմերնիկում բարիկադային մարտերի և մոտա-

⁴⁹ «Очерки истории партийных организаций Дона», с. 160, 164—165.

⁵⁰ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Խ. Փորքշեանի քոնդ, էջ 54—55:

⁵¹ «Наш край», с. 365—366.

կա զյուղերի բնակիչների կողմից ապստամբ բանվորներին ցուց տված օգնության մասին։ Առաջ հայտնելով, որ «Նախիջևանի մարտական դրուժինաների մի մասը մնացել է նախիջևանում, իսկ մեծ մասը թեմերնիկում հետեւացնում է. «Դրուժիյունը դառնում է շատ լուրջ, քանի որ մեկ օրվա ընթացքում անարգել անցնելով թեմերնիկ խոռվարաբների ջոկատը համարվել, հասել է 2 հազարի»⁵²:

Յարական իշխանությունը մտադրվել էր հնարավորություն Հայալ ապստամբությանը ծավալվելու, ճնշել այն հենց սկզբնավորման շրջանում։ Այդ նպատակով քաղաք բերված կազակային զորամասին հրաման էր տրվել հրանոթային համագարեկի օգնությամբ դեկտեմբերի 14-ին գրավել թեմերնիկը։ Կառավարական զորամասի հարձակմանը բանչորները պատասխանի էին միահամուռ հրածորությամբ և ետ մղել կազակներին։ Այդ հաջողության հաջորդ օրը ապստամբները մարտական դրուժինաների շտարի ղեկավարությամբ կարողանում են գրավել Ռոստովի նրանքությանը կայարանը։ Դրանով անմիջական կապ էր ստեղծվում Վլադիկավագի երկաթուղու հետ, որտեղից ապստամբները օգնություն էին ստանում⁵³։

Մարտական գրուժինաների շտարը մշակում է Ռոստովը գրավելու ծրագիր։ Նախատեսվում էր մարտական գործողությունները սկսել երկու կողմից՝ թեմերնիկի և նախիջևանի։ Լրացուցիչ օգնություն ստանալու նպատակով Յու. Բատյագինը բանակցություններ է վարում նոր նախիջևանի ազգային գրուժինաների ղաշնակցական ղեկավարների հետ։ Վերջիններս թեսլիս ուշացումով, սակայն համաձայնվում են մասնակցել մարտական գործողություններին⁵⁴։

⁵² Նույն տեղում, էջ 367—368։

⁵³ «Օչերքի истории партийных организаций Дона», с. 165.

⁵⁴ Նույն տեղում, էջ 166. «Օչերքի истории большевистских организаций Дона», Ростов н/Д, 1965, с. 150.

Հինված ապստամբությանը մասնակցելու հայկական գրուժինաների ղեկավարության ըրական պատասխանի ուշացումը կատարվել է հետեւյալ պայմաններում։ Ռոստովի վրա երկու կողմից միաժամանակ հարձակում սկսելու և քաղաքն աքցանի մեջ առնելու դինված ապստամբության շտարի ծրագրերը շիրականացան։ Միայն թեմերնիկում հաջողվեց զինված պայքար կազմակերպել։ Հայկական գրուժինաները բաղկացած լինելով ընդամենը 100—150 մարդուց չեին համարակալվում առանց օգնական ուժերի, քաղաքի թեմերնիկի շրջանի հակառակ կողմից՝ նախիջևանից միանակ դուրս գալ կառավարական ուժերի ղեմ։ Այդ պատճառով էլ ձգձում էին իրենց պատասխանը։ Ռոստովի կուսակցական կազմակերպությունների պատմության քաշածանոթ հեղինակ Պ. Սեմերնինը խոսելով Բատյագինի կողմից հայկական դրուժինաների ղեկավարների հետ տարվող բանակցած էր մասն քրոքության շերտերից, այդ պահին վերաբերվում էր բացասարար և միայն ղեկտեմբերի 20-ին է սկսում համաձայնվել դրան։

Վլադիկավագի երկաթգծում զինված ապստամբության գործում հական աշխատանք էր կատարում Կենտրոնական բյուրոն՝ Ս. Խեցգամանի զինված գործությամբ։ Դեկտեմբերի 17-ին կուսակցական կազմակերպությունների որոշմամբ նա մեկնում է Հյուսիսային Կովկաս՝ Ռոստովի վանվորներին զինված օգնություն կազմակերպելու համար։ Հաջորդ օրը Միներալնին կողի կայարանից հատուկ գնացքով Ռոստովի է ճանապարհով 120—140 հոգուց բավկացած զինված ջոկատ։ Մարտական այդ գրուժինան տեղ չի հասնում, որովհետեւ չի կարողանում անցնել կազմակերպի ձեռքում կտնվող կավկազայաց կայարանով⁵⁵։

Ռոստովի վրա նախատեսված հարձակումը մի շարք պատճառներով չի իրականանում։ Դրան մեծապես խանգարում էին նաև Գոնկովի մենշևիկները։ Նրանք պատճառ բռնելով մեծ զոհեր տալու վատանգը, կտրականապես ղեմ էին հարձակմանը։ Ստեղծված պայմաններում բոլշևիկների զինված գործությամբ թեմերնիկի ապստամբությունը լոկալ բնույթ էր կրում և կարողացավ զիմանալ միայն մինչև ղեկտեմբերի 21-ը։ Տեղեկանալով Մոսկվայում զինված ապստամբությունը ճնշելու մասին, տեղական իշխանությունները ղեկտեմբերի 20-ին վեճական հարձակման անցան թեմերնիկի վրա։ Ապստամբները ամբողջ օրվա ընթացքում համար զինված գործություն ցուց տալուց հետո համոզվեցին, որ ուժերը չեն բավարարի հետագա պայքարի համար։ Այդ պատճառով վճռեցին զիշերը տեղափոխվել նախիջևան և պայքարը շարունակել այնտեղից։ Սակայն, մինչ այժմ անհայտ պատճառով, նույն գիշերը պայթյուն է տեղի ունենում «Աքսայ» գործարանի ճաշարանում, ուր պահվում էր գրուժինաների գրեթե ամբողջ զենքը։ Առանց զենքի մնալով, ապստամբները չեին կարող այլևս շարունակել պայքարը⁵⁶։

1906 թ. առաջին ամիսներին Դոնում հեղափոխական շարժումները որոշ տեղատվություն ապրեցին՝ ղեկտեմբերյան զինված ապստամբությունը ճնշելու և սկսված մասսայական բանտարկությունների հետեւանքով։

Պ. Սեմերնին, «Рабочий класс в революции 1905—1907 гг. в Азово-Черноморском и Северо-кавказском краях», Ростов н/Д, 1935, с. 147). Տեղեկավ, որ անհար է այլևս շարունակել պայքարը թեմերնիկում ապստամբները վճռում են ղեկտեմբերի 20-ին պադարեցնել կոիվը և տեղափոխվել նախիջևան և այնտեղից շարունակել զինված պայքարը։ Հայկական գրուժինան իմանալով այդ մասին անմիջապես համաձայնվում է միանալ ապստամբներին, սակայն մարտերի մեջ չի մտնում, որովհետեւ նախիջևանի կողմից զինված պայքարը չի սկսվում։ Ապստամբների զենքի կորստի հետեւանքով առհասարակ դադարում է զինված ապստամբությունը։

⁵⁵ «Օչերքի истории партийных организаций Дона», с. 169.

⁵⁶ Նույն տեղում։

Այսուհանդերձ 1906 թ. ամռան ամիսներին Դոնի քաղաքներում և գյուղերում Հեղափոխության նոր վերելք սկսվեց:

Հոռացին պետական գուման ցըլու առիթով Տագանրոդում բոլշևիկները ուժիւ 10-ին քաղաքական հզոր ցույց կաղմակերպեցին: Ցուցարարացին ցըլու նպատակով շերված ոստիկանությունը տեսներով նրաց մարտական տրամադրությունը փախուստի էր դիմել: Նրանց զեմ ուղարկված 41-րդ Դոնի գնդի կազակները հրաժարվեցին կրակ բացել: Տեղական իշխանությունները մեծ դժվարությամբ, օգնության հասած ուժնեւության միջոցով կարողացան միայն դադարեցնել այդ ցույցը⁵⁷:

ՀԵղափոխական շարժումները ճնշելու համար կազակային նոր դրամաներ են բերվում նախիցեան: 1906 թ. կեսերին Ռոստովի քաղաքապետի կարգադրությամբ նախիցեանի քաղաքագույնիր համապատասխան շենք է վարձում՝ 150 հոգուց բաղկացած կազակային զորամասը տեղավորություն համար⁵⁸:

1906 թ. ամռանը Դոնի որոշ օկրուգներում աշխուժացան գյուղացիան և կաղակային շարժումները: Հայկական գյուղերի մասին պահպահած որոշ անուղղակի տվյալներ գալիս են հավաստելու, որ այստեղ էլ բարձրությունը բավականաշափ սրված էր: «Նոր կյանք» թեղթի թղթակից խոսելով գյուղացիներից գանձվող անօրինական տուգանքների, երանչ նկատմամբ կատարվող այլ ապօրինությունների մասին, չորվածն ավաշտում է հետեւյալ խոսքերով: «Պատմեցեք հանցավորին տուգանքով, բանտարկությամբ, բայց ձեր ինկվիզիտորական պատիժներով մի սպանեք նրա մարդկային արժանապատվությունը: Ժողովրդի համբերությունը հատել է, այլևս չի կարող լուել»⁵⁹:

ՀԵղափոխության ժամանակ հրապարակվեց ցարական մինիստր Մատիպինի 1906 թ. նոյեմբերի 9-ի հողային օրենքը: Այն ուղղված էր գյուղական համայնքները և գյուղացիության որոշ շերտերի տնտեսությունները քայլելուն և հանձին կուպակության՝ ինքնակալության համար գյուղում ամուր հենարան ստեղծելու նպատակին:

Մտոլիպինյան հողային օրենքը գաղութում բացասական վերաբերմունքի արժանացավ: Հայկական գյուղերը համայնքներական վերաբերմունքում էին համագյուղական հողային-տնտեսական հարցերը: Դրանք միաժամանակ զորեղ բջիջներ էին ազգային սովորություններն ու ավանդությունները, առհասարակ ազգային նկարագիրը պահպանելու գոր-

ծում: Համայնքի բայրայումով, որպիսի ուղղվածություն ուներ նոր օրենքը, գյուղերի գերը որպես ազգային կյանքի համապարփակ օղակների և որպես հավաքական հասարակական-սոցիալական ուժի, թուղանում, նվազում էր:

«Նոր կյանք» թերթը «Մի պատուհան էլ» խորագրով առաջնորդող հոդված է նվիրում և քննադատում ստոլիպինյան ազրարային քաղաքականությունը. «Համայնքը ժողովրդի մեծագույն մասի—կարդում ենք այնտեղ, — գյուղացիության մի հաստատություն է, որ առանձին անհատներին ընդհանուրի շահերով է կապում: Մինենույն ժամանակ համայնքն է, որ հավասարակշռում է առանձին անհատների հարաբերությունները և գոյության կովի անողոք հետևանքներն է մեղմացնում... Գյուղացիության ընդհանուր շահերի կապը խզելով, կառավարությունը կարողանա թուլացնել նրան և վերջինս ալլես չի ներկայացնի նրա համար ընդիմադիր մասսա»⁶⁰:

ՀԵղափոխության տարիներին հայկական գաղութում լայն տարածում գտավ ուսանող-երիտասարդական շարժումը: Դրա կենտրոնն էր գարձել նոր նախիցեանի թերթական դպրոցը: Աշակերտական այդ խլրությունները գրավեցին ոչ միայն հայկական լայն շրջանների, այլ նաև Դոնի մարդի ղեկավարության ուշադրությունը:

Պատճառը հետևյալն էր. 1906 թ. աշնանը նոր նախիցեանի և Բեսարաբիայի թեմական դպրոցի աշակերտներից մեեկի թաղման ժամանակ շրորորդ դասարանի աշակերտ Գ. Պողոսյանը դամբանական խոսքում աշակերտության անոնից քննադատում է դպրոցի ոեժիմը և այդ խնդրի վրա հրավիրում հասարակության ուշադրությունը: Մանկավարժական խորհրդի և հոգաբարձության որոշմամբ իրեւ հասարակական կարգ խախտողի նա դպրոցից հետացվում է⁶¹: Բարձր դասարանի աշակերտները, ի պաշտպանություն Պողոսյանի, դասադուլ են հայտարարում:

Թեմական դպրոցի ղեկավարությունը բարձր դասարանների (4-6-րդ) աշակերտներին դպրոց չի ընդունում: Պահանջում է, որպեսի նրանք անհատապես ղիմում տան, ընդունեն իրենց մեղքերը և խոստանան այգուհետ նման արարքների շղմել: Աշակերտները մերժում են այդ պահանջը: Նրանք թեմականի տնօրինությանը՝ հոգաբարձության պետ Մուշեղ վարդապետին և ոեկտորի պաշտոնակատար ե. Շահազիզին են ներկայացնում իրենց բողոքը: Աշակերտները ապօրինի էին համարում Պողոսյանի հեռացումը, բարձր դասարանների փակումը և պահանջում,

57 «Очерки истории партийных организаций Дона», с. 180.

58 «Приазовский край», 1906, № 153.

59 «Նոր կյանք», 1906, № 7.

60 «Նոր կյանք», 1906, № 23:

61 «Մշակ», 1906, № 262:

որ այդ խնդիրը դրվի Հասարակական լայն քննարկման⁶²: Նրանք պահանջում էին նաև թույլտվություն իրենց առանձին կաղմակերպությունն ունենալու և թերթ Հրատարակելու համար⁶³:

Առաջմբերի 27-ին գումարվում է նոր Նախիչևանի ծխականների 60 պատշաճամավորների ժողով: Զորս Հոգի (Դեմիրյան, Համալյան, Քչեկյան, Ըստնտյան) ժողովում հանդես են եկել, որպես աշակերտության պատվիրակներ և համապատասխան բացատրություններ տվել: Սակայն աշակերտության պահանջները չեն բավարարվել: Ժողովը, որին մեծ մասմէջ մասնակցում էին ունենոր, բուրժուական խավի ներկայացուցիչները, հաստատում է մանկավարժական խորհրդի և հոգաբարձության վճիռը: Մուշկ վարդապետն աշակերտությանը սպառնում էր կարգի Հրավիրել ուստիկանության միջոցով:

Ի պատասխան այդ քայլի, Մ. Դեմիրյանը Հրապարակում է հեռացված աշակերտների արտակարգ ժողովի որոշումը՝ Հրաժարվել դպրոց հաճախել մինչև շրմգունվեն բոլոր հեռացված աշակերտները: Ինչպես նաև կոչ անել հասարակությանը՝ բողոքելու մարդկային տարրական իրավունքները դպրոցի վարչության կողմից ոտնահարելու հետո⁶⁴:

Շուասկան և հայկական մամուլը և հատկապես հեղափոխության շնորհիվ ձեռք բերված ազատության պայմաններում հիմնված «նոր կյանք» թերթը լույսորեն լուսաբանում են թեմական դպրոցի դեպքերը: Հայկական շատ օջախներից արձագանքում և իրենց վերաբերմունքն են դրսերում հասարակական բնույթ ստացած այդ երեսութիւն:

«Դոնսկայա ու թերթն այդ օրերին գրում էր, որ Նախիչևանի ուժինարիայի աշակերտները դասագուլ են հայտարարել և ներկայացրել մի քանի խիստ պահանջներ, այդ թվում՝ աշխատանքից հեռացնել ունկութիւն»⁶⁵:

Խարկովից մի շարք մտավորականներ բողոքում են թեմականում կատարված կամայականությունների դեմ և դիմում Նախիչևանի հայ հասարակությանը՝ վերաբերնել այդ գործը⁶⁶:

Ղլարի հայկական դպրոցի մանկավարժական խորհուրդն իր վերդում ընդունելու է հայտնում թեմական դպրոցի ղեկավարների բիրտ վարժումքի դեմ: Թեմականի նախկին սաներ, զղարաբնակ Կ. Պոպովը և Ա. Ավագյանը թերթի խմբագրությանը ուղղված նամակով պաշտպա-

նում էին աշակերտության իրավունքները, դատապարտում դպրոցի ճահճացած մթնոլորտը⁶⁷:

Գեորգյան ճիմարանի ուսուցիչ, թեմականի նախկին սան Հ. Գենջյանը դպրոցի տնօրինությանն ուղղած բաց նամակում գրում էր. «Ամբողջ էությամբ բողոքում եմ ձեր բռնության դեմ և պահանջում ամենախիստ հասարակական դատաստան»⁶⁸:

Համերաշխելով նոր Նախիչևանի աշակերտության հետ, իրենց բողոքի ձայնն են բարձրացնում Երևանի թեմական դպրոցի աշակերտները: Վերջիններս հոգաբարձությանն ուղարկած հեռագրում գրում են, որ Նախիչևանի թեմական դպրոցի դեպքերը «...շափականց անհանգստություն և աղմուկ յարձրացրին մեր աշակերտության մեջ»⁶⁹:

Հեռացված աշակերտների անունից Ս. Համալյանը պատասխանում է Երևանի թեմականցիներին. «Զեր ընկերական անհապաղ օգնությունը և բարոյական խրախուսանքները,— գրում էր նա, — մեզ ավելի ևս ամրացրեց մեր գործական բյուրոկրատիկ վարչության հայտարարած կովի մեջ ու ավելի ևս հաստատեց մեր այն հույսը, որ ճշմարտությունը հաւածնդ և ամեն մի սուրբ գաղտիար ու մաքուր զգացմունք ոտնատակ անող վարչությունը կտապալվի»⁷⁰:

Հ. Տեր-Մանվելյանը «Թեմական դպրոցի խլրումների առթիվ» հողվածում դիմելով դպրոցի ղեկավարությանը գրում էր. «Դուք գորավական եք պահանջում աշակերտներից, որպեսզի վերջիններս ապագայում վլրովին ձեր ճահճացած խաղաղ հանգիստը, բայց դրանք իգուր ջանքեր ու խաբուսիկ ցնորդներ են: Խլրումները կինեն և կշարումակվեն մինչև այն ժամանակ, քանի դեռ չեն փոխվել տիրող կարգերը, քանի դուրս չեն վոնդվել կեսից ավելի անպետք ու ավելորդ բալլաստ կազմող ապիկար ուսուցիչները»:

Եվ մենք հավատացած ենք, որ վաղ թե ուշ զարթնած աշակերտության բուռն գրոհի առաջ կխորտակվեն բոլոր այն հին ու փտած կարգերը, որին, գժբախտաբար, մինչև օրս ենթակա է նոր Նախիչևանի թեմական դպրոցը»⁷¹:

Դժվար է ասել, թե նոր Նախիչևանի աշակերտության այդ հուզումները անմիջականորեն կապված էին հեղափոխական մյուս շարժումների հետ թե ոչ: Թերթերում տպագրվող հոդվածներում նշվում է, որ աշա-

62 «Приазовский край», № 310, 1906.

63 «Եղակ», 1906, № 273.

64 «Նոր կյանք», 1906, № 25.

65 «Донская река», № 250, 1906.

66 «Նոր կյանք», 1906, № 22.

67 Նույն տեղում, № 24, 25:

68 Նույն տեղում, № 24:

69 Նույն տեղում:

70 Նույն տեղում, № 25:

71 Նույն տեղում:

կերտներին գրգռում են դրսից, որ նրանց հրավիրած ժողովներին մասնակցել են կողմանակի անձինք: Ո՞վեր են եղել այդ անձնավորությունները, հայտնի չեն⁷²:

Աւշտակավէ է, որ թեմական դպրոցի անցքերի ժամանակ, 1906 թ. աշնանը դասադուլ են անում Սուրբ Խաչ վանքի աշակերտները, պահանջելով հեռացնել ուսուցիչներից մեկին⁷³: Դասադուլ են հայտարարում նաև Նախիջևանի իգական զիմնադիայի բարձր դասարանների աշակերտութիւնները: Նրանք մտնելավարժական խորհրդին են ներկայացնում մի շաբթականացներ⁷⁴:

Հատկանշական է նաև այն, որ Հենց աշակերտական խլրումների ժամանակ (Հոկտեմբերի 14-ին) նոր Նախիջևանի 36-րդ գծի տեղից մեկում հայտնաբերվում է անլեզակ տպարան: Չորս հոգի ձերբակալվում են՝:

Թեմական դպրոցի դեպքերի լայն արձագանքից և հայ հասարակայնության ակտիվ միջամտությունից ահարեկված Մուշի վարդապետը փորձում է զիշումներ կատարելու միջոցով մեղմել դրությունը, կանխել ստեղծված հակասությունների հետաքա խորացումը: Նա հայտարարում է, թե թյուրիմացություն է տեղի ունեցել, իրենց լավ չեն հասկացել իրենք հեռացված աշակերտներին դպրոց ընդունելու համար չեն պահանջել գրավոր հավաստիացումներ այն մասին, թե այլևս նման խլրումներ չեն անի:

Այդ կապահցությամբ թերթի էջերում հանդես է գալիս Ալ. Մյասնիկյանը: Նա հիշեցնում է դպրոցի տեսուչ Ե. Շահագիզի աշակերտներին տված միանգամայն այլ պատասխանները, մերկացնում հոգաբարձության պետի խորամանկությունները: «Դուք, — գրում է նա, — ոչ մի արդարացումներով չեք մաքրի ձեզ, ոչ մի անորոշ ֆրազներով ոչ ոքի միտքն ու խիղճը չեք հանգստացնի, դուք ոչ մի խուզարկու-ոստիկանության միջոցներով, խոստումներ պահանջելով ձեր «սուրբ» նպատակին չեք հասնի:

Աշակերտությանը դուք չեք կարողանա ձգել թակարդը: Եթե նա հենց ձեր «մեղայականներով» էլ դպրոց գնա, նրա ձեռքն ու ոտքը չեք կապի: Այն շարժումը, որ այսօր տեղի է ունենում մեր աշքերի առաջ, ամեն քարու փայտ փշրելով առաջ կընթանա⁷⁵:

72 «Մշակ», 1906, № 273.

73 «Նոր կյանք», 1906, № 10.

74 «Մշակ», 1910, № 229.

75 Նույն տեղում, № 17:

76 Նույն տեղում, № 26:

Քաղաքապետը հոգևոր սեմինարիայի ոեկտորի պաշտոնակատար Ե. Շահագիզից պահանջում է դասադուլ հայտարարած 28 աշակերտների ցուցակը: Ապա վտանգավոր այդ խլրումների առաջն առնելու նպատակով ցուցում է տալիս ոստիկանությանը, որպեսզի այն աշակերտները, որոնց ծնողները չեն բնակվում նախիջևանում երկու օրվա ընթացքում թողնեն քաղաքը: Նրանց ովքեր չեն ենթարկվի այդ հրահանգին, ոստիկանության միջոցով արտաքսել քաղաքից: Նրանց թվում արտաքսել նաև Պողոսյանին, որի ծնողները բնակվում էին Ղզլարում: Նախիջևանում կամ շրջակա գյուղերում ապրող աշակերտների ծնողներին խստորեն գգուշացնելու վերջո թեմական դպրոցի աշակերտության հոգումներին պաշտոնակատար կամ քաղաքապարտելի վարմունք նկատելու դեպքում նրանք ևս նել, որ որևէ դատապարտելի վարմունք նկատելու դեպքում նրանք ևս կարտարարվեն⁷⁶:

Ի վերջո թեմական դպրոցի աշակերտության հոգումներին պաշտոնակատել է նաև գեներալ նախանգամակառ և քաղաքապետի ու ոստիկանության միջոցով կարողացել վերջ տալ բավականաշափ մեծ աղմուկ հանած աշակերտական այդ շարժումներին⁷⁷:

Ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին ոչ միայն հայկական գաղութի, այլև ամբողջ Դոնի հեղափոխական շարժումների և սոցիալ-դեմոկրատիայի բոլշևիկյան թերի նշանավոր գործիչներ էին Հովհաննես և Բորիս Նալբանդյան եղբայրները:

Հ. Կ. Նալբանդյանը (1885—1938) հեղափոխական շարժումներին մասնակցում էր 1902 թվականից: 1905 թ. Ռուստովում գեկտեմբերյան զինված ապստամբության ժամանակ դրուժինայի հրամանատար էր: Դունի ոստիկանության գաղտնի գործակալությունը 1905 թ. սեպտեմբերին նրա մասին զեկուցում էր հետեւյալը. «...Նալբանդյովը Նախիջևանի ըըրշանից Դոնի կոմիտեի անդամ է, զեկավարել է բանվորներին զենք հանձնելու գործը, զրադվել հանցավոր հրատարակությունները հեկտոգրաֆի վերածելով: Հեղափոխական միջավայրում հայտնի է «Վանյա-տեխնիկ» մականոնով և հեղափոխական ուղղության խիստ լուրջ գեմք է»⁷⁸:

Նույն պահնորդական բաժնի պետը հայտնում էր, որ գեկտեմբերյան Նալբանդյան եղբայրների բնակարանում էր տեղավորված մարտական դրուժինաների շտաբը և որ զինված ապստամբության գործով Հ. Նալբանդյանը դատի է տրված⁷⁹:

77 «Приазовский край», № 335, 1906.

78 «Մշակ», 1906, № 277.

79 ГАРО, ф. 826, оп. 1, д. 25, л. 249.

80 «Наш край», с. 445.

Հ. Նալբանդյանը ցարական դատարանի կողմից բազմիցս Ենթարկվել է դատական և վարչական պատասխանատվության: Նա հետագայում շարունակեց Հեղափոխական գործունեությունը և ակտիվ մասնակցություն ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ Հեղափոխության հաղթանակին:

Բորիս Նալբանդյանը (1887—1915) նույնպես Դոնում, բուրժուական առաջին Հեղափոխության ակտիվ մասնակիցներից է: Հեղափոխության տարիներին զբաղվում էր հատկապես գաղտնի տպարաններ կազմակերպելով և այնտեղ բոլշևիկյան թուուցիկներ, պրոկոմացիաներ տպագրելով ու տարածելով⁸¹:

1906 թ. սեպտեմբերին ոստիկանությանը հաջողվում է հայտնաբերել այն գաղտնի տպարանը, ուր Կովալյովը և Բ. Նալբանդյանը տպագրում էին «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք», — «Բոլոր բանվորներին», «Բոլոր քաղաքացիներին» վերնագրերով Դոնի կոմիտեի, Նովոչերկասկի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների պրոկոմացիաները: «Այդ կոչերում, — ասվում է ոստիկանության գործակալի գաղտնի գրությունում, — քննադատավում և ծաղրի է ենթարկվում ուազմական գրություն և ուժեղացված պահորդական բաժին մտցնելու, ուազմակաշտային դատարաններ հիմնելու կառավարության գործունեությունը»⁸²:


1907 թ. բոլշևիկյան ընդհատակյա նոր տպարան հիմնելու ժամանակ ոստիկանությունը ձերբակալում է նրան:

Նոր Նախիչևանի հայկական գաղութը հատկապես XIX դ. վերջերից ներքաշված լինելով հարավային Ծովասատանի, մասնավորապես Դոնի ավազանի տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի ոլորտը որպես գրա մի անբաժանելի մասի, բնականաբար, մասնակցում էր հասարակական-քաղաքական կարևոր իրադարձություններին: Այդպես էր իրավիճակը, ինչպես նշեցինք, անցյալ դարի 80-ական թվականներին, Նարոդնիկական շարժման, այնպես էլ դարավերջի բանվորական հուզումների ու հեղափոխական ելույթների շրջանում:

Նոր Նախիչևանը, միաժամանակ, հայկական կարևոր կենտրոն էր, իր առաջադեմ մտավորականությամբ, հասարակական-քաղաքական ու մշակութային հասուն կյանքով: Այդ պատճառով էլ այնտեղ հասարակական մինոլորտը հագեցած էր մի կողմից ամբողջ երկրին բնորոշ սոցիալ-քաղաքական, մյուս կողմից՝ ազգային-քաղաքական մտայնությամբ: Նոր Նախիչևանում ավելի փոքր ժամանակում էին գրե-

⁸¹ Նույն տեղում, էջ 444—445.

⁸² ГАРО, ֆ. 829, օլ. 1, գ. 59, թ. 2, լ. 657—658.



Ս. Խաչ վանքը (վերանորոգումից ներո)



Մ. Նալբանդյանի մահարձանը (Ա. Խաչի վանքի բակում)

թե այն բոլոր նշանակալից երևույթները, որոնք տեղի էին ունենում հայ իրականության մեջ:

Այստեղ մարքսիստական գաղափարախոսության թափանցման, սոցիալ-դեմոկրատական խմբակների առաջացման հետ մեկտեղ երիտասարդությունը ա:արգում էր նաև ազգային-ազատազրական գաղափարներով։ Նորնախիչւանցիների մի մասը շարունակում էր Ռ. Պատկանյանի, Թափփու ստեղծագործությունները, «Մշակ», «Նոր դար», «Հընչակ» թերթերը ովհորությամբ կարդալ, որոնք և ազգային պատրաստներ էին ստեղծում Երիտասարդության մեջ^{83:}

Գաղութում աստիճանաբար ձևավորվում են հայ իրականության մեջ քաղաքական հիմնական հոսանքների, դաշնակցության և ապա սոցիալ-դեմոկրատական բոյկերիկան կուսակցության առանձին խմբեր:

Դաշնակցական անհատ գործիչներ նոր նախիջևանում եղել են զեռևս 1890-ական թվականներին, սակայն այդ կուսակցության ներկայացուցիչները Դոնի հայ ղանգվածի մեջ իրենց գործունեությունը ակտիվացրել են 1903 թ., երբ եկեղեցական գուցքի բռնագրավման կապակցությամբ ընդհանուր հույսումներ սկսվեցին։ Այդ ժամանակվանից էլ նրանք նոր նախիջևանը կուսակցական առումով կոչում էին «Նալբանդի» շրջան։ Գաշնակցականները և նրանց հարող որոշ երիտասարդներ 1904 թ. հրատարակում են «Աղավնի» շաբաթաթերթը, որը աստիճանաբար քաղաքական բնույթի էր ստանում։ Թերթին աշխատակցում էին նաև Ալեքսանդր և Սահակ Մյասնիկյանները, Գ. Չուբարյանը և ուրիշներ։ Անդրանիկ այդ շաբաթաթերթը երկար կյանք չի ունենում, լույս է տեսնում մինչև 1905 թվականը⁸⁴.

Դաշնակցություն կուսակցության տեղի ակտիվ գործիչներից էր «Նալբանդ» կազմակերպության ղեկավար, թեմականի ռւսուցիչ Հ. Տերտերյանը և մասամբ Ս. Վրացյանը: Վերջինս նոր նախիջևանում լինելու ժամանակամիջոցում էր միայն ակտիվ մասնակցում տեղի կուսակցական գործերին:

Գաղութի երիտասարդության շրջանում սոցիալ-գեմոկրատական ուղղության կազմակերպության ոգեշնչողներից ու եռանդուն գործիչներից էին թեմական պարոցի նախկին սաներ, Հետագայում բոլշևիկյան կուսակցության նշանավոր գործիչներ, Սարգսի Սրապիոնյանը (Հովհաննես) և Ալեքսանդր Մյասնիկյանը: Նրանք հաճախ էին լինում իրենց ծննդա-

83 *Acta* 1937, 3, 42 8:

84 «Հայրենիք», 1955, 3, էջ 52—58

գայրում և ակտիվորեն ներգրավվում տեղի հասարակական-քաղաքական կյանքի մեջ⁸⁵:

1904—1905 թթ. Նախիջևանի երիտասարդների հետ նոստովի գիմնազիայի, առևտրական և տեխնիկական ուսումնարանների հայ ուսանողները կազմում են խմբակ, որը սոցիալ-դեմոկրատական թեքում ուներ ծուառվ Բաքվից գալիս է Ս. Սրապիոնյանը և սկսում հրատարակել «Երկու խոսք» թերթը: Նրա շուրջն են համախմբվում մարքսիստական ուսմունքին հարող երիտասարդները, աչդ թվում և թեմական դպրոցի բարձր դասարանների շատ աշակերտներ: 1906 թ. Մոսկվայից նոր Նախիջևան է վերադառնում Ալ. Խաչանիկյանը և Ս. Սրապիոնյանի հետ դեկավարում սոցիալ-դեմոկրատական խումբը:

Իրար հակագիր երկու քաղաքական կուսակցությունների միջև զառութում սկսվում է հակամարտ, որը նոր Նախիջևանում իր առաջին հրապարակային դրսերումը գտավ հենց ուսական առաջին հեղափոխության տարիներին:

Ցարական կառավարությունը հաշվի նստելով այն հանգամանքի հետ, որ հայ եկեղեցու գույքի գրավման մասին 1903 թ. որոշումը մեծ դիմադրության հանդիպեց և դժգությունների աւելիք տվեց, հեղափոխական շարժումների ճնշման տակ, հարկադրված, այլ զիջումների հետ, վերացնում է նաև այդ օրենքը: Հայկական եկեղեցուն է վերադարձվում բռնագրավված ու պետականացված անշարժ գույքն ու այլ հարստությունները:

Միաժամանակ, 1906 թ. կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հատուկ կոնդակով էջմիածնում նշանակվել էին Կենտրոնական ժողովի ընտրություններ: Ընդունված կարգի համաձայն հայկական եկեղեցու բոլոր թեմերի ծխականները պետք է ընտրեին իրենց պատգամավորներին: Վերջիններս էլ էջմիածնում անմիջականորեն մասնակցելու էին էլենտրոնական ժողովի ընտրությանը:

Կենտրոնական ժողովը, նրա նախաձեռնողների մտադրությամբ, արևելահայ իրականության մեջ պետք է վճռական դեր կատարեր և

85 Ս. Սրապիոնյանը ծնվել է 1883 թ. Թոփիսի գյուղում: 1895 թ. ընդունվել և 1901 թ. ավարտել է թեմական դպրոցը: Նոյն տարում ընդունվել է Բաքվի գիմնազիան: Գիմնազիան ավարտելուց հետո՝ 1906 թ. ընդունվել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ:

Ալ. Խաչանիկյանը ծնվել է նոր Նախիջևանում, 1886 թվականին: Նա 1898 թ. ավարտել է Ս. Խաչի ժառանգավորաց դպրոցի քառամյա դասընթացը և նոյն տարում ընդունվել է թեմական դպրոց: 1904 թ. ավարտելով թեմականը, ուսումը շարունակել է Մոսկվայի համալսարանում: 1906—1908 թթ. հեղափոխության վայրէքի ու ուսակցիայի տարիներին գտնվում էր Բաքվում:

ունենար նույնիսկ սահմանադիր ժողովի իրավասություն, որը հարկավ ունար չէր, ուստի բոլշևիկները և հատկապես Ս. Սպանդարյանն այն համարում էին խեղկատակություն⁸⁶:

Կենտրոնական ժողովի պատգամավորների ընտրության հարցում նոր Նախիջևանում ուժեղ հակասություններ սկսվեցին: Պայքարը գնում էր երեք խմբակցությունների՝ պահպանողականների, սոցիալ-դեմոկրատների, որոնց ղլխավորում էր Ալ. Մյասնիկյանը, և դաշնակցականների միջև: Սոցիալ-դեմոկրատները ժողովի ընտրություններին մասնակցում էին դաշնակցականների թեկնածուներին տապալելու, իսկ իրենցը ընտրվելու դեպքում էջմիածնում նրանց մերկացնելու համար: Դաշնակցականները նախընտրական պայքարում դիմում էին տարբեր, այդ թվում և անթուլատրելի միջոցների՝ իրենց թեկնածուներին (Ս. Վրացյան, և Տերտերյան և որդիշներ) անցկացնելու համար:

«Մշակ» թերթի խմբագրությանը հասցեագրած նամակում նոր Նախիջևանի թղթակիցը բողոքում էր դաշնակցականների վարքագիր գեմ: Նա հաղորդում էր, որ ժողովն իրենց ցանկացած ընթացքը չստանալու դեպքում՝ դաշնակցականները սկսում էին խոսել ուժի գիրքերից, անգամ զիմում զենքի: Այդ պատճառով, հրավիրված ժողովները փաստորեն երկու անգամ խափանվել էին: Երկրորդ ժողովում նախագահող Գր. Զալխուցյանի հետ դաշնիճը թողնում է ծխականների մեծ մասը: Դա չի խանգարում, որպեսզի դաշնակցականներն իրենց կուսակցության անդամ մի երիտասարդ ուսուցի նախագահ դարձնեն և գրեթե դատարկ գաղթինում ժողովը շարունակեն: «Ահա թե որն է նրանց հեղափոխական», «դեմոկրատ» լինելը» խոսքերով է ավարտվում այդ թղթակցությունը⁸⁷:

Դաշնակցական գործիչները չեն կասկածում ընտրություններում հաջողություն ունենալու մեջ: Իրենց ամբոխավարական գործունեությունից բացի, գաղութի բնակչության մեջ նրանց դիրքերն ամրապնդվել էր ծովայից զենք ձեռք բերելու և ազգային պաշտպանության դրուժինաներ կազմակերպելու շնորհիվ: Սակայն ընտրությունները միանգամայն այլ արդյունքներ տվեցին: Նրանց թեկնածուները լիակատար պարտություն կրեցին: «Դաշնակցության ղեկավարները և, առաջին հերթին, Ս. Վրացյանն այդ պարտությունը բացատրում էին Գր. Զալխուցյանին և Մոնկա-

86 Գ. Ա. Գալօյն. Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922. Ереван, 1969, с. 95.

87 «Մշակ», 1906, № 198:

վայից ժամանած Պ. Չուբարին իրենց թևկնածուների շարքում շընդունելու հանգամանքով⁸⁸:

Իրականում ընարության արդյունքները ցույց էին տալիս, որ դաշնակցության գործելակերպը հավանություն չի գտնում Դոնի հայ հասարակության մեջ։ Նրանց դեմ սոցիալ-դեմոկրատներից բացի տարբեր դիրքերից հանդես էին գալիս նաև գաղութի, այսպիս ասած, պահպանողական ու լիբերալ և այլ ուղղության գործիչներ։ Դաշնակցության թեկնածուների պարտությունը, միաժամանակ, վկայում է վերջիններին նոր նախիշնանում ունեցած թույլ աղդեցության մասին։

Դոնի հայկական գաղութում ուժեղ էր նաև հնչակյան կուսակցական խումբը։ Այնտեղ կային նաև տարբեր քաղաքական կուսակցությունների և հասարակական հոսանքների պատկանող գործիչներ կամ նրանց հարողներ։ Դաղութի հետ կապված էր, օրինակ, ժամանակի ուսուական միջավայրում ճանաշված գործիչ, կադետ, պետական դումայի անդամ Մ. Աճեմյանը և շատ ուրիշներ։

XIX դ. վերջերից հասարակական-քաղաքական այլեաց հոսանքների, իսկ XX դ. սկզբից նաև քաղաքական կուսակցությունների պատկանող տեղական խմբավորումների միջև մձկող հակամարտություններով լուցուն էր նորնախիշնանյան իրականությունը։ Նրանց մեջ առանձնապես սուր էր հակադիր դիրքերում կանգնած երկու կուսակցությունների՝ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի և դաշնակցականների։ Միջև տարկող պայքարը, Ռուսաստանյան առաջին հեղափոխության ապրիներին հրապարակային բնույթ ստացած այդ հակամարտը աստիճանաբար խորանալով ու սրվելով, շարունակվեց հետագայում՝ մինչև սովետական կարգերի հաստատումը։

Խնդիրակալության հիմքերը ցնցող հեղափոխությունից եկել գտնելու համար ցարական իշխանությունը դիմում էր ամեն միջոցի միայն թե կարողանա մասնատել, թուլացնել հեղափոխական շարժումները։ Իր նպատակին հասնելու համար ցարիզմը շնորշեց անգամ ազգամիջյան թշնամանք սերմանելու և հարեան ժողովուրդներին իրար դեմ հանելու պրովոկացիոն քայլերից։

Հեղափոխության առաջին ամիսներին փաստորեն ցարական իշխանության սադրանքներով Բաքվում, Շուշիում, Գանձակում, Երևանում և Անդրկովկասի այլ վայրերում սկսվեցին հայ-աղքարեցանական ընդհարումներ ու կոտորածներ⁸⁹, երկու հարեան ժողովուրդների ընդհարում-

88 Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով (դեպքեր, դեմքեր, ապրումներ), Կահիրե, 1955, էջ 123—124։

89 Գ. Ա. Գալօյն. Ռաբочее движение и национальный вопрос в Закавказье, с. 70—89.

ների դեմ իրենց վրդովմունքն ու ցասումն արտահայտեցին ինչպես հայ և աղքարեցանցի, այնպես էլ ուս առաջավոր գրողներն ու հասարակական գործիչները՝ Հ. Թումանյանը, Սարիրը, Մ. Գորկին և շատ ուրիշներ։

Անդրկովկասում տեղի ունեցող մեծ վնասներ ու կորուստներ պատճառող այդ ցավալի դեպքերին արձագանքեցին նաև ուսահայ կենտրոնները, այդ թվում և նոր նախիշնանը։ Կատարվող իրադարձությունների նկատմամբ Դոնի հայ հասարակության վերաբերմունքը և ձևոնարկած քայլերը լավագույն կերպով արտահայտում են հայկական գաղութի հասարակական-քաղաքական կյանքի հասուն, բայ ամենայնի, բարձր մակարդակը։

«Նոր կյանք» թերթը հաղորդում էր Անդրկովկասի տարբեր գավառներում տեղի ունեցող հայ-աղքարեցանական ընդհարումների մասին, դատապարտում դրանք և խաղաղության կոչ անում։ Միաժամանակ թերթը մեղադրում էր տեղական իշխանություններին, կառավարության պաշտոնական ներկայացուցիչներին ոչ միայն կոտորածները շկանխելու, այլ ընդհանուակը դրանք հրահրելու մեջ⁹⁰։

«Դոնսկայա ուշ» թերթը բազմիցս անդրադառնում հաղորդումներ ու ընդհարձակ հոդվածներ է տպագրում հայ-աղքարեցանական ընդհարումների մասին⁹¹։

Հայկական գաղութի նշանավոր մտավորականներից Ա. Զամինյանը դրվատում է կոտորածների հետեանքով տուժածներին օգնելու նախիշեցանի կանանց նախածեռնությունը։ Ապա ավելացնում է, որ հայ գյուղացին հարկադրված բահը փոխարինել է հրացանով՝ «աղքի պատիվը պաշտպանելու այն խելացնոր պատերազմի մեջ, որ ստեղծել էր փտած ուժիմը երկու հարեան ազգերի մեջ...»⁹²։

Նախիշնանի և Ռուստովի հայ հասարակությունները կաթողիկոս Մկրտիչ Խորիմյանի անունով ուղարկում են հետեւալ հեռագիրը։ «Անզոր տանջանքների այս վշտալի տարրում, երբ հայի գույքը, պատիվը և նույնիսկ անձը դրված է ոչ միայն օրենքների պաշտպանությունից գորս, այլև ենթարկվում է ոչնչացման, ստորացումի և անարգանքի, մենք հեռացից, անզոր օգնելու գլուխ ենք խորարհում... Խորապես հավատում ենք Ձերդ օծություն, որ ուսաց հասարակության և ուս մամուլի լավագույն մասը կարեկից է մեր տանջանքներին»⁹³։

90 «Նոր կյանք», 1906, № 1, 7։

91 «Դոնսկա բերք», № 203, 211, 213, 228, 229, 234, 1906 թ։

92 «Մշակ», 1907, № 50։

93 «Մշակ», 1906, № 84։

Նոր Նախիջևանի Հայկական գաղութը ոչ միայն արձագանքում, սրբացավ վերաբերմունք էր դրսերում կատարվող դեպքերի առթիվ, այլիր ավանդներին հավատարիմ օգնության ձեռք է մեկնում հայրենակիցներին։ Դոնի Հայությունը անհապաղ նյութական օգնություն է կազմակերպում ընդհարումների հետևանքով տուժած բնակչությանը։

Նոր Նախիջևանի եկեղեցական հոգարարձությունը իմանալով Բաքվի 1905 թ փետրվարի դեպքերի մասին, անմիջապես մարդասիրական ընկերության վարչության անունով փոխադրում է 300 ռուբլի։ Հոգարձությունը տեղեկացնում է նաև, որ երկու որք պատրաստ են ընդունելու նախիջևանի որբանոցը⁹⁴։ Նույն տարվա հունիսին հոգարձությունը 450 ռուբլի է ուղարկում Երևանի նահանգի տուժածների օգտին⁹⁵։

Հայկական գյուղերը հայրենակիցներին օգնելու գործում են իրենց ներգրումն են կատարում։ Խեսվիտա գյուղն, օրինակ, նվիրում է 257 ռ. իսկ Մեծ Սալան միայն մեկ ամսում, 1906 թ. հունվարին հանգանակում է 30 ռուբլի⁹⁶։

Կատարվող դրամական հանգանակությանը մասնակցում են Ռուսաստանի գրեթե բոլոր հայկական գաղթավայրերը⁹⁷։ Դրանց մեջ առավել նշանակալից է մասնավորապես նոր Նախիջևանի քաղաքային խորհրդարանի դիրքորոշումը։

Դումայի ձայնավոր Գր. Զալխուշյանի առաջարկով Նախիջևանի քաղաքային խորհրդարանը քննարկում է Բաքվում 1905 թ. փետրվարի 6—9-ը և եղի ունեցած արյունահեղ դեպքերին վերաբերմունք ցույց տալու հարցը։ Խորհրդարանը գտնում է, որ նախիջևանի քաղաքային վարչությունը չի կարող անտարեր մնալ Բաքվի դեպքերի նկատմամբ։ Քաղաքային ինքնավարությունը պարտավոր է բաքվեցիներին ցույց տալ բարոյական և նյութական աշակցություն։ Խորհրդարանը արձանագրում է, որ Բաքվի դեպքերը զարմացնում են իրենց վիթխարի շափերով և առեջվածային պատճառներով, քանի որ տասնյակ տարիներ «մուսուլմանները և հայերը ապրել են համերաշխ և բարեկամաբար, որպես լավ հարևաններ»⁹⁸։ Ապա քաղաքային խորհրդարանը զնուում է. ա. խոր ափսոսանք հայտնելով մեծ շափեր ընդունած Բաքվի բացահայտ կոտորածները կանխելու գործում տեղական իշխանությունների անտարբերու-

94 ՀԿՊԱ, ֆ. 55, 280, թ. 15.

95 Նույն տեղում, թ. 36.

96 ՀԿՊԱ, ֆ. 54, գ. 2128, թ. 88, 89.

97 ՀԿՊԱ, ֆ. 52, գ. 1, գ. 1125։

98 ГАРО, ֆ. 91, օպ. 1, ձ. 1269, լ. 9.

թյան առթիվ, հոտնկայս հարգել դոհված հայերի և աղբեշանցիների հիշատակը. բ. Հեռազրով Բաքվի քաղաքային խորհրդարանին անկեղծորեն ցավակցել պատահած քաղաքական դժբախտության առթիվ և ցանկանալ, որպեսզի իրավասու զատարանի միջոցով հասարակության առաջացահայտվեն Բաքվի դեպքերի իսկական մեղավորները. գ. Նոր Նախիջևանի քաղաքային դումաներից 1000 ռ. հատկացնել՝ Բաքվի տրուծած հայ և աղբեշանցի բնակիչներին հավասարապես բաժանելու համար⁹⁹։

Հատկանշական է, որ վերահսկող իրավասություն ունեցող Ռուսովով քաղաքային դորձերի ատյանին դուր չի գալիս Բաքվի դեպքերի առթիվ նորնախիջևանցիների պարզորշ ակնարկը ցարական իշխանության քաղաքականության վերաբերյալ։ Անդրադառնալով այդ խնդրին, ատյանը գտնում էր, որ նոր Նախիջևանի խորհրդարանը դուրս է եկել քաղաքային ինքնավարություններին վերապահված իրավունքների շրջանակներից, քննադատելով տեղական իշխանության օրգաններին։ Հետեւ վարա քաղաքների ընդհանուր կանոնադրության 2-րդ և 63-րդ հոդվածների հիման վրա մերժում է որոշման այդ կետը¹⁰⁰։

Այս փաստն էական է նոր Նախիջևանի հայկական գաղութի հասարակական մինլորտը, քաղաքական հասունությունը բնորոշելու համար։ Այն պարագայում, երբ նոր Նախիջևանը հեռու լինելով կատարվող անցքերից, ի լրու համնող տեղեկություններով էր միայն դատում ընդհարումների մասին, երբ Դոնի ուսական թերթերը դրա պատճառը հիմնականում մուսուլմանական մոլեպանդությունն էին համարում, գաղութի հայ հասարակությունը, իրավամբ դրա մեղքը ցարական իշխանության քաղաքականության մեջ էր տեսնում։ Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Դոնի ափերին նման հետևության էին հանգում դեռևս հեղափոխության ժամանակներուց և ցարիկմի վարած քաղաքականությունը բացահայտվելուց առաջ՝ 1905 թ. փետրվար-մարտ ամիսներին։

Առավել կարեորը, սակայն, այն է, որ ընդհարումներին տեղիք տվողներին համարելով ցարիկմի պրովոկացիայի կույր գործիք. Նոր Նախիջևանի քաղաքային խորհրդատանը բարոյական և նյութական օգնություն էր ցույց տալիս ընդհարումների ժամանակ տուժած հայ և աղբեշանցի բնակիչներին հավասարապես։

Տարբեր ժողովրդների ու անգամ երկրների հետ շփումների լայն հնարավորություններ ընձեռող գաղութի հարմար դիրքը, ուսական կենտրոնների դեմոկրատական շերտերի հետ կապերը և առաջանա-

99 Նույն տեղում, թ. 11։

100 Նույն տեղում։

մտավորականության առկայությունը պայմաններ էին ստեղծում նման ինտերնացիոնալ մտայնության համար:

Ինտերնացիոնալ այդ գաղափարայնությունը բնորոշ էր նոր նախիչևանի հասարակական-քաղաքական մինուրուտում ձեավորված նշանակոր բոլցեիկներ Ա. Մյասնիկյանին, Ս. Մրապիոնյանին և մյուս գործիչներին, Դոնի հայ մտավորականությանն ու հայությանը առհասարակ:

Այսպիսով, ուսւաստանյան առաջին բուրժուական հեղափոխության ժամանակ նոր նախիչևանը Ռուսութիւն մեկտեղ ու նրա սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների շարքերում, ակտիվորեն մասնակցեց հեղափոխական շարժումներին: Հայկական գաղութը միաւամանակ դարձավ հնդափոխական սոցիալ-դեմոկրատական և դաշնակցական կուսակցությունների հակամարտությունների կենտրոն: Դոնի հայությունը հարևան ժողովորդների բարեկամության դիրքերից ակտիվորեն արձագանքեց Մայր Հայրենիքում կատարվող իրադարձություններին:

Ինչ վերաբերում է Դոնի ամբողջ մարզին, ապա սկսութեալ 1905—1907 թթ. հեղափոխական շարժումների առավել մեծ շափերով ծավալմանը խոշոշուում էին մի շարք հանգամանքներ: Դրանց մեջ հիմնականը ինքնակալությանը հավատարիմ կաղակային դորամասերի առկայությունն էր և սոցիալ-դեմոկրատական մենշևիկյան թերթ գործուելությունը:

Հեղափոխության ամբողջ ընթացքում մենշևիկները բոլցեիկների համակակիցին դիրք ունեին կաղմակերպությունների մեծ մասում և Դոնի կոմիտեում: Պատահական չէր, որ Դոնից ՌՍԴԲԿ 3-րդ, 4-րդ և 5-րդ համագումարների դելեգատներ են ընտրվել միայն մենշևիկները կամ նրանց ազդեցության տակ գտնվող գործիչները: Մենշևիկները շափակոր, համաձայնողական և անգամ օպորտունիստական քաղաքականությունը խանգարում էր հեղափոխականորեն տրամադրված աշխատավորության գործողություններն ըստ ամենայնի, ճիշտ գիտավորելուն, նրան վճռական մարտերի մղելուն:

ՌՍԴԲԿ Վ համագումարի արդյունքները քննարկելիս Ռուսութիւնախիչևանյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում քննադատվում է Դոնի կոմիտեի գործունեությունը, որում մեծամասնություն էին կազմում մենշևիկները: Դոնի կոմիտեի քաղաքական գիծը, նրա գործունեությունը խիստ քննադատվեց մասնավորապես 1907 թ. հունիսի միջնադանակին կոնֆերանսում: Դրան քաղաքային շրջանից մասնակցում էին

9, նախիչևանից՝ 12, բոլցեիկյան խմբից 2 և մեկ ներկայացուցիչ աշակերտական կազմակերպությունից¹⁰¹:

Դոնի կոմիտեի նոր կազմը համալրվում է բոլցեիկներով: Մենշևիկների գեմ տարվող պայքարի ընթացքում բոլցեիկները կարողացան գերակիր ազդեցություն ձեռք բերել Ռուսութիւնախիչևանյան միացյալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում: Դոնի ամբողջ մարզի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում, սակայն, մենշևիկների գերակշռությունը պահպանվեց փաստորեն մինչև 1917 թվականը:

* * *

Մտողիպինյան ռեակցիայի տարիներին ծանր դրություն էր ստեղծվել նաև Դոնում: 1908 թ. բանտարկվում են ՌՍԴԲԿ Դոնի և Նախիչևանյան շրջանային կոմիտեների անդամները: Դրանից հետո Դոնկոմը մինչև 1911 թ. բաղարում է գործելուց: Զերբակալությունների ու հետապնդումների հետեւանքով ցրվում են նաև տեղական կազմակերպությունները¹⁰²:

Նոր նախիչևանում ևս խստորեն հետապնդվում էին սոցիալ-դեմոկրատներն ու կասկածելի համարվող անձնավորությունները: 1909 թ. բանտարկվում և ոստիկանական հսկողությամբ Սիբիր է աքսորվում Սերոր Չալխուշյանը: Նա մի քանի ընկերների հետ ստեղծել էր սոցիալ-դեմոկրատական խմբակ: Ս. Զաթալբաշյանի ղեկավարությամբ գործող խմբակը վճռել էր ակտիվ գործողությունների անցնել՝ սարքավորում ձեռք բերել, թուուցիկներ տպագրել և տարածել բանվորական շրջաններում՝ ֆարբիկաներում ու գործարաններում¹⁰³:

Շուտով ձերբակալվում է նաև Խորկովում սովորող Խաչերես Սոլոմոնյանը՝ իր տանը անլեգալ գրականություն պահելու համար¹⁰⁴:

Չնայած խստագույն հետապնդումներին, բոլցեիկները չեին դադարեցնում աշխատանքները: Նրանք ամեն ինչ անում էին կուսակցական կազմակերպությունները վերականգնելու համար: Բազմաթիվ ձախողումներից և վիթխարի դժվարություններ հաղթահարելուց հետո Դոնի բոլցեիկյան կազմակերպությունը հաջողվում է 1910 թ. վերականգնել Ռուսութիւնի և նախիչևանի սոցիալ-դեմոկրատական խմբերը: Այդ նույն ժամանակ բոլցեիկների ընդհանուր ծողովը որոշում է ստեղծել ինքնուրույն կազմակերպություն և պայքարել անկայուն տարրերի ու լիկվիդատորների դեմ: Ռուսութիւնի և նախիչևանի սոցիալ-դեմոկրատական խմբերին

101 «Очерки истории партийных организаций Дона», с. 186—187.

102 «Очерки истории партийных организаций Дона», с. 196, 205.

103 ГАРО, ф. 829, оп. 1, д. 691, св. 47, л. 99.

104 նույն տեղում, գ. 681:

Հայտարարվում է Կուսակցական կազմակերպություն ձևավորելու մասին։ Այդ խմբերից կուսակցական դիրքերում կանգնած անձնավորությունները կարող եին անմիջապես մտնել վերականգնվող կազմակերպության մեջ։ Նախիջևանյան խումբը, նշում էր Պ. Զափարիձեն, ընդունում է այդ առաջարկը և ամբողջ կազմով մտնում բոլշևիկյան հաղմակերպության մեջ։ Խոստովվան խումբը, որտեղ շատ էին տատանվողներն ու անկայուն սոցիալ-դեմոկրատները, չրաժարվում է այդ քայլից։ «Նախիջևանի խումբն իր առաջին իսկ ժողովում,— գրում էր Պ. Զափարիձեն, — միահամուռ կերպով միացավ նոր կազմակերպված խմբի առաջարկությանը, բայց Խոստովի խմբի հետ ապարդյուն վեճեր ու բանակցություններ սկսվեցին, բացահայտ և շկոլմնորոշված լիկվիդատորները, իհարկե, չեին կարող համաձայնել նոր խմբի հետ...»

Այդ բանակցություններից հետո Ծոստովի հին խումբը դադարեց գոյություն ունենալ, մնաց կուսակցական մի խումբ՝¹⁰⁵:

Ըստովի կուսակցական կազմակերպությունները լենինյան դիրքերում համախմբելու և նրա գործունեության շրջանակներն ընդարձակելու մեջ կարևոր դեր է կատարում փորձված բոլշևիկ Պ. Զափարիձեն, որը 1910 թ. հունիսին եկել էր Ըստովի: Նա ստանձնում է 1910 թ. մայիսից ձևավորված նոր նախիչևանի շրջանային ինքնուրույն կազմակերպության աշխատանքների ղեկավարումը: Պ. Զափարիձեն զգալի հաջողության է հասնում սոցիալ-դեմոկրատական նախիչևանյան խումբը համարելու գործում^{106:}

1911 թ. Պետրողրագի արհեստավորական համագումարին մասնակցելու համար Խոստովից և Նախիջևանից ընտրվում են երեք պատգամավոր: Դոնի կուսակցական խմբերն ակտիվ մասնակցում են համագումարի նախապատրաստմանը և կարողանում պատգամավորների մեջ ընտրել տալ նաև սոցիալ-դեմոկրատ Պ. Օրյովին¹⁰⁷:

1910 թ. ամառվանից ամբողջ երկրում, այդ թվում և Դոնում սկսվում է հեղափոխական շարժումների նոր վիրելք: Աճում են բանվորական շարժումները, ուժեղանում բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը: Ռուսականի և Նախիջևանի բոլշևիկները ստեղծում են լավ սարքավորումով անլեգայ տպարան:

1911թ. Հունվարին Դոնի ֆաբրիկագործարանային և երկաթուղիների կուսակցական բջիջների պատվիրակների ժողովին ընտրում է Դոնի

105 Պ. Ա. Զափարիձեն, Հնտիր հողվածներ, ճառեր և նամակներ 1905—1918 թ., Երևան, 1970, էջ 155:

¹⁰⁶ ГАРО, ф. 829, сп. 1, д. 17, л. 70.

¹⁰⁷ «Очерки истории партийных организаций Дона», с. 213.

կոմիտե¹⁰⁸: Դոնի կոմիտեի վերականգնումը նշանակալից քայլ էր ազիտացիոն-մասսայական աշխատանքներն ուժեղացնելու, տեղերում սոցիալ-դեմոկրատական կուսակցական կազմակերպությունները վերականգնելու և ձևավորելու տեսակետից:

Պրովոկատորի մատնության հետևանքով, 1911 թ. մարտին բանտարկվում է Դոնկոմի կազմը, քարտուղար Պ. Զափարիձեի գլխավորությամբ, ոչնչացվում է անլեգալ տպարանը: Ա. Օրջոնիկիձեն, որ մինչ այդ ժամանել էր Ռուսություն, վերադաս օրգաններին հաղորդում է հետևյալը. «Գոնի Խռովովի կազմակերպությունը ուժեղ երերում է, դրա հիմնական պատճառը խիստ վախն է պրովոկացիայից: Նախիջեանի ընկերներն օրինակ ոչ մի ընդհանուր բան չեն ուղում ունենալ քաղաքի հետ՝ պրովոկացիայի պատճառով»¹⁰⁹:

Ոստիկանությունը ուշի-ուշով հետեւում և արգելում էր այն ամենն, ինչ աննշան չափով, անգամ, կասկածելի էր թվում: Այսպես, Մոսկվայում վկարի հետևանքով մահացած նորնախիջևանցի ուսանող Ավերյանցի թաղման ժամանակ արգելվում է մայրենի լեզվով ելույթներ ունենալը, քանի որ տեղի ոստիկանությունը հայերեն չէր հասկանում¹¹⁰:

Դեռևս 1906 թ. որոշվել էր նոր Նախիջևանի թիմական դպրոցում Մ. Նալբանդյանի անվան մեկ թոշակ նշանակել: 1911—1912 թթ. այդ տոթիվ գրագրություններ են սկսվում հոգեոր գործերի դեպարտամենտի, լուսագորության մինիստրության և տեղական հաստատությունների միջև: Ի վերջո, ներքին գործերի մինիստրությունը նկատի առնելով Մ. Նալբանդյանի բանտարկությունը և այն հանդամանքը, որ նա կապ է ունեցել Լոնդոնի պրոպագանդիստների հետ, արգելում է նրա անունով թոշակ նշանակելո¹¹¹:

Գնայած ստեղծված դժվարին պայմաններին, ազատության մեջ մնացած բոլշևիկները, նրանց թվում Բ. Նալբանդյանը ձգտում էին վերականգնել կազմակերպությունը։ Նրանց հաջողվում է ստեղծել, մեծ մասամբ բանվորներից կազմված, բոլշևիկյան խումբ։

Ցարիկմի ձեռնարկած միջոցառումներն, այնուամենայնիվ, չէին կարող կանխել հեղափոխական շարժումների վերելքը, որը 1912 թ. առավել ակնառու էր դառնում։ Բոլշևիկյան կազմակերպությունների ամրապնդման, աշխատավորական շերտերի վրա նրանց ազգեցության ուժեղացման հարցում հսկայական նշանակություն ունեցավ 1912 թ.

108 Նույն տեղում, էջ 219

¹⁰⁹ Г. К. Орджоникидзе. Статьи и речи, 1910—1926, т. 1, М., 1956, с. 18.

110 ЦГИА СССР, ф. 821, оп. 7, д. 332, л. 2.

111 Նույն տեղում, գ. 385, թ. 5—22:

մայիսից հրատարակվող բոլշևիկյան «Պրավդա» թերթը: «Պրավդան» բանվորներին դաստիարակում էր դասակարգային համերաշխության ու համախմբվածության ոգով: Թերթը լայն տարածում և ընդունելություն էր գտնում, հաճախ անդրադառում այնտեղի իրազարձություններին:

Դոնի բանվորները նյութապես աջակցում էին «Պրավդային»: Պատահական չէ, որ Վ. Ի. Լենինը թվարկելով Պետերբուրգի բանվորների կողին արձագանքող «Պրավդայի» համար խմբակային կարգով դում հավաքող կարեոր 50 քաղաքները և այլ վայրերը, դրանց թվում նշում է նաև Դոնի Ռուսով, նախիչևան քաղաքները և Դոնի մարդի Ռիկովսկի հանքավայրը¹¹²:

Երկար ժամանակ Դոնում շկար կուսակցական միասնական կինտրոն: Դոնի մարդի բոլշևիկյան կազմակերպությունները թեպետե իրար հետ կապ էին պահպանում, սակայն զեկավար կենտրոն շունեին: 1912 թ. աշնանը գերազանցապես Ռուսով-նախիչևանյան բոլշևիկների շանքերով ստեղծվում է «Կենտրոնական» անունով զեկավար խումբ: «Կենտրոնական» խմբի աշխատանքները գիրավորում էր հավատարիմ լենինյան, 1903 թ. կուսակցության անդամ, հեղափոխական գործունեության համար Բաքվից աքսորված Վ. Մ. Կասպարյանցը¹¹³: Կենտրոնական խումբը զեկավարում էր սուր քաղաքական պայքարի մինուրուտում ընթացող IV պետական դումայի ընտրությունները:

1913 թ. ստեղծվում է բոլշևիկյան նոր ընդհանուր կենտրոն՝ ՌՍԴԲԿ Ռուսով-նախիչևանյան կոմիտե՝ Դ. Սամոխվալովի ղեկավարությամբ: Կոմիտեն աշխատավորության շրջանում քաղաքական ագիտացիա էր վարում, կազմակերպում բանվորների գործադուլային շարժումը: 1914 թ. դարնանը գրեծադուլ հայտարարեցին «Աքսայ» գործարանի բանվորները, որը տեսք շուրջ մեկ ամիս: Ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին, եթե Դոնի պրոլետարիատի ավանդարդում ընթանում էին երկաթուղային գլխավոր արհեստանոցի բանվորները, ապա հեղափոխության նոր վերելքի տարիներին՝ 1910—1914 թթ. առաջատարի դերը ստանձնել էին «Աքսայ» գործարանի բանվորները¹¹⁴:

1914 թ. Ռուսովովում ստեղծվում է քաղաքային կուսակցական կենտրոնական օրգան՝ «ՌՍԴԲԿ ղեկավար կոլեկտիվ» անունով: Դրա տասնմեկ հոգուց քաղաքած կազմի մեջ էր մտնում նաև Բ. Մեզուրյանը: Ղեկավար

¹¹² Վ. Ի. Լենին. Եվֆ, հ. 21, էջ 530.

¹¹³ Е. В. Молдован. Революционная деятельность большевиков Дона в 1910—1914 гг. (автореферат), Ростов н/Д, 1975, с. 10.

¹¹⁴ «Очерки истории партийных организаций Дона», с. 250—259.

կոլեկտիվը հարցի և Պետերբուրգի բանվորներին պաշտպանելու հատուկ կողմի, որը Հեկտոգրաֆով բազմացրել էր Բ. Մեզուրյանը, դիմում է Ռուսովովի և նախիչևանի բանվորներին. «Խոստովի և նախիչևանի բոլոր բանվորներ,—ասվում էր այդ կոշում, մենք պետք է միահամուռ ոտքի կանգնենք հանուն մեր ընկերների պաշտպանության: Մենք պետք է նրանց հետ մեր համերաշխությունը արտահայտենք բողոքի գործադուլով»¹¹⁵:

Դոնի, ինչպես և ամբողջ երկրի հեղափոխական շարժումների վերելքն ընդհատվեց սկսված համաշխարհային պատերազմով:

Նոր նախիչևանի հայկական գաղութը, ինչպես նշեցինք նախորդ բանում, համաշխարհային պատերազմին նայում էր նաև ազգային խրնդիրների լուծման տեսանկյունով: Դոնի հայությունը պատերազմի հաջող ելիքի, թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի հաղթանակի մեջ էր տեսնում արևելյան բռնապետական լծից իր ժողովրդի մեծ հատվածի՝ արևմտահայության ազատագրման ելքը: Հետեաբար հայկական գաղութն իր հնարավորությունների սահմաններում ամեն կերպ աշակցում էր ոռուական զենքի հաղթանակին:

Նոր նախիչևանի այն շերտերը և առաջին հերթին աշխատավորությունը, որն ավելի մոտ էր Ռուսովովի բանվորական միջավայրին և զասակարգային համերաշխություն էր զգում նրա հետ, ընդգրկված էր սոցիալ-քաղաքական ընդհանուր ոլորտում և ընթանում էր այդ հունով:

Դոնի բոլշևիկյան կազմակերպությունները բայքայվել էին ձերբակալությունների և բանակ զորակոչվելու հետեանքով: Միայն պատերազմի երրորդ տարում նրանք կարողացան միասնական քաղաքային կենտրոն հիմնել: 1916 թ. ստեղծվեց ՌՍԴԲԿ Ռուսով-նախիչևանյան կոմիտեն, որը շուտով սկսեց հրատարակել «Պրոլետարսկոյ լուգո» անլեգալ թերթը¹¹⁶:

Պատերազմի ժամանակ ստեղծված ծանր պայմաններին բանվորները պատասխանում էին առաջին հերթին գործադուլներով: Աստիճանաբար հեղափոխական շարժումների մեջ է ընդգրկվում նաև զյուղացիությունը: Կնալով ածում, ավելի մասսայական-քաղաքական բնույթ էր ստանում գործադուլային շարժումը:

1917 թ. փետրվարյան բուրժուական հեղափոխության հաղթանակից և ցարիզմի տապալումից հետո, Պետրոգրադի օրինակով, Դոնում ստեղծվում է ժամանակավոր հեղափոխական կոմիտե, որը հատուկ կողով դիմում է Ռուսովովի և նախիչևանի բանվորներին: Շուտով, մարտ ամսին ստեղծվում է ՌՍԴԲԿ Ռուսով-նախիչևանյան նոր կոմիտե: Վերջինս գրլիավորում էր հեղափոխական խմբումները, հետևում բոլշևիկյան կազ-

¹¹⁵ Նույն տեղում, էջ 262:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 270:

ժակերպությունների ամրապնդմանն ու աճին: Ավելի ուշ, հուլիսին կոմիտեի կազմում ընդգրկվում է նաև Գ. Զախարյանցը: Նա մի քանի ամիս անց դառնում է բոլշևիկների կազմակերպած Ռուսովոլնախիչնախանյան Կարմիր գվարդիայի շտաբի պետի տեղակալ և ապա պետ¹¹⁷:

Փետրվարյան հեղափոխությունը և միապետության տապալումը հույսերի նոր ալիք, անգամ ոգեստություն են առաջ բերում նոր նախիչնախանում: Մարտ ամսին Միքայել Նալբանդյանի մահվան տարեդարձին մեծ ցույց է կազմակերպվում: Ցուցարարներն անցնելով փողոցներով և երգելով «Դուք զո՞՞ գնացիք» մարտական երգը, Համսում են քաղաքի կենտրոնի ս. Լուսավորիչ եկեղեցու հրապարակը: Այնուհետև հավաքված հոծ բաղմության առաջ ելույթ են ունենում Մ. Շահինյանը, Գր. Չուբարյանը և ուրիշներ: Ապա տպագործի այդ շքերթը շարժվում է գեղի Սուրբ Խաչ վանքը: Ցուցարարները, շրջապատելով Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի մահարձանները, ճառեր են արտասանում և եկեղեցական շարականների փոխարքն երգում հեղափոխական երգեր¹¹⁸:

1917 թ. Փետրոգրադում հաղթանակած Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության լուրը ցնծովթյուն է առաջացնում Դոնում: Ռուսովոլնախիչնախանյան բանվորների ու զինվորների դեպուտատների սովետը որոշում է ստեղծել ուսումնական կոմիտե: Վերջինս իր վրա է վերցնում աշխատավորության հեղափոխական շարժումները գլխավորելու դորձը: Սակայն Դոնում սովետական կարգերի հաստատումը հանդիպում է տապալված ժամանակավոր կառավարության և իմպերիալիստական պետությունների կողմից ակտիվ աշակցություն ստացող Դոնի Հակահեղափոխության համառ դիմադրությանը: Դոնը շուտով դառնում է Համառուսաստանյան Հակահեղափոխության հիմնական կենտրոնը: Այդ պատճենով էլ Ռուսովում սովետական իշխանությունը կարճատե գոյությունից հետո, 1917 թ. դեկտեմբերին, ընկնում է:

Սովետական կարգերի անկումից հետո Ռուսովոլնախիչնախանյան կոմիտեն անցնում է ընդհատակ: Վերջինս, Համագործակցած Դոնի մարդկազմական կոմիտեի հետ քաղաքական աշխատանք էր տանում բանվորների և գյուղացիների շրջանում:

1918 թ. փետրվարի 23-ին հարավարևելյան ուսումնակատի գորքերը ազատագրում են Ռուսովով, իսկ երկու օրից հետո սպիտակգվարդիական ուժերի կենտրոն նովոչերկասկը¹¹⁹:

117 Նույն տեղում, էջ 302, 312, 336, 358.

118 «Հայրենիք», 1955, № 7, էջ 72:

119 «Очерки истории партийных организаций Дона», с. 419.

Դոնում վերականգնվում է սովետական իշխանությունը: Ռուսովոլնախիչնախանյան բանվորների և զինվորների դեպուտատների սովետը արտակարգ ժողովում հայտարարում է. «...այժմվանից ամբողջ իշխանությունը Ռուսովովում և նախիչնախանում է միայն իրեն»¹²⁰:

ԱՄԳԲ(Ռ)Կ Դոնի բյուրոն ղեկավարում էր սովետական կարգերի ամրապնդման աշխատանքները: Պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման գործում Դոնի բոլշևիկներին մեծ օգնություն էր ցույց տալիս հավատարիմ լւնինյան, նշանավոր բոլշևիկ Ս. Օրջոնիկիձեն: Նա, որպես ԲՍՖՍՀ ժողովում մարդիկ Ս. Օրջոնիկիձեն: Նա, որպես ԲՍՖՍՀ ժողովում մարդիկ Ս. Օրջոնիկիձեն: Նա կապեր էին հաստատել նոր նախիչնախանի և Հյուսիսավայրին կովկասի հայկական գաղութների ղեկավար շրջանները, որոնց նկատմամբ նա ուշադիր վերաբերմունք էր գրասեռում¹²¹:

1918 թ. մայիսին գեներալ Կրասնովի սպիտակգվարդիական զորքերին, գերմանացիների աջակցությամբ, հաջողվում է գրավել Դոնի մարզը¹²²:

Սպիտակգվարդիական զորքերի թիկունքում ընդհատակյա աշխատանքները ղեկավարելու համար ստեղծվում է Դոնի բյուրո: Նրա վեց հոգուց բաղկացած կազմում էր Ս. Սրապիոնյանը: Շուտով Դոնի բյուրոն կապ է հաստատում ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպությունների հետ և լայն գործունեություն ծավալում կապակային բնակչության ներքնախավերի մեջ: Ռուսովովի և նախիչնախանի բնակչության շրջանում հեղափոխական ագիտացիա էր մղում նաև Պ. Կարգաշովան (Ղարդաշյանը)¹²³:

1919 թ. գարնանը դրությունը վատթարանում է: Դենիկինը գրավելով ամբողջ Դոնի մարզը, դուրս էր գալիս դեպի ծարիցին, իսկ աշնանը նրա զորքերը գրավելով Վորոնեժն ու Կուրսկը ուղղություն էին վերցրել դեպի Մոսկվա:

Հոկտեմբերին կարմիր բանակը կասեցնում է սպիտակգվարդիականների հարձակումը: Ծուտով սկսվում է հակահարձակումը, որը ուղեկցվում էր սպիտակգվարդիական, այդ թվում և կազմակային զորքերի քայլայում, կազմակային առանձին զորախմբեր հրաժարվում էին կովկել և անգամ անցնում էին սովետների կողմը¹²⁴:

120 «Борьба за власть Советов на Дону 1917—1920», Сборник документов. Ростов-на-Дону, 1957, с. 266—267.

121 «Հայրենիք», 1955, № 10, էջ 75—78:

122 «Борьба за власть Советов», с. 364.

123 «Очерки истории партийных организаций Дона», с. 433.

124 «Борьба за власть Советов», с. 479—487.

1920 թ. Հոմավարին Առաջին հեծյալ բանակը գրավում է Խոստովը: Մինչև ապրիլ ազատագրվում են ամբողջ Դոնի մարզը, Հյուսիսային Կովկասը, ուր վերջնականապես վերականգնվում է սովետական իշխանությունը^{125:}

1917 թ. փետրվարյան բուրժուական հեղափոխությանը հաջորդող երեք տարիները, մինչև 1920 թ. Հոնվար՝ սովետական իշխանության վերջնական հաղթանակը, Դոնում ստեղծվել էր բաղաքական բուռն պայքարով հագեցած, բարդ ու լարված դրություն: Սովետական իշխանության գեմ Կալեղինի, Կրասնովի, Դենիկինի իրար հաջորդող սպիտակ-գվարդիական զորամասերի հարձակումներն ու կարճատե տիրապետությունը, ավստրո-գերմանական ուժերի երևան գալը, անընդմեջ կատարվող բանտարկություններն ու մահապատիժներն անկայուն ու խառն իրավիճակ էին ստեղծել Դոնի ամբողջ բնակչության, այդ թվում և հայկական գաղութի համար:

Այդ տարիներին նոր նախիչեանի ազգային-մշակութային կյանքը տնօրինում էր համայնական խորհուրդը: 1917 թ. վերջում, գաղութի հայ հասարակությունը բոլոր կուսակցությունների մասնակցությամբ, ընդհանուր գաղտնի քվեարկությամբ ընտրում է 60 հոգուց բաղկացած հայ ազգային կամ «հայ համայնական խորհուրդ»: Խորհրդի նախագահ է ընտրվում Ռ. Բերերյանը: Խորհուրդն ուներ իր գործադիր մարմինը՝ համայնական վարչությունը, որը գլխավորում էր Ե. Շահազիզը: Համայնական խորհուրդը՝ Ե. Շահազիզի խմբագրությամբ հրատարակում է «Հայ համայնք» շաբաթաթերթը: Համայնական խորհուրդը, փաստորեն, ոչ միայն նոր նախիչեանի ու հայկական գյուղերի, այլև հարավային Ռուսաստանի ցիրուցան հայության մշակութային կյանքի տնօրենը դարձավ Այն ինչ որ շափով ներկայացնում ու պաշտպանում էր հայության շահերը տեղական իշխանությունների առջեկ^{126:}

125 Նոյն տեղում, էջ 506:

126 «Հայրենիք», 1940, № 10, էջ 79, 1955, № 9, էջ 73:

ՄՇԱԿՈՒՅԹ

Անցյալ դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին նոր նախիչեանի գաղութն ապրում էր հարուստ ու բեղուն մշակութային կյանքով:

Ռուսաստանի սոցիալ-անտեսական և հասարակական-քաղաքական կյանքը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ընթանում էր վերելքի ուղիով: Դյուզացիական ուժորմից հետո սոցիալ-տնտեսական հարաբերությունների հեղաբեկությամբ արագացավ, կապիտալիստական արտադրության զարգացման հետ մեկտեղ սուր ու բացահայտ բնույթ ստացան դասակարգային հակասությունները: Հստակորեն դրսերվեց տարբեր հասարակաշերտերի սոցիալական դիմանկարը:

Դռնես 1850-ական թվականներին սկսված հասարակական-քաղաքական աշխույժը հետագա տասնամյակներում արգասավորվեց նոր երեխույթներով: Ռուսաստանը դարձավ հեղափոխական-դեմոկրատական, ապա նարոդնիկական շարժման կենտրոն, այստեղ լայն տարածում գտավ մարքսիզմը: Հեղափոխության կենտրոնը Արևմտյան Եվրոպայից աստիճանաբար տեղափոխվում էր դեպի Ռուսաստան: Եվրոպական երկրների համեմատությամբ, ավելի ուշ պատմական թատերաբեմում հանդես եկած սուսական պրոլետարիատը XX դարի սկզբին այնպիսի հուժկու ելույթներ սննեցավ, որ ցնցեց ինքնակալության հիմքերը:

Ամբողջ երկրին համակած այդ իրադարձությունները, ի տարբերություն կայսրության ծայրամասերի, որտեղ դրանք հաճախ թույլ էին իրենց գացնել տալիս, Դոնի երկրամասում ավելի որոշակի արտահայտություն էին գտնում:

Հարկավ, ճորտատիրական կաշկանդումներից զերծ Դոնի հայկական զանգվածի մշակույթն ազատ զարգացման պայմաններ ուներ նաև անցյալ դարի առաջին կեսին: Նկատի պետք է առնել սակայն, որ ռուսական և հայկական այն միջավայրը, հասարակական այն ընդհանուր ակունքները, որոնցից սնվում էր գաղութի մշակութային կյանքը, գեռես կրում էին ֆեոդալիզմի ուժեղ զրոյմը և այդ տեսակետից որոշակիորեն տարբերագտվում էին դարի առաջին և երկրորդ կեսերը:

Հարավային Ռուսաստանը, այդ թվում և Դոնի ավագանը, կենտրոնական Ռուսաստանի հետ կապող ուղիների հանգույցում գտնվող նոր նախիչևնը, աշխույժ երթեւկ ուներ և բազում թելերով կապված էր ռուսական կենտրոնների հետ։ Բուռն կյանքով ապրող հայկական գաղութը շփումների մեջ էր և կրում էր ռուսական դեմոկրատական, առաջավոր մտքի ու մշակույթի ազդեցությունը։ Այդ առումով հատկանշական է, որ նոր նախիչևնանում արժանավայել նշվում էին Ս. Պուշկինի, Ն. Գոգոլի, Ն. Նեկրասովի, Լ. Տոլստոյի և ռուս գրականության ու մշակույթի այլ մեծերի հոբելյանական տարելիցները։ Հոբելյանի ասիթով տարածվում էին նրանց ստեղծագործությունները, նրանց անոնով գրադարան կամ գրպարոց էին կոչում, նրանց կյանքի ու գործի մասին տեղի հայկական թերթերում բազմաթիվ հոդվածներ տպագրում։ Այլ խոսքով, Դոնի հայկական գաղութում լայնորեն ծանոթանում, մասսայականացվում էին ռուս դեմոկրատական գրականության նշանավոր գործիչների ստեղծագործությունները։

Նոր նախիչևնի հայկական գաղութը միաժամանակ ռուսական առաջավոր մշակույթը Հայաստան ու Հայ իրականություն փոխանցողի, տարածողի դեր էր կատարում։ Ռուսահայ մյուս գաղթօջախների հետ միասին նոր նախիչևնանը հայ հասարակական ու մտավոր կյանքում ռուսական դեմոկրատական մշակույթի ազդեցությունն ու ավանդները կրող կենտրոններից էր։

Նոր նախիչևնի մարդաշատ գաղութը մյուս կողմից լիաթոք կյանքով ապրող հայկական նշանակալից մի կենտրոն էր։ Հայկական գաղութը, եթե սոցիալ-տնտեսական կյանքով լիովին կապված էր բովանդակ երկրի, մասնավորապես հարավային Ռուսաստանի հետ և նրա մի մասնիկն էր կազմում, ապա իր հոգեսր կյանքով ռուսական հասարակական մտքի բարերար ազդեցությունը կրելով հանդերձ, ըստ էության, հայկական ազգային մշակույթի կարևոր օջախներից էր։

Նոր նախիչևնանը, որպես ազգային կենտրոն, միաժամանակ արձագանքում էր հայ ժողովրդի համար կարևոր նշանակություն ունեցող իրադարձություններին։ Հայտնի է, որ արեելահայության պատմական ճակատագիրը տնօրինվում էր համեմատաբար բարենպաստ եղանակով։ Հայ ժողովրդի այս հատվածը ժամանակին միանալով Ռուսաստանին իր բախտը կապել էր Ռուսաստանի ու ռուս ժողովրդի, նրա զարգացման հեռանկարների հետ։

Միանգամայն այլ էր իրավիճակը Արևմտյան Հայաստանում։ Արևմտյան հայությունը մնալով թուրքիայի տիրապետության տակ իր ապագան անօրինելու հետանկարներ շուներ։ Ինչպես ամբողջ արեելահայությունը, այնպես էլ հատկապես ռուսահայ գաղթօջախները և դրանց մեջ բարվու

վիճակում գտնվող Դոնի հայությունն արևմտահայության գրկության երաշխիքը թուրքական լուծը թոթափելու և Ռուսաստանին միանալու մեջ էր տեսնում։

Մեզ հետաքրքրող դարաշրջանը արևմտահայության համար եղավ աղետալիք։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Հայկական հարցի առաջացումն ու միջազգային գիվանագիտության մեջ նրա անպատող արձարծումները, արևմտահայության ազգային ու սոցիալական ճնշման ուժեղացումը, կազմակերպվող ջարդերն այնպիսի իրադարձություններ էին, որ իրենց վրա էին գամում համայն հայության ուշադրությունը։

Հասուն ու առաջադեմ մտավորականություն ունեցող, ազգային կյանքով ապրող Դոնի հայկական գաղութը շեր կարող անտարբեր մնալ այդ ամենի հանգես։ Արևմտահայ իրականությունն իր հասարակական-քաղաքական անդրադարձումն էր ունենում և առավել կամ նվազ չափերով արտացոլումը գտնում նաև նոր նախիչևնի մշակութային կյանքում։

Դոնի գաղութի ինչպես հասարակական, այնպես էլ մշակույթի ասպարեզում խոշոր էր նշանավոր երկու հայրենակիցներ՝ Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի գերբ։

Մշակույթի ու լուսավորության բազմաթիվ այլ խնդիրների առիթով նորնախիչևնանցիները հաճախ էին հիշում իրենց մնջ հայրենակցին։ Նրանք դիմում էին Ս. Նալբանդյանի ուղենիշ հանդիսացող ստեղծագործություններին, զանում իրականացնել նրա ազատախոր գաղղափարները։

Մյուս մեծ նորնախիչևնցու՝ Ռ. Պատկանյանի 1870—1880-ական թվականների ստեղծագործությունները և առօրյա եռանդուն գործունեությունը նպատակամղված էին արևմտահայության պատագրությանը։ Նա, միաժամանակ, հիտամուտ էր լուսավորություն տարածելուն, ինչպես նաև ռուսահայ համայնքներում և, առաջին հերթին, նոր նախիչևնում հայոց լեզուն, ազգային սովորություններն ու նկարագիրը պահպանելուն։

Այս շրջանում նոր նախիչևնում հրապարակ են գալիս մի շարք ընկերություններ, որոնք սկսում են կարևոր դեր կատարել լուսավորություն տարածելու և առհասարակ մշակույթի պահպանման ու զարգացման ուղղությամբ։ Հայ մտավորականությունն ու հասարակական հաստատություններն էին փաստորեն տնօրինում գաղութի մշակութային կյանքը։

Դոնի հայկական գանգվածը միաժամանակ ոչ միայն պահպանում, այլև իր հնարավորությունների սահմաններում զարգացնում էր ազգային մշակույթը։ Բուրժուական հարաբերությունների զարգացման շնորհիվ ստեղծված համբնդանուր առաջընթացի պայմաններում և, օգտագործելով ուսուաստանյան առաջին հեղափոխության բերած ազատաշոնչ մթնոլորտը, հրապարակ է գալիս տեղի հայկական մամուլը։ Պարբերական մամուլը սկսում է կարենոր դեր կատարել գաղութի հասարակական ու մշակույթային կյանքում։ Տարածում է գտնում հրատարակական-տպագրական գործը։ Փոխվում է գրականության, թատրոնի, առասարակ արվեստի ուղղվածությունը, դրանք սկսում են ընդառաջել կյանքի պահանջներին, արձագանքել առօրյա խնդիրներին։ Հիմնվում են նոր տիպի դպրոցներ։

Համառոտակի ծանոթանանք Դոնի հայ գանգվածի մշակույթի առանձին ճյուղերի պատմությանը։

1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթական, դպրոցական գործը Դոնի հայության շրջանում միշտ է պատշաճ ուշադրության է արժանացել։ Տակավին 1780-ական թվականների սկզբին, գաղութի հիմնադրման տարիներին իրավասու հայ գործիչների միջև բանակցություններ էր գնում քաղաքի հիմնադրման ժամանակ դպրոցի համար հարմարավետ տեղ հատկացնելու մասին։ Քաղաքի հիմնադրման հենց առաջին տարիներին բացվում է առաջին դպրոցը, իսկ Սուրբ Խաչ վանքի կառուցումը լիովին շավարտված, 1780-ական թվականների վերջին այնտեղ հիմնվում է գիշերօթիկ դպրոց։

Մակայն ծխական ու մասնավոր այդ դպրոցները չեն կարող բավարել մատաղ սերնդի դաստիարակությանը ներկայացվող պահանջները։ Այդ պատճառով էլ գաղութի երևելի գեմքերը տեղեկանալով Մոսկվայում ուսումնարան հիմնելու Հովհաննես Լազարյանի կտակի մասին, քանից դիմում են եղբորը՝ Հովհակիմ Լազարյանին։ Նրանք, վկայակոչելով Դոնում հայկական հոծ զանգվածի առկայությունը և նպաստավոր այլ հանգամանքներ, փորձում են համոզել ուսումնարանը Մոսկվայի փոխարեն բացել նոր Նախիջևանում¹։ Դրական արդյունքի շամանելով, նրանք իրենց զավակներին սկսում են ուղարկել Մոսկվա՝ նորաբաց

կազարյան ճեմարան։ Դա ուսուցման արդյունավետ եղանակ էր և շարունակվեց նաև հետագայում, սակայն Մոսկվա մեկնողների թիվը սահմանափակ էր և բնավ չէր կարող լուծել տեղում բարեկարգ ուսումնարան ունենալու խնդիրը։

1830-ական թվականներին եղած վարժարանների շարքում ուսումնական գործը քիչ թե շատ լավ էր դրված տակավին 1811 թ. հիմնադրված ծխական դպրոցում։ Ուսումնարանը տեղափորված էր աղյուսաշենքարեկարգ շենքում և պահպան էր գերազանցապես նվիրատվությունների հաշվին։ Սովորական ծխական դպրոցներից տարբերվում էր նրանով, որ այնտեղ դասավանդվում էին թվաբանության համեմատաբար բարդ գարսություններ, ուսումնարեն և հայերեն լեզուների քերականություններ²։

Բնականաբար, ծխական այդ դպրոցը ևս չէր կարող բավարարել երեխաններին անհրաժեշտ կրթություն տալու պահանջը։ Ենելով գրանից, քաղաքի հասարակության ժողովը (1838) անհրաժեշտ է գտնում ծխական այդ դպրոցը վերակառուցել, հավասարեցնել Անդրկովկասի գավառային ուսումնարանների կարգին և անվանել նոր Նախիջևանի քաղաքային ուսումնարան։ Պահանջվող լրացուցիչ ծախսերը քաղաքի հայ հասարակությունները վերցնում էր իր վրա։

Նոր Նախիջևանում գավառային ուսումնարան բացելու նպատակով այս և հետագա դիմումներն իրավասու մարմինների կողմից երկարատև քննարկումների նյութ են դառնում։ Ի վերջո հարցը դրական լուծում է ստանում, և միայն 1850 թ. բացվում է գավառային ուսումնարանը։ Այն նկատելի շափով տարբերվում էր ժամանակի ծխական վարժարաններից։ Գավառային ուսումնարանը նոր Նախիջևանի երկարակյաց ուսումնական հաստատություններից էր։ Ժամանակի պահանջներից բխող փոփոխություններ կրելով հանդերձ, այն փաստորեն գործել է գաղութի գոյության ամբողջ ժամանակաշրջանում։

1877 թ. գավառային ուսումնարանը վերակասուցվում է քաղաքային երկարայաց ուսումնարանի։ 1883 թ. ուսումնարանի աշակերտների թիվը հասնում էր 97-ի, որից առաջին դասարանում 64, երկրորդ դասարանում՝ 22 և երրորդ դասարանում 11 հոգի³։ 1891 թ. ուսումնարանը վերափոխվում է շորսդասայա, իսկ 1912 թվականին՝ բարձրագույն նախնական ուսումնարանի (վեցշեմանական սովորությունների հիմնարան) հայության սկզբանական պահանջների թիվը հասնում էր 143-ի։ Ուսումնարանը հիմնականում պահ-

¹ ՀԿՊՊԱ, ֆ. 54, գ. 2, թ. 2։

² Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 162, գ. 6, գ. 120, 139, 183։

³ ԳԱՐՕ, ֆ. 11, օպ. 1, ձ. 18, լ. 6—11.

⁴ ՀԿՊՊԱ, ֆ. 139, գ. 1541, թ. 12—15։

⁵ ԳԱՐՕ, ֆ. 131, օպ. 1, ձ. 14, լ. 28։

վում էր քաղաքի հասարակության (10 310 ռ.), ինչպես նաև պետության դանձարանից ստացվող (2771 ռ.) միջոցներով⁶:

1857 թ. տեղի քաղաքացիներից Աննա Պոպովան, ստանալով լուսավորության մինիստրության համաձայնությունը, նոր նախիջեանում բացում է առաջին իգական դպրոցը: Այնտեղ մյուս դպրոցներում դասավանդվող առարկաներից զատ ուսուցանվում էր նաև ձեռագործ, երաժշտություն և պար⁷:

1840—1850-ական թվականներին նոր նախիջեանում պայքար էր բորբոքվել մեծահարուստ Ա. Խալիբյանի ղեկ: Նա մեղադրվում էր քաղաքի եկամուտներն ու գաղութի եկեղեցական գումարները տարիներ շարունակ միանձնյա տնօրինելու, հասարակությանը հաշվետու լինելու և այդ միջոցներից պատկառելի գումար սեփականացնելու մեջ:

Նոր նախիջեանի և Բեսարաբիայի թեմի նորընտիր առաջնորդ Գ. Ալվազովսկին մեջմում է այդ հակամարտը, ըստ էության, պաշտպանության տակ առնում Ա. Խալիբյանին և խորհուրդ տալիս ունեցած միջոցներն օգտագործել լուսավորական նպատակներով: Ա. Խալիբյանն իր անունը կրող ուսումնարան է բացում, սակայն ոչ թե նախիջեանում, այլ Ղրիմի թեղողութա քաղաքում⁸:

Թեղողութա խալիբյան ուսումնարանը կուլտուր-լուսավորական դահաստելի գործունելիուն ունեցավ: Այն գոյություն ունեցավ 13 տարի՝ 1858—1870 թվականներին, սակայն շկարողացավ բավարարել թեմի կենտրոնական ուսումնարանին ներկայացվող անհրաժեշտ պահանջները և դառնալ այդպիսին: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ ուսումնարանի գոյության վերջին տարիներին քանից հարց էր հարուցվել այն նոր նախիջեան տեղափոխել և այնտեղ վերակառուցել որպես թեմական հոգեւոր դպրոց:

Ճորտատիրական կապանքներից ու սահմանափակումներից զերծ լինելու, նպաստավոր հանգամանքների բերումով Դոնի Հայ զանգվածի դարգացումը, ինչպես արդեն նշել ենք, տեղի էր ունենում քիչ թե շատ ազատ ու անկաշկանդ եղանակով: Ազատ ու համեմատաբար դեմոկրատական հունով ընթացող առաջընթացի ընդհանուր այդ ոգին հատուկ էր քաղութի կյանքի բոլոր կողմերին և, առաջին հերթին, մշակութին ու

6 Նույն տեղում, ֆ. 11, գ. 237, թ. 1—2.

7 ЦГИА СССР, ֆ. 733, օպ. 11, գ. 1856, ձ. 241, լ. 1—2.

8 Վ. Միքայելյան, Ղրիմի Հայկական գաղութի պատմություն 1801—1917, Երևան, 1970, էջ 287—303:

զպրոցական-ուսումնական գործին: Դրա կոնկրետ ու անմիջական արտահայտությունը պետք է համարել իգական սեռի կրթության հարցում տղած ուղամիտ վերաբերմունքը: Թևակետ նոր նախիջեանի սակավաթիվ վարժարանների թվում կար Ա. Պոպովայի իգական դպրոցը, սակայն 1860-ական թվականների սկզբին հարց է բարձրացվում իգական ազգային նոր ուսումնարան բացելու մասին: Հրապարակված հայտարարության մեջ պահանջվում էր, որպեսզի առաջին դասարան ընդունվողն ունենա մինչև 8 տարեկան հասակ և իմանա ուսուերեն ու հայերեն գրել-կարգը: Ուսումնարանին կից բացվելու էր նաև նախապատրաստական դասարան, ուսուերեն և հայերեն գրել-կարգավայրեցնելու համար: Օրիորդաց ուսումնարանում դասավանդվելու էին կրոն, ուսուերեն, քերականություն, ուսուաց պատմություն և աշխարհագրություն, հայերեն քերականություն, հայոց պատմություն, թվաբանություն, վայելլագրություն և ձեռագործ⁹:

1861 թ. սեպտեմբերին ուսումնարանի բացման հանդեսում քաղաքագույն Կ. Զայրապետյանը խոսելով հիմնվող հաստատության անհրաժեշտության մասին շեշտում է նաև կանանց լուսավորելու հարցում նորնախիջեանիների տեսակետն արտահայտող իր կարծիքը, «Քանզի անցին գնացին ժամանակակիցն այնօրիկ, — ասում է նա, — երբ մարդիկ հայէլին ի վերա կանանց իշրե ի վերա ծառայից: Այժմ ի մերումս մարդասիր գարու լուսավորեալ աշխարհս հայի ի վերա կանանց իբրեւ ի վերա մարդկան... այսինքն լինել նոցա ոչ միայն սոսկ սնուցիչ զաւակաց իւրեանց՝ որ բնական է անբան կենդանեաց անգամ, այլև լինել նոցա ընդ նմին ուսուցիչ և դաստիարակ նոցա... Թող ուրեմն այսուհետև դստերք մեր շպարծին միայն արտաքին փառավոր և շքեղ զգեստուք և ակնակուռ զարդուք իւրեանց... այլ թող պարծի այսուհետև իւրաքանչիւր ոք ի նոցանէ անձնական արժանավորութեամբ իւրով, գիտութեամբ աղքի ազգի օգտակար ուսմանց»¹⁰:

Թեև անցյալ դարի առաջին կեսին դպրոցական-ուսումնական գործում որոշ առաջընթաց էր կատարվել, սակայն Դոնի Հայկական գաղութը թևակոխում էր դարի երկրորդ կեսը, ուսումնական գործի ոչ այնքան բարվոք գրությամբ: 1860-ական թվականների կեսերին նոր նախիջեանում կար ընդամենը շորս ուսումնարան: Դրանք էին՝ գավառային ուսումնարանը, որն ուներ 76 աշակերտ և 6 ուսուցիչ, ծխական դպրոցը՝ 81 աշակերտով և 3 ուսուցիչով, երկրորդ կարգի իգական ուսումնարանը՝

9 «Համբավաբեր Ռուսիոյ» 1861, № 6:

10 Նույն տեղում:

86 աշակերտով և 11 ուսուցիչով և ընդամենը 36 աշակերտ և 4 դասատում եղող Ա. Պոպովյան հիգիենա մասնավոր դպրոց¹¹:

Այսպիսով, քաղաքի շորս ուսումնարանների աշակերտների բնականության էր 279 հոգու Դա մեծ թիվ չէ, եթե նկատի առնենք, որ քաղաքի բնակչության քանակը հասնում էր շուրջ 16 հազարի: Սակայն շրջակա բնակավայրերի համեմատությամբ, նոր Նախիջևանում սովորողների թիվն ավելի բարձր էր: Այդ նույն 1864 թ., օրինակ, նոսոտով քաղաքի բնակչությունն անցնում էր 20 հազարից, սակայն սովորողների ընդհանուր քանակով ետ էր մնում նոր Նախիջևանից: Խոստովում կար միայն 3 դպրոց, ուր աշակերտների թիվը հասնում էր ընդամենը 225 հոգով¹²: 1866 թ. նոր Նախիջևանում շարունակում էին գործել վերոհիշյալ շորս դպրոցները, սակայն աշակերտների թիվը ոչ միայն չէր ավելացել, այլև պակասել էր, իչել 233 հոգով¹³:

Դժվար չէ հասկանալ, որ վարժարանները քիչ էին և եղածներն էլ պակասվոր՝ բնակչության աճող ուսումնառության պահանջները գոհացնելու համար: Կրթական օջախների անբավարար լինելը զգացվում էր մասնավանդ 1850—60-ական թվականների հասարակական-քաղաքական, կուստուր-լուսավորական ընդհանուր հետաքրքրության և աշխուցի շրջանում, որն ավելի խթանվեց գյուղացիական ռեֆորմի առաջացրած տեղաշարժերի շնորհիվ: Այդ իսկ պատճառով միանգամայն բնական է, որ նոր Նախիջևանում ժամանակի պահանջներին համապատասխան լուսավորյալ դպրոց հիմնելու ցանկությունները և այդ ուղղությամբ գործադրվող շանքերն այս շրջանում, հատկապես, ուժին էին արտահայտվում և աստիճանաբար ավելի ու ավելի մեծ ծավալ ընդունում:

Ինչպես հայտնի է Մ. Նալբանդյանը Հնդկահայ կտակների հարցը բարձրացրեց և այդ գումարով մտադիր էր նոր Նախիջևանում, իր խոսքերով ասած: «Հիմնելու մի այնպիսի բարեկարգ դպրոց, որ առաջինը լիներ, և տասը տարու մեջ ամենայն հայ մարդ պարծանքով և զմայլանքով դարձուցաներ յուր ուշը այդ դպրոցի վերա»¹⁴: 1861 թ., Հնդկաստանից Ա. Սովորանշին հասցեագրած նամակում նա գրում էր: «...Նախիջևանի մեջ մի հոյակապ դպրոց ունենալու հույսը քաշակերում է ինձ և զորացնում է իմ ֆիզիկական թուլությունը պատճառված գժոխացին շերմությունից»¹⁵:

11 «Памятная книжка Екатеринославской губернии на 1864 год», с. 147.

12 նույն տեղում, էջ 145.

13 ГАРО, ф. 11, оп. 1, д. 175, л. 7—12.

14 Մ. Նալբանդյան, Ելք, հ. 2, էջ 277.

15 Մ. Նալբանդյան, Ելք, հ. 4, էջ 109.

Ազգի լուսավորության մեջ նրա ապագան տեսնող և դրա մշտական յատագով Մ. Նախիջևանը «Ազգային մայր դպրոց» հիմնելու անհրաժեշտության մասին խոսելով, 1864 թ. գրում էր: «Այս պատճառով մտածում ենք, որ դպրոցի առավել պատշաճավոր տեղն է նախիջևանը, Դոն գետի վրա, Աղովյան, ուրեմն և Սև ծովին շատ մոտավոր, իսկ ժողովուրդը բորբոքվին հայ և մոտ 20 000 հոգի յուր շրջակա գյուղերով»¹⁶:

Երկու տարի անց, 1866 թ. հյուրընկալվելով նոր Նախիջևանում, նա քաղաքի հասարակությանը հորդորում է հիմնել գիմնազիա, որն անհետանք չի անցնում: Վաճառական Մ. Փանյանին ուղղած նամակում Մ. Նախիջևանը գրում էր: «Թաղաքական (իմա՞ քաղաքի—Վ. Բ.) հասարակությունը շնորհակալությամբ և ուրախությամբ ընդունեց իմ առաջարկությունը հիմնարկելու նոր Նախիջևանում մի հայկական գիմնազիոն և, որովհետեւ հայք ըստ մեծի մասին վաճառական մարդիկ են, տալով նորան ուեալական ուղղություն, բայց թույլ տալով ուսուցանել նորա մեջ և լատինական լեզուն, իբրև հիմք եվրոպական նոր լեզուների, ֆրանսիականի, գերմանականի, անգլիականի: Դորա մեջ պիտի ավանդվիրում ազգային ոճով բոլոր ուսանելիքը ընդհանուր կրթության և մասնավոր գիտությունները վաճառական կոչման»¹⁷:

Հայ առաջադիմ գործիչներից զատ, սակայն, ոչ առանց վերջիններիս ազգնեցության, Դոնի հայկական գաղութում կրթական հաստատություններ հիմնելու բազմաթիվ դիմումներ և առաջարկներ է անում նաև տեղի բնակչությունը: 1859 թ. մի խումբ նախիջևանցիներ (Դ. Քառարաջյան, Կ. Հայրապետյան, Ա. Խուալյան, Ս. Քայալյան, Պ. Սահմայանց, Հ. Խլտճյան, Հ. Հալաւյան, Գ. Սալթիբյան) դիմում են նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Գ. Այվազյանին և խնդրում Մ. Խաչավանում բացել հայկական դպրոց¹⁸:

1866 թ. Մ. Նախիջևանի կողմից խրախուսված նոր Նախիջևանի հայ հասարակության ժողովը միահամուռ գտնում է, որ վաղուց հասունացել է ժամանակը քաղաքում ունենալու ժամանակի պահանջները բավարարող գիմնազիա: Ժողովը որոշում է Հնդկական կտակներից, եկեղեցական արդյունքներից, քաղաքի եկամուտներից հոգալ հիմնադրվելիք գիմնազիայի համար անհրաժեշտ 24 հազար ռուբլի ծախսերը և խնդրել իրավասու առյաններին բացելու կրթական լուսավորյալ մի օջախ: Գիմնազիայի ծրագրի մշակումը խնդրում են հանձնարարել «մեր գիտնական հայրենակցի, պարոն Ստեփանոսի նախարարյանցին, որ այժմ գտանի մեր

16 «Հյուսիսագալյ», 1864, № 4, էջ 234:

17 «Արարատ» 1913, № 8—9, էջ 232:

18 ՀԿՊԸ, ֆ. 415, գ. 1, գ. 46:

քաղաքումն և խնդրել ի նմանէ, որ նա կատարես զայդ գործ փութով¹⁹: Քաղաքագլուխը հատուկ գրությամբ Ս. Նազարյանին տեղյակ է պահով նորնախիշնանցիների խնդրանքի մասին²⁰:

Այդ նույն տարում, 1866 թ. Ռ. Պատկանյանը խնդրում է քաղաքագլուխն թուլյատրել և ապա միջնորդել Օդեսայի ուսումնական օկրուգի առաջ իրեն նոր Նախիշեանում տղաների պանսիոն բացելու իրավունք տալու մասին: Ռ. Պատկանյանի նախաձեռնությունը հավանության է արժանանում տեղում, ուակայն պանսիոնատի ծախսերը քաղաքը չի վերցնում իր վրա²¹:

Կերաղաս ատյաններին ուղած այդ բազմաթիվ դիմումները գործնական կոնկրետ հետևանքներ չեն ունենում: Միայն Ռ. Պատկանյանի առաջարկած պանսիոնը, ինչպես երեսում է, հաջորդ տարում բացվում է գավառային ուսումնարանի ենթակայության տակ: Այնտեղ դասավանդվում էին աստվածաբանություն, թվաբանություն, հայերեն, ուսուերեն և ֆրանսերեն լեզուներ: Ենքը հարմար էր, սովորողները, որոնց թիվը հասնում էր 29 հոգու և որոնք գերազանցապես առևտրականների զավակներ էին, բավարարված էին դասագրերով²²: Ուսումնական այս օջախը, սակայն, երկար կյանք չի ունենում:

1867 թ. ս. Համբարձման եկեղեցուն կից բացվում է ծխական դրագոց, ուր ավանդվում էին կրոն, հայերեն, ուսուերեն, թվաբանություն, գեղագրություն առարկաները²³:

1860-ական թվականներին բացված ուսումնարանների մեջ նշանակալից էր Սուրբ Խաչ վանքում հիմնված ժառանգավորաց դպրոցը:

Տակավին 1853 թ. մի խումբ երիտասարդներ, ի թիվս որոնց և ծպիփան Պոպոյանը տեսնելով քաղաքի հոգևորականության վիճակը, վրձում են աղքատ հոգևորականների զավակներին կրթություն տալու նպատակով դրամ հավաքել և դպրոց բացել²⁴:

Այդ հիմքի վրա ստեղծվում է մարդասիրական ընկերությունը: 1867 թ. Գլորգ Խ կաթողիկոսը ժամանում է նոր Նախիշեան, ծանոթանում հայկական գաղութի կյանքին և անհրաժեշտ գտնում Սուրբ Խաչ վանքում հիմնել ժառանգավորաց դպրոց, որը պետք է պատրաստեր հոգևոր գործիչներ: Նույն տարվա՝ սեպտեմբերին կաթողիկոսը հաստատում է բաց-

յող դպրոցի կանոնադրությունը²⁵: Մարդասիրական ընկերությունը հանձն է առնում իր հովանավորության տակ վերցնել ժառանգավորաց դպրոցը, թեպետև ընկերության բազմաթիվ անդամներ համաձայն չէին դրան: Նրանք գտնում էին, որ Սուրբ Խաչ վանքը միջոցներ ունի և կարող է հոգալ դպրոցի ծախսերը, իսկ հոգեոր մյուս դպրոցները, ուր սովորում են աղքատ երեխաները, նյութական հնարավորություններից զուրկ են և կարիք ունեն օգնության²⁶: Մարդասիրական ընկերության հոգաբարձական խորհուրդն ազգարարում է 1868 թ. ամառվանից ժառանգավորաց դպրոցը բացվելու մասին: Առաջին տարվա համար ընտրոված էր 6 աշակերտ հոգեորականների զավակներից, իսկ 2 հոգի էր ընտրվելու էին հայկական գյուղերի հոգևորականների զավակներից²⁷:

Կանոնադրության համաձայն դպրոցը, քանի որ կոչված էր հոգեոր գործիչներ պատրաստելու, լինելու էր Ամենայն հայոց կաթողիկոսի ընդհանուր և նոր Նախիշեանի ու Բևսարաբիայի թեմի առաջնորդի անմիջական հակողության տակ:

Դպրոցը պահպան էր մասամբ վանքի եկամուտների, մարդասիրական ընկերության տարեկան նպաստների և թոշակավոր աշակերտներից ստացվող միջոցներով:

Դպրոցի անմիջական տնօրինությունը գտնվելու էր մարդասիրական ընկերության հոգևորածության խորհրդարանի ձեռքում: Վերջինս իր անդամներից զպրոցի կառավարման համար առանձնացնում էր երկու հոգու, որոնք հաստատվում էին կաթողիկոսի կողմից:

Դպրոցն ունենալու էր երեք դասարան, յուրաքանչյուր դասարանը երկամյա ուսուցման ծրագրով: Վեց տարվա ընթացքում ավանդվելու էին քրիստոնեական ուսմունք, հին և նոր կտակարանի պատմություն, եկեղեցու և հայոց եկեղեցու պատմություն, հայագիտություն, աշխարհագրություն, ընդհանուր և հայոց պատմություն, թվաբանություն, բնագիտություն, ուսացած լեզու, երկարաշատիություն, գեղագրություն, երգեցություն, գողություն²⁸:

Դպրոցում ընդունվում էին նաև աշխարհիկ բնակիչների զավակները: Առաջին դասարան կարող էին ընդունվել իննից ոչ պակաս և ասաներիկություն ոչ ավել տարիք ունեցող երեխաները: Աշակերտների առաջադիմության հինգ գնահատական էր սահմանվում, գերեզանց՝ 5, հույժ գովելի՝ 4, գովելի՝ 3, շափավոր՝ 2 և տկար՝ 1:

19 Նույն տեղում, գ. 139, գ. 1711, թ. 7:

20 Նույն տեղում, թ. 8:

21 Նույն տեղում, գ. 1618, թ. 1—2:

22 ՀԱՐՕ, գ. 11, ձ. 179, լ. 17, 43.

23 «Արարատ», 1869, հ. 6, էջ 134—135:

24 ՀԿՊԱ, գ. 324, ց. 1, գ. 18, թ. 20:

25 Նույն տեղում, գ. 15, թ. 11:

26 Նույն տեղում:

27 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 206, գ. 2113:

28 ՀԿՊԱ, գ. 324, ց. 1, գ. 20, թ. 16:

Ապա կանոնադրությունը սահմանում էր դպրոցի հոգաբարձուների տեսչի, ուսուցիչների, աշակերտների իրավունքներն ու պարտականությունները, յուրաքանչյուր դասարանում և տարում անցնելիք առարկաները և դպրոցի առօրյայի հետ կապված այլ քիչ թե շատ կարեւոր իրադիրները²⁹:

Դպրոցի հիմնադրման տարում Գ. Զայլախյանը, Մ. Քուշնարյանը և ուղիներ նվիրում են բավականաշափ գրականություն։ Մարդասիրական ընկերությունը ևս դպրոցին նվիրում է մեծ քանակությամբ գրականություններ։³⁰

1875 թ. Պատիգորսկ մեկնելու ճանապարհին Մ. Սանասարյանը այցելում է ժառանգավորաց դպրոց։ Նա գոհ է մնում աշակերտների առաջադիմությունից, ձրիավարժ սաների օգտին նվիրում է 400 ո. և խոստանում Պետերուրդից ուղարկել զանազան գրենական պիտույքներ ու գործիքներ։³¹

Կարճ ժամանակում սովորողների թիվը հասնում է 30—40-ի, որոնց մեծ մասը գիշերօթիկ աշակերտներ էին։ Սուրբ Խաչ ավանից դպրոց հաճախողները վանքում չեին մնում, նրանք, երթեսեկ սովորողներ էին։

Թեպետև դպրոցը խնդիր ուներ հոգեորականների զավակներին ընդունել և հոգևոր գործիչներ պատրաստել, սակայն գործնականում այն ավելի շատ աշխարհիկ բնույթ ստացավ։ Դպրոցի հիմնադրումից մի քանի տարի անց նախիչևանի քաղաքացիները, մեծ մասամբ վաճառականական դասի ներկայացուցիչները դիմում և իրենց զավակներին տեղավորում են նորահաստատ դպրոցում։³² Շուտով նրանց օրինակին են հետեւ հայկական գյուղերի մանավանդ շքավոր բնակիչները, որոնք խնդրում էին իրենց որդիներին ընդունել ժառանգավորաց դպրոցը, որպես ձրիավարժ սաներ։³³

Դպրոցի գործունեության առաջին տասնամյակը մեծապես կապվում է մարդասիրական ընկերության նախագահ, դպրոցի հոգաբարձու Եպիփան Պոպովյանի անվան հետ։ Հետագայում նրան փոխարինում են ուրիշները։

1891 թ. Հրդեհի հետևանքով վառվում է դպրոցի շենքը։ Մարդասիրական ընկերությունը շուրջ 12000 ո. գումար է ծախսում, և կառուցում նոր, ավելի հարմարավետ շենք։³⁴

29 Նույն տեղում, թ. 17—22։

30 Նույն տեղում, գ. 54, գ. 1147, թ. 1—6։

31 «Արարատ», 1875, էջ 272—273։

32 ՀԿՊԴԱ, գ. 324, գ. 1, գ. 11, թ. 7—11։

33 Նույն տեղում, գ. 12, թ. 4։

34 Նույն տեղում, գ. 21, թ. 90։

Ժառանգավորաց դպրոցը լավ անուն էր վաստակել և նշանակալից դիր կատարեց քաղաքի ու հայկական գյուղերի մանուկների կրթության գործում։

1870-ական թվականներին ուսումնական գործում որևէ լուրջ առաջադիմություն տեղի չունեցավ։ Ճիշտ է, շարունակում էին իրենց գոյությունը եղած դպրոցները, ավելանում էր դրանց աշակերտների քանակը, թյունը եղած դպրոցները, առաջնային դրանց աշակերտների քանակը, և առաջարակ որոշ առաջընթաց էին ապրում, ուսակայն այս տասնամյակում թեկուց և փոքր նշանակության որևէ դպրոց չբացվեց։

Դրա հիմնական պատճառն այն էր, որ դպրոցական կրթության ասպարեզում գեռնես փոփոխություններ չեին կատարվել. անորոշություն էր տիրում։ Մի ամբողջ տասնամյակում՝ 1864—1874 թթ. հրատարակված որոշումներով միայն կառավարությունը կարողացավ իրականացնել ժողովրդական կրթության ուժորմները։ Դրանից բացի, հայ համայնքի կարող ու առաջադիմ գործիչների ջանքերը ամբողջովին ուղղված էին գաղութիքի ինքնավարության որոշ կողմերը, քաղաքի ինքնուրույն գոյությունը պահպանելուն, և դպրոցական գործն առժամանակ երկրորդական պլան էր մղվել։ Նման պայմաններում հասկանալի է, որ բարձր մակարդակի լուսավորյալ դպրոց հիմնելու ուղղությամբ նույնպես որևէ գործնական քայլ չկատարվեց։ Սակայն ետու փորմյան բարեփոխումները իրականացնելուց անմիջապես հետո, վերադաս ատյաններում էլ սկսեցին որոշ շափով ունկնդրել ներքենց էկող ձայներին, և լուսավորության մարզում կատարվող շարժումը 1880-ական թվականների սկզբին միանգամբ բեղմնավոր արդյունքներ տվեց։

1880 թ. աշնանը նոր նախիչևանում բացվեց մասնագիտացված ուսումնարան՝ արհեստավորական դպրոցը։ Դպրոցի հիմնադրման նախաձեռնությունն ու իրականացնելը կապվում է Ռ. Պատկանյանի անվան հետ։ Դոնի հայության կենսունակ գոյությունը պահպանելու մեջ մշտապես նախանձախնդիր անվանի գրողը տարբեր առիթներով, մասնավորապես նոր նախիչևանի հիմնադրման 100-ամյակին նվիրած աշխատության մեջ քանից դրվատանքով անդրադարձել է գաղութիքի անցյալ ժաղկուն վիճակին, և այդ հանգամանքը բացատրել զարգացած արհեստագործությամբ, իսկ իր օրերում նկատվող աղքատությունը՝ արհեստաներն արհամարհելուն։ «Հայք, — գրում է նա, — ոչ միայն երեսելի զանական է, այլև երեսելի արհեստավոր է, ափսոս, որ մենք արհամարհել ենք այս մեր ազգային արդյունակությունը, և նորաբոլոր շահը թողել ենք անգիտացուն, գերմանացուն և հրեաներուն»։ Եվ ապա և լուսավորիչ եկեղեցին ահագին քառակուսի հրապարակը (մեյտան) շրջապատված էր մի ժամանակ բազմամարդ, իսկ այժմ դատարկված երկ-

կաբգ կրպակներով, ուր 40 տարի առաջ կաշխատեին հաղարավոր արհեստավորներ, որոնց ձեռագործը ոչ միայն կլցներ քաղաքացոց պիտույքը, այլ նախիշեանի շրջակա քաղաքներին ու գեղերին կայթայթեր պիտանի ապրանք»³⁵:

Նույն տեսակետն էին պաշտպանում արհեստավորական դպրոց հիմնելու հարցում նախանձախնդիր և այդ գործին մեծապես նպաստուի. Պատկանյանի համախոնները՝ քաղաքային խորհրդարանի ատենադպիր Ս. Հարությունյանը, գաղութի նշանավոր գործիչներից Հ. Պապասինյանը և ուրիշներ:

Վերհիշելով անցյալը և նշելով, որ զրիմահայ իրենց նախնիներ Դոնի ափերը բերեցին առաջին հերթին կատարելագործված արհեստներ Ս. Հարությունյան ավելացնում է. «Դրանով նոքա մեր ժողովրդի հարստության հիմքը դրին նոր հայրենիքի մեջ և այդ հարստությունն առավել հաստատուն էր: Հետագա սերունդը չհետեւց նախնէաց գեղեցիկ օրինակին և արվեստները (այստեղ և ամենուրեք ժամանակակիցները «արվեստ» ասելով նկատի են ունիցել արհեստը—Վ. Բ.) մի առ մի ամհետացան քաղաքէս և այժմ կտեսնենք միայն նորա ողորմելի մնացորդը: Հասարակության գործունեությունը հետզհետե կորուց յուր կանոնակիր ուղղությունը և ստացավ խոտոր ընթացք: Զեռագործությունը բոլորվին վերջացավ և առետուրը դարձավ միշոց գործունեության: Միանգամայն փոխվեցան նաև կյանքի պայմանները: Այսպիսի երեսությների ակնհայտնի հիտեանքը եղավ մեկ կողմանն ժողովրդի ընդհանուր հարստության նվազելը, իսկ մյուս կողմանն չքավորության ավելանալը»³⁶:

Հ. Պապասինյանը գպրոցի բացման հանդեսին նույնպես շեշտում է այդ հանգամանքը. «Իրեսուն տարի է,— նշում է նա, — որ արվեստը մեր քաղաքի մեջ անարգված է, խայտառակված է և արտաքսված է, իբրև մի անպետք և ամոթալի գործ... Ահա այսօր մենք զարթեցանք մեր երեսուն տարվա կորստական ծանր թմրութենեն»³⁷:

Գաղութի հիմնադրման հարցուրամյա տոնակատարության առթիվ որոշվում է հիմնել արհեստավորական դպրոց:

Ռ. Պատկանյանը լավ էր հասկանում, որ սխալ ու վնասակար կլիներ մանուկներին հմտացնել միայն արհեստների մեջ, նրանց առանց հանրակրթական գիտելիքներ տալու: «Ուսումը տալիս է խելք, — հա-

մողված կերպով շեշտում էր նա, — բայց հաց՝ ոչ միշտ, արվեստը տալիս է հաց, բայց ոչ խելք, ուսումը և արվեստը միացած՝ մեր ազգին կուտան խելքը հարուստների: Ուրեմն՝ «Հայերիս փրկությունը արվեստի և գիտության մեջ է»³⁸:

Ուսումնարանը բացվում էր որպես Աստվածածին եկեղեցու ծխական հոգևոր դպրոց, որը տարբեր արհեստների մեջ մասնագիտանալու թերում էր ունենալու:

1880 թ. նոր նախիշնանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսի կողմից հաստատվում է զպրոցի 30 հոդվածից բաղկացած կանոնադրությունը³⁹:

Դործնականում կիրառություն ստացած կանոնադրության համաձայն դպրոցում հանրակրթական առարկաներից ավանդվելու էին կրոն, հայոց և ոռւսաց լեզուներ, հայոց պատմություն, երկրաշափություն, գծագրություն, աշխարհագրություն: Այս առարկաները ավանդվելու էին սովորական ծխական դպրոցների ծրագրից փոքր ինչ բարձր մակարդակով: Արհեստագործության գծով աշակերտները սովորելու և մասնագիտանալու էին կոշկակարության, դերձակության, հյուսնության, պղընձագործության, գարբնության, անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ արհեստների մեջ:

Դպրոցն ունենալու էր չորս դասարան, ուսման ընդհանուր տևողությունը ևս նախատեսվում էր չորս տարի, բացառյալ նախակրթարանի, ուր ընդունվելու էին գրել, կարդալ շիմացող տղաները: Այն աշակերտներն, որոնք դպրոցն ավարտելուց հետո ցանկություն կունենային հատկապես արհեստներով զբաղվելու, հոգաբարձության խորհրդի որոշմամբ, դպրոցում կարող էին մնալ նաև հինգերորդ տարում:

Դպրոցի կառավարումն իրականացնելու էր հինգ հոգուց բաղկացած հոգաբարձական խորհուրդը: Հինգ անգամներից երեքն ընտրվում էին նախիշնանի քաղաքային խորհրդարանից, չորրորդը եկեղեցու երեսփոխանն էր, իսկ վերջինը՝ դպրոցի տեսուչը:

Հոգաբարձական խորհրդի պարտականությունն էր՝ դպրոցում բացել արհեստագործական դասարաններ, զբաղվել արհեստանոցներու համապատասխան գործիքներով ու մեքենաներով համալրելու, բարձրորակ ուսուցիչներ նշանակելու, աշակերտների ընդունելության և ուսումնարանի հետ կապված այլ կարենոր խնդիրներով:

35 Սյուլուկ, նոր նախիշնանի հիմնարկության պատմությունը, Թիֆլիս, 1879, էջ 49-50:

36 «Փորձ», 1880, № 10, էջ 150:

37 Նույն տեղում, էջ 154:

Դպրոցի տեսուշը պարտավոր էր հսկել, որպեսզի ուսուցիչները, վարպետները, վերակացուները և այլ պաշտոնյաները ճշտորեն կատարեն իրենց պարտականությունները և որևէ թերություն ի հայտ բերելու պարագայում իրավեկ պահեն հոգաբարձությանը: Տեսուչի նախագահությամբ ուսուցիչներից և վերակացուներից կաղմվում էր մանկավարժական խորհուրդը: Վերջինս ամիսը մեկ նիստեր էր ունենալու և հետեւյու էր ուսումնական գործին:

Արհեստավորական դպրոցում ընդունելությունը կատարվում էր տարվա մեջ երկու անգամ՝ հունվարին և օգոստոսին, կարող էին ընդունվել 10-ից մինչև 12 տարեկան առողջ տղաները: Ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին հնարավորություն էր տրվում նույն դասարանում սովորելու ևս մեկ տարի, բայց՝ դրանից ոչ ավելի: Օրվա մեջ հանրակրթական առարկաներին տրամադրվում էր 3, իսկ արհեստներին՝ 4 ժամ: Ամեն տարի աշակերտներն ամառային արձակուրդներից առաջ, մանկավարժական և հոգաբարձական խորհուրդների անդամների մասնակցությամբ, հանձնելու էին քննություններ թե՛ հանրակրթական առարկաներից և թե՛ արհեստից:

Դպրոցի նյութական միջոցները գոյանում էին ս. Աստվածածնի եկեղեցու հասուլիթներից, նոր Նախիչեանի քաղաքային խորհրդարանի նշանակած նպաստից, ունեոր աշակերտների ուսման թոշակից և զանազան նվիրատվություններից: Եկեղեցին սովորաբար տալիս էր 400—500 ռ. գումար, իսկ քաղաքը հատկացնում էր տարեկան 6 000 ռուբլի: Աշակերտների թոշակներից և նվիրաբերություններից ստացվող գումարների քանակը կայուն չէր, ամեն տարի փոփոխվում էր:

Ավելորդ չէ նշել, որ դպրոցի օգտին կատարվող նվիրատվությունները պարբերական բնույթ էին կրում: Դպրոցի հիմնադրման հենց հաշորդ տարրում՝ 1881 թ. շքավոր ընտանիքների աշակերտների օգտին Ցարիցինից ինը հայեր (Կ. Պապոյան, Զ. Կրասիլնիկյան, Ս. Տեր-Միքայելյան, Վ. Խաղիկյան, Գ. Մելիքյան և ուրիշներ) որոշակի գումար են նվիրաբերում: Ռ. Պատկանյանը շնորհակալություն է հայտնում նրանց և, որ ուշագրավ է, նաև երկու ուսու քաղաքացիների (Ա. Մատյուխին, և. Սեմյոնով), որոնք նույնպես իրենց նպաստն էին բերել դպրոցին⁴⁰: Հետագայում նվիրաբերությունները մշտապես շարունակվել են և այն եղել է դպրոցի նյութական միջոցները նկատելի շափով համարող աղբյուրներից մեկը:

40 «Մեղու Հայաստանի», 1881, № 151.

Արհեստավորական դպրոցը բացելուց հետո հնարավոր եղավ և նպատակահարմար գտնվեց աշակերտներին մասնագիտացնել երեք հիմնական արհեստի՝ փականագործության, ատաղձագործության և կոշկակարության մեջ: Անմիջապես կազմակերպվեցին համապատասխան արհեստանոցներ, հրավիրվեցին մասնագետներ: Պարապմունքներն անց էին կացնում տվյալ արհեստին կատարելապես տիրապետող լավագույն վարպետները: Տեղում բարձրորակ մասնագետ վիճելու դեպքում այդպիսի հրավիրվում էին անգամ հեռավոր քաղաքներից: Այսպէս, 1882 թ. կոշկակարության մասնագիտության գծով պակասում էր մեկ վարպետ: Այդ բացը լրացնելու համար վարշավայից հրավիրվում է լեհ հմուտ մի արհեստավոր, որն, ի գեպ, աշակերտներին սովորեցնում էր լեհական ձեռի կոշիկ կարել⁴¹:

Արհեստավոր վարպետը ուսումնական գծով աշխատող ուսուցչի համեմատությամբ, գրեթե կրկնակի բարձր էր վարձատրվում: Դրա շնորհիվ հնարավոր էր դառնում աշխատանքի հրավիրելու արհեստավոր լավագույն մասնագետներ:

1911 թ. դպրոցի փականագործական, ատաղձագործական և կոշկակարական բաժիններում, որոնցից յուրաքանչյուրը տեղավորված էր առանձին շինության մեջ, արհեստի ուսուցումը հանձնարարված էր նշանավոր վարպետների: Տարիներ շարունակ փականագործություն էր ուսուցանում Ռիգայում, Պետերբուրգում աշխատած գերմանացի նշանավոր մի մասնագետ: Ատաղձագործի արհեստ էր սովորեցնում ուսուանվանի մի վարպետ, որն աշխատել էր Պետերբուրգի, Բաքվի, Թուստովի նշանավոր արհեստանոցներում, գծագրության դասընթաց էր անցել Մոսկվայի հատուկ կուրսերում: Կոշկակարություն էր սովորեցնում ուույնպես իր արհեստին կատարելապես տիրապետող մի հայ վարպետ⁴²:

Արհեստի ուսուցումը պարտադիր էր դպրոցի բոլոր աշակերտներին: Յուրաքանչյուր աշակերտ պարտավոր էր մեկ արհեստ սովորել: Արհեստի ընտրությունը թողնվում էր իրենց՝ աշակերտներին կամ նրանց ծնողներին: Դժվարություն առաջանալու դեպքում այդ ընտրությունը կատարում էր դպրոցի վարչությունը: Դպրոցում աշակերտների քանակը շատ մեծ չէր, հազիվ հասնում էր 50—60-ի: Այդ նույն՝ 1911 թ. փականագործի մասնագիտություն էին սովորում 26, ատաղձագործի՝ 15 և կոշկակարի՝ 15 աշակերտ: Աշակերտների մեծագույն մասը նախիչեանից և շրջակա հայկական գյուղերից էին, իսկ նրանց շուրջ 10—15 %-ը այլ բնա-

41 Ի. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 436:

42 ՀԿՊԱ, ֆ. 11, գ. 13, թ. 21:

կավայրերից: Սուլորողների գերակշռող մասը չքավոր ընտանիքների զավակներ էին և ուսանում էին գիշերօթիկ եղանակով, սնվում ու սովորում էին դպրոցի հաշվին:

Արհեստավորական դպրոցին հատուկ է եղել մեկ այլ երեսութ, դրաբոցի ծախսերը հաճախ ավելի մեծ են եղել, քան եկամուտները: Այդ պատճառով էլ տնօրինությունը հաճախ գժվարությունների մեջ է ընկել և տարբեր աղբյուրներից մի կերպ կարողացել համալրել միջոցների պահապ: 1888 թ. դպրոցի հոգաբարձության խորհրդի նախագահ Խալիսուշյանը դիմում է Դոնի մարզի ատամանին և, նկարագրելով եկամուտների համեմատ դպրոցի ծախսերի գերակշռությունը, խնդրում թույլատրել նախիշեանում 1500 ռ. գումարի վիճակախաղ անցկացնել: Մարզային վարչությունը տալիս է իր համաձայնությունը, միայն պահանջում է, որ պահպանվեն վիճակախաղի բոլոր անհրաժեշտ պայմանները⁴³:

Հաջորդ տարում դպրոցի տեսուչ Ռ. Պատկանյանը դպրոցի կարիքները հոգալու համար նմանապես եկամուտներն ավելացնելու հարց է բարձրացնում: Նա նշում է, որ դպրոցի չքավոր աշակերտների սնունդի համար անհրաժեշտ է 1000 ռուբլի: Աշակերտները 15 տարեկան հասակում ավարտում են դպրոցը սակայն ինքնուրույն կյանք մտնել չեն կարողանում: Հետեւաբար, ավելացնում էր տեսուչը, հարկ է, որ նրանք ևս 3 տարի մնան դպրոցում և կատարելագործվեն ընտրած արհեստի մեջ: Դրա համար հարկավոր է ևս 1000 ռ. գումար: Շենքը վերանորոգելու և լավ տաքացնելու համար նմանապես լրացուցիչ միջոցների պահանջ էր դնում⁴⁴:

Գործնական կյանքի պահանջներից ելնելով, տարիների ընթացքում աստիճանաբար ավելացվում են դպրոցի եկամուտները: 1911 թ. դրաբոցի մշտական եկամուտների վրա ավելացել էին եկեղեցական հոգաբարձության 1200 ռ., բարեկործական ընկերության 600 ռ. Հատկացումները: Արհեստանոցների արտադրանքի վաճառքից գոյանում էր շուրջ 800 ռուբլի, դպրոցի ընդհանուր եկամուտն անցնում էր 9500 ռուբլուց⁴⁵, Այնուհանդերձ այդ նույն տարում ավելի քան 2000 ռուբլով ծախսերն ավել էին եկամուտներից: Մեծ գումար էր վճարվում ուսուցիչներին՝ 240-ից 600 ռուբլի՝ ըստ դասաժամերի քանակի: Արհեստանոցի յուրաքանչյուր վարպետի վարձատրությունը կազմում էր 720 ռուբլի: Աշակերտների սննդի ծախսը կազմում էր 2500, իսկ հագուստինը՝ 1200

⁴³ ГАРО, ф. 46, оп. 1, д. 3084, л. 1—2.

⁴⁴ Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 445—446.

⁴⁵ ՀԿՊԱ, ֆ. 11, գ. 13, թ. 22:

առլի: Բավականաշափ գումար էր ծախսվում դպրոցի մյուս ծառայողների, գրենական ոդիտույքների, լուսավորության, վառելիքի և այլ պետքերի համար⁴⁶:

Արհեստավորական դպրոցն այն ուսումնական հաստատություններից է եղել, որն իր գոյության գրեթե ամբողջ ժամանակաշրջանում, ավելի քան երեք ու կես տասնամյակի ընթացքում, իր վրա է դամել գաղութի հասարակության ուշադրությունը:

1888 թ. «Նոր դար» թերթի թղթակիցը հաղորդում էր արհեստավորական դպրոցում կարգ ու կանոնի թուղացման, դպրոցի գործերի բարձիթողի վիճակի մասին⁴⁷:

Հետագայում Ռ. Պատկանյանի սաստկացող հիվանդությունը հնարավորություն չեր տալիս նրան զբաղվելու դպրոցի գործերով, և 1892 թ. պարիին զասատու Մ. Սուլթանշահը նշանակվում է տեսուչ: Այդ փոփոխությունից հետո էլ դպրոցը շարունակում էր մնալ վատ վիճակում⁴⁸:

1906 թ. թե՛ կենտրոնական և թե՛ տեղական հայկական մամուլում առավել հաճախ ահազանգեր են արվում արհեստավորական դպրոցի դրության վերաբերյալ: Մատնանշվում էր մասնավորապես այն հանգամանքը, որ դպրոցում արհեստ կանոնավոր չեն սովորեցնում, աշակերտների առաջադիմությունը ցածր է, նրանք հաճախ մնում են նույն դասարանում կամ էլ՝ հեռանում դպրոցից⁴⁹: Ստեղծված իրավիճակից ենենլով, քաղաքային խորհրդարանը վճռում է իր հարթական նիստում լսել արհեստավորական դպրոցի հոգաբարձության զեկուցումը: Միաժամանակ հատուկ հանձնաժողով է առանձնացվում (Զալիսուշյան, Ոսկերչյան, Գասպարյան, Խրճյան, Շառուկյան, Քեշեկյան) դպրոցի վիճակը ուսումնասիրելու համար⁵⁰:

Դժվար է ասել, թե ինչպիսի անմիջական արդյունքներ տվեց դրաբոցի գործերին քաղաքային խորհրդարանի միջամտությունը, սակայն պահպանված նյութերից պարզվում է, որ 4—5 տարի անց դրությունը ոչնչով չեր բարեկավել: 1911 թ. արհեստավորական դպրոցի տեսուչ Հ. Խոշաբիյանը դպրոցի վիճակի մասին թվական տվյալներով հագեցած, հանգամանալի տեղեկագիր-զեկուցագիր է ներկայացնում հոգաբարձական խորհրդին: Տեսուչն ուշադրություն էր հրավիրում հատկապես երկու հանգամանքի վրա: «Անուրանալի է,— գրում է նա,— որ այս երկու երե-

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ «Նոր դար» 1888, № 144:

⁴⁸ ՀԿՊԱ, ֆ. 11, գ. 5, թ. 14:

⁴⁹ «Մշակ», 1906, № 239, «Նոր կյանք», 1906, № 17, 21, 24:

⁵⁰ «Նոր կյանք», 1906, № 23:

վույթներից առաջնքն տարվետարի աշակերտների մեծ քանակությամբ դպրոցից հեռանալը, պատճառ է հանդիսանում և երկրորդ երեսույթին, այսինքն մնացածների նվազ առաջաղիմության և այդ այն հասարակ պատճառով, որ ինչպես արդեն քանից ընդգծված է, մանկավարժական խորհուրդը ստիպված է լինում մի դասարանից մյուսը տեղափոխել շատ անգամ միանգամայն անպատճառ աշակերտներ, որոնք և կազմում են մնացածների կամ անառաջաղիմության մեծ տոկոս: Այսպիսով, ուրեմն դպրոցի համար ամենամեծ շարիբներից մեկը հանդիսանում է աշակերտների մեծ քանակությամբ տարվետարի հեռանալը, որը վահատեցնում է դպրոցի վարչությանը երբեմն մինչև հուշահատությունը⁵¹:

Տեսուշի անհանգստությունը հասկանալի է, քանի որ իր իսկ անուն ազգանուններով մեշքերած ցուցակից երեսում է, որ մեկ տարում դրաբոցի 57 աշակերտից հեռացել է 20-ը:

1914 թ. պատերազմի նախօրյակին դարձյալ ահազանգվում էր արհեստավորական դպրոցի միջոցների պակասի, լավորակ վարպետներ չունենալու, աշակերտների պատրաստած իրերի ցուցահանդես չկազմակերպելու, գրադարանի, բնագիտական գործիքների անմիջական վիճակի մասին⁵²:

Այսպիսով, արհեստավորական դպրոցը, անշուշտ, որպես մասնագիտացված ուսումնարան դրական գործունեություն ունեցավ պատանիներին գիտելիքներ տալու և մասնավորապես արհեստներ սովորեցնելու մեջ: Այսուհանդերձ դպրոցն այն դերը չկատարեց, որպիսի հույսեր կապում էին դրա հետ Ռ. Պատկանյանն ու նրա համախոհները: Իրավացի շեր լինի այդ հանգամանքը բացարել հայ հասարակության անտարեր վերաբերմունքով, քանի որ արհեստավորական դպրոցի նկատմամբ ուշադրությունը, թերևս, տվելի մեծ է եղել, քան մյուս ուսումնարանների: Ամբողջ խնդիրն այն է, որ ժամանակները փոխվել էին, և, արհեստավորական դպրոցը չեր կարող իր վրա դրած մեծ հույսերն արդարացնել, եթե անգամ հայկական գաղութը նրա համար ստեղծեր ամենալավագույն պայմանները:

Արհեստավորական դպրոցի հիմնադրումն ու գոյությունը համընկնում էին տնտեսական կյանքում արհեստների երկրորդական պլան մըղմելու և արագորեն ցարգացող արդյունաբերության ձնշման տակ դրաբարյաման դարաշրջանի հետ: Արհեստագործության մեջ մասնագիտա-

նալը չեր բխում կյանքի հրատապ պահանջներից և այդ պատճառով էլ չեր կարող նկատելի հաջողություն ունենալ: Այն, խիստ ասած, ժամանակավորեպ ձեռնարկում էր:

Ռ. Պատկանյանը սոմանտիկական հայացք էր գցում նոր նախիլանի պատմության անցյալին և իր ապրած ժամանակաշրջանի համեմատությամբ գաղեմի քաղեմի քարվոք վիճակը վերագրում սոսկ արհեստագործությանը: Նա չեր տեսնում կամ զրեթե չեր նկատում արդյունաբերության գարգացումը, որա կատարած վիթխարի դերը: Հարկավ նա չեր անտեսում, անգամ դրվատանքով էր խոսում գիտության մասին, որի շնորհիվ, իր խոսքերով ասած, «Առաջվա փոքրիկ ու նեղ արհեստանոցները դարձան լայնարձակ գործարաններ, մարդու մկանունքի ուժը փոխարինեցավ շոգիով...»: Եհշտելով, որ, այնուամենայնիվ, մարդու ապրուստը ապահովում է արհեստը, Ռ. Պատկանյանը ավելացնում է: «...ասածին հաստատություն՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և մանավանդ՝ հյուսիս-Ամերիկայի Միացյալ նահանգները»⁵³:

Ռ. Պատկանյանի այս խոսքերից երեսում է, որ նա նկատում էր եվրոպացում ու Ամերիկայի Միացյալ նահանգներում արդյունաբերության կատարած գերը, գիտության նշանակությունը, սակայն միաժամանակ կարծում էր, որ արհեստը կատարելագործելով, ժամանակի ոգուն համապատասխան դարձնելով ամեն ինչ կփոխվի, կկարգավորվի: Արդյունաբերության դերը, որպես արտադրության նոր եղանակի, արհեստների համեմատությամբ, դրա հեղաշրջիւ նշանակությունը նա չեր ըմբռնում: Արդյունաբերությունը դիտում էր որպիս սոսկ ժամանակի ոգուն ու պահանջներին հարմարեցրած արհեստագործություն: Այդ մտայնության հետևանքով էլ անվանի գրողը մեծ զանքեր ու եռանդ գործադրեց և նախիշնենում հիմնեց ոչ թե որևէ տեխնիկական ուսումնարան, այլ արհեստավորական դպրոց:

Արտագրության տարբեր ճյուղերի նշանակության մասին Ռ. Պատկանյանի ոչ հստակ, հաճախ հակասական պատկերացումները, մասնավորապես արհեստագործության դերի գերազահատառումը, ունեին իրենց պատճառը: Արհեստները և արհեստագործական համբարային կազմակերպությունները ազգային լեղուն, բարքերն ու սովորությունները պահպանող կարևոր լծակներ էին: Դոնի հայության ինքնամփոփ գոյությունը, նրա ազգային նկարագիրը պահպանելու հարցում նախանձախնդիր գրողը, բնականաբար, արհեստների ու համբարությունների գոյատևման անհրաժեշտությունը դիտում էր նաև այդ տեսանկյունից:

51 ՀԿՊԱ, ֆ. 11, գ. 13, թ. 53:

52 «Գաղութ», 1914, № 9:

53 Ռ. Պատկանյան, երկերի ժողովածու, հ. 5, էջ 329, 333:

Ռ. Պատկանյանը, ինչպես նաև Մ. Նալբանդյանն առևտուրը դիտով էին որպես նյութական բարիք շատեղծող, տնտեսության ոչ այնքան առաջ նակարգ մի ճյուղ՝ նալբանդյանի ապրած ժամանակ 1850 և 60-ական թվականների սկզբին արդյունաբերությունը տնտեսական կյանքում դեռևս, իրեն որոշակիորեն դրսեռող, արտադրության ինքնուրույն ճյուղ էր դարձել, այդ իսկ պատճառով նա, բնականաբար, չէր նկատում ու ըմբռնում դրա գերը և կարևոր նշանակություն էր տալիս երկրագործությանը: 1880-ական թվականներին, երբ արդյունաբերության զարգացումը վիթխարի քայլեր էր արել և դարձել ակնհայտ երեւոյթ, Ռ. Պատկանյանը չնկատելով դրա հասարակական, տնտեսական գերը, մի քայլ էտ էր գնում իր նախորդից՝ Մ. Նալբանդյանից:

Տնտեսական կյանքի պահանջներն ավելի ճիշտ էին ընկալում, դրան ընդուած գնում և մատաղ սերնդի ուսուցման հարցին ավելի գործնական մոտեցում ունենում Ռ. Պատկանյանի ժամանակակից հայկական գաղութի այլ գործիչներ: Նրանցից վաճառական Ն. Աճեմյանը ինչպես հիշատակեցինք վերևում 1888 թ. յուր շարժական ու անշարժ գույքը հատկացնում է նոր նախիչեանի աղքատ երեխաների համար տեխնիկական միջնակարգ ուսումնարան բացելու նպատակին⁵⁴: Դրա համար նա տալիս է Ռուսով քաղաքի երկու շենքերը, որոնք տարեկան բերում էին 15000 ռ. եկամուտ և 150 հազարի համանող գումար, որից տարեկան ստացվում էր 16,700 ռուբլի տոկոս⁵⁵:

Կտակի համաձայն ուսումնարանը հայ չքավոր երեխաներին, գերազանցապես նորնախիչեանցիներին պետք է տար բարոյական դաստիարակություն, մտավոր կրթություն և տեխնիկական այնպիսի գիտելիքներ, որոնք գործնական կիրառում ունեն կյանքում:

Ուսումնարանը գործելու էր հանրակրթական և տեխնիկական-մասնագիտական առարկաների ծրագրերով: Ուսումնական առարկաներից հայոց լեզուն և հայկական եկեղեցու պատմությունը պարտադիր առարկաներ էին լինելու, մյուս առարկաները ևս ավանդվելու էին հայերեն, բացառությամբ ուսուաց լեզվի, պատմության և աշխարհագրության⁵⁶:

Նախատեսվում էր ուսումնարանում մասնագիտական առարկաների դասավանդմանը լայն տեղ հատկացնել: Բավականաշափ լայն ծրագրով ավանդվելու էին ֆիզիկա, քիմիա, տեսական և կիրառական մեխանիկա, լեկտրատեխնիկա, շոգեմեքենաներ և այլն⁵⁷:

Մրագիրը մշակվելուց հետո, որն իրականացնելու էին քաղաքային խորհրդարանի հանձնաժողովը և կտակակատարները, քաղաքային դուման միջնորդելու էր կառավարության առաջ՝ ուսումնարան բացելու համար:

Տարբեր պատճառներով, հիմնականում ֆինանսական միջոցների պակասի հետեանքով, ծգձգվում է տեխնիկական ուսումնարանի հիմնումը: Ստեղծված հանձնաժողովը առաջարկում է հիմնել տարրական տեխնիկական ուսումնարան, հիմնականում էլեկտրոլոնտյուրներ պատրաստելու նպատակով, և խնդրել քաղաքային գումարյին 150 հազար ռ. հատկացնել ուսումնարանի շենքը կառուցելու և կահավորելու համար: Քաղաքային վարչությունը համաձայնություն է տալիս միմիայն կառուցվելիք շենքի համար հատկացնել համապատասխան տարածություն, իսկ ֆինանսական միջոցների հարցով խորհրդուրդ է տալիս դիմել եկեղեցական հոգաբարձությանը: Վերջինս համաձայնվում է, եթե ն. Աճեմյանի թողած միջոցների տնօրինումը և ամբողջ կտակի իրականացումը հանձնվի իրեն: 1893—1894 թթ. Ներքին գործերի մինիստրության համաձայնությամբ եկեղեցական հոգաբարձությանն է հանձնվում ն. Աճեմյանի 27,950 ռ. անշարժ և 222,125 ռուբլու շարժական գույքը⁵⁸: 1897 թ. մահանում է նրա կինը՝ իսկուժի Աճեմյանը, որպանից հետո միայն սկսվում է կտակի իրականացումը:

Ի վերջո, սիայն 1911 թ. նոր նախիչեանի գումարյի որոշմամբ ն. Աճեմյանի ողջ կտակը և այն ի կատար ածելու գործը հանձնվում է եկեղեցական հոգաբարձությանը⁵⁹: Մինչև իրավասու պետական ատյաններում պահանջվող կարգի համապատասխան այդ ամենը ձևակերպվում և օրենքի ուժ է ստանում, անցնում են տարիներ: Սկսվում է առաջին

⁵⁴ ՀԿՊՊ, ֆ. 55, գ. 1, գ. 39, թ. 1.

⁵⁵ «Մեր ձայնը», 1908, № 75.

⁵⁶ ՀԳԻԱ ՀՀՀՊ, ֆ. 821, օպ. 7, լ. 386, լ. 1.

⁵⁷ ՀԿՊՊ, ֆ. 55, գ. 1, գ. 261, թ. 41:

58 ՀՀԻԱ ՀՀՀՊ, ֆ. 821, օպ. 7, լ. 386, լ. 5—6. Ն. Աճեմյանի կտակը, նրա թողած գույքից ու դրամագիից ստացվող եկամուտները անօրինելու, ինչպես նաև ուսումնարանը հիմնելու հարցում երկարատի բանակցություններ են սկսվում:

Դումայի ձայնավոր Գ. Զայխուշյանը և որոշ այլ գործիչներ կտակակատարներ Ս. Հարությունյանին, Ռ. Քեչելյանին և ի. Շիլդյանին մեղադրում էին ֆինանսական միջոցները վատնելու մեջ: Այդ խոհիքն ուսումնասիրելու համար հատուկ հանձնաժողով է ստեղծվում: Կտակակատարները համապատասխան փաստաթղթեր են ներկայացնում: Ի վերջու առթիվ Ֆագանորդում հրապարակային դատ է սկսվում, որը մամուլում լայն արձանիք գտնում: Պարզվում է, որ կտակած գումարների կամ նրանցից ստացված եկամուտների յուրացում չի եղել («Վեճություններ» 1898, ս. 27, 28. «Տագանրոգու վետնիկ», 1899, № 35, 48).

⁵⁹ ՀԿՊՊ, ֆ. 55, գ. 1, գ. 261, մաս II, թ. 354:

Համաշխարհային պատերազմը, և այդպես էլ նոր Նախիչևանում տեխնիկական ուսումնարան հիմնելու ն. Աճեմյանի ձեռնարկումը շի իրականանում:

1890-ական թվականներին արդյունաբերության զարգացումն արդեն այնքան էր առաջադիմել, ուստեսական կյանքում այնպիսի ուժ դարձել, որ ոչ միայն անհատ անձնավորություններ, այլև քաղաքի տնօրինությունը, ըստ ամենայնի ըմբռնում էր դրա կարևորությունը և պայքարում քաղաքում նման ուսումնարան հիմնելու համար:

Խարկովի ուսումնական օկրուգից 1895 թ. Ռոստովի քաղաքային խորհրդարանին՝ արդյունաբերական-տեխնիկական ուսումնարան բացելու և ծախսերի իր վրա վերցնելու առաջարկություն է արվում: Տեղեկանալով այդ մասին, նոր Նախիչևանի քաղաքավորին Մ. Բալաբանյանը անմիջապես խնդրագիր է ներկայացնում և առաջարկում ուսումնարանը հիմնել Նախիչևանում: Նա ոիածամանակ հայտնում է, որ ուսումնարանի հիմնադրման համար քաղաքային խորհրդարանը միանվագ 100 հազար ռուբ. և հարմար հողատարածություն է տրամադրում, պարտավորվում անվճար մատակարարել ջուր և էլեկտրականություն⁶⁰:

Վերադաս մարմիններն առաջարկում են հիմնել Ռոստով-Նախիչևանյան արդյունաբերատեխնիկական համատեղ ուսումնարան: Վեճեր են առաջանում հիմնադրվելիք ուսումնարանի տեղի հարցում: Յուրաքանչյուր քաղաք ճգնաժողովում էր իր տարածքում հիմնել: Ի վերջո, 1898 թ. Դոնի մարզի ատամանը նոր Նախիչևանի քաղաքային վարչությանն առաջարկում է կրկին քննարկել այդ հարցը և համաձայնության նոր գտնել, այլապես ուսումնարանը կրացվի Ռոստովում: Այս անգամ ևս հարման քաղաքները չեն կարողանում փոխադարձ համաձայնության գալ: Ռոստովի քաղաքային խորհրդարանը որոշում է կայացնում ուսումնարանը բացել յուր տնօրինած քաղաքի սահմաններում⁶¹:

Դոնի հայկական գաղութում գիտակցում էին, որ արտադրության մյուս կարևոր բնագավառում՝ գյուղատնտեսության մեջ նմանապես անհրաժեշտ է պատանիներին համապատասխան մասնագիտական գիտելիքներ տալ՝ երկրագործությունը ժամանակի պահանջների մակարդակով վարելու համար:

Նոր Նախիչևանի վաճառական ն. Սարինյանը ցանկանում էր Սուրբ Խաչ վանքում բացել երկամյա երկրագործական դպրոց: 1886 թ. նա տարեկան 1500 ռ. է հատկացնում այդ նպատակին, իսկ իր մահից հետո դպրոցը ֆինանսավորվելու էր իր թողած կտակի համաձայն: Ն. Սարին-

60 ԳԱՐՕ, ֆ. 91, օպ. 1, մ. 750, լ. 8—9.

61 նույն տեղում, թ. 62:

յանը դպրոցին էր տրամադրում նաև Ստավրոպոլի նահանգի Դաշլա ղետափի 900 դես. տարածությամբ սեփական ագրարակը⁶²: Երկրագործական ուսումնարանը հարակից էր լինելու ժառանգավորաց դպրոցին և նոր Նախիչևանի ու հայկական գյուղերի մասնուկներին տալու էր գյուղատնտեսական տարրական գիտելիքներ:

Այս նախաձեռնությունը, ինչպես նաև Ս. Խոչայանի թողած 90 հազար ռ. գումարով հայկական գյուղերում գյուղատնտեսական դպրոց բացելով⁶³ ծրագրերն այլև պատճառներով չեն իրականանում:

Նոր Նախիչևանի ուսումնական հաստատությունների մեջ աշքի էր ընկնում և ամենից ավելի նշանակալից դեր է կատարել Հոգենոր սեմինարիան կամ թեմական դպրոցը: 1880-ական թվականների սկզբին հիմնադրված այդ դպրոցը կոչված էր նաև բավարարելու ժամանակի պահանջներին համապատասխան, լուսավորյալ դպրոց ստեղծելու նորնախիչևանցիների ցանկությունները:

Արևելահայ կյանքում թեմական դպրոցները ծնունդ առան 1836 թ. մարտի 11-ին Նիկոլայ I-ի կողմից հաստատված «Հայ-լուսավորչական հավատի Հոգենոր գործերի կառավարման կանոնագրության» կամ Հանրածանոթ «Պոլոծենիյեի» հիման վրա: «Պոլոծենիյեի» համաձայն, ուսական կայսրության հայ-լուսավորչական հոտը բաժանվում էր վեց (Նոր Նախիչևանի ու Ենուարարիայի, Աստրախանի, Երեանի, Վրաստանի, Ղարաբաղի և Շիրվանի կամ Շամախու) թեմերի: Դպրոցական հարցերին նվիրված այդ «Կանոնագրության» 7-րդ բաժնի Հողվածների համաձայն ուսահայ յուրաքանչյուր թեմ ունենալու էր մի հոգենոր դպրոց՝ սեմինարիա:

«Պոլոծենիյեի» հիման վրա 1837 թ. թեմական դպրոցներ հիմնվեցին Թիֆլիսում և Երևանում, 1838 թ.⁶⁴ Շուշիում և 1844 թ.⁶⁵ Շամախիում: Թեմական դպրոցները թեև ստեղծվել էին հոգենոր գործիչներ պատրաստելու համար, սակայն շուտով նրանց հոգենոր բնույթը ետին պլան մըղվեց: Այդ դպրոցները սկսեցին հիմնականում աշխարհիկ սկզբունքնեցով առաջնորդվել և ավելի լայն ու գործնական նշանակություն ստացան: Կրթական այդ օշախները, բացառյալ Թիֆլիսի ներսիսյան դպրոցի, նախառեֆորմյան շրջանում մի կերպ քարշ էին տալիս իրենց գյուղումը և միայն 1870-ական թվականներից դարձան ուսումնական կենտրոնները⁶⁶:

62 ՀԿՊՊԱ, ֆ. 54, գ. 1824, 1915:

63 «Մշակ», 1907, № 58:

64 Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970, հշ. 12—15, 54—55:

Անդրկովկասի հայկական թեմերում եթե «կանոնադրության» հիման վրա արագորեն դպրոցներ հիմնադրվեցին, ապա բուն Ռուսաստանի երկու թեմերում նման ուսումնարանների ստեղծումն այլ ընթացք ստացավ: Աստրախանում թեմական դպրոց շբացվեց, և այդ դերը առավել կամ նվազ հաջողությամբ կատարում էր Սղաբարյան նշանավոր դպրոցը: Նոր նախիչեանում ոչ միայն թեմական, այլև բարձր հիմքերի վրա դրված որևէ կրթական օջախ հիմնադրելու փորձերը հանդիպում էին ուսումնական բարձրագույն գերատեսչությունների հարուցած արգելքներին: Եվ, ինչպես արդեն նկատեցինք, մինչև 1870-ական թվականների վերջն այդ ասպարեզում որևէ նկատելի առաջընթաց չկատարվեց:

1857 թ. նոր նախիչեանի և Բեսսիրաբիայի թեմի առաջնորդ նշանակված Գ. Այվազովսկին գալով նոր նախիչեան ականատես եղավ բնակլության ցանկությանը և համոզվեց համապատասխան ուսումնարան հիմնելու անհրաժեշտության մեջ: «Հայտնեց նա իր միտքը բաղաքացեաց, — կարդում ենք թեմական դպրոցի հիմնադրմանը նմիրված արխիվային մի փաստաթղթում, — գտավ իրեն համակրող ամբողջ հասարակությունը, որ իր հովվի խոսքերին ականջ դնելով, վագ անցավ իր եկեղեցեաց գումարներն իր ձեռքով պահանջելեն, որի համար շատ տարիներ ի վեր վեճ բացած էր: Ամենայն ինչ հանձնեց իր նոր և աշխարհանշակ առաջնորդին, իր բոլոր եկեղեցեաց գումարներն ավանդեց նորա ձեռքը, միայն թե կատարեր նա իր խոստումը մի ազգային վարժարան տար իրեն, ժամանակիս համար լուսավորեր իր որդիքը արժանի որդիք շիներ նոցա ազգի և եկեղեցվո, արդյունավոր անդամներ պատրաստեր հասարակությանս համար, որ և հավատարիմ հպատակներ լինեին բարերար տերության մերոն⁶⁵:

Նախատեսվող ուսումնարանը Ա. Խալիբյանի ցանկությամբ բացվեց Թեոդոսիայում: Սակայն դրանից հետո էլ թեմական առաջնորդը չէր հրաժարվել նախիչեանում ուսումնարան հիմնելու մտադրությունից: 1862 թ., եղբ Դոնի հայ հասարակությունը, քաղաքագլուխ գլխավորությամբ, դիմում է եկատերինոսլավի նահանգապետին նոր նախիչեանում ուսումնարան բացելու խնդրանքով, Գ. Այվազովսկին փորձում է այդ ցանկությունը ի կատար ածել: Բնականաբար նա իր հայացքն ուղղում է նոր նախիչեանի մեծահարուստ Ա. Խալիբյանի կողմը: Թեմական առաջնորդին ուղղած պատասխան նամակում վերջինս հայտնում է, որ ինքը

պիրավորված է նախիչեանցիների անբարյացակամ վերաբերմունքից և հրաժարվում է այնտեղ ուսումնարան հիմնել: Միաժամանակ, նա հայրենակիցների վատ վերաբերմունքով է բացատրում այն հանգամանքը, որ ինքն ուսումնարանը նոր նախիչեանի փոխարեն հիմնել է թեոդոսիայում:

Խալիբյան ուսումնարանը փակվելուց անմիջապես հետո, 1871 թ. քաղաքի հայ հասարակությունը դպրոցի ծախսերը հոգալու պարտավորությամբ դիմում է հայոց կաթողիկոսին և խնդրում այն փոխադրել նոր նախիչեան: Կաթողիկոսը 1873 թ. համաձայնություն է տալիս Խալիբյան ուսումնարանը տեղափոխելու և այն նոր նախիչեանի ու Բեսսարաբիայի թեմական դպրոց վերանվանելու մասին, պայմանով, որ քաղաքն իր վրա վերցնի դպրոցի հոգան ու տնօրինությունը: Նոր նախիչեանի քաղաքային խորհրդարանը քննարկում և գոհունակությամբ ընդունում է կաթողիկոսի առաջարկը:

Հաջորդ տարում կաթողիկոսի կոնդակով թույլատրվում է նախիչեանում բացել ծրագրված դպրոցը, դրան հանձնելով Խալիբյան ուսումնարանի շենքը, կահկարասիքը և տպարանը⁶⁷: Նոր նախիչեանում համապատասխան նախապատրաստական աշխատանքներ են տարվում դպրոցի բացման ուղղությամբ: Հաստատվում է դպրոցի հոգաբարձությունը, Գ. Աղափիրյանը նշանակվում է տեսուչ և որոշվում է 1875 թ. փետրվարին կատարել բացումը: Սակայն եկատերինոսլավի նահանգապետ և Դուրնովան արգելում է դպրոցի բացումը, քանի որ այն չուներ բարձրագույն իշխանության կողմից հաստատված կանոնադրություն:

Դեռորդ IV կաթողիկոսը դիմում է բարձրագույն ատյաններ՝ դպրոցի կանոնադրությունը հաստատելու համար: Միաժամանակ նա հոգաբարձությանն առաջարկում է բացել ուսումնական այդ հաստատությունը, որպես հոգեոր դպրոց: Շուտով (1875 թ. սեպտեմբեր) բացվում և հրեամյա կյանք է ունենում ծխական տարրական դպրոցներից բարձր մակարդակ ունեցող նոր նախիչեանի հոգեոր դպրոցը⁶⁸:

1880 թ. հունիսի 27-ին Ալեքսանդր II-ը հաստատում է թեմական դպրոցի կանոնադրությունը: Կանոնադրության համաձայն նոր նախիչեանում բացվող հոգեոր սեմինարիան պահպելու էր թեմի եկեղեցիների և Խալիբյան ուսումնարանի շենքի արդյունքներից ու աշակերտների ուս-

66 ՀԿՊՊ, ֆ. 415, գ. 77.

67 ՀԿՊՊ, ֆ. 10, գ. 1, գ. 19, թ. 9.

68 Նույն անդում, թ. 10:

ման վարձից գոյացող միջոցների հաշվին: Դպրոցի կառավարումն իրականացնելու էր Դոնի հայ համայնքի կողմից ընտրված հոգաբարձությունը:

Նոր նախիչևնի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսը գալիս է նախիչևն և հաստատված կանոնադրության միմանցրա նախապատրաստում թեմական դպրոցի բացումը: Նախնական հաշիվներ կատարելով, նա համոզվում է, որ դպրոցը ֆինանսավես պահող երեք աղբյուրներից ստացվում է 10 հազար ռուբլի, որն անբավարար էր դրա անխափան գոյությունն ապահովելու համար: Թեմական առաջնորդը դիմում է քաղաքացին վարչությանը: Վերչինս դպրոցին տրամադրում է հատուկ շենք և քաղաքի միջոցներից հատկացնում տարեկան 7 հազար ռուբլի: Ըստրվում է վեց հոգուց բաղկացած հոգաբարձական խորհուրդ՝ թեմի առաջնորդի տեղապահ Ե. Շապոշնիկյանը գլխավորությամբ և 1881 թ. նոյեմբերին կատարվում թեմական դպրոցի բացումը⁶⁹:

1881—1882 ուսումնական տարում բացվում է միայն երկու դասարան՝ առաջին ու երկրորդ և նախակրթական երեք բաժին՝ ստորին, միջին և բարձր: Յուրաքանչյուր տարի բացվելու էր ևս մեկ դասարան մինչև որ դասարանների թիվը հասներ վեցի: Այսպիսով, թեմական դպրոցն ունենալու էր վեց դասարան և եռաստիճան նախակրթարան:

Նոր նախիչևնում բարձրորակ դպրոցներ հիմնելու համար գործադրվող երկարատև ջամանակ մշտապես ընաբեկվում և բանավեներ էին գումար ապագա դպրոցի կարգի, դրա բնույթի և ուղղության հարցերի շուրջը: Լուրջ տարակարծություններ սկսվեցին մասնավորապես թեմական դպրոցի շուրջը: Այս առաջնակարգ ուսումնական հաստատության հիմնադրմանը նախորդող ամբողջ ժամանակաշրջանում, 1870-ական թվականներին քաղութիւն հայ հասարակության մեջ եղած տարակարծություններն այնպիսի շափեր էին բնույնել, որ դրանց արձագանքեցին «Մշակ» և «Մեղու Հայաստանի» թերթերը:

Այնքան որքան ձգձգվում էր թեմական դպրոցի հիմնումը, բնակչության մի մասը նպատակահարմար էր գտնում բացել պետական ռեալական ուսումնարան, իսկ թեմականի փոխարեն ունենալ հոգերոր դպրոց: Լուսավորության մինիստր Դ. Տոլստոյը, նոր նախիչևնում եղած ժամանակավել էր իր համաձայնությունը ուսումնարանում հայոց լեզվի և կրոնի լրացուցիչ ուսուցում մտցնելու մասին, ինչպես այդ արվել էր կազարյան ճեմարանում⁷⁰:

Հիմնավոր կրթության անհրաժեշտությունը գիտակցող բնակչության առավել զորեղ թեմական դպրոց ունենալու տեսակետն էր պաշտպանում, մանավանդ, որ թեմի բնակչության հիմնական մասը գտնվում էր նոր նախիչևնում: Նրանք էական նշանակություն չեին տալիս այն հանգամանքին, որ թեմական դպրոց ավարտողները չեն կարող անմիջապես համալսարան ընդունվել: Նրանց կարծիքով Դոնի հայությանը հարկավոր է առաջին հերթին պայքարել տգիտության դեմ: Ասել է թե՝ ունեալ միջնակարգ կրթությամբ երիտասարդներ⁷¹:

Հիմնական առարկությունը նաև այն էր, որ դպրոցը ստեղծվում է միայն հոգեկրականներ պատրաստելու նպատակով, այն գեպքում, երբ կյանքն այլ պահանջներ էր դնում: Խոսվում էր այն մասին, որ գիմնազիաների համեմատ թեմականն ավելի նեղ ու սահմանափակ գիտելիքներ է տալու և այլն⁷²:

Այս և համանման մտավախությունը շարունակվում էր անգամ կանոնադրությունը հաստատվելուց հետո էլ, քանի որ դպրոցի նպատակների մասին կանոնադրության համապատասխան հոդվածները տեղիք էին տալիս նման կասկածների: Այնտեղ ասվում էր, որ դպրոցի նպատակն է լինելու պատրաստել հայկական եկեղեցու բարեկիրթ սպասավորներ և ծխական դպրոցների համար ուսուցիչներ: Միայն հպանցիկ նշվում էր, որ դպրոցում միջնակարգ ուսումնարանների ծրագրով ավանդվելու են ընդհանուր գիտություններ, բարոյական և մտավոր կրթության արժանավոր քաղաքացիներ պատրաստելու համար: Սակայն պետք է նշել, որ դպրոցը բավականաշափ լայն գիտելիքներ էր տալիս իր սաներին: Այնտեղ ավանդվում էին կրոն (հին և նոր կտակարան, հայ եկեղեցու պատմություն, աստվածաբանություն), հայերեն, ուսուցելու, լատիներեն, ֆրանսերեն լեզուներ, թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն (հայոց, ուսուց, ընդհանուր), մանկավարդություն, հոգեբանություն, տրամաբանություն, բնագիտություն, գծագրություն, գեղագրություն և մարմնամարզություն⁷³:

Կյանքի պահանջներին համապատասխան, ինչպես Անդրկովկասի այնպես էլ հատկապես նոր նախիչևնի թեմական դպրոցը գործնականում այլ բնույթ ստացավ: Այն աստիճանաբար դարձավ բազմակողմանի կրթություն տվող, աշխարհիկ սկզբունքներով առաջնորդվող միջնակարգ մի հաստատություն: Թեմական դպրոցը, փաստորեն, ուղղություն էր տալիս Դոնի և ոչ միայն Դոնի հայ զանգվածի կրթական գործին: Նրա սա-

69 Նույն տեղում, թ. 11:

70 «Մշակ», 1876, թ. 16:

71 «Մեղու Հայաստանի», 1880, թ. 30, 60, 1881, թ. 29, 35, 37:

72 Նույն տեղում, 1881, թ. 61:

73 ՀԿՊՊ, թ. 10, ց. 1, գ. 19, թ. 7:

Ները կյանքի լայն ասպարեզ էին դուրս գալիս և շատ սակավներն էին հոգելոր կոչում ընդունում: Այն դարձավ առօրյա խնդիրներին ընդառաջող, հասարակական-քաղաքական իրադարձությունների հետ կապված մի հաստատություն: Ամենակին պատահական չէր, որ Ռուսաստանյան առաջին հեղափոխությանն այդպիսի լայն արձագանք աւեց թեմական դպրոցում սովորող երիտասարդությունը:

Դպրոցն իր սկզբնավորման շրջանում, 1881—1882 ուսումնական առաջին տարում, երեք հախակրթարանում և երկու դասարանում ուներ 152 աշակերտ: Հաջորդ տարում սովորողների թիվն ավելացել էր միայն 4 հոգով և հասել 156-ի: Նրանցից 115 հոգի թոշակավոր և 41 ճրիավարժ աշակերտներ էին⁷⁴, 1886—1887 ուս. տարում դպրոցն ուներ արդեն վեց դասարան և նախակրթարանի հետ՝ 201 աշակերտ⁷⁵, XIX դ. 90-ական թվականներին և XX դ. սկզբին աշակերտների թիվը հասնում էր 250-ի:

Թեմական դպրոցի առաջին տեսուչն էր նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանը: Նրա մահից հետո այդ պաշտոնը վարում էր լեզվաբան Դ. Չարիխյանը, իսկ 1903 թվականից՝ վաստակաշատ բանասեր ու մանկավարժ Ե. Շահազիզը⁷⁶:

Թեմական դպրոցի մասին հստակ պատկերացում կազմելու համար հիշատակենք տասնամյա անցյալ ունեցող ուսումնարանի 1890—1891 ուսումնական տարվա տվյալները: Դպրոցն ուներ 17 որակյալ ուսուցիչ և իր բժիշկը: Տարվա ընթացքում գումարվել է 8 մանկավարժական ժողով: Ուսումնական խնդիրներից զատ մանկավարժական ժողովը հանգամանորեն քննարկել է տարբեր առարկաների համար կազմված նոր դասագրքերը: Ժողովը եկել է այն կարծիքի, որ, օրինակ, Արովյանի հայոց պատմության ձեռնարկի փոխարեն նպատակահարմար է օգտագործել Ս. Պալասանյանի պատմության դասագիրքը և նման այլ հետևողությունների⁷⁷:

Դպրոցն ուներ իր գրադարանը, որը կազմակերպվեց դեռևս ուսումնարանի բացման ժամանակ՝ հանգանակած գումարով: Առաջին տարին սակայն, շատ աղքատիկ էր, պակասում էր մասնավորապես մանկական գրականությունը: Այդ շրջանում գրադարանը համարված էր միակողմանի, գերազանցապես Մխիթարյանների հրատարակություննե-

74 «Մեղու Հայաստանի» 1882, № 122:

75 Ս. Մաշտոցի անվան մատենադարան, ֆ. Կաթ. գիւղան, թ. 236, վ. 132:

76 Ե. Չարինցի անվան գրականության և արվեստի թանգարան, ֆ. 129 (Ս. Չարիխյանի), թ. 10—32:

77 «Արարատ», 1892, էջ 46:

րով: 1891 թ. արդեն գրադարանն ուներ տարբեր բնույթի 900 կտոր գիրք, բավականին լավ կահավորված ֆիզիկայի լաբորատորիա և այլն⁷⁸:

Աշակերտների թիվը հասնում էր 210-ի, որից 70—80 հոգի Ճրիավարժ էին: Թոշակավորների մեջ էին Մ. Բալաբանյանի անվան մեկ աշակերտ և տեղի բարեգործական ընկերության 32 սաները: Դպրոցը տարեկան տալիս էր 4—6 շրջանավարտ: 1889—1890 ուս. տարում թեմականն ավարտել են չորս աշակերտներ՝ Հ. Քեշեկյանը, որն ուսումը շարունակել է արտասահմանում, և հետագայում գաղութի նշանավոր գործիչներ դարձած Հ. Բեղելյանը, Ռ. Բերբերյանը և Ռ. Ծուռիլյանը⁷⁹:

Դպրոցի տարեկան եկամուտը եղել է 30970 ռուբլի, իսկ ժախսերը՝ 18 437 ռուբլի: Եկամուտներից ավելացած 12 533 ռ. գումարը հոգաբարձություն որոշել էր ծախսել դպրոցի շենքն ընդարձակելու վրա, որպեսզի հնարավորություն ստեղծվեր գիշերօթիկ սաներ պահելու: Այդ տարվա ընթացքում թեմական դպրոցի նյութական միջոցները բարեկավուն են մեկ այլ աղբյուրից: Դեռևս դպրոցի հիմնադրման ժամանակ Խաչերս Դյաշկովը կտակել էր 100 հազար ռուբլի, որպեսզի մահվանից հետո այդ դրամագլխի տոկոսներով իր անվան թոշակառու աշակերտներ պահվին: 1891 թ. երբ նա մահանում է, Մոսկվայի բանկում պահվող նրա կտակած գումարի 5000 ռ. հասնող տոկոսները անցնում են դպրոցին⁸⁰:

Հոգեոր սեմինարիայի պահպանման նյութական միջոցների խնդիրը պարզ էր, այն կատարվելու էր մյուս թեմական դպրոցների ձևով: Այլ կերպ ասած, դպրոցը պահվելու էր թեմի մեջ մտնող հայկական համայնքների եկեղեցիներից ու վանքերից ստացվող գումարներով: Դըրացի հիմնադրման ժամանակ թեմակալ Մակար արքեպիսկոպոսը սահմանեց թեմի 38 եկեղեցիների ու վանքերի յուրաքանչյուրի տարեկան վճարելիք գումարը, որը կազմում էր 4130 ռուբլի⁸¹: Այդ գումարի կեսն ու անգամ մի փոքր ավելին ստացվում էր նոր Խախիչկանի վեց, հայկական գյուղերի հինգ եկեղեցիներից և Սուրբ Խաչ վանքից: Մշտապես զգալի գումար՝ 500—750 ռուբլի էր մուծում Պետերբուրգի հայոց եկեղեցին: Ղրիմի, Մոլդավիայի, ինչպես և Օդեսայի, Իզմայլի և նոր նա-

78 Նույն տեղում, էջ 32—37:

79 Նույն տեղում, էջ 38—39:

80 «Նոր դար», 1891, № 25:

81 ՀԿՊԿԱ, ֆ. 10, վ. 19, թ. 6. Նոր Խախիչկանի ու Բեսարարիայի թեմի եկեղեցիների և վանքերի, հետևապես նաև թեմում ցրված հայկական համայնքների մասին պատկերացում կազմելու համար մեջ ենք բերում այդ ցուցակը (հմտ. Ս. Մաշտոցի անվան մտենադարան, Կաթ. գիւղան, թ. 235 ռ. վ. 26, թ. 4):

խիշնանի ու Բեսարաբիայի թէմում գտնվող մյուս հայկական համայնքների եկեղեցիները փոքր ներդրում էին կատարում դպրոցի պահպանության համար։

Եկեղեցիներից ստացվող գումարը, քանի որ բավարար չէր, նոր նախիշնանի քաղաքային խորհրդարանը, նշանակում է տարեկան 6—7 հա-

1. Սուրբ Եկատերինե եկեղեցի Ա. Պետերբուրգի	—500 ռ.
2. Սուրբ Խաչ եկեղեցի Մոսկվայի	—500 ռ.
3. —» Լուսավորիչ ավագ եկեղեցի նոր Նախիշեանի	—600 ռ.
4. —» Աստվածածին եկեղեցի նոր Նախիշեանի	—400 ռ.
5. —» Համբարձում եկեղեցի նոր Նախիշեանի	— 50 ռ.
6. —» Գևորգ եկեղեցի նոր Նախիշեանի	—500 ռ.
7. —» Նիկողայոս եկեղեցի նոր Նախիշեանի	—300 ռ.
8. —» Թեոդորոս եկեղեցի նոր Նախիշեանի	— 50 ռ.
9. —» Համբարձում եկեղեցի Զալթր գյուղի (Ն. Նախիշեան)	— 75 ռ.
10. —» Աստվածածին եկեղեցի Մեծ Սալա գյուղի	— 75 ռ.
11. —» Սարգիս եկեղեցի Թոփտի գյուղի	— 75 ռ.
12. —» Գևորգ եկեղեցի Փոքր Սալա գյուղի	— 25 ռ.
13. —» Հովհաննես Խարապետ եկեղեցի Նեսվիտա գյուղի	— 25 ռ.
14. —» Աստվածածին եկեղեցի Քիշինեի	— 25 ռ.
15. —» Աստվածածին եկեղեցի Աքերմանի	—100 ռ.
16. Աստվածածին եկեղեցի Օրհեյի	— 10 ռ.
17. —» Աստվածածին եկեղեցի Խամայիլի	— 10 ռ.
18. —» Հովհաննես Մկրտիչ եկեղեցի Կօթինի	— 10 ռ.
19. —» Աստվածածին եկեղեցի Հնլշտի	— 50 ռ.
20. —» Լուսավորիչ եկեղեցի Օղեսայի	— 50 ռ.
21. —» Պետրոս և Պողոս եկեղեցի Գրիգորիոսովոյի	— 40 ռ.
22. —» Աստվածածին եկեղեցի Գրիգորիոսովոյի	— 35 ռ.
23. —» Փրկիչ եկեղեցի Խարասուբազարի	—100 ռ.
24. —» Աստվածածին եկեղեցի Խարասուբազարի	— 50 ռ.
25. —» Աստվածածին եկեղեցի Սիմֆերոպոլի	—100 ռ.
26. —» Աստվածածին եկեղեցի, Հին Խրիմի	— 30 ռ.
27. —» Աստվածածին եկեղեցի Օրբազարի	— 25 ռ.
28. —» —» —» Նողայուկի	— 10 ռ.
29. —» —» —» Բախչեսարայի	— 10 ռ.
30. —» Նիկողայոս եկեղեցի Խվաստորիայի	— 10 ռ.
31. —» Հրեշտակապետաց եկեղեցի Թեոդոսիայի	— 15 ռ.
32. —» Գևորգ եկեղեցի Թեոդոսիայի	— 10 ռ.
33. —» Հովհակիմա և Աննայի եկեղեցի Թեոդ.	— 10 ռ.
34. —» Աստվածածին Աղբարան Մելիտոպոլի	— 10 ռ.
35. —» Աստվածածին Աղբարան Եյսկի	— 10 ռ.
36. Հրեշտակապետաց Աղբարան Կերչի	— 10 ռ.
37. —» Խաչ վահք նոր Նախիշեանի	—100 ռ.
38. —» Խաչ վահք Հին Խրիմի	—100 ռ.



Ո. Պատկանյանի մահարձանը (Ս. Խաչ վահքի բակում)



Ա. Մյասնիկյան

գար ոռւրլի նպաստ: Միաժամանակ որոշվում է Հնդկահայ կտակներից և բարեգործական հաստատությունների միջոցներով լրացնել դպրոցի պահպանությանն անհրաժեշտ գումարը: Այսպիսով, դանդաղ, սակայն հետևողականորեն աճող դպրոցի ընդհանուր ծախսերի սոսկ քառորդ մասը, հաճախ էլ միայն 15—20 % -ը կազմում էին թեմի եկեղեցիներից ստացվող դրամական միջոցները: Մանավանդ, որ դպրոցի հիմնադրումն ժամանակ թեմի հոգեոր հաստատությունների համար սահմանված դրամը հետագյում մնաց անփոփոխ, իսկ երբեմն էլ այլևայլ պատճառներով պակասում էր: Այսպես, սկզբնապես սահմանված 4130 ոռւրլու փոխարեն 1886 թ. որոշ եկեղեցիներ մուծումներ չկատարելու պատճառով այդ գումարը իշել էր 3465 ոռւրլու⁸²: Դա էր պատճառը, որ դպրոցի հոգաբարձությունը հարկադրված էր դիմելու թեմի եկեղեցական խորհուրդներին և միջոցներ խնդրելու⁸³:

Դպրոցի եկամուտների կեսից ավելին կլանում էր տեսուչի, ուսուցիչների, սպասարկու անձնակազմի աշխատավարձը, մյուս մասը հատկացվում էր գիշերօթիկ աշակերտներին պահելու համար և շենքի պահպանությանը:

1890-ական թվականներից դպրոցի ծախսերը, հետևաբար նաև եկամուտներն անցնում էին 30 հազար ոռւրլուց: 1892—1893 ուս. տարում դպրոցի եկամուտները և ծախսերը եղել են 33 360 ոռւրլի⁸⁴, իսկ 1913—1914 ուս. տարում հասել են շուրջ 38 հազարի⁸⁵:

82 Նույն տեղում, գ. 36, թ. 7.

83 Նույն տեղում, թ. 10, գ. 95:

84 «Մշակ», 1893, № 12:

85 «Արարատ», 1914, էջ 1103—1107: Դպրոցի պահպանության նյութական ադբյունների, դրա եկամուտների և ծախսերի մասին պատկերացում կազմելու համար համառոտակի մեջ բերենք 1909—1910 ուս. տարվա տվյալները. Այդ տարում դպրոցի եկամուտները գուացել էին աշակերտների ուսման վարձից՝ 13680 ռ. Դյաշկովի, աննշան շափով նաև այլ անձնավորությունների դպրոցին նվիրած դրամագլուխ տոկոսներից՝ 3991 ռ., քաղաքային վարչությունը հատկացրել էր 6875 ոռւրլի: Թեմի եկեղեցիներից ստացված հասուցիքը եղել է 4475 ոռւրլի: Դրանից նոր նախիջևանի եկեղեցիները տվել են 2500, Սուլր հաշ վանքը՝ 850, շրջակա գյուղերի եկեղեցիները՝ 275, Պետրովուրդի եկեղեցիները՝ 750 և Մուկվայի եկեղեցին 100 ոռւրլի: Դպրոցի կրպակներից ստացվել է 3400 ռ. եկամուտ և այլն: Տարվա ընդհանուր եկամուտը հասել է 36238 ոռւրլու:

Այդ գումարից 22 400 ռ. հատկացվել է ուսուցիչների և մյուս ծառայողների աշխատավարձին, 6000 ոռւրլին ծախսվել է աշակերտների մննդի և հանդերձանքի, 650 ռ. գրենական պիտույքների, 9858 ռ. շենքը տաքացնելու, լուսավորելու, վերանորոգելու վրա: Դրանից բացի 690 ռ. ծախսվել է բժշկի աշխատավարձի և ղեղորայքի, 1000 ոռւրլի՝ հաշվային դպրոցի պահպանովազրության և պահպանության համար (ՀԿՊԱ, գ. 57, ց. 2, գ. 880, թ. 5—6):

Հոգեոր սեմինարիան թեև կոչված էր ուսումնական առումով սպասարկելու ամբողջ թեմի հայկական բնակավայրերին ու համայնքներին, սպական աշակերտները հիմնականում հավաքվում էին տեղից՝ նախքանի և հայկական գյուղերի բնակիչներից: Շատ քիչ սովորողներ կային. Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Բեսարաբիայի հայկական բնակավայրերից, թեև դպրոցի գիշերօթիկ բաժինը սպասարկում էր դրսից եկած և չքաշոր ու որր աշակերտներին:

Սովորողների, առաջին հերթին դրսեկ աշակերտների ավելանալու խոշնդոտում էր այն հանգամանքը, որ թեմական դպրոցի շրջանավարտները չէին օգտվում պետական գիմնազիա ավարտողների իրավունքներից: Նրանք չէին կարող համալսարան ընդունվել, թեև թեմականի ծրագրը ոչնչով չէր զիջում, ընդհակառակը ավելի լայն գիտելիքներ էր տալիս, քան գիմնազիան:

Գիմնազիաները տարբերվում էին մյուս ուսումնարաններից նրանով, որ պարտադիր կարգով ավանդվում էին դասական լեզուներ՝ լատիներեն, հունարեն և համարվում դասական կրթություն տվող դպրոցներ: Գիմնազիաներին հատուկ ծրագրից շշեղելու նպատակով թեմական դպրոցում մտցված էր նաև լատիներեն: Զնայած դրան թեմական դպրոցի շրջանավարտները չէին օգտվում առունց քննության համալսարան ընդունվելու արտոնությունից: Բարձրագույն դպրոց ընդունվելու դժվարությունների պատճառով շատերը գերադասում էին սովորել գիմնազիայում:

Թեմական դպրոցի սաներին համալսարան ընդունվելու իրավունք վերապահելու մասին պարբերաբար կրկնվող դիմումները մնում էին առանց դրական հետեանքների: Այսուհետեւ թեմական դպրոցը 1887 թ. հետո տված 190 շրջանավարտներից 58 հոգի կամ 30 տոկոսն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն⁸⁶:

Դպրոցի շրջանավարտները տեղում, Ղզլարում, Մոզդոկում, Արմավիրում և Հյուսիսային Կովկասի այլ բնակավայրերում, Ղրիմի հայկական քաղաքներում, Խարկովում և այլուր մանկավարժական արդյունավետ աշխատանք էին կատարում: Թեմական դպրոցի շրջանավարտների մի մասը ուսումնական գործությունների համար ուսումը շարունակում էր Պետերուրքի, Մոսկվայի, Խարկովի և Կիևուրունական այլ քաղաքների համալսարաններում ու ինստիտուտներում:

Պում և կամ արտասահմանում և, վերադառնալով հայրենիք, կուլտուրավորական ու հասարակական բեղմնավոր գործունեություն էին ծագալում:

Դպրոցի շրջանավարտները միշտ էլ կապեր էին պահպանում ուսումնարանի հետ: Հարազատ դպրոցի նկատմամբ ունեցած վերաբերմունքի ածաւակետից բնորոշ է թեմականի նախկին սան, երդվալ հավատարմատարի օգնական Դ. Չուբարյանի վարմունքը: Նա դպրոցի տեսուչ Ե. Շահազգին է ուղարկում (1916) 3000 ուռիլի, որով երախտագիտության զգացումով դպրոցին փոխատուցում էր իր 6-ամյա ուսուցման պարտքը: «Դեռ աշակերտության նստարանից, —գրում էր նա, —չերմ ցանկություն եմ ունեցել անպայման պարտահատուց լինել Զեր խնամքին հանձնված դպրոցին, որտեղ ամբողջ վեց տարի գիշերօթիկ սան եմ եղել; մի դպրոցի, որի հետ մինչեւ այսօր կապված եմ մտքի և զգացմունքի ներքին թելերով: Օգտվելով այն նյութական հնարակորությունից, որ ներկայումս ստեղծվել է ինձ համար շուապում եմ գեթ համեստ շափով հատուցել պարտքը⁸⁷:

Թեմական դպրոցում աշխատանքի անցան ճանաշված ու անվանի շատ մանկավարժներ, որոնք արգասավոր գործունեություն ծավալեցին մատադ սերնդի կրթության ու դաստիարակության գործում:

Թեմական դպրոցը փաստորեն դարձել էր հարավային Ռուսաստանի հայկական համայնքների կուլտուր-լուսավորական գործի ջահակիրը: Այն միաժամանակ դարձավ նոր նախիչևանի հայշատ գաղութի հասարակական-մշակության կյանքի, ինչպես նաև դեմոկրատական գաղափարների կենտրոնը:

Ոչ միայն թեմական դպրոցի, այլ Դոնի հայկական գաղութի պատանիների ու երիտասարդության ուսումնառության մասին խոսելիս պետք է հաշվի առնել նաև կարենոր մի հանգամանք:

Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում և արտասահմանում կրթություն ստացած նախիչևանցիների մի մասը վերադառնում էր հայրենի քաղաք և իր գիտելիքները ծառայեցնում դրա առաջընթացին: Գաղութի փոքր ու սահմանափակ հնարակորությունները սակայն, անհնարին դարձնում նրանց բոլորի վերադարձն ու աշխատանքի ասպարեզ դտնելը: Այդ պատճառով նոր նախիչևանից և հայկական գյուղերից գուրքեկած երիտասարդության մեծագույն մասը այլևս չէր վերադառնում: Նրանք որպես թիշտ, իրավաբան, ինժեներ, գիտնական, հասարակական-քաղաքական գործից, նկարիչ, երաժշտագիտ կամ թատերագիտ աշխա-

86 ՀԿՊԱ, ֆ. 10, գ. 1, թ. 114, թ. 25:

87 ՀԿՊԱ, ֆ. 10, գ. 130, թ. 2:

տանքի էին անցնում տարբեր տեղերում և բնականաբար ցրվում երկրով մեկ:

Այդ մասնագետների, մտավորականների մի զգալի մասը կապերը շեր խզում Դոնի հայությունից, բայց մի մասն էլ աստիճանաբար կտըրվում ու խորթանում էր հայկական գաղութից: Այդպիսին էր գործնական, իրական կյանքի միտումն ու տրամաբանական ընթացքը, դրա անխռուսափելի հետևանքը:

Թեմական դպրոցի հիմնադրման հաջորդ տարում, 1882 թ. սեպտեմբերին բացվում է «Գոգոյան օրիորդաց հայկական վարժարանը»: Մէրրատիչ Գոգոյանը (Կոկոյան, 1796—1865 թթ.) Նոր Նախիչևանի նշանավոր առևտրականներից էր: Տակավին 1857 թ. Նախիչևանում և Տագանրովում գտնվող շարժական ու անշարժ գույքը և պատկառելի մի գումար է կտակում մահից հետո իր անունը կրող իգական դպրոց բացելու համար⁸⁸:

Կտակի իրականացումը ձգձգվում էր: Նրա կինը՝ Սրբուհի Պապասինյանը մեկնում է Պետերբուրգ, խնդրամատուց լինում բարձրագույն մարմիններին: 1877 թ. ստացվում է իրավասու աշյանների վճիռը զբարոցի բացման և այն կայսրուհի Մարիայի հովանավորության ներքո գտնվող ուսումնարանների կարգը մտցնելու մասին: Այդ շրջանում Գոգոյանի կտակի գումարն արդեն հասնում էր շուրջ 230 հազար ռուբլու⁸⁹:

Դպրոցի բացումը կատարվում է հանդիսավոր պայմաններում: Կաղմակերպված ցերեկություն հանդեռ են գալիս մանկավարժ Ա. Բահաթըրյանը, Ռ. Պատկանյանը: Վերջինս դրվատելով Մ. Գոգոյանի նախաձեռնությունը, նշում է իգական սեփի կրթության և դաստիարակության կարեռությունը, որն, իրավամբ, տվյալ ժողովրդի կամ նրա առանձին հատվածի քաղաքակիրթ լինելու շափանից էր: Նա Գոգոյան օրիորդաց վարժարանը արհեստավորական դպրոցից հետո համարում է Դոնի հայության երկրորդ պարծանքը⁹⁰: «Արքեստական դպրոցի սաները, —ողջույնի խոսքում ասում է Ռ. Պատկանյանը, — Կինդրեն իրենց քույրերին՝

88 ՀԿՊՊ, ֆ. 139, գ. 1627, թ. 3—8: Մ. Գոգոյանը առևտրական ընկերություն էր Հիմնել Ա. Խալիբյանի հետ: Վերջինս բարեկամական հարաբերությունների մեջ էր ոսւ գրող Ն. Կոկոյնիկի հետ: Կոկոյնիկը հաճախ էր լինում Խալիբյանի մոտ և նրա միջոցով ծանոթանում ու մտերմանում է Գոգոյանի հետ: Նա խորհուրդ է տալիս Գոգոյանին՝ սեփական միջոցներն օգտագործել բարեգործական-լուսավորական նպատակներով, Հիմնել իգական ուսումնարան: Այդ գաղափարը մոտ էր Մ. Գոգոյանի սրտին, մանավանդ իր շորս դափակերը մանուկ հասակում մահացել էին և նա մենացել էր անժառանգ:

Պ. Սալիթյանը:

89 «Տարագ», 1903, № 19, էջ 188:

90 «Մեղու Հայաստանի», 1882, № 120:

Կոկոյան վարժարանի սանուհիներին, խորոնկ արմատացնել իրենց մեջ լարեկրթությունը և աշխատասիրությունը, որպեսզի ժամանակն անցնելով, երբ երկուսը ևս չափահաս մարդիկ և քաղաքացիք կլինեն, իրենց կրթման և պարզերես և գիտակցաբար կարողանան հորդորելու իրենց ժամանակից երկխայքին նույն ասաքինությունը»⁹¹:

Մ. Գոգոյանի երկհարկանի քարե տանն սկզբնապես բացված դրաբում ընդունվում էին 7—11 տարեկան տարբեր դասի պատկանող, գերազանցած աղքատ ընտանիքների հայ աղջիկները: Ուսման ընդհանուր տեսողությունը վեց տարի էր: Դպրոցն ավարտող աշակերտուհիներն արտահագուստի համար միանվագ ստանում էին 150, իսկ գերազանցիկները՝ 200 ռուբլի:

1876 թ. Պետերբուրգի իգական դպրոցների համար սահմանված ծրագրի մակարդակով ուսումնարանում անցնում էին հայոց և ուսուացյաղումներ, ընդհանուր, ուսուացյաղումներ, պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն, բնագիտություն, երգեցողություն, նկարչություն, ձեռագործ, ուղղագրություն: Յանկացողները կարող էին նաև երաժշտություն սովորել: Ուսուաստանի պատմությունից ու աշխարհագրությունից բացի մյուս բոլոր առարկաներն ավանդվում էին հայերեն⁹²:

Ուսուցչական կազմն ընտրվում էր գերազանցած պատկանական սեռից, սակայն խիստ ընտրությամբ և միայն բարձրորակ մասնագետներից: Ուսումնարանը կառավարվում էր հոգաբարձական խորհրդի կողմից, որի նախագահը լինում էր Նոր Նախիչևանի քաղաքագույնը: Գոգոյան իգական դպրոցի հիմնադրման և դրա առաջին տարիների գործունեությունը հիմնականում կապվում է հոգաբարձական խորհրդի նախագահ, քաղաքագույնի գ. Սալթիբյանի անվան հետ:

Գոգոյան օրիորդաց դպրոցը նոր Նախիչևանի արգասավոր կյանք ունեցած ուսումնական հաստատություններից էր: Առանց նկատելի տատանումների իր գոյությունը պահպանեց պատշաճ մակարդակով և բարի անուն վաստակեց: Այդ ուսումնարանի նշանակությունն անուրանալի է գաղութի իգական սեռի կրթության ու դաստիարակության գործում:

XIX դարի առաջին կեսում նոր Նախիչևան այցելած ուսու և օտարերկրացի գիտնականներն ու ճանապարհորդներն իրենց գոհումակությունը հայտնելով հայերի տնտեսական ձեռներեցությունից ու կենցաղի կազմակերպման մակարդակից, միաժամանակ հանդիմանելով նշում

91 Ա. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ռ. Պատկանյանի գոհն, թ. 244:

92 ՀԿՊՊ, ֆ. 54, ց. 1, գ. 1665, թ. 1—8:

էին հայ կանանց՝ միայն ընտանիքում պարփակված, մեկուսի վիճակը՝ Դարի երկրորդ կեսին կապիտալիստական հարաբերությունների հետև վանքով տեղի ունեցող հեղարեկումները փոփոխություններ առաջացրին նաև այս ասպարհողում։ Լուսավորական—դեմոկրատական շարժումն իր ալիքների մեջ առավ նաև իգական սեռի ներկայացուցիչներին։ Կանայք աստիճանաբար սկսեցին դուրս գալ ընտանիքի ներփակ շրջանակներից և մասնակցություն ունենալ գաղութի հասարակութան, լուսավորական կյանքին։ Այդ խնդրում, ինչ խոսք, նշանակալից է Գոգոյան օրիորդաց վարժարանի դերը։ Նոր նախիչեանի հայկական գաղութի մանկավարժության ասպարեզում, սիրողական թատրոնում, երաժշտության մեջ բարեգործական հաստատություններում և այլ ասպարեզներում աշխատող կանանց մեծ մասը Գոգոյան վարժարանի սանուհիներն են եղել կամ էլ ուսումնական այդ հաստատության բարերար ազդեցությունը կրած գործիչներ։

Նշանակալից դեր կատարող վերոհիշյալ կրթական օջախներից բացի նոր նախիչեանում միշտ էլ գործել են ծխական կամ նույնատիպ, ոչ սակավ դեպքերում նաև մասնավոր 6—7 դպրոցներ։ Դրանք տարրական գիտելիքներ էին տալիս և աշակերտներին նախապատրաստում միջնակարգ կրթություն ստանալու համար։

Հասարակական կարգով և մասնավոր սկզբունքներով նոր դպրոցներ բացելու ցանկություններն ու փորձերը բնորոշ էին ոչ միայն գաղութի հիմնադրման առաջին տասնամյակներին, այլև նրա գոլության ամբողջ ընթացքին։ 1890 թ., օրինակ, նոր նախիչեանի քաղաքացի Մարիա Սարմակեցովան դիմում է իրավասու մարմիններին՝ քաղաքի երկսեռ երեխանների համար բացելու երկրորդ կարգի մասնավոր ուսումնարան, ուր բացառությամբ կրոնի, ուսուցումը լինելու էր ուստերեն լեզվով։ Խարկովի ուսումնական օկրուգից այդ մասին հարցում են կատարում լուսավորության մինիստրությանը։ Վերջինս արգելք հարցուցելու ոչ մի առիթ չի տեսնում և տալիս է իր համաձայնությունը⁹³։

Պատանիների բարձրագույն կրթություն ստանալը դյուրացնելու նպատակով նոր նախիչեանում տարիներ շարունակ քննարկվում էր գիմնազիա բացելու խնդիրը։ 1893 թ. քաղաքային խորհրդարանը կրկին անդրադառնում է այդ հարցին։ Դումայի որոշ անդամներ նկատի առնելով հայերի ծավալուն առևտուրը, առաջարկում են վաճառականական դպրոց բացել։ Սակայն ձայնավորների մեծ մասը (Գ. Սալթիկյան, Ս. Հարությունյան, Մ. Ղլուշան, Ե. Կողբեթյան) մերժում է գիմնազիայի փոխա-

րեն վաճառականական դպրոց բացելու առաջարկը։ Նրանք պնդում էին գիմնազիա ունենալու անհամեշտության վրա, որպեսզի երեխանները հարավորություն ստանան բարձրագույն հաստատություն ընդունվելու Մշաթամանակ գտնում էին, որ գիմնազիայում հայ աշակերտների համար պարտադիր պետք է լինի հայոց լեզվի և կրոնի ուսուցումը⁹⁴։

Ի վերջո, XX դարի սկզբին նախիչեանում բացվում է պետական գիմնազիա։ Գոգոյան իգական դպրոցը նմանապես օգտվում էր պետական գիմնազիաների բոլոր իրավունքներից⁹⁵։

Դոնի հայկական գողութի ուսումնակրթական գործը չէր սահմանափակվում սոսկ քաղաքաբի շրջանակներով։ Սակայն, հայկական գյուղերում առավել դժվարին պայմաններում էր իրականացվում մատաղ սերնդի ուսուցումը։

Հայկական գյուղերում, հենց հիմնադրման ժամանակ, կառուցվում են նաև եկեղեցիներ։ Աստիճանաբար, այդ եկեղեցիների հոգևոր սպասավորների միջոցով սկսվում է երեխաններին գրածանաշության վարժեցնելու գործը։ Պատահական ու անկանոն բնույթ կրող, ուսուցման այդ հիմքի վրա XIX դ. առաջին կեսում հետզհետե կազմակերպվում են եկեղեցիներին կից ծխական դպրոցները։ Դրանք հիմնականում XIX դ. 40—50-ական թվականներից արդեն մշտական գործող դպրոցներ էին։ Փոքր Սալա գյուղի դպրոցն, օրինակ, բացվել էր 1867 թ. և բարգևք վիճակում չէր, սակայն 1880 թ. Ա. Զալալյանի կողմից ուսուցչի պարտականությունները ստանձնելուց հետո դրությունը փոխվում է⁹⁶։

Անցյալ դարի վերջերին հայկական վեց գյուղերում կային մեկական, որոշ տեղերում երկուական դպրոցներ բազմաթիվ աշակերտներով։ 1896 թ. Զալթը գյուղի ծխական դպրոցն ուներ 287 աշակերտ, Թոփիտի գյուղի դպրոցը՝ 162, Մեծ Սալալյանը՝ 193, Փոքր Սալալյանը՝ 94, Նեսվիտայինը՝ 61 և Կատարինավան գյուղի դպրոցը 34 աշակերտ։ Դրանից զատ Զալթը, Մեծ Սալա և Նեսվիտա գյուղերն ունեին նաև իգական դպրոցներ, որոնցում համապատասխանաբար սովորում էին 69, 60 և 31 աղջկներ⁹⁷։ Դրանք վեց տարվա դասընթացով երկդասյա կամ մեկդասյա դպրոցներ էին։ XX դարի երկրորդ տասնամյակի սկզբին գյուղական դպրոցների քանակն ավելացել էր։ Յուրաքանչյուր գյուղում կար

94 «Արձագանք», 1893, № 121.

95 ՀԿՊՊ, ֆ. 57, ց. 2, գ. 887, թ. 2—4.

96 «Արարատ», 1882, էլ 258.

97 ՀԿՊՊ, ֆ. 54, ց. 2212, թ. 2—8.

2—3, անգամ շորս դպրոց։ Համաշխարհային պատերազմի նախօրյակին թոփտի գյուղն ուներ շորս դպրոց⁹⁸։

Գյուղերի ծխական դպրոցների տնօրինությունն իրականացնում էր նոր նախիջևանի հոգևոր կառավարչությունը։ Դրանք պահպում էին տրվյալ գյուղի համայնքի, մասսամբ էլ եկեղեցու միջոցներով։ Այստեղ բարեգործական ընկերությունների աջակցությունը և նվիրատվությունները էական գեր շէին կատարում, որովհետև խիստ սակավաղեալ ու պատահական բնույթ էին կրում։ Հայտնի է, օրինակ, որ շալթրցի Ս. Խաղաղագարյանը 1879 թ. պատրաստի մի տուն և խանութ է նվիրել տեղի ծխական դպրոցին⁹⁹։

Գյուղական դպրոցները հետամնաց ու անբարենպաստ միջավայրի պատճառով տարբերվում էին քաղաքի նույնատիպ դպրոցներից և մեծ մասամբ գտնվում էին անմիխթար վիճակում։ Քաղաքի մեկդասյա դրաբոցն ավարտողները հաջողությամբ ընդունվում էին թեմական ուսումնարանի առաջին դասարանը։ Գյուղերի երկդասյա դպրոցի վեց տարվա դասընթացն ավարտած աշակերտը, որը պետք է ընդունվեր թեմականի 3-րդ կամ 4-րդ դասարանը, հազիվ կարողանում էր առաջին դասարան ընդունվել։ Դա գյուղական դպրոցների մակարդակի պերճախոս վկայություն է։

Մասուլի էջերում և այլ առիթներով քաղաքի ու նրա մտավորականության՝ հայկական գյուղերի առաջադիմությանը չնպաստելու մասին եղած քննադատությունը հիմնականում վերաբերում էր ուսումնական գործի նկատմամբ եղած անտարբերությանը։ Անգամ XX դարի սկզբներին, երբ որոշ տեղաշարժեր էին կատարվել գյուղերի կուտուր-լուսավորական կյանքում և գյուղական դպրոցի սաները կարողանում էին ուսումը հաջողությամբ շարունակել գիմնազիաներում ու թեմականում, դպրոցների ընդհանուր դրությունը դեռևս էր բավարար լինելուց։ Տեղական մամուլը բազմիցս անդրադարձել է գյուղական դպրոցների խեղճ ու անկայուն վիճակի, ուսուցիչների պակասի, ծրագրերի բացակայության, մանուկներին բավարար գիտելիքներ շտալու խնդիրներին¹⁰⁰։

Երեխաների դաստիարակության ու կրթության նկատմամբ Դոնի հայության ցուցաբերած դրական վերաբերմունքի դրսկորումներից էր նաև նախադպրոցական դաստիարակության նկատմամբ ունեցած ուշադրությունը։ Նախ նշենք, որ դպրոցներում կային նախակրթարաններ,

98 «Թաղութ», 1914, № 20։

99 «Մշակ», 1879, № 194։

100 «Նոր կանք», 1906, № 9, «Մեր ձայնը» 1907, № 5, 1908, № 100, 123, 127 և այլն։

որ երեխաներին գրաճանաչություն էին սովորեցնում, նրանց նախապատրաստում դպրոցական ուսուցման համար։ Դա այն ժամանակվա պայմաններում ուսուցման խելամիտ եղանակ էր, սակայն նախադպրոցական տարիքի մանուկները դուրս էին մնում դաստիարակության հասրակական ոլորտից։

Նախադպրոցական տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքի կազմակերպումը սկզբնավորվել է Գերմանիայում XIX դ. առաջին կեսին։ 1860-ական թվականներին նախադպրոցական ուսուցումը կամ մանկական պարտեզների կազմակերպումը տարածվում է նաև այլ երկրներում¹⁰¹։

Արևելահայ իրականության մեջ մանկապարտեզ առաջին անգամ կազմակերպվում է նոր նախիջևանում։ Դրա առաջին նախաձեռնողը, հավանաբար եղել է նոր նախիջևանի քաղաքագլուխ Հ. Խլճյանը։ Ռ. Պատկանյանը Պետերբուրգից առաքած իր ճամփորդական ուղեգրություններում (1878) խարագանելով նախիջևանում հանրօգուտ ձեռնարկումներն արգելակող տգետ մարդկանց գործունեությունն ավելացնում է. «...այդ նորա են, որոնք որ Խլճյանին արգելք եղան հասարակաց մանկական պարտեզ բանալուն...»¹⁰², Նշանակում է 1878 թ. առաջ քաղաքագլուխ Հ. Խլճյանը փորձել է նախադպրոցական երեխաների համար նախիջևանում բացել մանկապարտեզ, սակայն հաջողություն չի ունեցել։

Մանկապարտեզ կազմակերպելու պատիվը պատկանում է Պատկանյան ամուսիններին՝ Ռ. Պատկանյանին և իր կնոջը՝ Օլգա Ալիդի Մելիք-Զարմյանին։ Ռ. Պատկանյանը տարբեր առիթներով նշում էր մանկապարտեզի կարևորությունը բարեկիրթ մարդու հիմքերը դնելու գործում։ «Մանկական պարտեզ նոր նախիջևանի մեջ» հոդվածում, հանդիմանելով մայրերին՝ երեխաներին սխալ դաստիարակելու մեջ, գրում է. «Երեխային պետք է մաքուր օդ, անդուլ և կանոնավոր շարժմունք, մննդարար կերակուր (որքան աժան և անպաճույն, այնքան լավ), անդորր քուն, աստիճանաբար մտավոր զարգացումն, անսեթևեթ հագուստ և խոհեմ ու անդուլ խրատ և հովանավորություն մոր։ Ինչ որ դրանցից ավելի է, այն սպանիչ թույն է երեխայի համար»¹⁰³։

1878 թ. ստացվում է մանկապարտեզ բացելու թույլտվությունը։ Պատկանյան ամուսինների ջանքերով կարճ ժամանակում բացվում և երկու տարի, մինչև 1881 թ. գործում է մանկապարտեզը։

101 Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար, էջ 102։

102 Ռ. Պատկանյան, երկերի ժողովածու, հ. 5, էջ 17։

103 Նույն տեղում, էջ 212։

Ռ. Պատկանյանն այդ տարիներին գրում է մանկական հոգուն հասկանալի բանաստեղծությունների ու երգերի մի ամբողջ շարք: Դրանք են՝ «Բաղիկ-բաղիկ», Կարմիր թաթիկ», «Արի գարուն», «Արև, արև դուքս արի» «Կոռունկներ», իսկ ամենապօքիկների համար՝ «Ծափը», «Ճիվի ճիվը», «Կատուն», «Բաղիկը» և այլն¹⁰⁴: Այդ բանաստեղծությունների միջոցով մանուկները դյուրություն էին ստանում շրջապատը ճանաչելու և առաջին թոթովանքները կատարող իրենց կարողությամբ իմաստավորելու այն:

Հետագա տասնամյակներում ևս շարունակվեց նախադպրոցական տարիքի մանուկների դաստիարակության նկատմամբ եղած ուշադրությունը: Մանկական պարտիզների ձեռնտու լինելը ավելի ակնհայտ դարձավ: Այդ ուղղությամբ տարվող աշխատանքները կայուն հիմքերի վրա դնելու նպատակով 1904 թ. ստեղծվեց «Նախադպրոցական մանկանց դաստիարակության ընկերությունը»: Ընկերությունն ակտիվ գործունեություն ունեցավ և մինչև 1916 թ. ամեն տարի հրատարակում էր իր հաշվետվությունը¹⁰⁵:

Ուսաւորության տարածման, ուսումնական-կրթական գործի կաղմակերպման մեջ հաջողության հասնելը մեծապես կախված էր համապատասխան մանկավարժ կադրերից: Այդ իսկ պատճառով նոր, լուսավորյալ դպրոցի համար տարվող պայքարը զուգակցվում էր շնորհալի ուսուցիչներ պատրաստելու հետ:

XIX դարի առաջին կեսում, ժամանակի պահանջների համեմատ, մանկավարժական առաջադեմ ու բեղուն գործունեություն ծավալեցին Սերովը և Գարբիել Պատկանյանները: Նրանցից հետո նոր նախիշեանի դպրոցները չունեցան հմուտ, գիտելիքների բավարար պաշար ունեցող կամ բարձրագույն կրթությամբ մանկավարժներ: Այդ խնդրով, բնականաբար, հույսում էր գաղութի հասարակայնությանը, նրա գործիչներին:

Մ. Բալաբանյանը «Մշակ» թերթի էջերում (1873) բարձրացնում է այն հարցը, որ Ղրիմի և նոր նախիշեանի դպրոցները շունեն որակյալ ուսուցիչներ և գտնվում են անմիտիք վիճակում: Նա առաջարկում է դպրոցների միջոցներով կազմակերպել ուսուցիչներին արտասահմանում բարձրագույն կրթություն տալու գործը: Բարեգործական հաստատություններին խորհուրդ է տալիս լազարյան ճեմարանում, բարձրագույն դպրոցներում սաներ պահելու փոխարեն այդ գումարը ծախսել ուսուցիչներ պատրաստելու նպատակով: Նորնախիշեանցիներին կոչ է անում

¹⁰⁴ Մ. Սաղյան, Բ. Պատկանյան, էջ 303.

¹⁰⁵ ՀԿՊԱ, գ. 57, ց. 2, գ. 1863, թ. 1:

հետևել Սիմֆերոպոլի հայերի օրինակին, որոնք հատուկ ընկերություն էին հիմնել, որն իր միջոցներով դպրոցների համար ուսուցիչներ է պատրաստելու¹⁰⁶:

Այս բնագավառում արևելահայ իրականության մեջ բեկում է կատարվում 1870-ական թվականների վերջերին և 1880-ական թվականների սկզբներին: Մանկավարժական բնույթ ունեցող հանդեսները, հայնչանավոր մանկավարժները, որոշ պարբերականներ ակտիվորեն անդրադառնում են ուսուցիչներ պատրաստելու հարցերին: Բազմաթիվ եղանակներ են առաջարկվում, ծրագրեր, դասագրքեր կազմելու փորձեր կատարվում:

1882 թ. Թիֆլիսում բացվեց հայոց ուսուցչական ընդհանուր առաջին ժողովը: Դրան մասնակցում էին ժամանակի գրեթե բոլոր աշքի ընկերող մանկավարժները: Քանի որ տևած ժողովը քննարկեց բազմաթիվ ու բազմապիսի դպրոցական, մանկավարժական հարցեր: Այն բացառիկ երկույթ էր արևելահայ դպրոցի կյանքում: Ուսուցչական ընդհանուր ժողովն ուսումնակրթական գործի, մանկավարժության ասպարեզում կատարված առաջընթացի հանրագումարը, դրա առհավատչան էր¹⁰⁷:

Դոնի հայկական գաղութն իր վրա կրում էր արևելահայ դպրոցի և առհասարակ արևելահայ իրականության մեջ կատարվող տեղաշարժերի աղդեցությունը: Պատահական չէր, որ նոր նախիշեանում հենց 1880-ական թվականների սկզբին բացվեցին ժամանակի պահանջները բավարող մի քանի դպրոցներ:

Հայկական գաղութում լայն տարածում ունեցող «Հյուսիսափայլ» ամսագրի բարողած գաղափարները խոր հետք թողեցին նոր նախիշեանի դպրոցական կյանքի վրա: Միջնադարյան ավանդներով առաջնորդվող գաղութի կրթական գործը խարազանող, նոր սկզբունքներով դպրոց հիմնելու և առհասարակ հասարակական առաջընթացին ուղղված Մ. Նալբանդյանի և Ս. Նազարյանի ստեղծագործությունները ճանապարհ հարթեցին ու պարարտ հող ստեղծեցին նաև մանկավարժության ասպարեզի հետագա գործիչների համար:

Ս. Նազարյանը (1814—1879) կապված էր նոր նախիշեանի հետ: Լուսավորություն տարածելու, մանուկ սերնդին կրթելու ժամանակի համար առաջադեմ նրա հայացքները մեծապես նպաստել են արևելահայ նոր դպրոցի, այդ թվում և Դոնի հայության ուսումնական գործին:

Նոր նախիշեանի հայության ուսումնակրթական ասպարեզում մեծ էր նաև Ռ. Պատկանյանի (1830—1892) ավանդը: Հայրենի քաղաքում և

¹⁰⁶ «Մշակ», 1873, № 50:

¹⁰⁷ Վ. Եղիանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար, էջ 99—119:

Դոնի հայ զանգվածի շրջանում ծավալած անխոնց գործունեության ընթացքում նա կատարեց նաև նախկինում Պատկանյան գերդաստանին քնորոշ մանկավարժական բեղուն աշխատանք: Նա իր հիմնադրած արհեստավորական դպրոցի անփոփխ տեսուչն էր և հայոց լեզվի ու աշխարհագրության դասառում: Նկատելով, որ երեխաները դժվարանում, չեն կարողանում յուրացնել դասերը, նրանց համար ստեղծեց հատուկ դասագրքեր: Դրանք մատշելի էին մանուկներին և նպաստում էին մայրենի լեզվին արագ տիրապետելուն: «Եթե կուզնք, — հաճախ շեշտում էր Պատկանյանը, — որ հայը միշտ մնա հայ՝ պարտավոր ենք, նորա ձեռքեն հայերեն գիրքը անպակաս անելու: Գրականություն ունեցող ազգը երբեք չի կորչի աշխարհիս երեսեն»¹⁰⁸:

Նոր նախիջևանում տարբեր տարիներում ուսուցչի պատվավոր աշխատանք է կատարել հայագիտ-պատմաբան Ստ. Պալասանյանը (1837—1883): Շուրջ տասնմեկ տարի (մինչև 1918 թ.) մանկավարժական-գիտական գործունեություն է ծավալել ականավոր լեզվաբան Հր. Աճառյանը (1876—1953): Խոշոր է հատկապես նշանավոր բանասեր Ե. Շահազդի (1856—1951) վաստակը: Լազարյան ճեմարանն ավարտելուց անմիջապես հետո, 1880-ական թվականներին նա նոր նախիջևանում մանկավարժական աշխատանքի անցավ: Ավելի քան երեք ու կես տասնամյակ իրեն լիովին լինելու հերեխաների կրթությանը և Դոնի հայության պատմության ու մշակույթի ուսումնասիրմանը:

Շուրջ քսան տարի, մինչև մահը, 1903 թ. դպրոցում աշխատեց և հմուտ մանկավարժի անուն վաստակեց Ալ. Մյասնիկյանի սիրված ուսուցիչ Վ. Քիրլյանը: Նա ավարտել էր լազարյան ճեմարանը, սովորել Մոսկվայի համալսարանի լեզվագրական ֆակուլտետում: Համալսարանական ուսումն անավարտ թողնելով աշխատանքի էր անցել սկզբում՝ Մոզդոկի դպրոցներում և ապա՝ նոր նախիջևանում¹⁰⁹: Մանկավարժական երկարամյա ու բիղունավոր աշխատանք են կատարել Խ. Զարիֆյանը, Ս. Զաթալբաշյանը, Ե. Շապոշնիկյանը և շատ ու շատ ուրիշներ:

Հստ ամենայնի գիտակցելով ուսուցչի կարևոր գերը, Դոնի հայկական համայնքը լուրջ քայլեր էր կատարում դպրոցները բարձրորակ դասառում պատվելու ուղղությամբ:

1915 թ. քաղաքի վեց եկեղեցիների ծխականների ընդհանուր ժողովը, դպրոցների համար լավ մանկավարժներ պատրաստելու նպատակով, վճռում է Ռուսաստանի և արտասահմանի բարձրագույն հաստա-

տություններում սովորող շնորհալի ուսանողներին հատուկ թոշակ նշանակել: Միաժամանակ հարց է բարձրացվում ուսուցիչների ծերությունն ավահովելու համար միջոցներ հայթայթելու մասին¹¹⁰:

Ցավոք, համանման վերաբերմունք չէր նկատվում հայկական գյուղերում: Այնտեղ թե՛ դպրոցները և թե՛ ուսուցիչները գտնվում էին անբարենպաստ պայմաններում: Ոչ միայն XIX դ., այլև անգամ XX դ. առաջին տասնամյակում հաճախ էր ահազանգվում գյուղական դպրոցների ցածր մակարդակի, ուսուցչի անապահով վիճակի, նրա նկատմամբ հարգանքի բացակայության մասին: Կյուղացին եկեղեցական տոնների, զանազան ծիսակատարությունների առիթով ծախսեր էր կատարում; սակայն, դպրոցի, ուսուցչի համար՝ ամենենին¹¹¹: Հետագա տարիներին գյուղական դպրոցների և ուսուցիչների գրությունը որոշ շափով բարելավվեց, սակայն միշտ էլ ցածր մնաց քաղաքի դպրոցների մակարդակից:

Դպրոցներում ուսուցումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար, բանիմաց ուսուցչից զատ, անհրաժեշտ էր ունենալ համապատասխան գասագիրք: Առանց դրա գժիքի առեթե անհնար էր ցանկալի արդյունքների համար: Առանձ պատմական, թեմական դպրոցի մանկավարժական ժողովի օրինակով, նշեցինք, թե ինչպես դպրոցը հոգ էր տանում հրապարակի վրա եղած լավագույն դասագրքերը օգտագործելու ուղղությամբ: Արեւլահայ գաղութներում, մասնավորապես նոր նախիջևանում, հաճախ բանավեճ էր սկսվում մայրենի լեզվուն տեղական բարբառով, թե՞ երեխաներին մեծ մասամբ անհասկանալի գրական լեզվով դասավանդելու հարցի շուրջ¹¹²:

Ինչպես և պիտք էր սպասել, հաղթում էր բնակչությանը հետզհետե ավելի ու ավելի հասկանալի դրական լեզվով ավանդելու տեսակետը: Դպրոցը լավ դասագրքով ապահովելու խնդրին այնքան կարեոր նշանակություն էր տրվում, որ դրա համար նույնիսկ հատուկ մրցույթներ էին կազմակերպում:

Նախիջևանի բարեգործական ընկերությունը 1912 թ. 500 ո. մրցանակ էր սահմանել մեկդասյա և երկդասյա տարրական դպրոցների դասագրքի համար: Մրցույթի պայմաններն էին՝ դասադիրքը բաղկացած էր լինելու հինգ մասից, գրված գրական լեզվով, առանց գավառաբարբառների, տպագրվելու էր 1200 տպաքանակով: Պահանջվում էր նաև, որպեսզի դասագրքի նյութը բազմազան լինի և շարադրված այնպիսի ձե-

108 Ռ. Պատկանյան, Երկրի ժողովածու, հ. 5, էջ 350:

109 «Մշակ», 1903, № 4, 1904, № 26:

110 ՀԿՊԱ, գ. 57, գ. 2, գ. 1077, թ. 1:

111 «Նոր կյանք», 1906, № 9, «Մեր ձախը», 1908, № 100, 123, 127:

112 «Մշակ», 1902, № 115, 143, 172:

վով, որ բավարարի թե՛ քաղաքի և թե՛ գյուղերի դպրոցների կարիքները¹¹³:

Այսպիսով, Դռնի հայությանը հաջողվեց իրականացնել մատաղ սերնդի կրթությունն ապահովող ուսումնական համապատասխան օջախներ ստեղծելու վաղեմի բաղձանքը: Հաջորդաբար բացվեցին արհետավորական, թեմական և Գոգոյան դպրոցները: Դրանք նշանակալիք դեր կատարեցին գաղութի և, կարելի է ասել, ինչ որ շափով նաև հարավային Ռուսաստանի հայկական այլ բնակավայրերի պատանիների կրթության ասպարեզում:

Նոր նախիջևանի ուսումնական գործի 1880-ական թվականների սկզբի այդ վերելքը, ցավոք, հետագայում շշարունակվեց: Ավելին, հաջորդ տարիներին հնարավորություն չէր ստեղծվում նույնիսկ եղած դրաբրոցները ժամանակի պահանջների ոգով վերակառուցելու:

Դա բացատրվում է նրանով, որ 1880—1890-ական թվականներին ցարիզմն անցավ, այսպես կոչված, հակառեֆորմների ուսակցունք քաղաքականության՝ ընդհանրապես և հակահայկական քաղաքականության՝ մասնավորապես: 1880-ական թվականների կեսերից կառավարությունը սկսեց հայկական դպրոցների իրավունքները սահմանափակելու քաղաքականություն վարել: 1885 թ. փետրվարին կայսրը հաստատեց Սովորական հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին լուսավորության և ներքին գործերի մինիստրությունների մշակած կանոնները: Դրանով ծխական դպրոցների տնօրինությունը եկեղեցուց վերցվում և տրվում էր լուսավորության մինիստրության ուսումնական վարչությանը: Հոգենոր իշխանությանը թողնվում էր միայն կրոնի ուսուցմանը հետեւելը:

Այդ օրենքով ցարական իշխանությունները փաստորեն իրավունք էին ստանում միշտմտելու հայկական դպրոցների գործերին: Էջմիածնի սինոդի դիմադրության, կաթողիկոսների (Մակար և Խրիմյան) միջնորդությունների շնորհիվ ձգձգվում և որոշ շափով մեղմացվում է դպրոցների մասին որոշման կատարումը:

Հաջորդ տասնամյակում, սակայն, իրավիճակն ավելի է վատթարանում: 1897 թ. հոնիսի 2-ին Նիկոլայ II կայսեր հրամանով փակվում են ծխական դպրոցները¹¹⁴:

Յարական բյուրոկրատիայի սկսած հալածանքները միայն տարրական դպրոցներով շահմանափակվեցին: Փորձեր եղան միջնակարգ թե-

մական դպրոցներն ենթարկել պետական իշխանությունների անմիջական պարագաները: Այնքանով, որքանով թեմական դպրոցները կոչված էին հոգենորականներ պատրաստել, պաշտոնական մարմիններն այդ վաճամատելու հարմար առիթը թեմական դպրոցների նոր կանոնադրություն մշակելու հարցն էր:

Այդ կարգի դպրոցներից միայն նոր նախիջևանի թեմականն ուներ կայսրի կողմից հաստատված կանոնադրություն: Մյուս դպրոցները, շունենալով կառավարության կողմից հավանության արժանացած կանոններ, ընդօրինակել ու առաջնորդվում էին նոր նախիջևանի թեմական դպրոցի: Կանոնադրությամբ: Կաթողիկոս Մ. Խրիմյանն ավելորդ էր համարում: Նոր կանոնների մշակումը, քանի որ նախիջևանի կանոնադրությունը հաստատված էր բարձրագույն իշխանության կողմից:

Կառավարական ատյաններում առաջարկություն էր արվում վերացնել հայկական եկեղեցու օրենսդրությունը՝ «Պոլտենիյեն» և այն վերակազմել ժամանակի պահանջներին համապատասխան: Նախատեսվում էր կրծատել թեմականների թիվը, աշակերտների սահմանափակ քանակը պահել միայն Թիֆլիսի, Երևանի և նոր նախիջևանի դպրոցները: Ի վերջո, ներքին գործերի մինիստր Գորեմկինը 1899 թ. թեմական դրաբրոցների հարցը հետաձգում է մինչև հայկական եկեղեցիների և վանքերի գույքի բռնագրավումը¹¹⁵:

1903 թ. եկեղեցական գույքի բռնագրավումը սկսվեց իրականացնել: Սակայն 1905 թ. բուժժուագեմոկրատական հեղափոխությունը հնարավորություն շտվեց ցարիզմին իրագործելու ու միայն իր այդ մտադրությունը, այլև հարկադրեց վերացնել հայկական դպրոցների մասին եղած մյուս ապօրինի որոշումները:

1905 թ. նոր նախիջևանում վերաբացվեցին տղաների Ս. Համբարձման, Ս. Թեոդորոսի և Սանդիմայան օրիորդաց ծխական դպրոցները¹¹⁶: Սակայն, եթե Անդրկովկասի ծխական դպրոցներում վերականգնվեց նախկին իրավիճակը, դրանք կրկին անցան հոգենոր իշխանության հովանավորության տակ, ապա ուսուահայ գաղթավայրերի նկատմամբ այլ քաղաքականություն տարվեց: Նոր նախիջևանի ու Բնարարիայի և Աստրախանի թեմերի ծխական դպրոցները մնացին լուսավորության մինիստրության ենթակայության տակ: Այդ դպրոցները նույնացեցին պետական տարրական դպրոցների հետ միայն այն տարբերությամբ, որ կրոնը և հայոց լեզում ավանդվում էր մայրենի լեզվով¹¹⁷:

113 «Հովիվ», 1912, № 15, էջ 237:

114 Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար, էջ 128—216.

115 Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար, էջ 210—212:

116 ԿՄեր ձայնը, 1908, № 18:

117 ՀԿՊԱ, Տ. 57, գ. 2, թ. 1046, թ. 26:

Թեմական դպրոցների նկատմամբ հատուկ վերաբերմունք էր մշակվել: Աստրախանում թեմական ուսումնարանը վերաբացելու առաջարկները պետական իշխանությունները թողեցին անհետևանք, իսկ նախիշեանի թեմական դպրոցի իրավունքները սահմանափակելու հետևողական գիծ էր տարվում:

Նոր նախիշեանի թեմական դպրոց ավարտողը, ինչպես նշեցինք, չէր օգտվում պետական միջնակարգ դպրոցների շրջանավարտների իրավասությունից, թեպետ ուսուցումը կատարվում էր նույն ծրագրով: Առանց քննության բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու իրավունքից շօգտվելու հետևանքով, շատերն իրենց երեխաներին թեմականի փոխարեն տալիս էին զիմնազիա: Թեմականին աշակերտներ մատակարարող ծխական դպրոցները եկեղեցու տնօրինությունից հանվելուց հետո խիստ թուլացան, որովհետև ծնողները գերադասում էին իրենց զավակներին քաղաքային ուսումնարաններ տալ:

Այդ ամենի հետևանքով թեմական դպրոց ընդունվող աշակերտների քանակը հետզհետե պակասում էր: Թեմականին միջնակարգ դպրոցի իրավունքները վերապահելու մասին հետևողականորեն կատարված հիմնավոր զիմումները այդպես էլ ընթացք չստացան¹¹⁸:

Պետական իշխանությունների կողմից Դոնի հայկական գաղութի ուսումնակրթական գործին ընդառաջ շգնալը, անշուշտ, վնասում, դժվարություններ էր հարուցում, սակայն ներքին զիմադրության շնորհիվ էական նշանակություն շունեցավ և շկարողացավ խոշնդոտել ընդհանուր առաջնթացը:

Քաղաքի պետական ու մասնավոր բոլոր դպրոցներում առարկաների մի զգալի մասը, իսկ կրոնն ու հայոց լեզուն՝ պարտադիր, դասավանդվում էին հայերեն: Թեմական դպրոցում ուսուցումը կազմակերպված էր այնպիսի մակարդակով, որ շրջանավարտները կարողանում էին քննություններ հանձնել և ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն:

Նոր նախիշեանի գաղութի դպրոցները նյութական միջոցներով ավելի ապահով վիճակում էին, քան կայսրության ու անգամ Անդրկովկասի հայկական մյուս կրթական օջախները: Այստեղ դպրոցների նյութական կարիքները, եկեղեցուց զատ և դրանից ավելի մեծ շափերով, հոգում էին քաղաքային վարչությունը և բավարար միջոցներ ունեցող բարեգործական ընկերությունները: Անգամ ծխական դպրոցները բավա-



Վ. Ուրսովինյան (Լուկոչին)

¹¹⁸ Նույն տեղում, գ. 887, թ. 1—4, գ. 1077, թ. 1, «Արձագանք», 1893, № 121, և այլն:



Վ. Վաշյան

կանաչափ նպաստ էին ստանում քաղաքի միջոցներից¹¹⁹: Ներգաղոթացին հասարակական այդ հաստատությունները և քաղաքային խորհրդարանը նկատելի շափով ազդում էին կրթական գործի վրա և դրան տալիս ցանկալի ուղղություն:

XIX դարի վերջում նոր նախիջևանի և Հայկական գյուղերի դպրոցներում սովորում էր շուրջ երկու հազար աշակերտ¹²⁰: Եթե նկատի առնենք, որ մի քանի հարյուր պատանիներ ու երիտասարդներ ուսանում էին Ռուսաստանի և արտասահմանի համալսարաններում ու ինստիտուտներում, Ռուսական Տագանրոդի և այլ քաղաքների դպրոցներում, ապա կարելի է հետևեցնել, որ մատադ սերնդի կրթության գործը, ընդհանուր առմամբ, բարվոք վիճակում էր:

Նոր նախիջևանում կրթության ու լուսավորության ասպարեզում այնպիսի առաջընթաց էր տեղի ունեցել, որ հարց էր բարձրացվում կաղմակերպել համապատասխան դասընթացներ:

Մ. Բերբերյանը մատնանշելով Ռուսաստանի տարբեր քաղաքներում համալսարանների «կրտսեր եղբայրների», մասնավոր կամ ժողովրդական համալսարան բացելու հանգամանքը, առաջարկում էր հետևել այդ դրական օրինակին: Նա ժամանակը հասունացած էր համարում նոր նախիջևանում բացելու նման համալսարան, այսուղեա կազմակերպել դասախուություններ XIX դ. Հայ, ուսւ, և եվրոպական գրականություն և պատմություն, քաղաքատնտեսություն, փիլիսոփայություն, բնագիտություն, գյուղատնտեսություն, հաշվապահություն և այլ առարկաներից: Դրա համար նա առաջարկում էր Հրավիրել բանիմաց դասախուներ, այդ թվում ուսուներից և օտարազգիներից (Ն. Մառ, ի. Վեսելովսկի և ուրիշներ), ինչպես նաև տեղի որոշ լավագույն ուսուցիչների մասնակից դարձնել դասախուություններ կարգալուն¹²¹:

Այսպիսով նոր նախիջևանում, կրթական գործը շնայած եղած խոչընդոտներին այնուամենայնիվ, առաջադիմում էր: Մասնավորապես 1880-ական թվականների սկզբներից որոշակի բեկում կատարվեց այս ասպարեզում: Տեղում բացված նոր դպրոցների ընձեռած պայմանները դուգակցվելով նովոոսիայի խոշոր քաղաքների, մասնավորապես ուսուական մայրաքաղաքների, ինչպես նաև արտասահմանի ուսումնական համատառություններում նորնախիջևանցիների ուսանելու համար ստեղծված հնարավորությունների հետ, կարելի է ասել, ապահովվում էր Դոնի

¹¹⁹ ՀԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1046, թ. 36:

¹²⁰ Խոյն տեղում, ֆ. 54, ց. 2404, թ. 2—8:

¹²¹ «Նոր կյանք», 1906, № 18:

Հայկական գաղութի, ժամանակի պահանջներին համապատասխան ուսումնակրթական գործի անհրաժեշտ ժակարդակը:

2. ՄԱՄՈՒԼ

Դոնի հայկական գաղութի զարգացումը, մանավանդ հասարակական, մտավոր կյանքի հասունությունը պարբերական մամուլ ունենալու հող էր նախապատրաստել: Այդ մասին է վկայում այն փաստը, որ 1850-ական թվականների վերջերին և 60-ական թվականների սկզբին «Հյուսիսափայլ» ամսագիրը, բազմաթիվ ընթերցողներ ուներ նոր նախիշնանում:

Մամուլի սեփական օրգաններ ունենալու անհրաժեշտության մասին է խոսում նաև այն իրողությունը, որ հետագա տասնամյակներում հրատարակվող Անդրկովկասի հայկական, և Ռուսովում ու հարավային Ռուսաստանի այլ քաղաքներում լույս տեսնող ուսուական պարբերականներին ակտիվորեն թղթակցում էին նորնախիչնանցիները: Հայկական՝ նորնախիչնախիչնանցի թղթակիցները շնչափում էին Դոնի հայկական գաղութի առևտրատնեսական և հատկապես հասարակական ու մշակութային կյանքին վերաբերող խնդիրներ:

Նոր նախիշնանում պարբերական հիմնելու առաջին նախաձեռնողներից էր Ռ. Պատկանյանը:

1863 թ. Ռ. Պատկանյանը դիմում է Պետերբուրգի գրաքնչական կոմիտե և խնդրում թույլատրել «Հյուսիս» անունով հայերեն թերթ հրատարակել¹²²: Գրաքնչական կոմիտեն իր հերթին հարցում է անում ներքին գործերի մինիստրությանը: Մինիստրությունը, քաղաքական նպատակներից ելնելով, բարեհաճ վերաբերմունք է ցուցաբերում, առաջի գրաքնչական կարծիք և գրաքնչական կոմիտեին հայտնում դրա շարժառութեանը: Պաշտոնական շրջաններին անհանգստացնում էր այն հանգամանքը, որ թուրքիայում հայկական ավելի շատ պարբերականներ՝ կային, քան Ռուսաստանում: Մինիստրությունը նպատակահարմար էր՝ գտնում ընդլայնել ուսուահայ հրատարակությունների քանակը, որպեսզի դրանց միջոցով ուժեղանա Ռուսաստանի ազդեցությունն արևմտահայության վրա¹²³:

¹²² ЦГИА СССР, ф. 777, оп. 2, д. 43, л. 1.

¹²³ ЦГИА СССР, ф. 821, оп. 7, д. 71, л. 1—2.

Այսուհետեւ, մինիստրությունն արգելում է թերթում ունենալ քաղաքական բաժին, թեև հրատարակիլը նշել էր, որ այդ բաժնում լուսաբանվելու են միայն պաշտոնական լուրեր, որոնք հիմնականում առնշվում են արևմտահայությանը¹²⁴:

1863 թ. Ռուսիմբերին Պետերբուրգում հրատարակվում է «Հյուսիս» շաբաթաթերթը: Թերթի առաջին համարում հոդվածներ են զետեղվում Անդրկանյանի ապստամբության, Հ. Ալամդարյանի մասին, հրատարակվում է Գ. Պատկանյանի «Վարդան Մամիկոնյան» պոեմը և այլ նյութեր: Հազորդ համարներում քննադատվում է փոքր ժողովուրդների նկատմամբ թուրքական կառավարության վարած քաղաքականությունը, հանգամանորեն լուսաբանվում են Զեյթունի 1862 թ. ապստամբությունը, Ղարաբաղի մելիքությունների պատմությունը, Վ. Լանգուայի ճանապարհորդությունը և այլն:

«Հյուսիս» շաբաթաթերթում մեծ մասամբ տպագրվում էին Գ. Պատկանյանի երկարաշունչ ստեղծագործությունները, որոնք առանձին հետաքրքրություն չեն առաջացնում: Անգամ Ռ. Պատկանյանը շատ սակավ էր հանդես գալիս իր իսկ հիմնած պարբերականում: Թերթի տրնօրինությունն ու հրատարակության կաղմակերպումը փաստորեն ծանրացել էին բանաստեղծի հոր՝ Գ. Պատկանյանի վրա:

Նախաթաթերթն առանձնապես հաջողություն չունեցավ: Քաղաքական բաժին շունենալու պատճառով թերթը կտրված էր ժամանակակից կյանքի հետաքրքրություն առաջացնող իրադարձություններից: Թերթի լիարժեք գործունեությունը կաշկանդվում էր 1860-ական թվականներին սկըսված անբարենպաստ մթնոլորտի պատճառով: Աստիճանաբար թերթին դադարում են թղթակցել և նրանից հեռանում են Ք. Պատկանյանը, Կ. Քանայանը և ուրիշներ: Ընդամենը 31 համար լույս տեսնելուց հետո «Հյուսիս» շաբաթաթերթը հաջորդ տարում՝ 1864 թ. փակվում է:

Երկրի ընդհանուր զարգացումը, հասարակական-քաղաքական երեւլուցիների և մշակութի նկատմամբ աշխույժ հետաքրքրությունն ավելի ու ավելի էր հրատապ դարձնում հայկական գաղութում պարբերական ունենալու անհրաժեշտությունը:

Ռ. Պատկանյանը 1876 թ. և հաջորդ տարիներին ակտիվորեն գրում էր մամուլի սեփական օրգաններ ունենալու մասին: Դիմելով համարակացիներին և մատնանշելով բնակչության գրագիտության աստիճանը, նա շեշտում էր ժողովրդին հասկանալի լեզվով պարբերականի անհրաժեշտությունը: «Ես ձեզ կառաջարկեմ քաղաքիս մեջ ունենալ մի շաբաթական լրագիր այդ լեզվով գրած, որ մեր ժողովուրդը կարդար և

¹²⁴ Կայսեր տեղում, ֆ. 777, գ. 2, գ. 43, թ. 15—16:

նորա միտքը բացվեր զանազան օգտավետ գիտություններով։ Այդպիսի լրագիրը եթե կյանք ունեցավ քաղաքիս մեջ գոնե 5 տարի, կարող եմ ձեզ հավատացնել, որ այդ 5 տարին, լուսավորության կողմանե կհավասարվի ուրիշ հիսուն տարվա...»։ Եվ ապա «Նախիչևանը 100 տարին ավելի է, որ արդեն կարոտ է և մինչև այսօրս յուր ցոծի մեջ տեսած չի տեղական լրագիր»¹²⁵։

Ուշագրավ է, որ բանաստեղծը թերթի դիտում էր որպես ոչ միայն ժողովրդին լուսավորելու, քաղաքակրթություն տարածելու, այլ նաև՝ սոցիալական պայքարի գենք։ Դիմելով երիտասարդությանը, Ռ. Պատկանյանը գրում է. «Նախ և առաջ մենք միտքերիս մեջ հաստատ պիտի որոշենք, որ հայի թշնամիներուն (այսինքն մեր տեղի քանի մի աղաներուն) շատ լավ հայտնի է լրագրի մի օր ունենալու ազգեցությունը ժողովրդի վերա։ այդ պատճառով նոցա հոգին շատ լավ կվկայե, որ, անշուշտ պետք էր շիծած՝ արմատախիլ անել նորան, որ նոցա ապօրինի ստացած մեծությանը մենք ական շիփորենք (ՊՈՃԿՈՊԱՏԵ)»¹²⁶։

1878 թ. Հովհաննին, լինելով Պետրոգրագում, նա դիմում է մամուլի գլխավոր վարչություն և խնդրում թույլատրել «Նոր Նախիչևան» անունով թերթի հրատարակել։ Թերթի խմբագիրն ու հրատարակիչը լինելու էր ինքը։ Թերթում նախատեսվում էր ունենալ քաղաքական, գրական, պատմական լուրերի, քննադատության, ֆելիքտոնի, նահանգային խրոնիկայի, հայտարարությունների բաժիններ»¹²⁷։

Մայրաքաղաքում Պատկանյանին հուսադրում են այնպես, որ այնտեղից գրած նամակներում նա ոգևորված՝ հայրենակիցներին ողջունում էր լրագիր ունենալու առթիվ և խոսում թերթի խնդիրների, լեզվի մասին¹²⁸։

Մամուլի գլխավոր վարչությունից Ռ. Պատկանյանի դիմումն ուղարկվում է Եկատերինոսլավ, նահանգապետի կարծիքը ստանալու։ Հետագիմական իր հայացքներով ճանաշված ի. Դուրնովոն հայտնում է, որ Ռ. Պատկանյանին շպիտք է թույլատրել հայերեն նման թերթ հրատարակել։ Նահանգապետն իր բացասական վերաբերմունքը պատճառաբանում էր նրանով, որ Նախիչևանում և Ռուսովում շկային այնպիսի պաշտոնական դեմքեր, որոնք տիրապետեին հայերենին և հնարավորություն ունենային գրաքննության ենթարկել թերթը։ Այդ նույն պատճառա-

բանությամբ ներքին գործերի մինիստրությունն արգելում է թերթի հրատարակումը¹²⁹։

Բանաստեղծի և նրա համախոհների բազում դիմումները մամուլի գլխավոր վարչությանը, գրաքննչական ատյանին, ինչպես նաև Կ. Եղիանին, Ք. Պատկանյանին՝ գործին միջամտելու համար, ապարդյուն են անցնում։ Ի վերջո, Ք. Պատկանյանը հասկացնում է, որ լրագրի մերժման պատճառը ոչ թե թերթի ծրագիրն է կամ իրենց թույլ միջնորդությունները, այլ այն բնութագիրը, որ տեղական իշխանությունները տվել են Ռ. Պատկանյանին¹³⁰։

Բանաստեղծը չի հաշուվում թերթի հրատարակությունը ձախողվելու մտքի հետ։ Դիմում է ազգեցիկ այլ անձնավորությունների, ցանկանում ստանալ կաթողիկոսի միջնորդությունը, սակայն հաջողություն չի ունենում¹³¹։ Խնդիրն այն էր, որ 1877—1878 թթ. ուսու-թուրքական պատերազմից հետո սկսված հայրենասահրական շարժումների շրջանում, որոնց ոգեշնչողներից էր Ռ. Պատկանյանը, նա չէր վայելում քաղաքական այնպիսի վստահություն, որ թույլատրվեր հայերեն թերթ հրատարակել։ 1880 թ. Ռ. Պ. Պատկանյանը կրկին բարձրացնում է թերթ հիմնելու հարցը, սակայն նույնպես ապարդյուն։

Մինչև XIX դ. վերջը և XX դարի սկիզբը բազմաթիվ դիմումներ եղան պետական իրավասու ատյաններին՝ նախիչևանում տարբեր բնույթի թերթեր հրատարակելու վերաբերյալ։

Բերենք մի օրինակ։ Նախկին ուսուցիչ Հ. Բոգդանյանը դիմում է մամուլի գործերի գլխավոր վարչությանը «Խոսք» անունով լրագիր հրատարակելու իրավունք ստանալու համար։ Առաջարկվում է նախատեսվող լրագիրն անվանել «Զրույց», որն ընդունվում է, սակայն այդպես էլ թերթ հրատարակելու հարավորություն չի ստեղծվում¹³²։ Բոլոր այդ փորձերը հանդիպում էին պետական պաշտոնական մարմինների բացասական վերաբերմունքին և մերժում ստանում։

Դա ցարական իշխանության հայկական գաղթավայրերի և մանավանդ նոր նախիչևանի նկատմամբ ունեցած դիրքորոշման անմիջական արտահայտություններից էր։

1861 թ. ճորտատիրական իրավունքի վերացումից հետո կատարված մի շարք վերափոխումներով ուսուական պետությունը երկրում մըտցնում էր վարչատնտեսական, իրավական, ժողովրդական կրթության

125 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 412, 413։

126 Նույն տեղում, էջ 408։

127 ԱԳԻԱ ՀՀՀ, ֆ. 776, օպ. 11, ձ. 30, լ. 1.

128 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 17—22։

129 ԱԳԻԱ ՀՀՀ, ֆ. 776, օպ. 11, ձ. 30, լ. 5—6.

130 Օ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ռ. Պատկանյանի ֆոնդ, հ. 1045։

131 Մ. Սաղյան, նշվ. աշխ., էջ 301։

132 «Խոսք», 1903, մ. 29։

միօրինակ կառավարման եղանակ։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման միտումներով թելադրված այդ ուժորմների իրականացմանը թվում էր, թե խոշնոտում էին կայսրության տարածում, հատկապես հարավային Ռուսաստանում կղղիացած հոմական, հայկական, գերմանական, լեհական, շվեդական և այլ գաղթօջախները։ Այդ պատճառով էլ, ինչպես իր տեղում նշեցինք, ուժորմների կիրառման ժամանակ վերացվեցին գաղութների կամ համայնքների շնորհագրեր։

Արտոնությունները վերացնելուց հետո էլ այդ գաղթավայրերը, արմատացած ավանդույթների ուժով, բարեգործական և հասարակական այլ հաստատությունների շնորհիվ, շարունակում էին իրենց գոյությունը։ Ավելին, դրանցից ստվար բնակչություն ունեցող կենսունակ գաղթօջախները կապիտալիզմի հարածուն զարգացման փուլում նույնիսկ վերելք էին ապրում։

Ռուսահայ գաղթավայրերի մեջ նշանակալից էր նոր նախիշևանի գերը։

Գտնվելով Անդրկովկասը կենտրոնական Ռուսաստանի հետ կապող ուղիների հանգույցում, նոր նախիշևանը սնվում, լիցքավորվում էր Հայաստանից և, իր հերթին արգասավորում ուսւահայ մյուս գաղութների կյանքը։ Բնապատմական պայմանների բերումով Դոնի հայկական գաղութն ինչ-որ չափով ուսւահայ համայնքների կենտրոն, և դրանց ազգային դեմքը պահպանելու հարցում՝ առագաստ դառնալու միտումներ ուներ։

Ահա թե ինչու ցարական իշխանությունները խոշնոտում էին նոր նախիշևանում ազգային վերելքին ընդառաջող ամեն մի ձեռնարկում։ Դրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ նոր նախիշևանի և Բնարարիայի թեմի կենտրոնը Քիշինեւց նոր նախիշևան շտեղափոխվեց։ Բոլոր հանգամանքներն ու պարագաները խոսում էին նախիշևանը թեմի կենտրոն դարձնելու օգտին։ Անտեսելով այդ, ինչպես նաև բազմաթիվ հիմնավոր դիմումներ, այդ թվում և Հայոց կաթողիկոսի միջնորդությունը, կառավարությունը չգնաց այդ քայլին։

Այդ նույն նկատառումներով, Անդրկովկասի հայաշատ կենտրոնների համեմատ, նոր նախիշևանում թեմական դպրոցն ավելի քան շորստանամյակ ուշ հիմնվեց, իսկ Աստրախանում շիուլատրվեց առաստարակ թեմական դպրոց բացել։

Ցարական պաշտոնյանները լավ էին հասկանում, թե ազգային մամուլը որպիսի դեր կարող է կատարել ցաք ու ցրիվ հայ համայնքների ու մայր հայրենիքի միջև կապերն աշխուժացնելու գործում և առնաստարակ դրանց ազգային-մշակութային կյանքում։ Դրանով էր թելադրված

նախիշևանում հայկական պարբերականներ հիմնելու հարցում իշխանության բռնած բացասական դիրքը։

Մայրենի լեղվով թերթ հրատարակելու հնարավորությունից զըրկված լինելով, գաղութի մտավորականներն իրենց հայացքն ուղում էին նոստով։ Նրանք սկսեցին խմբագրել ու հրատարակել «Պրիագովսկի կրայ», «Դոնսկայա ուշչ», «Դոնսկայա պշելա» և մամուլի այլ օրգաններ։

Միայն 1905—1907 թթ. Ռուսաստանյան առաջին բուրժուազիկ կրատական հեղափոխության վերելքի հուժկու ալիքը ոչնչացրեց ցարական բյուրոկրատիայի հարուցած այդ արգելքները։ Հեղափոխության շնորհիվ ստեղծված քաղաքական բարենպատ պայմաններում նոր նախիշևանում հիմնվեցին մամուլի տեղական օրգաններ։ Մեկը մյուսի ետևից սկսեցին հրատարակվել «նոր կյանք», «Մեր ձայնը», «Լուս», «Գրիշ», «Գաղութ» և այլ պարբերականներ։

Հեղափոխական շարժումների ծավալման հենց առաջին տարում՝ 1905 թ. մամուլի տեղական օրգան հիմնելու առաջին հաջող փորձը կատարեց Վ. Սրապիոնյանը։ Նրա խմբագրությամբ հրատարակվեց «նոր խոսք» ամսագիրը։ Այդ ամսագիրը սոցիալ-քաղաքական ուղղվածություն ուներ։ Այն տպագրվում էր հեկտոգրաֆով, ընթերցողների լայն շրջանակ շուներ և առանձնապես տարածում չգտավ։ Չորս համար լուս տեսնելուց հետո դադարեց «նոր խոսք» ամսագրի հրատարակությունը։

Հեղափոխության իսկական ծնունդը «նոր կյանք» շաբաթաթերթն էր։ Մի խումբ երիտասարդներ (Հ. Ղարագյուղյան, Հ. Տեր-Մանվելյան, Գ. Բեղելյան, Օ. Անոփյան, Հ. Մահմետյան, Ս. Մյասնիկյան) ոգեշնչված հեղափոխության առաջ բերած ազատաշոնչ գաղափարներով, վճռում են «նոր կյանք» խորագրով թերթ հրատարակել¹³³։

«Պրիագովսկի կրայ» թերթն իր ընթերցողներին ազդարարում էր նախիշևանում հուլիսի 2-ին հայերեն «նոր կյանք» շաբաթաթերթ հրատարակվելու մասին։ Թերթի առաջին համարի (1906 թ. հուլիսի 2-ի) լուս տեսնելու առթիվ երկրամասում լայն ճանաշում գտած ուսւական այդ պարբերականը հատուկ հոդվածով ողջունեց «նոր կյանքի» ծնունդը¹³⁴։

Ուսանող Գ. Անոփյանի խմբագրությամբ (հրատարակիչ՝ Գ. Բեղելյան, խմբագիրներ էին նաև Ն. Ղարագյուղյանը, Հ. Տեր-Մանվելյանը), լուս աշխարհ եկած պարբերականը շեշտված դեմոկրատական ուղղություն ունեցող գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթ

133 Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ս. Մյասնիկյանի ֆոնդ, վ. 5.

134 «Պրիազովսկի քրայ», 1906, № 162, 176.

Էր: Այն նպատակ ուներ անդրադառնալ Ռուսաստանի և արտասահմանի հույժ կարեւը իրադարձություններին, տեղական անցքերին, գրական, գեղարվեստական և մշակույթի հարցերին:

Այսուհետեւ, թերթն իր հիմնական խնդիրն էր համարում ուսահայ զանգվածների կյանքի լուսաբանումը, Մայր Հայրենիքի հետ դրանց ունեցած հարարերությունների վերհանումը: Իր կոչմանը հավատարիմ, թերթը հենց առաջին համարում հաղորդում է զետեղում 1903 թ. հունիսի 12-ի օրենքը վերացնելու, հայկական եկեղեցու իրավունքները վերականգնելու, պետականացված գույքը ետ վերադարձնելու մասին: Թերթը նույն համարում անդրադառնում է Անդրկովկասում սկսված հայադրեցանական ընդհարումներին և դրանք համարում ցարական պաշտոնյանների հողմից հրահրված դատապարտելի ու ցավալի մի իրողություն:

Հեղափոխության ազդեցության տակ թերթն իր էջերում մեծ տեղ է հատկացնում սոցիալ-քաղաքական թիմատիկային:

«Նոր կյանք» շաբաթաթերթը հաջորդ տարում՝ 1907 թ. դադարեց գոյաթյուն ունենալ:

Ժամանակագրական առումով «Նոր կյանքին» հաջորդում և նրա գործունեությունը շարունակում է 1907 թ. վերջերին հիմնված «Մեր ձայնը» օրաթերթը: Թերթի խմբագիր-հրատարակիչն էր Հ. Մալխասյանը: Մամուկի այս օրգանը, որի խորագիրն առաջարկվում էր փոխարինել «Նոր նախիջևանի ձայն»-ով, ուներ «Հայոց կյանք», «Ռուսաց կյանք», «Օտար կյանք» բաժիններ: Հայաշատ վայրերում թերթն ուներ իր թղթակիցները, որոնց շնորհիվ կարողանում էր տպագրել բազմազան ու թարմ նյութեր:

«Մեր ձայնը», նախորդի օրինակով, իր հիմնական խնդիրն էր համարում գաղութահայ կյանքի լուսաբանումը: «Բուն Հայրենիքից դարերով անշատված ժողովուրդը, — գրում էր խմբագրությունը թերթի խընդիրների մասին, — որ ժամանակի ընթացքում օտար կոլտուրայի աղղեցության տակ և տնտեսական դրության ճնշման շնորհիվ հետզհետեւ մոռացության է տվել իր լեզուն, ինքնագիտակցությունն ու այդպիսով խորթանում է մայր երկրից, մեծ կարիք է զգում որ առաջ գար մի օրգան զբաղվելու նրանով, չթողնելու հայ լեզվի ոչնչացումը, կապելու գաղթական ժողովրդին մտավորական կերպով իր հայրենիքի հետ»¹³⁵:

Հիրավի, թերթը պարբերաբար անդրադառնում էր ուսահայ գաղթօշախների, ինչպիս նաև արտասահմանյան հայ զանգվածների վերաբերյալ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերին: Դրա հետ

մեկտեղ «Մեր Ձայնը» լայն ընդգրկումով արձարծում էր ուսահայ գովուրդների պատմության ու մշակույթի հասարակական հետաքրքրություն ներկայացնող էական շատ պրոբլեմներ:

Թերթն իր տեսադաշտում էր պահում և ընթերցողներին իրազեկ դարձնում արևմտահայության իրավաբաղաբական դրությանը: «Թեոլինի վեհաժողովը» հոդվածաշարում վեր են հանգում եվրոպական խոշոր տերությունների դիվանագիտական խաղերը հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմական ճակատագրում¹³⁶: Թերթում ճիշտ դիրքերից բացահայտվում են երիտրուրերի հեղաշրջման էությունը, նրանց սահմանադրության և առաջադիմական լողունքների սնամեջ լինելը և դատապարտվում հայկական այն շրջանները, որոնք համարում ցարական պաշտոնյանների հողմից հրահրված դատապարտելի ու ցավալի մի իրողություն:

Թերթն այնպիսի համարում էր ձեռք բերել, որ նրան թղթակցում էին նշանավոր շատ հայ գործիչներ: Ա. Շիրվանզադեն հանդես է գալիս Մատթեոս Իզմիրլյանին նվիրված մեծ հոդվածաշարուվ¹³⁷: Անվանի մանկավարժ Ս. Մանդինյանը անդրադառնում է Ս. Լիսիցյանի, Հ. Թումանյանի, Լ. Շանթի կազմած և մեկ տարի առաջ թիֆլիսում հրատարակված այբբենարանին¹³⁸:

«Մեր ձայնը» ակտիվորեն արձագանքում էր ուսական մշակույթի ու հասարակական կյանքի երեսություններին: Այսպես, Մ. Բերբերյանը «Մեծ մարդը», իսկ գրող-ժուռնալիստ Ա. Կայծունին (Ա. Թումանյանը) «Կ Տոլստոյի մոտ» վերնագրով ընդունակ հոդվածներ են նվիրում ուսամեծ գրողի ծօ-ամյակին¹³⁹: Հոդվածագիրներն ընթերցողներին ծանոթացնում են Կ Տոլստոյի ստեղծագործություններին և ըստ ամենայնի արժեքավորում դրանք: Մի շարք հոդվածներում թերթը լուսավորություն, կուլտուրա տարածելու հարց էր բարձրացնում: Կոչ էր անում երիտասարդության պատճառով 1908 թ. վերջում թերթը փակվում է¹⁴⁰:

Նոր նախիջևանի պարբերական մամուկի օրգաններից ամենից երկարակյացը «Հույս» շաբաթաթերթն էր (1910—1914): Թերթը գրական-հասարակական ուղղություն ուներ: Այն խմբագրում էր գաղութի

136 «Մեր ձայնը», 1908, № 132, 133:

137 Նույն տեղում, № 96—98, 105, 106, 108, 114, 118, 124, 127:

138 Նույն տեղում, № 88—91, 93, 96:

139 Նույն տեղում, № 94—97:

140 Նույն տեղում, № 97, 98:

141 ՀԱՊՊԱ, ֆ. 23, գ. 15, թ. 3—4:

¹³⁵ «Մեր ձայնը», 1908, № 12:

աշքի ընկնող դեմքերից բժիշկ Գ. Խելզյանը: Ի տարբերություն իր նախորդների՝ «Հույսը» չէր անդրադառնում քաղաքական հարցերին: Սակայն, դրա փոխարեն ուներ առավել շեշտված կուլտուր-լուսավորական և գրական-գեղարվեստական բովանդակություն: Թերթը հաճախ էր անդրադառնում Ռուսաստանի հայկական գաղութների, մասնավորապես Հյուսիսային Կովկասի, Ղրիմի հայ վանդալների, ինչպես նաև Մոլդավիայի, Մոսկվայի, Պետերբուրգի և Աստրախանի հայ համայնքների կյանքի կարևոր իրադարձություններին:

Թերթը, ինչպես պետք էր սպասել, բավարար շափով լուսաբանում էր Հայաստանի ու հայ իրականության, Ռուսաստանի և արտասահմանի, հատկապես իր ուղղության առնչվող երկույթներն ու անցերը:

«Հույսը» արտացոլում էր նոր Նախիջևանի գաղութի ոչ միայն մշակութն ու հասարակական հարաբերությունները, այլև ժամանակակից պատմության, ինչպես նաև անցյալի սոցիալ-տնտեսական կյանքի հարցերը: Թերթը հարկ եղած պարագայում, պատմական էքսկուրսներ էր կատարում գեղի գաղութի պատմության առաջին շրջանը՝ նախառեֆորմյան տասնամյակները: Թերթը քանից արծարծել է հասարակական սուրբանավեճ առաջացնող քաղաքի և հայկական գյուղերի հողային հարցերը: Այդ առիթով վեր է հանվել գաղութի սկզբնավորումից սկսած և XIX դ. 30—40-ական թվականներին սուրբ բնույթ կրած հողային հարաբերությունների ամբողջ պատմությունը:

Գաղութի քիչ թե շատ նշանակալից իրադարձություններն իրենց անդրադառնում էին գտնում թերթում: «Հույսը» զարձել էր Դոնի Հայության առօրյա կյանքի երկույթներին արձագանքող, նախիջևանցու սրտին մոտ և ընդունելի պարբերական:

«Հույս» շաբաթաթերթին զուգահեռ և նրա հետ միասին, միայն ավելի կարճ ժամանակով՝ 1912—1914 թթ., հրատարակվում էր «Գրիլ» պարբերականը: Հույս տեսավ Ս. Պապայանի խմբագրած սույն շաբաթերթի ընդամենը 27 համար: Այս պարբերականը ևս գրական-հասարակական ուղղություն ուներ: Այն լուսաբանում էր գերազանցապես նոր Նախիջևանի, նկատելի շափով նաև ուսուահայ մյուս համայնքների և Մայր հայրենիքի ազգային, մշակութային և գրական-հասարակական կյանքը:

1915 թ. մամուլի գլխավոր վարչության և Ռուսովի քաղաքապետի համաձայնությամբ թույլատրվում է Ռուսովի հրատարակել «Գաղութ» շաբաթաթերթը¹⁴²: Խմբագրի հրատարակիչն էր Ս. Մյասնիկյանը (Ա.

Մյասնիկյանի ավագ եղբայրը) և Ա. Տոմբայանը: Թերթը ունենալու էր հայկական կյանք, գրական, դատական, տեղական խրոնիկա, մամուլ, հայքաթվա տեսություն, ծաղրանկարի, ֆելիւտոնի, գրախոսության բաշխության ժողովները: Տպագրվելու էին հասարակական, տնտեսական և քաղաքական բնույթի հոդվածներ¹⁴³:

«Գաղութ» շաբաթաթերթը հրատարակվում էր առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1914—1916 թվականներին: Հետեաբար, իր ծրագրին համապատասխան, հայկական, մասամբ նաև տեղական այլ խնդիրների անդրադառնուվ, թերթը, բնականաբար, հագեցված էր պատերազմի և դրա հետ առնչվող անցքերը լուսաբանող նյութերով:

Թերթը յուրովի արտացոլում էր պատերազմի տարիներին Արևմբոյան Հայաստանը թուրքական բռնատիրությունից ազատագրելու հայկական գաղթաշխարհության մեջ առաջացած ոգևորությունն ու պատրանքները: Նրանում պարբերաբար նյութեր էին տպագրվում Ռուսաստանից և արտասահմանյան հայկական համայնքներից ռազմաշահատ մեկնող կամավորների մասին: «Գաղութ» շաբաթաթերթը լուսաբանում էր արևմտահայության կոտորածների հետեանքով Հյուսիսային Կովկաս ու հարավային Ռուսաստան եկած գաղթականներին օգանակելու, նրանց ապաստանելու այնպիսի հետաքրքիր մանրամասներ, որոնք հաճախ չեն պահպանվել արխիվներում:

1915—1916 թթ. Հրատարակվեց նոր Նախիջևանի թեմական դրապոցի 5-րդ դասարանի աշակերտների «Ժամանկեր» թերթը: Այն գրական-գեղարվեստական շաբաթաթերթ էր, և խմբութիպով լույս տեսավ 25 համար:

1915 թ. «Վրձին» խորագրով գրական ժողովածու (տարեգիրը) հրատարակեց և. Տիրացույանը:

Նոր Նախիջևանի և Ռուսովի հայ հասարակության նախաձեռնությամբ 1918—1920 թթ.՝ Ե. Շահազդիկի և Ռ. Բերբերյանի խմբագրությամբ հրատարակվում է «Հայ համայնք» գրական-հասարակական շաբաթաթերթը: «Հայ համայնքը» կոչված էր լուսաբանելու հարավային Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի հայության կուտուր-լուսավորական, բարեգործական, դաստիարակչական և կյանքի այլ կողմերին վերաբերող հարցերը¹⁴⁴:

143 Նույն տեղում, թ. 2:

144 ՀԿՊ(Ա), ֆ. 118, ց. 1, գ. 19, թ. 5: 1920 թ. Ե. Զուբարի, Ա. Հովհաննիսյանի և Սելիք-Ցոլցյանի խմբագրությամբ հրատարակվեց Ռ. Կ. Ռոստով-Նախիջևանյան կազմակերպության հայկական սեկցիայի օրգան «Բանվորի կոիկ» թերթը: Դրա շարունակությունը կազմության հայկական սեկցիայի օրգան «Բանվորի կոիկ» թերթը:

Դոնի հայկական մամուլը ներկայացնելիւ ճիշտ չէր լինի սահմանափակվել միայն նոր նախիշևանում հրատարակված հայկական պարբերականներով։ Դոնի հայության ժուռնալիստական հակումներ ունեցող որոշ մտավորականներ, ինչպես առվեց, դեռևս տեղական մամուլի հայկական օրգաններ հիմնելուց առաջ իրենց ձեռքը վերցրին Ռուսական լուսավորությանը, Դոնի ավազանում ու հարավային Ռուսաստանում ճանաշում գտած մի շարք կարգոր թերթերի տնօրինումը։

Այդ պարբերականներն անդրագառնում և լուսաբանում էին ոչ
միայն նոր Նախիջևանի, այլև նկատելի շափով նաև հայ ժողովրդի պատ-
մամշակութային հարցերը։ Դրանցից էր Ս. Հարությունյանի խմբագրած
«Պրիաղովսկի կրայ» թերթը։ Նախնական կրթությունը ստանալով նոր
Նախիջևանում, ապա սովորելով Թեոդոսիայի Խալիբյան վարժարանում
Ս. Հարությունյանը ուսումը շարունակում և ավարտում է Մոսկվայի հա-
մալսարանը։ Երկու տարի Մոսկվայում և Պետերբուրգում իրավաբանու-
թյամբ զբաղվելուց հետո, 1873 թ. վերադառնում է հայրենի քաղաք։ Շու-
տով գառնում է գաղութի նշանավոր հասարակական գործիչներից մեկը։
Նա նպաստում է Դոգոյան ուսումնարանի, Արհեստավորական դպրոցի
բացմանը, բարեգործական այլկայլ հաստատությունների հիմնադր-
մանը։

1891 թ. Ս. Հարությունյանը գնում է Ռոստովում հրատարակվող «Դոնսկոյե պոլե» թերթի հրատարակության իրավունքը, այն վերանվանում «Պրիազովսկի կրայ» և սկսում լույս ընծայել ընդարձակ ծրագրով: Կարճ ժամանակում թերթը լայն ընդունելություն է գտնում և լավ անոն վաստակում: Այն ամենակին շեր զիջում «Դոնսկայա, ժիզն», «Ռւտրո Յուգա», «Յուժնի տելեգրաֆ» և ճանաչում ունեցող այլ պարբերականների: Ս. Հարությունյանը մինչև իր կյանքի վերջը՝ 1911 թ. թերթի անփոփոխ խմբագիրն էր^{145:}

Թերթը բավարար տեղ էր հատկացնում նոր նախիջեանում կատար-
վող իրադարձություններին, նույնիսկ միշամտում ներգաղութային խըն-
դիրներին, բանավեճի մեջ մտնում հայկական պարբերականների հետ:
Գնահատելի է հատկապես այն, որ թերթը ընթերցողներին ծանոթացնում
էր նաև հայ ժողովրդի մշակույթին: Այսպես, Յու. Ղեսելովսկին «Մկրտ-
իչ Պետքթաշլյան» ակնարկում նշելով, որ սուս ընթերցողը, բացառապ

թյունը հանդիսացավ «Բանվոր» (իսմբագիր՝ Ա. Տերըքյան) եռօրյա թերթը: Նոր նախկի-չանի բարբառով 1920 թ. հրատարակվեց նաև ԱԿ(Բ)Կ Խոստովի կոմիտեի հայկական սեղմայի «Խարիսկիթ» (խմբ. Ե. Չուռալյ) թերթը:

145. П. Горцо-Биноградский, С. Х. Арутюнян—основатель газеты «Приазовский край» («Записки Ростовского на Дону общества истории, древностей и природы», т. II, Ростов н/Д, 1914, с. 264—266).

Պ. Աղամյանի, չի ճանաշում արևմտահայ մտավորականությանը, հանգամանուն ներկայացնում է զբողի խորապես Հայրենասիրական ու առատասիրական ստեղծագործությունները¹⁴⁶:

«Նամակ Պարսկաստանի մասին» խորագրի տակ թերթը տպագրուած է («Արաքս» հանդեսից) Թափփու և տիմանու հողվածաշաբը^{147:} «Հայ ժողովրդի մեծ տոնը» ծավալուն հողվածում հայ զրերի գյուտի 1500 և տպագրության 400 ամյակների առիթով թերթը բացահայտում է հեռավոր անցյալում կատարված պատմական այդ անցքերի նշանակությունը՝ առավելագույն առաջարկանին և մշակութային կյանքում^{148:}

Հայ ժողովրդը քաղաքական և մշակութային գործություններ էր տպագրում հայ-
կուրերի բաժնում թերթը հազորդագրություններ էր տպագրում հայ-
կական մշակութային կյանքում կատարվող անցքերի մասին։ 1906 թ.
131-րդ համարում նշվում է, որ արտասահմանում ստեղծվել է «Փա-
րիզի հայերի միություն» նոր ընկերությունը։ Իյն լեգալ ձևերով պաշտ-
պանելու է հայ ժողովրդի մշակութային նվաճումները, քաղաքակիրթ
աշխարհին ծանոթացնելու է հայերի անցյալին ու ներկային, ինչպես
նաև պրոպագանդելու է արևմտահելքորպական քաղաքակրթություն։ Նո-
րաստեղծ ընկերության նախագահ է ընտրվել Ն. Ներսիսյանը, տեղակալ՝
Ա. Շիրվանջաղեն, իսկ քարտուղար՝ «Անահիտ» ամսագրի խմբագիր
Ա. Չոռանյանը։

Հազորդումներ են տպագրվում «Վարդանանց» տոնի, հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանի հուշարձանը Երևանում բացելու մասին և այլ լուրեր: Բերթում հաճախ հանդիս էր գալիս Ս. Շահնշանը:

«Донская речь» **թերթը** խմբագրում էր նոր Նախիչևնականի ճանաշվածք գեմքերից Մ. Բերբերյանը: Թերթն անդրադառնում էր հայ ժողովադրության համապատասխան կյանքի հարցերին: Թերթի հրատարակությանը մեծապես մշակութային կյանքի հարցերին: Թերթի հրատարակությանը մեծապես նպաստում էր Խմբագրի կինը, Կրթված մտավորական Սոփյա Բերբերյանը: 1901—1903 թթ. նա թերթի ջանասեր աշխատակիցներից էր և փաստորեն գեղարվեստական բաժնի խմբագիրը¹⁴⁹: Վերահսկա ման ընդհատում է նրա ժուռնալիստական բեղուն գործունեությունը:

Նշանավոր գրքասեր Հ. Տեր-Եկրահամյանը խմբագրում էր «Իռուսկայական» թերթը։ Նախորդ պարբերականի նմանությամբ սա ևս շոշափում էր առավելապես Գոնի և ոռոսահայ մյուս համայնքների

146 «Приазовский край», 1892, № 272, 273

147 Նույն տեղում, № 316, 323, 326

148 Ապրիլ ամերկան, 1913, № 114, 267.

149 «*Uzwnk*», 1904, № 59.

ինչ որ շափով նաև հայ իրականության գրական-լուսավորական հարցերը: Այսպես, նոր նախիջևանում հանրային գրադարան ունենալու անհրաժեշտության և հասունացած այդ խնդրի ուղղությամբ տարվող աշխատանքների մասին թերթում հանդես է գալիս Գ. Զալիխուշյանը¹⁵⁰:

Անցյալ դարի 80-ական թվականներից Տեր-Արքահամյանը ուսումնեն հրատարակում էր նաև «Դոն-Ազովյան ոուս-հայկական օրացույցը»: Տեղեկատու նյութեր պարունակող ամենամյա այդ հրատարակությունում լայն տեղ էր հատկացվում նաև Դոնի հայկական գաղութին վերաբերող հաղորդումներին: 1890 թ. օրացույցն, օրինակ, մանրակրկիտ տվյալներ է պարունակում նոր՝ նախիջևանում քաղաքային վարչության, բարեգործական հաստատությունների, քաղաքային և գյուղական զբարոցների, բժշկական, դատական, ոստիկանական ծառայության ու դրանց անձնակազմի վերաբերյալ¹⁵¹:

Նոր նախիջևանի հայ մտավորականները տեղում մամուլի օրգաններ ունենալուց առաջ և դրանից հետո ոուսական թերթերից զատ հանգիս էր գալիս հայկական կենտրոնական մամուլի էջերում: Մամուլի այդ օրգաններից էին «Մշակը» (թղթակցում էին Գ. Զալիխուշյանը, Ա. Արելյանը, Հ. Գենչյանը, Զ. Բեկ-Բուլաղյանը և ուրիշներ), «Մեղու Հայաստանի», «Նոր դար», «Փորձ», «Արձագանք» և այլ պարբերականներ:

Այդ ամենով հանդիրձ, Դոնի հայության համար կարևոր էր տեղական պարբերականների հիմնումը: Նոր նախիջևանում հրատարակող թերթերը տարածվում էին նաև հայկական գյուղերում, ինչպես և այլ, մանավանդ մամուլի սեփական օրգաններ շունչող, գաղութներում: «Մեր ձայն» լրագիրն, օրինակ, ուղարկվում էր Սուլթան Սալա գյուղի դպրոցին և Ցալթայի հայկական համայնքին¹⁵²:

Դժվար է գերազնահատել մամուլի գնրը: Այն կարևոր լժակ հանդիսացավ Դոնի հայության հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը խթանելու գործում: Պարբերական մամուլը մտավորականության ձեռքում հղոր մի միջոց էր՝ հրատապ ու կարևոր խնդիրները հասարակական քննարկման ենթարկելու, բնակչությանը քաղաքականապես հասունացնելու, հայկական կյանքն առաջ մղելու համար: Դոնի հայ զանգվածը մամուլի միջոցով հասու էր դառնում հայ ժողովրդի կյանքում կատարվող անցքերին, նրա առօրյային և դրանով իսկ արգասավորվում ու ազգային լիցք ստանում:

¹⁵⁰ «Донская пчела», 1886, № 25.

¹⁵¹ Донской-Азовский русско-армянский календарь на 1890 год. Ростов н/Д. 1889 г., с. 190—195.

¹⁵² «Մեր ձայնը», 1908, № 24:

Մամուլն էական դեր կատարեց լուսավորություն տարածելու, զբարոցական-կրթական ուղղությամբ առաջադիմության հասնելու, հետապահական երևույթներն ու բարքերը խարզանելու, հայ մտավոր կյանքը հասունացնելու գործում:

Նոր նախիջևանում հետաքրքիր ընթացք է ունեցել տպագրական-հրատարակչական գործը: Գաղութի հիմնադրումից մեկ տասնամյակ անց, երբ պայմանները թե՛ բնակչության գրագիտության և թե՛ տեխնիկական հնարավորության առումով, բնակ հասունացած չէին, նոր նախիջևանն ունեցավ տպարան:

Ժամանակի աղատագրական շարժման նշանավոր գործիշ Հ. Արդությանի ջանքերով՝ 1790 թ. Պետերբուրգից նախիջևանի Սուրբ Խաչ վանք տեղափոխվեց Գ. Խալդարյանի տպարանը: Դրա հնգամյա գործունեության տարիներին հրատարակվեց իր ժամանակի համար բավականաշափ մեծ քանակի (քսան) գիրք: XVIII դ. Վերջերին նոր նախիջևանում շափ մեծ քանակի (քսան) գիրք: Խ. Արդությանի նախիջևանում կուտուր-լուսավորական խոշոր երեխալդարյան տպարանի հիմնումը կուտուր-լուսավորական խոշոր երեխալդարյան տպարանի միայն հայկական գաղութի, այլև ամբողջ երկրամասի հավույթ էր ոչ միայն հայկական գաղութի, այլև ամբողջ երկրամասի համար: Դա հարավային Ռուսաստանի առաջին տպարանն էր¹⁵³:

Խալդարյանի տպարանը 1796 թ. Աստրախան տեղափոխելուց հետո նոր նախիջևանում տպագրական-հրատարակչական գործը դադարեց:

XIX դարի 70-ական թվականներին Գ. Պատկանյանը փորձում է տպարան հիմնել, անգամ տառեր է ձուլել տալիս, սակայն նրա այդ նախաձեռնությունը հաջողությամբ չի պսակվում¹⁵⁴: Ավելին, մինչև անցյալ դարի 70-ական թվականները նոր նախիջևանը մնում է առանց սեփական տպարանի, թեպետև տեղի մտավորականները պարբերաբար փորձեր էին անում այդ ուղղությամբ:

Այսպիսով, Դոնի ափերին բավականաշափ բարձր մակարդակով սկսված տպագրությունը հնարավոր չեղավ հետագայում շաբունակել Սակայն երկրամասի, այլ թվում և Դոնի ավագանի զարգացման մի-

¹⁵³ Վ. Բարիուպայշյան, Ռուսահայերի առաջին տպարանը, ՊԲՀ, 1967, № 4:

¹⁵⁴ Հ. Տեր-Սիմոնյանը, 1871 թ. դիմելով վերաբառ ատյաններ՝ տպարան հիմնելու համար, հիշատակում է, որ 1828 թ. տպարան է բացվել: «43 տարի սրանից առաջ, — դրու է նա, — 1828 թ. այսինքն ի հիշատակ նախիջևան բաղարի 50-ամյա հոբելյանի բացվում է իմն քաղաքական (իմա՝ քաղաքային—Ղ. Բ.) տպարան, ամեն ինչ պարագաներով, բայց ափսոս, այն տպարանի հիմքը անգամ չի երկիլ այժմ» (ՀԿՊԱ, ֆ. 139, գ. 1770, թ. 7):

Եթե այս գկայության հիման վրա ընդունենք, որ Գ. Պատկանյանին, այնուամենայնիվ, հաջողվել է հիմնել տպարան, ապա հարկ է նշել, որ այն գործել է շատ կարճ, քանի ու տպարանի հրատարակություններից ոչինչ չի հասել մեզ:

տումները, առանձնապես հասարակական-քաղաքական և կուլտուր-լուսավորական կյանքի առաջընթացն այլ պահանջներ էին դնում: Դպրոցները դասագրքերով, ծրագրերով ապահովելու, պարբերականներ, գրքեր հրատարակելու համար աստիճանաբար ավելի ու ավելի էր հրատապ գառնում տպարան ունենալու խնդիրը:

Այդ իսկ պատճառով 1860-ական թվականներից ուժեղանում էն տպարան հիմնելու և ցանկությունները, և այդ ուղղությամբ կատարվող գործնական քայլերը՝ 1866 թ. Ս. Նազարյանը նոր Նախիջևանում եղած միջոցին, հայկական գիմնազիա հիմնադրելու, հասարակության կողմից ուրախությամբ ընդունված, առաջարկի հետ մեկտեղ գտնում է, որ հարկ է նաև հայկական և լատինական տառատեսակներով տպարան հիմնել։ Տպարանի հիմնադրման համար անհրաժեշտ 10 հազար ռուբլի գումարը նա խորհուրդ էր տալիս ժողովել ողջ հասարակությունից՝ միանվագ կատարվող հանգանակությամբ¹⁵⁵։

1868 թ. Հ. Տեր-Գայբրիելյանը Նախիջևանում տպարան հիմնելու թույլտվություն է խնդրում¹⁵⁶: Միայն երեք տարի անց Եկատերինասլավի նահանգապետի գրասենյակից տեղեկացնում էն, որ Պետրովրդի համապատասխան ատյանների և ներքին գործերի մինիստրության համաձայնությամբ նրան վերապահվել է տպարան բացելու իրավունք: Միաժամանակ զգուշացվում էր հատկապես հայերեն տպագրությանը հետեւյալու մասին¹⁵⁷: Գլխավորապես ֆինանսական միջոցների պակասի հետևանքով տպարան հիմնելու այդ փորձը ևս հաջող ընթացք չի ունենում¹⁵⁸:

Երկու լեզվով՝ Հայերեն և ռուսերեն դպրոցական դասագրքեր հրատարակելու համար Հ. Տեր-Միմոնյանը 1870 թ. տպարան հիմնելու թույլտրվություն է ստանում: Բացվելիք տպարանի վերահսկողությունը դրվում է Նոր Նախիջևանի քաղաքագլխի վրա: Նահանգային վարչությունը գտնում է, որ Հայերեն կարելի է հրատարակել միայն այն գրքերը, որոնք անցել են Հայերեն իմացող աշխատակից ունեցող Պետերբուրգի գրաֆնչական կոմիտեով¹⁵⁹: Արգելակիչ այդ Հանգամանքի, թերևս նաև այլ պատճառներով ձախողվում է նաև այդ տպարանի բացումը:

ს. Պատկանյանը «Նոր Նախիջևան» անումով թերթ Հրատարակելու հայտ ներկայացնելու հետ մեկտեղ խնդրել էր տպարան հիմնելու թույ-

տվություն: 1878 թ. հուլիս-օգոստոսին Պետերբուրգում եղած ժամանակ վատահ լինելով, որ տպարանի հարցում որևէ արգելք չկա, զնում է տպարանի սարքավորում: Այդ մասին նա հաղորդում է Նախիջևանի քաղաքագլխին և իր տիկնոջը: «Այստեղ իմ խորին շնորհակալությունը չհայտնել չեմ կարող և պ. Քնափքին,— գրում է Ռ. Պատկանյանը,— որ մեծ բարեկամական փաստ ցուցուց ինձ՝ տպարանի գնելուն: Կա տպարան, որ կարժե մինչև մեկ միլիոն, իսկ մեր Նախիջևանինը արժեցավ միայն 3000 մանեթ, բայց կհավատաք, որ մերը ևս նույն պաշտոնը կկատարե, ինչպիս և վերև հիշած թանկագինը: Մեր Նախիջևանը կունենա քանի մի շաբաթից մի պատվական, հարուստ, մեր պետքը բոլորվին լցնող տպարան, ուր մի հատիկ ասեղ պակաս չի լինիլ. Հենց եկած օրս կարող ենք սկսել տպելու այցելության տոմսակեն սկսած մինչև մի մասնագիտական գիրք կամ ժողովրդական պարբերագրություն: Ուրեմն, այդ մասին կարող ենք միմյանց շնորհավորել և մեր նորահիմն տպարանին շատ երկար կյանք և գործունեություն բարեմաղթել»¹⁶⁰:

Նոր նախիջևանում տպարան ունենալի այնքան կենսական և թ. Պատկանյանի համար էլ այնքան նվիրական ցանկություն էր, որ նա լիահույս իր նախաձեռնած գործի հաջողությանը, հատուկ բանաստեղծությամբ ողջունում է տպարանի հիմնումը:

Բարի եկար, հյուր թանկագին,
Ազգապարծանք գործարան,
Քեզ շատ վաղուց և անհամբեր
Կըսպասեր նոր նախիչևան:
Գալլդ բարի, ոտքը թիթև,
Համայնաշահ գործառուն,
Վատաշ: Ենք դու պիտի կանգնես
Շատ կործանած հայի տուն:
Հաստատ մնա, երկար ապրե
Մեր մէջ, ո՞վ հայ տպարան,
Եվ քո կյանքն կյանք կստանա
Մեր կիսաշունչ նախչըրվան:
Հայ մանկանցը տուր դասագիրք
Զվարծալի, օգտաբեր,
Իսկ շափահաս ժողովորին
Միտք ձոխացնող շատ գրքեր¹⁶¹,

Մեծ բանաստեղծին և քաղաքացուն վիճակված էր այս հարցում է հուսախաբ լինել: Նույն տարվա նոյեմբերին ստացվում է տպարան բացելու վերաբերյալ Եկատերինոսուլավի նահանգապետի կուրնովոյի բացասական պատճառխնդիր:

Անողղակի որոշ տվյալներից երևում է, որ անցյալ դարի 70-ական թվականներին հիմնվել է տպարան, սակայն տպագրական-հրատարակչական փոքր հնարավորություններով։ Հ. Տեր-Եբրահամյանը 1880-ա-

155 «Угара» , 1913, № 8—9, т. 733:

156 2477U, p. 54, q. 1129.

157 Նույն տեղում, թ. 139, գ. 1770, թ. 3—4:

158 Նույն տեղում, թ. 6—7:

¹⁵⁹ ЦГИА СССР, ф. 776, оп. 4, г. 1870, д. 652.

160 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 18

161 Նույն տեղում, հ. 1, Երևան, 1963, էջ 106

կան թվականների սկզբներին Խոստովում հիմնել էր Հայերեն և ռուսերեն լեզուներով՝ տպարան։ Այդ տպարանում երկու լեզուներով տպագրվել են միայն որոշ գրքեր։ Փաստորեն XX դարի սկզբին են հիմնվում տեխնիկապես հագեցված բարեկարգ տպարաններ։ Դրանցից աշքի էր ընկնում հատկապես Ս. Ավագյանի տպարանը։ Վերևում հիշատակված գրեթե բոլոր հայկական պարբերականները տպագրվում էին այդ տպարանում։

Նոր Նախիջևանի տպարաններում հրատարակվեցին Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի Երկիրի ժողովածուները, գեղարվեստական գրականություն, դպրոցական դասագրքեր, գաղութի ու բարեկործական հաստատությունների պատմությունը և բաղմաթիվ այլ գրքեր:

Նոր նախիչևնում տպարաններ թեև ուշ հիմնվեցին (բացառյակ խալքարյան տպարանի), սակայն գրի ու գրականության նկատմամբ աերը միշտ էլ ուժեղ է եղել: Դրան մեծապես նպաստել է ինչպես ուսումնական հաստատությունների, այնպես էլ կրթված մտավորականության առկայությունը գաղութում:

Ծխական գպրոցները տակավին *XIX* դարի առաջին կեսում ունեին աշակերտական ընթերցարաններ, իսկ եկեղեցիները՝ կրոնական բովանդակությամբ գրականության փոքրիկ գրադարան։ Խղճուկ վիճակում գտնվող այդ գրադարանները հետագայում ընդլայնվեցին։ Քաղաքի նշանավոր գպրոցներն ունեին ավելի բարզոք գրադարաններ։ Նոր Նախիչևանի հոգեոր ուսումնարանը, օրինակ, 1879 թ. ուներ հայերեն, ուսւերեն, ֆրանսերեն և գերմաներեն գրքերի բավականաշափ հարուստ գրադարան։ Այնտեղ կային «Շավիդ լեզվագիտության» (ՍՊ, 1788), Մ. Կազանկատվացու «Պատմությունը», Ռ. Պատկանյանի «Պատմություն Մեծին Պետրոսի» (ՍՊ, 1863); Մ. Շահագիզի (1865 թ.) Մոսկվայում հրատարակված «Լեռնի վիշտը», Բաֆֆու «Դավիթ-Բեկը», Կոհլովի «Առակները» (ուսւերեն), դասագրքեր, մեկ տասնյակից ավելի բառարաններ և այլ գրքեր¹⁶²։

Գրքի նկատմամբ հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ Հ. Տեր-Աբրահամյանը 1872 թ. նախիջևանում գրախանութ է բացում: Այնտեղ վաճառվում էին ոչ միայն Խորաստանում, այլև Փարիզում, Վենետիկում, Վիեննայում, Զմյուռնիայում, Երուսաղեմում տպագոված առօրեն՝¹⁶³

Գաղութի նշանավոր ուսումնական հաստատություններ՝ թեմական, Գոգոյան, Արհեստավորական, Ժառանգավորաց դպրոցները ունեին որոշ չափով մասնագիտացմած գրադարաններ։ Քաղաքային ակումբի գրա-

գարանը նախատեսված էր ընթերցող լայն հասարակության, ավելի ճիշտ ակումբ հաճախող քաղաքացիների համար: Բոլոր այդ գրադարաններն էլ աստիճանաբար աճում, հարստանում էին: Այդ ամենով հանգերձ, բնակչության գրագիտության աստիճանն ու գրքի նկատմամբ սերն այն-քան բարձր էր, որ հանրային գրադարան ոմենալու պահանջ էր զգաց- վում:

1886 թ. հանձնածողով է ստեղծվում գրադարանի կազմակրթության և
նախապատրաստելու համար: Հավանաբար հաջորդ տարում բացվում է
նոր Նախիջևանի հանրային գրադարանը: Հանրային գրադարանին հա-
սարակական այնպիսի կարևոր նշանակություն էր տրվում, որ դրա
տնօրեն էին նշանակվում գաղութի ամենից ավելի պատասխանատու
պաշտոն վարող անձնավորությունները: 1900 թ. հանրային գրադարա-
նի վարիչը պաշտոնը վարում էր Նախիջևանի քաղաքագլուխ Ա. Խաղա-
մովը¹⁶⁴, Նախիջևանի Ա. Ս. Պուշկինի անունը կրող հանրային գրադա-
րանն ուներ տարբեր բնույթի ու տարբեր լեզուներով գերազանցապես
ռուսերեն և հայերեն գրականության հարուստ ֆոնդ՝ շուրջ 3400 կտոր
գիրք և բազմաթիվ պարբերական հրատարակություններ¹⁶⁵: Գրադարանի
հիմնական ֆոնդը հայ, ուստի և ելքոպական հեղինակների գեղարվես-
տական ստեղծագործություններն էին, որոնց թվում մանկական գրքեր և
թատերագրական գործեր: Քիչ չեր բնագիտության, մաթեմատիկայի,
բժշկության, մանկավարժության, աշխարհագրության, պատմության,
միկոսումայության, հոգեբանության գերաբերյալ գրականությունը¹⁶⁶:

Դրադարանն ուներ հայկական ավելի քան քսանմեկ կարևոր պարբերականների, այդ թվում «Արաքս», «Աղբյուր», «Արձագանք», «Բազմավեպ», «Գեղունի», «Դպրոց», «Թատրոն», «Լումա», «Հանդես ամսօրյա», «Հանդես գրականական», «Մուրճ», «Տարազ», «Փորձ» և այլ հանդեսների օրինակներ¹⁶⁷:

3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ

Դունի հայկական գաղութում զարգացում ապրեց հատկապես գրականությունը: Նոր նախիշեանի աշխույժ միջավայրը, գրագետ մտավո-

¹⁶⁴ «Памятная книжка области войска Донского на 1900 г.», Новочеркасск, 1900, с. 114.

165 Каталог книг Нахичеван и/Дону «Пушкинской» библиотеки. Нахичеван, и/Дону, 1907 г.

166 Նույն տեղում:

167 Նույն տեղում:

162 24794U, §. 139, g. 1, g. 1782, p. 3-18.

¹⁶³ «Արարատ», 1872, № 1,էջ 43:

րականության առկայությունը և վերջինիս հայկական ու ոռոսական շրջանների հետ հասարակական-մշակութային կապերն ու շփումները բարենպաստ պայմաններ էին ստեղծում գրականության զարգացման համար:

Տակավին XIX դարի առաջին կեսին, մանկավարժական աշխատանքներին զուգահեռ, գրական-հրատարակչական բեղմնավոր գործունեություն էր ծավալել իր ժամանակի գրագիտ ու գիտուն մտավորականներից մեկը՝ Գաբրիել Պատկանյանը: Նա «Արարատ» շաբաթաթիերթը և այլ պարբերականներ հրատարակելուց զատ, պատմական թևմանը վեպեր, ողբերգություններ, պոեմներ էր գրում:

Այդուհանդերձ, ինչպես գաղութի հասարակական կյանքի այլ ասպարեզներում, այնպես էլ առանձնապես մշակութի այս ճյուղում, անշատի մեծ է հայ գրականության ականավոր դեմքերի՝ Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի գերը: Հատկանշական է, որ նրանց առաջին բանաստեղծությունները 1850-ական թվականներին տպագրվել են իրենց ուսուցչի և հոր՝ Գ. Պատկանյանի իմբարգած «Արարատ» պարբերականում:

Նրանք ամել ու ձեավորվել են հայկական գաղութի միջավայրում: Հեռանալով նոր նախիջեանից, Մ. Նալբանդյանը չէր կտրվել ու խորբացել հայրենի բաղարից, նրա հասարակական, մշակութային կյանքից: Ընդհակառակը, կոիվ հայտարարելով տեղի հետադիմական վերնախավերին, սոցիալական պայքարը շարունակեց նաև դրսից: Նա մինչև վեր ամուր կապերի մեջ էր և աշխուժորեն հետաքրքրվում էր Դոնի հայկական զանգվածի կյանքով: Հնդկահայ վաղեմի կտակների հարցի բարձրացումը մամուլի էջերում և այդ գժվարին գործը ստանձնելն ու Հնդկաստան մեկնելն արվում էր Դոնի հայության մշակութային-կրթական վիճակը բարելավելու մտահոգությամբ, նույնիսկ Պետրոպավլովյան բանտարգելության ժամանակ մշտապես հետաքրքրվում էր նոր նախիջեանում կատարվող անցքերով:

Ռ. Պատկանյանն առավել ամուր թելերով էր կապված հայկական գաղութի հետ, քանի որ ապրում ու գործում էր այստեղ: Նա 1860—80-ական թվականների նոր նախիջեանի հասարակական-մշակութային կյանքի եռանդուն գործիչներից էր: Որևէ անարդարություն շանդուժող, գաղութի իրադարձությունների կենտրոնում գտնվող, ակտիվ ու ըմբռստ Պատկանյանը մշտապես հակամարտությունների մեջ էր տեղի հոգեւոր ու աշխարհիկ տերերի հետ, որոնք մեծ մասամբ նյութ էին դառնում նրա ստեղծագործությունների համար:

XIX դարի կեսերին ազգային ինքնագիտակցության աճի հետ մեկտեղ վերելք էր ասլրում հայ բաղաքական պոեզիան: Մ. Նալբանդյանը,

հենվելով ոռոսական գեմոկրատական գրականության, առաջին հերթին հենվելով ոռոսական գեմոկրատական գրականության, առաջին հերթին Պուշկինի, Մ. Լեմոնտովի ժառանգության վրա, հաստատում է բանաստեղծի բարձր կոչումը, նրա բաղաքացիական պարտքը հասարակական շարժիների գեմ պայքարելու գործում: նա գտնում էր, որ գրական շարժիների գեմ պայքարելու գործում: նա գտնում էր, որ գրականությունը ու արվեստը կոչված են ժողովրդին ճիշտ պատկերացում տալու իրականության մասին: Մանավանդ գոյություն ունեցող իրականությունը իրականության բացահայտումը ժողովրդին կարող էր հասցնել իր վիճակն անհրաժյան բացահայտումը ժողովրդին կարող էր հասցնել իր վիճակն անհրաժյան իր ստեղծագործական ողջ տաղանդն ու ավյունը նվիրաբերելու այդ նպատակին:

«Հյուսիսափայլ» ամսագրի էջերում նա ծավալեց գրական-հրապարակախոսական լայն գործում: Մամուլի էջերում հրապարակված բանաստեղծներում և մյուս բոլոր երկերում զգացվում է ժողովրդին ծանր դրությունից գործ բերելու, նրա վիճակը բարեփոխելու ձգուումը: Նա անհաշտ պայքար էր մզում ժողովրդի հարստահարիչներին, գեմ, մերկացնում կղերափեղալական ուհակցիայի ներկայացուցիչներին, քննադատում լիրերաների հայացքները:

Դրականության, փիլիսոփայության, արվեստի խնդիրը մարդկային կյանքը բարվորելու, մարդուն ազատագրելու մեջ տեսնող գրողը մինչև կյանքի բարեկարգությամբ, նույնիսկ Պետրոպավլովյան բանտարգելության ժամանակին՝ պայքարել ազատանանքին՝ պայքարել ազատության համարը:

—Ազատություն, —գոշեցի, —
թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
թող զավ զնե թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչ անարգ մահու ոյուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդաղար՝ ազատություն¹⁶⁸:

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատությունը ևս ծառայում էր հենց այդ նպատակին: Աշխատության մեջ հեղինակն ընթերցող հայ հասարակության և առաջին հերթին երիտասարդության առաջ բացահայտում է գոյություն ունեցող սոցիալական անարդարությունը և նրանց հաղորդակից դարձնում իր մտորումներին ու ինուներին: «Երկրագործության» ուղենիշ դրույթներից մեկը՝ ազգային-խոհերին:

168 Մ. Նալբանդյան, Երկեր, Երևան, 1979, էջ 4:

ազատագրական շարժումների լծորդումն է գյուղացիական հեղափոխության հետ:

Նա իր ապրած ժամանակաշրջանի ազգային և սոցիալական երևույթ-ները խորությամբ քննելով հանգում է այնպիսի մեծ ընդհանրացումների, որ ճնշված ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ազատագրումը կարողացավ կապել համառուսական հեղափոխության հաղթանակի հետ։ Հիրավի, մարգարեական կին Նալբանդյանի կանխատեսումները՝ «Ռուսիո ազատությունն ընդհանուր մարդկության վերաբերությամբ մեծ խորհուրդ ունի»։

Նրա բոլոր գործերը հագեցած էին դարաշրջանի առաջավոր գաղափարներով, հեղափոխական պաթոսով:

Մ. Նալբանդյանի ստեղծագործությունները, մանավանդ հրապարակախոսական հոդվածների մի զգալի մասը նվիրված են գրականության և արվեստի հրատապ հարցերին։ Այդ աշխատություններով նա զնում է հայ ռեալիստական քննադատության ու գեղագիտության և մյուս կողմից՝ գեղարվեստական հրապարակախոսության հիմքերը։ Նա մերժում էր ամեն մի հետադիմական և կյանքի առաջընթացն արգելակող երևույթ և նկատում ու պաշտպանում նորը, առաջադիմականը։

Նալքանդյանը առաջ էր քաշում կրականության ժողովրդայնության պրոբլեմը, միաժամանակ պաշտպանում ժողովուրդների իրավահավասարության գաղափարը, խարազանում ազգային խտրականության քաղաքականությունը:

Ու. Պատկանյանը ազգային զարթոնքի, մտավոր-քաղաքական վերածնության, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսն էր և խարազանում էր միջնադարյան հետամնացությունն ու ամեն մի հինգ ու իր դարն ապրածը:

Պատկանյանը ևս վճռականորեն կողմնորոշվում էր դեպի ժողովրդական լեզուն և գեղարվեստական մտածողությունը: Նա, նալբանդյանի նման, ընթանալով Խ. Աբովյանի բացած ուղիով, հանգես էր գալիս գրաքարի մերժումով և աշխարհաբարի կրքու պաշտպանությամբ: Պատկանյանի համար նույնպես գրավոր խոսքը ժողովրդին մոտեցնելը, այն հասկանալի դարձնելը՝ գրականության ժողովրդայնացման հարցն էր, որը բխում էր կյանքի պահանջներից: Նա իրավամբ գտնում էր, որ գրաքարն ի վիճակի չէր, հասարակական նոր հարաբերությունների պայմաններում հաղորդակցության միջոց լինել ժողովրդի համար:

ს. Պատկանյանը գրական ասպարեզ է իշել գրականության հասարակական ներգործուն դերի, բանաստեղծ-քաղաքացու դերի հստակ գիտակցությամբ: Նրա ստեղծագործություններին բնորոշ է կյանքի իրո-

զությունների իրական ընկալումը։ Մի շարք բանաստեղծություններում նա քննադատում է իր ապրած ժամանակաշրջանի սոցիալական հակասությունները, իր անսքող համակրանքն է արտահայտում ժողովրդի ներքնախավերի նկատմամբ։

—Մի՛ զարդանա, պարոն Սարգիս,
էս աշխարքի աղաթին,
Իշխանք, գանա, դուն խաբար մի՞ս,
Վուր քասիքին կու ատին^{169:}

Բանաստեղծը ճշմարիտ ազգասիրություն ու հայրենասիրություն էր համարում անշահախնդիր նվիրվածությունը հարազատ ժողովրդի լուսավորությանը, կուլտուրական զարգացմանը, նրա աղատագրությանը։ Նա վորությանը, կուլտուրական զարգացմանը, նրա աղատագրությանը։ Նա պրական տարբեր ժամաների իր ստեղծագործություններով ժամանակակից սերնդին դաստիարակում էր հայրենիքին, ժողովրդի աղատագրության անձնագործ նվիրվածության ողով։

Պատկանյանը հայ ժողովրդի *XIX* դարի 60—80-ական թվականներին՝ ազգային-ազատագրական շարժումների բուռն ու ցասկոտ երգիչն էր:

Նա հաճախ էր դիմում պատմական թեսասերի զատուքը յանձնելու Պատկանյանի կարծիքով, պետք է ծառայի արդիականությանը: Պատմության հերոսական դրվագների վերջիշումը բանաստեղծի համար ժողովության ազգային գիտակցությունն արթնացնելու, նրան ազատագրական դոկտրին ազգային գիտակցությունն արթնացնելու, նրան ազատագրական պայքարի կոչելու, սեփական ուժերի նկատմամբ հավատն ամրապնդելու միջոց էր: «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմում վերակեննանացնելով Ավարայրի ճակատամարտի հերոսին, նրան մասնակից է դարձնում իր ժամանակաշրջանի ազատագրական շարժմանը: V դարի հերոսի կերպարով բանաստեղծը ժողովրդին մարտակու է անում նրա ազգային-մշակութային ինքնությանը ոպառնացող օտարի լուծը թոթափելու համար:

Այդ նույն նպատակին է ծառայում Պատկանյանի «Նրաքսի արտասությունը» բանաստեղծությունը: Պատմության և իրականության համադրմամբ պոետը ակնառու է դարձնում օտարի բռնապետությունից ազատագրվելու անհրաժեշտությունը, ժողովրդին հարազատ, հասկանալի լեզվով և պատկերներով արտահայտում նրա նվիրական զգացումներն ու ձգտումները: Պատահական չէ, որ այդ բանաստեղծությունը հայ նոր գրականության մեջ առաջին շափածո գործն էր, որ ձեռք բերեց լայն ժողովրդականություն և դարձավ համազգային երգ:

169 Ռ. Պատկանյան, Երևերի ժողովածու հ. 1 Երևան, 1963, էջ 43:

Անուրանալի է Ռ. Պատկանյանի դերը երգիծական գրականության զարգացման գործում: Նրա համար երգիծանքը միշտ էլ գաղափարական սուր պայքարի գենք է եղել: Պատկանյանը ոռուսական առաջավոր գրականության ավանդները, մասնավորապես երգիծանքի բնագավառում, ինքնատիպ ձևով կիրառեց հայ գրականության մեջ:

Հարկ չկա այստեղ ծանրանալ Մ. նալբանդյանի և Ռ. Պատկանյանի կյանքի ու գործունեության վրա, քանի որ այդ մասին գրել է բավականաշախ շատ: Ուսումնասիրողները, նպատակ ունենալով արծեքավորել նրանց գրական ժառանգությունը, ցուց տալու նրանց տեղն ու դերը հայ գրականության պատմության մեջ, շեշտված ձևով լուսաբանել են երկու գործիչների հայացքների տարբերությունները ոչ միայն գրականության, այլև հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող հարցերում: Մեզ վրաղեցնող հարցասիրության, գաղութի գրական կյանքի, հասարակական մտքի վրա նրանց ունեցած ազդեցության վերհանման տեսակետից առաջնահերթ է դառնում երեսութի հակառակ կողմը՝ նրանց ընդհանուր գծերի, նրանց հայացքների նույնությունը:

Միանգամայն բնական ու հասկանալի է, որ թե՛ նալբանդյանը և թե՛ Պատկանյանը, մանավանդ առաջին շրջանի ստեղծագործությունների նյութը քաղում էին իրենց քաջածանոթ ու հարազատ միջավայրից՝ նոր նախիչւնի իրականությունից: Մի հանգամանք, որը մեծապես նպաստում էր Դոնի հայության շրջանում նրանց ստեղծագործությունների նկատմամբ եղած հետաքրքրությանն ու դրանց լայն տարածմանը:

Մ. նալբանդյանը «Մինին խոսք, մյուսին հարս» 1857 թ. գրած, բայց միայն վերջերս հայտնաբերված վիպակում¹⁷⁰ նկարագրում է երիտասարդ կտրիճների Մշո ս. Կարապետ ուխտի գնալու և վերադարձից հետո ընտրած աղջկա հետ ամուսինանալու նորնախիջևանցիների ավանդական սովորությունը: Մի երիտասարդ խոսք առնելով աղջկա ծնողներից, ընդունված կարգով ուխտի է գնում, սակայն աղջկա հայրը դրժում է պայմանը և աղջկան ամուսնացնում մեկ ուրիշի հետ:

Կ. Հայրապետյանին ուղղած նամակում Մ. նալբանդյանը խնդրում էր հոգ տանել ու կազմակերպել վիպակի տպագրությունը, «որովհետեւ,— գրում էր նա, — այդ բանի գլխավոր նյութը առած է նախիջևանցոց կյանքից, վասն որո և մանավանդ հասկանալի և օգտակար նախիջևանցոց համար»¹⁷¹: Մ. նալբանդյանի գեղարվեստական ու հրապարկախոսական ուրիշ շատ գործեր նույնպես առնչվում են Դոնի հայության անցյալին ու առօրյային:

¹⁷⁰ Ս. Գարոնյան. Միքայել նալբանդյան, Երևան, 1979, էջ 152.

¹⁷¹ Մ. նալբանդյան, Ելք, Տ. 4, Երևան, 1949, էջ 54:

Բ. Պատկանյանն իր ստեղծագործությունների մի պատկառելի մասի նյութը վերցրել է հայկական գաղութի կյանքից:

Հատկանշական է, որ դեռևս Հեղինակի կենդանության օրոք՝ 1879 թ. նոր նախիչւնում, առանձին գրքույկով լույս է տեսնում գաղութի վերնախավը ձաղկող, տեղի բարբառով գրված «նոր նախիչւնի քնար» երգիծական բանաստեղծությունների շարքը:

Խաղաղ Դոնի ափերին ծնված հայ մշակույթի երկու նշանավոր դեմքերն էլ հասակ են առել ու առնականացել միաժամանակ, ուստական միանույն դեմոկրատական միջավայրում: Նրանց հասարակական, գեղագիտական հայացքների ձևավորման գործում կարևոր գեր են կատարագիտական հայացքների ձևավորման գործում:

1850-ական թվականներին սուսական և եվրոպական երկրների հասարակական-քաղաքական կյանքում կատարվող իրադարձությունները՝ 1848 թ. հեղափոխությունը, Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանում ծավալված ծայր առած հակամարտադրական շարժումը, Խոսակայում ծավալված ազգային-ազատագրական պայքարը արձագանք էին գտնում սուսական կենտրոնների երիտասարդության, այդ թվում և հայ ուսանողության մեջ:

Ե՛վ նալբանդյանը, և Պատկանյանը համարձակուեն բացահայտել են ժամանակի հասարակության հակասությունները, իրենց ազնիվ ցանումն արտահայտել աիրապետող շարիքի ու անարդարության դեմ, բացահայտորեն դրսերել աշխատավոր ներքնախավների նկատմամբ ունեցած համակրանքը:

Երկու գործիչներն էլ հայոց լեզվի, կրթության, առհասարակ լուսավորության ու մշակույթի հարցերում հետևողականորեն մերժել են ամեն մի հին ու հետադիմականը և պաշտպանել նորը, առաջադիմականը:

Նրանք բազմիցս անդրադարձել են հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հարցերին: Եվ, եթե նալբանդյանը 1860-ական թվականների սկզբներին հայ ժողովրդի երկու հատվածների աղատագրման ողինները որոնում էր համառուսաստանյան շարժումների մեջ, ապա Պատկանյանը, ճեկ տասնամյակ անց՝ 70-ական թվականների վերցերին արդին, Հիսուսթափված միջազգային դիվանագիտության տմարդի վերաբերմունքից, խարազանում էր հայկական հարցում եվրոպական խորը տերությունների բռնած դիրքը, նրանց քաղաքականությունը:

Նրանց երկուսին էլ հատուկ է եղել գաղափարական համոզվածությունն ու սկզբունքայնությունը, բուռն, կրքոտ սերը դեպի հայրենիքը և նույնպիսի կրքոտ ատելությունը նրա թշնամիների հանդեպ: Ապրելով նույն ժամանակաշրջանում նրանք, բնականաբար, անդրադարձում էին նույն պատկանական գաղափարի աղջկային կյանքի առաջադրած հրատապ պրոցեսավականի և դրանց տալիս դրական, առաջադիմական մեկնաբանություն:

Այլ խոսքով, նորնախիջեանցի երկու ականավոր դեմքերն էլ, չայտ քաղաքական տարրեր շեցտագրության, գրականության, լուսավորության, ընդհանրապես ժողովրդի կինսական շահերն արտաշայտել խնդրում միենուցն ուղղության ներկայացուցիչներ էին:

Նոր նախիշեանում մեծ էր հետաքրքրությունը Մ. նալբանդյանի Ռ. Պատկանյանի ստեղծագործությունների նկատմամբ։ Քաղաքի հասարակական մինողութը համակված էր նրանց գործերով։ Այդ ազդեցությունն այնքան վիթխարի էր, որ նրանց երկերը ձեռագիր կամ խմորատիպ օրինակներով ձեռքից ձեռք էին անցնում, երգերի վերածված նրանք բանաստեղծությունները լայն տարածում էին գտնում։

Հայկական գաղութի և հայ իրականության հետ Մ. Նալբանդյանը ունեցած կապերի ու ազդեցության մասին է վկայում այն փաստը, որ Պետրոպավլովյան բերդում նրան այցելում ու նրա վիճակով հետաքրքր քրրվում էին շատերը, հատկապես նորնախիջեանցիները, որոնց թվում Ա. Սովորովը, Հ. Սահմանը, Մ. Բաղդալյանը, Մ. Քերերյանը Կ. Հայրապետյանը, Մ. Նազարյանը և ուրիշներ։ Նրա թաղմանն այնպիսի հոծ բազմություն էր հավաքվել, և կատարվեց այնպիսի անսովոր հանդիսավորությամբ, որ ցարական իշխանությունը հատուկ «գործ սկսեց այդ առթիվ։ Նալբանդյանի մահից հետո էլ ժողովուրդը նրա անվան շուրջն առասպելներ էր հյուսում։

Նորնախիչկանցիները նալբանդյանին և Պատկանյանին թաղեցին իրենց համար ուխտատեղի դարձած Սուրբ Խաչ վանքի բակում:

Ինչպես իր տեղում նշեցինք, հայ գրականության և մշակույթի ականավոր երկու գործիչներին գնահատող երախտապարտ հայրենակիցները հուշարձաններ կանգնեցրին նրանց շիրիմներին։ Պատկանյանի մահարձանի բացումը վերածվեց հայ գրականության յուրատեսակ աղային հանդեսի։

Վերջապես նալքանդյանի և Պատկանյանի ստեղծագործությունների նկատմամբ հայրենակիցների հետաքրքրության մասին է վկայում այն փաստը, որ XX դարի սկզբին նոր Նախիջևանում առանձին գրեթե ով հրատարակեցին նրանց երկերը:

Այս ամենից պարզ է դառնում, որ Նալբանդյանի և Պատկանյանի ստեղծագործությունները ուղղություն են տվել գաղութի մշակութային կյանքին, գրական-գաղափարական լիցք հաղորդել նոր Նախիջևանի հասարակությանը, առավելապես երիտասարդությանը։ Նրանց երկերից մտավոր սնունդ, գաղափարական ազգակներ ու ստեղծագործական ներշնչանք են ստացել Դոնի հայության մի քանի սերունդներ։

Նոր նախիչևանում գրական ժանրերից առանձնապես զարգացավ՝ դրամատորգիան։ Դա պայմանավորված էր թատրոնի նկատմամբ եղած լին հետաքրքրությամբ։

Τετούνα 1870-ωκαν θψωκαννέρη φερεζερήν ή. Φωτικαννιάνρ πιχω-
φροπιθγούν έ τωραδηνιού ζ. Αλωδωζγανή ιπερηγακαν θεμαγιόφ φρψωδ «Αλκα-
μα ψυσακ» ψηβεθ φρω: Ήω φωρδρ έ φνωδωτοιμ ψηβενρ η ρυραμπιτοιμ
ερητισσωρητ ζεηγηνακην¹⁷² ηπογέν ηηγαννακηνφ γωρποννακηλοι φρωκαν ήρ
ηπρδοπινηπογεμ¹⁷², Αλωδωζγανρ γωρποννακην έ φρελ ηρωμαννέρ η μη-
ηηγαννακην, πιαποπιθη φρωκαν-θωτηρωκαν ζηγανρην:

տիվ սասնազգսկ գալուքը գրաւած է պատմական հայության մեջ՝ առաջին անգամ՝ ՀՀ գարի կազմության մեջ՝ 1992 թվականի մայիսի 2-ին ընդունված ՀՀ Ազգային օրենքում՝ ուժի մեջ բերելու օրուն:

Այդ նույն ժամանակաշրջանում գրական-հրապարակախոսական աշխատավորքություն էր ծավալել գաղութի մտավորականության հեղինակավոր գործիչ Մ. Բերբերյանը: Նա հատկապես իր խմբագրած «Թոնսկայա բեց» և «Նոր կյանք» թերթերում հաճախ էր հանդես գալիս ծավալուն հոդվածներով: Նա հայկական զանդվածին ծանոթացնում էր ուսու և եվրոպական նշանավոր գրողների ու գրական գործիչների, մշակույթի ու հասարակական կյանքի կարևոր իրադարձությունների հետ: Մ. Բերբերյանի զանդերի շնորհիվ են նախապատրաստվում, գրաքննչական գժվարությունները Հաղթահարվում և 1903—1906 թթ. հրատարակվում Նալբանդյանի ու Պատկանյանի երկերի ժողովածուները: Նա գրական ազգեցություն է գործել Դոնի հայ հասարակության գրական կյանքի վրա:

Ծ. Կուրղինյանը աշխատում էր «Գինջ-Օլլյան և Շապոշնիկյան» նշանավոր առևտրական ընկերության գործակատարներ պատրաստող ուսումնարանում։ Առևտրական տան մոնորենները գնահատում էին Կուրղինյանի մանկավարժական գործունեությունը և նրա համար աշխատանքի պայմաններ ստեղծում։ Մ. Բերբերյանի միջոցով նա ծանոթանում է ու շփոփում տեղի և դրսի մտավորականների հետ¹⁷³։

172 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 232—233

173 6. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, 6. Փորբշեցնի ֆոնդ

Կուրդինյանն ականատես է լինում Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ռուստովում և Նախիջևանում տեղի ունեցած իրադարձություններին, որոնք նրա վրա մեծ տպավորություն են գործում: Հեղափոխության ազգեցության տակ նա վճռականորեն կանգնում է աշխատավորության շահերի պաշտպանության դիրքերում: Նա սկսում է շահիծու գործերով պարբերաբար հանդես գալ տեղական մամուկում և հատկապես «Նոր կյանքում»: Այս շաբաթաթերթի խմբագրությունում 1906 թ. ամռանը Ալ. Մյասնիկյանը ծանոթանում է պոետի հետ, հետագայում և հանդիպումներ ունենում ե օժանդակում նրա ստեղծագործական աշխատանքներին: Ծ. Կուրդինյանը իր ստեղծագործություններում, մասնավորապես «Աչատության զողանքը», «Այնտեղ գնացեք» բանաստեղծություններում ազատության ձայն էր հնչեցնում: Նա կոչ էր անում շրջվեղեակի խեղճ գլուղացին, հանքերում տառապող բանվորները, սոցիալիզմի լույսը տանել նրանց մութ խրճիթները¹⁷⁴: Նրա այդ և հետագայում գրված շափածո գործերը վկայում էին, որ ասպարեզ է իշել հայ պրոլետարական բանաստեղծը:

